

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ ՇԱՎԱՐՇԻ

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ
ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՆԵԿԴՈՏՆԵՐ)**

Ատենախոսություն

**Ժ. 01. 05-«Բանահյուսություն» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար**

ԵՐԵՎԱՆ – 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԶՎԱՐՃԱ- ԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱՆԵԿԴՈՏՆԵՐԸ) ԵՎ ԴՐԱՆՑ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	13
1.1. Գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմությունը.....	13
1.2. Ժողովրդական և գիտական եզրույթները.....	42
1.3. Կապը բանահյուսության տեսակների հետ.....	61
1.4. Կառուցվածքային առանձնահատկությունները.....	91
1.5. Գոյատևմանն ու մասսայականությանը նպաստող գործոնները.....	97
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԶՎԱՐՃԱ- ԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....	102
2.1. Հարսանեկան ծիսակարգը.....	103
2.2. Թաղման ծիսակարգը.....	113
2.3. Հայոց ցեղասպանությունը.....	128
2.4. Պանդխտությունը (արտագնա աշխատանքը).....	140
2.5. Լեզվական ուժացման և ազգապահպանության խնդիրները.....	149
2.6. Խորհրդային Հայաստանը.....	159
2.7. Ներգաղթը և արտագաղթը.....	165
2.8. Ղարաբաղյան շարժումը.....	170
2.9. 1988-ի դեկտեմբերյան երկրաշարժը.....	179
2.10. Ղարաբաղյան պատերազմը.....	185
2.11. Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը.....	192
2.12. Խելապակասության թեման.....	198

2.13. Մանկական զվարճախոսություններ	203
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ԶԱՎԵՇՏԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ	
ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	
3.1. Արտասանական իրողությունները.....	218
3.2. Արևելահայերենի, արևմտահայերենի և բարբառների բառապաշարը	229
3.3. Անձնանունը և տեղանունը	239
3.4. Վերամբարձ ոճը, գրաբար, գրական ու ժողովրդական բառերի և արտահայտությունների ոչ տեղին կիրառությունը	252
3.5. Բառ-բառակապակցությունների թարսուշխտակ գործածությունը.....	256
3.6. Ժարգոնային արտահայտությունը և բամբառակ խոսքը.....	259
3.7. Հայերենի և օտար լեզուների փոխհարաբերությունը.....	261
3.8. Ժողովրդական դարձվածքը և արտահայտությունը.....	270
3.9. Համանունային և հարանունային դրսևորումները.....	277
3.10. Ուղիղ և փոխաբերական իմաստները.....	282
3.11. Բառակազմական դրսևորումները և լեզվաբանական եզրույթները	284
3.12. Պատկերավորման միջոցները.....	290
3.13. Անսպասելի ծիծաղի դրսևորման այլ միջոցները	299
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ	
ՀԱՅ ԵՎ ՕՏԱՐԱԶԳԻ ԶՎԱՐՃԱԽՈՍՆԵՐԸ.....	
4.1. Հայոց մեջ կենցաղավարող զվարճախոսները, նրանց առնչվող անեկդոտների գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմությունը.....	313
4.2. Արևելքի զվարճախոս Նասրեդինը հայկական գրառումներում	320
4.3. Հայկական անեկդոտների հերոս-զվարճախոսների կերպարային առանձնահատկությունները	330
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	
	343

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ	351
Ա. Սկզբնաղբյուրներ	351
Բ. Գիտական նյութերի ժողովածուներ.....	367
Գ. Պարբերական մամուլ	370
Դ. Համացանց	372
Ե. Արխիվներ	373
Զ. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ).....	373
Է. Անձնական հավաքածուներ	373
Ը. Ատենախոսություն	374
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ	375
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	377
Հավելված 1.....	377
Հավելված 2	387
Հավելված 3.....	408

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները՝ անեկդոտները¹, լինելով բանահյուսության ամենակենսունակ ու սիրված տեսակներից մեկը, այնուամենայնիվ առ այսօր համակողմանի չի ուսումնասիրվել:

Սույն հետազոտության մեջ առաջին անգամ փորձ է արվում վիպական բանահյուսության այս տեսակն առանձնացնել ժողովրդական երգիծանքի մյուս դրսևորումներից, հակիրճ ներկայացնել հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը նրա անցած ուղին, գոյատևման նախապայմաններն ու մասսայականության դրդապատճառները, մարդկությանը հուզող խնդիրներին կարճառոտ կառուցվածքում տարատեսակ միջոցների և հնարանքների օգտագործմամբ ինքնաբուխ ծիծաղ առաջացնելու բացառիկ հնարավորությունները՝ Պատմական Հայաստանի ու նրան հարակից տարածքներում հայերենի տարբեր շերտերի կիրառություններով արժևորելով դրանց ազգային առանձնահատկություններն ու անգնահատելի դերը հայ ժողովրդի կյանքում, մտերմիկ հումորով, երբեմն էլ սպանիչ ծաղրով վերահաստատելով դժվարությունները ծիծաղով հաղթահարելու ժողովրդական կենսափիլիսոփայությունը:

Զերծ մնալով անեկդոտների և դրանցում արտացոլված համամարդկային թեմաների վերաբերյալ տեսական ընդհանուր դատողություններ կատարելուց, ինչը կարող է անել ցանկացած ժողովրդի բանագետ, սույն ուսումնասիրությունը կառուցվել է գերազանցապես հայոց ազգային մշակութային ժառանգության նմուշների հենքի վրա՝ հարկ եղած դեպքում անդրադառնալով նաև հայկական և այլ ժողովուրդների երգիծական մանրապատում-զվարճախոսությունների կապի խնդիրներին:

¹ Ժողովրդական **երգիծական մանրապատումներն** ու **զվարճախոսությունները** տարանջատել ենք՝ երգիծական մանրապատումի համար հիմք ընդունելով նրա **ծավալուն կամ կարճառոտ դիպաշար (սյուժե) ունենալու հարկանիշը**, զվարճախոսության համար՝ **անդիպաշար հանգամանքը**:

19-րդ դարի երկրորդ կեսից շրջանառության մեջ մտած «**անեկդոտ**» եզրույթն օգտագործվում է թե՛ առաջին, թե՛ երկրորդ խմբի նմուշների համար:

Ճիշտ է, ժողովրդական բանավոր երգիծանքը վաղնջական ժամանակներից է գալիս (առաջին պատառիկներին հանդիպում ենք նույնիսկ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» գրքում, իսկ երգիծապատումային ակնառու դրսևորումներին՝ հայ միջնադարյան զրույցներում և Մխիթար Գոշի ու Վարդան Այգեկցու առակների ժողովածուներում), այնուամենայնիվ հայ ժողովրդական երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները՝ որպես վիպական բանահյուսության ինքնատիպ ու ձևավորված տեսակ, հայ իրականության մեջ հանդես են գալիս ավելի ուշ շրջանում՝ 19-րդ դարի առաջին կեսից:

Ուսումնասիրության **առաջին գլխում** ներկայացվել է 19-րդ դարի առաջին կեսից մինչև 21-րդ դարասկիզբը Հայաստանում և արտերկրում հայկական անեկդոտների գրառման, հրատարակման և ուսումնասիրման շուրջ 170-ամյա պատկերը, անդրադարձ է կատարվել Պատմական Հայաստանում ու նրան հարակից տարածքներում հայերենի բարբառներով ժողովրդական երգիծական մանրապատումներին և զվարճախոսություններին տրված անվանումներին, գիտական շրջանակներում օգտագործվող եզրաբառերին, 19-րդ դարի երկրորդ կեսից օտարալեզու «անեկդոտ» եզրույթի կիրառություններին ու վերջինիս իմաստային առավել ընդգրկուն հատկանիշներին, հայ ժողովրդական երգիծական մանրապատումների ու զվարճախոսությունների մասին գրված հոդվածներին և անեկդոտների գրքերի առաջաբաններում, տարատեսակ ժողովածուներում, ուսումնական ձեռնարկներում բանահավաք-ժողովրդագետների, բանագետների, երբեմն էլ գրականագետ-մշակութաբանների գնահատականներին, հայ և օտարազգի բանագետ-բանահավաքների տեսակետների ու մոտեցումների խառնաշփոթին, որոնցում բանահյուսության այդ տեսակը դասվում է մերթ առասպելների, առակների, երգիծական զրույցների ու պատմությունների և երգիծական մանրապատումների, մերթ էլ՝ կենցաղային, կենդանիների կամ մարդկանց մասին հեքիաթների, երբեմն էլ՝ ավանդազրույցների ու առած-ասացվածքների շարքում:

Այդ ամենի համատեքստում զուգահեռաբար խոսվել է նաև հետազոտվող նյութի ժանրային առանձնահատկությունների, մարդկությանը հուզող ամենաբազմազան խնդիրներին կարճառոտ կառուցվածքում ժամանակի ոգուն համահունչ արձագանքելու և ծիծաղի վարակիչ լեզվով անսպասելի «լուծում» գտնելու բացառիկ հնարավորությունների մասին՝ դրանցով իսկ հիմնավորելով կատարված աշխատանքի արդիականությունն ու կիրառական արժեքը:

Շարադրանքում ուշադրության կենտրոնում են եղել բանահյուսության մի շարք տեսակների հետ (հեքիաթ առակ, ավանդազրույց, հանելուկ, առած-ասացվածք, օրհնանք-բարեմաղթանք, երդում, բաժակաճառ և այլն) ժողովրդական երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների կապի խնդիրները, որոնք դրսևորվել են կերպարային, կառուցվածքային յուրահատկությունների, պատկերավորման միջոցների և ժանրային այլևայլ հատկանիշների կիրառությամբ: Բուն առակի, հեքիաթի, հանելուկի կամ օրհնանք-բարեմաղթանքի տեսակները նմանատիպ զվարճապատում-զվարճախոսություններից տարբերակելու համար արտաքին նմանությանը զուգահեռ տրվել են դրանց ժանրը բնորոշող ամենաէական հատկանիշներն ու տարանջատիչ կողմերը:

Անդրադարձ է եղել նաև անեկդոտների գոյատևմանն ու մասսայականությանը նպաստող գործոններին, մասնավորապես զվարճապատումներից պոկված առած-ասացվածքների, դարձվածքների և արտահայտություն-պատառիկների շրջանառվելուն՝ ներկայացնելով դրանց և հեքիաթից, առակից, ավանդազրույցից առանձնացված և ինքնուրույն կյանքով ապրող իմաստախոսությունների՝ առած-ասացվածքների նմանություններն ու տարբերությունները:

Ուսումնասիրության **երկրորդ գլխում** խոսվում է զվարճապատում-զվարճախոսությունների թեմատիկ ընդգրկման լայն հնարավորությունների, մարդու կյանքին, գործունեությանն ու փոխհարաբերություններին, հոգևոր մշակութային արժեքների և գիտության տարբեր բնագավառների հետ ունեցած առնչությունների մասին: Նպատակ չունենալով անդրադառնալ այնպիսի թեմատիկ դրսևորումներին, որպիսիք առկա են

նաև աշխարհի բոլոր ժողովուրդների անեկդոտներում (ուսումնառություն, բժշկություն, ազգակցական ու մարդկային տարատեսակ հարաբերություններ, մարդկային դրական և բացասական հատկանիշներ՝ բարոյականություն, սեր, աշխատասիրություն-ծուլություն, ազնվություն-խորամանկություն, աչքածակություն և այլն), այս գլխում մենք կենտրոնացել ենք այնպիսի թեմաների վրա, որոնք առնչվում են հայ ժողովրդին և ներկայացված թեմաներով ու դրանցում առկա ազգային հատկանիշներով և տարրերով առանձնանում են այլ ժողովուրդների երգիծական ստեղծագործություններից: Դրանք են՝ հայոց հարսանեկան և թաղման ծիսակարգերը, հայոց ցեղասպանությունը, պանդխտությունը՝ արտագնա աշխատանքը, հայերենի ուծացման և ազգապահպանության խնդիրները, ներգաղթը և արտագաղթը, Խորհրդային Հայաստանը, Ղարաբաղյան շարժումը, 1988-ի հայաստանյան երկրաշարժը, Ղարաբաղյան պատերազմը, նորանկախ Հայաստանի Հանրապետությունը:

Հետազոտության երկրորդ և երրորդ գլուխներում ու դրանց ենթաբաժիններում համընդհանուր թեմաներին անդրադառնալիս անգամ հիմնականում ընտրվել են այնպիսի նմուշներ, որոնց հայկականությունը հաստատվում է հայոց լեզվի տարբեր շերտերի կիրառություններով, հայրենի բնաշխարհի, բնակլիմայական պայմանների, պատմամշակութային արժեքների, անձնանունների, տեղանունների և այլ տարրերի օգտագործմամբ: Ասածը վերահաստատելու համար երկրորդ գլխի ենթաբաժիններից մեկը նվիրվել է աշխարհի մի շարք ժողովուրդների բանարվեստում հաճախակի հանդիպող ծոթայանը՝ խելապակասությանը՝ այն համառոտ ներկայացնելով հայոց զանազան տարածաշրջաններից գրառված ժողովրդական երգիծանքի նմանօրինակ, բայց ինքնատիպ դրսևորումների համատեքստում (աղը խնայելու համար ամբողջ բնակչության թվաքանակը Աղթամարի աղի լիճը ցնելը, աղ ցանելը, ասեղ ցանելը, երկուշաբթին փնտրելու համար տերտերին արջի բույնն իջեցնելն ու անգլուխ հանելը, եկեղեցին տեղափոխելու համար պարանով տերտերի վզից կապել-քաշելը, ձմռանը փայտ կրելու հոգսից ազատվելու համար անտառը վառելը և այլն):

Երկրորդ գլխի ենթաբաժիններից մեկում ատենախոսի գրառումների և շուրջ 140 տարիների անեկդոտների ժողովածուներից դուրս գրված նյութերի հենքի վրա հայ բանագիտության մեջ առաջին անգամ անդրադարձ է եղել փոքր տարիքի երեխաների խոսքի զավեշտալի արտաբերումներին՝ **մանկական զվարճախոսություններին**, դրանց թեմատիկ ամենաբազմազան դրսևորումներին ու մանկան խոսքում անսպասելի զավեշտի արտահայտման տարատեսակ միջոցներին:

Հետազոտության **երրորդ գլուխը** նվիրված է երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի դրսևորմանը նպաստող ինչպես արտասանական, բառապաշարային, իմաստաբանական, բառակազմական, պատկերավորման և արտահայտչականության տարատեսակ միջոցների (ինչարտաբերում, վերամբարձ ոճ, թարսուշիտակ արտաբերում, ժողովրդական դարձվածք, համանուն-հարանունություն, ուղիղ և փոխաբերական իմաստներ, բառախաղ, զեղչում, չափազանցություն, այլաբանություն, համեմատություն, փոխաբերություն-փոխանունություն և այլն) անսպառ կիրառություններին, այնպես էլ զավեշտ առաջացնող այլևայլ հնարանքներին (համադրողականություն՝ սինկրետիզմ, ծածկախոսություն, տարատեսակ հաշվարկներ, ֆորմուլաներ, ֆիզիկական թերություններ և այլն):

Ատենախոսության **չորրորդ գլուխը** հայության շրջանում հայտնի զվարճախոսների մասին է: Առկա շարադրանքի ծավալը հնարավորությունը չէր տալիս հանգամանորեն անդրադառնալ բոլոր զվարճախոսներին, առավել ևս, երբ Պըլը Պուդու և Պոլոզ Մուկուչի կյանքին ու գործունեությանը նվիրված տարատեսակ հոդված-ուսումնասիրություններով շատերն են հանդես եկել: Հետևաբար «**Հայ և օտարազգի զվարճախոսներ**» գլխում հնարավորինս հակիրճ տեղեկություններ են հաղորդվել Պատմական Հայաստանի այս կամ այն տարածքում հայտնի, հարկ եղած դեպքում նաև՝ քիչ հայտնի (լուկալ) հայ զվարճախոսների վերաբերյալ, խոսվել արևմտահայոց և արևելահայոց շրջանում, նաև հայոց որոշակի տարածաշրջանում, երբեմն էլ կոնկրետ բնակավայրում

հայտնի մի քանի զվարճախոսների ու նրանց վերաբերյալ եղած տպագիր հրատարակությունների և հրատարակիչների տեսակետների մասին:

Անդրադարձ է եղել նաև ինչպես հայոց մեջ շրջանառվող մտացածին՝ անիրական, և իրականության մեջ ապրած ու գործած զվարճախոսներին, վերջիններիս կերպարային առանձնահատկություններին, ոմանց հումորի բնատուր շնորհքով օժտված լինելուն և ժողովրդի տված գնահատականին, որոշների էլ քաջնազարական կերպար լինելու, նրանց ունակությունների և զբաղեցրած պաշտոնների անհամապատասխանության պատճառով անեկդոտի հերոս դառնալու հանգամանքին:

Քանի որ բավականին մեծ քանակ են կազմում Խոջա Նասրեդինին վերագրվող անեկդոտների հայկական գրառումները, ուստի այս գլխում ներկայացվել են 19-20-րդ դարերում Արևելքի զվարճախոսի մասին եղած տպագիր հրատարակություններն ու առկա տեսակետները, խոսվել նասրեդինյան պատումների տեղայնացման և տեղական պատումների «նասրեդինացման» գործընթացների մասին:

Ատենախոսությունն ավարտվում է **Եզրակացություններ** բաժնով:

Հետազոտության վերջում տրվում են օգտագործված սկզբնաղբյուրների ցանկը և հապավումներն ու համառոտագրությունները:

Ուսումնասիրությունը գրելիս օգտագործվել են հետևյալ սկզբնաղբյուրները՝

Անեկդոտների տպագիր ժողովածուներ և զվարճախոսներին նվիրված գրքեր, բանահյուսական-ազգագրական ժողովածուներ, այդ թվում՝ «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի հատորները, հինգերորդ դարի հայ պատմիչների ստեղծագործությունները, միջնադարյան առակագիրների գրքերն ու միջնադարյան զրույցները, ինչպես նաև դրանց վերաբերյալ եղած տեսական գրականությունը, հայ և օտարազգի հեղինակների տեսական հոդվածներն ու հետազոտությունները, տարատեսակ պարբերականներում ու համացանցում տեղ գտած նյութերն ու ուսումնասիրությունները, բարբառագիտական հետազոտությունների նմուշների բաժիններում ընդգրկված նյութերը, տարածաշրջաններին, տեղավայրերին նվիրված

գրքերում տեղ գտած նմուշները, Հայաստանի պետական զանազան արխիվներում, ատենախոսի և այլոց անձնական հավաքածուներում պահպանվող անտիպ զվարճապատում-զվարճախոսությունները, թեմային առնչվող հուշագրությունների գրքերը և այլն:

Անհրաժեշտության դեպքում հայկական նմուշները ներկայացվել են նաև այլ ժողովուրդների նմանատիպ ստեղծագործությունների համատեքստում՝ օգտագործելով թեմային առնչվող ինչպես հայ, այնպես էլ այլ ժողովուրդների բանագիտական, երբեմն էլ՝ լեզվաբանական կամ էլ գրականության և բանահյուսության փոխառնչության հարցերն արծարծող գրականություն:

Սկզբնաղբյուրների նյութերը մեջբերելիս աշխատել ենք հնարավորինս պահպանել բնագրային առանձնահատկությունները, որոշ նմուշների ավանդական ուղղագրությունը՝ շտկելով միայն ակնառու կետադրական կամ ուղղագրական անճշտությունները: Ընթերցողի մոտ զավեշտն էլ ավելի ընկալելի դարձնելու նպատակով տողատակում, երբեմն էլ տեքստում համապատասխան աղբյուրներից զատ, տրվել են նաև որոշ բարբառային և օտարալեզու բառ-բառակապակցությունների բացատրությունները:

Հետազոտության յուրաքանչյուր գլուխ ունի նաև **հավելվածի** բաժին, ուր տեղ են գտել շարադրանքում օգտագործված անեկդոտները: Եթե ուսումնասիրության մեջ ամբողջությամբ մեջբերվել են զվարճախոսությունները, ապա երգիծապատումները հիմնականում ներկայանում են անսպասելի զավեշտ առաջացնող հատվածներով, իսկ ամբողջական տեքստերը տրվել են համապատասխան հավելվածներում: Երբեմն էլ նյութն ամբողջությամբ՝ առանց մեջբերման է տեղափոխվել հավելված: Հարկ եղած դեպքում հավելվածներում ներկայացվել են նաև մեջբերվող նմուշների այլ տարբերակներ:

Հետազոտությունը գրելիս ուսումնասիրվել են շուրջ 170 տարիների անեկդոտներ պարունակող հայկական, երբեմն էլ այլ ժողովուրդների տպագիր սկզբնաղբյուրները, զանազան արխիվներում ու անհատական հավաքածուներում առկա համապատասխան նմուշները, թեմային առնչվող հայ և օտարազգի հեղինակների տեսական մի

շարք հողված-ուսումնասիրություններ: Զվարճապատում-զվարճախոսությունները դաս- դասվել են ըստ տեսակի, թեմայի, տեղավայրի, կառուցվածքային առանձնահատկու- թյունների, զավեշտի դրսևորման միջոցների և այլն:

Այդ ամենի հենքի վրա պատրաստված ատենախոսության բովանդակությունն արտացոլված են հեղինակի հրատարակած երկու տասնյակ հողվածներում և երկու գրքերում (1. **Սարգսյան Ա. Շ.**, Մանկական զվարճախոսություններ, Եր., «Գիտություն» հրատ., 2016, 232 էջ: 2. **Սարգսյան Ա. Շ.**, Զավեշտի դրսևորման միջոցները հայ ժո- ղովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում, Եր., «Գիտություն» հրատ., 2017, 300 էջ):

Սույն հետազոտությունը հայ ժողովրդական վիպական բանահյուսության տե- սակների ուսումնասիրությունների համատեքստում եղած բացերից մեկը լրացնելու առաջին փորձն է:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱՆԵԿԴՈՏՆԵՐԸ) ԵՎ ԴՐԱՆՑ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմությունը

Ժողովրդական բանավոր երգիծանքը դարերի խորքից է գալիս: Հայ պատմագրության մեջ դրա արտացոլման որոշ պատահիկների հանդիպում ենք նույնիսկ հինգերորդ դարի մեր պատմիչների ստեղծագործություններում, ինչպես, օրինակ, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» Վեցերորդ դարության Ը գլխում: Հոհան Եպիսկոպոսին վերաբերող դրվագներից մեկում պատմիչը ներկայացնում է փառահեղ ծիուն տիրանալու նպատակով եպիսկոպոսի պարտադրմամբ երիտասարդ ավագակ ծիավորին ծիուց իջեցնելու և քահանա ձեռնադրելու զվարճալի պատմությունը²:

Արձակի այլ տեսակների շաղախում երգիծապատումային ակնառու դրսևորումները տեղ են գտել հատկապես հայ միջնադարյան գրույցներում³ և Մխիթար Գոշի⁴ ու առավելապես Վարդան Այգեկցու⁵ առակների ժողովածուներում:

² Բուզանդ Փավստոս, Պատմություն հայոց, Գլուխ Ը, Եր., «Հայաստան» հրատ., 1968, էջ 302-304:

³ Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Խմբագրությամբ և առաջաբանով՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1957, Աղուես եւ սագ (էջ 8), Իշատեր եւ գայլ՝ երկու տարբերակով (էջ 8-9), Տգեղ կին (էջ 17) և այլն:

Սրապյան Ա., Հայ միջնադարյան գրույցներ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969, Հրեայ եւ քրիստոնեայ, թիվ 33, էջ 268, Բարի մարդ եւ էջ իւր (թիվ 34, էջ 268), Արուեստք կնոջ (թիվ 47, էջ 280-281), Կին կամապաշտ եւ հնձեալ արտ (թիվ 50, էջ 281-282), Կին ինքնահաւան եւ կամապաշտ՝ գետատար (թիվ 51, 52, էջ 284) և այլն: Այս նմուշների տարբերակները առկա են նաև 19-20-րդ դարերի գրառումներում: Սրապյանի գրքի բնագրերի մի մասը այլ ժողովուրդներից կատարված թարգմանություն-փոխադրություններ են (էջ 225-335), որոշ մասն էլ հայոց շրջանում շրջանառվող նյութերի տեղայնացված տարբերակներ են:

⁴ Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոմատիա, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, Մխիթար Գոշ (Որդի փղի յուսումն իմաստասիրութեան, էջ 442, Ուղտ եւ դարմանիչ իւր, էջ 442, Քահանայ կաշառառու, էջ 444 և այլն):

⁵ Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոմատիա, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, Վարդան Այգեկցի (Բազմարուեստ աղուես, էջ 459, Յիմար եւ ձմերուկ, էջ 478, Այր եւ լեզուանի կին, էջ 478, Այր մի եւ ընկոյզ եւ ձմերուկ, էջ 481, Ճուռոյ (հրեայի-ԱՍ) տղայ, էջ 483-484, Գող քահանայ եւ այրի, էջ 477 և այլն):

Ի դեպ, «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» ժողովածուի ծանոթագրությունների բաժնում նմանության եզրեր է մատնանշվում Բուզանդի վերոհիշյալ պատմության և միջնադարյան զրույցներից մեկի՝ «Քահանայ, որ վասն ձիոյ յօժարի առնուլ զմեղս հիւանդին» պատումի միջև՝ միաժամանակ մատնանշելով այդ նմուշի մեկ այլ տարբերակ. «Այս զրույցը հիշեցնում է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ հիշատակված Հոհան Եպիսկոպոսի պատմությունը: ...Մեր զրույցում Եպիսկոպոսի փոխարեն ներկայացված է մի քահանա, որը հոժարում է հիվանդի մեղքերը վերցնել իր վրա, միայն թե ստանա նրա ձին...: Զրույցի մի այլ տարբերակը տպագրված է «Հայելի վարուց»-ում (էջ 10)⁶»:

Այնուամենայնիվ ժողովրդական երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները (անեկդոտները)՝ իբրև վիպական բանահյուսության ձևավորված տեսակ, հայ իրականության մեջ հանդես են գալիս ավելի ուշ շրջանում:

18-րդ դարավերջը և 19-րդ դարի սկիզբը Եվրոպական մի շարք ժողովուրդների մոտ նշանավորվել էր ազգային գիտակցության զարթոնքով, որն արտահայտվեց առաջին հերթին մշակութային արժեքների հանդեպ ունեցած աննախադեպ հետաքրքրությամբ. փնտրել, գտնել և վեր հանել ու հրատարակել ազգային մշակութային ժառանգության ամեն մի դրսևորում, գրանցել ժողովրդի հիշողության մեջ դեռևս պահպանված բանավեստի յուրաքանչյուր նմուշ:

Սկսած 19-րդ դարի առաջին կեսից՝ հայ իրականության մեջ ևս ազգային արժեքների, մասնավորապես ժողովրդական բառ ու բանի և դիցաբանության հանդեպ առանձնակի հետաքրքրություն է դրսևորվում: Դարերի թոհուփոփով անցած մեր բանավոր ու գրավոր մշակութային ժառանգության նորովի արժևորումը և բազմաբնույթ հավաքչական աշխատանքների արդյունքում ասպարեզ հանված նյութերն ու դրանց մի

⁶ Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Խմբագրությամբ և առաջաբանով՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1957, էջ 241-242: Պատումն ամբողջությամբ տե՛ս նույն ժողովածուի էջ 26-27-ում:

մասի վերաբերյալ մասնագիտական վերլուծություններն անմիջապես արտացոլվում են նորաստեղծ պարբերականներում, տարատեսակ հանդեսներում ու ժողովածուներում:

Ազգագրական և բանահյուսական նորանոր նյութերի հայտնաբերման, գրառման և զանազան հրատարակություններով դրանք կրկին ժողովրդին վերադարձնելու գործընթացները հազարամյակների պատմություն ունեցող մեր ժողովրդի ինքնության վերահաստատումն էին նախանշում:

Անպետականության պայմաններում հայոց ազգային արժեքների առաջին ուղղորդող-գրառողներն ու հրատարակողները գրական, հասարակական, մանկավարժական և գիտական գործունեությամբ զբաղվող մեր մտավորականներն էին և հոգևորականները: Պատմական հայրենիքում և նրանից դուրս գտնվող հայաշատ վայրերում այդ գործին լծվեցին և իրենց անմնացորդ նվիրվածությամբ հայկական մշակութային կյանքի վերածնունդն ազդարարեցին թե՛ Հայաստանում ու արտերկրում հիմնավոր կրթություն ստացած մեր ազգային զարթոնքի անխոնջ մշակները (Խաչատուր Աբովյան, Մեսրոպ Թաղիադյան, Միքայել Նալբանդյան, Ստեփանոս Նազարյանց, Երվանդ Լալայան և այլք), թե՛ Մխիթարյան միաբանության և Հայ Առաքելական եկեղեցու նվիրյալները (Մխիթար Սեբաստացի, Ղևոնդ Ալիշան, Խրիմյան Հայրիկ, Գարեգին Սրվանձտյանց, Գաբրիել Այվազյան, Գաբրիել Պատկանյան, Մակար Բարխուդարյան, Կոմիտաս, Գարեգին Հովսեփյան և այլք):

1896թ. Շուշիում իր հիմնած «Ազգագրական հանդեսի» Ա գրքի առաջաբանում ժողովրդագետ, բանահավաք Ե. Լալայանը գրում է. «... Թերթերի մէջ սփռուած եւ առանձին լոյս տեսնող ազգագրական հօդուածներն արդէն ապացուցանում են, որ Հայոց ազգն էլ վերջապէս զարթնել է խոր քնից եւ ցանկանում է կատարել գիտութեան ամենիմաստ խօսքը. «Ծանի՛ր զքեզ». նա կամենում է ճանաչել իրեն եւ իւր ազգային յատկութիւնների վրայ հիմնել ազգային զարգացումը...»⁷: Իսկ ազգային ինքնաճանաչման համար, ըստ Լալայանի, ինչքան հնարավոր է, անհրաժեշտ էր արագացնել ժողովրդական

⁷ Ազգագրական հանդես, Կիսամեայ պատկերազարդ, Առաջին տարի, Ա. Գիրք, Շուշի, տպարան Ա. Մահտեսի-Յակոբեանց, 1886, էջ 5-6:

նյութերի հավաքումը. «...Մենք կկրենք քարերը, և երանի նրան, ով կգա այդ քարերով ազգային ինքնությունութեան շենքը կառուցանելու և համամարդկային էվոլյուսիոնի օրենքները գծելու...», – շարունակում է հավաքչական աշխատանքների անհետաձգելիության վերաբերյալ իր խոհերն ու մտահոգություններն արտահայտել ազգանվեր մտավորականը⁸:

Կյանքի հետ համընթաց քայլող, իրականության մեջ կատարվող փոփոխություններին անմիջապես արձագանքող, թեմատիկ ընդգրկման լայն հնարավորություններով օժտված և ամենքի կողմից սիրված ու մասսայականություն վայելող բանահյուսության մեկ այլ տեսակ չկա, ինչպիսին անեկդոտն է՝ ժողովրդական երգիծական մանրապատումն ու զվարճախոսությունը: Եվրոպական ժողովուրդների մոտ անեկդոտների կազմակերպված գրառման և հրատարակության աշխատանքները շատ ավելի վաղ էին սկսվել, քան հայոց մեջ: Եվ քանի որ հայ ժողովրդական երգիծական մանրապատումների, զվարճախոսությունների և զվարճախոսների մասին գրված սակավաթիվ հոդվածներից և հրատարակված գրքերի առաջաբաններում ու բանագիտական ուսումնասիրություններում, բուհական դասագրքերում և տարատեսակ ժողովածուներում եղած թռուցիկ անդրադարձներից բացի, առ այսօր մեզանում համապարփակ ուսումնասիրություն չի կատարվել, հետևաբար ներկայացվող հրատարակություններին զուգահեռ կանդրադառնանք նաև դրանցում առկա տեսակետներին ու մեկնաբանություններին:

Հայոց շրջանում անեկդոտների գրառման և հրատարակության աշխատանքների նպատակամղված ձեռնարկումներին նպաստեցին Խաչատուր Աբովյանի, Մեսրոպ Թադիադյանի, Մովսես Զոհրապյանցի և այլոց կողմից մի շարք ժողովուրդների երգիծական մանրապատումները թարգմանելն ու իրենց իսկ գրառած հայկական նմանատիպ նմուշների հետ զանազան ժողովածուներով հրատարակությունները⁹, ինչպես

⁸ Ազգագրական հանդէս, Կիսամեայ պատկերազարդ, Առաջին տարի, Ա. Գիրք, Շուշի, տպարան Ա. Մահտեսի-Յակոբեանց, 1886, էջ 5-6:

⁹ **Աբովյան Խ.**, Հայ դասականների գրադարան, Եր., «Սովետական գրող» հրատ., 1984, Զվարճալի ու կարճ պատմությունք (Գրվել է 1837-1841թթ.), էջ 369-427:

նաև տարատեսակ հայկական պարբերականների («Մեղու Հայաստանի», «Նոր-Դար», «Բյուրակն», «Փորձ», «Արևելյան մամուլ», «Արարատ» և այլն) լույս տեսնելը, որոնց էջերում ժողովրդագիտական տարաբնույթ նյութերի հետ տպագրվում էին նաև ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ:

1830-1836թթ. Խ. Աբովյանը, դորպատյան համալսարանական ուսման տարիներին հաղորդակցվելով եվրոպական ժողովուրդների գիտամշակութային և կրթական ձեռքբերումներին ու յուրացնելով գերմանական և ռուսական ազգային զարթոնքի պտուղները, հայրենիք վերադարձավ իր ստացած գիտելիքները ազգին ծառայեցնելու, ազգին լուսավորելու, ժամանակի առաջադիմական գաղափարները հայրենիքում կյանքի կոչելու ծրագրերով: Տարատեսակ ազգագրական և բանահյուսական արժեքների, այդ թվում նաև ժողովրդական երգիծապատումների հանդեպ ունեցած անհագ հետաքրքրությամբ ու հավաքչական գործունեությամբ Աբովյանը դարձավ մեր ազգային արժեքների ոչ միայն առաջին արժևորողը, այլև կրթական-դաստիարակչական համակարգում դրանց առաջին կիրառողը:

Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանն իր «Նախաշավիղի» առաջին մասում¹⁰ «Ուտանավորք զվարճալիք» վերնագրի տակ, ընդգրկել է «Կաթնի կճուճն», «Շուշաչին» (ապակեգործը), իսկ «Առասպելք»-ի տակ՝ առակների շարքում, նաև՝ «Երեք խուլք միմյանց հետ հակաճառին», «Հետևանք կույր շահասիրության» (վերջինս տեղ է գտել նաև «Պարապ վախտի խաղալիք» - ում՝ «Մոլլա Մասրադնի պղինձը» վերնագրով)՝ բոլորն էլ չափածո շարադրանքով, իսկ «Պարապ վախտի խաղալիք: Պարապ մարդու տանու միտք: Շինեց ու սազացրեց Խաչատուր Ա-

Չուարճախոս առակք Պարսից: Թարգմ.՝ **Մ.Գ. Թաղիադեանց**, Թարգմանեալ հանդերձ յաւելուածովք, Կալկաթայ, տպարան Արարատեան ընկ., 1846, 84 էջ: Նույնը՝ **Թաղիադեանց Մ.**, Գեղարվեստական երկեր, «Չուարճախոս առակք Պարսից: Թարգմանեալ հանդերձ յաւելուածովք», Եր., «Հայաստան» հրատ. 1965, էջ 394-422, հավելվածը՝ էջ 414-422:

Վէպը զուարճալի անձից, յորս պարունակին խրատական և իմաստալից ասացուածք, ժողովեալ եւ թարգմանեալ յայլ եւ այլ լեզուաց, աշխատասիրութեամբ **Մովսիսի Չօրապեանց Արցախեցոյ**: 'Ի տպարանի Ներսիսեան Հոգևոր դպրոցի հայոց ընծայելոյ յԱզնուական Աղայ Գէորգայ Արծրունոյ: 1858-ՌՅԷ,' ի Տփլիսիս:

¹⁰ **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու՝ 8 հատորով, հատոր 5, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1950, էջ 89-90:

բովյան» գրքում (գրված 1841թ., տպագրված 1864թ.-ին)՝ տեղ են գտել լոռեցիների և Նասրեդինի երգիծապատումները՝ կրկին չափածո շարադրանքով¹¹: «Զվարճալի ու կարճ պատմությունք» ժողովածուի նյութերը արձակ շարադրանքով են, որոնց գերակշռող մասը այլ ժողովուրդների, մասնավորապես գերմանական գրքերից քաղած ու «հայացրած» զվարճապատում-զվարճախոսությունների թարգմանություններ-փոխադրություններ են, և միայն երկու նմուշն է հայկական, քանզի Աբովյանն այն չի հասցրել ավարտել¹²:

Եթե մեզ մոտ առասպելի, առակի, հեքիաթի, էպոսի, ավանդազրույցի, երգի և բանահյուսության այլ տեսակների հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված էր դրանց մեջ ազգային արմատների վերհանմամբ, պատմության վաղնջական ժամանակների մութ էջերի բացահայտմամբ, ապա ժողովրդական երգիծանքի այս տեսակը սկզբնական շրջանում հայ բանահավաք-հրատարակիչների և թարգմանիչ-փոխադրողների տեսադաշտում էր իբրև զվարճանքի՝ պարապ ժամանակը զվարճանքով լցնելու, ընթերցանության հանդեպ սեր արթնացնելու միջոց: Եվ իզուր չէ, որ մեծ լուսավորիչն իր առակների և զվարճապատումների ժողովածուն անվանել է «Պարապ վախտի խաղալիք»՝ առաջին հերթին նպատակ ունենալով մարդկանց ազատ ժամանակը զվարճալի ժողովրդական ստեղծագործություններով լցնել, միաժամանակ ժողովրդական բառու բանի միջոցով բարոյախրատական հարցեր շոշափել:

Գրքի «Հառաջաբան»-ում նա գրում է. «Կարդացողը ինքն էլ կիմանա, որ էս գրած բաները ավելի ուրախության համար են. էն պատճառով բոլորը մեր խալխի խոսացած բաներն են հաւաքել. թարգմանածներս էլ՝ էնպես են դուռ բերել, որ մեր խալխի սրտովն ըլի»¹³: Աբովյանը գիտակցում էր, որ իրեն քննադատողներ և պախարակողներ անպայման կլինեն, և նրա հենարանը մնում էր ժողովուրդը. «Թե գիտուն, խելոք մար-

¹¹ **Աբովյան Խ.**, Հայ դասականների գրադարան, Եր., «Սովետական գրող» հրատ., 1984, (Լոռըցիք, 4 նմուշ, էջ 295-298, Մոլլա Մասրադնի իշի քուռակը, էջ 298, Մոլլա Մասրադնի պղինձը, էջ 300, Մոլլա Մասրադնի ճաշը, էջ 303):

¹² **Աբովյան Խ.**, Հայ դասականների գրադարան, Եր., «Սովետական գրող» հրատ., 1984, էջ 369-427:

¹³ Նույն տեղում, էջ 303:

դիկ ինձ պախարակեն, դու էլա ինձ պահիր, սիրելի՛ ազգ, չունքի իմ ուզածս էն ա, որ քեզ ծառայեն, քեզ իմ կյանքս տամ, քանի շունչս բերնումս ա»¹⁴: Ի դեպ, սկզբնական շրջանում ոչ միայն անեկդոտների, այլև ընդհանրապես բանահյուսական նյութերի հավաքող-հրատարակիչները համոզված էին, որ իրենց արածը հնարավոր է շատերը չընկալեն, ու հանիրավի քննադատեն (հիշենք՝ «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ»-ը հրատարակելիս նույն անհանգստությունն ուներ նաև Գարեգին Արքայանձույանը):

Մեր մտավորականներից ժողովրդական երգիծանքի այդ տեսակի հանդեպ հետաքրքրություն է ցուցաբերել նաև գրող, հրապարակախոս, մանկավարժ Մեսրոպ Թաղիադյանը՝ մի զվարճախոս անձնավորություն, որի հետ կապված մի քանի զվարճապատում հետագայում հրատարակել է Գալուստ Շիրմազանյանը¹⁵: Պարսկական առակ-զվարճապատում-զվարճախոսությունների մի փունջ՝ հայերեն թարգմանությամբ և հավելվածով (վերջինս հայկական 19 նմուշ էր պարունակում), Թաղիադյանն առանձին գրքով հրատարակել է 1846 թվականին¹⁶:

Առավել ընդգրկուն է 1858 թվականին Մովսես Զոհրապյանցի հրատարակած գիրքը¹⁷, որը գերմանական, ֆրանսիական, անգլիական, հնդկական, ռուսական, հունական, որոնց թվում նաև հատուկենտ հայկական (թիվ 45, 127, 166) շուրջ 270 միավոր նյութ պարունակող ժողովածու է: Նույն՝ 1858 թվականին Զմյուռնիայում (Իզմիր) ֆրան-

¹⁴ **Աբովյան Խ.**, Հայ դասականների գրադարան, Եր., «Սովետական գրող» հրատ., 1984, էջ 292:

¹⁵ Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած, ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, Թիֆլիս, 1878, էջ 116-118:

¹⁶ Զուարճախոս առակք Պարսից: Թարգմ.՝ **Մ.Դ. Թաղիադեանց**, Թարգմանեալ հանդերձ յաւելուածովք, Կալկաթայ, տպարան Արարատեան ընկ., 1846, 84 էջ: Նույնը՝ **Թաղիադյան Մ.**, Գեղարվեստական երկեր, «Զուարճախոս առակք Պարսից: Թարգմանեալ հանդերձ յաւելուածովք», էջ 394-422, հայկական նյութերի հավելվածը՝ էջ 414-422: Եր., «Հայաստան» հրատ. 1965թ., 431 էջ:

¹⁷ Վէպք զուարճալի անձից, յորս պարունակին խրատական և իմաստալից ասացուածք, ժողովեալ եւ թարգմանեալ յայլ եւ այլ լեզուաց, աշխատասիրութեամբ **Մովսիսի Զոհրապեանց** Արցախեցոյ: Ի տպարանի Ներսիսեան Հոգևոր դպրոցի հայոց ընծայելոյ յԱզնուական Աղայ Գէորգայ Արծրունոյ: 1858- ՌՅԷ, Ի Տիֆլիս:

սերենից հայերեն թարգմանությամբ լույս է տեսնում արևելքի զվարճախոս Նասրեդինի անեկդոտների մի փունջ¹⁸:

Կրթական, կրոնական ու հասարակական գործիչ, բանահավաք, ժողովրդագետ **Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանցի** «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» (1874թ.) և «Մանանա» (1876թ.) ժողովածուները առիթ հանդիսացան ժողովրդական արժեքների, մասնավորապես հայոց բառ ու բանի գրառման և հրատարակման աշխատանքներին մեծ թափ հաղորդելուն: Փաստենք նաև, որ հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսությունների սրվանձտյանական գրեթե բոլոր գրառումները անտիպ են (միայն չափածոյախառն երկու նմուշ է տպագրվել «Մանանա» ժողովածուում¹⁹) և պահպանվում են Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում²⁰: Սրվանձտյանցի երգիծապատումային այդ գրառումներին ու դրանց վերաբերյալ արտահայտած նրա տեսակետներին, մեր հրատարակած հոդվածից բացի²¹, առ այսօր ոչ ոք դրանց չի անդրադարձել:

«Մանանա» ժողովածուի «Հանելուկներ, առակներ և նորելուկներ» բաժնում Սրվանձտյանցն անդրադառնում է հանելուկներին ու առակներին՝ որպես «ժողովրդյան զվարճությանց և սրամտությանց» միջոց, հավաստում, որ «հայերն ալ իրենց համար Եզրպոսներ և Լաֆոնթեններ ունեցեր են»²²՝ վկայակոչելով հայության շրջանում առակախոսության և իմաստախոսության հայազգի Խիկարին, «ինչպես իրավամբ դիտած և ընդարձակ գրած է գիտնական գեր. Գաբրիել ս. արքեպիսկոպոս Այվազովսքին Հազար և մի առաձներու հառաջաբանության մեջ»²³: Գարեգին Սրվանձտյանցը անվիճելի

¹⁸ Ծաղրաբանութիւնք Նասրետտին Խոճայի, թարգմ. ի գաղղիերէնէ, Զմյուռնիա, ՀՅՏ, տպագր. Տետեւան, 2-րդ տպագր., 1858:

¹⁹ **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հատոր 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978, Աղջկան մը հնարք (էջ 270-271) և Հարսն և կետուր (էջ 270):

²⁰ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, այսուհետև՝ ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, հ. 1, էջ 0063-0073: ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, հ. 4/13, էջ 0269-0272:

²¹ Տե՛ս **Սարգսյան Ա.Շ.**, Գարեգին Արքեպիսկոպոս Սրվանձտյանցը և հայ ժողովրդական երգիծական մանրապատումները (Գարեգին Սրվանձտյանցի ծննդյան 175-ամյակի առթիվ), «Էջմիածին» ամսագիր, ՀԲ. տարի, Յուլիս, Ս.Էջմիածին, 2015թ., էջ 89-101:

²² **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հատոր 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978, էջ 274:

²³ Նույն տեղում:

է համարում հայության մեջ շրջանառվող առաձների, առակների և հանելուկների հայկականությունը. «...և այն ամեն հայտնի է, որ հայոց գյուտ և հեղինակություն են, վասնզի հայոց կյանքի հանգամանքներով շինված են»²⁴ չբացառելով նաև դրացի ժողովուրդներից կրած ազդեցությունը. «Հազիվ ուրեք Պարսկաստանի խառնուրդ և տիպ կը ցուցնեն, բայց և այն բնական է, իբրև դրացի ազգի»²⁵:

Այնուհետև նա, խոսելով զանազան հանդեսներում և պարբերականներում տպագրված առաձների, հանելուկների և առակների, նաև իր հավաքած նմանատիպ նյութերի, մասնավորապես առակների մասին, գրում է. «Թեպետ տակավին շատ բան կը հավաքվի, և ես մաս մը ունիմ, հանդերձ կաճեցոցի ծոերու (պակասամտաց) վրա շինված առասպելներով»²⁶:

Սրվանձտյանական ձեռնարկին անմիջապես արձագանքում են հայ ժողովրդի լուսավորչական և մշակութային խնդիրներով մտահոգ մի շարք նվիրյալներ, որոնցից հարկ է առանձնացնել Սարգիս Հայկունուն և Հովհաննես Նազարյանցին:

Բազմավաստակ ուսուցիչ, բանահավաք և ազգագրագետ Սարգիս Հայկունու հավաքչական աշխատանքներով զբաղվելը պայմանավորված էր 1878թ. վիճակագրական տվյալներ գրանցելու նպատակով Գ. Սրվանձտյանցի՝ Տրապիզոն այցելությամբ և Հայկունու հիմնած դպրոցում լինելու հանգամանքով: Ի տարբերություն Նազարյանցի՝ Հայկունու հավաքչական գործունեության շրջանակները չեն սահմանափակվում միայն բանահյուսությամբ կամ բանահյուսական միայն մեկ ժանրի նյութերի գրանցմամբ: Այստեղ հարկ չհամարելով խոսել Սարգիս Հայկունու՝ բազմաբնույթ հավաքչական աշխատանքների մասին (Հայկունու կյանքին և գործունեությանը նվիրված ուսումնասիրություն է հրատարակել բանագետ Վերժինե Սվազյանը²⁷)՝ փաստենք, որ նա «Ժողովրդական առակներ» գրքում իր անտիպ գործերը թվարկելիս Ե. կետում նշում է նաև

²⁴ **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հատոր 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978, էջ 274:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Հայ ազգագրություն և բանահյուսություն, այսուհետև՝ ՀԱԲ, հատոր 4, **Վ. Սվազյան**, Սարգիս Հայկունի (Կյանքն ու գործունեությունը), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 5-82:

«Զրոյցներ, որ ժողովրդական ծիծաղաշարժ և բարոյալից անեկդոտներ են, մօտավորապէս 1000 հտ.²⁸»: Դրանք ևս առ այսօր անտիպ են և պահպանվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում²⁹:

Մի շարք դպրոցական դասագրքերի հեղինակ, մանկավարժ Հովհ. Նազարյանցը առաջինն էր հայ իրականության մեջ, որ իր և այլոց միջոցով գրառած հայկական երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները և տարբեր ժողովուրդների անեկդոտների ժողովածուներից թարգմանած նյութերը 1876-1883թթ. հրատարակել է երեք ծավալուն ժողովածուներով՝ դրանք անվանելով անեկդոտներ³⁰:

Նազարյանցը «Անեկդոտների» առաջին հատորի *Հառաջաբանում* մատնանշում է այն աղբյուրները, որոնց միջոցով գիրքը ներկայանում է ընթերցողներին. «Կեանք և գրքեր – ահա այն աղբիւրները, որոնք առատօրեն պարգևեցին մեզ մեր աշխատութեան պաշարեղէնները»³¹:

Հովհ. Նազարյանցը նաև անեկդոտների մեր առաջին վերլուծող-գնահատող տեսաբաններից է: Նա գտնում էր, որ ժողովրդական երգիծանքի այդ տեսակը սուկ պարապ ժամանակը լցնելու, ծիծաղ առաջացնելու միջոց չի ծառայում: Այն ունի նաև մեկ այլ, ծիծաղեցնելուց ոչ պակաս կարևոր՝ ճանաչողության գործառույթ. «Բայց ի՞նչ դեր է խաղում անեկդոտը կեանքի մէջ: – Հարց է տալիս Նազարյանցը, և ինքն էլ պատասխանում այդ հարցին: – Նա, ծիծաղեցնելով մարդուս, միևնոյն ժամանակը կրթում է նորա միտքը: Նայելով, թէ ի՞նչ նիւթի վերայ է ասված անեկդոտը, մենք որևէ հասկացողութիւն ենք կազմում նոյն իսկ նիւթի վերայ: Եթէ անեկդոտը գիւղացու վերայ է, նորա

²⁸ **Հայկունի Ս.**, Ժողովրդական առակներ, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1907, էջ 93:

²⁹ ԳԱԹ, Հայկունի Ս., Գ. Սրվանձոյանցի ֆոնդ, վավ. 538, էջ 51-56, 93-98: ԳԱԹ-ի հավաքածուից Սրվանձոյանցի և Հայկունու անեկդոտների պատճենահանված տարբերակները պահպանվում են նաև ՀԱԻ-ի արխիվում՝ թիվ 5, 1531, 1551, 1585, 1587, 1635, 1639-1643, 1651-1659, 1665-1671, 1719-1721, 1831-1835:

³⁰ Անեկդոտներ, **Հատոր Ա**, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876: Անեկդոտներ, **Հատոր Բ**, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տիֆլիս, տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877: Անեկդոտներ, **Հատոր Գ**, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883:

³¹ Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, *Հառաջաբան*, էջ III:

արտայայտած երկու խօսքից մենք կարողանում ենք գաղափար կազմել նորա մտաւոր զարգացման վերայ, այն յարաբերութեան վերայ, որ նա ունի դէպի իւր ընտանիքը, դէպի իւր դրացին, դէպի իւր քահանան...»³²:

Ըստ Նազարյանցի՝ անեկդոտների միջոցով պատկերացում կարելի է կազմել ոչ միայն այս կամ այն անհատի, այլ նաև մի ամբողջ ազգի նկարագրի վերաբերյալ. «Եթէ մենք ունինք անեկդոտներ մի ամբողջ ժողովրդի կեանքից, այդ մի և նոյն է, թէ մենք ունինք հասկացողութիւն մի ժողովրդի վերայ: Որքան շատ եւ բազմասեռի են անեկդոտները, այնքան լայն եւ ընդարձակ են կազմուող գաղափարները»³³:

Ամերիկյան և եվրոպական մի քանի ժողովուրդների նմանատիպ ստեղծագործությունների համեմատությամբ, նաև դրացի ժողովուրդների փոխհարաբերությունների համատեքստում Նազարյանցը արժևորում է ընդհանրապես անեկդոտի դերը և կանգ առնում հայկական նյութերի պատմաճանաչողական արժեքի վրա. «Անեկդոտը մի հայելի է, – գրում է նա, – որի մէջ երեւում է մարդ իւր արժանաւորութիւններով կամ պակասութիւններով: Իսկ մարդը մի յայտնի դասակարգի, մի ամբողջ հասարակութեան, հետևաբար եւ մի ամբողջ ազգութեան ներկայացուցիչ է: Անեկդոտը ցոյց է տալիս մեզ որ և է ազգի մտաւոր եւ բարոյական զարգացման մակերևոյթը. թույլ է տալիս մեզ նկատել այն զանազանութիւնը, որ կայ նորա եւ իւր դրացիների մէջ: Անեկդոտը ծանոթացնում է մեզ Եւրոպացու եւ Ասիացու բնաւորութեան, նոցա լաւ և վատ կողմերի հետ: Նա ցոյց է տալիս քաղաքացու եւ գիւղացու տարբերութիւնը. պատկերացնում է մեզ հոգևորականը եւ աշխարհականը. տղամարդը եւ կինը. գիտութիւնը, տգիտութիւնը, կրթութիւնը, ժլատութիւնը, խորամանկութիւնը, գողութիւնը, երկչոտութիւնը, սէրը, ատելութիւնը, ժրաջանութիւնը, ծուլութիւնը, սառնասրտութիւնը»³⁴:

Հովհ. Նազարյանցը եվրոպական և ասիական տպագիր և անտիպ նյութերի համատեքստում անդրադառնում է նաև հայկական անեկդոտներին՝ ցավով նշելով այդ

³² Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, Հատաջարան, էջ I:

³³ Նույն տեղում, էջ II:

³⁴ Նույն տեղում:

ասպարեզում հայերի հետ մնալը. «Ամեն ազգ ունի իր անեկդոտները, թէ տպուած եւ եթէ անտիպ: Եւրոպան երկուսից եւս ունի. իսկ Ասիան – միայն վերջինը, խօսելով գեթ Հայերիս վերաբերութեամբ»³⁵: Նա իր անեկդոտների թե՛ առաջին, թե՛ երկրորդ հատորների առաջաբաններում խոսում է իր գրքերում ընդգրկած այլ ժողովուրդների անեկդոտների աղբյուրների մասին, դրանք համեմատում հայկական նյութերի հետ և տալիս դրանց մի մասի գնահատականը. «Մենք աշխատել ենք, յայտնի բան է, միշտ ընտրութիւն անել անեկդոտների մէջ, մանաւանդ այդ գրքերից (իմա՝ *Анекдоты Немецкие, Французские, Американские и Английские. С Петербурга, годъ 1874. Анекдоты всех вековъ и народовъ. К.Е.В., т. I, год 1846. Ха՛., ха՛., ха՛., Собрание юморестическихъ анекдотов. М. Е. Москва. 1872г. Милліонь, а можетъ быть и меньше анекдотовъ, С Петербурга, 1874г.*), որովհետև դոքա պարունակած են իրեանց մէջը եւ շատ **անհամ** (ընդգծումը մերն է-ԱՍ) անեկդոտներ, որոնց մեր աշխատութեան դուրս ենք թողել: Եթե անխտիր ներմուծելու լինէինք բոլոր պատահած անեկդոտները, նոցա թիւը այնքան մեծ էր, որ մեր գիրքը այն ժամանակ երեք անգամ աւելի հաստ կլինէր, քան թէ այժմ է»³⁶:

Նազարյանցը ռուսական, ֆրանսիական, գերմանական անեկդոտները համեմատում է հայկականի հետ և եզրակացնում. «Անաչառ համեմատութիւնը միայն կարող է ցոյց տալ, թէ մերը նոցա մէջը ի՛նչ տեղ է բռնում: Մենք այսքան համարձակ չէինք կարող խօսել, եթէ կարդացած չլինէինք շատ ռուսերէն, ֆրանսերէն, եւ գերմաներէն անեկդոտների գրքեր, որոնց բովանդակութիւնը ո՛չ մի կերպով չէ արդարացնում իրանց ունած ու փքած ճակատագրերը»³⁷:

Անեկդոտների Ա հատորի *Հառաջաբանում* Նազարյանցը խոսում է նաև ժողովածու կազմելու սկզբունքների մասին, նա քննադատում է օտարազգի որոշ անեկդոտների ժողովածուներ կազմողների «սխալ» մոտեցումը՝ մի դեպքում միևնույն թեմաները միասին ներկայացնելով, մեկ այլ դեպքում՝ ներկայացնելով խառնիխուռն՝ ինչպես պա-

³⁵ Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, *Հառաջաբան*, էջ II:

³⁶ Նույն տեղում, էջ VIII:

³⁷ Նույն տեղում, էջ III:

տախի: Նա նշում է, որ նման թեմայով անեկդոտները չպետք է իրար մոտ դնել, որ «միատեսակ կերակուրի նման չձանձրացնի ընթերցողին, չսառցնի նրա ծիծաղելու ախորժակը», և իր գրքերում հայ քահանայի մասին պատմող անեկդոտի կողքին դնում է անգլիականը, սիրո թեմայից հետո՝ դպրոցական-աշակերտական նյութեր, «Մօլլա-Նասրէդդինի ստախոսութեան մօտ ...Նապօլէօնի սրամտութիւնը³⁸»...և այլն: Այնուամենայնիվ նա իր դասակարգման ձևը ևս անթերի չի համարում:

Ինչ խոսք, անեկդոտների դասակարգման նազարյանական այդ մոտեցումը գիտական չէր, քանզի այնպես էր ստացվում, որ Նազարյանցի հիմնական նպատակը ծիծաղեցնելն էր և ընթերցանության հանդեպ սեր առաջացնելը: Փաստենք նաև, որ չխմբավորված նյութերի աղբյուրների բացակայության պատճառով նրա գրքերում շատ հաճախ հնարավոր չի լինում հայկական անեկդոտները տարանջատել օտարից:

Հովհ. Նազարյանցը Ա հատորի *Հառաջաբանում* անդրադառնում է նաև հայկական պատումներում տվյալ բարբառը պահպանելու անհրաժեշտությանը՝ վերջինիս կապակցությամբ խոստովանելով՝ «թէպետ այս մասնում սակաւ յաջողուած լինէր մեզ»³⁹: Իսկ Բ հատորի *Հառաջաբանում* շեշտելով անեկդոտի ժանրի առկայությունը բոլոր ժողովուրդների մոտ՝ դժգոհում է հայոց մեջ դրա սակավությունից և անտեսելով այլ տարածքներում եղած բանարվեստի այդ տեսակի գոյությունը՝ մատնանշում է հայկական որոշ գավառների՝ անեկդոտներով ինչ-որ չափով հարուստ լինելը. «Գլխաւորապէս այն ժողովուրդներն են հարուստ նորանցով, որոնք տակաւին նահապետական կեանքով են ապրում: Մէզանում, – շարունակում է իր միտքը խորացնել նա, – որքան մէզ յայտնի է, այդպիսի ժողովուրդ համարվում են՝ Ղազախեցիք (խոսքը Ղազախի նահանգի մեջ մտնող այժմյան Տավուշի մարզի հայության մասին է – ԱՍ), Ղարաբաղցիք, Մշեցիք և

³⁸ Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, *Հառաջաբան*, էջ III:

³⁹ Նույն տեղում:

այլն: Մեզ հաւատացնում են, որ անեկդոտների հանքերն այդ ժողովուրդների մէջ պէտք է որոնել...»⁴⁰:

Հովհ. Նազարյանցը ուղղորդում է «գրականութիւնով պարապող» անձանց, որ «ուշադրութիւն դարձնէին այդ ժողովուրդների վերայ և մէզ նոցա կեանքից անեկդոտներ ուղարկէին: Դորանով նոքա մի մասնաւոր ծառայութիւն արած կ'լինէին Ազգին»⁴¹: Այնուհետև նա կրկին անդրադառնում է գրառման ժամանակ անհրաժեշտ որոշ պահանջների պահպանմանը՝ նյութերը գրանցելիս «առանձին ուշադրութիւն դարձնեն տեղական բարբառների վերայ և ժողովրդական խօսքերը գրեն ճիշդ այնպէս, ինչպէս գործ են անում»⁴²: Իսկ ասացողների խոսքում օտար բառերի առկայության դեպքում խորհուրդ է տալիս՝ «եթէ օտարազգի բառեր էլ մտած են, պէտք է գրել նաև նոցա հայերէն նշանակութիւնը»⁴³:

Ճիշտ է, ժողովածուն կազմելիս իր ձեռքի տակ եղած նյութերի գրանցման, դասարարական և այլ կարգի ոչ ճիշտ մոտեցումներից բացի, Նազարյանցն անեկդոտների հետ ընդգրկել է նաև բանասիրական այլ ժանրերի ստեղծագործություններ՝ երգիծական առած⁴⁴, առակ⁴⁵, ավանդազրոյց⁴⁶ և այլն, այնուամենայնիվ անեկդոտների եռահատորի հրատարակութիւնը այլոց համար ևս նմանատիպ ձեռնարկումների ազդակ հանդիսացավ:

Հովհ. Նազարյանցի «Անեկդոտների» առաջին և երկրորդ հատորների հրատարակութիւնից հետո իրար հետևից լույս են տեսնում ժողովրդական երգիծական ման-

⁴⁰ Անեկդոտներ, հատոր Բ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տիփսիս, տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877, Հառաջաբան, էջ VII- VIII:

⁴¹ Նույն տեղում, էջ VIII:

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում, էջ VII-VIII:

⁴⁴ Անեկդոտներ, Հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 48:

⁴⁵ Նույն տեղում, էջ 57:

⁴⁶ Անեկդոտներ, Հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 132-133:

րապատում-զվարճախոսությունների մի շարք գրքեր, որտեղ սկզբնական շրջանում հայկականի հետ ընդգրկված էին լինում նաև օտարազգիների անեկդոտները⁴⁷:

Իր հրատարակած անեկդոտների գրքում **Գալուստ Շիրմազանյանը** ևս վստահ էր, որ նման նյութերը ճանաչողական վիթխարի արժեք են ներկայացնում և կարող են խրախուսել երիտասարդությանը, որպեսզի ամեն մեկն իր գավառում, քաղաքում և գյուղում գրառի լսածներն ու դրանք հրատարակելու համար առաքի ազգային թերթերին, քանզի ժողովրդական ստեղծագործությունների «մէջը հանդէս դուրս կը գան ազգային մտային և բարոյական առաքինութիւնները և մոլութիւնները, սովորությունները, հանճարը, ուշիմութիւնը և պարզմտութիւնը ու նրանց վերածնութիւնները, մինչև անգամ կրօնական կամ քաղաքական կենցաղի մէջ զարգացումն, 'ի վերջոյ նրանցից երբեմն ինչ-ինչ դէպքեր կը ծառային ազգային պատմութեան վերաբերեալ ի'նչ-ի'նչ առարկաների բացատրութիւններին ևս»⁴⁸:

Ի տարբերություն նախորդ հրատարակիչների՝ Շիրմազանյանն անդրադառնում է նաև դրանց օգտակարությանը, դաստիարակչական դերին և առաջարկում, որ մանկավարժները ծաղկաքաղ անեն ու երեխաների հասակին համապատասխան՝ «տան մանուկներին ընթեռնույ, որպէս զի նրանց մատաղ միտքը նրանցով զբօսնու»⁴⁹: Նա հիմնավորում է իր անեկդոտներում օգտագործած տեղանունների, պատմական դէպքերի (ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներ), նույնիսկ անձնանունների առկայությունը, քանի որ դրանցով էլ ավելի պարզորոշ էր ուրվագծվում նմանատիպ ստեղծագործությունների աշխարհագրությունն ու արժևորվում պատմականությունը, տարբեր տարածքների, որոշակի բնակավայրերի ու առանձին գերդաստանների և ան-

⁴⁷ Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դէպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, Թիֆլիս, 1878:

Ծիծաղի տուպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահագիզեան, Թիֆլիս, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892:

Ծիծաղի տկճոր: Մոլլա Նասրեդինի առակներ, ծիծաղաշարժ անեկդոտներ և սրախոսութիւնների ժողովածու: Կազմեց՝ Արտեմ (Յարութիւն) Եսաեան, Թիֆլիս, տպարան Էպոխա, 1913 և այլն:

⁴⁸ Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դէպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, Թիֆլիս, 1878, էջ 4:

⁴⁹ Նույն տեղում, էջ 4-5:

հատների բնութագիրը ներկայացնելով՝ շեշտվում բնակչության մտածողությունների ընդհանրությունը⁵⁰:

Մակար վարդապետ Բարխուդարյանցն առաջին անգամ ընթերցողի ուշադրությունը հրավիրում է հայ զվարճախոս Պըլը-Պուղու վրա՝ նրա մասին կենսագրական հակիրճ տեղեկություններով, տողատակերում հետաքրքիր բացատրություններով, բարբառային դժվարամատչելի բառերի բառարանով 1883թ. հրատարակելով մի ինքնատիպ ժողովածու⁵¹:

Հրատարակվում են նաև հայոց որոշակի տարածաշրջաններին նվիրված ժողովածուներ, որտեղ ազգագրական նյութերի հետ տեղ են գտնում նաև բանահյուսական նմուշներ, որոնց մեջ կային երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ: Այս առումով, մեր ձեռքի տակ եղած տպագիր նյութերի շարքում հարկ է առանձնացնել **Գևորգ Շերենցի**⁵² Վասպուրական աշխարհի ժողովրդական ստեղծագործությունների, մասնավորապես անեկդոտների գրառումները⁵³, որտեղ շատ թե քիչ պահպանվել են Վանի բարբառի յուրահատկությունները:

Հարություն Ճանիկյանը ևս Ակնին նվիրված իր գրքի «Փոքր պատմութիւնք» բաժնում⁵⁴ ընդգրկել է 30 երգիծապատում և զվարճախոսություն, որոնցից «Քանի մը հատ ալ թուրքերէն խոսուած պատմութիւնք» են⁵⁵, ու մեկը՝ թիվ 8-ը⁵⁶, առնչվում է հարսանեկան ծիսակարգին, որի սյուժեն հայության մեջ շատ է տարածված, երբ փեսան

⁵⁰ Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, Թիֆլիս, 1878, էջ 6:

⁵¹ Պըլը-Պուղի, գրեց Մ.Վ. Բարխուդարեանց, Թիֆլիս, Մով. Վարդանեան եւ Ընկ. տպարան, 1883:

⁵² Վանա սագ, 1-ին մաս, ժողովեց Գէորգ Գ. Շերենց, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի, 1885, էջ 113-120, 11 նմուշ:

⁵³ Տե՛ս **Սարգսյան Ա.Շ.**, Վանեցիները անեկդոտ-զվարճապատումներում, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք 1, Վան, Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., «Գիտություն» հրատ., 2013, էջ 322-328:

⁵⁴ **Ճանիկեան Յ.**, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, տպարան Մ.Դ. Ռօտինեանցի, 1895, էջ 194-203:

⁵⁵ Նույն տեղում, էջ 196-197 (թիվ 7, 8, 9):

⁵⁶ Նույն տեղում, էջ 197:

քողը բարձրացնելուց հետո է միայն հարսին տեսնում ու հիասթափված ասում. «Ինձի մ'երևար, բայց ուրիշ որու կ'ուզես, երևա»⁵⁷:

Բանահավաքչական աշխատանքների մեջ են ներգրավվում գրականության ու գիտության ասպարեզներում առաջին քայլերն անող **Հովհաննես Թումանյանն** ու **Հրաչյա Աճառյանը**:

Հովհ. Թումանյանը 1887, 1889 և 1890 թվականներին «Նոր-Դար» օրաթերթի համարներում պարբերաբար տպագրության է հանձնում իր իսկ գրառած Լոռու ազգագրական-բանահյուսական նյութերը, որոնց թվում նաև՝ լոռեցիների 22 երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ⁵⁸: Հովհ. Թումանյանի հավաքչական այս գործունեության մասին հանրությանը հայտնի է դառնում շուրջ յոթ տասնամյակ անց՝ գրականագետ Էդ. Ջրբաշյանի «Նորահայտ էջեր Թումանյանի ժառանգությունից» հոդվածի տպագրությունից հետո միայն⁵⁹:

1892 թվականին շուկավերցի ուսուցիչ **Սմբատ Շահագիզյանը** հրատարակում է անեկդոտների մի գիրք՝ կրկին հայկականի հետ ընդգրկելով այլ ժողովուրդների նմուշներ⁶⁰: Ի դեպ, առանց երիտասարդ բանաստեղծի իմացության, նույնությամբ կամ լեզվաոճական որոշ փոփոխություններով, այդ ժողովածուում է հայտնվում նաև Թումանյանի գրառումներից 11 նմուշ: Ռուսաստանի Կամենեց-Պոդոլսկում գտնվող Ան. Աբովյանին 1890թ. օգոստոսի 27-ին գրած նամակներից մեկում Հովհ. Թումանյանը խոր հիասթափությամբ, բայց միևնույն ժամանակ վեհանձն պահվածքով է իր վերաբերմունքն արտահայտում այդ գրքի և նրա հեղինակի մասին. «Չգիտեմ քեզ գրել եմ թե չէ, որ ... Սմբատ Շահագիզը անեկդոտների գիրք է հրատարակում. այն գիրքը, որի միտքը

⁵⁷ Տե՛ս **Սարգսյան Ա.Շ.**, Չավեշտը հայոց հարսանեկան ծիսակարգին առնչվող անեկդոտներում, ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, Եր., 2017, թիվ 2, էջ 299-303:

⁵⁸ Տե՛ս **Սարգսյան Ա.Շ.**, Հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսությունների թումանյանական գրառումները և դրանց տարբերակային դրսևորումները, «Էջմիածին» ամսագիր, Ժ (հոկտեմբեր), 2015, էջ 98-111:

⁵⁹ **Ջրբաշյան Էդ.**, Նորահայտ էջեր Թումանյանի ժառանգությունից, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների, 1963, թիվ 12, էջ 69-76:

⁶⁰ Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Ս.Ս. Շահագիզյան, Թիֆլիզ, տպարան Մովսես Վարդանեանի, 1892:

ծագեցնելը քեզ է պատկանում, և որ պետք է երեքով (իմա՝ Հովհ. Թումանյանը, Ան. Աբովյանը և Ե. Խարազյանը – ԱՍ) էինք հրատարակել. Մի մասը արտագրած է «Նոր-Դար»-ից, – գրում է Թումանյանը նամակում ու ցավով ավելացնում, – անունը դրել են «Ծիծաղի տոպրակ»: Անունն ավելի գեղեցիկ է, քան թե յուր վարմունքը... Ես ոչինչ չասացի»⁶¹:

Շահագիզյանի ժողովածուի շուրջ 400 միավոր նյութերի մեջ գերակշռում են ազգային անեկդոտները, որտեղ խառը ներկայացված են և՛ երգիծական հեքիաթներն ու մանկական զվարճախոսությունները, և՛ առակները, ավանդազրույցներն ու առակատիպ զվարճապատումները: Գրքում տեղ են գտել նաև Արևելքի զվարճախոս Խոջա Նասրեդինի և լոռեցի զվարճախոս Հոբոսի մանրապատումներից:

Սմբատ Շահագիզյանի անեկդոտների գրքի «Բորչալուի եւ Լոռուայ գիւղերը իրենց համանիշ բնատրոփիններով» վերնագրի տակ ներկայացված են նաև 49 գյուղերի ժողովրդական ծաղրանունները⁶²:

Իր գրառած երկու մանրապատումում Լոռու գյուղերն ու գյուղացիներին ներկայացնելիս Հովհ. Թումանյանը մատնանշել էր նաև նրանց տրվող մականուն-ծաղրանունները՝ *թուրքաքամակ* դստեցիք (տողատակում գրառողը տալիս է հայրենի գյուղին տրվող երկրորդ ծաղրանուն-մականունը՝ «դստեցոց մարդասպան էլ են ասում»⁶³), *սապ-նասիրուն* ջալալօղլեցիք⁶⁴, *ագռավակեր* կուրթանեցիք⁶⁵: Երիտասարդ Թումանյանն իր գրառումներով ասես ուղղորդել էր Շահագիզյանին՝ ուշադրություն դարձնելու նաև ժողովրդական երգիծանքի նմանատիպ դրսևորումներին: Փաստենք նաև, որ Ե. Լալայանը «Բորչալուի գավառ» խորագիրը կրող պատմաագագագրական նյութերի մեջ նույնութ-

⁶¹ **Թումանյան Հովհ.**, Երկերի ժողովածու (այսուհետև՝ ԵԺ)՝ 6 հատորով, հատոր 5, Հայպետհրատ, 1945, էջ 22: Նամակներ (1885-1922), Նամակ Անուշավան Աբովյանին (Թիֆլիս-Կամենեց-Պոդոլսկ), 1890թ., օգոստոսի 27, Տիֆլիս:

⁶² Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Ս.Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 143- 145:

⁶³ **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու, (այսուհետև՝ ԵԼԺ)՝ 10 հատորով, հատոր 8, Եր., «Գիտություն» հրատ., 1999, էջ 584:

⁶⁴ Նույն տեղում:

⁶⁵ Նույն տեղում:

յամբ՝ «Լոռվա գյուղացիները» վերնագրով, ընդգրկել է նաև Շահազիզյանի հրատարակած բոլոր ծաղրանունները⁶⁶:

19-րդ դարավերջին **Հր. Աճառյանը** պոլսահայերից գրառում է մեծաքանակ ժողովրդական բանարվեստի արժեքավոր նմուշներ, որոնք ինչ-ինչ պատճառներով հրատարակվում են մեծ գիտնականի մահից շուրջ կես դար անց⁶⁷:

Երգիծական մանրապատումների աճառյանական գրառումներում հանդիպում ենք նաև Հովհ. Թումանյանի «Բարեկենդանի» և «Կիկոսի մահը»-ի հետաքրքիր տարբերակների, որոնցից առաջինն առնչվում է ոչ թե ժողովրդական Բարեկենդանի տոնին, այլ խենթ ու խելառ մարտ ամսվա՝ ժողովրդի բնորոշմամբ՝ *Մարտիկ ախպօր*, եղանակային դժվարությունները հաղթահարելուն⁶⁸: **Տե՛ս Հավելված 1, թիվ 1:**

Ի տարբերություն վանեցիների «Կակոսկե խոզու ճաշ»-ը⁶⁹ հեքիաթատիպ երգիծապատումի (ի դեպ, Հովհ. Թումանյանի «Կիկոսի մահը» գրվել է նույնասյուժե ծավալուն պատումների հենքի վրա)՝ պոլսահայերից գրառած աճառյանական տարբերակը կարճառոտ կառուցվածք ունի, մտմտացող-երազողը, ամուսնացողն ու դժբախտացողն էլ ոչ թե Կիկոսի մայրն է, այլ Գագիկը, որը որոշում է չկարգվել և մարդկանց բերանին ասելիք չդառնալ. *«Մըրմըրտացեր է քի, «էս հիմա էլլամ կարքըվիմ, զավակ ունենամ, զավակըս մեզնա, հապա ծառը էլլա, ծառէն վար իյնա մեռնի, ամմէնքը «Վա՛խ Գագիկ, Վա՛խ Գագիկ» ըսեն... Չէ՛, ըսեր է, չեմ կարքըվիր»*⁷⁰: **Տե՛ս Հավելված 1, թիվ 2:**

Բազմաժանր են պոլսահայերից Հր. Աճառյանի գրառած անգիր բանահյուսության նյութերը՝ ավանդական աղոթք, ժողովրդական երգ և օրոր, վիճակի երգ, հանգավոր խոսք, շուտասելուկ, հանելուկ, առած-ասացվածք, երդում, օրհնանք, անեծք, առակ, հեքիաթ և այլն: Սակայն աճառյանական այդ գրառումներում ևս բանահյուսութե-

⁶⁶ **Լալայան Ե.**, Երկեր, Հինգ հատորով, հատոր 3, Բորչալուի գավառ, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2004, էջ 300-301:

⁶⁷ **Աճառյան Հր.**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, Եր., ԵՊՀ հրատ., 2009:

⁶⁸ Նույն տեղում, էջ 169-170:

⁶⁹ Ծիծաղում են վանեցիները, Հավաքել, կազմել են Վարազդատ Հարությունյանը և Նորա Մելիքյանը, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 130-131:

⁷⁰ **Աճառյան Հր.**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009թ., էջ 181:

յան տեսակները հստակ տարբերակված չեն: Ժողովածուն պատրաստելիս Աճառյանը բուն առակները, ժողովրդական տարատեսակ զրույցներն ու ավանդազրույցները, անեկդոտները, երկխոսական առակ-զվարճախոսությունները, որոշ հեքիաթներ, առակատիպ հեքիաթներ և հեքիաթ-զվարճախոսություններ ընդգրկել է միևնույն՝ *Առակներ* բաժնում, որի ծանոթության մեջ գրում է. «Բոլոր այս առակները պատմվում են Պոլսի հայոց հասարակ դասակարգի մեջ»⁷¹ միաժամանակ ծանուցելով Մովսես Նասրեդինի և նոր եվրոպական առակների չգրառելու պատճառը. «Չեմ հավաքել Նասրեդինի հոջա»-ի (Մովսես Նասրեդինի) անունով եղած հարյուրավոր առակները, իբրև տաճկական կյանքի արտահայտություն, ինչպես նաև նոր եվրոպական առակները, որոնք, իհարկե, գրական ճանապարհով են մտել ժողովրդի մեջ»⁷²:

Հետագայում ևս Հր. Աճառյանը անտարբեր չի եղել անեկդոտների հանդեպ⁷³, շարունակել է գրառել անգամ իր մասին շրջանառվող նյութերը, որոնք մեծ գիտնականի անտիպ բանաստեղծությունների հետ հրատարակվել է առանձին գրքով⁷⁴:

Դասախոսների վերաբերյալ ուսանողների պատմած անեկդոտների մասին ահա թե ինչ է գրում նա. «Մեր ուսանողների անեկդոտները, բնականաբար, վերաբերում են դասախոսներին եւ համալսարանի այլ պաշտօնեաներին: Հետաքրքիր են դրանք նրանով, որ ներկայացնում են մի կողմից՝ դասախոսների բնութագիրը եւ միւս կողմից՝ ուսանողների սրամտութիւնը եւ դիտողական կարողութիւնը»⁷⁵:

Հայ ժողովրդագիտության անխոնջ մշակ **Երվանդ Լալայանը** 1903թ. հրատարակում է Արևելքի զվարճախոս Խոջա Նասրեդինին նվիրված մի հետաքրքիր գիրք՝

⁷¹ **Աճառյան Հր.**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009թ., էջ 159:

⁷² Նույն տեղում, էջ 181:

⁷³ Տե՛ս **Սարգսյան Ա.Շ.**, Հրաչյա Աճառյանը և երգիծապատում-զվարճախոսությունները (Հրաչյա Աճառյանի ծննդյան 140-ամյակի առթիվ), «Էջմիածին» ամսագիր, Յուլիս, 2017. Ս. Էջմիածին, էջ 96-110:

⁷⁴ **Աճառյան Հր.**, Բանաստեղծություններ: Անեկդոտներ իմ մասին: Կազմեց և ձևավորեց Հրաչյա Աճառյան Կրտսերը, Եր., Գրակ. և արվեստի թանգարանի հրատ., 2008:

⁷⁵ Նույն տեղում, էջ 16:

228 նմուշներով⁷⁶: Նույն տարում Լալայանը լույս է ընծայում լոռեցի զվարճախոս Հորոսին նվիրված մի փոքրիկ գրքույկ⁷⁷:

Թե՛ ժողովրդական բանավեստի նմուշների թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունների առումով, թե՛ մատուցվող նյութի անաղարտության՝ Մոկսի բարբառի յուրահատկությունները պահպանելու տեսանկյունից անգնահատելի են արևելագետ-հայագետ **Հովսեփ Օրբելու** կողմից 1911-1912 թվականներին Մոկսում կատարած գրառումները⁷⁸:

Օրբելու գրառումների առավելությունը այլ բանահավաքների գրանցածների համեմատությամբ այն է, որ մեծանուն հայագետը բարբառագետի և բանագետ-բանահավաքի բժախնդրությամբ է մոտեցել իր գրառած նյութերին՝ դրանք ներկայացնելով երկու բաժիններով՝ 1. Басни (Առակներ)⁷⁹ և 2. Забажные рассказы (Զվարճալի զրույցներ-երգիծապատումներ)⁸⁰:

Առաջին խմբի մեջ ընդգրկված 10 նմուշներից 4-ը բուն կենդանական առակներ են, 6-ը՝ առակային խորք ունեցող զվարճապատումներ՝ առակ-զվարճապատումներ, որոնց գործող անձինք մարդիկ են: Թե՛ որոշ առակ-զվարճապատումներում, թե՛ զվարճալի մանրապատումներում նույնիսկ աշխարհագրական անուններն ու տեղավայրերն են առկա՝ քաղաք, գյուղ, գետ, կամուրջ, եկեղեցի և այլն, անգամ կոնկրետացված են որոշ գործող անձինք. նշված են անձնանունները: Հետաքրքիր մի փաստ ևս՝ գրեթե բոլոր առակ-զվարճապատումներում և զվարճալի մանրապատումներում գործողությունները կատարվում են Մոկսի տարածաշրջանի որոշակի գյուղերում՝ ընդգծելով այնտեղ ապրող բնակչության հատկանշական այնպիսի գծերը, որոնք հիմք են հանդիսացել այս կամ այն մանրապատումի ստեղծման:

⁷⁶ Ժողովրդական առակներ: Ա. Մոլլա Նասր-էդ-դին, Հավաքեց՝ Ե. Լալայեան, Թիֆլիս, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1903-1904, 256 էջ:

⁷⁷ Ժողովրդական առակներ, Բ. Հորոս, Հավաքեց՝ Ե. Լալայեան, Թիֆլիս, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1903, 31 էջ:

⁷⁸ **Օրբելի Ի.**, том 2, Избранные труды, Ереван, изд. «Гитутюн», НАН РА, 2002, с. 55-68.

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Նույն տեղում, с. 57-69:

Օրբելու գրառած երկրորդ խմբի 33 նմուշներից «Իս»-ը⁸¹ մարդու և սատանայի մասին առակային խորք ունեցող հեքիաթ է, «Էրկու սուֆսան»-ը⁸² սուտասանների մասին ստապատում, մնացած 30-ը զվարճալի մանրապատումներ են, մեկը՝ զվարճախոսություն⁸³, իսկ զվարճապատումների մեծ մասը սեղմ կառուցվածքով խելապակասության թեմայով ժողովրդական ստեղծագործություններն են:

1913 թվականին **Արդեն Եսայանը** Թիֆլիսում հրատարակում է անեկդոտների մի գիրք, ուր տարատեսակ նյութերի, անեկդոտների հետ տեղ են գտել նաև 37 նասրեդինյան զվարճապատում⁸⁴: Նյութերի մի մասն այլ ժողովուրդների անեկդոտների թարգմանություններ են, ներկայացվում են հայկականի հետ խառը, և երբեմն դժվար է դրանք տարանջատելը:

Մեծ եղեռնի հետևանքով բնօրրանից տեղահանված գաղթականության մի մասը հանգրվանել էր նաև Անդրկովկասում: Արևմտահայոց հոգևոր մշակութային արժեքների փրկության գիտակցումով մեր մի շարք մտավորականներ անմիջապես ձեռնամուխ են լինում դրանք գրառելու աշխատանքներին: Փառք ու պատիվ մեր այն մտավորականներին, մասնավորապես Եր. Լալայանին ու նրա խմբարշավի անդամներին, որոնք, գիտակցելով նոր միջավայրում ու ժամանակներում մեր ժողովրդի հոգևոր մշակութային ժառանգության անգնահատելի արժեքների կորստյան վտանգը, 1915-16թթ. կարողացան բնավեր դարձած և Երևանում, Ալեքսանդրապոլում (Գյումրիում), Թիֆլիսում հայտնված, սովի ու հիվանդությունների ճիրաններում տառապող գաղթականությունից գրի առնել դարերի արհավիրքների միջով 20-րդ դարասկիզբ հասցրած մեր բառ ու բանի գոնե մի մասը, այդ թվում նաև որոշ վասպուրականյան երգիծական մանրապատումներ:

⁸¹ **Օրբели И.**, том 2, Избранные труды, Ереван, изд. «Гитутюн», НАН РА, 2002, с. 43.

⁸² Նույն տեղում, с. 67:

⁸³ Նույն տեղում, с. 59/17.

⁸⁴ Ծիծաղի տկճոր: Մուլա Նասրեդինի առակներ, ծիծաղաշարժ անեկդոտների և սրախոսությունների ժողովածու: Կազմեց Արտեմ (Հարություն) Եսայան, Թիֆլիս, տպարան «Էպոխա», 1913:

Եղեռնը, այնուհետև 70-ամյա ապագային խորհրդային կարգերը ընդհատեցին շուրջ մեկ դար առաջ սկսված ազգային արժեքների, նաև երգիծապատում-զվարճախոսությունների հրատարակման աշխատանքները:

Ըստ մեր ձեռքի տակ եղած անտիպ և տպագիր աղբյուրների տվյալների՝ 1920 թվականից մինչև 1980-ականների վերջը պետական հաստատությունների (ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ժողովրդական ստեղծագործության տուն⁸⁵) նախաձեռնությամբ և առանձին անհատների միջոցով տարաբնույթ բանահյուսական նյութերի հետ մեծ քանակությամբ երգիծապատում-զվարճախոսություններ են գրառվել, սակայն դրանց ժողովածուներ կամ անեկդոտներ պարունակող գրքեր գրեթե չեն հրատարակվել: Թերևս բացառությունը 1950-ականներից հրատարակվող բարբառագիտական ուսումնասիրությունների նմուշների բաժիններում ընդգրկված «անմեղ» թեմաներով հատ ու կենտ նյութերն են⁸⁶ և լեզվաբան **Սպ. Մալխասյանցի** Ախալցխայի բարբառով գրառումների գրքի հրատարակությունը⁸⁷:

Այլ էր պատկերը եղեռնից մազապուրծ աշխարհով մեկ սփռված արևմտահայոց ժողովրդական բանարվեստի գրառման և հրատարակման աշխատանքներում: Աշխարհի տարբեր անկյուններում ապաստանած արևմտահայության զանգվածների կարող ուժերը Բեյրութում, Կահիրեում, Լոս Անջելեսում, Նյու Յորքում և այլուր 1930-ականներից վերսկսում են Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի ու մերձավոր սփյուռքի հայկական մշակութային ժառանգությունը գրառելու, ի մի բերելու և հրատարակելու ձեռնարկները: Եվ որքան էլ զարմանալի է, այդ տարիներին հայրենազուրկ հայության

⁸⁵ Մշակույթի նախարարության կուլտուր-լուսավորական աշխատանքի և ժողովրդական ստեղծագործության հանրապետական գիտամեթոդական կենտրոնի՝ ՀԳՄԿ-ի (նախկինում՝ ժողովրդական ստեղծագործության տուն՝ Ժողտուն) բանահյուսության հարուստ արխիվը մեր նախաձեռնությամբ 1991-ին հանձնվել է Հայաստանի պետական (այժմ՝ ազգային) արխիվին, թիվ 1336:

⁸⁶ **Մկրտչյան Հ.**, Կարնո բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952թ., **Աղայան Է.**, Մեղրու բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1954: **Բաղդասարյան-Թափալցյան Ս.**, Մշո բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958: **Մուրադյան Մ.**, Շատախի բարբառը, Եր., ԵՊՀ հրատ., 1962: **Բաղրամյան Ռ.**, Շամախի բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964: **Պողոսյան Ա.**, Հաղրու բարբառը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1965: **Մուրադյան Հ.**, Կաքավաբերդի բարբառը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967: **Ասատրյան Մ.**, Լոռու խոսվածքը, Եր., «Միտք» հրատ., 1968:

⁸⁷ Առակներ, ավանդություններ, անեկդոտներ (Ախալցխայի բարբառով), Գրի առավ Ստ. Մալխասյանց, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958:

բեկորներն իրենց մեջ ուժ էին գտնում մոռացության ամենակուլ երախից փրկել նաև իրենց հայրենի տեղավայրերի անեկդոտները⁸⁸:

Նյութի յուրահատկությամբ թերևս առանձնանում է ժողովրդագետ **Հակոբ Չոլաքյանի** հրատարակած անեկդոտների ժողովածուն⁸⁹: Գիրքը արժեքավոր է հատկապես եղեռնից մազապուրծ արևմտահայության տարբեր բնակավայրերի (Այնթապ, Քիլիս, Մարաշ, Կեսարիա, Արաբկիր, Մուշ, Կարին, Սեբաստիա, Խարբերդ, Տիգրանակերտ, Ուրֆա, Ալն, Ջեյթուն և այլն) գաղթականության բեկորների կյանքի ոչ թե ողբերգական շերտերի նկարագրությամբ, այլ անկոտրում կամքի և ոգու կորովի դրսևորմամբ իրար հոգու հետ խաղալու և դժվարությունները ծաղր ու ծիծաղով հաղթահարելու տեսանկյունից:

1970-ականների սկզբից ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի նախաձեռնած «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի համարներում սկսում են պարբերաբար հրատարակվել Պատմական Հայաստանի և մերձավոր սփյուռքի որոշակի տարածքներից անհատ բանահավաքների և բանահյուսության բաժնի աշխատակիցների ջանքերով գրի առած հայ ժողովրդական բանահյուսությունը, այդ թվում նաև՝ երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները⁹⁰: ՀԱԻ-ի բա-

⁸⁸ Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Ջեյթուն, Երկասիրեց **Գր.Հ. Գալուստեան**, Հրատարակություն Մարաշի հայրենակցական միության կեդր. վարչություն, ԱՄՆ, Նիւ Եորք, 1934: Պատմություն հայ Կեսարիոյ (տեղագրական, պատմական և ազգագրական ուսումնասիրություն), Ա և Բ հատորներ, գրեց **Արշակ Ա. Ալպոյաճեան**, Գահիրէ, տպարան Յ. Փափագեան, 1937: Պատմություն Եվրոկիոյ Հայոց, գրեց **Արշակ Ա. Ալպոյաճեան**, Գահիրէ, Տպ. «Նոր Աստղ», 1952, 1751 էջ: **Բախտիկեան Ս.**, Շէփկայ խելացին (հայկական զուարճախոսություններ), Պէյրուֆ, Լիբանան, տպ. Օլիմպիք, 1953: **Բախտիկեան Ն.Ծ.** Վրդ., Փերիոյ խելացին (զուարճալի մանրադէպեր), Պէյրուֆ, Տպարան Սեւան, 1967: **Գէորգեան Գ.**, Չնքուշապատում, հատոր 1, Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 1970: Պատմություն Անթէպի հայոց, Գ հատոր, խմբագիր՝ **Երուանդ Պապայեան**: Լոս Անջելես, 1994 և այլն:

⁸⁹ Միջ-գաւառական անեքթոտներ, Հաւաքեց եւ ներկայացուց Յ. Չոլաքեան, Հալէպ, Տպ. Արեւելք-Հալէպ, 1988: Վերադասավորությամբ և նոր նյութերի լրացումներով այն վերահրատարակվել է 2005 թվականին:

⁹⁰ **ՀԱԲ**, հատոր 2, Խ.Ա.Փորքեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Եր., ԳԱ հրատ., 1971, էջ 78-91: **ՀԱԲ**, հատոր 3, ՀԱԲԲ (Մշո Բուլանըխ), Սահակ Մովսիսյան (Բենսե), Եր., ԳԱ հրատ. 1972, էջ 141-159: **ՀԱԲ**, հատոր 8, Ս. Ավագյան (Սերինե), Արճակ, Եր., ԳԱ հրատ., 1978, էջ 122-133: **ՀԱԲ**, հատոր 10, Գ. Գևորգյան, Ղզլար, Եր., ԳԱ հրատ., 1980, էջ 90-92: **ՀԱԲ**, հատոր 11, Գ.Հ. Միքայելյան, Նոր Բայազետ, Եր., ԳԱ հրատ., 1980, էջ 66-70, 76-79: **ՀԱԲ**, հատոր 14, Ռոզա Գրիգորյան, Գեղարքունիք, Եր., ԳԱ հրատ., 1983, էջ 160-164: **ՀԱԲ**, հատոր 15, Ավարդ Ղազիյան, Արցախ, Եր., ԳԱ հրատ., 1983, էջ 133-146: **ՀԱԲ**, հատոր 16, Վերժինե Սվազյան, Մուսա լեռ, Եր., ԳԱ հրատ., 1984, էջ 104-

նահյուսության բաժնի արխիվում մի շարք տարածաշրջաններից անհատ բանահավաքների միջոցով գրառած մեծ քանակությամբ անեկդոտներ կան, որոնք առ այսօր անտիպ են⁹¹:

Երևանի պետական համալսարանի բանահյուսության դասախոս **Նելլի Հակոբյանը** բանասիրական ֆակուլտետի ուսանողների միջոցով շուրջ երեք տասնամյակ ժողովրդական բանարվեստի հսկայաձավալ նմուշներ է հավաքել, որոնց մեջ քիչ չեն նաև երգիծապատումներն ու զվարճախոսությունները: Ի դեպ, բանասացներից շատերը 19-րդ դարավերջին կամ 20-րդ դարասկզբին ծնված մարդիկ են, նյութերից շատերը ձայնագրություններ են, որոնք էլ ավելի են բարձրացնում այդ հավաքածուի արժեքը⁹²:

Արձակագիր, լրագրող, հետագայում նաև բանագետ-ազգագրագետ **Սերգեյ Վարդանյանը** 1978-1983թթ. հայաստանյան և արտասահմանյան պարբերականներում դարոցականներին ուղղված կոչ է տպագրում՝ բանահյուսական նյութեր գրառելու հորդորով և լավագույնները տպագրելու խոստումով, ինչը անմիջապես տալիս է իր պտուղները: Հայաստանի և արտերկրի երեխաները մեծահասակներից գրառում և խմբագրություն են ուղարկում մեծ քանակությամբ բանարվեստի նմուշներ, որոնց մեջ կան նաև բազմաթիվ ժողովրդական երգիծանքի դրսևորումներ: Ս. Վարդանյանի

109: **ՀԱԲ**, հատոր 19, Ռախսա Խաչատրյան, Թալին, Եր., «Գիտություն» հրատ.,1999, էջ 105-108: **ՀԱԲ**, հատոր 20, Թամար Գևորգյան, Լոռի (Տաշիրք-Ձորագետ), Եր., «Գիտություն» հրատ.,1999, էջ 144-174: **ՀԱԲ**, հատոր 21, Էսթեր Խեմչյան, Տավուշ, Եր., «Գիտություն» հրատ.,2000, էջ 184-194: **ՀԱԲ**, հատոր 25, Էսթեր Խեմչյան, Իջևան (Ձորոփոր), Եր., «Գիտություն» հրատ., 2008, էջ 281-291:

⁹¹ ՀԱԻ-ի բանահյուսության բաժնի արխիվում տե՛ս **Միքայել Օհանջանյանի (Մուպեր Ղարաբաղցի) գրառած** 300 միավոր **արցախյան** հեքիաթ-անեկդոտները՝ «ք%թ-մ%ս%լները» (FF XII:, 7103-7700): Արարատյան դաշտավայրի գյուղերի **Խոյ-Սայմասրի** բարբառը կրող բնակչությունից անեկդոտների **թարվերդյանական (Վերդի)** գրառումները (մեծ մասը՝ բամբառակ), FFI:, 1495-1798, աշուղ Ծաղկալիի թոռան՝ **Հ. Հարթենյանի** նասրեղինյան գրառումները, FFI:, 3314-3350, **Լոռու** ներկա տարածաշրջանն ընդգրկող, այդ թվում նաև Վրաստանի տարածքում հայտնված գյուղերից **Վ. Ղազարյանի** գրանցած երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները (տե՛ս ՀԱԻ-ի ազգագրության արխիվ, Վ. Ղազարյանի ֆոնդ, թղթապանակ 87) և այլն:

⁹² Մեր նախաձեռնությամբ այդ ամբողջ հավաքածուն վերջերս ԳԱԱ ՀԱԻ-ի բանահյուսության բաժնի արխիվին սիրով նվիրաբերեց **Ն. Հակոբյանի** դուստրը՝ Անուշ Սեդրակյանը: ՀԱԻ-ի տնօրինության հոգաձության շնորհիվ այդ հավաքածուի բոլոր ձայնագրությունները թվայնացվել են:

Վերջերս **Ա. Ղանալանյանի** ընտանիքը ՀԱԻ-ի բանահյուսության բաժնի արխիվին նվիրեց վաստակաշատ բանագետի ձեռագրերը՝ գրառումներ, ուսումնասիրություններ, *անտիպ «Երգիծանի» ժողովածու:*

տքնաջան աշխատանքի արդյունքը արտացոլվում է մանկական հրաշալի երկու ժողովածուների հրատարակությամբ⁹³:

Մինչև Արցախյան շարժումն ու նորանկախ հանրապետության ստեղծումը հիմնականում հայ գրողներն են կարողացել քիչ թե շատ ճեղքել խորհրդային արգելքների և զգուշավորության պատնեշն ու առանձին գրքերով, սակայն գրական մշակումներով ներկայացնել Վասպուրականի, Գուգարքի, Արցախի, Աշտարակի հայկական անեկդոտները⁹⁴:

Հետխորհրդային առաջին իսկ տարիներից մի շարք երգիծաթերթեր են լույս տեսնում՝ Գյումրիում՝ «Պոլոզ Մուկուչ»-ը, Վանաձորում՝ «Եղինջ»-ը, իսկ Արցախյան ազատամարտի տարիներին ծնունդ առած անեկդոտները պարբերաբար տպագրվում են Ստեփանակերտում լույս տեսնող ինքնապաշտպանական կոմիտեի օրգան «Մարտիկ» թերթի էջերում: «Մարտիկ»-ում տպագրված երգիծապատում-գվարճախոսությունների գերակշռող մասը, այդ թվում նաև պատերազմին առնչվող նյութերը, վերաբերում էին զինվորական կյանքին, իսկ դրանք, բնականաբար, բարձրացնում էին իր հողն ու ջուրը պաշտպանող հայ զինվորի մարտական ոգին: Ի դեպ, հենց պատերազմի տարիներին էլ թերթում տպագրված անեկդոտները ի մի բերվելով՝ հրատարակվեցին երկու փոքրիկ գրքույկների տեսքով⁹⁵:

Նորանկախ հանրապետության ստեղծման առաջին տարիներից սկսվում են իրար հետևից հրատարակվել ամենատարբեր բնույթի ու որակի (տվյալ տարածքի բարբառը

⁹³ Հրեղեն ձին, Մշակեց և վերապատմեց Սերգեյ Վարդանյանը, Առաջաբանը՝ Սարգիս Հարությունյանի, Եր., «Սովետական գրող» հրատ., 1981: Թագավորի երազները (Բանահյուսական ժողովածու), Կազմեց, ծանոթագրեց և հրատարակության պատրաստեց Սերգեյ Վարդանյանը, Եր., «Գասպրինտ» հրատ., 2003: Երկու գրքերի ընտրանին՝ «Փրկված հեքիաթներ» վերնագրով, հրատարակվել է նաև անգլերեն և գերմաներեն:

Ս. Վարդանյանը դպրոցականների գրառած ամբողջ հավաքածուն հանձնում է ԳԱԱ ՀԱԻ-ի բանահյուսության արխիվին:

⁹⁴ **Դևկանց Ա.**, Կաճեթա ծոեր, Հաղագս ծիծաղական պատմությանց և վասն խրատի, Եր., «Հայաստան» հրատ., 1974: **Սեյրանյան Բ.**, Գուգարքի ուրախ գրույցներ, Եր., «Սովետական գրող» հրատ., 1982: **Խան-զադյան Ս.**, Պըլը Պոլի, Եր., «Արևիկ» հրատ., 1988: **Գյուլնազարյան Խ.**, Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991:

⁹⁵ **Աթաջանյան Վ.**, Խաչին, Բուլբուլը և ուրիշները, ԼՂՀ ԻՊԿ օրգան «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1993: **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ակնթարթ: Զվարճապատումներ, «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1995:

պահպանած կամ գրականացված) բազում անեկդոտների գրքեր ու գրքույկներ: Դրանց մի մասը, թերություններ ունենալով հանդերձ, նույնպես որոշակի արժեք է ներկայացնում, քանզի կորստից փրկվում էին ժողովրդական երգիծանքում զանազան տարածաշրջաններին առնչվող պատմական, աշխարհագրական, ազգագրական և այլ կարգի տեղեկություններ:

Այսպիսով, ավելի քան 170 տարիների ընթացքում Պատմական Հայաստանից և նրան հարակից տարածքներից գրառվել է հսկայածավալ նյութ, որի մի մասը տպագրվել է տարատեսակ ժողովածուներում, մի մասն էլ պահպանվում է պետական արխիվներում և մասնավոր հավաքածուներում, սակայն հայ բանագիտության ասպարեզում վիպական բանահյուսության այս տեսակը առ այսօր համապարփակ չի ուսումնասիրվել:

Նշենք նաև, որ հայ ժողովրդական բանահյուսության դասագրքերում ու բանագիտական տարատեսակ ուսումնասիրություններում և բանահյուսության ժողովածուներում կամ անեկդոտների գրքերի առաջաբաններում հակիրճ անդրադարձներ են եղել, հրատարակվել են նաև որոշ հոդված-ուսումնասիրություններ, որոնք, սակայն, հիմնականում վերաբերել են կա՛մ ժողովրդական բանարվեստի այդ տեսակի գրառումներին ու թեմատիկ դրսևորման որևէ կողմին⁹⁶, կա՛մ էլ որևէ զվարճախոսին⁹⁷: Եվ եթե եվրոպական մի շարք ժողովուրդներ անեկդոտների մասին հոդված-ուսումնասիրություններ սկսել են հրատարակել դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսից, և այդ աշխատանքը շարու-

⁹⁶ **Վարդանյան Հր.**, Ոչ մասնագիտական դիտողություններ՝ բանահավաքի հուշատետրից, «Հայրենի եզերք» պատկերազարդ հանդես, Եր., 1991, հունիս, էջ 30-33 և էջ 40: **Абрамян Л.**, Ленин как трикстер, Современная российская мифология, Москва, 2005, стр. 68-88. **Մարգարյան Ն.**, Լենինական-Երևան մրցակցությունը 1970-80-ականների զվարճախոսություններում և սրամտություններում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական 7-րդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2007, էջ 151-157: **Գալստյան Հ.**, Երգիծական բանահյուսության արդի գրառումներ Վահրամաբերդից, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական 7-րդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2007, էջ 267-272: **Ղոնջյան Լ.**, Ժողովրդական ասոյթաբանության և ավանդական զրույցների կապը (ըստ Գավառում գրանցած նյութերի), Հայ ժողովրդական մշակույթ – 14, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 393-399, և այլք:

⁹⁷ Զվարճախոսների մասին գրված հոդված-ուսումնասիրություններին անդրադարձել ենք ատենախոսության չորրորդ՝ «**Հայ և օտարազգի զվարճախոսները**» գլխում:

նակվում է առ այսօր⁹⁸, նույնիսկ հրատարակվել է անեկդոտների համահավաք (1929-1930թթ. Պ. Բերկերտը հրատարակում է լատիշական անեկդոտների քառահատոր համահավաքը⁹⁹), հեքիաթների սյուժեների և տիպերի համացույցներ (նշացանկեր) են մշակվել, որոնց մեջ ընդգրկվել են նաև հեքիաթատիպ անեկդոտները¹⁰⁰, ապա բացառությամբ 1978թ. Ա. Ղազիյանի՝ Պըլը Պուդուն նվիրված աշխատանքի¹⁰¹, հայ բանագիտության ասպարեզում մինչև 1990-ական թվականների սկիզբը զուտ երգիծական մանրապատումներին և զվարճախոսություններին նվիրված հոդված-ուսումնասիրություններ չեն հրատարակվել:

Անեկդոտների մասին գրված հոդվածներից թերևս հարկ է առանձնացնել բանագետ Հր. Վարդանյանի՝ Ղարաբաղյան շարժմանը նվիրված հոդվածը¹⁰², իսկ ուսումնասիրություններից՝ բանասիրության դոկտոր Անուշավան Մակարյանի «Անեկդոտի զարգացումը հայ գրականության մեջ» անավարտ աշխատանքը¹⁰³: Վերջինս, սակայն, վերաբերում է գրականության և բանահյուսության կապի խնդիրներին, որի «Թաղիադ-

⁹⁸ **Пельтцер А.П.**, Происхождение анекдотов. //СБ. Харьк. Инст.-фил. о-ва., Т.11. Харьков, 1899. С. 57-58. Латышские народные анекдоты, Составитель Арайс К., перевод Г. Горского, Издательство Академии наук Латвийской ССР, Рига, 1963, 280 с.

Курганов Е., Анекдот как жанр, СДБ: Акад. проект. гуманитарн. агенство. 1997. 127 с.

Шмелева Е., Шмелев А., Рассказывание анекдота как жанр современной русской устной речи. Труды Международного семинара Диалог 98 по компьютерной лингвистике и ее приложениям. Казань, 1998. Т. 1, с. 262-271.

Химик В.В. Анекдот как феномен культуры. Материалы круглого стола 16 ноября, 2002г., /СПб.: Санкт-Петербургское философское общество, 2002.

Каган М.С., Анекдот как феномен культуры. Материалы круглого стола 16 ноября, 2002, СПб, с. 5-16.

Шишков С.М. Абсурдный анекдот в культуре. Материалы круглого стола 16 ноября, 2002, СПб, с. 139-147.

⁹⁹ Латышские народные анекдоты, Составитель Арайс К., перевод Г. Горского, Издательство Академии наук Латвийской ССР, Рига, 1963, с. 10.

¹⁰⁰ **Aarne, A.** Estnische Märchen und Sagenvarianten. Verzeichnis der zu den Hurtschen Handschriftsammlungen gehörenden Aufzeichnungen. Mit der Unterstützung der Finnisch-Bugrighen Gesellschaft. Hamina, 1918.160 S.(FFC 25).

Андреев Н. Указатель сказочных сюжетов по системе Аарне Л., 1929. 120 с.

Thompson, S. Motif-index of Folk-Literature, volume 4, J-K, Helsinki, 1934, Academia Scientiarum Fennica, 501 p.

Aarne A., Thompson, S., The Types of the Folktale. A Classification and Bibliography. Antti Aarne's Verzeichnis der Märchentypen. Translated and Enlarged by Stith Thompson, Second Revision, Helsinki, 1964, Academia Scientiarum Fennica, 588 p.

¹⁰¹ **Ղազիյան Ա.**, Ղարաբաղի զվարճախոս Պըլ Պուդին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, Եր., 1978, թիվ 9, էջ 60-69:

¹⁰² **Վարդանյան Հր.**, Ոչ մասնագիտական դիտողություններ՝ բանահավաքի հուշատետրից, «Հայրենի եզերք» պատկերազարդ հանդես, Եր., 1991, հունիս, էջ 30-33 և էջ 40:

¹⁰³ **Մակարյան Ա.**, Անեկդոտի զարգացումը հայ գրականության մեջ, Եր., «Մեիյան» հրատ., 2000, 160 էջ:

յանը անեկդոտիստ»¹⁰⁴ և «Աբովյանը անեկդոտիստ»¹⁰⁵ գլուխներում հեղինակն անդրադարձել է Թադիադյանի ու Աբովյանի ստեղծագործություններում անեկդոտների կիրառություններին, իսկ «Հայկական անեկդոտների մի շարք մոտիվների ընդհանրությունը մյուս ժողովուրդների անեկդոտների հետ» գլխում՝ Հովհ. Թումանյանի «Կիկոսի մահը», «Բարեկենդանը», «Խելոքն ու հիմարը», «Տերն ու ծառան» հեքիաթ-գվարճապատումների գրական մշակումներին և այլ ժողովուրդների նույնատիպ թեմաների հետ դրանց տարակերպ առնչություններին¹⁰⁶:

Անեկդոտները հետազոտության համար հենք են հանդիսացել նաև լեզվաբանական հոդված-ուսումնասիրություններում: Այսպես, «Կանթեղում» տպագրված Սերինե Հովհաննիսյանի՝ «Անեկդոտի հասարակական, համատեքստային, ազգային և համազգային բնույթը» հոդվածում¹⁰⁷ հեղինակը անեկդոտի մասին խորքային քննարկումը կատարում է խոսքային հաղորդակցության համատեքստում: Իսկ Աննա Կնյազյանը անեկդոտը քննարկում է կա՛մ հաղորդակցային լեզվաբանության տեսանկյունից, որպես «խոսքային շփման ժանր, որպես խոսքի մշակույթի երևույթ» ու բանավոր հաղորդակցական վարքի ինքնատիպ աղբյուր, կա՛մ էլ տղամարդու և կնոջ բանավոր խոսքում ազդեցիկ վարքի դրսևորման տեսանկյունից՝ հիմք ընդունելով հայկական և անգլիական «կենցաղային» անեկդոտների նմուշները (վերջինս գրվել է համահեղինակությամբ)¹⁰⁸:

Համացանցում տեղադրված են նաև անեկդոտների կենցաղավարմանը նվիրված կարճառոտ մեկ ուսումնասիրություն¹⁰⁹ և տարբեր որակի ու բնույթի մի շարք տե-

¹⁰⁴ **Մակարյան Ա.**, Անեկդոտի զարգացումը հայ գրականության մեջ, Եր., «Մեդյան» հրատ., 2000, էջ 82:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 90:

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 105-118:

¹⁰⁷ www.kantegh.asj-oa.am, **Հովհաննիսյան Սերինե**, Անեկդոտի հասարակական, համատեքստային, ազգային և համազգային բնույթը, «Կանթեղ» Գիտական հոդվածների ժողովածու, 2007, հ.1, էջ 14-19:

¹⁰⁸ www.ysu.am, **Կնյազյան Աննա**, Երգիծական խոսույթի ժանրային հատկանիշները, «Աստղիկ» տարեգիրք, Գիտական հոդվածների ժողովածու, 2015, հ. 26, էջ 93:

www.seanewdim.com, Science and Education a New Dimension, Philology, v(35), Issue: 125,2017.

Гаспарян С., Князян А., Гендерные особенности агрессивного вербального поведения мужчин и женщин (на материале английских и армянских „бытовых„ анекдотов), с. 22-24.

¹⁰⁹ www.granish.org, Հովնանյան Անի, Անեկդոտների կենցաղավարումը, 12.07.2013թ.

ղավայրերին առնչվող երգիծապատում-զվարճախոսություններ, որոնց հարկ չենք համարում այստեղ անդրադառնալ:

1.2. Ժողովրդական և գիտական եզրույթները

Ժողովրդական բանավոր երգիծանքի մաս կազմող մանրապատումներն ու զվարճախոսությունները՝ անեկդոտները, տարբեր տարածաշրջաններում հայոց մեջ տարատեսակ անվանումներ են ունեցել՝ առակ, բեթ (բեյթ), գափ (գյափ), շուխ, շուլուխ, հանաք, պընկըլ-պունգըլ, մասալ, զարափ(ֆ)աթ և այլն:

Գիտական և գրական շրջանակներում ևս դրանք զանազան անվանումներով են հանդես եկել՝ **առասպել, զվարճալիք** (զուարճալիք), **խնդուկ, մանրադէպ, մանրավէպ, սրախոսություն-սրամտություն, ժողովրդական երգիծական մանրապատում, զվարճապատում, զվարճախոսություն**, օտարալեզու **ջոք, անեկդոտ** (վերջինս 19-րդ դարի երկրորդ կեսից սկսվեց շրջանառվել նաև ժողովրդի մեջ) և այլն:

19-20-րդ դարերում լույս տեսած բանահյուսական ժողովածուների և անեկդոտների գրքերի մեծ մասում ու բանագիտական ուսումնասիրություններում դեռևս լիովին հստակեցված չէին ժողովրդական երգիծապատում-զվարճախոսությունների՝ անեկդոտների սահմանագծերը, սահմանազատված չէին ժողովրդական արձակի այդ տեսակի ժանրային հատկանիշները, և առակի անվան տակ ներկայացվել են թե՛ բուն առակը, թե՛ առածն ու ավանդազրույցը, հեքիաթի տակ՝ զվարճապատումը, առասպելի տակ՝ առակը, զրույցը և այլն:

Նման բան առկա էր նաև հայ միջնադարյան զրույցների պարագայում: Այդ մասին Արմենուհի Սրապյանը, հայ միջնադարյան զրույցներին նվիրված իր ուսումնասիրության մեջ մատնանշելով Մ. Էմինի, Յ. Գաթրճյանի, Ս. Պալասանյանցի, Գ. Խալաթյանցի համապատասխան աշխատությունները, հետևյալ դիտարկումն է արել. «Հայ միջնադարյան զրույցների հատուկ ժողովածուներ կամ հետազոտություններ չկան: Դրա

պատճառը թերևս մասամբ մանրապատում զանազան ստեղծագործությունների մեջ գոյություն ունեցող ժանրային ընդհանրություններն են և հստակ ու որոշակիորեն չսահմանազատված առանձնահատկությունները: *Առակ* ասելով՝ հասկացել են և *առած*, *առածը՝ ասացվածք*, *գրույցը՝ առակ*, *հեքիաթ*, *առասպել*, *վեպը՝ գրույց*, *առասպել և այլն*¹¹⁰»:

Այդ խառնաշփոթը առկա է եղել նաև եվրոպական, այդ թվում նաև ռուսական բանագիտության մեջ: Այսպես, մինչև 20-րդ դարի 20-ական թվականները լատիշ բանագետները անեկդոտն անվանել են *երգիծական հեքիաթ* կամ *գրույց*¹¹¹: Ըստ էստոն բանագետների՝ վաղ շրջանի էստոնական ծավալուն անեկդոտներն իրենց կառուցվածքով մոտենում են հեքիաթի ժանրին¹¹²:

Ռուս բանագիտության մեջ ևս մինչև վերջերս ժանրային այդ տարբերակումները հստակեցված չեն եղել: Այսպես, ռուս բանագետներ Պոմերանցևան և Պրոպը անեկդոտը մտցնում են հեքիաթների մեջ, Պոմերանցևան՝ երգիծական հեքիաթների¹¹³, իսկ Պրոպը, հեքիաթներն առանձնացնելով ըստ կերպարների, անեկդոտը դասում է կենդանիների և մարդկանց մասին հեքիաթների շարքում¹¹⁴: Նա մարդկանց մասին պատումների մեջ մտցնում է և՛ «ոեալիստական՝ կենցաղային կամ նովելային» հեքիաթները, և՛ անեկդոտներն ու ստահոդ պատմությունները (небылицы): Ռուսական բանահյուսության ժանրերին նվիրված աշխատության մեջ Պրոպը գրում է, որ մարդկանց մասին կենցաղային հեքիաթների և անեկդոտների միջև սահմանը տարրորոշված չէ¹¹⁵:

Իսկ ինչպե՞ս են դրանք բնութագրվում ժողովրդի կողմից և տարբեր բառարաններում, լեզվաբանների, մշակութաբանների, բանագետների, գրականագետների ու-

¹¹⁰ **Սրապյան Ա.**, Հայ միջնադարյան գրույցներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 12:

¹¹¹ Латышские народные анекдоты, Составитель Арайс К., перевод Г. Горского, Издательство Академии наук Латвийской ССР, Рига, 1963, с. 9.

¹¹² Эстонский фольклор, Издательство «Ээсти раамат» 1980, с. 261.

¹¹³ **Померанцева Э.**, Русская народная сказка, М., 1963, с. 87-103.

¹¹⁴ **Проп В.**, Жанровый состав русского фольклора, Фольклор и действительность, М., 1976, с. 47-50.

¹¹⁵ Նույն տեղում, էջ 49:

սումնասիրություններում, գրողների հրատարակած գրքերում ու բանահավաքների ժողովածուներում ի՞նչ հատկանիշներով են ներկայացված:

Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» **առակ** նշանակում է նաև «փոքր պատմություն՝ ուր կայ մի բարեխրատ օրինակ, ...Երբ առակը պարզ չէ և նմանությունը դժուարըմբռնելի, այն ժամանակ նա դառնում է „առեղծուած, հանելուկ,,: Իսկ երբ ամփօփուած է մի կարճ ձևի մէջ, համարում է „առած, *ասացուած*,»¹¹⁶:

«Հայոց լեզվի բարբառային բառարանում» **առակ**-ը բացատրված է նաև որպես հայիոյանք, նախատական խոսք, հանդիմանություն¹¹⁷, իսկ Մալխասյանցի բառարանում՝ նաև՝ առած, հասարակաց զրուցուածք, համառոտ պատմուածք, դժուարիմաց այլաբանութիւն և այլն¹¹⁸:

Չնայած «Հայոց լեզվի բարբառային բառարանում» նշվում է, որ **բեթ**-ը՝ առակ և հանելուկ նշանակությամբ, առկա է միայն Մոկսի տարածաշրջանում¹¹⁹, Սերինե Ավագյանի գրքում Մոկսից բացի, նշվում է նաև Վասպուրական աշխարհի Արճակ գավառը, որտեղ ժողովուրդը զվարճապատումներին տվել է **բեթ** (բեյթ) անվանումը¹²⁰, իսկ **բեթ պիրեւ**-ը նշանակել է *զվարճալի պատմություն, զվարճապատում, առակ-զվարճապատում պատմել*¹²¹:

Ի դեպ, մինչև 20-րդ դարի 60-ական թվականները ժողովուրդը կիրառել է «**առակ**» («առակ ասել») եզրույթը՝ նկատի ունենալով թե՛ բուն առակը, թե՛ առած-ասացվածքը, թե՛ զվարճապատում-զվարճախոսությունը, իսկ դրանց հաճախակի գործածողին ու հանպատրաստից նորերը ստեղծողին որոշ տարածքներում (ինչպես, օրինակ՝ Ախալցխայում¹²² և Լոռիում¹²³) անվանել է նաև առակախոս: Նշենք նաև, որ իր հրատա-

¹¹⁶ **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հատոր Ա, Եր., ԵՊՀ հրատ., 1971, էջ 249:

¹¹⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, Եր., «Գիտություն» հրատ., 2001, էջ 97:

¹¹⁸ **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատոր 1, ԵՊՀ հրատ., Եր., 2010, էջ 214:

¹¹⁹ Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, Եր., «Գիտություն» հրատ., 2001, էջ 176:

¹²⁰ ՀԱԲ, հատոր 8, Ս. Ավագյան (Սերինե), Արճակ, Եր., «Գիտություն» հրատ., 1978, էջ 129:

¹²¹ Նույն տեղում, էջ 130:

¹²² Ախալցխայում հայտնի է եղել առակախոս Սարգիս Մալխասյանը՝ լեզվաբան, բառարանագիր Ստ. Մալխասյանցի հայրը: Տե՛ս Առակներ, ավանդություններ, անեկդոտներ (Ախալցխայի բարբառով): Գրի առավ Ստ. Մալխասյանց: ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1958, էջ 7:

րակաճ հայ և արևելքի զվարճախոսներին (Հոբոս, Խոջա Նասրեդին) նվիրված գրքերի նյութերը Երվանդ Լալայանը ևս 20-րդ դարարասկզբին անվանել է *առակներ*¹²⁴:

20-րդ դարի երկրորդ կեսին հրատարակված Ստ. Մալխասյանցի գրքում արդեն տարանջատվել են *առակն ու անեկդոտը*¹²⁵:

Պատմական Արցախի Հաղորդի ու Մարտակերտի շրջաններում զվարճապատումներն ու զվարճախոսությունները տարբեր անվանումներով են հանդես գալիս՝ **շուլուխ, հանաք, գափ** (գյափ-կյափ), **զարափափ** և այլն¹²⁶: Տավուշի մարզի Կոթի գյուղում **գափ անել** նշանակում է կատակել, զվարճալի բաներ պատմել:

Մակար վարդապետ Բարխուդարեանցի գրառումներից մեկում Պըլը-Պուղուն դիմողները խնդրում են Պուղուն, թե՛ «Պուղի, Աստուած սիրես. մին քանի **կեափ արա՛**, ականջ դնենք ... Բո **կեափերը** շատ դուրական են»¹²⁷:

Ջարափաթ-գառաֆաթ եզրույթը՝ կատակ, հանաք իմաստով, գործածվել է ոչ միայն Ղարաբաղում, այլև Շամախիում, Վանում, Կարինում, Սասունում, Արարատյան դաշտավայրում¹²⁸, նաև՝ Ագուլիսում¹²⁹, իսկ **շուլուխ(դ)**-ը, **հանաք**-ը՝ Արարատյան դաշտում, Ղարաբաղում, Շամախիում¹³⁰ և Լոռիում¹³¹): Սակայն **շուլուխ** և **հանաք** եզրույթ-

¹²³ Լոռու մարզի Շամուտ գյուղից Չոբանանց Արուֆնի համբավը, իբրև հայտնի առակախոս, տարածված է եղել նաև Տավուշի մարզի Նոյեմբերյանի և Իջևանի տարածաշրջաններում (Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու, այսուհետև՝ ԱՍՇՀ):

¹²⁴ Ժողովրդական առակներ. Ա. Մոլլա Նասր – էդ – դին, Հավաքեց՝ Ե. Լալայեան, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1904:

Ժողովրդական առակներ, Բ. Հոբոս, հավաքեց Ե. Լալայեան, Թիֆլիս, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1903:

¹²⁵ Առակներ, ավանդություններ, անեկդոտներ (Ախալցխայի բարբառով): Գրի առավ Ստ. Մալխասյանց: ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1958:

¹²⁶ **Վարդանյան Սվ.**, Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից, ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, 1971, թիվ 8 (344), էջ 92:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, Եր., «Գիտություն» հրատ., 2001, էջ 231:

¹²⁷ Պըլը-Պուղի, գրեց Մակար վարդապետ Բարխուդարեանց, Թիֆլիս, Մով. Վարդանեանի և ընկ. Տպարան, 1883, էջ 78:

¹²⁸ Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, Եր., «Գիտություն» հրատ., 2001, էջ 402:

¹²⁹ Ագուլիսի բարբառի մասունքներ, Աշխատասիրությամբ Արգամ Այվազյանի, 2-րդ հրատ., Եր., «Գասպրինտ», հրատ., 2012, էջ 159:

¹³⁰ Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, Եր., «Գիտություն» հրատ., 2001, էջ 289:

¹³¹ **Սաքանյան Ա.**, Լոռվա հանաքներ, Եր., «Սովետական գրող» հրատ., 1977:

Գյուլնազարյան Խ., Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991:

ները չեն արտացոլում անսպասելի ծիծաղ առաջացնելու հանգամանքը, դրանք առավելապես սովորական կատակն են մատնանշում:

Զվարճապատումներին տրվող ժողովրդական **պընկըլ-պունգըլ** եզրաբառը, բացի **պընգըլ-բունգլ-բունկլի**՝ *հանելուկ* իմաստից (Ղարաբաղ, Լոռի)¹³², *բունգն* գրությամբ Նոր Զուղայում *հեքիաթ* իմաստն է ունեցել¹³³: Ժողովրդական արտասանությամբ այդ բոլոր ձևերը, ըստ Աճառյանի, առաջացել են «**բանկն**»-ից, որը նշանակել է *առասպել, հեքիաթ, մուսալ*, իսկ **բանկնարկել**՝ *առասպելաբանել*¹³⁴:

Երբեմն էլ եթե խոսքը անպարկեշտ՝ ոչ վայելուչ անեկդոտի մասին է, օգտագործվում է **բամբառանք** եզրաբառը (ըստ Վիլյամ Սարոյանի՝ *գռեհիկ՝ բամբառակ*¹³⁵): Թե՛ Մալխասյանցի բառարանում¹³⁶, թե՛ Հայոց լեզվի բարբառային բառարանում¹³⁷ **բամբառակ-բամբարակը**, բացի *կատակաբան, զվարճաբան, հանաքչի, անպարկեշտ, հասարակութեան մեջ չասվելիք, ոչ-ցենզուրական* հասկացություններից, նշանակել է նաև *մեծախոս, պոռոտախոս, թույլ՝ անճարակ՝ բանուգործ չունեցող մարդ*: Փաստենք նաև, որ Ակնում **անկուիլ**, ըստ Աճառյանի, նշանակել է իրար հետ անճոռնի կատակներ անել¹³⁸:

Կալկաթայում հրատարակված պարսկական երգիծապատումների թարգմանությունների ժողովածուն՝ հայկական 19 նմուշների հավելվածով, Մ. Թաղիադյանը վերնագրել է «Զուարճախօս առակք Պարսից»¹³⁹, իսկ Մովսես Զոհրապյանցը գերմանական, ֆրանսիական, անգլիական, հնդկական, ռուսական, հունական անեկդոտների թարգմանությունները և մի քանի հայկական նմուշներ պարունակող գիրքն անվանել է

¹³² Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, Եր., «Գիտություն» հրատ., 2001, էջ 222:

¹³³ Նույն տեղում:

¹³⁴ **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հատոր Ա, Եր., ԵՊՀ հրատ., 1971, էջ 407-408:

¹³⁵ **Հարությունյան Ա.**, 8 օր Սարոյանի հետ, «Սովետական գրականություն» ամսագիր, Եր., 1970, թիվ 8, էջ 83:

¹³⁶ **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հատոր 1, ԵՊՀ հրատ., Եր., 2010, էջ 322:

¹³⁷ Հայոց լեզվի բարբառային բառարանում, հատոր Ա, Եր., «Գիտություն» հրատ., 2001, էջ 156:

¹³⁸ **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հատոր Ա, Եր., ԵՊՀ հրատ., 1971, էջ 250:

¹³⁹ Զուարճախօս առակք Պարսից: Թարգմ.՝ Մ.Դ. Թաղիադեանց, Թարգմանեալ հանդերձ յաւելուածովք, Կալկաթայ, տպարան Արարատեան ընկ., 1846:

«Վէպք զուարճալի անձից, յորս պարունակին խրատական և իմաստալից ասացուածք»¹⁴⁰:

Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը «Պարապ վախտի խաղալիք»-ում «Ասացվածք բնահայտք ինքնահարմար հորինված»¹⁴¹ վերնագրի տակ մտցրել է չափածոյի վերածած լոռեցիների և Մովսէս Մասրադնի 4-ական անեկդոտ և 7 առակ, նույն կերպ էլ *ասացվածք*-ի տակ՝ 5 առակատիպ նմուշ¹⁴²: Մեկ այլ դեպքում չափածոյի վերածած 10 առակները նա անվանում է *առասպելք*¹⁴³, իսկ «Զվարճալի ու կարճ պատմությունք» մանրապատումների ժողովածուում, որը հիմնականում այլ ժողովուրդներից թարգմանած կամ փոխադրած անեկդոտներ են, նշվում է նաև՝ *սրամիտ առածք* (մասալեք)¹⁴⁴ եզրույթները:

Խաչատուր Աբովյանը, հետագայում նաև մեր բանահավաքչության ու ժողովրդագիտության երախտավոր Գարեգին Սրվանձտյանցը ժողովրդական այդպիսի ստեղծագործությունները անվանում են *առասպել*:

Սրվանձտյանցը «Մանանա» ժողովածուի «Հանելուկներ, առակներ և նորելուկներ» բաժնում (հիշենք՝ գիրքը տպագրվել է 1876 թվականին) խոսում է նաև իր հավաքած նյութերի, մասնավորապես հանելուկների և առակների մասին: Առակներին անդրադառնալիս նա իր գրառած *առակների* տեղադրումը «Մանանա» ժողովածուում ծավալի պատճառով անհնար է համարում. «...բայց տեսնելով, որ բավական ստվար եղավ Մանանաս, կպահեմ այլ պատեհության», – գրում է Սրվանձտյանցը՝ կոնկրետացնելով նաև առակների մի մասի տեղավայրը, – հանդերձ կաճեցի ծներու «պակասամտաց» վրա շինված *առասպելներով*¹⁴⁵:

¹⁴⁰ Վէպք զուարճալի անձից, յորս պարունակին խրատական և իմաստալից ասացուածք, ժողովեալ եւ թարգմանեալ յայլ եւ այլ լեզուաց աշխատասիրութեամբ Մովսիսի Զօհրապեանց Արցախեցոյ: Դ տպարանի Ներսիսեան Հոգևոր դպրոցի հայոց ընծայելոյ յԱզնուական Աղայ Գէորգայ Արծրունոյ: 1858– ՌՅԷ, ' ի Տփլիս:

¹⁴¹ **Աբովյան Խ.**, Հայ դասականների գրադարան, Երկեր, «Սովետական գրող» հրատ., Եր., 1984, էջ 295:

¹⁴² Նույն տեղում, էջ 337:

¹⁴³ Նույն տեղում, էջ 357:

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 403:

¹⁴⁵ **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հատոր 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978, էջ 274:

Ինչպես գիտենք, Խորենացին դեռևս 5-րդ դարում էր պարսից նմանատիպ հորինվածքները **առասպել** անվանում, այսինքն՝ **սուր** կամ **սպերի սուր**¹⁴⁶: Չնայած, ըստ Պատմահոր, հույների առասպելները «պերճ ու ողորկ» են և «այլաբանորեն իրենց մեջ թաքցնում են ճշմարիտ իրողություններ»¹⁴⁷:

19-րդ դարի երկրորդ կեսին Րաֆֆին ևս Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի քննությանը նվիրված աշխատությունում օգտագործում է «առասպել» եզրույթը՝ իբրև սուտ, հորինվածք¹⁴⁸:

Ի դեպ, դեռևս 11-12-րդ դարերում «առասպել» նշանակել է նաև առակ, իսկ «առասպելախաւարք»՝ առակախոս: Իր «Առակագրություն» ուսումնասիրության մեջ Մանուկ Աբեղյանը գրում է. «Հայերեն **առասպել** բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաև իբրև առակ... հնում հալածված են եղել ինչպես գուսանները և ուրիշները, այնպես և **առասպելախոսները**, այսինքն՝ **առակախոսները**»¹⁴⁹:

Առակախոս-զվարճախոսին ժողովուրդը նաև **վռել** մարդ է ասել, որը, ըստ բանասացի, նշանակել է նաև *սուր խոսող մարդ*¹⁵⁰: Փաստենք նաև, որ **վռռ** (վռել)-ը՝ **սպել** նշանակությամբ, օգտագործել են նաև վանեցիները¹⁵¹:

Սրվանձտյանցի անտիպ ձեռագրերում, բացի **առասպել**, **առակ** եզրաբառերից, հանդիպում ենք նաև ժողովրդական երգիծապատումներին տրվող մեկ այլ անվանման՝ **զուարճալիք**, որին հետևում է նշումը՝ **ծիծաղաշարժ ձեռնարկում**¹⁵²: Դրանք շատախցիներից, կաճեթիներից և Վասպուրական աշխարհի այլ վայրերից գրառած համառոտ պատումների տասը նմուշներ են¹⁵³, որոնցից «Ամբողջ գիւղի մը իմին տուած»¹⁵⁴

¹⁴⁶ **Խորենացի Մ.**, Պատմություն հայոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Եր., «Հայաստան» հրատ., 1968, էջ 123:

¹⁴⁷ Նույն տեղում:

¹⁴⁸ **Րաֆֆի**, Երկերի ժողովածու՝ 10 հատորով, հատոր 10, Եր., «Հայպետհրատ», 1964, էջ 396:

¹⁴⁹ **Աբեղյան Մ.**, Երկեր, հատոր Դ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1970, էջ 184:

¹⁵⁰ **Վարդանյան Սվ.**, ԴԲԱՆ, Դաշտային գրառումներ Արմավիրի մարզի Հուշակերտ գյուղից, ասացողի պապերը գաղթել են Ալաշկերտի Խաստուր գյուղից:

¹⁵¹ Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Զ, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 66, 88:

¹⁵² Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, այսուհետև՝ ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, թիվ 4/13, էջ 0269:

¹⁵³ Նույն տեղում, էջ 0269-0272:

զվարճապատումը կաճեցոցիների՝ կաղամբի թթու դնելու մասին է. «Կաճեցոցիք կաղամբի թթու բռնելուն համար խնայելով աղն, խորհեցան, որ Ախթամարայ ծովուն մէջ, որուն ջուրն սաստիկ աղի է, բռնել թթուն: Եւ բոլոր գիւղի կաղամբներ մանրելով՝ ծովը լեցուցին...»¹⁵⁵:

Մակար վարդապետ Բարխուդարյանցը Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղու մասին պատմվող նյութերն անվանում է **առակներ, զվարճաբանություններ և սրախոսություններ**¹⁵⁶: Սարգիս Հայկունին իր գրառած թե՛ բուն առակները, թե՛ որոշ անեկդոտներ ընդգրկել է «Ժողովրդական առակներ» գրքում, իսկ գրքի վերջում անտիպ գրվածքները թվարկելիս **Ե** կետում նշում է. «Զրոյցներ, որ ժողովրդական ծիծաղաշարժ և բարոյալից **անեկդոտներ** են, մօտաւորապէս 1000 հատ»¹⁵⁷: Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվող Հայկունու անտիպ առակներն ու անեկդոտները ևս նույն՝ «Ժողովրդական առակներ» խորագիրն են կրում: Գրառումների նշումներում երբեմն երգիծական առած-ասացվածքներին է նա տողատակում **մասալա** անվանում, ապա՝ բացատրում՝ խրատ, հետո՝ փակագծում գրում է (կամ՝ **անեկդոտներ**)¹⁵⁸, մեկ այլ տեղ (1671) գրում է **մասալներ (Առածներ)**:

Հր. Աճառյանի «Պոլսահայ անգիր բանահյուսություն»¹⁵⁹ գրքի «Առակներ» բաժնում ընդգրկված 55 նմուշներից 31-ն են անեկդոտներ՝ ժողովրդական երգիծապատումներ և զվարճախոսություններ, մնացածը բանահյուսական այլ ժանրերի ստեղծագործություններ են՝ հեքիաթ (էջ 163, 167-169, 170-171, 183, 184), ավանդազրոյց (էջ 164, 172, 173, 175), առակ (էջ 161, 171-172, 174), առակ-երկխոսական առած-ասացվածք (էջ 174, 182) և այլն:

¹⁵⁴ ԳԱԹ, Գ. Սրվանձոյանցի ֆոնդ, թիվ 4/13, էջ 0269:

¹⁵⁵ Նույն տեղում:

¹⁵⁶ Պըլը-Պուղի, գրեց Մակար վարդապետ Բարխուդարեանց, Թիֆլիս, Մով. Վարդանեանի և ընկ. Տպարան, 1883, Հառաջաբան, էջ Դ:

¹⁵⁷ **Հայկունի Ս.**, Ժողովրդական վեպ, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1907, էջ 93:

¹⁵⁸ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, հ. 5 (1651-1653):

¹⁵⁹ **Աճառյան Հր.**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009:

Նոր Նախիջանի բառ ու բանն ընդգրկող Խ. Փորքշեյանի գրքում¹⁶⁰ խառնված են **հեքիաթ** (էջ 79-81 – «Սամվելին առակը», էջ 81-84 – «Բարուշին Ձերոնին Ձադուրը»), **առակ** (էջ 78 – «Մաթոս աղային առակը», էջ 78 – «Էժան ուղտը»), **ավանդազրույց** (էջ 92 – «Կառավիթին աչքերը») **զվարճալի՝ երգիծական պատմություն** (էջ 87 – «Խալիթին հոգուն»), **երգիծական մանրապատմ** (էջ 78 – «Գարաբեդին բուլիները»), **զվարճախոսություն** (էջ 88 – «Աստված չանի», էջ 89, Գընիգըս ա՛լ գելլե», էջ 88, «Տերվերինն ալ, տերվարինն ալ...» և այլն) եզրույթները՝ դրանք ներկայացնելով ընդհանուր «**առակներ**» խորագրի ներքո: Բանահավաքներից մեկն էլ ծանոթագրության մեջ մանրապատմ-զվարճախոսություններին տվել է նաև *առակների* մեկ այլ՝ օտարալեզու *մասալ* անվանումը¹⁶¹:

Լեզվաբան Պողոս Պողոսյանի «Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ»-ում, առանց որոշակի տարանջատման, երկխոսական առակ-առածները ներկայացված են որպես համառոտ **առակներ, անեկդոտներ և մանրապատմներ**¹⁶², ինչը,

մեր կարծիքով, սխալ է: Եթե ներկայացված օրինակները ինչ-որ չափով առակային խորք ունեն, քանզի դրանք, հիմնականում պոկվելով առակներից և որոշ հեքիաթներից, շարունակել են կենցաղավարել իբրև խոհափիլիսոփայական-բարոյախրատական այլաբանական երկխոսություններ, ապա կապ չունեն անեկդոտների կամ մանրապատմների հետ: Մեջբերված օրինակներում բացակայում է վերջիններիս հատուկ անսպասելի ծիծաղ հարուցող վերջաբանը՝ առանց խոհափիլիսոփայական ուղղվածության:

Երբեմն էլ սրախոսությունն ու սրամտությունն է նույնացվում զվարճապատմի կամ զվարճախոսության հետ: Այսպես, Սերինե Ավագյանի «Արճակ» գրքում «Սրամտու-

¹⁶⁰ ՀԱԲ, հատոր 2, Խ.Ա. Փորքշեյան, Նոր Նախիջանի հայ ժողովրդական բանահյուսությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, էջ 78:

¹⁶¹ ՀԱԲ, հատոր 2, Խ.Ա. Փորքշեյան, Նոր Նախիջանի հայ ժողովրդական բանահյուսությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, էջ 85:

Նորնախիջանյան անեկդոտների մասին տե՛ս **Саркисян А.Ш.**, Новопахичеванские анекдоты в контексте юмористических миниатюр армянского народа. Армяне юго России: История, культура, общее будущее: Материалы 2 Международной научной конференции (Ростов-на-Дону, 26-28 мая 2015 г.), (отв. ред. академик Г.Г. Матишов). –Ростов-н/Д: Издательство ЮНЦ РАН, 2015, с. 214-221.

¹⁶² **Պողոսյան Պ.**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, (խոսքի տեսություն), գիրք երկրորդ, «Համառոտ առակներ, անեկդոտներ և մանրապատմներ», Երևանի համալսարանի հրատ., 1991, էջ 205:

թյուն և սրախոսություն» բաժնի¹⁶³ ինը նմուշներից յոթը զվարճապատում է, երկուսը՝ սրախոսություն¹⁶⁴, իսկ «Երգիծական զրույցներ» բաժնում ընդգրկված են և՛ հեքիաթը¹⁶⁵, և՛ զվարճապատումը¹⁶⁶:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած, ժողովրդական տարատեսակ անվանումներին զուգահեռ՝ ժողովրդի մեջ, գիտական շրջանակներում և հավաքչական ու հրատարակչական աշխատանքներում շրջանառության մեջ մտավ նաև օտարալեզու «անեկդոտ» եզրույթը: Ոչ միայն գրի առած նյութերը¹⁶⁷, այլև հրատարակվող ժողովածուներն սկսեցին անվանվել նաև *անեկդոտներ*¹⁶⁸ ընկալելի դարձնելով փոքր կառուցվածք ունեցող ժողովրդական երգիծական ստեղծագործությունները:

Ըստ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի»՝ *անեկդոտը (anecdote) հունարեն, ֆրանսերեն* բառ է՝ ռուսերենից հայերենին անցած, և նշանակում է «*փոքրիկ պատմուածք* երևակայական կամ իրական անցքի՝ *սրամիտ, ծիծաղաշարժ* կամ *ցուրտհակույթամբ*»¹⁶⁹:

Իսկ Է. Զրբաշյանի և Հ. Մախչանյանի «Գրականագիտական բառարանում» *անեկդոտը* ներկայացված է որպես *հունարեն* բառ (*anekdotos*) և նշանակում է *անփիպ*: Այն զվարճալի բովանդակությամբ ոչ մեծ պատմություն է. «Անեկդոտները հիմնականում անանուն ստեղծագործություններ են և տարածվում են մեծ մասամբ բանա-

¹⁶³ ՀԱԲ, հատոր 8, Ս. Ավագյան (Սերինե), Արճակ, Եր., ԳԱ հրատ., 1978, էջ 125-131:

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 126, 128:

¹⁶⁵ Նույն տեղում, Ֆել-Ֆանդ իմցող կրնիկ, էջ 123, Անխունար աղջրկան բախտ, էջ 125:

¹⁶⁶ Նույն տեղում, Քավրոչ շուն խոռվեր ի, էջ 122-123:

¹⁶⁷ «Նոր-Դար», Թիֆլիս, 22.08.1887թ., թիվ 140: **Նույնը՝ Հովհ. Թումանյան**, ԵԼԺ, հ. 5, Անեկդոտներ Լոռվա կյանքից (Մեր երկրի կյանքից), Եր., «Գիտություն» հրատ., 1994, էջ 583:

Մանրամասն տե՛ս **Սարգսյան Ա.Շ.**, «Հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսությունների թումանյանական գրառումները և դրանց տարբերակային դրսևորումները» հոդվածում, «Էջմիածին» ամսագիր, Ժ (հոկտեմբեր), 2015, էջ 98-111:

¹⁶⁸ Անեկդոտներ, Հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876:

Անեկդոտներ, զուարճալի զրույցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878:

Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892 և այլն:

¹⁶⁹ **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հատոր 1, ԵՊՀ հրատ., Եր., 2010, էջ 110:

վոր ձևով...Անեկդոտը աչքի է ընկնում իր սուր երգիծական բովանդակությամբ, անսպասելի ավարտով»¹⁷⁰:

Թե՛ Ստ. Մախասյանցի, թե՛ Էդ. Ջրբաշյանի և Հ. Մախչանյանի բառարաններում շեշտվում են տեսակի «ոչ մեծ» ծավալը, վիպական՝ պատմողական ժանրին պատկանելը և բովանդակության զվարճալի բնույթը: Սակայն, ի տարբերություն առաջինի, երկրորդում նշվում է նաև **անեկդոտի** ամենակարևոր հատկանիշը՝ **անսպասելի ավարտը**: Սակայն երկու բառարանների հեղինակներն էլ չեն խոսում դիպաշար՝ սյուժե չունեցող անսպասելի ծիծաղ հարուցող խոսքով ավարտվող ժողովրդական ստեղծագործությունների մասին:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» անեկդոտը ներկայացվում է որպես «Ոչ մեծ պատմություն՝ սրամիտ և **զվարճալի դեպքի** մասին»¹⁷¹: Հեղինակները չեն մատնանշում այս տեսակի ամենաէական հատկանիշներից մեկը՝ **սրամիտ և զվարճալի դեպքի** անսպասելի ավարտը: Այստեղ ևս մատնանշված չէ **անդիպաշար՝ անսյուժե** անեկդոտի (երկխոսական, մենախոսական, բաժակաճառային, պաստառա-գովազդային և այլն) տեսակը՝ զվարճախոսությունը:

Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանում» *анекдот*-ը թարգմանված է **զվարճապատում, զավեշտասք**¹⁷², իսկ այդ բառային կառույցների **պատում**-ն ու **ասք**-ը կրկին վերաբերում են որոշակի դիպաշարով ստեղծագործություններին:

Իր «Բանագիտական ակնարկներ» գրքում վաստակաշատ բանագետ Սարգիս Հարությունյանն օգտագործում է անեկդոտ եզրույթը՝ գրելով. «Բառը ունի հունարեն ծագում՝ անեկդոտոս, և նշանակում է *„չհրապարակված, չտպագրված, իմ սուտը, և ինչ-որ ձևով ակնարկ կա արդի լեզուներում (ռուսերեն, հայերեն) անեկդոտների որոշ տեսակներին տրվող «безцензурный»-անցենզուր արտահայտությունը, այսինքն՝ հրապարակման կամ տպագրման ենթակա չէ իր բամբառակ բնավորության պատճա-*

¹⁷⁰ **Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ.**, Գրականագիտական բառարան, «Լույս» հրատ., Եր., 1972, էջ 16:

¹⁷¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969, էջ 88:

¹⁷² **Ղարիբյան Ա.**, Ռուս-հայերեն բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1968, էջ 12:

ռով»¹⁷³: Ստուգաբանական նշանակությունից բացի, Ս. Հարությունյանը, տալով այդ տեսակի մի քանի բնութագրում՝ հնարանք, հորինվածք, սեղմ զավեշտական պատում, պատմվածք¹⁷⁴, չի խոսում դիպաշար չունեցող անեկդոտների մասին:

Բուհերի ուսանողների համար նախատեսված «Հայ ժողովրդական բանահյուսություն» ձեռնարկում¹⁷⁵ և քրեստոմատիայում¹⁷⁶, բանագետ Գր. Գրիգորյանը ևս, օգտագործելով *անեկդոտ* եզրաբառը, կրկին նշում է միջադեպի պատմողական բնույթը. «Անեկդոտները, ի տարբերություն պատմողական ժանրի մյուս ստեղծագործությունների և առանձնապես հեքիաթների, սեղմ ու լակոնիկ ձևով պատմում են միայն մի միջադեպ...»¹⁷⁷:

Բանագետ Սվետլանա Վարդանյանն իր հոդվածներից մեկում բանահյուսության ամենասիրված այս տեսակը մեկ անվանում է *զվարճախոսություն*, այնուհետև՝ *սրախոսություն*՝ բացատրելով. «Ժողովրդական այս սրախոսություններն աչքի են ընկնում իրապատում և խրատա-դաստիարակչական բնույթով¹⁷⁸, ...Զվարճախոսությունների հերոսները իրականության մեջ գործող կատակասեր մարդիկ են»¹⁷⁹:

Իր «Արցախի բանահյուսությունը» ստվարածավալ ժողովածուում Սվ. Վարդանյանի այս մոտեցումն է հիմք ընդունել նաև երիտասարդ բանագետ, լեզվաբան Ա. Յու. Սարգսյանը¹⁸⁰:

Ներկայացված բնութագրումները թերի են, քանզի նախ՝ կան ստեղծագործություններ, որոնց գործողությունները անիրական աշխարհում են կատարվում՝ անդրաշխարհում՝ դժոխքում կամ դրախտում, շատ դեպքերում էլ գործող անձինք հրաշապատումային կերպարներ են, այնուհետև՝ բազում նյութեր կան, որոնք ընդհանրապես

¹⁷³ **Հարությունյան Ս.**, Բանագիտական ակնարկներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 173-174:

¹⁷⁴ Նույն տեղում:

¹⁷⁵ **Գրիգորյան Գ.**, Հայ ժողովրդական բանահյուսություն, «Լույս» հրատ., Եր., 1980, էջ 300:

¹⁷⁶ Հայ բանահյուսություն, Քրեստոմատիա, Կազմեց և խմբագրեց՝ Գր. Գրիգորյան, ԵՊՀ հրատ., Եր., 1974, էջ 320:

¹⁷⁷ **Գրիգորյան Գ.**, Հայ ժողովրդական բանահյուսություն, «Լույս» հրատ., Եր., 1980, էջ 320:

¹⁷⁸ **Վարդանյան Սվ.**, Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից, ՀՍՍՀ ԳԱ, «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, 1971, թիվ 8 (344), էջ 92:

¹⁷⁹ Նույն տեղում:

¹⁸⁰ **Սարգսյան Ա., Յու.**, Արցախի բանահյուսությունը, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, էջ 30:

կապ չունեն «խրատա-դաստիարակչական» բնույթի հետ, ինչպես տափակ անեկդոտաշարի կամ խելապակասության թեմայով նմուշները:

Բանագետ Էսթեր Խեմչյանը ևս, խոսելով շամշադինյան անեկդոտների մասին, զվարճախոսությունը նույնացրել է զվարճապատում-երգիծապատումի հետ, գրելով. «Զվարճախոսությունը կամ անեկդոտը *զվարճալի պատմություն է*, ուր ծաղրի են ենթարկվում կյանքի զանազան մութ կողմեր, կենցաղային ու մարդկային խոցելի հարաբերություններ»¹⁸¹:

Եթե *պատմություն է*, ուրեմն զվարճապատում է, իսկ *դիպաշար՝ պատում* չունեցող՝ անդիպաշար կառույցների՞ն ինչ անուն տալ, կամ էլ բառախաղային զվարճախոսությունների, լոռեցիների երգեցիկ խոսքով ստեղծված կառույցների, տափակ անեկդոտաշարերի վերը մատնանշած «մութ ու խոցելի» կողմերը որո՞նք են...:

Բանագետ Լուսինե Ղոնջյանն էլ իր գրառած գավառ-քյավառյան զվարճապատում-զվարճախոսություններից պոկված և ժողովրդի մեջ շրջանառվող պատառիկ-արտահայտությունների հենքը համարում է *կենցաղային զրույցները*. «Սույն զեկուցման մեջ ներկայացվում են... բանահյուսական այն նյութերը, որոնց գործող անձինք... զավեշտական և արտասովոր արարքներով դարձել են կենցաղային զրույցի և այս կամ այն ասույթի կերպար-խորհրդանիշ»¹⁸²: Այնուհետև նա շարադրանքում մերթ «05.40 ԱԳ» *զվարճապատումն է* անվանում *կենցաղային զրույց*¹⁸³, մեկ այլ դեպքում՝ «Հելար Տադոյի Միլիտը» *ստրապատումը*¹⁸⁴:

Սիրիահայ բանագետ-ազգագրագետ Հակոբ Զոլաքյանն իր գրառած մանրապատում-զվարճախոսությունների գիրքն անվանում է «Միջ-գաւառական անեքթոտներ»¹⁸⁵ որոշ վերադասավորություններով, ավելացված նոր նյութերով վերահրատարակված

¹⁸¹ ՀԱԲ, հատոր 21, Էսթեր Խեմչյան, Տավուշ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 14:

¹⁸² **Ղոնջյան Լ.**, Ժողովրդական ասույթաբանության և ավանդական զրույցների կապը (ըստ Գավառում գրանցած նյութերի), Հայ ժողովրդական մշակույթ-XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 394:

¹⁸³ Նույն տեղում, էջ 395:

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 398:

¹⁸⁵ Միջ-գաւառական անեքթոտներ, Հաւաքեց եւ ներկայացուց՝ Յ. Զոլաքեան, Հալէպ, Տպ. Արեւելք-Հալէպ, 1988:

գրքի¹⁸⁶ դարձերեսին օգտագործելով նաև «երգիծական մանրապատումներ» եզրույթը: Նա այսպես է բնութագրում ժողովրդական երգիծանքի այդ տեսակը. «Անեքթոտը ծիծաղաշարժ ու զուարճալի պատմություն մըն է, պատմողական սեռի ամենէն կարճ տեսակներէն մէկը: Միջադէպը կը պատմուի չափազանց սեղմ ու կարճառօտ, պարզ, գրեթէ առանց որեւէ յարդարանքի: Ընդամենը քանի մը գործողություն եւ քանի մը տիպոլ կը կազմեն անեքթոտը»¹⁸⁷: Այնուհետև Չոլաքյանն ի տարբերություն այլ բանագետների՝ այստեղ անդրադառնում է կարճառօտ և ծավալուն անեկդոտների տեսակներին՝ խոսելով նաև այնպիսի կառույցների մասին, որոնք «կազմուած են կարճ արտայայտութենէ մը, վերադիրէ մը կամ փոխաբերութենէ մը»¹⁸⁸: Այսուհանդերձ փաստենք նաև, որ այս գրքի «Ընդհանուր բնութագրումներ» բաժնում տեղ գտած որոշ տեղավայրերի բնակիչներին տրվող ծաղրական բնորոշումների մի քանի նմուշներ¹⁸⁹ կապ չունեն անեկդոտի հետ:

Հարկ է նշել նաև, որ սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը հրատարակված անեկդոտների ժողովածուներում օտարալեզու «**անեկդոտ**» եզրույթն իր մեջ ներառում է ոչ միայն որոշակի դիպաշար (սյուժե) ունեցող պատումները, այլև անդիպաշար նմուշները: Վերջիններիս ամենախոսուն վկայությունը ԽՍՀՄ հանրապետություններում և աշխարհի մի շարք երկրներում մեծ տարածում գտած «**Հայկական ռադիոյի**» անեկդոտներն են:

Արևմտահայերենում անեկդոտին զուգահեռ օգտագործվում է նաև օտարալեզու «**ջոք**» (Joke) եզրաբառը՝ որը, բացի **անեկդոտ** իմաստից (**ջոք պատմել** – **անեկդոտ պատմել**¹⁹⁰), նաև **կատրակ** է նշանակում¹⁹¹:

Անգլիացի լեզվաբան Ռոբերտ Հերցոնը գրում է. «**Ջոքը** կարճառօտ երգիծական բանահյուսական ստեղծագործություն է, որի մեջ լարվածությունը հասնում է գագաթ-

¹⁸⁶ Միջգաւառական անեքթոտներ, Հաւաքեց եւ ներկայացուց՝ Յ. Չոլաքեան, Բ. տպագրութիւն, Հալէպ, Տպ. Արեւելք - Հալէպ, 2005:

¹⁸⁷ Նույն տեղում, էջ 6:

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 7:

¹⁸⁹ Նույն տեղում, էջ 167, հ. 251, էջ 170, հ. 257, էջ 174, հ. 268, էջ 175, հ. 269, հ. 272:

¹⁹⁰ Տե՛ս «Ազգակ» օրաթերթ, Պէյրոս, 3.02.2017թ., Նարէ Գալեմքերեան, «Գերարագ Դարուն մէջ Գերարագ լեզու սորվիլ»:

¹⁹¹ www.hayeren.blog.wordpress.com, Լեռնա Գարագիւթիւք, «Ջոք է, ջոք է, սակայն զգոյշ», 13.01.2017:

նակետին, ծիծաղելին երևան է գալիս վերջին տողի՝ վերջաբանի մեջ և կոչվում է **punch line**¹⁹²: Ըստ անգլերեն-հայերեն բառարանի՝ **punch line**-ը անեկդոտի գագաթնակետն է՝ կիզակետ-վերջաբանը¹⁹³:

Աննա Կնյազյանն իր «Երգիծական խոսույթի ժանրային հատկանիշները» հոդվածում¹⁹⁴ ներկայացնում է անգլիացիների և ֆրանսիացիների շրջանում սրամիտ անսպասելիությամբ ու թեթևությամբ ավարտվող ստեղծագործություններին տրվող անվանումները. «Անգլիական լեզվամշակույթում այդ հասկացությունը կոչվում է **joke, canned joke, funny story**: Ֆրանսիացիները անվանում են **histoire** կամ **histoire amusante**: Գոյություն ունեն մի քանի հատուկ եզրույթներ, որոնք բնորոշում են „**jokes**,-ի տարբեր տեսակները՝ **numskull tale, ethnic slurs** (հայերենում բոլորն էլ կոչվում են **անեկդոտ**)»¹⁹⁵:

19-րդ դարից անեկդոտները առաջին անգամ դասակարգել են Գրիմ եղբայրները, հետո 1910թ. անեկդոտները դասակարգել և համակարգման մեջ է դրել Ա. Աարնեն, հետագայում ամբողջացրել է Ս. Թոմսոնը, որի աշխատանքի վերջին բաժինը կոչվում է «**Անեկդոտներ և ջոքեր**»¹⁹⁶:

Վերջին շրջանում գիտական շրջանակներում անեկդոտի փոխարեն սկսվել է գործածվել **ժողովրդական երգիծական մանրապատում** եզրույթը՝ հեղինակային նմանատիպ ստեղծագործություններից տարանջատելու համար շեշտելով ժողովրդականը:

Նաում Լաբկովսկու աշխարհի տարբեր ժողովուրդների բանահյուսությունից քաղած և լեհերենից ռուսերենի վերածած գիրքը¹⁹⁷ հայերեն թարգմանվել է «Երգիծական մանրապատումներ»¹⁹⁸ վերնագրով: Առաջաբանի հեղինակ Գ. Գուլիան տալիս է նաև

¹⁹² www.wikipedia.org – Joke

¹⁹³ Անգլերեն-հայերեն բառարան, Կազմեցին՝ Ա. Լազարյան, Ն. Համբարձումյան, Ա. Հայրապետյան, Եր., «Մանմար» հրատ., 2011, էջ 495:

¹⁹⁴ Կնյազյան Ա., Երգիծական խոսույթի ժանրային հատկանիշները, «Աստղիկ» տարեգիրք, Գիտական հոդվածների ժողովածու, 2015, թիվ 2, էջ 93-102:

¹⁹⁵ Նույն տեղում, էջ 99:

¹⁹⁶ Ըստ www.wikipedia.org -ի:

¹⁹⁷ Микроюморески со всего света, Москва, изд. «Прогресс», 1969.

¹⁹⁸ Երգիծական մանրապատումներ, Թարգմ՝ Մ.Հ. Դավթյան, «Սովետական գրող» հրատ., Եր., 1977:

ժանրի բնութագիրը. «Ի՞նչ բան է երգիծական մանրապատումը: Այդ անվանումը ես կասեի, որ ավելի շատ գիտական է: Իսկ ավելի պարզ ասած, դա կոչվում է անեկդոտ: Բայց անեկդոտները, ըստ վաղուց ի վեր հաստատված ավանդույթի, գրականության հետ կապ չունեն: Նրանք բանավոր ստեղծագործություններ են: Իսկ եթե անեկդոտը տպագրված է: Այդ դեպքում նա դառնում է երգիծական մանրապատում»¹⁹⁹:

Ի դեպ, Գ. Գուլիան անտեսում է անեկդոտի տեսակներից մեկի՝ զվարճախոսության կառուցվածքային՝ որոշակի սյուժե չունենալու հատկանիշը. «Երգիծական մանրապատումներ» գրքի 275-306 էջերի «Ռեպլիներ» բաժնում ընդգրկված բոլոր 119 նմուշները երկխոսական բնույթի կարճառոտ անդիպաշար ստեղծագործություններ են՝ զվարճախոսություններ:

Վիլյամ Սարոյանը 1960 թվականին Հայաստան այցելության ժամանակ իր բանավոր խոսքում հաճախ է *անեկդոտ* եզրույթի հետ օգտագործում նաև **կատակախոսությունը**: Հանդիպումներից մեկի ժամանակ նա բանագետ Սարգիս Հարությունյանին հարցնում է. «Իսկ մեր առակներ (իմա՝ առած-ասացվածքներ-ԱԱ), անեկդոտներ, պատիկ-պատիկ պատմություններ, կատակախոսություններ կժողվի՞ն»: Բանահյուսության որոշ տեսակների հանդեպ Սարոյանի ունեցած առանձնակի վերաբերմունքի մասին ահա թե ինչ է արձանագրել Ս. Հարությունյանն իր սարոյանական հուշապատումում. «Ինձի հետաքրքիր է ֆոլկլորի փոքր տեսակներ՝ առակներ, հանելիքներ (իմա՝ հանելուկ-ԱԱ), կատակախոսություններ, պզտիկ զրույցներ, երգեր: Ես ատոնք շատ կսիրեմ: Ատոնց մեջ կերևա ժողովրդի հոգին, մտածողություն, հումոր. պզտիկ տեսակներուն մեջ ավելի մեծ իմաստություն կա²⁰⁰»:

«Քսաներեք Նասրեդին» գրքի հայերեն թարգմանության առաջաբանում *երգիծական մանրապատումներ* եզրույթն է օգտագործում նաև բազմավաստակ բանագետ Արամ Ղանալանյանը. «Արևելյան մի շարք ժողովուրդներ (Մերձավոր և Միջին Արևելք, Միջին Ասիա և Կովկաս, Արևելյան Եվրոպա և այլն) իրենց բանավոր բանարվեստում

¹⁹⁹ Երգիծական մանրապատումներ, Թարգմ՝ Մ., Դավթյան, «Սովետական գրող» հրատ., Եր., 1977, էջ 3:
²⁰⁰ **Հարությունյան Ս.**, 8 օր Սարոյանի հետ, «Սովետական գրականություն» ամսագիր, Եր., 1970, թիվ 8, էջ 83:

ունեն կես-իրական, կես-ստեղծական մի կերպար (Խոջա Նասրեդին, Մուլա Նասրեդին, Նասրեդին Աֆանդի, Նասր էդին, Անաստրատին կոչեցյալ): Վերջինիս դարեր շարունակ վերագրվել են ժողովրդական անեկդոտներ հիշեցնող բազմաթիվ երգիծական մանրապատումներ...»²⁰¹:

Տեղեկացնենք նաև, որ Ա. Ղանալանյանը «Ավանդապատումի», «Առաձանիի» պես ծրագրել էր հրատարակել նաև «Երգիծանի» ժողովածու՝ առաջաբան-ուսումնասիրությամբ: Այն ընդգրկելու էր ժողովրդական բանահյուսության ժանրերի բոլոր երգիծական տեսակները՝ երգիծական հեքիաթ, երգիծական առակ, երգիծական առած-ասացվածք, երգիծական երգ և այլն: ՀԱԻ-ի բանահյուսության արխիվի Ա. Ղանալանյանի ֆոնդում պահպանվող նյութերի մեջ կա ի մի բերված, դասդասված և գրեթե հրատարակության պատրաստ անեկդոտների մի փունջ²⁰²:

Արամ Ղանալանյանը 1973 թվականին «Երգիծանին» պատրաստելիս տեսական բաժնում խոսում է նաև արևմտահայերի կողմից *անեկդոտ*-ի հայերեն թարգմանության՝ **խնդուկ** եզրույթի մասին. «Խնդուկ մը ըսեմ, լսե»²⁰³:

Ներսէս Ծ. Վրդ. Բախտիկեանը (հետագայում՝ արքեպիսկոպոս) «Շէփկայ խելացին»²⁰⁴ գրքի երգիծական մանրապատումներն անվանում է *զուարճախօսություններ*, այնուհետև «Երկու խօսք»-ում «յուրահատուկ մտածելակերպ» ունեցող շէփիկցիների այդ նյութերը կոչում է նաև **մանրավէպեր**՝ գրելով. «Մենք այս ինքնատիպ գյուղացիներուն մասին բառական թոտվ մանրավէպեր հաւաքեր ենք, որոնք, անկասկած, ժամանակի ընթացքին հիսուներ, որդուց որդի պատմուելով, մեզի հասեր են...»²⁰⁵ (Արևմտահայերենում *մանրավէպ* եզրույթը նշանակում է նաև *զվարճալի պատմություն*²⁰⁶):

²⁰¹ Քսաներեք Նասրեդին, Եր., «Հայաստան» հրատ., 1986, Ղանալանյան Ա., Խոջա Նասրեդինը և նրան վերագրվող երգիծական մանրապատումները, էջ 3:

²⁰² Տե՛ս ՀԱԻ-ի բանահյուսության արխիվ, Արամ Ղանալանյանի ֆոնդ (անտիպ նյութեր), թղթապանակ 2:

²⁰³ Նույն տեղում, թղթապանակ 2-ա, էջ 39:

²⁰⁴ **Բախտիկեան Ա.**, Շէփկայ խելացին (Հայկական զուարճախօսություններ), Պեյրուֆ, Լիբանան, Տպարան Օլիմպիք, 1953:

²⁰⁵ Նույն տեղում, էջ 5:

²⁰⁶ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 479:

Բախտիկյանը երգիծական պատկերման ձևերից մեկը՝ հումորը²⁰⁷, սխալմամբ սեռ է անվանում, ավելացնելով՝ «...գրական այս սեռը, Հիւմըրը իր արտայայտութեան խորքով, անմշակ սեռ մըն է մեր մեջ: Մեր այս երկը թող ճիգ մը նկատուի այդ ուղղութեամբ»²⁰⁸:

Իսկ փերիահայոց երգիծական մանրապատումների գիրքը բանահավաքչության նվիրյալ հոգևորականն անվանել է «Փերիոյ խելացին»²⁰⁹ նմանատիպ սյուժեով պատումներն անվանելով **Ջուարճալի մանրադէպեր**, այսինքն՝ զվարճալի մանր՝ փոքրիկ դեպք-պատահմունք-պատմություններ: Բախտիկյանը ներկայացվող նյութերն անվանում է նաև «ժողովրդական զրոյցներ, զուարճախօսութիւններ-անէքթօտներ», որոնք «...դարերու խորքէն կը հասնին մեզի եւ մեզի կը բերեն մեր ժողովուրդին, մասնաւորաբար «ռամիկ դասակարգին իւրայատուկ մտածելակերպը»²¹⁰:

Երկու դեպքում էլ Բախտիկյանի օգտագործած **զուարճախօսութիւն** եզրույթը ճիշտ չէ, քանզի դրանք ոչ թե զվարճանք առաջացնող կարճառոտ անսյուժե խոսքեր են, այլ **պակասամտաց** (կաճեցոցիներին տված Գ. Սրվանձտյանցի բնորոշումն է) թեմայով որոշակի սյուժե ունեցող **երգիծական մանրապատումներ՝ մանրավէպեր, մանրադէպեր-անէքթօտներ**:

Ի վերջո, որո՞նք են անեկդոտի՝ ժողովրդական երգիծական մանրապատումի և զվարճախոսության ամենաբնորոշ հատկանիշները:

ա. Ժողովրդական երգիծական մանրապատում եզրաբառի մեջ մատնանշվում է տվյալ ստեղծագործության և՛ պատկանելությունը՝ (**ժողովրդական**), քանզի առկա է նաև դրա հեղինակային դրսևորումը, և՛ բնույթը (**երգիծական**), և՛ կառուցվածք-ձավալը (**մանր, փոքրածավալ՝ կարճառոտ**), և՛ արձակ շարադրանքը (**պատում-պատմություն**):

²⁰⁷ **Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ.**, Գրականագիտական բառարան, «Լույս» հրատ., Եր., 1972, էջ 182:

²⁰⁸ **Բախտիկեան Ս.**, Շէփկայ խելացին (Հայկական զուարճախօսություններ), Պեյրուֆ, Լիբանան, Տպարան Օլիմփիք, 1953, էջ 5:

²⁰⁹ **Բախտիկեան Ն. Ծ.** Վրդ., Փերիոյ խելացին (Ջուարճալի մանրադէպեր), Պեյրուֆ, տպարան Սևան, 1967:

²¹⁰ Նույն տեղում, էջ 10-11:

բ. Ի տարբերություն ժողովրդական երգիծանքի մյուս դրսևորումների՝ երգիծական մանրապատումն անպայման ունենում է **անսպասելի զավեշտալի հանգուցալուծում-վերջաբան**:

Սակայն այդ եզրույթը ևս ամբողջությամբ չի արտացոլում անեկդոտի տեսակալին հատկանիշը: Վերը թվարկած կետերը վերաբերում են որոշակի **սեղմ կամ ծավալուն դիպաշարով** (սյուժեով) ստեղծագործություններին, քանզի **պատումը նշանակում է զրույց, բանավոր կամ գրավոր պատմություն, ասք²¹¹**, որոնցից շատերի մեջ ակնառու է **դիպաշարին** բնորոշ գծերի՝ **ժամանակի, տեղի, գործողությունների, մարդկալին կապերի ու հարաբերությունների առկայությունը²¹²**: Ի դեպ, ռուս բանագետ **Գ. Պերմյակովը** «От поговорки до сказки» ուսումնասիրության մեջ ժողովրդական երգիծանքի խրատաբարոյական ուղղվածությամբ նմանատիպ դրսևորումները նմանեցնում է գերմանական միջնադարյան գրականության չափածո կամ արձակ կարճառոտ՝ նովելային կառուցվածքով երգիծական ստեղծագործությունների հետ՝ դրանք ևս անվանելով **շվանկներ (սյուժեդրային անեկդոտներ)²¹³**:

Իսկ ո՞ր տեսակի մեջ մտցնել անսպասելի ծիծաղ առաջացնող **անդիպաշար**՝ մենախոսական, երկխոսական, նամակային, բաժակաճառային, անեծքա-օրհնանքային, հանելուկային, ցուցանակային, գովազդային և այլ կառուցվածքներով ու մանկական խոսքի զավեշտալի դրսևորումներով ստեղծագործությունները: Սրանք սրախոսություններ չեն, քանզի **սրախոսությունը**, ինչպես վերևում նշվեց, **սուր խոսքն է, որը կարող է նաև անսպասելի ծիծաղ չառաջացնել**:

Վերոնշյալ ուսումնասիրությունում Գ. Պերմյակովն **անդիպաշար** (անսյուժե) **երկխոսական** անսպասելի ծիծաղ առաջացնող ստեղծագործությունները, որոնք առավելապես առակային խորք ունեն, անվանում է «одномоментные анекдоты» (էջ 160)՝ այսպես ասած, **միպահանի անեկդոտներ**: Մոսկվայում ռուսերեն հրատարակված հայ

²¹¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 4, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, էջ 184:

²¹² **Զրբաշյան Էդ., Մախչանյան Հ.**, Գրականագիտական բառարան, «Լույս» հրատ., Եր., 1972, 260-261:

²¹³ **Пермяков Г.Л.** От поговорки до сказки, Акад. Наук СССР, М., изд-во «Наука, 1970. с. 64.

ժողովրդական բանահյուսությանը նվիրված ժողովածուում²¹⁴ Պերմյակովի մատնանշած եզրաբառն է օգտագործում նաև **Գ. Կարապետյանը**, որտեղ գերազանցապես ընդգրկված են երկխոսական կարճառոտ անեկդոտները, չնայած վերջիններիս հետ ժողովածուն պատրաստողը խառը ներկայացրել է նաև մի շարք երկխոսական առածներ:

Էսրոնացի բանագետները զվարճախոսության այս տեսակն անվանում են **բառախաղով կառուցված անեկդոտներ**, որտեղ որոշակի դեր է խաղում լեզուն, մասնավորապես բառերի ճիշտ ընտրությունն ու դրանց բազմիմաստությունը²¹⁵, սակայն դա ևս այդ տեսակի ամբողջական բնութագրումը չէ, քանզի անդիպաշար ոչ բոլոր անեկդոտներն են բառախաղային բնույթի:

Մենախոսական, երկխոսական, անեծքա-օրհնանքային, հանելուկային և այլ կառուցվածքներով ու մանկական խոսքի զավեշտալի արտաբերումներով ստեղծագործություններում առկա են անսպասելի ծիծաղ հարուցող աներևակայելի, երբեմն էլ անհեթեթ մեկնաբանություն-հիմնավորումները: Եվ քանի որ նմանատիպ ստեղծագործությունների հիմնական հատկանիշը անսպասելի զվարճանք պատճառող **անդիպաշար** կարճառոտ ամփոփ խոսքն է, դրանց մենք անվանել ենք **ժողովրդական զվարճախոսություններ**:

1.3. Կապը բանահյուսության մյուս տեսակների հետ

Գրողները հաճախակի են օգտվում ինչպես իրենց, այնպես էլ աշխարհի տարբեր ժողովուրդների վիպական և քնարական բանահյուսության տեսակներից՝ սկսած առասպելից, էպոսից, հեքիաթից, ավանդությունից ու երգից, մինչև կարճառոտ ժողովրդական ասույթաբանությունը՝ առած-ասացվածքներն ու անեծք-օրհնանքները:

²¹⁴ Армянский фольклор. Сост. и пер. с арм. Г.О. Карапетяна. М., Главная редакция восточной литературы. Издательство «Наука», 1979. 375с., с. 160-169.

²¹⁵ Эстонский фольклор, Изд.-во «Ээсти раамат», 1980, с. 268-269.

Թեմատիկ, կառուցվածքային, կերպարային կիրառությունները և բանահյուսության տեսակների մի շարք տարրերի օգտագործումը ստեղծագործողին օգնում են ժողովրդական մտածողության հենքի վրա ասելիքը էլ ավելի խորացնելուն ու բազմաշերտ դարձնելուն, միաժամանակ նպաստում խոսքի պատկերավորությանը, բազմաձայնությանն ու բազմերանգությանը:

Դրանում մենք համոզվել ենք՝ մեր թեկնածուական ատենախոսությունում մանրակրկիտ անդրադառնալով Պ. Սևակի ստեղծագործություններում առկա վիպական և քնարական բանահյուսության տեսակների գրեթե բոլոր կիրառություններին²¹⁶:

Ակնհայտ է, որ ժողովուրդը ևս բանարվեստի գործեր արարելիս կիրառել է իր իսկ ստեղծած բանահյուսական ժառանգության տարբեր շաղախներ՝ ձգտելով բազմաձայնություն հաղորդել իր հորինվածքներին:

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումները և զվարճախոսությունները ևս, լինելով վիպական ժանրի մերօրյա ամենակենսունակ ու սիրված ստեղծագործություններից և իրենց տարբերակիչ հատկանիշներով առանձնանալով ժողովրդական բանարվեստի մյուս տեսակներից, միաժամանակ սերտորեն կապված են նրանց հետ: Այդ կապը դրսևորվում է բանահյուսության տեսակների թե՛ սյուժետային, կառուցվածքային, կերպարային յուրահատկությունների, պատկերավորման միջոցների և ժանրային այլևայլ հատկանիշների օգտագործմամբ, թե՛ այս կամ այն ստեղծագործության ամբողջական կամ հատվածաբար կիրառությամբ: Երբեմն էլ այդպիսի կապերն ու փոխներթափանցումներն այնքան խորն ու բազմաշերտ են ի հայտ գալիս, որ շատ հաճախ դժվար է լինում դրանց տարանջատելն ու ժանրը որոշելը:

Ինչ խոսք, ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում այս կապն ու կիրառությունները էականորեն տարբերվում են անհատ ստեղծագործողի նմանատիպ մոտեցումից: Գրողի մոտ ժողովրդական բանարվեստի տեսակները եթե հիմնականում ծառայում են խոսքի սեղմությանը, պատկերավորու-

²¹⁶ **Սարգսյան Ա.Շ.**, Պարույր Սևակը և ժողովրդական բանահյուսությունը, Եր., «Գիտություն» հրատ., 2010, «Բանահյուսության տեսակները Պարույր Սևակի ստեղծագործություններում», էջ 91-275:

թյանն ու գունագեղությանը, ապա այստեղ արդեն բանահյուսության տեսակների տարաբնույթ կիրառությունները հիմնականում ծառայում են մի նպատակի՝ անսպասելի ծիծաղ առաջացնելուն, ինչն էլ ժողովրդական երգիծապատում-զվարճախոսությունների ժանրը բնորոշող ամենահատկանշական գիծն է:

Հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսությունները զանազան ձևերով առնչվում են վիպական ժանրի բանաձևային կառույցների, մասնավորապես **հանելուկի** հետ: Առասպելա-հեքիաթային հանելուկ առաջադրելու գործոնը երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում այլ դրսևորում է ստացել: Դրանք հիմնականում անսյուժե հանելուկ-զվարճախոսություններ են և հանելուկային կառույցներով զվարճախոսություններ, որոնք հանդես են գալիս տարբեր ձևերով.

ա. Երբ հանելուկային կառույցի մի մասին՝ բանաձևային հարցումին, անմիջապես հետևում է պատասխանը՝ առանց սպասելու հանելուկային առարկայի բանաձևային մեկնաբանմանը: Ստորև ներկայացվող նմուշում հանելուկային հարցման՝ մինչև վերջ առաջադրելու ձևի խախտումը դառնում է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը.

Մի հանելուկ ասեմ, գտեք. // – էն ինչն ա, էն ինչը...: // Քյավառցին թե՛ //– Օրաղն ա: (ԱՍՇՀ)

բ. Երբ ներկայացվող կառույցում առկա է բանաձևային հարցումը, հանելուկային պատկեր-բանաձևը և հանելուկի առարկան: Հանելուկների մեծ մասի նման այստեղ ևս հանելուկային առարկան վարագուրված է հանելուկային բանաձևով, որը, սակայն, այլաբանական չէ, այն մատնանշում է բրեժնևյան իրական պահվածքի խտացված պատկերը.

էն ինչն ա, ինչը, // Թռչըմ ա, թռչըմ, // Իչնըմ ա, պաչըմ: (ԱՍՇՀ)

գ. Խորհրդային ժամանակների կաշվե հագուկապով ավտոտեսուչների մեծ մասին բնորոշող *երեսը՝ պաղոշ*²¹⁷ ժողովրդական դարձվածքի՝ պնդերեսության չափանիշի

²¹⁷ Պաղոշ (ռուս.) – կոշկատակ:

կիրառությունն է հանելուկը դարձնում զվարճախոսություն: Այստեղ հանելուկային բանաձևի առաջին մասը ուղղակի իմաստով է ներկայացվում, երկրորդ մասը՝ այլաբանորեն.

Էն ինչն ա, էն ինչը, // Չորս կուռը կաշի, // էրեսը՝ պադոշ: (ԱՍՇՀ)

դ. Երբ հանելուկ-զվարճախոսությունը թե՛ կառուցվածքով, թե՛ առաջադրած խնդրով, բանաձևային կառույցով և հանելուկի առարկա-պատասխանով համահունչ է բուն ժողովրդական հանելուկների առաջադրած պահանջներին, ինչը դժվարացնում է նրանց ժանրային տարանջատումը.

Էն ինչն ա, էն ինչը, // Ոնչ սարքողին ա պեպկը, // Ոնչ առնողին ա պեպկը, // Ում էլ որ պեպկն ա, անպեպկ ա: (դագաղ) (ԱՍՇՀ)

Հանելուկային կառույցով զվարճախոսություններից մեկում էլ հանելուկային հարցմանը հետևող դիպուկ ու սրամիտ պատասխանը և՛ ծիծաղ է հարուցում, և՛ քննադատում կաշառակերության առկայությունը դատական համակարգում.

Փանոսին հարցրին. // – Էն ի՞նչն է, էն ինչը, // Շատ փաս, քիչ կփա, // Քիչ փաս, շատ կփա: // Փանոսը գլուխը քորեց ու պափասխանեց. // – Դափավորն է՝²¹⁸:

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումները և զվարճախոսությունները կապվում են նաև **առած-ասացվածքների** հետ: Այդ կապը ևս տարբեր ձևերով է դրսևորվում.

ա. Կան անեկդոտներ, որոնց զավեշտի հենքը ոչ միայն առած-ասացվածքներն են, այլև դրանք առաջացել են հենց ժողովրդական իմաստախոսություններից: Ամուսնությունից հիասթափվածները ստեղծել են ընտանիք կազմելու հետ կապված իրենց պատկերավոր «փիլիսոփայությունը»՝

«Ամուսնությունը մի բոչկա ք... ա, էրեսը՝ մեղր»:

Ժողովրդական կենսափիլիսոփայության նմանատիպ խտացումը այն դասում է երգիծական առածների շարքին: Սակայն դրա զարգացումը և անսպասելի ավարտը ա-

²¹⁸ Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, հավաքել և կազմել է Լենա Անթառանյանը, Եր., 1994, «Վերնատուն» հրատ., էջ 5:

սույթը դարձնում են զվարճախոսություն.

Մեղրամիսին էրեսի մեղրն ուտըմ ենք, մնըմ ա տակի ք... ը:

– *էդ ո՞նց ա, որ ես ուտըմ եմ, ուտըմ, մեղր չկա, մենակ ք... ա, – հարցնում է հավաքվածներից մեկը:*

– *Չհուսահարվես, դուրս էլ մեղրին կհասնես, պարզապես բռնկեն թարս ես բացել:*

(ԱՍՇՀ)

բ. Կան զվարճախոսություններ, որոնցում անսպասելի ծիծաղն առաջանում է ժողովրդական ասույթի երկրորդ մասի վերջաբանի փոփոխմամբ՝ կոնկրետացնելով ընդհանրացնող իմաստը. *Մարդ կա՛ մարդ ա, մարդ էլ կա՛ ես քեզ օրինակ:* (ԱՍՇՀ)

գ. Ժողովրդի կամ անհատի ծայրահեղ ծանր վիճակը ցույց տվող «*Հայի հայ-հայը գնացել ա, վայ-վայն ա մնացել*» առածի երկրորդ մասը, ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի ոգուն համահունչ փոփոխելով, այն բառախաղային զվարճախոսության տեսքով է ներկայանում.

Հայի հայ-հայը գնացել ա, վայֆայն ա մնացել: (ԱՍՇՀ)

դ. Մանկական զվարճախոսություններից մեկում էլ առածի այլաբանական իմաստի փոխարեն ուղիղ իմաստի ընկալելն է անսպասելի ծիծաղի տեղիք տալիս՝ անպայման համեմատության եզրեր տեսնելով կենդանու և գիտակից մարդու միջև.

Այսպես, «*էշն ի՞նչ իմանա, թե նուշն ինչ է*» առածի իմաստը այսպես է «մեկնաբանում» առաջին դասարանցի Դավիթը.

— *Ա՛յ մամ, ըսկի ես չգիտեմ, թե նուշն ինչ ա, էդ էշը որտեղի՞ց իմանա*²¹⁹:

ե. Կան նաև այնպիսի կառույցներ, որոնք երգիծական առածի և զվարճախոսության սահմանագծին են: Նմանատիպ ստեղծագործությունների շարքին է դասվում 1990-ականների ցուրտ ու մութ տարիների անորոշ և անելանելի կյանքը բնորոշող սև հումորի դրսևորմամբ ասույթ-զվարճախոսությունը.

Ախպարին Լոսը կփրկի, տեղացուն՛ փոսը: (ԱՍՇՀ)

²¹⁹ **Սարգսյան Ա.Շ.**, Մանկական զվարճախոսություններ, Եր., «Գիտություն» հրատ., 2016, էջ 209:

գ. Միաստիճան ասույթը կարող է զարգանալ՝ վերածվելով երկաստիճան, ապա՝ եռաստիճան կառույցի՝ դառնալով երգիծական զվարճախոսություն՝ զվարճասույթ:

Երևանը Հայաստանի սիրտն ա, Լենինականը՝ թոքուջիգյարը, Կիրովականը՝ մի-զապարկը (վերջինս՝ իբրև հաճախակի անձրևների՝ խոնավ կլիմայի խորհրդանիշ է ներկայացվում): (ԱՍՇՀ)

Ժողովրդական զվարճախոսություններում Վանաձորին տրվել է նաև «*ցեթոփկ քարք*» մականունը, ինչի հիմնավորումը ժողովուրդը տալիս է նաև «*Ամպն ու Ամպիկը*» զվարճապատումում: (ԱՍՇՀ) Տե՛ս **Հավելված 1, թիվ 3:**

Ցանկության ժողովրդական խոսքերի հենքի վրա ստեղծված անեկդոտներում զավեշտ է առաջանում, երբ առկա պատկերավոր խոսքը ոչ թե դարձվածային, այլ ուղիղ իմաստով է ընկալվում: Այսպես.

Թաղման ծիսակարգում կիրառվող «*Թող հողը թեթև լինի քեզ վրա*» ցանկության խոսքը գրավոր գրականության մեջ կարող է վերածվել խոհափիլիսոփայական բանաստեղծության.

<i>«Թող հողը թեթև լինի քեզ վրա»...</i>	<i>Այդ քարի վրա:</i>
<i>Եվ հեպոռ ծանր մի քար են դնում</i>	<i>Եվ հեպոռ հողի մի սար է նստում</i>
<i>Այդ հողի վրա:</i>	<i>Այդ դարի վրա:</i>
<i>Եվ հեպոռ ծանր մի դար է նստում</i>	<i>«Թող հողը թեթև լինի քեզ վրա»:²²⁰</i>

Իսկ բանավոր գրականության մեջ ցանկության բանաձևային այդ նույն արտահայտությունը զարգանում, դառնում է զվարճապատում՝ կրկին ուշադրությունը բևեռելով «*հողը թեթև լինի*» դարձվածքի ուղղակի ընկալման վրա.

– *Թող հողը թեթև լինի վրեդ, – հանգուցյալին հողին հանձնելուց հեպոռ օրհնում էին հարազատները:*

– *Դե որ շապ էիք ուզում՝ թեթև լինեք, ասեիք ադիբուդի լցնեինք...– շշուկով արտաբերում է մասնակիցներից մեկը:* (ԱՍՇՀ)

²²⁰ Սահյան Հ., հատոր 2, Եր., «Հայաստան» հրատ., 1976, էջ 101:

Անեկդոտներ կան, որոնք միաժամանակ առնչվում են թե՛ **օրհնանք-բարեմաղթանքների**, թե՛ **անեծքների հեղուկ**: Նման ստեղծագործություններում արտաբերված օրհնանք-բարեմաղթանքը, անկախ ասողի կամքից, շրջապատի կողմից ակամա, շատ հաճախ էլ դիտավորյալ, ընկալվում է իբրև անեծք:

Նմանատիպ կառույց՝ «Լոռըցու օրհնանքը» վերնագրով, տպագրել է Հովհ. Թումանյանը 1887թվականին «Նոր-Դար» շաբաթաթերթում.

Մի լոռըցի անցնելիս հարևանը հրավիրում է թաժա հաց ուտելու. //«Ադա՛, Սաքո՛, դեսըն արի՛, փաք հաց կտրի». // – *Շնորհակալ եմ, քի մափաղ, խաղաղ եմ²²¹, ձեր փաք հացը Աստուծ կտրի, – պատասխանում է անցվորը²²²:*

Անեծքա-օրհնանքային մի քանի նմուշ էլ վերջին 20-25 տարիներին մենք ենք գրառել, որոնցից մեկում «օրհնվում է» ավտոբուսը կանգնեցնող վարորդը՝ մեծահասակ կնոջ կողմից ստանալով «Ապրե՛ս, բալա՛ ջան, դուն ինձ վե կալար, թող Աստված էլ քեզ վեր ունի» «պարզև-օրհնանքը» (ԱՍՇՀ)

Մեկ այլ նմուշում այն այսպես է դրսևորվել՝ «Վա՛յ, Վարդգե՛ս ջան, դուն որ մեր ըրեխին կրակիցը փրգեցիր, թող կրա՛կ վե գա քու վրա: Վո՛ւյ, քոռանամ ես, էս ի՞նչ ասի: Թող լիս վե գա վրիդ»... (ԱՍՇՀ)

Գրառումներից մեկում էլ տան վառված լամպը փոխողն է արժանանում «Ապրե՛ս, բալա՛ ջան, դուն իմ փունը լուսավորեցիր, Աստված էլ թող քու ֆոքին լուսավորի» «օրհնանքին»... (ԱՍՇՀ)

Կան նաև այնպիսի նմուշներ, որոնք ստեղծվել են անեծքի հենքի վրա կամ զուտ անեծքներ են: Արտաբերման միջավայրը, պատճառը և նպատակը սրանց վերափոխում են զվարճախոսությունների.

Շուշի փափկը հարբած մարդ չէր սիրում, նույնիսկ փեսային.

²²¹ **Խաղաղ եմ** – շտապում եմ:

²²² «Նոր-Դար», Թիֆլիս, 24.07. 1887թ.:

Նույնը՝ **Թումանյան Հովհ.**, ԵԼԺ, հատոր 5, Եր., «Գիտություն» հրատ., 1999, էջ 580:

– Վա՛յ, Արտա՛շ, Արտա՛շ, ծմեռը մաշինով Երևան ճրնհապա քյինաս, բուք ու բո-
րանին Սիսյանի սարամը պակրիշկապ²²³ փրաքե, էդ վախտ ալ ապամեդ ցավը փոնե,
ես ալ հրեշտակ տեռած կյամ մի բոթուլ արադ փնիմ կոխկեթ, բայց ծերքդ հըսնե վե՛²²⁴:

Երբեմն էլ իրար հետևից անեծքներին հաջորդած օրհնանքների տարափն է օգ-
նում իրավիճակն ընկալելի դարձնելուն և զավեշտ ստեղծելուն: Աշտարակյան «Անեծք և
օրհնություն» մանրապատումում զավեշտն ստեղծվում է հենց դրանց հենքի վրա²²⁵:

Տե՛ս Հավելված 1, թիվ 4:

Ժողովրդական զվարճախոսությունների մի խումբ էլ ներկայանում է **բաժակա-
ճառային** կառուցվածքով: Նման կառույցներում զավեշտն արտահայտվում է՝

ա. կա՛մ սովորական՝ խոսքային տրամաբանական, բայց ներկայացվող գործո-
ղությունների անտրամաբանական ընթացքով.

Հայացքը հատելով դեպի առաստաղը՝ թամադան վերջին կենացը բարձրացրեց.

– *Տե՛ր Աստված, դու մեզի ու մեր ազգին լավ հիշկա՛²²⁶, կարգին պախա, կամ թե՛
չես կանում, հիջի մենք քեզի ընե՛նց պախենք, որ քու Աստվածը դառնանք:*²²⁷

բ. կա՛մ էլ ոչ բաճակաճառային միջավայրում ցանկության, մաղթանքի խոսքե-
րով.

Դատավորը դիմում է ամբաստանյալին.

– *Ասա՛ քո վերջին խոսքը: Ի՞նչ ես խնդրում դատարանից:*

– *Ի՞նչ խնդրեմ, դատավո՛ր ջան: Աշխարհին՝ խաղաղություն, քեզ՝ ջանսաղութ-
յուն, ինձ էլ... ազատություն... Ամեն՝²²⁸:*

Զվարճապատումներ և զվարճախոսություններ կան՝ կառուցված անգամ **հիշոց-
հայհոյանքների** հենքի վրա: Նման նմուշներում եթե բացակայում են հայհոյական բա-

²²³ Պակրիշկա (ռուս.) – անվաղող:

²²⁴ Գրիգոր Ա., Զվարճալի պատառաքաղ, Քաջարան-Կապան, Եր., «Զանգակ -97» հրատ., 2006, էջ 108:

²²⁵ Գյուլնազարյան Խ., Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991, էջ 82-83:

²²⁶ Հիշկա – նայիր:

²²⁷ Բոյիդ մեռնեմ կամ Քյավառա 140 անեկոտ, Հավաքեց և մշակեց Լևոն Բլբուլյանը, Եր., «Նաիրի»
հրատ., 1992, էջ 146:

²²⁸ Մելիք-Սարգսյան Գ., Զվարճալիք, Եր., «Պ.Սևակ» հրատ., 2001, էջ 55:

ները, ապա դրանց փոխարինում են կա՛մ բառախաղերը.

– *Քանի՞ զորանչ ունես: // – Երեք: // – Ո՞նց թե: //*

– *Հա՛. զորանչըս, նրա մերը, նրա տիրու մերը: (ԱՍՇՀ)*

Կա՛մ էլ հայիոյանքին հետևում է դրա ուղղակի կատարմանը նպաստող զավեշտալի պատկերը: Այսպես, սարում 12-ամյա երեխան մայր է հայիոյում պատերազմից նոր վերադարձած համազյուղացուն: Վերջինս շալակն է առնում հայիոյողին և ահռելի բարձունքը հաղթահարելով՝ մտնում իրենց բինան (օդա), ապա դիմում մորը.

– *Նանի՛, տեղերը բացի՛, ապընին բերել եմ: (ԱՍՇՀ)*

Կան նմուշներ, որտեղ եթե բացակայում են հայիոյական բառերը, ապա դրանց փոխարինում է հայիոյանքի ներգործած հետևանքի նկարագրությունը.

– *Լևա՛ն դայի, էնքան ինձ մեր ես ուշունց տվել, որ գիտեմ թե իմ իսկական հերը դու ես, – ասում է Սամվելը Դանաբեյանց Լևանին²²⁹:*

Մեր գրառումներից մեկում էլ իրար հաջորդող հայիոյանքներին հետևում են խոսակից *ինտելիգենտի* մի քանի զգուշացումները, ապա՝ «պոռթկումը»՝ ծիծաղ հարուցող մեղմասութային կառուցվածքով.

– *Եթե դուք մարդկանց ներկայությամբ շարունակեք հայիոյել, ես ճարահատյալ պիտի մասնակցեմ ձեր ընտանիքի բազմացմանը: (ԱՍՇՀ)*

Պատումներ կան, որոնց մեջ հիշոց-հայիոյանքների կիրառությունները պատուհաս են դառնում հենց դրանց արտաբերողների համար, երբ ցանկության խոսքերն իրականացնողը ոչ թե արտաբերողն է դառնում, այլ պատահաբար ունկնդիր դարձածը²³⁰: **Տե՛ս Հավելված 1, թիվ 5:**

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներն ու զվարճախոսություններն աղերսվում են նաև **երդումի** հետ:

²²⁹ Կատակում են մովսեսցիները, Գրառողներ՝ Ա. Պապյան, Հ. Պապյան, Եր., «Նոյյան տապան» հրատ., 2012, էջ 11:

²³⁰ **Քոչարյան Ա.**, Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ» հրատ., 2008, էջ 20:

Ուխտը, երդում-խոստումը դրժելը վաղնջական ժամանակներից աստվածավախ մարդը մեղք է համարել: Եվ իզուր չէ, որ երդման, ուխտի խախտմանն առնչվող ժողովրդական բանարվեստի տարբեր ժանրերի բազում նմուշներ են ստեղծվել:

Սրբերին մի բան էին խոստանալիս և ժամանակին խոստումը չկատարելուն առնչվող ժողովուրդը վախից նույնիսկ ասույթ է ստեղծել՝ «Ուշանալ ըլի, մոռանալ չըլի» (ԱՍՇՀ): Ժողովրդական երգիծանքի տեսակներով նա ոչ միայն ծաղրել է ուխտը դրժողներին, այլև ծիծաղել անհեթեթ ուխտ անողների վրա:

Զվարճապատում-զվարճախոսությունների մեջ մի դեպքում ծիծաղ հարուցողը երդումն է, երբ այն արտաբերվում է իր սովորական «անմեղ» կառուցվածքով.

Տղան դիմում է նոր ծանոթացած աղջկան. // – Ես քեզ սիրում եմ: //

– Ճի՛հ՞շտ: // – Հորըս արև: (ԱՍՇՀ)

Մեկ այլ դեպքում՝ երդումում կիրառվող ժողովրդական դարձվածքի և պատահականության զուգադիպությունը.

Երկու սիրահարներ քայլում են: //– Ես քեզ սիրում եմ, – ասում է տղան: //

– Դե երդվի՛ր, որ հավատամ: // – Թե սուտ եմ ասում, գետինը մտնեմ: //

Մեկ էլ աղջիկը տեսնում է՝ տղան անհայտացել է. ընկած է լինում կանալիզացիայի լյուկը²³¹: (ԱՍՇՀ)

Զավեշտի հենք դարձած երդման կիրառության հետաքրքիր օրինակի ենք հանդիպում փերիահայոց զվարճապատումներից մեկում: Հավի գողության մեջ կասկածվող հարևանը սուտը ճշտի տեղ անցկացնելու համար չափաժոյով ու այնպես արագ-արագ է արտաբերում «երդման» խոսքերը, որ հավի տերը համոզվում է նրա անմեղությանը.

– Ով որ քո հաւը գողացել է՝ // Թող եփի-եփի եփը վրէն, //Աղ ու տաքդեղը վրէն, //

Հանի իր ազիզ քուֆթի²³² հետ ուտի՛²³³:

Սրա տարբերակներից մեկը պոլսահայոց մեջ շրջանառվել է դեռևս 19-րդ դարա-

²³¹ **Կանալիզացիայի լյուկը** (ռուս.) – կոյուղու հորանցք:

²³² **Քուլֆաթ** – ընտանիքի անդամներ:

²³³ **Մինասեան Լ.**, Գիւղական բառ ու բան, Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ վանքի տպարան, 1998, էջ 193:

վերջին²³⁴: **Տե՛ս Հավելված 1, թիվ 6:**

Մեր ձեռքի տակ եղած տպագիր և անտիպ նյութերի մեջ քիչ չեն նաև այնպիսի երգիծապատում-զվարճախոսությունները, որոնք այս կամ այն չափով առնչվում են նաև **առակի** հետ:

Հայկական անեկդոտների համատեքստում առակային տարրերի կիրառությամբ (սեղմություն, այլաբանություն, կերպարներ և այլն) հանդիպող ստեղծագործությունների գերակշիռ մասում բացակայում է առակի ժանրին բնորոշ ամենաէական՝ բարոյախրատական հատկանիշը:

Միևնույն երևույթը (ասենք՝ ուխտը, խոստում-երդումը) ներկայացնող պատումը մի դեպքում կարող է հանդես գալ բուն առակային կառույցով՝ բարոյախոսական վերջաբանով, մեկ այլ դեպքում՝ զվարճապատումային՝ անսպասելի ծիծաղ հարուցող ավարտով, ինչն էլ հիմք է հանդիսանում վերջիններս դասելու երգիծական մանրապատումների տեսակի մեջ:

Եթե ժողովրդական ստեղծագործության մեջ ուխտը, խոստում-երդումը չի կատարվում, երդում տվողի կողմից դրժվում է, և հերոսը դրան հավատարիմ չմնալու համար պատժվում է, այդ դեպքում պատումը ձեռք է բերում բարոյախրատական ուղղվածություն՝ ներկայանալով որպես առակի ժանր²³⁵: Կ. Գալֆայանի ժողովածուում տեղ գտած «Մեյ մը սա փորձանքէն ազատուինք»²³⁶ և «Բայց միւս աղօթքս չի լսեցիր»²³⁷ ստեղծագործություններն իրենց անսպասելի ծիծաղ հարուցող ավարտով մոտենում են երգիծական մանրապատումի տեսակին:

Եթե ուխտը, երդումը դրժել-չկատարելը ներկայացվում է իբրև կանխամտածված քայլ, խորամանկ խաղ-կատակ՝ Աստծու կողմից չընկալված խոսք, այդ դեպքում գործո-

²³⁴ Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 183

²³⁵ Հայկական զրոյցներ, պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լոս Անջելես, 1944, «Աստծոյ հետ ընկեր», էջ 7-8:

Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, 1878, «Երդուն՛լ ես, կատարի՛ր», էջ 181-182:

²³⁶ Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէյրոս, Տպարան՝ Կ. Տոնիկեան, 1957, էջ 102-103:

²³⁷ Նույն տեղում, էջ 163-164:

ղության անհաջող ավարտից հետո հերոսի՝ «մեղայականով» Աստծուն ուղղված՝ «Շուրուխի էլ չե՛ս դիմանում» կամ էլ ինքն իրեն հասցեագրած նախատինքի՝ «Մարդու տեղը որ նեղ ա ըլում, ի՛նչ ախմախ-ախմախ բաներ ասես, որ մտքովը չի անցկացնում» անսպասելի ծիծաղ հարուցող վերջաբանային խոսքերի շնորհիվ պատումները ներկայանում են բանահյուսության մեկ այլ տեսակին՝ երգիծական մանրապատումին հատուկ ժանրային հատկանիշներով: (ԱՍՇՀ)

Ի տարբերություն երգիծական մանրապատումների այլ տեսակների՝ առակատիպ զվարճապատումային կառույցներում ևս գրեթե բացակայում են տեղավայրային բնորոշիչ գծերն ու ազգային առանձնահատկությունները: Սրանց մեծ մասը թերևս թափառող սյուժեներ են՝ որոշ դեպքերում նաև, ինչպես բուն առակները, տեղայնացված հերոսներով, միջավայրով ու լեզվական յուրահատուկ դրսևորումներով:

Կան զվարճապատումներ, որոնք չնայած այլաբանորեն են վերարտադրում ասելիքը և իրենց գործող անձանցով՝ առակներին բնորոշ հերոսներով ու երկխոսությամբ ինչ-որ տեղ մոտենում են առակի տեսակին, սակայն նման պատումներում բացակայում է առակից բխող դաստիարակչական-ճանաչողական-խրատաբարոյական ուղղվածությունը: Չնայած վերջիններիս մոտ բարոյախոսական վերջաբանին փոխարինում է անկանխատեսելի պատասխանով ծիծաղ առաջացնող խոսքը, այնուամենայնիվ, այսպիսի ստեղծագործությունները ևս խորքային են, նպատակային և սուր քննադատությամբ հագեցած:

Խորհրդային Հայաստանի և նորանկախ Հայաստանի հարկային վարչարարությունը այլաբանորեն խտացվել է հետևյալ երգիծապատումում: Աղվեսը փախչում է հարկայինի ստուգումներից, որի հետևից փախչում են նաև առյուծն ու արջը: Կապիկին ուղղած հարցին, թե ի՞նքն ինչու չի փախչում, պատասխանում է.

– Ես ինչու՞ փախչեմ: Իմ հեղևս՝ բաց, կնոջս հեղևը՝ բաց, երեխիս հեղևը՝ բաց

...²³⁸.

²³⁸ Մելիք-Սարգսյան Գ., Զվարճալիք, Եր., «Պարոյր Սևակ» հրատ., 2001, էջ 51:

Եթե ժողովրդական ավանդական առակները մեծ մասամբ վերաբերում են բոլոր ժամանակներին և շոշափում ընդհանուր մարդկային-հասարակական հարաբերություններին առնչվող հարցեր, ապա առակատիպ գվարճապատումները առնչվում են մեծ մասամբ որոշակի ժամանակաշրջանի և վերաբերում կոնկրետ քաղաքական վարչակարգին (ասենք՝ խորհրդային և հետխորհրդային), գործող անտրամաբանական օրենքներին (ստալինյան ժամանակներում՝ բռնի և անհեթեթ պլանային քաղաքականությունը²³⁹), կոնկրետ վարչակարգի մեջ գործող օղակներին (*հարկային վարչարարություն՝ թե՛ խորհրդային, թե՛ ներկա կարգերում*²⁴⁰), մեր օրերի *անազնիվ ընտրապայքարին՝ կեղծիքներով անցկացված ընտրություններին՝ ստեղծված դասական առակի հենքի վրա (ԱՍՇՀ) և այլն:*

Գիտատեխնիկական աննախընթաց զարգացման պայմաններում խարխվում են ավանդականի հիմքերը, խզվում ու խախտվում է կապը կրտսեր և ավագ սերունդների միջև: Առակը և դրանով ժառանգներին ուսուցանելն ու դաստիարակելը նոր ժամանակներում զավեշտի է վերածվում: Ահա որդիների միասնությանն ուղղորդված ցախավելի առակից բխող բարոյախրատական գաղափարի հենքի վրա կառուցված մի գվարճապատում, որտեղ անցյալի կենսաձևերի հետ այսօրը կապելու փորձերը ձախողվում են: Ավագ, միջնեկ և կրտսեր զավակներին պապենական առակով միասնության կոչելու ցանկությունը և տղաների անկանխատեսելի ուժի դրսևորումը անելանելի վիճակի մեջ են գցում մահամերձ ծնողին, ու նրա արտաբերած խոսքը և՛ ծիծաղ, և՛ դառնություն ու ցավ է առաջացնում. *«Դե արի ու մեռնելուց առաջ էս տեսակ ախմախներին խելք ու խրատ սովորացրո»:* (ԱՍՇՀ) ***Տե՛ս Հավելված 1, թիվ 7:***

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում առակատիպ գվարճապատումներ կան, որոնց տարանջատելը առակից առաջին հայացքից դժվար է լինում: Դրանց մեջ առկա է և՛ առակին հատուկ լակոնիկ՝ կուռ կառուցվածքը, և՛ բարոյախրատ

²³⁹ Բաքվի հայոց բանահյուսությունը, Գրառեցին և կազմեցին Ալվարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը Եր., «Ձանգակ-97», 2004, էջ 208:

²⁴⁰ **Մելիք-Սարգսյան Գ.**, Զվարճալիք, 2001, Եր., «Պարույր Սևակ» հրատ., էջ 51:

տական ուղղվածությունը, և՛ քննադատությունը: Թերևս միակ բնորոշիչ և տարանջատող հատկանիշը, որ մոտեցնում է երգիծական մանրապատումի տեսակին, նրանց կտրուկ և անսպասելի վերջաբանն է՝ հագեցած ինքնաբուխ, երբեմն գրոտեսկի հասնող ծիծաղով:

Մինը դարբնի աշակերտ ա ըլլմ, որոշ ժամանակ հետո մորն ասըմ ա.

– Էլ չեմ գնըմ, ամեն ինչ սըվորել եմ... // Դարբինը հանդիպըմ ա մորն ու հարցընըմ. // – Տղետ էլ խի՞ չի գալի: //Մերն ասմա. //– Ըրեխեն ասըմ ա. «Արդեն ամեն ինչ սըվորել եմ, էդ ի՞նչ ա, որ մենակ էլ չանեմ. էրկաթը հանըմ ես կրակը կոխըմ, շոռումուռ ես տալի, յեռ ես անըմ, յեդո կեռ ես անըմ, ջուր ես անըմ, ու պատրաստ ա»: // Վարպետն ասըմ ա. // – Էդ քուռակ լակոտին չե՞ս մըտիկ անըմ, ինքը սըվորել ա, քի՛չ ա, գնացել ա մորն էլ ա սըվորցրել... (ԱՍՇՀ)

Եթե վարպետը բարոյախրատական խոսք ասեր, պատումը կմոտենար առակի ժանրին, սակայն անսպասելի պատասխանն ամեն ինչ ասում է. և՛ անսպասելի ծիծաղը կա, և՛ արտաքուստ չերևացող բարոյախոսությունը:

Առակի և զվարճապատումի սահմանագծին հանդիպում են այնպիսի նմուշներ, որոնք, այսպես ասած, «երկսեռ» են՝ առակին հատուկ և՛ այլաբանությունն է առկա, և՛ հերոսներն են այլաբանական, և՛ քննադատություն կա, և՛ խոհափիլիսոփայություն: Միաժամանակ այն ժողովրդական երգիծապատումի ամենահատկանշական կողմով՝ անսպասելի ծիծաղ հարուցող պատասխան-ավարտով է հանդես գալիս: **Տե՛ս Հավելված 1, թիվ 8:**

Քաղաքական նույն ենթատեքստն ունի նաև «Հավն ու վիջիլը» անեկդոտը²⁴¹:

Տե՛ս Հավելված 1, թիվ 9:

Նման զվարճապատումները առակի ժանրի պես ոչ միայն վեր են հանում հասարակության մեջ տեղ գտած թերությունները, այլև քննադատում ու ծաղր ու ծիծաղի միջոցով նպաստում դրանց դեմ պայքարին:

²⁴¹ Բաքվի հայոց բանահյուսությունը, Գրառեցին և կազմեցին Ա. Ղազիյանը և Սվ. Վարդանյանը, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 208:

Տպագիր և ձեռագիր աղբյուրներում քիչ չեն նաև աստվածաշնչյան՝ Հին ու Նոր Կտակարանների և զուտ հայկական **ավանդազրույցների** հենքի վրա ստեղծված երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները:

Հին Կտակարանի տարատեսակ թեմաների, կերպարների, առանձին դետալների ու գործողությունների (Ադամի և Եվայի, նրանց մերկությունը ծածկող թզի տերև, արգելված պտուղ, ջրհեղեղ, Նոյան տապան և այլն) կիրառությունները անեկդոտներում նպաստում են զավեշտի ստեղծմանը.

Ադամը, տուն մտնելով, Եվային ասում ա.

– *Տերևս հարթուկի, տեղ եմ գնալու* (տրբրկ.՝ ժամադրված եմ): (ԱՍՇՀ)

Կամ՝

Ադամը Եվային հարցնում ա.

– *Տերևս ու՞ր ա, որտե՞ղ ես դրել. հագնեմ. տեղ ունեմ գնալու: //Բա թե՛ // – Տոլմա եմ փաթաթել... (ԱՍՇՀ)*

Ինչ խոսք, նմանատիպ զվարճախոսությունները չունեն այն բազմակողմանի գրավիչ հատկանիշներն ու խորքայնությունը, որոնք հատուկ են ընդգծված դիպաշար ունեցող անեկդոտների գերակշիռ մասին: Այդպիսի պարզունակ կառույցները սոսկ բարձր տրամադրություն առաջացնելու համար են ասվում:

Արգելված պտուղի ավանդազրույցին առնչվող դրվագներից մեկի զվարճապատումային կիրառությանը հանդիպում ենք նաև Կ. Գալֆայանի ժողովածուում: Կրոնավորների միջավայրում հայտնված թափանցիկ զգեստով տիկնոջը դիտողություն անելուն օգնում է Հին կտակարանի այդ պատումի հիշեցումը: Հոգևոր առաջնորդի հրամցրած կես խնձորն ու զարմացած տիկնոջը սրախոսությամբ արած նրա դիտողություն-բացատրությունը, թե՛ «Սուրբ Գիրքը հիշեցի: Հոն տեղ մը կըսվի, թե Եվա

խնձորը ուտելիք վերջ նկատեց, որ մերկ է...²⁴²», նպաստում է նման միջավայրում նրա ոչ պատշաճ հագնվելն ընդգծելուն:

Աստվածաշնչյան մեկ այլ ավանդազրույցի՝ Նոյ Նահապետին և տապանում տեղավորած կենդանիներին է առնչվում Հովհ. Նազարյանցի «Անեկդոտներ»-ում տեղ գտած հետևյալ զվարճախոսությունը.

Վարդապետը սաստիկ հայհոյեց յուր ծառային: Ծառան ասաց.

– Հա՛յր սուրբ, ես քեզ չեմ հայհոյեր. անիծա՛ծ լինի այն այծն, որ Նոյ Նահապետն վեր առավ տապանի մեջ, որու թոռներու մազից քեզ փիլոն կարեցին²⁴³:

Այդ նույն թեմային է առնչվում նաև Ս. Շահազիզյանի «Ծիծաղի տոպրակի» հետևյալ նմուշը.

Կառք նստել ցանկացողը, տեսնելով գերբեռնվածությունը, փորձում է կատակել.

– Նոյան տապանը լի՞քն է:

– Էշի տեղն է պակաս, – լինում է պատասխանը²⁴⁴:

Աստվածաշնչյան ավանդազրույցների նմանատիպ դրսևորումներից զատ, անեկդոտների համար հենք են հանդիսացել նաև հայկական ավանդապատումները: Հայոց աշխարհի բազմաթիվ տեղանունների հետ կապված ժողովրդական ստուգաբանական ավանդազրույցներ կան, որոնցից մեկի՝ Բալուի շրջանի Հավալ գյուղանվան ժողովրդական մեկնաբանությունն էլ կապված է Թադեոս առաքյալի անեծքի հետ (քանի որ հեթանոս բնակիչները քարոզելիս նրան ծաղրել, շան պես հաչելով՝ «հա՛վ-հա՛վ» էին արել)²⁴⁵: **Տե՛ս Հավելված 1, թիվ 10:**

Մեր գրառած պատումներից մեկը ևս ստեղծվել է բարբառային նմանատիպ հնչերանգի հիմքի վրա՝ հիշեցնելով վերը մատնանշած ավանդազրույցը.

²⁴² Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պեյրուֆ, Տպարան՝ Կ. Տոնիկեան, 1957, էջ 155:

²⁴³ Անեկդոտներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, Նազարյանց Հովհ., էջ 83:

²⁴⁴ Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս. Տ. Շահազիզեան, Թիֆլիզ, 1892, տպարան Մովսէս Վարդանեանի, էջ 129:

²⁴⁵ **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., ԳԱ հրատ., 1969, էջ 200:

Քաղաքից մի մարդ գնում ա Ոսկեվագ: Մի քանի երեխա գյուղի մեջ խաղալիս են լինում: Մոտենում հարցնում ա.

– Էրեխեք, էս էն գյուղն ա՞, որ մարդիկ շան պես հաչում են:

Երեխաները անմիջապես հարցնում են.

– Վա՞վ ասիլի, վա՞վ ասիլի, վա՞վ, վա՞վ, վա՞վ...

Անցորդն արագ հեռանում է՝ մտածելով. «էս որ փոքրերն են էսպես հաչում, բա մեծե՞րն ինչ կանեն»: (ԱՍՇՀ)

Թվում է՝ այս զվարճապատումը իր ակունքներով կապված է քրիստոնեության վաղ շրջանի հետ, սնուցվել է նրանից և վերջին շրջանում նոր ժամանակների ոգուն համահունչ՝ այլ բանահյուսական տեսակի մեջ է հանգրվանել: Երկու պատումների առաջացման հիմքում էլ բարբառային հնչերանգային անսովոր արտաբերումն է՝ նմանեցված շան հաչոցին: Առաջինը կապվում է քրիստոնեական գաղափարները Հայաստանում քարոզող Թադեոս առաքյալի հետ՝ Հավավ տեղանվան ավանդապատումային ստուգաբանությամբ շաղախված, երկրորդը՝ տեղացիների բարբառը ծաղրող սովորական անցորդի հետ՝ զվարճապատումային կառույցում՝ շեշտելով տվյալ բարբառի հարցական դերանվան (ո՞վ-ո՞վ-վա՞վ-վա՞վ) արագախոսությամբ արտաբերումը:

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումների համատեքստում հանդիպում են այնպիսի նմուշներ, որոնք կառուցված են կա՛մ **ժողովրդական հմայական աղոթք-բանաձևերի**, կա՛մ ժողովրդական տարատեսակ **աղոթք-աղերսանքների** (այդ թվում նաև՝ զանազան սրբերին ուղղված) հենքի վրա: Հմայական-կապքի պատումներում ուշադրությունը հիմնականում բևեռվում է ոչ թե գիր-աղոթքների խորհրդավորության, խոսքի բանաձևային կառույցներով, խոսքի ուժով այս կամ այն երևույթի, կենդանու, անձնավորության վրա ազդելուն, այլ այդ շնորհը կրող մարդու և նրա գործողությունների ու դրանց արդյունքների զավեշտալի դրսևորումներին:

Տպագիր աղբյուրներում նմանատիպ ժողովրդական աղոթքներին նվիրված մի քանի զվարճապատումների ենք հանդիպել, որոնցից մեկն առնչվում է գելկապի աղոթ-

քին: Այսպես, «Նուսխեճի տերտերին «գելկապը»²⁴⁶ զվարճապատումում ներկայացվում է հայ տերտերի «օգնությունը» էշը կորցրած թուրքին, երբ համապատասխան վճարի դիմաց «գելկապի» աղոթք-կապքով «ապահովվում» է հանդում մնացած էշի անվտանգությունը: Զավեշտալին այն է, որ գելկապի աղոթքի գրությունը թուրքին հանձնելիս տերտերը խորհուրդ է տալիս այն ոչ մեկի ձեռքը չտալ, այլապես նրա էշը գայլերի բաժին կարող էր դառնալ: **Տե՛ս Հավելված 1, թիվ 11:**

Գելկապի աղոթքի հետ կապված մեկ այլ զվարճապատումում ժողովրդական կապքի աղոթքի հանդեպ հերոսի հավատքը խարխլվում է, քանի որ գելկապից հետո գյուղացին հանդում իր էշի փոխարեն գտնում է նրա ոսկորները: Բացատրություն պահանջող գյուղացուն տերտերի տված արդարացումը դառնում է անեկդոտի զավեշտալի հանգուցալուծումը.

– Վա՛յ, սանախե՛ր Մկո, իմ լուս քոռնա, բերան թորկել, պոչն եմ կապել: Հըմա, հեչ թալաշ մ՛ ենա, չուր լուս, գիլան յըմմեն կտրաքին»²⁴⁷:

Ի տարբերություն կապքի աղոթքների հենքի վրա ստեղծված զվարճապատումների՝ ժողովրդական աղերս-աղոթքներով կառուցված երգիծապատումները հանդես են գալիս թե՛ ավանդական, մասնավորապես քրիստոնեական սրբերին ուղղված աղերս-աղոթքների կիրառությամբ, թե՛ աղերս-աղոթքների կառուցվածքային տարատեսակ տարրերի օգտագործումով:

Ավանդական աղերս-աղոթքների հետ կապված զվարճապատումների առավելապես հանդիպում ենք 19-րդ դարի երկրորդ և 20-դարի առաջին կեսերի գրառումներում, ինչն էլ պայմանավորված է այդ ժամանակաշրջանում ապրած մարդկանց՝ զանազան սրբերի, մասնավորապես սուրբ Սարգսի զրրության հանդեպ ունեցած անսասան հավատով: Այսպես, օրինակ, Կ. Գալֆայանի գրքի «Զօրաւոր սուրբը» պատումում ներկայացվում է Կեսարիա եկած և Սուրբ Սարգսի վանքը այցելած հավատացյալ խիզախ

²⁴⁶ Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէյրոս, Տպարան՝ Կ. Տօնիկեան, 1957, էջ 114 -115:

²⁴⁷ Անեկդոտներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 50:

զեյթունցի ջորեպանին, որը վանահորից *Սրբի Չարխափանն* էր ստացել: Վերադարձի ժամանակ Անտիոքի վտանգավոր կիրճերով անցնելիս նա շատ հանգիստ է լինում. վտանգը նա վնասագերծված է համարում, քանի որ «Սուրբին չարխափանը կայ ջորիին վզին»:

Իսկ երբ ջորու ոտքը սայթաքում, և կենդանին գահավիժում է անդունդը, ջորեպանն այս անգամ ծնկի եկած սկսում է աղոթել ու խնդրել. «Սու՛րբ Սարգիս, Սու՛րբ Սարգիս, զորությանդ մեռնիմ: Ջորիէս վազ անցայ, թէ՛ք գլուխը ազալիէ»²⁴⁸:

Ի դեպ, սուրբ Սարգսին ուղղված աղոթք-աղերսներով կառույցները քիչ չեն հայոց երգիծապատումներում: Ալեկոծությունների բերանն ընկած հոր աղերսը՝ սուրբ Սարգսին, և փրկվելու դիմաց՝ նրա խոստումը, թե բոլոր ոչխարները պատրաստ է նվիրաբերել նրան, այնուհետև՝ որդուն հանգստացնող հոր խոսքը, թե՛ «Հելե անգամ մը սա փորձանքեն ազատվինք ու ծովեզերք հասնինք, ոջլոտ գառնուկին դմակն ալ դուրպան կ'ընեն իրեն»²⁴⁹, պատումը մոտեցնում է երգիծապատումի տեսակին:

Երգիծական մանրապատումների համատեքստում առկա նմանատիպ ստեղծագործությունները, չնայած որոշ կողմերով առնչվում են առակի, ավանդազրույցի և աղոթքի հետ, այնուամենայնիվ, իրենց տարանջատիչ հիմնական հատկանիշի՝ անսպասելի ծիծաղ հարուցող վերջաբան-հանգուցալուծման շնորհիվ առանձնանում են ժողովրդական բանարվեստի այդ տեսակներից:

Հայկական երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների համատեքստում քիչ չեն այնպիսի ժողովրդական ստեղծագործությունները, որոնք ինչ-ինչ կողմերով առնչվում են **հեքիաթի ժանրի** հետ: Դրանք կա՛մ որոշակի սյուժետային գծերով ու գործողություններով փոքրածավալ ստեղծագործություններ են՝ անսպասելի ծիծաղ հարուցող վերջաբանով, կա՛մ հեքիաթի զանազան տարրերով (հեքիաթային միջավայր, կերպարներ, բանաձևային կառույցներ և այլն) հագեցած երգիծապատումներ,

²⁴⁸ Հայկական զրույցներ, պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լոս Անջելես, Պոզանեան տպագրութիւն, 1944, էջ 22-23:

²⁴⁹ Նույն տեղում, էջ 81:

երբեմն էլ՝ հեքիաթային տարրեր պարունակող անսյուժե բանարվեստի նմուշներ՝ զվարճախոսություններ:

Եթե հրաշապատում հեքիաթը վաղնջական ժամանակների արդյունք է, իրապատումը՝ ուշ ժամանակների, իսկ իրապատում հեքիաթի երգիծական տեսակը՝ էլ ավելի ուշ, ապա հեքիաթատիպ անեկդոտներն իրենց կառուցվածքով և հանկարծակի ծիծաղ առաջացնող վերջաբանով նոր ժամանակների արգասիք են՝ կապված մարդկության մտածողության առավել բարձր աստիճանի, իրական կյանքում տեղի ունեցող տարատեսակ երևույթներն ընկալելու, ի մի բերելու և իր վերաբերմունքով յուրովի վերարտադրելու հետ: Այս ամենն արտահայտվում է մարդու՝ կյանքին ծիծաղի պրիզմայով նայելու, դժվարությունները հումորով հաղթահարելու, առկա խնդիրներին արձագանքելու և դրանց վերափոխմանը նպաստելու պատրաստակամությամբ: Իսկ ինչո՞վ է ժողովրդական հեքիաթն առանձնանում հեքիաթատիպ զվարճապատումից, և հեքիաթային ի՞նչ տարրերով են երգիծապատումներն ու զվարճախոսությունները կապվում բուն հեքիաթին:

Ի տարբերություն երգիծական մանրապատումների՝ հեքիաթի ժանրի կարևորագույն հատկանիշներից է մանրամասն նկարագրությունների, մի շարք գործողություններով ու կերպարներով հագեցած սյուժեի և ենթասյուժեների գոյությունը, կերպարների կերտման ու գործողություններով դրանց ինքնության բացահայտման տարատեսակ դրսևորումների, պատումների հավաստիությունը կասկածի տակ դնող անորոշ բանաձևային կառույցների (լինում է - չի լինում, ժուկով - ժամանակով և այլն) առկայությունը: Ժողովրդական հեքիաթներում ասացողը, հերոսին զանազան ձևերով ու աներևակայելի հնարքներով փորձությունների միջով անցկացնելով, հիմնականում տանում հասցնում է իր նպատակին: Թե՛ իրապատում, թե՛ հրաշապատում հեքիաթների ավարտն էլ է սպասելի ու գերազանցապես լավատեսական:

Բուն հեքիաթի և հեքիաթատիպ երգիծապատումի հիմնական տարանջատիչ հատկանիշը վերջինիս սեղմ ու կուռ կառուցվածքն է, հակիրճ, խտացված խոսքով, նաև

գործողությամբ և շարժումներով անսպասելի՝ նովելային, սակայն անսպասյալ ծիծաղ հարուցող հանգուցալուծումը: Հեքիաթային տարրեր պարունակող ժողովրդական երգիծական մանրապատումում երբեմն այդ գործողությունը հեքիաթի պես մինչև վերջ չի էլ հասցվում, այլ հանկարծակի վերջաբանային զավեշտալի խոսքով ընկալելի և ավարտուն է դարձնում ասելիքը:

Հեքիաթային տարրեր պարունակող երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների հերոսները, ի տարբերություն բուն հեքիաթների հերոսների, գերազանցապես մեր իրականության մեջ ապրող, իրենց գործողություններով և խենթ ու խելառ բնավորության գծերով որոշակի տարածաշրջանում «ձևավորված» ու հայտնի մարդիկ են, կամ ընդհանրացնող ուժ ձեռք բերած կոնկրետ ազգության (հայ, ռուս, հրեա, քուրդ, թուրք), տարածքի (վանեցի, այնթապցի, լոռեցի, ապարանցի), խավի, երբեմն էլ վերնախավի (գյուղացի, քաղաքացի, խոպանչի, տնօրեն, նախագահ) ու մասնագիտության (բժիշկ, դատավոր, ձկնորս, վարորդ) անձինք:

Հեքիաթի իրապատումային տարրեր պարունակող անեկդոտների մեծ մասը առնչվում է «պակասամտաց» թեմային, լոռեցի²⁵⁰, շեփիկցի²⁵¹, փերիացի²⁵², այնթապցի²⁵³ և այլ տարածքների «խելացիներ» են:

Նրանք գործում են իրական աշխարհում, մեկ-մեկ էլ ընկնում անիրական աշխարհի, և իբրև հատուցում երկրային կյանքում դրսևորած արարքների ու վարքի՝ նրանցից շատերը հայտնվում են հանդերձյալ կյանքում՝ դժոխքում կամ դրախտում, զրուցում Աստծու, հրեշտակների ու սատանայի հետ:

Երգիծապատում-զվարճախոսություններում իրական կամ ընդհանրացնող կերպարները իրական աշխարհում հաղորդակցվում են հրաշապատում հեքիաթի հերոսներ-

²⁵⁰ Ժողովրդական առակներ, Բ. Հոբոս, Հավաքեց՝ Ե. Լալայեան, Թիֆլիս, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1903:

²⁵¹ **Բախտիկեան Ս.**, Շեփիկայ խելացին (հայկական զուարճախոսություններ), Պեյրուֆ, Լիբանան, տպ. Օլիմփիք, 1953:

²⁵² **Բախտիկեան Ն. Մ.** Վրդ., Փերիոյ խելացին (զուարճալի մանրադէպեր), Պեյրուֆ, Տպարան Սեւան, 1967:

²⁵³ Միջ-գաւառական անեքթոտներ, Հաւաքեց եւ ներկայացուց Յ. Չոլաքեան, Հալէպ, Տպ. Արեւելք-Հալէպ, 1988:

րի՝ մարդակերների, խոսող տարատեսակ կենդանիների, մասնավորապես Ոսկե ձկնիկի հետ:

Հայկական անեկդոտների **ոսկեձկնիկյան թեմաների** հերոսները ներկայանում են ոչ միայն ըստ աշխարհագրական ու ազգային պատկանելության (հայ, քյավառցի, լոռեցի, ղարաբաղցի, հրեա, թուրք, քուրդ և այլն), այլև ըստ սոցիալական կարգավիճակի և կերպարային առանձնահատկությունների: Դրանց թեմաները, կերպարների կերտման հնարանքները ևս բազմազան են, հետաքրքիր և յուրահատուկ: Այսպես՝

Քյավառյան երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում խմելու հանդեպ ունեցած սերը տարբեր ձևերով կապվում է նաև քյավառցու կենսասիրության, ընկերասիրության, հյուրընկալության հետ, իսկ զովասուն սարերն ու Սևանա լիճը առատորեն խմելուց հետո սթափ մնալուն նպաստող գործոններն են:

Ոսկեձկնիկյան հեքիաթի հայտնի սյուժեի զարգացումը քյավառյան միջավայրում բնականաբար պետք է հիմնականում կապվեր խմիչքի, խմելու գործառույթի հետ: Մեր գրառած զվարճապատումներից մեկում երեք ցանկություն-պայմանի կատարումն ու կերպարի բնութագիրը ևս ուղեկցվում է նմանատիպ կերպարային գծերով և գործոններով: Ոսկե ձկնիկը կատարում է քյավառցու առաջին, ապա երկրորդ ցանկությունները՝ մեկ շիշ և մեկ արկղ օղի հրամցնելով նրան: Զավեշտալին, անսպասելի ծիծաղ հարուցողը քյավառցու երրորդ ցանկությունն է՝ «Սևանա լիճը օրադ դարձրա»: (ԱՍՇՀ)

Ոսկեձկնիկյան պատումնաշարի *ապարանյան* նմուշներից մեկը տարբերվում է մնացած կառույցներից. տեսնելով, որ իր միակ ցանկությունը՝ մեքենա շահելը չի կատարվում, Ոսկե ձկնիկին 2-րդ անգամ հանդիպած ձկնորսը ստախոսության մեջ մեղադրում և բացատրություն է պահանջում նրանից: Պատասխանն ինքնին հասկանալի է. առանց վիճակախաղի տոմս գնելու, ինչպե՞ս է հնարավոր ավտոմեքենա շահել... (ԱՍՇՀ)

Ոսկեձկնիկյան պատումներից մեկում էլ ապարանցու երեք ցանկությունների (երեքհարկանի առանձնատուն, մեծ կրծքերով կին և «Մերսեդես» ավտոմեքենա)՝ շու-

տասելուկի պես շտապողականությամբ արտաբերելն է հանգեցնում զավեշտի. արագախոսության շաղախով միատեղված երեք ցանկությունները կատարվում են, և Ոսկե ձկնիկը նրան պարգևում է երեքհարկանի մեծ կրծքերով մի «Մերսեդես»: Ցանկությունների կատարման այսպիսի «պատճառաբանված» հանգուցալուծում-վերջաբանն էլ ավելի է նպաստում անսպասելի և ինքնաբուխ ծիծաղ հարուցելուն: (ԱՍՇՀ) ***Տե՛ս Հավելված 1, թիվ 12:***

Մեր ձեռքի տակ եղած ապարանյան ոսկեձկնիկյան անեկդոտների մի խումբ էլ առանձնանում է իր կառուցվածքով և առաջադրած նպատակով: Որպես ապարանցու երրորդ ցանկություն՝ Ոսկե ձկնիկը Ապարանի սարերում կա՛մ հունձ է անում, կա՛մ ապարանցու դռանը փայտ ջարդում, կա՛մ պտտածողին *ժիմ* է անում, իսկ ապարանցիները հաշվում են, կա՛մ էլ ոսկու իսկության մեջ համոզվելու համար Ոսկե ձկնիկին դնում է ատամի տակ, սեղմում, սատկեցնում: (ԱՍՇՀ)

Ի դեպ, տափակ անեկդոտաշարի՝ ապարանցիներին առնչվող ոչ ոսկեձկնիկյան զվարճախոսություններից մեկում ևս կիրառվում է ժողովրդական հեքիաթի բանաձևային՝ *երկնքից 3 խնձոր ընկնելու* կառույցը.

Հեքիաթի վերջում երկնքից 3 խնձոր ա ընկնում, ապարանցին վերցնում, երեքն էլ ուտում ա: (ԱՍՇՀ)

Ինչ խոսք, տափակ կառույցների խմբին դասվող նմանատիպ զվարճապատում-զվարճախոսությունները բանարվեստի այլ նմուշների նման ընդգծված խորք ու ասելիք չունեն և մյուսների նման ինքնաբուխ ծիծաղ չեն էլ առաջացնում:

Ոսկեձկնիկյան պատումնաշարի մեկ այլ նմուշ՝ մի քանի տարբերակով, առանձնանում է թե՛ իր հերոսներով, թե՛ վերջաբանային ինքնատիպ լուծումով: Այս դեպքում ձկնորսը ոչ թե շեյխն է, այլ նրա սպասարկուները: Ժողովրդական հեքիաթի հենքի վրա ստեղծված զվարճապատումի վերջաբանը ևս հեռացած է ավանդական կառուցվածքից: Սրանցում հերոսները աղքատ ու «նյութապաշտ» չեն, նրանք ունևոր ու ամենազոր են, սիրահարված իրենց դիրքին և ունեցվածքին, պատրաստ առանց պայմանի կատա-

րել Ոսկե ձկնիկի ցանկացած իղձն ու կրկին ջուրը նետելով՝ ազատություն պարգևել: Ոսկեձկնիկյան անեկդոտաշարում զավեշտի մեխը 3-րդ ցանկության իրագործման յուրահատկություններն են:

Արաբական շեյխը, ծովի ափին նստած, հանգստանում էր: Այդ պահին ծառան ասում է.

– Շեյխ, շեյխ, Ոսկե ձկնիկ եմ բռնել, ի՞նչ անեմ: //– Խոսում ա՞, – հարցնում է շեյխը: //– Հա: //– Դե տես ինչ ա ուզում, տուր թող գնա: (ԱՍՇՀ)

Մեր ձեռքի տակ կան նաև այս նմուշի տեղայնացված՝ հայ քաղաքական ու գործարար ոլորտի մարդկանց վերաբերող տարբերակները:

Մանրապատումներում ձկնորսության ժամանակ Ոսկե ձկնիկ բռնող ունևոր և պետական բարձրաստիճան պաշտոնյաները կամ նրանց ենթակաները, ի տարբերություն հասարակ մարդկանց, կա՛մ առանց բան խնդրելու բաց են թողնում՝ պատրաստ նրանց ուզածը կատարելու, ինչպես վերոհիշյալ պատումում, կա՛մ էլ եթե ամենազոր Ոսկե ձկնիկին են դիմում, ապա միայն քաղաքական խնդիրներ իրագործելիս խոչընդոտները հաղթահարելու խնդրանքով.

Լևոն Տեր-Պետրոսյանը ոսկե ձկնիկ ա բռնում, ձկնիկն ասում ա.

– Երեք ցանկությունդ ասա, կատարեմ, մենակ թե ինձ բաց թող: //Լևոնն ասում ա.

– Երեքն ինձ պետք չի, մի ցանկություն ասեմ, կատարի, քեզ բաց կթողնեմ:

– Ասա: // – Էնենց արա՛ Հայաստանում մի հատ դարաբաղցի չմնա:

Ոսկե ձկնիկն ասում ա. // – Էդ մի պյանը ըլլակյան չի: (ԱՍՇՀ)

Երկու դեպքում էլ անսպասելի ծիծաղ առաջացնելու ժողովրդական հանճարը կարողանում է փայլուն լուծումներ գտնել:

Ոսկեձկնիկյան պատումնաշարի՝ նոր ժամանակների քաղաքական թեմաներ շոշափող բանարվեստի նմուշներում առկա են նաև մերօրյա ամենաթողությունից և սոցիալական ծանր վիճակից դուրս գալու ժողովրդական «ելքի» հնարամիտ առաջարկները, որոնք շատ ավելի խոսուն ու գրոտեսքային են, քան մարդկանց ծանծրացրած դատարկ

քաղաքական կարգախոսները:

Ոսկեծկնիկյան սյուժեով մեկ այլ մանրապատումում Ոսկե ձկնիկին առաջադրած երեք ցանկությունը դրսևորվում է տարբեր ազգերի ներկայացուցիչների և հայի ցանկությունների տարբերությունը մատնանշելով, իսկ հայկական միջավայրում՝ հարեվանի հանդես ունեցած չկամ վերաբերմունքի դրսևորմամբ: Այստեղ արդեն պատումն առանձնանում է նախորդ կառույցներից. երեք ցանկությունն իրականացնելու համար Ոսկե ձկնիկը պայման է դնում. տվածի կրկնակին պետք է հարևանին բաշխվեր: Երկու ցանկություններն իրագործելուց հետո մարդու մեջ խոսում է նախանձը և երրորդ ցանկությամբ՝ իրեն վնասելու գնով՝ միկրոինֆարկտով, հարևանին կրկնակի վնաս հասցնելու մտադրությամբ է հանդես գալիս, ինչը արտացոլում է թե՛ պայմանագանց չլինելը, թե՛ ցանկության իրականացումը:

Զվարճապատումում բացակայում է երրորդ ցանկության կատարման արդյունքն ու դրանից բխած հետևանքները: Հենց այդ «անմեղ» ցանկությունն էլ անեկդոտում դառնում է զավեշտի ստեղծման մեխը, որով էլ հիմնավորվում է երգիծական մանրապատումի ժանրային հատկանիշը, այն է՝ խոսքի կոմիզմի միջոցով ասելիքը հանգեցնել անսպասելի ավարտի:

Ի դեպ, այս պատումի տարբերակներին հանդիպում ենք թե՛ հրեական անեկդոտաշարում²⁵⁴, թե՛ արևմտահայոց բանարվեստում՝ վերագրված այնթապցիներին²⁵⁵:

Հեքիաթային տարրեր պարունակող մի շարք երգիծապատումներում նեղ, անձնական և զուտ ազգային հարցերի շրջանակներում հայը հանդես է գալիս նաև այլ ժողովուրդների հետ փոխհարաբերություններում.

Թուրքը, Քիւրդը եւ Սասունցին կը կանչուին Աստուծոյ քով: Աստուած Քիւրդին կը հարցնէ. // – Ի՞նչ կը փափաքիս աշխարհիս վրայ: // Քիւրդը կը պատասխանէ. // – Թուրք չմնայ աշխարհիս վրայ: // Թուրքին կը հարցնէ, թուրքն ալ կ'ըսէ. //– Քիւրդ չմնայ աշխարհիս վրայ: //– Դուն ի՞նչ կը փափաքիս, – կը հարցնէ Աստուած Սասունցիին: //

²⁵⁴ Анекдоты от одеситов, изд-во «Optimum», 2007, с. 220.

²⁵⁵ Միջ-գաւառական անեքթոսներ, Հաւաքեց եւ ներկայացուց՝ Յակոբ Չոլաքեան, Հալէպ, 1988, էջ 62-63:

– Ես բան մը խնդրած չունիմ, դրացիներուս փափաքը կատարէ միայն, – կը պատասխանէ Սասունցին²⁵⁶:

Այդ բանը նկատելի է նաև բնական աղետներին (օրինակ՝ Վանի երկրաշարժին) առնչվող հորինվածքներում.

Թուրքերը Ասործուն են դիմում, թե՛

– *Տե՛ր Ասորված, Հայաստանում մի լավ երկրաշարժ արա, որ էս հայերից էլ պրծնենք, հայկական հարցից էլ:*

Հաջորդ օրը Վանի երկրաշարժն է լինում: Խառնված թուրքերը նորից են Ասործուն դիմում, թե՛

– *Ասորվա՛ծ ջան, քեզ խնդրեցինք, ասինք՝ երկրաշարժը Հայաստանում արա, էս ի՞նչ օյին բերիր մեր գլխին:*

Ասորվածն ասում է.

– *Բայց ես ի՞նչ մեղավոր եմ. երևի ձեռքիս քարտեզը հին Հայաստանինն է եղել...*

(ԱՍՇՀ)

Հայ ժողովրդական հեքիաթատիպ զվարճապատումների մի խումբ էլ ընդհանուր ազգային ընդգրկումից տեղայնացված է որոշակի տարածաշրջանում՝ ներկայացնելով այնտեղ բնակվող մարդկանց «հատկանշական» բնութագիրը: Այնթապցիների խորամանկությունն ու հնարամտությունը բնորոշող թե՛ առածն ու ասացվածքը (Այնթապցին եւ օձը դրեր են նոյն տոպրակին մէջ: Քիչ ետք օձը գլուխը դուրս հանելով օձիքը թօթուեր է²⁵⁷, Այնթապցիին հետ ձեռնուելէ վերջ մէյ մը նայէ, թէ ձեռքիդ մատները լմա՞ն են, թէ ոչ²⁵⁸, թե՛ զանազան կարճառոտ մանրապատումները (վաճառվող տան առավելություններից մեկն էլ այնթապցի դրացի չունենալն է²⁵⁹), այնթապցու գերեզմանաքարն անգամ վնաս տալու հատկություն ունի²⁶⁰ և այլն, սուլթանը ողբում է Այնթապում տեղի

²⁵⁶ Միջ-գաւառական անեքթոտներ, Հաւաքեց եւ ներկայացուց՝ Յակոբ Չոլաքեան, Հալէպ, 1988, էջ 103:

²⁵⁷ Նույն տեղում, էջ 114, թիվ 252:

²⁵⁸ Նույն տեղում, էջ 114, թիվ 253:

²⁵⁹ Նույն տեղում, էջ 116, թիվ 261:

²⁶⁰ Նույն տեղում, էջ 115-116, թիվ 259, 260:

ունեցած երկրաշարժի ու այնթապցիների գաղթի համար ոչ թե խղճալով նրանց, այլ այն բանի համար, որ այնթապցիները ցրվելու են երկրով մեկ, վտանգ լինելու սարսափի մեջ պահելով բոլորին²⁶¹, թե՛ ծավալուն հեքիաթատիպ երգիծապատումները²⁶² նույն նպատակին են ծառայում՝ ժողովրդի մեջ ձևավորված ու արմատավորված կարծիքի ճշմարտացիությունը «բացահայտել» բազմակողմանի փորձարկումներից ծնված պատումներով:

Ամենազավեշտալին Գաբրիել հրեշտակի և այնթապցի կնոջ ամուսնությունից ծնված ու բժիշկ դարձած տղայի երգիծապատումն է, երբ հրեշտակապետի խնդրանքով Աստված նրան մի որոշ ժամանակով երկրային կյանք պարգևի: Խնդրանքը կատարվում է, Գաբրիել հրեշտակն ամուսնանում է այնթապցու հետ, երջանիկ ապրում, բայց զավակ ունենալուց հետո կտրուկ փոխվում է, Հրեշտակապետը զղջում է, կրկին երկինք համբառնելուց առաջ տղային ասում է, որ բժիշկ է դառնալու, և ինքը կօգնի նրան. եթե հիվանդի ոտքի մոտ տեսնի, բուժիր, եթե գլխի մոտ՝ անհնար է բուժելը. մեռնելու է: Մի օր էլ թագավորի աղջկա գլխի մոտ է կանգնում, տղան աղաչում է՝ հեռանա, որ թագավորության կեսի տեր դառնա, բայց հնար չկա, ստիպված սպառնում է. ասելով. «Եթե այդտեղեն չհեռանաս, հիմա կանչեմ մայրս»: Գաբրիել հրեշտակն անմիջապես աներեվութանում է²⁶³:

Ի դեպ, այնթապցիներին վերագրվող վերը թվարկած պատումներից շատերը հանրահայտ տարբերակներ են և տարբեր ժամանակներում տարբեր անձանց, ազգություններին ու նաև քաղաքական դեմքերին են վերագրված եղել: Օրինակ՝ Չոլաքյանի գրառած այնթապյան տարբերակում ճամփան փակած ավանակի ականջին ցածրածայն շշնջացած՝ «չբանալու պարագային Այնթապցի պիտի մկրտեմ»²⁶⁴ խոսքն է օգնում ճանապարհը բացելուն, իսկ մեր գրանցած տարբերակում, երբ Թեհրանում Ռուզվելտը,

²⁶¹ Միջգաւառական անեքթոսներ, Հաւաքեց եւ ներկայացուց Յ. Չոլաքեան, Բ տպագրութիւն, Հալեպ, 2005, թիվ 262, էջ 171-172:

²⁶² Միջ-գաւառական անեքթոսներ, Հաւաքեց եւ ներկայացուց՝ Յակոբ Չոլաքեան, Հալեպ, 1988, էջ 117-118, թիվ 264:

²⁶³ Նույն տեղում, էջ 117-118, թիվ 264:

²⁶⁴ Նույն տեղում, էջ 173-174, թիվ 266:

Չերչիլն ու Ստալինն են կամրջով անցնելիս լինում, ճամփան փակած գոմեշի ականջին Ստալինի շնչացած՝ կոխոզ մտցնելու սպառնալիքն է օգնում, որ գոմեշը ահասարսուռ վեր կենա և աներևութանա: (ԱՍՇՀ)

Հեքիաթային տարրեր պարունակող ոչ ոսկեձկնիկյան անեկդոտների մի մեծ խումբ էլ առնչվում է քաղաքական թեմային: Սրանցում քաղաքական հերոսները հայտնվում են անդրաշխարհում, հաղորդակցվում միմյանց, նաև՝ սատանայի հետ: Հայ ժողովրդական հեքիաթներում և առակներում չարը մարմնավորող անպարտելի սատանային միշտ հաղթում է մարդը, կամ էլ կոնկրետ՝ կին արարածը: Դժոխքում քաղաքական գործիչները ևս հանդիպում են սատանային և իրենց հնարամտությամբ, մասնավորապես «անսանձ» ժողովրդին ծնկի բերելու տարատեսակ գործողություններով ու փորձով գերազանցում, անգամ շփոթության են մատնում նրան: Ի դեպ, նման պատումների հերոսները փոփոխվում են՝ մի ժամանակաշրջանից անցնելով մեկ այլ ժամանակաշրջան, մի միջավայրից տեղափոխվելով մեկ այլ միջավայր, մի երկրից մեկ այլ երկիր, տեղայնացվելով ու ձեռք բերելով ազգային և կերպարային ընդգծված հատկանիշներ:

Կան նաև ընդարձակ կառույցներ, որտեղ մանրամասն ներկայացվող սատանայի խորհուրդների ժամանակավրեպությանը և անարդյունավետությանը հակադարձվում է դժոխք ընկած քաղաքական գործչի հնարամտությունը՝ հանկարծակիի բերելով ու զարմացնելով անգամ Սատանային:

Իրապատում և հրաշապատում հեքիաթների զանազան տարրերի հենքի վրա ստեղծված երգիծապատում-զվարճախոսությունների գերակշռող մասը այլաբանական շղարշով պատած իրական կյանքի ռեալիստական վերարտադրություններ են, որոնց հերոսներն իրական անձնավորություններ են՝ իրական կյանքում զանազան կողմերով «աչքի ընկած» մեր շրջապատի մարդիկ, որոնց մեջ քիչ չեն նաև քաղաքական դաշտի ներկայացուցիչները: Դրանց մի մասն էլ առնչվում է «պակասամտաց» թեմային, մյուս մասն ստեղծվել է «Ոսկե ձկնիկը» հեքիաթի հենքի վրա, որոշ մասն էլ կապված է

անդրաշխարհին՝ դժոխքին կամ դրախտին, իսկ հերոսները հաղորդակցվում են Աստծու, հրեշտակների կամ էլ սատանայի հետ:

Հեքիաթային տարրեր պարունակող նմանատիպ անեկդոտներում ժողովուրդը հումորի լեզվով այլաբանորեն խտացրել է իրական կյանքի վերաբերյալ սեփական նկատառումները՝ դրանով իսկ նպաստելով թե՛ բացասական երևույթների վերհանմանն ու քննադատությանը, թե՛ դժվարությունները ծիծաղով հաղթահարելու ժողովրդական կենսափիլիսոփայության հաստատմանը:

Այսօրվա ունկնդիրը եթե սովորական հեքիաթը չի էլ ուզում լսել (թեկուզև ժամանակ չունենալու պատճառաբանությամբ), ապա հեքիաթատիպ անեկդոտը նա հաճույքով է ունկնդրում ոչ միայն նրա կարճառոտ կառուցվածք ունենալու և ծիծաղելու անհրաժեշտության «պարտադրանքից» ելնելով, այլև այլաբանորեն ներկայացված ժողովրդական փիլիսոփայությունը ունկնդրելու, վայելելու և այլոց փոխանցելու համար: Անհավանականն ու անտրամաբանականն այս դեպքում երկրորդ պլանում է, չափազանցված պատկերները, հեքիաթային միջավայրը, կերպարներն ու գործողությունները լոկ շղարշ են՝ իրական ասելիքը ծիծաղի լեզվով տեղ հասցնելու համար. սա է մանրապատում-զվարճախոսությունների մասսայականության և կենսունակության ամենակարևոր գաղտնիքներից մեկը:

Երգիծական մանրապատումն ու զվարճախոսությունը սերտորեն առնչվում են նաև **քնարական բանահյուսության հետ**: Լինելով վիպական բանահյուսության երգիծական ժանրի ստեղծագործություններ՝ դրանք չեն կարող հանդես գալ միայն չափածո կառուցվածքով, քանզի այդ դեպքում այն կդասվեր քնարական բանահյուսության շարքին: Անեկդոտում չափածո խոսքը երբեմն հանդես է գալիս արձակ՝ պատմողական խոսքին միահյուսված, ինչպես Գ. Սրվանձոյանցի «Մանանա» ժողովածուում տեղ գտած հարսանեկան ծիսակարգին վերաբերող «Հարսն և կեսուր» զվարճապատումում: Այստեղ քնարական բանահյուսության հետ կապը դրսևորվել է հարսանեկան արարողակարգի դրվագներից մեկի՝ հարսի և սկեսրոջ պարի ժամանակ արտաբերված չափածո

հանգավոր խոսքում.

Երբ հարսը եկեղեցիեն փեսայի տունը կը բերեն, կեսուրը տան դրան առջև կ'ելնե խաղալով հարսին դիմաց, հարսին գլուխը համբուրելու ժամանակ, զանի վախցնելու համար կ'ըսե.

//– Երկաթ եմ ես, // Պողպատ եմ ես: //Հարսն ալ կեսրոջ ձեռքը համբուրելու ժամանակ քողի տակեն կ'ըսե. //– Կեցիր մինչ ոտքս ձգեմ ի ներս, // Երկաթ, պողպատ քամեմ, դու տե'մ²⁶⁵:

Կ. ք. Գալֆայանի հրատարակած գրքում չափաճոյախառն կառուցվածքով մի հետաքրքիր մանրապատում կա՝ «Քահանան իր շահուն հետ»-ը, որտեղ չափաճո երկխոսությամբ ներկայացվում է հանգուցյալի կտակի բովանդակությունն ու տերտերի վրա թողած դրա արձագանքը:

Անգավակ մահացած մեծահարուստը կտակ է թողնում, և կինը, սգերգով մեծարելով ամուսնուն, քնարական խոսքով ներկայացնում է կտակի բովանդակությունը՝ մեծ բաժին տալ գյուղի քահանային: Վերջինս, սակայն, չսպասելով կնոջ խոսքի ավարտին, ոգևորված ժամկոչին ու տիրացուին չափաճոյով ասում է.

«Լաւ է ասում, լաւ է անում, // Ողորմած հոգին: //Խունկ լցրէք հուրին եւ խունկ բուրվառին: // Թող լուսաւորուի, թո՛ղ լուսավառի, // Ողորմած հոգին...:»

Բայց երբ սգացողը շարունակում է սգերգը, և պարզվում է՝ այդ ամենը տերտերին է տրվում, որ նա բաժանի որբ ու անտերին, տերտերը զայրացած շարունակում է իր չափաճո խոսքը, ինչն էլ դառնում է զվարճապատումի ժանրը բնորոշող անսպասելի ավարտը.

Վատ է անում, սուր է ասում // Նզովեալ հոգին, անիծած հոգին, // Ջուր դրէք հուրին եւ ջուր բուրվառին, // Թո՛ղ վառը մարի, սեւ ածուխ դառնայ, // Նզովեալ հոգին, հոգին անիծածին...²⁶⁶:

²⁶⁵ Սրվանձոյանց Գ., Երկեր, հատոր 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978, էջ 271:

²⁶⁶ Գիրք առակաց, Առակներ, առածներ, մանրավէպեր, զուարճալի ասացուածքներ եւ իմաստուն խօսքեր, Պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան:, Պեյրուֆ, 1957, էջ 145–146:

Չափաճոյախառն երգիծապատումի հրաշալի օրինակ է ազգագրագետ Վ. Բոյանի գրառած *կարսյան* նմուշներից մեկը: Այստեղ տերտերի և տիրացուի չափաժո երկխոսություն-ձածկախոսությունն է նպաստում ասելիքն էլ ավելի տպավորիչ դարձնելուն ու զավեշտ առաջացնելուն.

Տերտերի մեկը մե հարսի վրա աշկ է քցում, գիշերն էրթում է քովը քնում: Սապախտան կանուխ²⁶⁷ էլլում է, օր էրթա ժամը, ըշտապելուց փիլոնը թողնում է հարսի քովը, հարսի թումբանը քցում է ուսերուն, էրթում է ժամը: Ժամն օր շարունակէ կը կարթալը, կըսէ:

– *Նայա, սիրով հարսըմ գտա, // Թուշը պաքի, ծոցը մտա, // Փընտըռտելով տեղը գտա, // Չի մի տնջալ գիշերի, // Տացու, քեզ փառսան՝ լոերի:*

Էտ օր ըսավ, տիրացուն աշեց, օր տերտերի ուսերին փիլոնի տեղ մե հատըմ կնկա թումբան է քըցած: Ըսավ. // – Տերտե՛ր, նայե՛ վըր փեշերուտ, // Սևիկն է էկէ արևուտ: //

Տերտերն աշեց, օր, օհո՛, փիլոնը թողէ, թումբանն է բերէ, ըսաց. //

– *Տիրացո՛ւ, տընտընկացո՛ւ, // Թուշըր ուտեցու, ճրաքն ընցո՛ւ, // Թերմաշը տար, անտերը բե՛ր, // Հոխեմ տանձ, կանեմ քեզի, կե՛ր²⁶⁸:*

1.4. Կառուցվածքային առանձնահատկությունները

Հայ ժողովրդական բանահյուսության երգիծական ստեղծագործությունների համատեքստում (երգիծական հեքիաթ, երգիծական առած-ասացվածք, երգիծական հանելուկ, երգիծական երգ, խաղիկ և այլն) մանրապատումներն ու զվարճախոսություններն առանձնանում են տեսակային հատկանիշը բնորոշող ամենակարևոր կողմերով՝ նովելային բնույթի արձակ, երբեմն էլ չափաճոյախառն խոսքով և անսպասելի զավեշտալի վերջաբանով: Այդ կարճառոտ խոսքում ևս անսպասելի ծիծաղն արտահայտվում

²⁶⁷ **Սապախտան կանուխ** – առավոտ շուտ, վաղ առավոտյան:

²⁶⁸ Կարս: Հայոց բանահյուսական մշակույթը, Կազմողներ՝ Ս. Հարությունյան (գիտական ղեկավար), Ս.Ա. Վարդանյան, Է.Հ. Խեմչյան, Լ.Խ. Ղոնջյան, Մ.Հ. Խեմչյան, Եր., «Գիտություն» հրատ., 2013, էջ 447:

է տարբեր կառուցվածքների միջոցով՝ **ծավալուն և փոքրածավալ դիպաշարային** (սյուժետային) կառույցներով, որտեղ զարգագացող գործողությամբ և անսպասելի ծիծաղի դրսևորմամբ բացահայտվում են մարդկային դեմքերն ու փոխհարաբերությունները, և **անդիպաշար** (անսյուժե) կառուցվածքով, որտեղ բացակայում են վերը մատնանշած կողմերը: Ի դեպ, 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի առաջին կեսի գրառումներում մեծ քանակ են կազմում **ծավալուն կառուցվածքով** մանրապատումները:

Ծավալուն կամ կարճառոտ դիպաշարով անեկդոտներում²⁶⁹ ժողովուրդը խոսքը սեղմելու համար երբեմն այնպիսի հնարանքներ է կիրառում, որ թուուցիկ ասված վերջաբանային խոսքով անմիջապես կարողանում է բացահայտել անցյալում տեղի ունեցած գործողություններն ու իրավիճակներին՝ տեղիք տալով անսպասելի ծիծաղի պոռթկման:

Այսպես, գազանանոցում երբ կապիկն ամուսնու մոտից կնոջը վերցնում, թոցնում է ծառի գլուխն ու սկսում շորերը հանել և ներքև թափել, կնոջ՝ ղժղժոցով օգնության կանչին ամուսինը հանգիստ պատասխանում է.

– *Ի՞նչ ա, ի՞նչ ես ձենըդ գլուխըդ գրծել, դե հըմի դրան բացատրի՛, համոզի՛, ա-սա որ գլուխըդ ցավըմ ա՛, անտրամադիր ե՛ս, հավես չունե՛ս...* (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված**

1, թիվ 13:

Մեկ այլ կարճառոտ պատումում անցյալում կատարված գործողությունները վերականգնվում են հիշողության կորստի բացահայտումների համատեքստում.

Գեղամիչում շնողնեցի բիծեքը արևկոխ են անում, հետն էլ ծոր տալով՝ դեսից-դե-նից զրից են անում ու տրտնջում հիշողության կորստից: Մեկ էլ նրանցից մեկը պայծառացած դիմում է կողքինին.

– *Այտա՛, իսկ միտըդ ա՛, որ մի օր տուն էկար տեհար՝ կընգանըդ ծոցըմն եմ:*

²⁶⁹ Ծավալուն կամ փոքրածավալ դիպաշարով երգիծական մանրապատումների մասին ասելիքը չձանրաբեռնելու և կրկնությունից խուսափելու համար նշենք, որ դրանց օրինակները շատ-շատ են, ուստի այդ մասին պարբերաբար կխոսվի բանահյուսության այլ տեսակների, մասնավորապես հեքիաթատիպ անեկդոտների, առակների, աղոթքների հետ կապի խնդիրներին, ինչպես նաև ժողովրդական և կրոնական ծիսակարգային տարրեր պարունակելուն, զանազան թեմատիկ և այլ կարգի դրսևորումներին անդրադառնալիս:

Նա էլ թե՛

– Իհի՛, դուն էլ մըթաթե բան ասիր, խի՞ չի միտըս, շար է՛լ թե ասի՛ էլ մի բան էլա հիշըմ չեմ, ուրեմը էտ էլ չեմ հիշըմ... (ԱՍՇՀ)

Թումանյանական գրառումներից մեկում երկխոսությունների միջոցով ներկայացվում են ոչ միայն անցյալում և ներկայում կատարված մի շարք գործողություններ (չալ մերունի՛ աճարկուտումը առչի բռնելը, պապի մեռնելը, մեռնելու պատճառը՝ բլդրղան ուտելը), այլև սարեցիների (տվյալ դեպքում՝ լոռեցիների) ապրելակերպն ու նիստուկացն ու թաղման ազգային ծիսակարգին առնչվող մի քանի դրվագներ՝ ժամ ու պատարագ անելը, հոգեհաց տալը.

Մի լոռեցի ձայն է տալիս խոզարածին.

– Հե՛յ՛յ՛, Սարո՛, Սարո՛ո՛, ադա՛, չալ մերունը դվե՛ր արա, դվե՛ր արա՛:

– Ադա՛ ո՛ր չալ մերունը, ո՛ր : // – Էն որ աճարկուտումը առչը բռնել էր://

– Ընչի՞ մհար դվեր անեմ, ընչի՞: // – Ադա պապը մեռել ա, ժա՛մ անենք, ժա՛մ, ժա՛մ: // – Ադա՛ խի ա մեռե՛լ : // – Բլդրղա՛ն ա կերել, բլդրղա՛ն²⁷⁰:

Որոշակի դիպաշարային կառուցվածք չունեցող ժողովրդական ստեղծագործություններում **զվարճախոսություններում**, ասելիքը դրսևորվում է տարատեսակ կառուցվածքներում՝ սովորական հակիրճ պատմողական խոսք-արտահայտությամբ, ասենք՝ *կարգախոսի, ցուցապաստառի* հենքի վրա ստեղծված, *մենախոսությամբ, երկխոսությամբ*, տարատեսակ *ասույթաբանական կառույցներով*²⁷¹ և այլն:

1960-ականներին խորհրդային գաղափարախոսության դրսևորումներից էր «Հասնել և անցնել Ամերիկայի Միացյալ Նահանգներին» կարգախոսը: Բայց ժողովուրդն իր անմիջական, ինքնատիպ ու հիմնավոր մեկնաբանություն-փիլիսոփայությամբ և սթափ

²⁷⁰ **Թումանյան Հովհ.**, ԵԼԺ, հատոր 5, Եր., «Գիտություն» հրատ., 1994, էջ 582:

Այս զվարճախոսությունն ասես հիշեցնում է Հր. Մաթևոսյանի սցենարով նկարահանված «Մենք ենք, մեր սարերը» կինոնկարի վերջին դրվագը: Գրողն անշուշտ օգտվել է ժողովրդական խոսքի մատուցման նմանատիպ ձևից՝ ասելիքը խտացնելով այլոց համար գուցե զավեշտալի, բայց սարեցիների համար՝ սովորական-առօրեական երկխոսության մեջ:

²⁷¹ Ժողովրդական ասույթաբանական կառույցների մասին կխոսվի բանահյուսության տեսակների հետ կապին անդրադառնալիս:

դատողությամբ շարունակում է այդ կարգախոսը՝ այն վերածելով զվարճախոսության, որն ինքնին անհեթեթ կարգախոսի ժխտումն է. *Բայց այնպես անցնել, որ քամակի կարկափանները չերևան:*

Իսկ գորբաչովյան հակաակոհողային պայքարի որոշումների անմիջական ազդեցությամբ ստեղծվել էր հետևյալ զվարճախոսությունը.

Քյավառցիները քաղաքի մուտքի «Բարի գալուստ» ցուցանակը փոխում, գրում են «Գալում ես, որ ի՞նչ»: Այսինքն՝ եթե խմելն արգելված է, էլ ի՞նչ հանդիպում...

Հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսությունների համատեքստում իրենց ինքնատիպությամբ առանձնանում են **մենախոսությունները:**

Զվարճալի մենախոսությունների չորս նմուշներ են տեղ գտել Ա. Բաբայանի հրատարակած ժողովածուում²⁷²: Դրանցից մեկում աղջիկ ուզելու առաքելությամբ հարևան գյուղ գնացող հերոսը գործին դրական ընթացք տալու համար զրուցում է ինքն իր հետ.

Ծաղկաշափոցի Պրանանց Սիմոնի հորեղբայր Անաստասը գնում էր Լորուտ գյուղը՝ Սիմոնի համար աղջիկ ուզելու. «Կասեմ իմ ախպոր տղեն մի մեր ունի, ինքն էլ՝ սարում ու չոլում: Ուզում ենք տներին մտիկ անող ըլի, էդ մենձ կնգանն էլ քոմագ ըլի: Հա՛ էլի, թե չէ Սիմոնի ընչին ա պետկը կնիկը: Անաստա՛ս, բա որ Սիմոնի ընչին պետկը չի կնիկը, աղջիկ կտա՞ն: Չէ՛, Սիմոնին տանիլ ա պետք:

Անաստա՛ս, Սիմոնին տենողը, նրա հետ խոսողը, նրան աղջիկ կտա՛...»²⁷³:

Իսկ ձմռան ցրտին դիմագրավելու ո՛չ պակաս հաճելի երազանքները արտահայտված են հետևյալ մենախոսությունում.

Մի ցուրտ ձմռան օր ձմեռանոցի բուխարու համար անտառից փայտ է բերում Գորգնանց Արտեմը: Ձեռքերին փչում է ու անընդհատ մտքում կրկնում. «Համա տաք կլի հա՛, համա տաք կլի հա՛, համա տաք կլի հա՛... Անկամանց Սիրանի ծոցը...». (Սիրանը որբևայրի, սիրունատես, գեր կին է լինում)²⁷⁴:

²⁷² **Բաբայան Ա.**, Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007:

²⁷³ Նույն տեղում, էջ 69:

²⁷⁴ Նույն տեղում:

Մեկ այլ մենախոսական զվարճախոսությունում հերոսը զրուցում է ենթադրաբար հայտնված խոսակցի, տվյալ դեպքում՝ համագյուղացու հետ՝ փորձելով նրա ծայրահեղ հարցասիրությանը «հագուրդ տալու» համար նախապես պատասխաններ գտնել²⁷⁵: **Տե՛ս**

Հավելված 1, թիվ 14:

Զվարճալի մենախոսություններում նաև գյուղաշխարհի մարդու ծանր ու հոգնատանջ աշխատանքի եզակի պատկերներն են, որոնցից մեկում անսպասելի ծիծաղն արտահայտված է գերհոգնած շինականի մտորում-ցանկությունների միջոցով²⁷⁶: **Տե՛ս**

Հավելված 1, թիվ 15:

Անցյալ ու ներկա ժամանակների զուգահեռների հենքի վրա ստեղծված մենախոսություններ կան, որտեղ նոր սերնդի պահվածքը տեսնելով՝ գովերգվում են անցած ժամանակները.

– Տո՛ մութն ընկներ, մթնով էթային ձորի աղբյուրը ջրի, մթնով ետ դառնային: Տղերքը թաքուն դուրս գային առաջները: Մեհրաբանց Եղիշը Մանանիս ասեր՝ «Յա պոյի մի պաչ փասս, յակամթեչէ կփամ կուժոյ կջարդեմ...»:

Թե չէ հիմի ի՞նչ ա. դպրոցում իրար հետ սովորեցին, իրար հետ մանկավարժն ավարտեցին, իրար հետ էլ հիմի դաս են փալիս, ամբողջ օրն երես-երեսի: Բա էդպես աղջիկ մարդու փալ կըլնի՞²⁷⁷:

Երբեմն էլ անցյալի այդ գովերգումների ժամանակ ավագ սերնդի ներկայացուցիչների խոսքում անսպասելի ծիծաղը դրսևորվում է անցյալի առավելությունները հաստատող հերոսուհու օրինակի միջոցով.

Մի փարեց կին դժգոհում էր նոր ժամանակներից.

– Է՛ս ինչ ժամանակներ են, է՛ս ինչ բերանբաց սերունդ ա... Ափսոս չէի՞նք մենք. Իրեք օրեն ամուսնացած ի, փեքրըս էկավ զոռով մփավ ծոցըս, առ ըսօր՝ ըհը՝ (որպես գաղտնապահության նշան՝ ձեռքի ափով բերանը փակելով)... (ԱՍՇՀ)

²⁷⁵ **Բաբայան Ա.**, Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007, էջ 69:

²⁷⁶ Նույն տեղում, էջ 70:

²⁷⁷ **Գյուլնազարյան Խ.**, Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991, էջ 102:

Քյավառցու մենախոսությունն էլ նոր արտադրված մեկլիտրանոց օղու շշի հետ է.

– *Էս իմալ խորոպցե՛ր ի՛ս, // Էս իմալ բո~յ իս քաշի՛. // Էս իմալ լըխտըկցե՛ր ի՛ս,*
//

Վա՛յ ես քու ստեղծողիդ դուրբան... (ԱՍՇՀ)

Դիպաշար չունեցող կառույցների մեջ գերակշռում են **երկխոսական զվարճախոսությունները**: Սրանցում զավեշտն ստեղծվում է ոչ թե որոշակի գործողությանը հաջորդող խոսքի միջոցով, ինչպես դիպաշարով կառույցներում, այլ բառախաղ-խոսքախաղի, հարցմանը հետևող չհիմնավորված, երբեմն անտրամաբանական պատասխանների միջոցով: Հարցուպատասխանական զվարճախոսությունների ամենացայտուն դրսևորումը հանրահայտ «Հայկական ռադիոյի» անեկդոտաշարն է:

Հարցուպատասխանական կառույցներով անեկդոտ-զվարճախոսությունները մեծ քանակ են կազմում լոռեցիների բանարվեստում, մասնավորապես տրված հարցին հետևող նրանց միամիտ ու երգեցիկ՝ երանգավորված արտաբերումներով պատասխաններում.

ա. – *Ժամը քա՞նիսն ա:*

բ. – *Քանի՞ երեխա ունես:*

– *Հմի՛հիի՛...*

– *Մա՛րթիցըըը՛ս...*

Հեռախոսային երկխոսական զվարճախոսություններում էլ ավելի անմիջական ու կենդանի է հնչում ժողովրդական խոսքը: Նոր ծննդաբերած կնոջ և լոռեցի ամուսնու հեռախոսագրույցի ծիծաղ հարուցող ավարտը շատ է «անմեղ ու համոզիչ» հնչում.

Լոռեցին զանգըմ ա ծննդատուն՝ կնզանը. //– Ազատվեցի՞ր: // – Հա: //– Ինձ ա նմա՞ն: //– Չէ: //– Քե՞զ: //– Չէ: //– Բա ո՞ւմ ա նման: //– Ճընա՛նչըմ չեմ: (ԱՍՇՀ)

Քյավառյան երկխոսական զվարճախոսությունների հիմքում էլ խմիչքն է.

– *Ինձ ես սիրո՞ւմ, թե՛ արաղը, – հարցնում է քյավառցու կնիկը մարդին:*

– *Չխամեմարվե՛ս, – պատասխանում է մարդը: (ԱՍՇՀ)*

Ա. Բաբայանի գրքում մի հետաքրքիր բազմաստիճան երկխոսական զվարճա-

խոսություն կա, որը շրջանառվում է նաև ռուսների²⁷⁸ միջավայրում: Այստեղ կրկին ասելիքը հեռախոսային խոսակցությամբ է դրսևորված:

Տասը տարի օտարության մեջ ապրող և առանց ծնողներին հայտնելու օտարագրու հետ ամուսնացած, երեք երեխաների տեր որդու և կարոտաբաղձ ավանդապահ մոր միջև է այդ երկխոսությունը: Հեռախոսագրույցը կարճ ու կցկտուր է, բայց՝ ասելիքով հագեցած: Նյութի մատուցման այս ձևն էլ ավելի անմիջական ու կենդանի է դարձնում անցյալում և ապագայում կատարված ու կատարվելիք գործողությունները: Ավանդականի և նոր ժամանակների մտածողության հակադրության արդյունքում, ճիշտ է, վերջաբանը զավեշտալի է հնչում, և մոր պատասխանն անսպասելի ծիծաղ հարուցող, բայց նաև մի ներքին թախիժ կա, որը զվարճախոսությանը հաղորդակցվողին նաև մտածելու տեղիք է տալիս²⁷⁹: **Տես Հավելված 1, թիվ 16:**

1.5. Գոյատևմանն ու մասսայականությանը նպաստող գործոնները

Ինչպես հայ ժողովրդական առակներից²⁸⁰, այնպես էլ որոշ հեքիաթներից²⁸¹, երբեմն էլ ավանդազրույցներից²⁸² խտացված վերջաբան-բարոյախոսությունը կարող է անջատվել բուն տեքստից և, իբրև առած կամ ասացվածք, ինքնուրույն կյանք ձեռք բերելով՝ շարունակել գոյատևել ժողովրդի մեջ՝ սկզբում հիշեցնելով դրան ծնունդ տված աղբյուրը՝ պատումը, այնուհետև հետագայում (առավել հաճախ) մոռացության մատնելով այն:

Հայտնի են նաև առած-ասացվածքներ՝ սերված առակային խորք ունեցող երգի-

²⁷⁸ Թե ո՞ր ժողովուրդն է այս զվարճախոսության սկզբնաղբյուր հանդիսացել, դժվար է ասել: Այնուամենայնիվ առկա նյութը, մեր կարծիքով, շատ է հայկական, քանզի օտարագրիների հետ ամուսնություններն այսօր էլ հայկական ընտանիքներում խիստ ցավազին են ընդունվում:

²⁷⁷ **Բաբայան Ա.**, Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007, էջ 61:

²⁸⁰ *Էրնեկ էն արտին, որ ճրնճղներ խոռով են առածը* տե՛ս **Ա. Ղանալանյան**, Առածանի, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, էջ 313: Առակը տե՛ս Անեկոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց **Գալուստ Շիրմազանեանց**, Թիֆլիս, 1878թ., էջ 18 գրքում:

²⁸¹ Քեֆ անողի քեֆը չի պակասի – և՛ հեքիաթը կա (Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Հեքիաթներ, «Լույս» հրատ., 1985, էջ 99), և՛ առածը (Տե՛ս **Ա. Ղանալանյան**, Առածանի, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, էջ 61):

²⁸² Եթե լեռը Մուհամմէտին քով չի գար, Մուհամմէտ լեռան քով կ'երթայ առածը (Տե՛ս **Գէորգեան Գ.**, Չնքուշապատում, էջ 279), իսկ առածի հետ կապված ավանդազրույցը բերվում է նույն էջի տողատակում:

ծական մանրապատումներից, որոնք հիմնականում երգիծական առակներ են, ավելի ճիշտ, առակ-զվարճապատումներ²⁸³:

Ի տարբերություն բանահյուսության այլ տեսակներից սերված դարձվածքների՝ զվարճապատումներից սերվածների կապը սկզբնաղբյուրի հետ ավելի սերտ է և մտապահվող՝ կապված նրանց կենսունակության և մասսայականության հետ: Եվ եթե հեքիաթը, ավանդազրույցը, ինչ-որ տեղ նաև առակը աստիճանաբար մեր օրերում շրջանառությունից դուրս են գալիս՝ շատ դեպքերում նոր կյանք պարգևելով նրանցից սերված սեղմասույթներին, ապա զվարճապատումները անընդհատ շրջանառվում, նորացվում և շարունակում են կենցաղավարել բոլոր խավերի ու մտածողության մարդկանց միջավայրում:

Երգիծական մանրապատումի անսպասելի հանգուցալուծումը հանդիսացող **պատահիկ-արտահայտությունը** ևս, պոկվելով բուն նյութից, իբրև ինքնուրույն դարձվածային միավոր կամ սովորական բառակապակցություն ու նաև ինչ-որ տեղ՝ ծածկալեզու թևավոր արտահայտություն, շարունակում է շրջանառվել ժողովրդի մեջ: Սակայն այս դեպքում ծածկալեզու արտահայտությունները, ինչպես՝ «**Չուրի՛դ լվա, չուրի՛դ**» (ԱՍՇՀ), (տեքստն ամբողջությամբ **Տե՛ս հավելված 1, թիվ 17**), «**Փամփուշտ ա՛լ չունիք**²⁸⁴» (**Տե՛ս հավելված 1, թիվ 18**), «**Ոչ հորս կողմից ես բարեկամ, ոչ մորս կողմից**» (ԱՍՇՀ), (**Տե՛ս հավելված 1, թիվ 19**), «**Լավ, տղե՛րք, թողեք, սրանից հետո ես կգնամ**» (ԱՍՇՀ), (**Տե՛ս հավելված 1, թիվ 20**), «**Վարդո՛ւշ, լավ ա՛**» (ԱՍՇՀ), (**Տե՛ս հավելված 1, թիվ 21**) և այլն, այլ գործառույթով են հանդես գալիս: Դրանք ծառայում են իբրև հիշեցում, իբրև ակնարկ՝ համանման զվարճապատումային իրադրության՝ երևույթի, գործողության:

Նկատենք նաև, որ առակներից, հեքիաթներից, որոշ ավանդազրույցներից ու զվարճապատումներից անջատված բարոյախրատական ուղղվածություն ունեցող և

²⁸³ *Ինձանից էլե, ինձ լող կը սորվեցնէ* առածը տե՛ս **Ա. Ղանալանյան**, Առածանի, ՀՍՍԻ ԳԱ հրատ., 1960, էջ 15 գրքում և **Գէորգեան Գ.**, Չնքուշապատում, էջ 281, զվարճապատումը՝ նույն էջի տողատակում: *Արտիշցին սարանան է խաբեր* առածը (**Գէորգեան Գ.**, Չնքուշապատում, էջ 276), իսկ զվարճապատումը՝ նույն գրքի էջ 297-ում:

²⁸⁴ **Սվազյան Վ.**, Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 113-114:

ինքնուրույն կյանք ձեռք բերած ժողովրդական իմաստախոսությունների պես նմանատիպ պատմափոփոխ-արտահայտությունները չեն կարող ինքնուրույն գոյատևել, ասելիքը չի ընկալվի անձանոթ, անեկդոտին անտեղյակ միջավայրում, մինչև առկա չլինի տվյալ արտահայտության սկզբնաղբյուրում առկա բովանդակության և նոր միջավայրում ստեղծված իրադրության նմանությունների հենքի վրա ծնունդ տվող պատճառը: Սակայն նման «ծածկալեզու» թևավոր արտահայտությունները ընկալելի են սուսկ այդ պատումներին տեղյակ մարդկանց միջավայրում: Հակառակ պարագայում անհրաժեշտություն է առաջանում ներկայացնել տվյալ անեկդոտը՝ դրանով իսկ նպաստելով ժողովրդական երգիծապատումի հետագա գոյատևմանն ու մասսայականացմանը:

Հայկական անեկդոտների գոյատևմանն ու մասսայականությանը նպաստում են նաև մի շարք այլ գործոններ:

Ի տարբերություն բանահյուսության այլ տեսակների՝ անեկդոտներն առնչվում են ժողովրդի բոլոր խավերին ու տարիքային խմբերին, դրանք արտացոլում են ժողովրդական կյանքի, կենցաղի, պատմության բազմազան կողմերն ու մարդկային փոխհարաբերությունների և գործունեության բոլոր ոլորտները:

Անեկդոտների կենսունակությունն ու մասսայականությունը պայմանավորված են ժողովրդական երգիծանքի այդ տեսակի՝ մարդկությանը հուզող ամենաբազմազան խնդիրներին անմիջապես արձագանքելու և ծիծաղի վարակիչ լեզվով անսպասելի «լուծում» գտնելու բացառիկ հնարավորություններով: Սակայն դրանք որքան էլ արագ արձագանքում ու տարածվում են, շատ անգամ էլ դրանցից ոմանք ժամանակավրեպ են դառնում, աստիճանաբար մոռացության տրվում կամ էլ վերափոխվելով ու նոր ժամանակների ոգուն համապատասխանեցվելով՝ շարունակում են նոր պայմաններում գոյատևել:

Անեկդոտների ժամանակավրեպ դառնալը պայմանավորված է հատկապես հասարակարգերի (ճորտատիրական, կապիտալիստական, սոցիալիստական-խորհրդային) ու դրանցում գործող օրենքների, այդ ժամանակաշրջանում անեկդոտի հերոս դար-

ձած մարդկանց, նրանց շրջապատող առարկաների, շենք-շինությունների, սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական առաջընթացի հետևանքով կատարված մարդկային փոխհարաբերությունների ու մտածողության փոփոխությունների առկայությամբ:

Այսպես, այսօրվա ունկնդրին 19-րդ դարի երկրորդ կեսին հրատարակված անեկդոտը մատուցելիս անհրաժեշտություն է առաջանում ունկնդրին բացատրել **է2** բառի ժողովրդախոսակցականում կիրառվող հոմանիշը, քանզի երգիծապատումում անսպասելի ծիծաղն առաջանում է տնային կենդանու (է2) և գութանի մասերից մեկի՝ **համձողի** (ժողովրդախոսակցականում՝ է2²⁸⁵) անունների համանունության շնորհիվ:

Քաղաքից գյուղ հարս գնացածին անձանոթ է լինում գութանի համձողի ժողովրդախոսակցական անվանումը, դրա համար էլ նա գութանի փայտյա համձողի փոխարեն տնային կենդանին է ցեխով պատում, ինչն էլ հանգեցնում է զավեշտի և դառնում սկեսրայրի զայրույթի պատճառը.

– *Աստուած, իմ դուշման գեղացուն քաղաքի հարս չտա, որ լիզուն չիմանան*²⁸⁶:

Տե՛ս Հավելված 1, թիվ 22:

Գիտության և տեխնիկական զարգացման արդի ժամանակներում եթե վիպական բանահյուսական մի շարք տեսակներ կամա թե ակամա մոռացվում, դառնում են պատմություն, ապա երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները, շնորհիվ իրենց կարճառոտ կառուցվածքի, դրանցում արծարծած բազում հարցադրումների և մեղմ հումորով կամ սպանիչ ծաղրով՝ սարկազմով, տրված պատասխանների՝ շարունակում են գոյատևել ու մասսայականություն վայելել:

Գոյատևման նախապայմաններից մեկն էլ հին անեկդոտներն անընդհատ նորացնելու և թարմացնելու, նոր ժամանակներին համահունչ քայլելու համար այդ ժամանակների ոգուն հարմարեցնելու և այդ ոգով ժամանակի առաջադրած խնդիրներին յու-

²⁸⁵ **Սրվանձոյանց Գ.**, Երկեր, հատոր 1, էջ 363. Հայաստանի երկրագործության գործիքներ. *գութան*, գութանի է2 – ծուռ փայտ, ինչ երկար և հաստ իբրև զգերան: Գութանի ոտն և ոտնազբեր. փայտն՝ որ գէշն և զառատամն միավորե:

²⁸⁶ Անեկդոտներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ.Վարդանյանի եւ ընկ. տպարան, 1883, էջ 83-84:

րովի արձագանքելու, ծիծաղի միջոցով դժվարությունները հաղթահարելու ժողովրդական կենսափիլիսոփայության մեջ է:

21-րդ դարասկզբի գիտատեխնիկայի պարտադրած աննախադեպ գերզբաղվածության ու գերլարվածության պայմաններում շատ է կարևորվում նաև այսօրվա մարդու լիցքաթափման անհրաժեշտությունը: Եվ իզուր չէ, որ արդի բժշկության մեջ գնալով էլ ավելի կիրառելի է դառնում ծիծաղի միջոցով մարդկանց նյարդային համակարգը բուժելու միջոցը՝ ծիծաղի թերապիան: Նույնիսկ այդ բուժամիջոցն ընդգծող վերնագրով անեկդոտների ժողովածու է հրատարակվել²⁸⁷, որի 14 բաժիններից մեկում **Հայկական ռադիոյի** անեկդոտներն են ներկայացված:

Ժողովրդի մեջ շրջանառվում է այն հիմնավորումը, թե մի քանի անեկդոտի առաջացրած անկեղծ ու ինքնաբուխ ծիծաղը հավասարազոր է հանգստյան տանը մեկ օր հանգստանալուն: Աշխարհի տարբեր ժողովուրդների բանահյուսությունից քաղված «Երգիծական մանրապատումներ» վերնագիրը կրող ժողովածուի առաջաբանում Գեորգի Գուլիան գրում է. «Այս գրքույկը ծայրեծայր լեցուն է ծիծաղով ...Նման գրքերի լույս ընծայումը պետք է հավասարվի մարդկանց համար առանձնապես օգտակար վիտամիններ բաց թողնելուն:**Ես այսպիսի գրքերը նույնիսկ դեղատներում կվաճառեի...**»²⁸⁸:

Հետևաբար ժողովրդական երգիծապատումների և զվարճախոսությունների կենսունակությանն ու մասսայականությանը նպաստում է նաև մեր օրերի մարդու հոգեկան հանգստի կազմակերպման, զվարճանքի պահանջն ու հոգեկան բավարարվածությունն ապահովող լավագույն և անփոխարինելի միջոցը լինելու հանգամանքը:

²⁸⁷ Смехотерапия от всех болезней: анекдоты. Составленные Рафаелян Лилия. Удмуртия, Ижевск, 2006, 312 с.

²⁸⁸ Երգիծական մանրապատումներ, Թարգմ՝ Մ.Հ. Դավթյան, «Սովետական գրող» հրատ., Եր., 1977, էջ 3-4:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Բավական ընդգրկուն են հայկական երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների թեմատիկ դրսևորման շրջանակները: Չկա մարդու կյանքին, կենցաղին ու նրան շրջապատող աշխարհին, մարդկային փոխհարաբերություններին, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային գործունեությանը, պատմական իրադարձություններին, կրոնին, եկեղեցուն ու հոգևորականներին վերաբերող որևէ ակնառու կողմ, դրվագ, երևույթ, որին անդրադարձած չլինի ժողովրդական բանավեստի այս տեսակը:

Երկրորդ գլխում անդրադարձել ենք հայոց մեջ տարածում գտած երգիծապատում-զվարճախոսությունների այնպիսի թեմատիկ դրսևորումներին, որոնց հայկականությունը առավել ակնառու է. ազգային ընդգծված հատկանիշներով ու տարրերով առանձնանում են այլ ժողովուրդների նմանատիպ ստեղծագործություններից: Չնայած հայոց ազգագրական կյանքն ու կենցաղը, աշխատանքային գործիքներն ու ժողովրդական և կրոնական տարատեսակ ծիսակարգերն արտացոլող բազմաթիվ անեկդոտների, սակայն ատենախոսությանն անհրաժեշտ ծավալը մեզ հնարավորություն չի տալիս դրանց մասին առանձին-առանձին խոսել: Այստեղ հանգամանորեն խոսվել է միայն հայոց հարսանեկան և թաղման ծիսակարգերի հենքի վրա ստեղծված անեկդոտների մասին:

Այս գլխում գերազանցապես ընդգրկվել են այնպիսի նյութեր, որոնք մեր ժողովրդի համար բախտորոշ պատմական դեպքերի և իրադարձությունների արտացոլանքն են, հետևաբար նաև դրանք փաստա-վավերագրական արժեք են ներկայացնում, ինչպես՝ Հայոց ցեղասպանությունը, ներգաղթն ու արտագաղթը, Ղարաբաղյան շարժումը, Ղարաբաղյան պատերազմը, 1988-ի դեկտեմբերյան երկրաշարժը,

Խորհրդային Հայաստանն ու նորանկախ Հայաստանի Հանրապետությունը և այլն:

2.1. Հարսանեկան ծիսակարգը

Վաղնջական ժամանակներից աշխարհի բոլոր ժողովուրդները գերդաստանի շարունակականությունն ապահովել են ընտանիքներ ստեղծելով: Հազարամյակների ընթացքում ընտանիքներ կազմելու գործընթացը նրանք սրբացրել, տոնի են վերածել՝ հարսանեկան ծիսակարգն ու դրան հավատարիմ մնալու արարողակարգային տարրերը դարձնելով ընտանիքի ամրության հիմնաքարը:

19-րդ դարի կեսերից սկսած՝ գիտատեխնիկական, սոցիալ-տնտեսական և կրթամշակութային առաջընթացը պարտադրում է իրերի և երևույթների հանդեպ նորովի մոտեցումներ ու գնահատականներ: Հին ու նոր սերունդների միջև մտածողության բախումները դրսևորվում են նաև ժողովրդական և կրոնական ծիսակարգերի հանդեպ ունեցած վերաբերմունքում, ինչն էլ իր արտացոլանքն է գտնում նաև հայ ժողովրդական բանավեստում, մասնավորապես անեկդոտներում:

Հայկական երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների մեջ առանձին խումբ են կազմում հարսանեկան ծեսին վերաբերող ժողովրդական ստեղծագործությունները:

Հարսանիքին առնչվող գրեթե բոլոր գործընթացներն ու տարրերը մեր ժողովուրդն արտացոլել է անեկդոտներում՝ սկսած նախահարսանեկան ծիսակարգերից (աղջկա փնտրտուքի, աղջիկտեսի, խնամախոսության, օժիտ-բաժինքի, նշանդրեքի և այլն), վերջացրած բուն հարսանեկան (հարսին հագցնելու, կերուխումի, բաժակաճառերի, հարսի կամ մոր լացի, հայրական տնից դուրս բերելու, փեսայի տուն ոտք դնելու և այլն) ու հետհարսանեկան (հարս ու փեսայի ամուսնական առաջին պարտականության կատարման, կարմիր խնձորի, ոտնավվայի և այլ գործառույթներ) արարողակարգերը:

Նոր ժամանակները կրտսեր և ավագ սերունդների միջև մտածողության բախումների պատճառ են դառնում. խախտվում են դարերից եկող ավանդույթները, խնա-

մախոսության, աղջիկ ուզելու՝ դարերով փոխանցված գործառույթը սպառել է իրեն, պարտադրվելիս էլ դիմադրության է հանդիպում՝ դառնալով ժողովրդական երգիծանքի նյութ:

Խնամախոսության արարողակարգին առնչվող մանրապատումներից մեկում անսպասելի ծիծաղը առաջանում է հարս ճարելու փնտրտուքի հետ կապված տարատեսակ հարցումների պատասխաններում. խնամախոսները մերժվում են, քանի որ հարսնացու աղջիկն ուզում է մինչև ամուսնությունը տղայի հետ ման գալ, ծանոթանալ ապագա կողակցի բնավորությանը: Սակայն դա ավագ սերնդի սրտով չէ. աղջկա և տղայի տատերն ընդդիմանում են, փորձում իրենց ամուսնությունների օրինակներով համոզել ավանդախախտ աղջկան: Թոռանը համոզելու համար բերված մտացածին «օրինակներն» էլ դառնում են անեկդոտի անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը.

– Ես որ պապիդ հետ պսակվեցի, էդ տանը օխտը տղամարդ կար: Մի շաբաթ քնել-վերկենալուց յեղն եմ գլխի ընգել, թե որն ա մարդս²⁸⁹:

Հարսանեկան ծիսակարգի հետ կապված երգիծապատումներից մեկում էլ գավեշտի մեխը փոխաբերությամբ ասված խոսքն է ու դրանից բխած հակադարձվող պատասխանը: Աղջիկ ուզելու նպատակով մայրաքաղաքից Քյավառ գնացածների՝ «Մենք եկել ենք ձեր այգուց վարդ քաղելու» պատկերավոր խոսքին հետևում է աղջկա հոր՝ «Մեր բոստանն հրմմեն կորտուլ ա» անսպասելի ծիծաղ հարուցող պատասխանը: (ԱՍՇՀ)

Խնամախոսության թեմայով հայկական մի շարք անեկդոտներ ներկայանում են գավեշտալի բաժակաճառերով, հարսնացուի գովքով ու անհեթեթ խորհուրդներով.

Մեկի աղջկան գալիս են ուզելու: Հայրը բաժակաճառ է ասում.

*– Իմ աղջիկը **հոռեպես** աղջիկ ա, անող-դնող ա, եփող-թափող, իսկ չբերության մասին հեչ չմտածեք. հենց հիմի էլ հղի ա²⁹⁰:*

²⁸⁹ Լոռվա գվարճապատումներ, հավաքեց և մշակեց Արամայիս Քոչինյանը, Գյումրի, «Կումայրի» հրատ., 1992, էջ 2:

²⁹⁰ Ժողովրդական սրախոսություններ, Հավաքեց և մշակեց Վարդուհի Նաղաշյանը, Եր., «Նաիրի» հրատ., 1992, էջ 72:

Գյուլնազարյան Խ., Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991, էջ 63:

Շատ դեպքերում էլ նման կառույցներում միատեղված են լինում մի քանի նմուշ՝ դրանով ավելի խտացնելով ու խորացնելով անսպասելի ծիծաղ առաջացնող երևույթը: Որոշ դեպքերում էլ երգիծապատումը ներկայացվում է տարատեսակ թեմաների հետ միահյուսված, ասենք՝ խնամախոսությունը՝ լեզվական արատի՝ կլվատության²⁹¹ կամ օժիտ-նվերների հետ²⁹², կամ էլ հոր՝ հարսնացու աղջկա գովքով ²⁹³:

Պսակադրությունները գերազանցապես կատարվում էին դաշտային աշխատանքներն ավարտվելուց հետո՝ խոր աշնանը կամ էլ ձմռանը, և երբեմն նշանդրերից հետո երիտասարդները ստիպված էին լինում երկար սպասել բաղձալի օրվան: 1876թ. հրատարակված Գ. Սրվանձոյանցի «Մանանա» ժողովածուում տեղ է գտել հարսանեկան ծիսակարգին առնչվող մի զվարճապատում՝ «Աղջկան մը հնարք»-ը, որի զավեշտի աղբյուրը դառնում է չափածո հանգավոր խոսքով արտահայտած նշանված հարսի դժգոհությունը՝ կապված հարսանիքն ուշանալով՝ աշնանը կատարելու հետ.

*– Թո՛, թո՛, թո՛, // Ե՛րբ հասուննա՛. // Ե՛րբ քաղվունա՛, // Ե՛րբ քամվունա՛, //
Ե՛րբ գինվանա՛, // Ե՛րբ խմվանա՛, // Ե՛րբ տանանա՛, // Ե՛րբ տինինի՛... //*
*Թո՛, թո՛, թո՛*²⁹⁴:

Փաստենք նաև, որ սրվանձոյանական այս նմուշի տարբերակին, սակայն հակիրճ առաջաբանով ու հանգավոր խոսքի չնչին հնչյունական փոփոխություններով, հանդիպում ենք Հովհ. Նազարյանցի գրքում²⁹⁵: Ամենայն հավանականությամբ հենց «Մանանա» ժողովածուն էլ եղել է Նազարյանցի հրատարակածի սկզբնաղբյուրը:

²⁹¹ **Աճառյան Հր.**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 163:

ՀԱԻ-ի ազգագրության արխիվ, Վ Ղազարյանի ֆոնդ, թղթապանակ 87, Լոռի, Համզաչիման (Մարգահովիտ), հրեք աղջիկը, էջ 73:

Ծիծաղում են Վանեցիները, Հավաքել, կազմել են Վարազդատ Հարությունյանը և Նորա Մելիքյանը, Եր., «Զանգակ -97» հրատ., 2006, էջ 129:

ՀԱԲ, հատոր 2, Խ.Ա.Փորքջեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, էջ 85:

²⁹² **Գյուլնազարյան Խ.**, Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991, էջ 79-80:

²⁹³ Նույն տեղում, էջ 63:

Ժողովրդական սրախոսություններ, Հավաքեց և մշակեց Վարդուհի Նաղաշյանը, Եր., «Նաիրի» հրատ., 1992, էջ 72:

²⁹⁴ **Սրվանձոյանց Գ.**, Երկեր, հատոր 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978, էջ 270-271:

²⁹⁵ Անեկդոտներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 69-70:

Անցյալում քիչ չեն եղել այնպիսի դեպքեր, երբ հարսն ու փեսան միայն հարսանիքից հետո էին իրար տեսնում, և պսակադրության արարողակարգից հետո բազում զավեշտալի խոսակցություններ էին տեղի ունենում՝ դառնալով ժողովրդական երգիծապատում-զվարճախոսությունների նյութ: Երբեմն էլ թե՛ իրականության մեջ, թե՛ դրա անեկդոտային դրսևորումներում խնամախոսության ժամանակ փեսային մի սիրունատեսի էին ցույց տալիս, բայց եկեղեցական պսակադրությունից ու հարսանիքի ավարտից հետո էր միայն պարզվում, որ փեսան խաբվել է: Խաբված փեսացուների մի մասը հրաժարվում էր հարսնացուից, որոշ մասն էլ հավատարիմ էր մնում եկեղեցական արարողակարգին, ոմանք էլ չէին ուզում բաժանվել ու դժբախտացնել այդ գործարքի զոհ դարձած նորահարսին:

Նմանատիպ երևույթների հենքի վրա ստեղծված անեկդոտներից մեկում հանկարծակիի եկած փեսայի արտաբերած խոսքն էլ դառնում է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը: Հիշենք հայտնի զվարճապատումի՝ քողը բարձրացնելուց հետո հարսի՝ «Վի՞ր խեղ եմ խոսալու, վի՞ր խեղ չեմ խոսալու» հարցումը, և հանկարծակիի եկած խաբված փեսայի՝ «Ամաաա՛ն, վիր խեղ կուզես՝ խոսա, մենակ թե իմ խեղ մի խոսա» պատասխանը: (ԱՍՇՀ)

Ի դեպ, հարսնափոխության նմանատիպ դրսևորումներն առկա են եղել նաև կովկասյան և արևելյան մի շարք ժողովուրդների մոտ, ինչն էլ արտացոլվել է նրանց ժողովրդական երգիծանքում²⁹⁶: Նմանատիպ երևույթն իր գեղարվեստական արտացոլումն է գտել նաև 19-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականության մեջ²⁹⁷:

Չնայած առանց աղջկան կամ փեսային տեսնելու՝ պսակադրության, ինչպես նաև այդ արարողակարգի մաս կազմող կարմիր խնձորի, ոտնավալյի գործառույթները մեր օրերում պատմություն են դառնում կամ արդեն դարձել են, այնուամենայնիվ դրանց առնչվող երգիծական մանրապատում-զվարճախոսությունները դեռևս շարունակում են կենցաղավարել կամ էլ նորերը ստեղծվել՝ հարմարեցվելով նոր ժամանակների

²⁹⁶ **Ճանիկեան Հ.**, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, տպարան Մ.Դ. Ռօտինեանցի, 1895, էջ 197:

²⁹⁷ **Սունդուկյան Գ.**, Խաթաբալա: Կատակերգ. 4 արարով, Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի, 1904:

մարդկանց մտածողությանն ու գործելակերպին:

Ավանդական սովորություններն ու ծեսերը կամ էլ դրանց որոշ արարողակարգերը հաճախ են բախվում (թեկուզև ձևական կատարման դեպքում) նոր սերնդի մտածողությանը: Ավագ սերնդի կողմից շատ անգամ դրանք կամ դրանց որոշ տարրեր երբեմն փորձ են արվում պարտադրվել կրտսեր սերնդին: Եվ եթե կրտսեր սերունդը թաղման արարողակարգի հերթագայության և դրա առանձին տարրերի կիրառության անհրաժեշտության վերաբերյալ սիրահոժար պատրաստ է հաշվի նստել ավագ սերնդի բանիմաց, այդ արարողակարգը հստակ իմացող անձնավորությունների կարծիքի հետ, ապա հարսանեկան գործառույթում ավագ սերնդի խոսքը, կարելի է ասել, մեծ մասամբ երկրորդական պլանում է. կամա թե ակամա իրականացվող որոշ ավանդական ծիսակարգային տարրերին զուգահեռ՝ կրտսեր սերնդի ներկայացուցիչները մեծամասամբ իրենք են դրության տերը, իրենք են ընտրում նույնիսկ պսակադրության անցկացման օրը, վայրը, կերպը և այլն: Հենց հարսանեկան ծիսակարգային տարրերի պարտադիր կամ ձևական կատարման ժամանակ էլ ստեղծվում և տարածում են գտնում տարատեսակ զվարճապատումներ և զվարճախոսություններ:

Կովկասյան ու արևելյան ժողովուրդների բանարվեստում տեղ գտած հարսի լացը պայմանավորված էր կա՛մ նրա բռնի ամուսնության, կա՛մ էլ (եթե պսակը հարսի սրտով էր լինում) հայրական տնից հեռանալու հանգամանքով: Թե՛ 130 տարի առաջ - Նազարյանցի հրատարակած անեկդոտներից մեկում²⁹⁸, թե՛ Խ. Փորքշեյանի գրառած նմուշում²⁹⁹ աղջկա լացն ազդում է հոր վրա, և վերջինս որոշում է չթողնել, որ աղջկան տանեն: Երկու պատումներում էլ աղջկա՝ արցունքների միջից արտաբերած զավեշտ առաջացնող «*Չէ՛, մա՛մի, համ լաց կ'ըլեմ, համ կերթամ*» (նորնախիջևանյան տարբերակում՝ «*Տուք իմ լացածին մի նայեք, ձեր անելուն արեք*») խոսքն է դառնում անեկդոտի հանգուցալուծումը:

²⁹⁸ Անեկդոտներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննես Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 52:

²⁹⁹ ՀԱԲ, հատոր 2, Խ.Ա. Փորքշեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, էջ 91:

Եթե 20-րդ դարի երկրորդ կեսերին և 21-րդ դարասկզբում առանց փեսային տեսնելու ամուսնության կամ հարսնափոխության երևույթներն իբրև անցյալի դառն ու զավեշտալի հիշողություն՝ արդեն պատմություն են դարձել, ապա աղջկա կուսության հավաստիությունը «վավերացնող» կարմիր խնձորն ու դրա վերաբերյալ անեկդոտները ոչ միայն շարունակում են գոյատևել, այլև նորովի մեկնաբանություններով ու ժամանակի ոգուն համահունչ նորերն ստեղծվել:

Ժամանակները փոխվում են, և միշտ չէ, որ ոչ կույս հարսներին դուրս են անում: Նոր ժամանակներում ու նոր միջավայրում հարսանիքի ծիսակարգի հաջորդականությունը խախտած զույգը, որպեսզի ավանդապահ ծնողների առաջ սևերես չլինի, «ելք» է գտնում. հարսանիքի հաջորդ օրը սկեսրոջ հետ պարտեզ դուրս ելած նորահարսի՝ «Օխա՛յ, մայրի՛կ, էս ի՛նչ դրախտ է: Էս դրախտում ապրողը 6 ամսում երեխա կբերի» և սկեսրոջ՝ «Էս անգամ ինն ամսում բեր, դրանից հետո՝ թեկուզ ամիսը՝ մեկ» խոսքերը³⁰⁰ դառնում են զվարճապատումի մեխը: Սրա տարբերակին հանդիպում ենք նաև «Արարատյան բարբառը» ուսումնասիրության նմուշների բաժնում³⁰¹:

Քանի որ որոշ ավանդական տարրեր դեռևս շարունակում են կաշկանդել նոր կազմավորվող ընտանիքներին, ստեղծվող անեկդոտներում այդ կապանքները քանդվում են ծիծաղի լեզվով՝ մոլորության մեջ թողնելով ավանդապահ հարևան-բարեկամներին. հարսի մաքրությունը հավաստող «ապացույցների» մեջ նոր ժամանակների գրառումներում կարմիր խնձորի հետ նաև տանձ է դրվում: Խնամիների զարմացած հարցին, թե՛ «Կարմիր խնձորը որ կա, բա տա՛նձն ինչի համար եք բերել», պատասխանում են.

– Էս կարմիր խնձորը հարևանների մոտ պարզերես լինելու համար է. ձեր աղջիկը աղջիկ չէր: Տանձն էլ դրել ենք, քանի որ մեր տղի հեջ տանձին չի: (ԱՍՇՀ)

Իբրև հարսի կուսությունը հավաստող «փաստաթուղթ»՝ մեր գրառումներում խնամիներին տարվող սկուտեղի մեջ կարմիր ու թարմ խնձորի փոխարեն դնում են՝

³⁰⁰ **Գյուլնազարյան Խ.**, Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան», 1991, Սկեսրոջ հետ պարտեզում, էջ 58:

³⁰¹ **Մարկոսյան Ռ.**, Արարատյան բարբառը, Եր., «Լույս» հրատ., 1989, էջ 252:

փափկած խնձոր, գետնախնձոր, խնձորի չիր (իհարկե, համապատասխան հիմնավորումներով), կամ էլ պատվիրվում է՝ կարմիր խնձոր բերելիս *Դեմիրճյան սորտի* խնձոր չբերեն (Վերջինս ստեղծվել է Քոչարյան-Դեմիրճյան նախագահական ընտրապայքարի օրերին): (ԱՍՇՀ)

Անեկդոտներից մեկում էլ կուսությունը չպահպանելը պատճառաբանվում է քաղաքական հանգամանքների՝ «երգիրը երգիր չլինելու» հանգամանքով.

Հարսանիքի հաջորդ օրը հարսին հետ են ուղարկում: Աղջկա հերը գալիս ա խնամու մոտ, ասում ա.

– Ա՛յ խնամի, ախչկաս ինչի՞ ես հետ ուղարկել: //– Որովհետև ախչիկդ ախչիկ չէր: // – Պա՛հ, պա՛հ, պա՛հ, միթո՞ւմ երգիրդ երգիր է՞, որ ախչիկըս էլ ախչիկ էղներ: (ԱՍՇՀ)

Նշենք նաև, որ թե՛ անցյալի, թե՛ մերօրյա գրառումներում հարսանեկան ծիսակարգային անեկդոտաշարում կուսության խախտմանն առնչվող նմուշները բավական մեծ քանակ են կազմում:

Հետհարսանեկան ծիսակարգային տարրերից մեկն էլ ոտնալվայի ավանդական արարողակարգն է: Ժամանակակից անեկդոտներից մեկում նորահարսի կողմից ոտքերը լվանալու համար ստացած նվերը սկեսրայրի ցուցադրաբար տված 100 դոլարանոցն է, իսկ հարսի գոհունակությունն արտահայտվում է ափսոսանքի խոսքերով, թե ինչու՞ սկեսրայրը չորս ոտք չուներ: (ԱՍՇՀ)

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին գրառված հարսանեկան զվարճապատում-զվարճախոսություններում առկա է գյուղացու և քաղաքացու հագուկապի ընդգծված տարբերությունը: Գյուղացին նոր շոր էր գնում պսակվելիս, որը մի քանի օր կրելուց հետո պահում էր սնդուկում, որ հագներ տոն օրերին: Թերևս դա է քաղաք եկած գյուղաշխարհի մարդու՝ «*Պա՛, պա՛, պա՛, ձե՛զ մափաղ, քաղկցիք չի՞մ էլ նոր են հրսանիք էլել*» մանկամիտ արտահայտության համար հիմք հանդիսացել³⁰²: Թումանյա-

³⁰² Թումանյան Հովհ., ԵԼԺ, հատոր 5, Եր., «Գիտություն» հրատ., 1994, էջ 583:

նական գրառումից շուրջ 120 տարի անց նման մի պատում էլ գրառվել է Արցախում³⁰³:

Ի դեպ, 1990-ականների վերջերին հագուկապի հետ կապված մի իրապատում ենք գրանցել նաև Լոռիում՝ այս դեպքում՝ կապված թաղման ծեսի հետ: Երեխայի՝ «Պապի՛, էս քեռու կոշիկները մեռելի են, չէ՞» անկեղծ խոսքը բխում էր ժողովրդի սոցիալական վիճակի կտրուկ վատանալուց. ըստ մանկան տրամաբանության՝ այդ ժամանակներում նոր կոշիկ «կարող էր հագնել» միայն մեռած մարդը: (ԱՍՇՀ)

20-րդ դարի երկրորդ կեսից հայ ժողովրդական հարսանեկան արարողակարգ են մուտք գործում այլ ժողովուրդների ծիսակարգային որոշ տարրեր: Այսպես, եթե անցյալում գրառած զվարճապատումներում և զվարճախոսություններում խոռված փեսան հրաժարվում է գնալ հարսի մոտ, քանի որ նրան տղմա չէր հասել³⁰⁴, ապա նորոյր գրառումներում տղման փոխարինվել է տորթով. այս դեպքում փեսան խոռվում է հարսանեկան տորթից բաժին չհասնելու պատճառով: (ԱՍՇՀ)

Մեր ժամանակների հարսանեկան արարողակարգում տարոսիկների կիրառությունը ևս նոր երևույթ է: Դրսից ներմուծված պսակադրության այս տարրն իր արտացոլումն է գտել հայկական անեկդոտներում. թաղման ծիսակարգին առնչվող պատումներից մեկում զոքանչի հուղարկավորության ժամանակ հանգուցյալի փեսան տարոսիկներ է բաժանում իր ընկերներին: (ԱՍՇՀ)

Մեր գրանցած մանկական զվարճախոսություններից մեկում էլ երեխան, տեսնելով տներից մեկի առաջ շարած թաղման ծաղկեպսակները, ոգևորված ասում է.

– Մա՛մ, մա՛մ, հլա նայի, տե՛ս՝ ինչքա՛ն շատ տարոսիկներ են շարե՛լ...³⁰⁵

Հարսանեկան բաժակաճառային գրառումներից մեկում ինչ-որ բառի փոխարեն (մոռացության պատճառով թե սովորույթի ուժով) անորոշություն արտահայտող **բան** բառի անհարկի կիրառությունները միտումնավոր այլ բան (հիմնականում՝ բամբառակ)

³⁰³ Ղուլյան Բ., Գյուլիստան. Պատառիկներ մոտիկ անցյալից, Եր., «Ձանգակ-97», 2004, էջ 99:

³⁰⁴ Հայկական զրոյցներ, պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լոս Անջելես, 1944, Պոզանեան տպագրութիւն, էջ 105:

Գրիգոր Ս., Ջվարճալի պատառաքաղ, Եր., «Ձանգակ-97», 2006, էջ 48:

³⁰⁵ Սարգսյան Ա. Շ., Մանկական զվարճախոսություններ, Եր., «Գիտություն», 2016, էջ 76:

է հասկանալի դարձնում, շրջապատում «որոշակիացվում»՝ տեղիք տալով իմաստային խաթարումների և զավեշտի առաջացման: Ահա հարսանիքի քավորի բաժակաճառերից մեկը.

– *Իմ սիրելի՛ բաներ՛ նորապսակներ, երջանի՛կ էղեք: Փեսա՛ ջան, կնգանդ միշտ բան կանես՛ կսիրես: Հա՛րս ջան, մարդիդ բան անող կլինես՛ կլսես: Դուք ոչ մի բանից չվախենաք, որովհետև ձեր քավորը էնքան մենձ բան ունի՛ շրջապատ, ու երբ պեպք ա՛ էդ բանը ձեր մեջքին կանգնած ա:*

Ամբողջ հարսանիքի ժամանակ էնքան անհարմար բանի եմ նստել՛ աթոռի, ու էս սեղանի բանն էլ՛ ոտը, ոտներիս արանքում ա էղել: Բայց ձեր բանի՛ երջանկության համար պատրաստ եմ ամբողջ կյանքում բան անեմ՛ փանջվեմ: (ԱՍՇՀ)

Դսեղյան հարսանեկան բաժակաճառ-բարեմաղթանքներից մեկում էլ զույգ ծաղիկների կենացը խմելիս նորափեսայի հոր խոսքում գործածված համեմատությունն է զավեշտ առաջացնում.

– *Միտըդ ա՞, որ քեզ համար հեծանիվ առա, փղա՛ ջան:*

– *Հա՛, ո՞նց չի միտըս, ամբողջ թաղում մենակ ես հեծանիվ ունեի, – պատրաստանում է փղան:*

– *Լավ ա, որ միտըդ ա: Դե հըմի լսի՛ ինչ եմ ասում: Կնգանդդ հետ սրտացավ ու քնքուշ կվերաբերվես, հեծանվիդ նման ձեռից ձեռ չզցես, էրկու օրըմ աչկրդ կոխես ու շարքիցը հանես...³⁰⁶:*

Հարսին ուզելիս ինչ-որ թերության դեպքում հնչեցրած դժգոհությունը ևս անեկդոտներում անսպասելի ծիծաղի տեղիք է տալիս: Մի դեպքում զավեշտն արտահայտվում է քավորի՝ հարսի ատամների պակաս լինելու դժգոհությամբ ու խոսակցի՝ «Դե ի՞նչ ասեմ, քավո՛ր ջան, խոմ ձի չէի առնում, որ բերանը բացեի, պտամներին նայեի»³⁰⁷ խոսքով՝ ստեղծված «Ձին առնելիս ատամները կհաշվեն», նաև՝ «Նվեր տված ձիու ատամները չեն հաշվում» առածների հենքի վրա:

³⁰⁶ **Քոչարյան Ա.**, Ձվարճապատումներ և իրապատումներ, Եր., 2008, «Ասողիկ» հրատ., էջ 32:

³⁰⁷ **Գևորգյան Գ.**, Գինոսի ժպիտները, Եր., «Հայաստան» հրատ., 1975, էջ 71:

Մեկ այլ դեպքում ծիծաղն առաջանում է եղբոր համար ընտրած հարսնացուի աչքի շլուփյան զավեշտալի արդարացմամբ ու «համոզիչ» պատասխանով՝ «*Խի մեր փուն սնայպեր ե՞նք բերում, մի հատ լվացք ա, կանի, է՛լի*»³⁰⁸:

Հայոց ավանդական ընտանիքներում օջախի մեծի՝ սկեսրայրի, մեծ տեգոր և հարսանիքի քավորի հանդեպ հարգանքը դրսևորվել է նաև նորահարսի չխոսկանությամբ, ինչն էլ կամա թե ակամա բազմաթիվ անեկդոտների ստեղծման պատճառ է հանդիսացել: Մեր գրառումներից մեկում երբ նորահարսը սկեսրայրի համար վերնաշապիկ է կարում ու հագնել է տալիս, նկատում է, որ օձիքը լավ չի ստացվել. փչացրել է: Նա երեխայի միջոցով ասելիքը փոխանցում է՝ ժողովրդախոսակցական լեզվում ինչ-որ բան փչացնելիս օգտագործվող գռեհիկ դարձվածքով: Մեծի հանդեպ հարգանքից բխող չխոսկանության և այդ դարձվածքի կիրառության անհամապատասխանությունն էլ մանրապատումում դառնում են անսպասելի ու անզուսպ ծիծաղի առաջացման պատճառը.

– *Ապնին ասա՛ ամեն ինչ լավ ա էլել, մենակ յախիդ միչին ք...ել եմ* (իմա՝ օձիքը փչացրել եմ): (ԱՍՇՀ)

Պսակադրությանն առնչվող երգիծապատում-զվարճախոսություններում առանձին խումբ են կազմում եկեղեցական արարողակարգերին վերաբերող անեկդոտները: Դրանցում առկա որոշ գործառույթներ (բացառությամբ պսակի) այսօր այլևս կիրառելի չեն. ժամանակավրեպ են: Այսպես, կիրառությունից դուրս են եկել եկեղեցու սպասավորի կողմից հասության-չհասության³⁰⁹, մանավանդ տարիքային, վավերացումը (վերջինիս գործառույթն իր վրա է վերցրել դատական համակարգը), հարսի ու փեսայի հագուստը օրհնելու արարողակարգը³¹⁰, մետրոպոլիտից (սրբազանից) ամուսնանալու

³⁰⁸ Կատակում են Մովսեսցիները, գրողներ՝ Ա. Պապյան, Հ. Պապյան, Եր., «Նոյյան Տապան» հրատ., 2012, էջ 47:

³⁰⁹ Անեկդոտներ, հատոր Բ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տիֆլիս, տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877, էջ 37:

³¹⁰ Անեկդոտներ, հատոր Գ., Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 42:

հրամանագիրն ստանալը³¹¹ և այլն:

Զվարճապատումներից մեկում այրիացածն ուզում է ամուսնանալ մահացած կնոջ քրոջ հետ, սակայն չհասության պատնեշը հնարավոր չի լինում քանդել, և... օգնության է գալիս կաշառքը: Տեսնելով բերածները՝ սրբազանը «ազգաբանությունն է նայում», ապա կեղծ հաշվարկով անցնում յոթ պորտն ու հարցին դրական լուծում տալիս: Մատների վրա կատարած հնարամիտ հաշվումն էլ անեկդոտում դառնում է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը.

– *Սպիտակ- ջորի, // Հարյուր- ոսկի, // Մեռնի- կնիկը. // Առնի – քենին:*

– *էէ՛. էս ութ էլավ, որդի՛, օխտը պորտից անցա. կհասնի, կհասնի...³¹² **Տե՛ս Հա-***

վելված 2, թիվ 1:

Ըստ քրիստոնեական եկեղեցու ամուսնական կանոնակարգի՝ հայոց մեջ արգելված է բազմակնությունը, և դրա խախտման դեպքում եկեղեցին համապատասխան պատիժներ է սահմանել: Նորնախիջևանյան «Էրգու գեսը մեզ գանե» անեկդոտում զավեշտալին քրիստոնեական այդ օրենքը խախտողի արդարացնող խոսքն է՝ հիմնված կողակցին ուղղված «իմ կես, իմ թանկագին կես» պատկերավոր արտահայտության վրա.

– *Ես իմ արածըս, բարո՛ն դադավոր, ամենևին հանցանք չիմ հեսարի... և իմ ունեցածս ալ հիչ էրգու գնիզ չէ, հապա մեզ հատ: Անոր համար, որ ի՞նչ պան է իսկաբես գնիզը: Ադ ես ալ կիդիմ, փուք ալ կիդիք, ամենքն ալ կիդին, որ գընիզ ասածդ գես մաշտ է. գասին՝ իմիս գեսս, յա չենե, իմիս թանգակին գեսս: Ես ալ գուգեյի սաղ գընիզ ունենալ, ադոր համար ալ էրգու գես առի, որ մեզ հադ սաղ լա՛³¹³:*

2.2. Թաղման ծիսակարգը

Հայ ժողովրդական երգիծական ստեղծագործությունների համատեքստում ա-

³¹¹ Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 68:

³¹² Անեկդոտներ, հատոր Բ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տիֆլիս, տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877, էջ 37-38:

³¹³ ՀԱԲ, հատոր 2, Փորքշեյան Խ.Ա., Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, էջ 86:

ռանձին խումբ են կազմում թաղման թեմային առնչվող ժողովրդական և կրոնական ծիսակարգային տարատեսակ տարրերի կիրառությամբ մանրապատում-զվարճախոսությունները: Քանի որ չափազանց ընդգրկուն են դրանց դրսևորման շրջանակները, հետևաբար վաղնջական ժամանակներից եկող թաղման արարողակարգային բազմաթիվ տարրեր, հետագայում նաև դրանց քրիստոնեական գործառույթներն իրենց արտացոլումն են գտել հետևյալ թեմաների հենքի վրա ստեղծված անեկդոտներում՝

ա) քահանայի ներկայությամբ մահվանից առաջ արված մեղքերի թողություն-խոստովանություն, ցանկություն-պատվիրան, կտակ, բ) հանգուցյալին լողացնելը, հազցնելը, պատանքի կամ դագաղի մեջ տեղավորելը, նրա հարազատ առարկաներից հետը դնելը, գ) լայաց երգերով ու խոսքերով հանգուցյալի մասին հիշողություններ պատմելը, լացի ժամանակ ասվող հանգուցյալի բնավորության գծերի ու գործողությունների գովքը, դ) մոլորեցնելու համար տնից դուրս հանելիս պտտեցնելը, թաղման թափորը, գերեզման փորելը, ե) անդրաշխարհ ուղեկցող հոգեառը, դրախտ կամ դժոխք ընկնելը, զ) հոգեհացը, ողորմաթաս խմելը, այգեհող (էգնահող), յոթ, քառասունք, տարի կատարելը, է) հանգուցյալի հիշատակը հավերժացնող տապանաքար դնելը, տապանաքարային գրությունները, գերեզմանին այցելության գնալը և այլն:

Մահամերձի խոստովանության, վերջին խոսքի, վերջին ցանկության վերաբերյալ բազմաթիվ մանրապատում-զվարճախոսություններ են ստեղծվել, որոնց մի մասը իրապատումային բնույթի է, մի մասն էլ անիրական հորինվածքներ են:

Այսպես՝ իրականության հենքի վրա ստեղծված մանրապատումներից մեկում անսպասելի ծիծաղի պատճառ է դառնում մահամերձի թաքցրած «հարստության» բացահայտումը: Ավագ և կրտսեր սերունդների մտածողությունների հակասությունն արտացոլող երգիծապատումում հարսներն ու տղաները լավ են պահում տան մեծին, որպեսզի վերջինս ոսկիների տեղն ասի: Նույնիսկ ամենաչնչին արարքի համար մեղքի զգացում ունեցող նահապետական սովորություններին հավատարիմ մահամերձ ծերունին կանչում է հարազատներին, որ իր վերջին խոսքը, իր սրտի գաղտնիքն ասի, և...

բոլորի սեփականությունն է դառնում տարիներ շարունակ նրա հոգում թաքցրած անփոխարինելի գանձը.

- *Բախչի ծերին մի մեծ կակալի ծառ կա, իմանում եք: // -- Իմանում ենք: //*
- *Էդ կակալի ծառի էն դողը մեր հարևան Ծաղիկենց բախչեն ա, իմանում եք:*
- *Իմանում ենք, հայրի՛կ, իմանում ենք, միայն մի քիչ շուտ-շուտ խոսի:*
- *Էդ ծառի տակին Ծաղիկին երկու անգամ պաչել եմ, – ասում է ծերունին ու հոգին փչում³¹⁴:*

Մահամերձի վերջին ցանկության հենքի վրա ստեղծված ինքնատիպ զվարճապատումներից մեկն էլ կապված է ազգային-ազատագրական շարժման հերոսներից մեկի՝ Սեբաստացի Մուրադի հետ: Ժողովուրդը համոզված էր, որ ազգային ցավի համար պայքարի ելած անձնվեր հայ ֆիդայիները ոչ միայն ամբողջ ազգի պաշտպանն են, այլև իրենցից ամեն մեկի ցավերի և հոգսերի դարման անողը: Այս երգիծապատումում, ըստ ծեր մամիկի, ազգի պաշտպան ֆիդային ի զորու է նաև կատարել իր վերջին ցանկությունը՝ իր մահից հետո կանխել ամուսնու ամուսնությունը...

Վեհ, ազգային գաղափարների համար ոտքի ելած ֆիդային պատրաստ է օգտակար լինել ամենքին, նա, անձը վտանգելով, ներկայանում է հիվանդ հայ մամիկին և լսում նրա անկեղծ խնդրանք-ցանկությունը, որն էլ դառնում է ժողովրդական երգիծական մանրապատումի զավեշտի հենքը.

– *Մարե՛, ես Սեբաստացի Մուրադն եմ, ի՞նչ կարևոր բան մը պիտի ըսեիր ինձի, որ ուզեցել ես ինձ տեսնել: Մարե՛, շու՛տ ըսե ըսելիքդ. թուրքերը ինձի կհետապնդեն...*

– *Տղա՛ս, – կըսե հիվանդ ծեր կինը, – իմ վերջին ցանկությունս է, որ իմ մեռնելես վերջ մի՛ թող, որ իմ ամուսինը ամուսնանա...*³¹⁵

Թաղման ծիսակարգի ժամանակ կատարվող պարտադիր տարրերից մեկն էլ հանգուցյալին լողացնելու գործողությունն է: Այս թեման արտացոլող անեկդոտներից

³¹⁴ Ժողովրդական սրախսություններ, հավաքեց և մշակեց Վարդուհի Նաղաշյանը, Եր., «Նաիրի» հրատ., 1992, էջ 89-90:

³¹⁵ **Սվազյան Վ.**, Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 109:

մեկում ցանկության՝ «Որ ես մեռնեմ, Բաղուն պառավին թողուս ոչ ինձ լողացնի» խոսքերը հիմնավորվում են մահվանից հետո անգամ ուժը չկորցրած «չար ասքի» հավատալիքային ազդեցության դրսևորմանը. «էրվի նա, ասքը չար ա, վախում եմ ասքովորա ինձ»³¹⁶:

Այս թեմային վերաբերող «Ժամանակի հարցեր» զվարճախոսությունը ևս, կառուցված իրար հոգու հետ խաղացող երկու մեծահասակների երկխոսությամբ, ցանկության խոսքի հետ է զուգակցված.

– Ես որ մեռնեմ, – ասում է պառավը պառավին, – ինձ կլողացնես: Ասել եմ՝ շորերս կտան քեզ, կհագնես:

Պառավը նայում է պառավին, գլուխն օրորում.

– Ասրված ձենդ լսի, համա ինչ քեզ եմ մտիկ անում, դու մի հիսուն տարի հլա մեռնողը չես...³¹⁷

Եթե թաղման լալիքի երգը՝ սգերգը, ստեղծվում է անմիջապես մարդու մահվան առիթով, հուղարկավորության արարողակարգային տարատեսակ դրսևորումների ժամանակ, ապա նրան առնչվող անեկդոտներն առաջանում են դրա անմիջական ազդեցության տակ՝ այդ ծիսակարգից հետո: Եվ եթե թաղման սգերգերում ու սգո խոսքերում առկա է վշտին, դժբախտությանն ուղեկցող հուզական խոսքը, բաժանման ցավը, ավստասանքը, որը հուզում է նաև ներկա գտնվողներին, ապա երգիծական մանրապատումների լալիքի խոսքերում ու երգերում առկա է զավեշտը, ինքնաբուխ անսպասելի ծիծաղը:

Պատմական Հայաստանի տարբեր գավառներից գրառված հուղարկավորությանն առնչվող ժողովրդական ստեղծագործություններում մեծ քանակ են կազմում հանգուցյալի վրա լաց լինելու հետ կապված զվարճապատում-զվարճախոսությունները: Դրանց մի մասը իրական միջադեպերի հենքի վրա են ստեղծված, քանզի մեծ ցնցման ազդեցության տակ լաց լինելիս սիրելի կորուստը սգացող կինը ննջեցյալին աղաչում, պաղատում է խղճալ իրեն, մենակ չթողնել, վեր կենալ, էլի կատակներ անել, հիշում ու

³¹⁶ Ղազարյան Ս., Եկեք մի քիչ ուրախանանք, մեր հոգսերից թեթևանանք: Անեկդոտներ: Եր., «Զանգակ-97» հրատ., 2002, էջ 14-15:

³¹⁷ Գյուլնազարյան Խ., Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991, էջ 64:

բարձրաձայն ողբերգով ներկայացնում է հանգուցյալի հետ կատարված անմոռանալի դեպքերը: Եվ այդ ամենը ներկայացվում է հանպատրաստից, երբեմն էլ ակամայից երկիմաստ արտաբերված խոսքերով: Դրանցից շատերն անմիջապես ամրագրվում են այդ արարողակարգին ներկա գտնվող առավել սթափ որոշ մասնակիցների հիշողության մեջ և հետագայում ծաղկացվելով ու որոշակի կառույցի մեջ դրվելով՝ անեկդոտի տեսքով բերնեբերան պատմվում, տարածվում են:

Լալյաց երգի հենքի վրա ստեղծված անեկդոտների մեջ բացառիկ նմուշ է «Իրիցկին ու տերտեր»-ը: Չորս խաշած ձու ուտելուց հետո հանկարծամահ եղած տերտերի վրա սգացող երեցկինը ողբերգի ժամանակ հանգուցյալին անընդհատ հիշեցնում է իր մեծ կորստի մասին, որ եթե կողակիցը մեռնելու էր, էլ ինչու կերավ չորս ձուն: Չէ՞ որ դրանք կարելի էր թխսի տակ դնել, չորս ճուտ ունենալ, որոնք էլ կմեծանային ու հավեր կդառնային, էլի ձու կածեին, թխսի տակ կդրվեին, ճտեր դուրս կգային, և այսպես շարունակ...:

Ամենագավեշտալին այդ կրկնվող խոսքերին վերջ տալու համար թաղման արարողակարգը վարող մի աչքը քոռ տերտերի դիտողությունից հետո ողբասացի սգերգի թեման փոխելն է՝ *«Ապա ի՞նչ ասեմ, կո՛ր տերտեր, ապա ի՞նչ ասեմ, կո՛ր տերտեր, ապա ի՞նչ ասեմ, կո՛ր տերտեր...»* ու մարդկանց առաջ խայտառակ եղած տերտերի՝ *«Գլենա %ռճվ%ն ասա, գլենա %ռճվ%ն ասա, իրիցկի՛ն»* պատրաստանը³¹⁸:

Ըստ ծանոթագրության՝ այս պատումը գրանցվել է Երևանում Ե. Լալայանի խմբարշավի անդամ Արտաշես Բարսեղյանի կողմից 1915թ. Վանի գաղթականությունից գրառումներ կատարելիս: Զվարճապատումն ընդգրկվել է «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի ակադեմիական հրատարակության վասպուրականյան հատորում³¹⁹: Ի դեպ, փաստենք նաև, որ այս պատումի Լոռու տարբերակներից մեկը, նույն կառուցվածքով

³¹⁸ Հայ ժողովրդական հեքիաթներ, այսուհետև՝ ՀԺՀ, հատոր 15, Եր., ՀՀ ԳԱ հրատ., Իրիցկին ու տերտեր, էջ 370:

³¹⁹ Նույն տեղում:

ու գրեթե նույն բառերով հրատարակվել է 1892թ.³²⁰, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ վերջինս եղել է ասացողի կամ բանահավաքի հաղորդած նյութի սկզբնաղբյուրը:

Սգացողի նկարագրած անդրաշխարհի և առկա աշխարհի «նմանության» հենքի վրա ստեղծված մի երգիծապատումում թաղման թափորին պատշգամբից հետևող մարդը, լսելով սգացող կնոջ՝ « – Վա՛յ, հիմա քեզ ո՞ր են տանում, ախր ընդեղ հաց չկա, լոյս չկա, խոնավ ա, ցուրտ ա» խոսքերը՝ անհանգստացած արձագանքում է.

– Յա՛, չլինի՞ էս մեր տուն են բերում: (ԱՍՇՀ)

Ընդհանրապես, սգացողի խոսքերում շատ հաճախ են առկա լինում հանգուցյալի ու նրա գործունեության չափազանցված գովք-նկարագրությունները: Բայց եթե սգերգերում դրանց առկայության ժամանակ շրջապատը չի արձագանքում, ապա երգիծական մանրապատումներում դրանց արձագանքը չի ուշանում. կերպարներից մեկի կողմից անսպասելի ասված մեկ-երկու արտահայտությունը ինքնաբուխ ծիծաղ է առաջացնում, ինչն էլ դառնում է զվարճապատումի մեխը: Հենց դրանով էլ սգերգերն ու սգո խոսքերը տարբերվում են թաղման ծիսակարգին առնչվող երգիծական մանրապատումներից:

Այսպես, Կ. Գալֆայանի ներկայացրած «Յետ մահու ներբող»-ում վարպետ գովասանք անող դրկից եղերամայրերից մեկի ասած սգերգի խոսքերը զարմանք և կասկած է առաջացնում անգամ այրիացած կնոջ մեջ, և նա մոտն է կանչում իր զավակին ու ականջին փսփսում. «Որդի՛, իմ ջա՛ն որդի, մափաղ քու հոգույդ: Տե՛ս, անիկա քու հա՛յրն է, չէ թե՛ մի ուրիշը...»³²¹»:

Ծավկայի հայոց լալիքի խոսքերի հենքի վրա ստեղծված մեկ այլ զվարճապատումում այրիացած կինն է լալիս ու թվարկում ամուսնու տեսակ-տեսակ հագուկապը՝ առաջացնելով ներկաների զարմանքը.

³²⁰ Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 65-66:

³²¹ Գիրք առակաց (Առակներ, առածներ, մանրավէպեր, զուարճալի ասացուածքներ եւ իմաստուն խօսքեր), Պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, 1957, Բեյրութ, էջ 146-147:

– *Ղարամանդուլ արխիդի'դ մեռնեի, կարակուլ փափախի'դ մեռնեի, ազիատսկի*³²²
սափքնո'դ մեռնեի, մեծ թոփ արծթե քյամարի'դ մեռնեի:

Ականջ էնողները կնկանը կըսեն, թե ' // – Ադ քու ըսածներդ մարդդ ունի'ր: //

– *Չունիր, հըմը պիտի առնեինք, – կըսե կնիկը*³²³:

Զվարճապատումի մեխը հանդիսացող սգացող կնոջ այդ պատասխանը և՛ ինքնաբուխ ծիծաղ է առաջացնում, և՛ տխրություն ու ցավ. սոցիալական ծանր վիճակը անկատար է թողել նրա երազանքների իրականացումը, և սգվորը գոնե լալիքի խոսքերով է ուզում հասանելի դարձնել դրանք:

Ըստ հնագույն ժողովուրդների հավատալիքի՝ մարդը մահվանից հետո էլ անդրաշխարհում շարունակում է ապրել: Հենց այս մտայնությամբ էլ վաղնջական ժամանակներում հանգուցյալի հետ նրան հարազատ ու կիրառելի զանազան առարկաներ են դրել, իսկ թագավորների հետ՝ թաղել նաև նրան հավատարիմ ծառաներին: Մեր օրերի հուշարկավորությունների ժամանակ ևս այս կամ այն չափով պահպանվել են հնագույն հավատալիքային մնացորդները, որոնց անմիջական արձագանքը արտահայտվել է նաև հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում:

Այդ երևույթը տարբեր ժամանակներում տարբեր կերպ է դրսևորվել՝ կապված մարդու մտածողության, պահանջների, զբաղմունքի և հնարավորությունների հետ: Թաղման ծիսակարգին առնչվող հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում հանդիպում ենք հանգուցյալի հետ դրվող այնպիսի առարկաների (դուդուկ, ռադիոընդունիչ, ջութակ և այլն), որոնց հետ կապված է եղել ննջեցյալը: Պատումներից մեկում ողբասաց կինը սգերգում շեշտում է ոչ թե հանգուցյալ ամուսնու հարազատ երաժշտական գործիքը՝ դուդուկը, այլ դրա տեղադրման դիրքը: Ննջեցյալի

կնոջ կողմից *զեղչմամբ* արտաբերված լալիքի անկեղծ խոսքերը, թե՛ «Վայ ես *քեզ էլ մեռնեմ, ուրներիդ արանքինին էլ մեռնեմ* (իմա՝ ոտներիդ արանքին դրված դու-

³²² **Ազիատսկի** (ռուս.) – ասիական:

³²³ **Միքայելյան Հ.**, Ծալկայի հայերի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., «Նոյյան տապան» հրատ., 1998, էջ 181:

դուկին-ԱՍ): *Առանց ձեզ ի՞նչ եմ անելու, ո՞նց եմ ապրելու...*» (ԱՍՇՀ), ներկա գտնվողների կողմից ընկալվում են այլ տեսանկյունից և դառնում անզուսպ ծիծաղի պատճառ:

Տե՛ս Հավելված 2, թիվ 2:

Պատումներից մեկում էլ երբ առաջարկվում է հանգուցյալի հետ «Ալպինիստ» ռադիոընդունիչը դնել, քանի որ հանգուցյալը շատ էր սիրում հետը վերցնել և դաշտում լսել, կինը լալով տեղեկացնում է, որ այն անսարք է, իսկ կողքի հարևանուհին խորհուրդ է տալիս այնուամենայնիվ հետը դնել՝ համոզված լինելով, որ համագյուղացի «Կոռանց Իշխանը այնտեղ կսարքի»³²⁴:

Թաղման ծիսակարգին վերաբերող վերջին շրջանի անեկդոտներում հանգուցյալի հետ դրվող առարկաները նոր ժամանակների պահանջներից են բխում: Մեր գրառումներից մեկում տղան ննջեցյալ հոր հետ բջջային հեռախոս է դնում, որ անընդհատ կապի մեջ լինի: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 2, թիվ 3:**

Թաղման ծիսակարգին առնչվող նմուշներից մեկում տվյալ իրավիճակից բխող մեռելատիրոջ պատասխանը զուգադիպում է հանգուցյալի հետ ինչ-որ իր դնելու ավանդույթին. փորած փոսում մկների ծակերի առկայությունը ստիպում է հողիատների անհանգստությունը փարատել՝ մկների գոյության վտանգի առաջն առնելու միջոցի առաջարկով.

– *Բան չկա, ապու հեյր մի կապու էլ կդնենք...*³²⁵

Թաղման ծիսակարգին առնչվող բազմաթիվ զվարճապատումներ ճշմարտության հետ ընդհանրապես առնչություն չունեն: Դրանք մտացածին՝ հնարովի նկարագրություններ են: Նման երգիծապատումներում զավեշտի աղբյուրը ոչ թե լալիքի խոսքերն են, այլ սգացողի «սթափ» դատողությունը.

Նախորդ օրը ամուսնու մահվան համար մազերը փետող, աղի արցունք թափող կինն առավոտյան ասում-խոսում, ծիծաղում է: Սգակիրների անհանգստացած հարցում-

³²⁴ **Քոչարյան Ա.**, Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ» հրատ., 2009, էջ 24:

³²⁵ Կատակում են մովսեսցիները, գրողներ՝ Ա. Պապյան, Հ. Պապյան, Եր. «Նոյյան Տապան» հրատ., 2012, էջ 58:

ներին կինն այսպես է պատասխանում.

– Ամբողջ գիշեր մտածեցի՝ ոչ հորըս կողմից ա բարեգամ, ոչ մորըս կողմից, էլ ինչի՞ եմ ախմախի պես ինձ կտրատում: (ԱՍՇՀ)

Զվարճապատումներից մեկում էլ անսպասելի և անզուսպ ծիծաղ է հարուցում սգացող կնոջ՝ «*Էս ի՞նչ արիր, ինձ մենակ թողած՝ էս ու՞ր ես գնում, Գարսևա՛ն ջան*» հարցին հետևում է կնոջն ստուգելու համար սուտմեռուկի տված ներքնաշորերով դա-գաղում պառկած ամուսնու՝ «*Գնում եմ ստադիոն՝ մրցումների*» պատասխանը: (ԱՍՇՀ)

Նոր ժամանակներում թաղման արարողակարգ մուտք գործած տարրերից է նվագաձուներ, երգիչներ բերելը և փող տալով՝ որևէ նվագ, երգ պատվիրելը: Հենց դրանց հենքի վրա է ստեղծվել զոքանչին հուղարկավորող քենակալների վեճը՝ պատ-վիրած երգերից մեկի առիթով, երբ նրանցից մեկը պատվիրում է «Զարթնի՛ր, մայրի՛կ»-ը: Զոքանչին պահող փեսան կատաղած ասում է.

– *Տո շա՛ն որդի, որ զարթնեց, դու ե՛ս պահելու...:* (ԱՍՇՀ)

Մեկ այլ մանրապատումում փեսան այրել է տալիս զոքանչի դիակն ու մոխի-րը բերում տուն: Այստեղ զավեշտի հենքը դիակիզման հեռահար նպատակն է ու հանգուցյալի թառան արձագանքը: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 2, թիվ 4:**

Հուղարկավորություններին առնչվող երգիծական մանրապատում-զվարճախո-սությունների ստեղծման պատճառ կարող է դառնալ Հայաստանի առանձին շրջաննե-րում կամ շրջանների որոշ բնակավայրերում ու արտերկրի հայաշատ վայրերում ազգա-յին ավանդական ընդհանուր ծիսակարգից տարբերվող, երբեմն էլ՝ արտառոց ու զա-վեշտալի թաղման արարողակարգային տարրերի կիրառումը: Այսպես, Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում և տարածաշրջանի մի շարք գյուղերում առկա՝ գերեզմանոց տանող ճանապարհին հանգուցյալի մոտիկ հարազատների և մտերիմների կողմից օղորմի տալու և օղորմաթաս խմելու նպատակով երկու սեղան դուրս հանելը՝ մեկը՝

տարատեսակ ուտեստներով լի, մյուսը՝ գորգ գցած՝ հանգուցյալի դին դնելու համար³²⁶, գերեզմանոցում սեղաններ գցելն ու զանազան ուտեստ-խմիչքներով հանգուցյալին «պատվելը», այգահողից (էգնահող-ինքնահողեքից), յոթից, քառասունքից ու տարուց բացի, թվարկածներին ոչնչով չզիջող և ծիսակարգի մաս կազմող տասնհինգի անցկացումը, Մարտունու և Գավառի որոշ գյուղերում, գուցե նաև այլ տարածաշրջաններում *էգնահող-ինքնահողեքին* կամ *յոթին* խաշ տալը և այլն:

Նմանատիպ ծիսակարգային դրսևորումներին անտեղյակ ականատեսը, բնականաբար, այդպիսի անսովոր ու զավեշտալի արարողակարգային տարրերի մասին ծիծաղով պատմում էր (այն էլ՝ ճոխացրած) իրենց միջավայրում, որոնք էլ հենք են հանդիսանում թաղման թեմաներով բազմաթիվ անեկդոտների ստեղծման: Անդրադառնանք դրանցից մի քանիսին.

ա. գերեզմանոցում սեղաններ գցելու և հարսանիքի ու թաղման տարանջատիչ ամենահատկանշական կողմը մատնանշելու վերաբերյալ.

- Գարսևա՛ն, կանա՛ս ասես՝ թաղումը հարսանիքից ինչո՞վ ա տարբերվում:
- Բա՛ն ասիր, – Գվիդոնը մի տեսակ ավելի մոայլվեց, – թաղման վախտ մե խոքի պակաս ա խմում³²⁷:

Հումորի քաղաք Գյումրիում (Լենինական) լուրջ մարդ գտնել հնարավոր չէ, և հանելուկատիպ «*Կարող ե՞ս Լենինականում լուրջ մարդու անուն տաս*» հարցմանը հետևում է թաղման ժամի, ճանապարհի ու հանգուցյալի դիրքի վերաբերյալ հանելուկային հանգախաղով պատասխանը.

- *Շիրակի շոշին, ժամը չորսին, ձեռքերը՝ դոշին: (մեռել տանելը)* (ԱՍՇՀ)

բ. գերեզմանոցի ճանապարհին սեղաններ դուրս հանելու և հանգուցյալի հոգու հանգստության համար խմելու վերաբերյալ.

Քյավաղցիներից մեկի աղեն մեռնում ա: Աղեի հոգու հանգստության համար Պո-

³²⁶ Ի դեպ, հայոց մեջ ընդունված է եղել նորապսակներին բարեմաղթանքի խոսքեր ասելու համար հարսանեկան թափորն անցնելիս մոտիկ հարազատի կողմից ուտեստներով լի սեղան դուրս հանելու երևույթը:

³²⁷ Բոլիդ մեռնեմ-2, Զվարճապատումներ, Հավաքեց և մշակեց Լևոն Բլբույանը, Եր., «Նաիրի» հրատ., 1995, էջ 32-33:

դոսի դռանն են խմում, Պեպրոսի դռանն են խմում, Սպեփանի դռանն են խմում..., որ հասնում են գերեզմանոց, զարմացած իրար հարցնում են՝ Ադեն ո՞ւր ա...: Նստում են հողաթմբին ու փորձում հիշել:

– Պողոսի դռանը որ խմեցինք, Ադեն հեղինքս է՞ր, թե՛ չէ, – հարցնում ա մեկը: // Ասում են՝ հեղինքս էր: // – Պեպրոսի դռա՞նը...// – Հեղինքս էր:

Վերջը, էդպես առաջ գնալով՝ գտնում են, թե խեղճ Ադեին որտեղ են մոռացել ու ուրախացած հեղին գնում՝ Ադեի հանդեպ իրենց կիսապ թողած պարտքը կատարելու... (ԱՍՇՀ)

գ. Հանգուցյալի հոգեհացին՝ քելեխին չխմելը, ըստ մեկ այլ զվարճապատումի, վիրավորանք ու կրկնակի դարդ է քյավառցու համար:

«Իբր թե մեր դարդը մեզի քի՞չ ա, որ դուն էլ էկե խասե ըստե, չես խմում»³²⁸, – ասվում է հոգեհացին մասնակցող մայրաքաղաքից եկած ազգակցին:

Հանգուցյալին հիշելու և մեծարելու, ապրած կյանքը գնահատելու դրսևորումներից է նաև նրա գերեզմանին քար քաշելը, իսկ ավելի ուշ նաև՝ գերեզմանաքարին ինչ-ինչ խոսքերով ու պատկերաքանդակներով հավերժացնելը:

Տապանագրերը ինքնաբուխ ու անկեղծ խոսքեր են լինում, երբեմն էլ՝ հարազատի կողմից սուտը ճշտի տեղ ներկայացնող գունազարդված գովքեր ու մեծարանքի արտահայտություններ, որոնք էլ, ինչ խոսք, տեղիք են տալիս տարատեսակ երգիծապատում-զվարճախոսությունների ստեղծման:

Քիչ չեն նաև հանգուցյալի հետ կապ չունեցող պատկերաքանդակներով շիրմաքարը զարդարելուն նվիրված զվարճապատումները: Ահա դրանցից մեկը:

Ապարանցին ընկերոջ հեղին գնում է գերեզմանոց: Պապի շիրմաքարին պատկերված ինքնաթիռը տեսնելով՝ ընկերը հարցնում է.

– Պապըդ յողչիկ (իմա՛ օդաչու) ա՞ էղել: // – Չէ, չորբան: // – Բա էդ ի՞նչ ինքնաթիռի կատաստրոֆի (իմա՛ վթար) մասին ա գրած. «Չոհվեց ինքնաթիռի կատաստրո-

³²⁸ Բոյիդ մեռնեմ կամ Քյավառա 140 անեկոտ, Հավաքեց և մշակեց Լևոն Բլբուլյանը, Եր., «Նաիրի» հրատ., 1992, էջ 39:

ֆից»: //– Պապիս մեռնելու պատճառը սամայոտն (իմա՝ ինքնաթիռ) ա էլել. պապս մի ձորի գլխին ոչխարն արածացնելիս ա ըլլմ: Սամայոտը որ անց ա կենըմ, պապս վերև ա նայըմ ու հերն էլ սամայոտի ուղղությամբ առաջ-առաջ ա գնըմ ու ընգնըմ ձորը, մեռնըմ: (ԱՍՇՀ)

Գերեզմանաքարային գրություններով անեկդոտները լինում են՝

ա. բարոյախրատական որոշակի ուղղվածությամբ, ասենք՝ գինեմոլության քննադատությամբ.

Ծառան տիրոջ պատվերով լավ գինի ունեցող գինետան դռան վրա գրում է «է», մյուսի վրա՝ «էէ», մի այլ տեղ՝ «էէէ»...: Տերը, ճաշակելով բոլոր գինետների լավ գինիները, խեղդվում է, և ծառան գերեզմանաքարին գրել է տալիս՝ «է-է-է». վասն բազում «է»-ից *Տերն իմ աստ է*³²⁹:

բ. հետպատերազմյան տարիներին հայրենիք ներգաղթածների սոցիալական ծանր վիճակի նկարագրությամբ. «*Լավ կըլլա ըսելով՝ հոս հասանք*»: (ԱՍՇՀ)

գ. մահվան պատճառի նկարագրությամբ.

«*Խմուզ-մեռուզ*», «*Չխմուզ-մեռուզ*», «*Չխմուզ-կսկծու մեռուզ*»: (Վերջինս, ըստ երևույթին, վերաբերում է բժշկի կողմից խմելն արգելելուն -ԱՍ): (ԱՍՇՀ)

Սրանք բոլորն էլ քյավառյան գերեզմանաքարային գրությունների շարքի անեկդոտներից են: Ի դեպ, Գավառի գերեզմանատան տապանաքարերից մեկի վրա գրված է. «*Անցո՛րդ, կներես, որ հեղըդ չեմ կանա խմեմ*»՝ մի անգամ ևս հաստատելով ու հավաստելով այդ ասպարեզում քյավառցիների գերազանցությունը:

դ. հուղարկավության արարողակարգային ծախսերին մասնակցած-չմասնակցած անձանց մատնանշմամբ.

«*Հիշատակ աղջիկներից՝ Հրուշից, Սիրուշից, Մարգոյից: Համա Մարգուշը փողը*

³²⁹ Անեկդոտներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 22:

չի տվել»³³⁰.

ե. տապանաքար գցողի և մահվան պատճառ հանդիսացողի մատնանշմամբ.
«Կնոջից, երեխաներից և իմ էջ խելքից»: (ԱՍՇՀ)

զ. երկիմաստ՝ բառախաղով մատնանշելով թե՛ քարը գցողին, թե՛ մահվան պատճառ հանդիսացողին.

Գերեզմանոցում. //– Էս ի՛նչ էլ ջահե՛լ ա մեռել, հետաքրքիր ա՛ ինչի՛ց ա մեռել, –
ափսոսանքով ասում է մեկը:

– Խոմ անգրագետ չե՞ս, տենըմ չե՞ս՝ տակին գրած ա. «Կնոջից», – պատասխանում է կողքինը: (ԱՍՇՀ)

է. մաղթանքի կառուցվածքով՝ կապված կտակի հետ.

Մի մարդ մահանում է, և կինը շիրմաքարին գրում է. «Հանգչիր խաղաղությամբ»: Բայց հետո երբ իմանում է, որ ամուսնու կտակի մեջ ինքը չկա, շիրմաքարին ավելացնում է. «քանի դեռ չեմ էկել»: (ԱՍՇՀ)

Մեր օրերում կան մարդիկ, որոնք խղճի հանգստության համար իրենց կենդանության օրոք կնոջ կամ ամուսնու մահից հետո շիրմաքարին պատկերել են տալիս նաև իրենց նկարը՝ տակը գրել տալով անուն-ազգանունը, ծննդյան տարեթիվը և մահվան տարեթվից մի երկու նիշ: Անցյալ դարի երկրորդ կեսերի գերեզմանաքարերի վրա նույնիսկ ջնջումներ կան, քանի որ շիրմաքարը գցող կողակիցն իր մահվան տարեթվի «հաշվարկը» սխալ է կատարած լինում՝ 20-րդ դարավերջի փոխարեն 21-րդ դարասկզբում հրաժեշտ տալով կյանքին: Նման շտապողականությունն, ինչ խոսք, չէր կարող վրիպել զվարճախոս ժողովրդի աչքից: Թե՛ մեր օրերում, թե՛ անցյալում այդ թեմայով երգիծական մանրապատումներ են ստեղծվել, որոնցից մեկը դեռ 19-րդ դարի երկրորդ կեսին է գրառել Գալուստ Շիրմագանյանը: Վեճի ժամանակ նախօրոք իր համար շիրմաքար քաշողին այսպես է նախատում նրա ծանոթներից մեկը. «Տո՛, դու էն մարդը չե՞ս, որ ութ տարի է՛ հոգեհան հրեշտակին էլ ես խաբում: Նա գալիս է գերեզ-

³³⁰ Լոռվա զվարճապատումներ, հավաքեց և մշակեց Ս. Ճշմարիտյանը, Գյումրի, «Կուսայրի» հրատ., 1992, էջ 9:

մանատունը, տեսնում է գերեզմանաքարդ, կարծելով որ մեռած ու թաղված ես նրա տակին, քեզանից ձեռն է վերկալնում. թէ ոչ, վաղուց հոգիդ առած կլինէր, ու մենք էլ քեզանից ազատուած կը լինէինք³³¹»:

Ըստ դիցաբանության՝ Գաբրիել հրեշտակապետը Աստծու սուրհանդակն է, և նրա ցուցումով է հոգեառը հանգուցյալի հոգին տեղափոխում անդրաշխարհ՝ դրախտ կամ դժոխք: Եթե վաղնջական ժամանակներում հնագույն ժողովուրդները Աստծու հրեշտակապետի հետ կապված մի շարք պատումներ են ստեղծել և խեղճացել իրենց իսկ ստեղծած հորինվածքների առաջ, ապա ուշ շրջանում արդեն հոգեառ հրեշտակին, դրախտին ու դժոխքին առնչվող ժողովրդական ստեղծագործությունները կա՛մ բարոյախրատական ուղղվածություն ունեն³³², կա՛մ էլ երգիծախառն բնույթի են և շրջապատը լցնում են կենսախնդությամբ ու առողջ ծիծաղով.

Մի օր կինը հարցնում է.

– Ավե՛տ, էսա մեծացել ենք, բա որ Գաբրիել հրեշտակը հանկարծ գա, առաջ որի՞ս կտանի:

Ավետ ապերը «լավ չլսեց», թե խոսքը հրեշտակին է վերաբերում, ասաց.

– Գաբրիելը աչքը շոռ³³³ մարդ ա, էն օրը կգա, որ ես ջաղացը գնացած ըլնես³³⁴:

Հուլարկավորության ժողովրդական ծիսակարգային տարրերի զավեշտալի դրսևորումներին զուգահեռ՝ քիչ չեն նաև կրոնական արարողակարգային տարատեսակ տարրերով հայկական անեկդոտները, որոնցում ինքնաբուխ ծիծաղ հարուցող զավեշտի աղբյուր է դառնում եկեղեցու սպասավորի կիսագրագիտությունը կամ անգրագիտությունը՝ առանց «Մաշտոցի»՝ բերանացի ոչ մի աղոթք ասել չկարողանալը:

³³¹ Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 152-153:

³³² ՀԱԲ, հատոր 2, Փորքշեյան Խ., Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Եր., ԳԱ հրատ., 1971, էջ 78:

Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 100:

ՀԱԲ, հատոր 11, Միքայելյան Գ., Նոր Բայազետ, Եր., ԳԱ հրատ., 1980:

³³³ Աչքը շոռ – կնամոլ:

³³⁴ «Եղինջ» երգիծական թերթ, Վանաձոր, մայիս, 1991, էջ 5:

Պարսկահայոց թաղման ծիսակարգին առնչվող սալմաստյան երգիծապատումում «քոռաֆահմ» տերտերին կանչում են մի ազիզ մեռելի վրա աղոթք ասելու: Թարսի պես աղոթագիրքը գոտու տակից ընկնում է շավարի մեջ, և մոլորված տերտերը ստիպված բանավոր «խոքոց խանգուցելոց» է ասում. «Շըլվարիս մեչին ծեր մեռլի կլխին ըլի...», ինչի համար էլ մեռելատերերը տերտերին քոթակ են տալիս՝ «սեվը պերեսեն...»³³⁵: **Տե՛ս Հավելված 2, թիվ 5:**

Թաղման արարողակարգերին վերաբերող գվարճապատումներից մեկում էլ գավեշտի ստեղծման պատճառ է դառնում հանգուցյալի և ավետարանում եղած անունների համընկնելը.

Քահանայի՝ ավետարանից կարդացած «Ղազարոս մեռաւ և ես ուրախ եմ...» հատվածը զայրույթ է առաջացնում եկեղեցում աղոթող որդեկորույս մոր մեջ, և նա բացականչում է. «Թաղե՛մ գլուխդ, հալբաթ ուրախ կը լինիս, համ էլ՝ ժամոցն առար ու քէլէխ կերար, էլ ինչի՞ ուրախ չես լինի՞»³³⁶:

Զավեշտ է ստեղծվում նաև ժողովրդական դարձվածքը բառախաղով արտահայտելիս.

Դսեղեցի Տեր Հովհաննեսը գնում է Քարինջ՝ մեռել թաղելու: Ճանապարհին հանդիպած գյուղացիների՝ «Խեր ըլի» հարցին քահանան պատասխանում է.

– *Ինձ հըմա խեր ա, համա տիրոջ տունը քանդվել ա՞*³³⁷:

Հուղարկավորության արարողակարգի հետ կապված հայ ժողովրդական երգիծական մանրապատումները, բացի այն կարևոր գործառույթից, որ կատարում են (այն է՝ անգամ ցավ ու դարդի մեջ չընկճվել, պահպանել տոկունությունը, կենսախնդությամբ շարունակել ապրել ու արարել), ունեն ճանաչողական վիթխարի արժեք: Լինելով մարդկության ամենահին ժողովրդական ծիսակարգերից մեկը՝ դրանք իրենց մեջ ամբարել և պահպանել են այդ արարողակարգին առնչվող բազմաթիվ ինքնատիպ տարրեր, որոնք

³³⁵ ՀԱԻ-ի բանահյուսության արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, FFI, 1535:

³³⁶ Ծիծաղի տկճոր: Մոլլա Նասրեդինի առակներ, ծիծաղաշարժ անեկոսներ և սրախոսությունների ժողովածու: Կազմեց՝ Արտեմ (Յարութիւն) Եսաեան, Թիֆլիս, տպարան Էպոխա, 1913, էջ 82:

³³⁷ ՀԱԲ, հատոր 20, Գևորգյան Թ., Լոռի, Եր., ԳԱ հրատ., 1999, էջ 158:

պատկերացում են տալիս վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը ապրած հայ մարդու կյանքի, կենցաղի, սովորությունների, նիստուկացի, լեզվամտածողության, մարդկային փոխհարաբերությունների և այլ երևույթների վերաբերյալ:

2.3. Հայոց ցեղասպանությունը³³⁸

Առաջին հայացքից վերնագիրը կարող է արտառոց ու անհեթեթ թվալ. վիշտ, տխրություն և... երգիծանք, հումոր:

Ինչպես վկայում են գրավոր և բանավոր աղբյուրները, հայոց Մեծ եղեռնը իր անդրադարձն է գտել հայ ժողովրդական վիպական և քնարական բանահյուսության մի շարք տեսակներում (ավանդազրույց, ժողովրդական հուշապատում, առած-ասացվածք, անեծք, տեղահանության, կոտորածի, օրորոցային, լայաց կամ սգո երգեր և այլն): Իսկ բանավոր ստեղծագործության այնպիսի տեսակ, ինչպիսին երգիծական մանրապատում-զվարճախոսությունն է, ինչպե՞ս էր արտացոլելու ցեղասպանության թեման...: Մարդու անձնական վշտին վերաբերող բազում անեկդոտների առկայությունը այնուամենայնիվ ինչ-որ տեղ պատճառաբանված ու հասկանալի էին, սակայն ազգային ողբերգությունն ինչո՞վ կարող էր առնչվել երգիծանքի ժանրի հետ...

Մեծ եղեռնի 100-ամյակին նախորդող տարում, իբրև այդ ոճրագործության փաստացի ապացույցներ, փորձեցինք տպագիր զանազան պատմաազգագրական ժողովածուներից, հուշագրություններից և անեկդոտների գրքերից, ինչպես նաև մեր անձնական գրառումներից դուրս գրել և ի մի բերել ցեղասպանությանն առնչվող զվարճապատում-զվարճախոսական բնույթի նյութերը և ի հակադրություն Թուրքիայի ժխտողական քաղաքականության՝ փորձել բանագիտական մոտեցումներին զուգահեռ ներկայացնել նաև դրանց փաստավավերագրական արժեքը:

Մեր ցավերի ցավը համարվող Թուրքիայի կողմից իրագործված հայոց ցեղաս-

³³⁸ **Սարգսյան Ա. Շ.**, Հայ ժողովրդական երգիծական մանրապատումները և զվարճախոսությունները որպես ցեղասպանության վկայություններ «Հայկազեան Հայագիտական հանդես», հատոր Լե (35), Լիբանան, Պեյրուֆ, 2015, էջ 543-557:

պանությունն ու հայրենի երկրի հայաթափումը 1915-23 թվականներով չի սահմանափակվում: 1894-96 թթ. շուրջ 300 հազար հայերի կոտորածով Աբդուլ Համիդը վերջնականապես կյանքի կոչեց Արևմտահայաստանի հայաթափման հրեշավոր ծրագիրը, իսկ 1909թ. Ադանայի հայերի ջարդով իթթիհատականները ցույց տվեցին համիդյան ծրագրին հարազատ մնալու հաստատակամությունը, այնուհետև 1915-18 թվականներին վերահաստատեցին վաչկատու ցեղերին բնորոշ իրենց գազանային դիմագիծը: 1918-23 թվականներին և դրան հաջորդած տասնամյակներին բուլղարիկ-հանրապետական հայացքների գլխաշորով քողարկված քեմալականներն ու նրանց հաջորդները կոտորածներով, ուժացման և մշակութային ջարդերով շարունակեցին իրենց հովվապետերի ու նրանց ոհմակների կիսատ թողած գործը, որ կարողանային հայոց հողից իսպառ վերացնել նրա արարչագործ տիրոջ բոլոր հետքերը...

Այդ տարիներին հուշապատումներ գրեթե չեն գրվել: Իսկ ի՞նչ գրելու, հիշվելու բան էր, որ օր առաջ արձանագրվեր, թղթին հանձնվեր... Փրկվածներից շատերը լուռու մունջ տանում էին այդ ահասարսուռ ժամանակներում բաժին հասած հուշերը: Սակայն վերապրածների մեջ եղան նաև մարդիկ, որոնք տարիներ անց կարողացան ուժ գտնել՝ այդ օրերին ու դրա հետևանքներին առնչվող տարատեսակ հուշերը գրառելու, գալիք սերունդներին ի պահ տալու թուրքի ու նրա աջակիցների կողմից իրագործված վայրագությունները՝ որպես աշխարհի քաղաքակիրթ մարդկության երեսին դաջված ամոթանքի խարան, որպես մարդկությանն ուղղված սթափության կոչ...

Ցավը մի փոքր մեղմվելուց հետո հուշագրություններին զուգահեռ՝ նրանք պատահ-պատահ սկսում են հավաքել, գրի առնել նաև ցեղասպանությանն առնչվող զվարճապատում-զվարճախոսությունները: Վերքերը բուժել սկսող եղեռնից հրաշքով փրկվածների բեկորներն ու նրանց ժառանգները փորձում էին երգիծանքի կաղապարի մեջ տեղավորել ոչ թե բուն եղեռնի օրերի, այլ դրանց հաջորդած ժամանակների զավեշտալի պատմությունները:

Աշխարհով մեկ ցրված սփյուռքահայության համար նմանատիպ նյութերի հրա-

տարակումը միայն ցանկության և նախաձեռնության հարց էր, ինչում մենք համոզվում ենք արտասահմանում տպագրված հուշապատումների և անեկդոտների մի շարք ժողովածուների առկայությամբ: Դրանց հեղինակները ամեն կերպ ձգտում էին հոշոտված հայրենիքի իրենց անկյունը վերակենդանացնել, տալ հայրենի բնօրրանում երբեմնի ապրած հայության կյանքը, ցեղասպանության հետևանքով աշխարհով մեկ ցրված նրանց բեկորների հիշողություններն ու կատարված զվարճալի պատմությունները³³⁹:

Այլ էր պատկերը Խորհրդային Հայաստանում: Մինչև 1960-70-ական թվականները ցեղասպանության և պահանջատիրության թեմայով խոսելն անգամ արգելված էր, ուր մնաց թե հուշապատումներ և անեկդոտներ հրատարակելը: Միայն Ստալինի մահից հետո այստեղ ևս սկզբում վախով ու ցածրաձայն, այնուհետև բարձրաձայն սկսեցին պատմել, որոշ ժամանակ անց նաև հավաքել ու տպագրել թե՛ եղեռնի հուշագրությունները, թե՛ քաղաքական ու ցեղասպանության թեմաներով երգիծապատում-զվարճախոսությունները:

Ցեղասպանության թեմային առնչվող երգիծապատումները մինչև 1960-ական թվականները գերազանցապես ծավալուն սյուժե ունեն, ժողովրդական հուշապատում-զրույցների տեսքով են հանդես գալիս, հերոսները եղեռնի կնիքը կրող կոնկրետ դեմքեր են, և անսպասելի ծիծաղ հարուցող վերջաբանային ավարտն է հուշում նրանց տեսակային հատկանիշը:

Այսպես, վարդապետ Սարգիս Բախտիկյանի «Բերան դրուելիք է» զվարճապատումում 1895թ. Շեփիկ գյուղում տեղի ունեցած ջարդն ու ավերածությունները ոչ թե լաց ու լալկանությամբ է ներկայացվում, այլ վիշտը պայքարով, աշխատանքով ու կա-

³³⁹ Մարաշ, Երկասիրեց **Գր. Հ. Գալուստեան**, Հրատարակութիւն Մարաշի հայրենակցական միութեան կեդր. վարչութիւն, ԱՄՆ, Նիւ Եորք, 1934թ., Վերահրատարակված՝ 1988թ.: Պատմութիւն Անթէպի հայոց, Գ հատոր, խմբագիր **Երուանդ Պապաեան**, Լոս Անջելէս, 1994: Հայկական զրոյցներ. առակներ, առածներ, մանրավէպեր, զուարճալի ասացուածքներ և իմաստուն խօսքեր, պատրաստեց **Կարապետ քահանայ Գալֆաեան**, Լոս Անջելէս, Պօզանեան տպագրութիւն, 1944, վերահրատարակութիւնը՝ Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խօսքեր և այլն), պատրաստեց **Կարապետ քահանայ Գալֆաեան**, Լիբանան, Պէյրութ, Տպարան՝ Կ. Տօնիկեան, 1957: **Ազնավորեան Ս.**, Հէքիաթներ, զուարճալիքներ, Միջիկըն, Տիպորն Հայթս, ԱՄՆ, 1971: Միջ-գաւառական անեքթոտներ: Հաւաքեց եւ ներկայացուց **Յակոբ Չոլաքեան**, Հալէպ, 1988 և այլն:

նուցելով հաղթահարելու ոգին է փոխանցվում գալիք սերունդներին...

Հակիրճ ներկայացնելով 1895-ին թուրքերի իրագործած ջարդերի և ավերածությունների պատկերն ու ջարդարարների դեմ շեփիկցիների ապստամբությունը, ապա վերջիններիս զինաթափ անելը, գյուղը քանդելն ու մարտկոց ծառայած եկեղեցին հիմնովին ավերելը՝ Բախտիկյանը գրում է. «Այրեր էին ու հիմնայատակ կործաներ Աստուծոյ տունը, որ գիւղացիք ալ չաղօթեին»:

Պատումի սկզբում Բախտիկյանը ներկայացնում է ջարդի հաջորդ տարում շեփիկցիների կենսունակության և գոյության պայքարի նկարագիրը. «Հոս ու հոն ապաստան գտած Շեփիկցիներ, գիւղ հավաքուած, սկսեր էին վար ու ցանի նայիլ, սկսեր էին ատրակներէն փինիկի նման նոր կեանք առնել: Այս վերակառուցման գործին մէջ, Խելացին անկասկած իր մեծ դերը ունէր, կ'աշխատէր, անդադար կ'աշխատէր: Անոր համար չկար կիրակի, չկար տօն ու տօնական օրեր, կա'ր շինարարութիւն և կա'ր աշխատանք»:

Այս նախաբանից հետո է ներկայացվում ավերակ եկեղեցու մնացորդները օրհնելու նպատակով քաղաքից քահանա հրավիրելու, «զայն վերակառուցանելու մասին մտածելու և ժողովուրդին Սրբութիւն, Հաղորդութիւն տալու» հետ կապված պատմությունը և Շեփկա Խելացիի հետ տեղի ունեցած զվարճալի երկխոսությունը:

Բոլորը հավաքվել են, բացի Խելացիից, որ «անդին, հեռուն գլուխը կախ կ'աշխատէր առանձին»:

– Աղբա'ր Խելացի, աղբա'ր... //- //- Աղբա'ր, աղբա'ր... //- Ծօ տնաւեր, ի'նչ կայ, ի'նչ... //- Ծօ, էկո'ւր, էկո'ւր, ծօ Տէր Պապը քաղքէն էկէր է, ծօ սրբութիւն կուտատեա, սրբութիւն... //- Իմ փայլս փէնճիրէն թող դնէ, փէնճիրէ'ն... //- Ծօ, աս փէնճիրէ դրուելիք չէ, բերան դրուելիք է, բերա'ն, բերա'ն...»:

Իսկ «Տղա'ս, անիկա ես ալ կ'առնեմ» զվարճապատումում կոտորածներից հրաշքով փրկված մի ընտանիքի բաժին հասած ճակատագրի հակիրճ, բայց միաժամանակ խոսուն նկարագրությամբ ներկայացվում է փախեփախի ժամանակ կորած և նորից

հայտնված կնոջ ու դեգերումներից հետո մեկ ուրիշի հետ կրկին եկեղեցիով պսակված ամուսնու անելանելի վիճակը և դրանից դուրս գալու «ելքի» առաջադրումը: Քրիստոնեական կրոնն արգելում է բազմակնությունը.

– *Տղա՛ս, մեր եկեղեցին պսակի վրայ ուրիշ պսակ չընդունիր, բայց գէշ օրերու մէջ այսպիսի բան մը ակամայ պատահած է: Ասոր մէջ դուն յանցաւոր չես, ժամանակն ու պայմաններն են յանցաւորը, բայց կրնաս նպաստել այս թնջուկի լուծման. ըսէ նայիմ, ո՞ր կինդ կ'ընդունիս և անոր հետ կենակցիլ կ'ուզես, առաջինի՞ն հետ թէ՞ երկրորդին...:*

Նախապատվությունը տրվում է ավելի երիտասարդ, գեղեցիկ և վայելուց հագնված երկրորդ կնոջը: Որքան էլ նկարագրվող իրադարձությունները ծանր լինեին, և ըստեղծված իրավիճակը՝ անելանելի, Հակոբ քահանայի խոսքն ու առաջադրած «ելքն» էլ զվարճապատումում դառնում է անսպասելի ծիծաղի աղբյուրը.

– *Օղո՛ւ, անիկա ես ալ կ'առնեմ, մարիֆէթը միւսը առնելն է: Եկու՛ր Հայ Քրիստոնէի բարի հոգիով մը՝ միւսը առ. ասիկա անտէր չի մնար, մի վախնար. բայց մեղք կ'ըլլայ միւսին...³⁴⁰: **Տե՛ս Հավելված 2, թիվ 6:***

Իսկ «Վերջին վակոնին մէջ նետէ» զվարճապատումը Մեծ եղեռնից մազապործ հայության այնթապյան բեկորների մասին է: 1920-ականների սկզբներին տախտակաշեն հյուղակների քաղաք Հայկական Հալեպում անգործությունից ու անճարակությունից խմելու մեջ սփոփանք գտած հինգ տղամարդ հայտնվում են ոստիկանատանը և սթափվելուց հետո խորամանկությամբ միամիտ պահակի գլխին խաղ խաղալով՝ ազատվում ծեծ ու խոշտանգումից: Ոստիկանատան պահակի և «լոքոմոթիվ» դարձած «վայրաշարժ» խմբապետի երկխոսությունն էլ պատումում դարձել է զավեշտ առաջացնող վերջաբանը³⁴¹: **Տե՛ս Հավելված 2, թիվ 7:**

Ի տարբերություն հետեղեռնյան՝ մինչև 1960-ականները ստեղծված ծավալուն կամ փոքրածավալ սյուժեով զվարճապատումների՝ 1960-ականներից հետո շրջանառ-

³⁴⁰ Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէյրոյթ, Տպարան՝ Կ. Տոնիկեան, 1957, էջ 156-157:

³⁴¹ Պատմություն Անթեպի հայոց, Գ հատոր, խմբագիր Երուանդ Պապայեան, Լոս Անջելես, 1944, էջ 384-385:

վող ցեղասպանության նյութերը հիմնականում կարճաժամ խտացումներ են՝ զվարճախոսություններ, մի մասն էլ՝ երկխոսական զվարճալիքներ: Դրանց մեջ հայոց ցեղասպանությունը ներկայացվում է՝

ա. Խորհրդային տարիներին լուցրած ցավի պոռթկմամբ և պահանջատիրության տեսքով:

1965 թվականի ապրիլի 24-ին բողոքի և պահանջատիրության ցույցերն ընդգրկեցին ողջ Խորհրդային Հայաստանը: Դերասան, ռեժիսոր Գ. Չալիկյանը սևակյան իր հուշապատումում Երևանում տեղի ունեցած փոթորկալից այդ օրերի մասին ահա թե ինչ է գրում. «Աշխարհասփյուռ հայ մարդը գրկաբաց-սրտաբաց ընդունեց «Չանգակատունը»: Նրա ղողանջները շուտով իրենց արձագանքն ունեցան եղեռնի 50-ամյակի պոռթկման օրերին, որպես զարթոնքի կոչ: Ժողովուրդը հորդեց, ծովացավ կենտրոնական հրապարակում, ալեկոծվեց՝ «հողե՛րը, հողե՛րը» մոնչալով: Հրշեջ մեքենաները ջրախեղդ էին անում ամբոխին...»³⁴²:

Ազգային ցավի ժայթքումը ջրի շիթերով լուցնելու՝ կառավարության ձեռնարկած այդ քայլը արձանագրվեց նաև զվարճախոսությունների մեջ.

1965 թվականի ապրիլի 24-ին՝ եղեռնի 50-ամյակի օրը ժողովուրդը հրաբխի պես պոռթկաց ու ժայթքեց՝ լցվելով հրապարակ, այնուհետև՝ օպերայի մոտ՝ վանկարկելով.

– Հո-ղե՛րը, հո-ղե՛րը...

Ու հանկարծ հայտնվում են հրշեջ մեքենաներն ու ջրի շիթերով փորձում ցրել ժողովրդին:

– Ժողովո՛ւրդ, – գոռում է ինչ-որ մեկը՝ խառնված ամբոխի միջից, – ջուրը տվին, մնացին հողերը...

Այդ օրերին ժողովրդի մեջ սկսեց շրջանառվել «Մենք հող ենք ուզում, սրանք ջուր են տալիս» անեկդոտային արտահայտությունը...: (ԱՍՇՀ)

Ի դեպ, այդ զվարճախոսային արտահայտությունը վերակենդանացավ շուրջ Ե-

³⁴² **Չալիկյան Գ.**, Անլուելի սիրահարը, Եր., 2004, ՀԳՄ հրատարակչություն, էջ 64-65:

րեք տասնամյակ անց՝ այս անգամ Ղարաբաղյան պահանջատիրության շրջանում:

Հողերի պահանջատիրությունը արտահայտված է նաև Լոռիում գրանցված պատումներից մեկում, որտեղ անսպասելի ծիծաղը դրսևորվում է միամիտ ու այդ պոռթկումներին անտեղյակ ու անհաղորդ լոռեցի զվարճախոսի պատասխանի միջոցով.

1965 թվականին Եղեռնի 50-ամյակի ցույցերի ժամանակ Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) հրապարակում հավաքված ժողովուրդը վանկարկում էր.

– Հո-ղե՛-րը, հո-ղե՛-րը, հո՛-ղենք ու-զում, հո՛-ղենք- ու-զում...

Ցուցարարներից մեկը, տեսնելով լոռեցի Ռուբենին, հարցրնում ա.

– Ռուբե՛ն դայի, դու էլ ե՛ս հողերն ուզըմ: // Ասում ա.

– Չէ, բալա՛ ջան, ինձ մի ավրո ավազ ա պեղկը... (ԱՍՇՀ)

բ. Հայկական գենի հավերժության ու ծլարձակման մասին Սարոյանն ասում էր. «Եթե աշխարհում անգամ մեկ հայ կենդանի մնար, հայը ծլարձակելու էր, և ժողովուրդը շարունակելու էր գոյատևել ու իր թոհիքներով զարմացնել աշխարհին...»:

Անեկդոտներում դա ապացուցվում է մտքի թոհիքներից մեկի՝ շախմատի հայ երիտասարդների աներևակայելի հաջողությունների ֆոնին.

Ջորջ Բուշը իր մոտ է կանչում երկրորդ տեղը գրաված ԱՄՆ-ի շախմատի օլիմպիական հավաքականի անդամներին և ասում. // – Էդ ու՛մ եք պարտվել: // Ասում են՝ հայերին: // – Ի՛նչ հայ, բոլոր հայերին 1915 թվին չկոտորեցի՞ն: // – Բանից պարզվում է՝ վեց հոգի մնացել էր³⁴³: (ԱՍՇՀ)

գ. Անսպասելի ծիծաղը դրսևորվում է նույնիսկ Մեծ եղեռնից հետո թուրքին անընդհատ հետապնդող հայկական հարցը Աստծու օգնությամբ վերջնականապես «լուծել» փորձելու միջոցով.

Թուրքերը Աստծուն են դիմում, թե՛

– Տե՛ր Աստված, Հայաստանում մի լավ երկրաշարժ արա, որ էս հայերից էլ

պրծենք, հայկական հարցից էլ:

³⁴³ Զվարճախոսության գրառումը կատարվել է Հայաստանի շախմատի հավաքականի՝ 2006թ. աշխարհի չեմպիոն դառնալուց մեկ շաբաթ անց, իսկ տարբերակը՝ 2 ամիս անց:

Հաջորդ օրը Վանի երկրաշարժն է լինում: Խառնված թուրքերը նորից են Ասործուն դիմում, թե՛

– Ասորվա՛ծ ջան, ախր քեզ խնդրեցինք, ասինք՝ երկրաշարժը Հայաստանու՛մ ա-րա, էս ի՞նչ օյին բերիր մեր գլխին:

Ասորվածն ասում է.

– Բայց ես ի՞նչ մեղավոր եմ. երևի ձեռքիս քարտեզը հին Հայաստանինն է եղել... Տրբրկ.՝ Ես ի՞նչ մեղավոր եմ. Հայաստան ասելիս ես տարածքն եմ հասկանում: (ԱՍՇՀ)

դ. Մեր գրառած նմուշներից մեկում էլ զավեշտ է ստեղծվում միտինգավորի «գործողության» միջոցով. խորհրդային տարիների արգելված թեմաները 1980-ականների վերջին կտրել էին բռնատիրության կապանքները. Ղարաբաղյան շարժման շնորհիվ հայոց ցեղասպանության և պահանջատիրության վերաբերյալ կորցրած հիշողությունն էր վերականգնվել.

Ղարաբաղյան շարժման ամենալարված օրերին մեկը միտինգից հետո տաքսի ա նստում ու ասում.

– Քշի Թուրքիա: // – Ո՛ր... // – Ասի՛ Թուրքիա: // – Թուրքիա՞ ինչ գործ ունես, ա՛յ ախպեր: // – Թուրքերը հայերին կոտորել են: // – Հա, բայց դա տասնըհինգ թվին ա եղել: // – Ես հենց նոր իմացա. քշի՛ Թուրքիա... (ԱՍՇՀ)

ե. Ջավախքյան զվարճապատումներից մեկում էլ եղեռնի հետևանքով մարդկա-յին կորուստների առկայության պայմաններում նյութական արժեքի անխաթար վիճակը «բախտավորություն» համարելն է դառնում զավեշտի աղբյուրը.

Գաղթից նոր էին վերադարձել: Մաթոսենց գերդաստանից ոչ ոք կենդանի չէր մնացել: Հարևան Զարուհին հիացմունքով նայեց Մաթոսենց տներին ու ասաց.

– Բախտավո՛ր Մաթոս փաշա, ի՞նչ դըրդ ունիս, տներդ ղուռուլի՞³⁴⁴ մնացել են³⁴⁵:

զ. Յեղասպանությունն արտացոլվել է գաղթականների կյանքի մի փոքրիկ դրվագի նկարագրությամբ.

³⁴⁴ Ղուռուլի – կանգուն:

³⁴⁵ Գրիգորյան Հ., Սրամտում է Ջավախքը: Անեկդոտներ, Եր., «Նաիրի» հրատ., 1992, էջ 60:

Արցախցիների՝ «Ե՛ր կըցեք, քինանք մեր տոն, մխրե գիլեջա (մի քիչ զրույց) անենք...» և վանեցիների՝ «Վախտ կերթա: Պա գիլեջան խո՞րի, ինչի՞ չիք պիրե՛ անենք...³⁴⁶» բարբառներով խոսակցությունն էլ պատճառ է դառնում զավեշտի առաջացման. *գիլեջա անել*-ը գաղթականները ընկալել են ինչ-որ աշխատանք անել:

Է. Ինչպես օտարության մեջ հայտնված ամեն մարդ, այնպես էլ ցեղասպանության հետևանքով աշխարհով մեկ սփռված հայ գաղթականը մինչև լեզվական խոչընդոտները հաղթահարելը օտարազգիների հետ շփվելիս հաճախ է զավեշտալի իրավիճակների մեջ հայտնվում՝ առիթ հանդիսանալով բազում երգիծական մանրապատումների ստեղծման.

Զվարճապատումներից մեկում Ամերիկա գաղթած այնթապցու՝ *I want a knife* (դանակ մը կ'ուզեմ)-ի փոխարեն արտաբերած *I want a wife* (կնիկ մը կ'ուզեմ) արտահայտությունն է դարձել անսպասելի ծիծաղ հարուցող միջոցը³⁴⁷: ***Տե՛ս Հավելված 2, թիվ 8:***

ը. Եղեռնն իր արտացոլանքն է գտել նաև ցեղասպանությունը ձեռնարկող թուրքերի և նրանց աջակցող քրդերի հանդեպ հայի ունեցած վերաբերմունքի և մտածողության մեջ.

Թուրքը, Քիւրդը եւ Սասունցին կը կանչուին Աստուծոյ քով: Աստուած կը հարցնէ.

– Ի՞նչ կը փափաքիս աշխարհիս վրայ: // Քիւրդը կը պատասխանէ. //– Թուրք չմնա աշխարհիս վրայ: //Թուրքին կը հարցնէ, թուրքն ալ կ'ըսէ. //–Քիւրդ չմնա աշխար-

հիս վրայ: //– Դուն ի՞նչ կը փափաքիս, – կը հարցնէ Աստուած Սասունցիին: //– Ես բան մը ինդրած չունիմ, դրացիներուս փափաքը կատարէ միայն, – կը պատասխանէ Սասունցին³⁴⁸:

թ. Որքան էլ թուրքը փորձեր անի մարդկությունից թաքցնել իր հանցանքը, միևնույնն է, ցեղասպանությունն անտես մի գործիքով ծակծկելու է նրա ուղեղը. նրա

³⁴⁶ **Ղուլյան Բ.**, Գյուլիստան. Պատառիկներ մոտիկ անցյալից, Եր., «Զանգակ-97», 2004, էջ 44:

³⁴⁷ Պատմություն Անթեպի հայոց, հատոր Գ, Խմբագիր Երուանդ Պապայեան, Լոս Անջելես, 1994, էջ 380:

³⁴⁸ Միջ-գաւառական անեքթոտներ: Հաւաքեց եւ ներկայացուց Յակոբ Զոլաքեան, Հալէպ, տպարան Արեւելք, 1988, էջ 103:

մտածողությունից հնարավոր չէ հեռացնել անընդհատ հետապնդող «ներքին և արտաքին» թշնամուն.

Մի թուրքի պարտիայի շարքերն են ընդունում, հարցնում են.

– Ովքե՞ր են մեր թշնամիները: // – Հայերը: // – Դրանք մեր ներքին թշնամիներն են, արտաքինի մասին եմ հարցնում:

– Արդասահմանի հայերը, – պատասխանում է թուրքը³⁴⁹:

Ժ. Բազմաթիվ երգիծական մանրապատումներ կան՝ կապված հոգևորականների կողմից հայիոյանքի ճարահատ կիրառությունների հետ: Դրանք առավել ընդգծված դրսևորում են ստանում հատկապես թուրքերի սանձարձակությունների ու կոտորածների ժամանակ: Նման պարագաներում ամեն մի քրիստոնեական բարոյախոսություն անզոր է դառնում հակազդել մարդու դիմակ հագած գազանին, և հետևում է եզրակացությունը. թուրքին դիմագրավելու միակ ելքը հենց իր՝ թուրքի լեզվով խոսելն է: «Տէր Գէորգ պապայի «քաջագործություններէն» մանրապատումում երբ փորձում են հայիոյելու համար դիտողություն անել, թե՛ «մենք եկեղեցիի պաշտօնեաներ ենք, կը վայելէ՞ր այդ լեզուագարութիւնը», հետևում է կտրուկ և ուղղորդող պատասխանը.

– Պատուելի՛... դուն Ս. Գրքի լեզուով խօսեցար եւ տեսար թէ ի՛նչ ընդունելութիւն գտանք. այդ անիծեալներուն պէտք էր խօսիլ իրենց հասկցած լեզուով, իթինքի տէյնէկ...³⁵⁰

Այրված սրտից դուրս ժայթքած զայրույթն է արտացոլված նաև «Հավատացեալ մամիկին բողոքը» մանրապատումում, ուր ներկայացվում է եղեռնից մազապուրծ աստվածապաշտ մամիկին, որը «...եաշմախին ծնոտի մասը քիթէն վեր, ճակատի մասը արտեանունքներէն վար պահեց՝ մինչեւ իր մահը: Երբ կին մը տեսնէր աչքերը ծարիր, երեսը ներկուած, բերանը բաց, «մեղա՛յ, մեղա՛յ» ըսելով իր լաչակը անգամ մըն ալ կ'ամրացնէր քթին վրան, և կ'աղօթէ՛ր...

³⁴⁹ Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, Հավաքել և կազմել է Լենա Անթառանյանը, «Վերնատուն» հրատ., Եր., 1994, էջ 59:

³⁵⁰ Պատմութիւն Անթէպի հայոց, Գ հատոր, Խմբագիր՝ Երուանդ Պապայեան, Լոս Անջելես, 1994, էջ 377-378:

Մեր սեւ օրերուն անհկա ալ խառնուեցաւ փարագրութեան կարաւանին և անօթի ծարավ հասաւ Մասնի անապատները և հոն ծախեց ծաւրեց՝ զոր ինչ ունէր և պատերու փակ մնաց փկլոզ և դեռ կ'աղօթէր...:

... Ամէն օր, արէու քիթով անհկա կը շփուէր դիակներու մէջէն, կ'իյնար սար ու ձոր, խոտ կը փնտռէր...: Խոտ գտնելն ալ շնորհ մըն էր այդ օրերուն, բայց «հա՛ց, հա՛ց» ճուացող փոքրիկները ամէն օր խաշած խոտով խաբելն ալ դիւրին գործ չէր...»³⁵¹:

Հավատացյալ մամիկի ըմբոստությունն այս անգամ ուղղվում է այդ անմարդկային տառապանքների ականատես Աստծուն. «Վերջապէս արցունքով թրջուած իր եաշմախը վեր առաւ, բերանը բացաւ, պտղուց մը խոտ մատներուն մեջ, աչքերը երկինք փնկած՝ խաշուած խոտը վեր նետեց և ըսաւ.

– Ա՛ն, Աստուած, կ'ուրուի նէ պատահո մըն ալ դուն կե՛ր...»³⁵²:

Ժա. Բանագետ, ցեղասպանագետ Վերժինե Սվազլյանի գրառած արևմտահայոց ժողովրդական երգիծապատումներից մեկում զավեշտն ստեղծվում է բարբառային «Եա՛, «Սույփ Փյգիչ՝ Սուրբ Փրկիչ» բառակապակցության և թուրքերեն «սյ&ւփյուրգե՛ աւվել» բառի համադրությամբ: Քաջարի զէյթունցիները թուրքերի անօրինությունների դեմ են դուրս գալիս և թշնամու բանակում ահ ու սարսափ և խուճապ տարածում: Զարմացած անօրենները փորձում են այդ գաղտնիքը բացահայտել՝ նրանց արտաբերած «ավել» բառի զորության մեջ տեսնելով հայերի հաղթանակների բանալին.

Զէյթունցիները շատ քաջ մարդեր էին: Անոնք երբ միշտ կռիվի կերթային թուրքերուն դեմը, կաղոթեին, օգնության կկանչեին իրենց Սուրբ Փրկիչին, կըսեին.

– Յա՛, Սույփ Փյգիչ, – ու կհաղթեին: // Թուրքերն ալ կզարմանային, կըսեին. //

– Ադ գյավուրները «Սյ&ւփյուրգե» կըսեն, կսկսին կովիլ ու կհաղթեն: «Սյ&ւփյուր-

³⁵¹ Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէյրուֆ, Տպարան՝ Կ. Տօնիկեան, 1957, էջ 150-151:

³⁵² Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէյրուֆ, Տպարան՝ Կ. Տօնիկեան, 1957, էջ 150-151:

գե» թուրքերեն կնշանակե՛ ավել: Ավելը ի՞նչպես անոնց կօգնե՞³⁵³:

Այս պատումի առաջին մասը վիպերգային կառուցվածք ունի. եթե «Կարոս խաչ» վիպերգում թշնամու դեմ կռվելիս հայերին օգնում է նեխուրի՝ քարաուզի դաշտում հայտնված խաչը, «Սասնա ծռերում»՝ Խաչպատարագին, ապա այս զվարճապատումում զեյթունցիներին օգնության է հասնում Սուրբ Փրկիչը, որի բարբառային «Սույփ-Փյոփչ» և թուրքերեն «սյ&սիյուրգե-ավել» արտաբերումների համադրումը մանրապատումում դառնում է զավեշտի մեխը:

Ի դեպ, զեյթունցիների այս ինքնատիպ զվարճապատումի մեկ այլ տարբերակ Հալեպում գրառել և հրատարակել է նաև հայագետ Հակոբ Չոլաքյանը³⁵⁴:

Ժբ. Սյուժետային կառուցվածքով երգիծապատումներից մեկում, որտեղ նաև ցեղասպանության արձագանքն է առկա, զավեշտը դրսևորվում է մի կողմից օտարալեզու դիմելաձևի՝ միս (տիկին) և դանիացի միսիոներուի Քարեն Եփփեի ազգանվան (Եփփե) ու հայերեն միս Եփեի բառակապակցության հարանունությամբ.

– Ամմա՛ն, քա՛, – գըսէ, – մինչ հոս եգա, – անունը չեմ գիդեր՝ ինչպե՛ս խոսիմհեդը:

– Ինչպե՛ս չես գիդեր, միս Եփփե է, – գըսին գիները:

– Ամմա՛ն, – գըսէ, – ես ալ կգարծեի՛ ամեն օր միս կէփե, անգէ է: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հա-**

վելված 2, թիվ 9:

Եթե մինչև 1960-ական թվականները ցեղասպանության թեմայով հրատարակված երգիծական մանրապատումները ծավալուն սյուժետային կառուցվածք ունեին, ժողովրդական հուշապատում-գրույցների տեսքով էին հանդես գալիս, և միայն հանկարծակի վերջաբանային ավարտն էր հիշեցնում նրանց տեսակային հատկանիշը, ապա 60-ականներից հետո կատարած գրառումները ցույց են տալիս, որ դրանք առավելապես սեղմ ու երկխոսական բնույթի են՝ արձարձած թեմայի որևէ բնորոշ դրվագի մատնանշմամբ, ինչը հաստատում են Վ. Սվազյանի, Հ. Չոլաքյանի, Ա. Սարգսյանի և այլոց

³⁵³ **Սվազյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 103:

³⁵⁴ Միջ-գալառական անեքթոններ: Հաւաքեց եւ ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Հալեպ, Տպարան Արեւելք, 1988, էջ 55:

գրանցած նմուշները:

Մի հետաքրքիր հանգամանք ևս. մեր ձեռքի տակ եղած ցեղասպանությանն առնչվող նյութերում գրեթե բացակայում են երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների գերակշռող մասին բնորոշ պատկերավորման տարատեսակ միջոցներով (ժողովրդական դարձվածք, բառազեղչում, բառամիացում-բառաբաժանում և այլն) ու հնչյունական և հնչերանգային զանազան ձևերով ու ոճական հնարանքներով (ձայնեղների խլացում ու խուլերի ձայնեղացում, երգեցիկ տոն, բարձր և ցածր, երկարացման հնչերանգ և այլն) անսպասելի ծիծաղ առաջացնելու դրսևորումները: Ինչպես վերը բերված օրինակներում տեսանք, դրանց փոխարեն անսպասելի զավեշտը հիմնականում իրագործվում է գործողություններից բխող կտրուկ և անակնկալ ծիծաղ հարուցող խոսքի օգնությամբ:

Հայոց Մեծ եղեռնին առնչվող հայ ժողովրդական երգիծապատում-զվարճախոսությունները բանահյուսության մյուս ժանրերից առանձնանում են ոչ միայն իրենց տեսակային առանձնահատկություններով, այլև ցեղասպանությունը հավաստող պատմավավերագրական նյութի մատուցման յուրահատկությամբ:

2.4. Պանդխտությունը (արտագնա աշխատանքը)

Դարեր շարունակ անպետականության, վերջին տասնամյակներին նաև պետականության պայմաններում ահազնացող ազգային չարիքի՝ արտագաղթի ու արտագնա աշխատանքի՝ պանդխտության դեմն ուզեցել են ինչ-որ կերպ առնել ոչ միայն մեր մտավորականները՝ պատմիչներն ու գրողները, այլև հենց ինքը՝ ժողովուրդն իր ստեղծագործություններով: Անտունիները, հանրահայտ «Կռունկը» օտարությունում դեգերող հայի ցավերի ու ապրումների խտացված արտահայտությունն են: Ժողովուրդն այդ ցավն արտահայտել է բանահյուսական մի շարք տեսակներով, սակայն նրա ոգու կորովն ու կենսունակությունը թե՛ անցյալում, թե՛ մեր օրերում նա արտահայտել է նաև երգիծական մանրապատումներով ու զվարճախոսություններով:

Արևմտահայոց պանդխտության թեմայով ժողովրդական ստեղծագործությունները վերաբերում են թե՛ հեռավոր վայրեր արտագնա աշխատանքի մեկնողներին (արևմտահայոց հազարավոր ընտանիքներ հիմնականում Պոլսում էին մի կտոր հաց վաստակելու հենարան գտնում), թե՛ քիչ թե շատ մոտ տարածքները աշխատանքի գնացողներին (երբ Թուրքիայի հայահալած քաղաքականության հետևանքով հայերը երբեմն քրդական շրջանների գյուղերում էին բնակվելու և աշխատելու ելք գտնում):

«Միամիտի մխիթարանք» մանրապատումում Պոլիսի ձուլարաններից մեկի հաստոցին զոհ դարձած հայ պանդուխտի վիճակից մոլորված գավառացի բանվորներին սթափեցնում է նրանց մեջի «խելօքն» իր մխիթարանքի խոսքով.

– Մի՛ լաք, տղա՛ք, մի՛ լաք: Փառք տուէք Աստուծոյ, որ Սարգիսը այս փոքրիկ մեքենային տակը մնաց: Անգամ մը խորհեցե՛ք թէ ի՞նչ պիտի ըլլար մեր Սարգիսին հալը, եթէ անիկա այս փոքրիկ մեքենային տեղ մնար սա հսկա՛յ մեքենաներէն մէկուն տակը...³⁵⁵: **Տե՛ս Հավելված 2, թիվ 10:**

Զվարճապատումներից մեկում էլ³⁵⁶ հայրենի տան ու ընտանիքի անդամներից որևէ լուր ակնկալող Պոլսում հայտնված հայ պանդուխտը հանդիպում է անընդհատ վատ լուրեր հաղորդելով հայտնի *չարիօսիկ* հայրենակցին և հարցուփորձ անում: Այդ կցկտուր երկխոսությամբ էլ բացահայտվում է պանդուխտի ընտանիքին պատուհասած ողբերգությունների շարանը: Հենց դրանց ներկայացնելու կերպն էլ (ամեն մի ողբերգության ներկայացնելուց բխեցնել հերթական դժբախտությունը) դառնում է պատումի գավեշտի դրսևորման միջոցը: **Տե՛ս Հավելված 2, թիվ 11:**

Պանդխտությանն առնչվող այս պատումի սասունյան տարբերակներից մեկն էլ՝ «Զար Սադոն» վերնագրով, Վերին Բազմաբերդում գրառել է բանագետ Ռաիսա Խա-

³⁵⁵ Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պեյրուֆ, Տպարան՝ Կ. Տոնիկեան, 1957, էջ 151:

³⁵⁶ Հայկական գրոյցներ. առակներ, առածներ, մանրավէպեր, զուարճալի սասցուածքներ և իմաստուն խօսքեր, պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լոս Անջելես, Պօզաճեան տպագրութիւն, 1944, էջ 44:

չատրյանը³⁵⁷: **Տե՛ս Հավելված 2, թիվ 12:**

Պանդխտությունը պատճառ է դառնում ավանդական ընտանիքների բարոյական չափանիշների խախտման: Հայկական անեկդոտներում երբեմն այդ երևույթը այնպիսի «քնքշությամբ» է ներկայացվում, որ ականա մոռացվում է կողակցի դավաճանությունը: Գալֆայանի գրառած զվարճապատումում ներկայացված է 15-ամյա պանդխտությունից տուն վերադարձած ամուսնու և կնոջ երկխոսությունը: Մեղրամիսը նոր բոլորած և օտարություն մեկնած հայ պանդուխտը շատ է զարմանում, երբ իր տանը տեսնում է ճաշ ուտող երեք երեխաների...: Եվ սկսվում է զայրույթից պայթող ամուսնու հարցումներին կնոջ տված «հիմնավոր» պատասխանները, թե՛ «Ամենեն մեծը սիրոյ պտուղն է մեր մեղրալուսնի օրերուն... Երկրորդն ալ ունեցայ այն օրը, որ ինձի սիրալիք նամակ մը դրկած էիր Պոլսէն, կը հիշե՛ս...»:

Բայց ամենազավեշտալին երրորդ երեխայի հիմնավորումն է.

– Թո՛ղ... թո՛ղ, այդ երրորդն ալ իր ռուպը³⁵⁸ ուրէ, ան ալ քեզի բարբա ըսած չունի եա՛...³⁵⁹: **Տե՛ս Հավելված 2, թիվ 13:**

Երգիծական մանրապատումի վերջաբանային այդ «հիմնավորումներն» էլ դառնում են անզուսպ ծիծաղի պատճառ:

Ի դեպ, կապադովկյան այս պատումի տարբերակներին հանդիպել ենք նաև պարսկահայոց³⁶⁰ ժողովրդական բանարվեստում³⁶¹:

Թուրքիայի հայահալած քաղաքականության հետևանքով հայկական բնակավայրերի մի շարք ընտանիքներ ճարահատ քրդաբնակ գյուղերում էին փորձում գտնել իրենց աշխատանքի և երեխաների փրկության ելքը: Բայց հայը չէր կարող քոչվոր ցեղերի մտածելակերպն ունենալ, ուստի երեխաների ուսման խնդիրը ընտանիքներին կրկին վերադարձնում է գյուղ, իսկ կերակրող ձեռքը նորից մեկնում է արտագնա աշ-

³⁵⁷ ՀԱԲ, հատոր 19, Խաչատրյան Ռ., Թալին, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 106:

³⁵⁸ **Ռուպ** – դրշաք, թանձր եփած հյութ:

³⁵⁹ Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէյրուֆ, Տպարան՝ Կ. Տօնիկեան, 1957, էջ 140-141:

³⁶⁰ ՀԱԻ-ի բանահյուսության արխիվ, Թարվերդյանի ֆոնդ, Սալմաստ, Մարթը կնիկ, էջ FF1: 1603, ԱՍՇՀ:

³⁶¹ Նույն տեղում:

խատանքի. «ԺԹ դարուն, թրքական ծայրայեղորեն հայահալած քաղաքականութեան օրերուն, Չնքուշէն հարիւրաւոր ընտանիքներ տեղափոխուեցան Շիրոյի, Կարկարի եւ այլ քրտական շրջաններու գիւղերը, ուր անոնց տղամարդիկ տարին եօթ-ութ ամիս կը գործէին նախապէս եւ աշնան կը վերադառնային Չնքուշ, իրենց ընտանիքին ծոցը», – գրում է «Չնքուշապատումի» հեղինակը³⁶²:

«Աբա՛ր, ա՛յբ ըսէ (Հայրի՛կ, ա՛յբ ըսէ)» զվարճապատումում ներկայացված է ճարահատ քրդաբնակ գյուղում հանգրվանած և ընտանիքին տեսության եկած հայ ծնողի և մաշտոցյան այբուբենի առաջին քայլերը նոր-նոր անող և արտասանական դժվարությունները դեռևս չհաղթահարած երեխայի երկխոսությունը, որտեղ զավեշտի հենք է դառնում թրշ լեզվով հայերենի գրանվան արտաբերումը³⁶³: **Տե՛ս Հավելված 2, թիվ 14:**

Մինչև 50-ականների կեսերը ԽՍՀՄ-ում եթե քաղաքացին իրավունք ուներ քիչ թե շատ ազատ տեղաշարժվելու, ապա գյուղացուն արգելված էր գյուղից դուրս գալը, մասնավորապես քաղաք տեղափոխվել-հաստատվելը. նրան անձնագիր անգամ չէր տրվում: Այդ արգելքի հանելը պայմանավորված էր խրուշչովյան ժամանակների՝ **խոպան հողերը յուրացնելու**³⁶⁴, Տայգայում և Հեռավոր Արևելքում նոր բնակավայրեր ստեղծելու, նրանց կապող ավտոճանապարհներ ու երկաթուղային հաղորդակցություն ապահովելու գործընթացներով: 1950-ականների վերջին արտագնա աշխատանքի մեկնողների քանակը սկսվեց շատանալ, 1970-ականներին Հայաստանից «խոպան» մեկնողների թիվն արդեն մի քանի տասնյակ հազարի էր հասնում: Հայոց որոշ տարածաշրջաններում, այսպես ասած, **խոպանչիների** քանակը աչք էր ծակում, ինչը ևս խտացվել է զվարճախոսությունում.

Ախալքալաքցին մեռնում ա, հոգին գնում ա խոպան: (ԱՍՇՀ)

1960-ականների սկզբներին **խոպանչիներից** շատերը *ասֆալտ անողներ* էին:

³⁶² **Գեորգեան Գ.**, Չնքուշապատում, հատոր 1, Երուսաղեմ, տպարան Ս. Հակոբեանց, 1970, էջ 309:

³⁶³ Նույն տեղում:

³⁶⁴ Դրա համար էլ արտագնա աշխատավայրը, անկախ տեղավայրից, ժողովուրդը սկսեց անվանել **խոպան**, իսկ աշխատողներին՝ **խոպանչիներ**. դե պարզ էր, արտագնա աշխատանքի մեկնողները պանդուխտներ չէին կարող կոչվել, քանզի ըստ խորհրդային գաղափարախոսության, պանդխտությունը կապիտալիստական հասարակարգի արդյունք էր, իսկ ԽՍՀՄ-ը բոլորի հայրենիքն էր:

Անեկդոտներից մեկն առնչվում է Ղազախստանում գտնվող «Բայկանուր» տիեզերական կենտրոնին ու նրա մերձակա տարածքներում ասֆալտ անող հայկական բրիգադին: Թռիչքի պահին հանկարծակի հիվանդացած տիեզերագնացին որոշվում է փոխարինել մոտակա տարածքում ասֆալտ անող հայերից մեկով, որպեսզի խորհրդային պետությունը աշխարհով մեկ խայտառակ չլինի:

Զվարճապատումում զավեշտալի վերջաբանը հայ բրիգադիրի առաջարկած նախապայմանն է՝ իր աշխատողներից մեկին տրամադրել միայն այն պարագայում, եթե վարձատրությունը կատարվի ասֆալտապատելու համար տրվող վճարման սկզբունքով, այսինքն՝ ըստ *մետրաժի՝* յուրաքանչյուր մետրի համար կատարած աշխատանքի...: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 2, թիվ 15:**

Արտագնա աշխատանքի մեկնելուն նպաստում էին բրիգադիրները, աշխատանքային խմբեր կազմելու համար մարդկանց, մասնավորապես արհեստավորներին փորձում էին համոզել, բացատրում էին խոպանի աշխատանքի առավելություններն ու արդյունավետությունը, ներկայացնում կատարելիք աշխատանքը: *Խոպանչիների* թեմային նվիրված անեկդոտներից մեկը առաջադրանք-հանելուկատիպ կառուցվածքով է ներկայանում: Ասացողն այստեղ համադրողականության (սինկրետիզմի)՝ ոտքի շարժումների օգնությամբ պետք է կարողանա ճիշտ պատասխանը ունկնդրին փոխանցել.

– *Գյումրու յոթ վերքի մոտ խոպանչիները հավաքված են և շրջան կազմած՝ խոսում են: Կոշիկներին նայելով՝ կրնա՞ք ասեք՝ դրանցից որն է բրիգադիրը:*

–

– *Ում աջ կոշիկի ծայրը մաշած է, ուրեմն նա էլ բրիգադիրն է:*

(Հանելուկ առաջադրողն սկսում է ոտքի շարժումներով նկարագրել, ցույց տալ: Հավաքվածներից ով ոտքի ծայրով գետնին գծեր է անում, ցույց տալիս կառուցվելիք շինության հատակագիծը, խոպան մեկնել պատրաստվող բրիգադի անդամներին բացատրում՝ քանի քառակուսի մետր տարածք է զբաղեցնում շենքը, ճակատային մասնինչ պիտի արվի և այլն, ինչի հետևանքով կոշիկի ծայրը մաշվում, ուրեմն հենց նա է

բրիգադիրը): (ԱՍՇՀ)

Խորհրդային տարիներին ահագնացող արտագնա աշխատանքը հաճախ շատ ու շատ ընտանիքների քայքայման պատճառ է դառնում: Ամուսնու կամ կնոջ դավաճանությունը ևս հաճախակի են արտացոլվում հայկական անեկդոտներում:

Դե խոպան գնացողները գարնանը գնում են, ուշ աշնանը գալիս: Սրանք ուզում են իրենց ընկերներից մեկին համոզեն, հեղինակը տանեն, ասում են:

– Ինչի՞ չես ուզում գաս, արի համաձայնվի, էս տարի գնանք, համ փող կաշխատես, համ էլ փողի հետ ողսի աղջիկների հետ կֆոֆոաս: Գիտե՞ս՝ ինչ ողսի աղջիկներ կան, ում հետ ուզենաս, քեզ համար քեֆ կանես, հը՛, համաձայն ե՞ս...

Ասմա. // – Չէ, տղե՛ք ջան, գոհ եմ, ստեղ էլ վատ չի, դուք որ գնում եք, ձեր կնանկից ում հետ ուզում եմ, նրա հետ էլ քեֆ եմ անում... (ԱՍՇՀ)

Անեկդոտներում արտագնա աշխատանքի մեկնողների ու նրանց կողակիցների բարոյագրկումը ներկայացվում է տարբեր ձևերով: Մի դեպքում զավեշտի միջոց են դառնում «Բաբուշկա ումերլա» և «Սմերտ պրոդոլժաեպոսյա» հեռագիր-ծածկագրերը: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 2, թիվ 16:**

Մեկ այլ դեպքում կնոջն ու երեխաներին բախտի քմահաճույքին թողած ամուսնու և ռուս անբարոյական կանանց հասցեներին արված անեծքների շարանն ու ամուսնու՝ սիրուհուն այդ խոսքերի ռուսերեն «Ա տերե գավարիտ»³⁶⁵ «թարգմանությունն» է դառնում անսպասելի ծիծաղի պատճառը: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 47:**

Մեկ ուրիշ նմուշում էլ ընտանիքի գիրկը վերադառնալը ավետող *խոպանչու* հեռագիր տալը և տուն մտնելուց հետո կնոջ գրկում սիրեկանին տեսնելով՝ հանկարծակիի գալը, այնուհետև կարոտից արտաբերած «արդարացնող»՝ «Կա-չկա կնիկըս հեռագիրն ըստացել չի» խոսքերն են դառնում զավեշտի հենք: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 2, թիվ 17:**

Այս պատումի տարբերակներից մեկում էլ այսպես է հնչում խոպանից վերադար-

³⁶⁵ Ա տերե գավարիտ (ռուս.) – քո մասին է ասում:

ծած լոռեցու արդարացնող խոսքը.

– *Վա՛յ քու փոստի ինչն են ասե՛լ... հեռագիրս վախտին բերել չեն...*³⁶⁶

Արտագնա աշխատանքի՝ ընտանիքներին բարոյական հարված հասցնելու հետեվանքներն արտացոլվում են նաև 1988-ի երկրաշարժի ժամանակ տրվող օգնությունների համատեքստում: Զվարճապատումներից մեկում հնարավորինս շատ օգնություն ստանալու մարմաջը ամուսինների բարոյական դիմագիծը բացահայտելու պատճառ է դառնում.

Ամուսինը գնում է խոպանում աշխատած տարիներին ունեցած հինգ երեխաներին հավաքում, բերում է տեսնում՝ տանը երեխա չկա, հարցնում է.

– *Ա՛յ կնիկ, էս էրեխեքըս ու՛ր են:*

– *Ո՛ւր պիտի ըլեն, իրանց հերերն էկան տարան, որ օգնություն ստանան ...*

(ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 2, թիվ 18:**

Արտագնա աշխատանքի մեկնողներից ոմանք ուզում են միանգամից հարստանալ, մեքենայի, շքեղ տան տեր լինել ու... կանգնում են փաստի առաջ. ոչ ուտելու, և ոչ էլ հետ վերադառնալու գումար չեն ունենում, և ստիպված սոցիալական ծանր վիճակում գտնվող ծնողներն են կրկին օգնության միակ հույսը դառնում.

– *Թևան քեռի, լույսիդ վարձը խի՞ չես մուծում: // – Կմուծեմ, էլի՛: //*

– *Ե՛րբ: // – Երբ որ տղաս արտագնա աշխատանքից գա: // – Իսկ տղադ ե՛րբ է գալու: // – Երբ որ կովը ծախեմ, ճանապարհաճախսը ուղարկեմ*³⁶⁷:

Նորանկախ հանրապետության 25-ամյա ժամանակաշրջանում էլ ավելի ահագնացավ արտագնա աշխատանքի մեկնողների քանակը ոչ միայն քաղաքներից՝ կապված գործարանները չաշխատելու հետ, այլև գյուղերից: Վերջինիս դրսևորումը՝ իբրև իրողություն, այսպես է ներկայացնում բերդավանցիների «Կեսը՝ էստեղ, կեսը՝ էնտեղ» մանրապատումը.

³⁶⁶ «Եղինջ» երգիծաթերթ, Վանաձոր, 1996, օգոստոս, թիվ 4:

³⁶⁷ **Ղազարյան Ս.**, Եկեք մի քիչ ուրախանանք, մեր հոգսերից թեթևանանք: Անեկդոտներ: Եր., «Զանգակ-97» հրատ., էջ 19:

*Մարզկենտրոնից մի բարձր պաշտոնյա էր եկել Բերդավան: Իմացավ, որ գյուղ-
խորհրդի նախագահն արդեն վեց ամիս է՝ Ռուսաստանում է:*

– Ինչպե՞ս թե, – զարմացավ պաշտոնյան:

Քարմանց Սամվելը, փորձելով պաշտպանել իրենց նախագահին, ասաց.

*– Դե, գյուղի բնակչության կեսը ռուսաստաններում է, նա էլ տարվա կեսը էնտեղ
է նախագահություն անում, կեսը՝ էստեղ...³⁶⁸*

Անկախացած Հայաստանից արտագնա աշխատանքի մեկնողների ռուսերենի իմացությունն այլևս խոչընդոտ չէ, աշխատատեղերի աշխարհագրությունն էլ է աստի-
ճանաբար ընդլայնվում, մեկնելու նպատակն էլ. արտագնա աշխատանքն աստիճանա-
բար հիմքեր է ստեղծում վերածվելու արտագաղթի.

Կգնանք Ամերիկա, թե գործ էլավ, լավ, թե չելավ, ետ գալը կա ու կա: (ԱՍՇՀ)

Երեխաների մտածողության և հոգեբանության վրա խոր հետք է թողնում ծնողի արտագնա աշխատանքը: Առաջնեկ տղայի լույս աշխարհ գալուց մի քանի ամիս անց, գումար վաստակելու հույսով տան տղամարդը մեկնում է խոպան: Երեք տարի անց նա Ռուսաստանից վերադառնում է տուն, ու ողջագուրվելուց, ընթրելուց հետո երբ մուֆն ընկնում է, ծնվելուց հետո հոր երես չտեսած 3-ամյա որդին, որ մոր միակ «թև ու թի-
կունքն» էր մնացել, չի ուզում քնել, սրտնեղած ձգում է մոր փեշից, պարտադրում մորը, որ «անձանոթ» տղամարդը կեսգիշերին հեռանա տնից.

*– Մա՛մ, էդ մարդն ինչի՞ չի գնում մեր տնից, ասա՛ թող շուտ գնա, մինչև չգնա,
չեմ քնի...³⁶⁹*

Հայկական երգիծական մանրապատում-զվարճախոսություններում արտագնա աշխատանքի թեման երբեմն էլ ներկայացվում է անիրական՝ հեքիաթային տարրերով շաղախված: Այսպես, Լոռուն վերագրվող ոսկեձկնիկյան պատումում մեր օրերի ար-
տագնա աշխատանքի մեկնողների թեման արտացոլված է լոռեցու անեկդոտային կեր-

³⁶⁸ **Աբազյան Ս.**, Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամտություններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ., 1999, էջ 21-22:

³⁶⁹ **Սարգսյան Ա.Շ.**, Մանկական զվարճախոսություններ, Եր., «Գիտություն» հրատ., 2016, էջ 116:

պարին հատուկ պարզամտությամբ: Օտարություն մեկնած ու գործազուրկ մնացած երկու եղբայրների՝ Ոսկե ձկնիկին ներկայացրած երեք ցանկություններից երկուսը երկու շենքերի հիմքերը զցած տեսնելն է լինում. յուրաքանչյուր եղբորը՝ մի-մի շենքի հիմք, որ կարողանան միանգամից պատերը շարել, իսկ երրորդ ցանկությունն էլ ավելի զավեշտալի է. դրանց սվաղի՝ ծեփագործության աշխատանքները ևս երկու եղբայրներին ընծեռելու հնարավորություն տալ: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 2, թիվ 19:**

Հնարամիտ հայերը գործազրկության դեպքում անգամ ելք են գտնում, գործ ճարում նույնիսկ Աֆրիկայում.

Ինքնաթիռը Աֆրիկայում վթարային վայրէջք ա կատարում: Ուղևորները ընկնում են վայրենիների ձեռքը: Սրանք բռնում, բոլորին փանում են իրանց վոժդի³⁷⁰ մոտ:

– Տղե՛րք, քաշվեցինք, – հայերեն ասում ա գերիներից մեկն ընկերոջը:
– Վայ ձեր ցավը փանեմ, հայ ե՛ք, – հարցնում ա վայրենիների առաջնորդը:
– Իյա՛, ա՛յ ախպեր, դու էլ ես հա՛յ, բա էս վայրենիների մեջ ի՞նչ ես անում, – հարցնում են հայերը:

– Տղե՛րք, դուզն ասած, փեհա խոպանի համը դուրս էկավ, էս կողմերն են էկել, հիմի էլ էս գործն են կպցրել... (ԱՍՇՀ)

Արտագնա աշխատանքն արտացոլող տափակ անեկդոտաշարերից մեկում էլ զավեշտի հենքը ժողովրդախոսակցական լեզվում օգտագործվող *ամոթաթիքա* արտահայտությունն է.

Մեկն ասմա.

– Բրիգադով խոպան էինք գնացել Աֆրիկա, մարդակերների ձեռն ընգանք:
– Բա հեպո՞: // – Հեպո էլ մարդակերները բրիգադի բոլոր անդամներին կերան, մնացի մենակ ես, ես էլ թողի հեպ էկա փուն: // – Ո՞նց, բա քե՞զ ինչի չկերան: // – Ես ամոթաթիքեն էի...(ԱՍՇՀ)

³⁷⁰ Վոժդի (ռուս.) – առաջնորդ:

2.5. Լեզվական ուժացման և ազգապահպանության խնդիրները

19-րդ դարի երկրորդ կեսից թե՛ արևելահայոց, թե՛ արևմտահայոց բանավոր ու գրավոր գրականության մեջ սկսում է հաճախակի արտացոլվել լեզվական ուժացման թեման: Այն առավել ընդգծված դրսևորվեց Մեծ եղեռնից մազապուրծ արևմտահայության բեկորների՝ աշխարհով մեկ սփռվելու պատճառով, իսկ արևելահայության շրջանում լեզվական ուժացման խնդիրն էլ ավելի անհանգստացնող դարձավ խորհրդային համակարգի օրոք:

Եթե հայաստանաբնակների մի մասի օտարամոլության պատճառը քաղքենիությունն էր և խորհրդային համակարգի վարած ապագային քաղաքականությունը, ապա շուրջ մեկուկես միլիոնի հասնող վիրահայերի (Թբիլիսի, Աբխազիա, Աջարիա, Բուխարա-Խսաչեն, Ջավախք, Քուբախ-Կախեթի...), նորաստեղծ Ադրբեջան պետության մեջ հայտնված հայերի (ԼՂՀ, Գյուլիստան-Շահումյան, Կիրովաբադ-Գանձակ, Նուխի, Բաքու, Սումգայիթ...), ինչպես նաև Հյուսիսային Կովկասի հայության (Դոնի Ռոստով, Սոչի, Դադստան, Չեչնիա...) շփումը ռուսական կամ ռուսախոս միջավայրի հետ, Ադրբեջանի ու Ռուսաստանի, մասամբ նաև՝ Վրաստանի վարած հակահայ քաղաքականությունը, նաև Հայաստանի հետ կապի խոչընդոտները, հայկական կրթական ու մշակութային օջախների և հաղորդակցության տարատեսակ միջոցների սակավությունը կամ էլ բացակայությունը, մինչև անգամ՝ արգելքները հանգեցնում էին լեզվական ուժացման: Ինչ խոսք, դրան նպաստում էին նաև հայերի որոշ մասի ստրկամտության հասնող օտարասիրությունն ու օտարամոլությունը, որոնք կամա թե ականա պարարտ հող էին նախապատրաստում վերածվելու ստրկախտի:

Թերևս հենց այս հանգամանքից ելնելով էլ ժողովուրդն իր ինքնապաշտպանական բնագոյով այդ ցավոտ խնդրին անդրադառնում է ժողովրդական երգիծանքի լեզվով: Թե՛ արևմտահայության, թե՛ արևելահայության շրջանակներում բազմաթիվ երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ են ստեղծել, որոնցում զավեշտի հենքը մինչև այսօր էլ մեզ համար չափազանց ցավոտ լեզվական ուժացման խնդիր-

ներն են:

Արցախյան շարժումը ժողովրդին նաև լեզվական օտարամոլության թմբիրից ուշքի բերելու, դատարկ ու լրդված ինտերնացիոնալիստական գաղափարները դեն շարտելու և ազգային արմատներին վերադառնալու շարժում էր: Անդրադառնանք լեզվական ուժացմանն առնչվող անեկդոտներից մի քանիսի դրսևորման առանձնահատկություններին և առաջադրած ներքին հարցադրումներին:

Իր լեզվական օտարամոլությունը հենց ինքը՝ արցախցին է ծիծաղի լեզվով խտացրել անեկդոտներում, որոնցից ամենացայտունը «Ըստեփանակերտուց ժողովը»³⁷¹ նմուշն է, ուր հայոց լեզուն պահելու, մաքուր հայերենով խոսելու մտահոգությամբ հրավիրված ժողովի նախագահի ամփոփիչ խոսքը դառնում է զվարճախոսության անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը.

Ըստեփանակերտ ժողովըն անում, վեր հայերէն լ&լզուն պահին, պաշտին, խօսէնքը վէչ թա ռուսերէն, հայերէն խօսին: Վերչումը խօսկը Կամ ըն ժողովէն նախագէն, էս էլ յէր ա կէնում, թա.

– **Տավա՛րիշի**, մէր լ&լզուն սըլլաթկի լ&լզու յա, **դըրագացէննի** լ&լզու յա: Մունք մէր լ&լզվավն ընք **պաբէդիտ ընէլու**, ըտըրա հէտի բիդի լօխըս էլ պրապագանդա ա նինք՛, վէր մէր ժիղօվորթը մէր լ&լզուն **գաբըվատ չանէ**: **Կարօջի գավարյա**, մէր լ&լզուն մէր **փըլագըն ա**, մէր **գօրդըստըն ա**, **դավայծէ սախրանիտ անինք՛** մէր լ&լզուն³⁷²: Օ- տար և բարբառային բառաբացատրությունները **տե՛ս Հավելված 2, թիվ 20**-ում:

Զվարճախոսություններից մեկում էլ ասելիքը վերարտադրվում է ընդամենը մեկ նախադասությամբ, որի հինգ բառից կազմված անդամներից հայերեն են միայն «ի» հոլովական վերջավորությունը, «ը» հոդը և «ա-է» օժանդակ բայը.

Ուզի մագագինումը ստրաշնի օջերեդ ա (իմա՛ Անկյունի խանութում ահավոր հերթ է – ԱՍ): (ԱՍՇՀ)

Իսկ Զոնտրիկիս պոչը սլանովի կոստից ա (իմա՛ Անձրևանոցիս պոչը փղոսկրից է)

³⁷¹ **Սարգսյան Ա. Յու.**, Արցախի բանահյուսությունը, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, էջ 416:

³⁷² Նույն տեղում, էջ 416:

նախադասության մեջ հայերեն են «պոչը» բառը, «ա-է» օժանդակ բայը, «ի» հոլովական վերջավորության հետ «ս» ստացական հոդը: Թերևս այս հանգամանքն էլ պատճառ է դարձել հետևյալ զավեշտալի երկխոսության ստեղծման.

Երևանցին դարաբաղուն ասում ա.

– Ծեր լիզուն հի՞նչ լիզու յա, վեջ հայերեն ա, վեջ ռուսերեն:

Ղարաբաղին պատասխանում ա.

– **Նաբառոյր**, մունք **չխսրո** հայերեն ընք խոսում³⁷³:

Կամավոր կամ բռնի ուժացումը և ցեղասպանությունը պատճառահետևանքային կապով են կապված, և դա ևս իր հստակ արտացոլումն է գտել ժողովրդական երգիծապատումներում:

Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի անեկդոտների ժողովածուներում ուժացման թեմայով բազմաթիվ զվարճախոսություններ են հրատարակվել: Դրանց մի մասն առնչվում է թե՛ բռնի, թե՛ կամավոր ուժացմանը: Նախիջևանի մի շարք գյուղերի հայության կրոնափոխությունն ու լեզվական ուժացումը թերևս պատճառ են դարձել մի շարք անեկդոտների առաջացման:

Այսպես, երգիծական մանրապատումներից մեկում անսպասելի ծիծաղը դրսևորվել է քրիստոնյա հայի՝ թուրքանալու մտադրությունը հավաստող երդումով, որը դրժելը նա մեղք է համարում, քանզի դրժողը հաստատ կպատժվի Աստծու կողմից: Իսկ թուրքանալ պատրաստվողը այդ երդումը տվել էր... Ստեփանոս Նախավկայի աջի վրա...³⁷⁴

Տե՛ս Հավելված 2, թիվ 21:

Մինչև Մեծ եղեռնը օսմանյան կայսրության վարած ուժացման քաղաքականության հետևանքով շատ ու շատ հայկական գյուղեր բռնի կամ կամովին կրոնափոխ էին դառնում, իսկ հայերենը կամա թե ակամա զիջում էր իր դիրքերը թուրքերենի և քրդերենի առաջ՝ սկզբում բազում օտար բառերի ինքնական կիրառության՝ օտարամոլու-

³⁷³ Բաքվի հայոց բանահյուսությունը, Կազմեցին Ավարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 236:

³⁷⁴ Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 7:

թյան հետևանքով, այնուհետև հայերենը օտար լեզուների առաջ ստորադասելու, մոռացության մատնելու արդյունքում:

Լեզվի և հավատի կորստով, իրար դեմ լարված մեր բազմակուսակցականությամբ ու կրոնական հայացքների տարակարծություններով մենք թուլացրինք մեր միասնականությունն ու զգոնությունը՝ ավելի հեշտացնելով ցեղասպանության իրագործումը:

Զվարճապատումներից մեկում Ամերիկա հասած օտարախոս պանդուխտները խնդրում են հայ տանտիրուհուն կարդալ հայերեն գրված նամակը, ապա, որ ամենագավեշտալին է, դուրս են հրավիրում նրան՝ ասելով.

– *Հածի՛ս, սենյակեն էլի՛ր, ասի դաշնակցական գաղտնի ժողով է...*³⁷⁵ **Տե՛ս Հավելված 2, թիվ 22:**

Երգիծապատումների մի մասում էլ թրքախոսությունը ներկայացվում է իբր «փրկության» ելք, որին կուրորեն հավատացել են նաև հայ մեծամեծները.

1915-ին տեղահանության հրաման կու գայ Այնթապ: Վալին կը կանչէ Այնթապի մեծամեծները ու կը հաղորդէ, թէ բոլոր հայերը պէտք է այսինչ թուականին պարպեն քաղաքը ու երթան:

Այնթապի մեծամեծները կը պատասխանեն.

– *Էֆենտի՛, մեզի համար բան մը չկայ, պիզիմ հափըմըզըն անա լիսանը թուրքչա* (Մեր բոլորին մայրենի լեզուն թրքերէն է)*³⁷⁶:

Ազգային լեզուն կորցրած մեծամեծների նման մտածելակերպը ծիծաղի հետ տխրությամբ է համակում հոգիդ:

Հ. Չոլաքյանի գրառած զվարճապատումներից մեկում էլ այնթապցին մարաշցուն թուրքերենով ասած «Այս պանդուխտները կը տեսնե՛ս... Տարագրութեան աչքը կուրնայ... Այս պանդուխտները եկան, մեր մայրենի լեզուն քանդեցին, այդ պատճառով մեր

³⁷⁵ **Սվազյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 110:

³⁷⁶ Միջ-գաւառական անեքթոտներ: Հաւաքեց եւ ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Հալէպ, Տպ. Արեւելք-Հալէպ, 1988, էջ 86:

քահանան հայերէն քարոզ կու տայ»³⁷⁷ անհեթեթ մեկնաբանությունն է դառնում անսպասելի ծիծաղի պատճառը: **Տե՛ս Հավելված 2, թիվ 23:**

Մեծ եղեռնից փրկված և Սիրիայում ապաստանած արևմտահայության բեկորների մի մասը շարունակում է ոճրագործի լեզվով հաղորդակցվել և իբրև ապացույց հայ լինելու՝ մոտը միշտ ունենում է Ս. Գիրքը: Հ. Չոլաքյանի գրառած մեկ այլ պատումում³⁷⁸ զավեշտի հենքը թրքախոսության և աղոթաժողով հաճախելու ծիծաղ հարուցող հակասությունն է, իսկ հանգուցալուծումը՝ էլ ավելի զավեշտալի իրողությունը.

Աղոթաժողովից հետո կազմակերպված խնջույքի ժամանակ պարող այնթապցի, քիլիսցի և մարաշցի կանայք սկզբում Ս. Գիրքը թևերի տակ ելնում են պարելու՝ թուրքերեն ասելով՝ «Աման Ալլահըմ, կիւնահ եազմա»³⁷⁹», ապա պարը թեժանալուց հետո «Կիւները Ս. Գիրքերը մէկիկ-մէկիկ կը նետեն մէկդի ու կ'ըսեն.– Իստէր եազ, իստէր եազմա»³⁸⁰»: **Տե՛ս Հավելված 2, թիվ 24:**

Գաղթականության համար պատարագ մատուցող քահանայի հայերեն աղոթքներին անհաղորդ թրքախոս հայերի՝ անսպասելի ծիծաղ հարուցող, բայց միաժամանակ ցավ պատճառող արծագանքը խտացվել է կիլիկիահայոց ժողովրդական երգիծապատումներից մեկում: Բանագետ Վ. Սվազյանի գրառած «Թրքախոս ադանացիները» զվարճապատումում սուր քննադատությանը զուգահեռ՝ ներկայացվում է պատարագին ներկա գտնվող գինովցած թրքախոս ադանացիներին «քիչ մը կիասկնամ» ասող հայրենակցի զավեշտալի հայերեն թարգմանությունը: Նա քահանայի՝ «Սիրելի՛ ժողովուրդ: Դուք ո՛րչափ արեն է, որ եկեղեցի չե՛ք գար: Դուք ո՛րչափ ձեր հավատքը կորցուցեր եք: Հակառակ պարագա՛յին Աստված ձեզի պիտի պատժե» խոսքերում եղած **ո՛րչափ** բառի բառամասնատման և հարանունության «աջակցությամբ» այսպես է թարգմանում. «Արխադա՛շ, բէնիմ բիլդիիմ էրմէնջէ իլէն „վօր,, գօ...թ (բարեկա՛նս, իմ գիտցած հայե-

³⁷⁷ Միջ-գաւառական անեքթօտներ: Հաւաքեց եւ ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Հալէպ, Տպ. Արեւելք-Հալէպ, 1988, էջ 86:

³⁷⁸ Միջգաւառական անեքթօտներ, Յակոբ Չոլաքեան, Բ տպագրութիւն, 2005, Հալէպ, Տպ. Արեւելք-Հալէպ, էջ 92:

³⁷⁹ Աման Ալլահըմ, կիւնահ եազմա (թրք.) – Ո՛վ իմ Աստուածս, մեղք մի՛ գրեր:

³⁸⁰ Իստէր եազ, իստէր եազմա (թրք.) – Կուգես՛ գրե, կուգես՛ մի՛ գրեր:

րենով «ոո»՝ հետույք կնշանակե, «չափն» ալ՝ չափել կնշանակե): *Բարանկային ետերը մեկուն ոռը կչափեին կոր, ամմա վերջը չհասկցա թե որո՞ն ոռը չափեցին...*³⁸¹»: **Տե՛ս Հավելված 2, թիվ 25:**

Վ. Սվազյանի գրառած մեկ այլ երգիծական մանրապատումում էլ արտացոլվել են թե՛ ուծացման, թե՛ ցեղասպանության թեմաները՝ իբրև մեկը մյուսի հետ կապված պատճառահետևանքային դրսևորումներ.

*Կիլիկիո պարպումեն ետքը, երբ Կիլիկիո ժողովուրդը Բեյրութ էկավ, ադանացիները արաբաջիներ*³⁸² էին. *մեկ բառ հայերեն չգիտեին, բայց ամեն մեկը, մեջքը դանակ մը խրած, դաշնակցական կոմիտեի ժողովի կերթային:*

Ժողովի ժամանակ շրջաբերականը կկարդացվի հայերեն: Անշուշտ, աս ադանացիները բա՛ն չեն հասկնար: Մեկը մյուսին կըսե.

– Նե՞ր դէդի, դո...յու...շ վա՞ր: (Ի՞նչ է ասում՝ կո՞իվ կա՞):

– Յօք (ո՛չ):

*Հադէ՛, հէ՛յ վալա (դե՛, փա՛ռք Աստծո): Քանի որ կո՞իվ չիկա, մենք հոս տեղը ի՞նչ գործ ունինք: Մենք գացինք, դուք հայերենը կարդացեք*³⁸³:

Մենք շատ շուտ մոռացանք, որ անպետականության պայմաններում մեր դարավոր պաշտպանն ու հենարանը մեր հողը, մեր լեզուն ու հավատն են եղել, բայց առավել շատ լեզուն, քանզի, Պարույր Սևակի խոսքերով ասած, «*Ժողովուրդները գոյապնում են ոչ միայն իրենց հողով, այլև իրենց լեզվով. ուրեմն՝ ավելի իրենց լեզվով, քան նույնիսկ հողով*»³⁸⁴:

Լեզուն հիշողություն է, այն կապ է պահպանում մեր արմատների հետ, եթե կորցնենք մեր լեզուն, կկորցնենք նաև մեր հիշողությունը և կնմանվենք մաթևոսյանա-

³⁸¹ **Սվազյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 110:

³⁸² **Արաբաջի** – սայլապան:

³⁸³ **Սվազյան Վ.**, Կիլիկիա, արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 110:

³⁸⁴ **Սևակ Պ.**, Երկերի ժողովածու 6 հատորով, հատոր 5, Եր., «Հայաստան» հրատ., 1974, Թրի դեմ գրիչ, էջ 175:

կան «բաց դաշտում արածող հորթին», որի ապագան սպանդանոց տանող ճանապարհին է ու մորթը՝ սպիտակ ջարդ-ծուլման տեսքով...:

Իբրև լեզվաբան՝ Աճառյանի ուշադրության կենտրոնում են եղել հայերենն անադարտ պահելու, հայոց լեզվով հաղորդակցվելու հարցերը, և ամենևին պատահականություն չէ, որ 19-րդ դարավերջին պոլսահայերից գրառած մի քանի անեկդոտներ առնչվում են հենց լեզվական ուժացման խնդիրներին: Դրանցում ծիծաղի, երբեմն էլ սպանիչ ծաղրի միջոցով ներկայացվում են լեզվական ուժացման հետևանքներն ու ուղղորդվում այդ երևույթի դեմ պայքարելու ժողովրդական արձագանքները:

Օտարության մեջ հայտնված և իր լեզվի հարգը չիմացող, օտար լեզվին գերի դարձած հայ պանդուխտ-գաղթականը այլազգիների հետ շփվելիս բազում զավեշտալի իրավիճակների մեջ է հայտնվում՝ դառնալով անեկդոտների ստեղծման նյութ, երբեմն էլ կյանքով հատուցելով օտարախոսության համար:

Այսպես՝ թուրքախառն հայերենով (հիմնականում թուրքերեն և հատուկենտ հայերեն բառերով ու մասնիկներով) մի ենիչերիի հասցեին ասված խոսքը հայի համար ճակատագրական է լինում՝ դառնալով նրա մահվան պատճառը.

Օր մը էրկու հոքի (հայ) կերթան կոր, ենիչերի մը քովերնէն կասնի: Ան հայը մէկալին կըսէ քի «Սա ենիչերիին խալիփաին թէքմէ մը եռլեշտիրմիշ ընեմ քի խօ՛սխօճաման խալիփաիը յօխուշ աշաղի թէքեր մէքեր գա»: (Սա ենիչերիին ադակին այնպիսի մի քացի տամ, որ ահագին կդակը զառիվայրից ցած գլտոր գա)»:

*Ենիչերին կը հասկնա, խըլըճը կքաշէ, գլօխը կկտրէ կմեռցունէ*³⁸⁵:

Այնուհետև տողատակում Աճառյանն ավելացնում է. «Այս առակը պատմում են ցույց տալու համար, թե պոլսահայ ռամիկ լեզուն այնքան խառն է թուրքերեն բառերով, որ թուրքն էլ կարող է հասկանալ»³⁸⁶:

Լեզվական ուժացմանն առնչվող ևս մի պատում է պոլսահայերից գրառել Աճառյանը՝ այս անգամ կապված առևտրի հետ: Այստեղ ևս թուրքին լրիվ հասկանալի «հայե-

³⁸⁵ Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 174:

³⁸⁶ Նույն տեղում:

րենը» խափանում է պոլսահայի խարդախ գործարքը³⁸⁷: **Տե՛ս Հավելված 2, թիվ 26:**

Վերջերս մեր գրառած նմանատիպ սյուժեով նյութերից մեկը ևս վերաբերում է լեզվական ուժացման խնդիրներին, այս դեպքում՝ ռուսախոսությանը՝ ռուսերենախառն «հայերենի» ժարգոնային դրսևորմանը.

Մոսկվայում ընկերոջը՝ տաքսու վարորդի հասցեին արված «հայերեն» «*էս ուռող փաքսիստի դեբիլ ոռժին նայի*» խոսքը, ինչպես աճառյանական տարբերակում, այս դեպքում ևս այն կիրառողի համար պատուհաս է դառնում: (ԱՍՇՀ)

Հր. Աճառյանի գրառած բազմաթիվ զվարճապատում-զվարճախոսություններից չորսն առնչվում են այլադավանությանը³⁸⁸: Դրանցից երեքում ծաղրվում են ոչ միայն իրենց լեզուն մոռացած թուրքախոս կաթոլիկ վարդապետները, այլև նրանց բարոյագրկված զավակները.

Կաթոլիկ մարթ մը չանթան ձառքը՝ ախճրկանը հետ մէկտեղ՝ փեղ կերթան կոր էղէր: Ախճիկը հորը կը դառնա կըսէ քի՛

– *Պա՛պա, պա՛պա, կըսէ, աչքամտան կէլ քի սէնի ուշաըմ զանն էթսինլէր (Հա՛յր, հա՛յր, երևիցս արի, որ քեզ ծառաս կարծեն), – կըսէ՝³⁸⁹:*

Նախախորհրդային տարիներին, այնուհետև խորհրդային տարիներին նպատակադրված ուժացման քաղաքականություն է իրագործվել նաև մեր հարևան քրիստոնյա երկրում՝ Վրաստանում:

Կախեթիներից շատերը ուժացված հայեր են: Դա է վկայում նաև 19-րդ դարավերջի անեկդոտների ժողովածուներից մեկի հետևյալ նմուշը, որը, իրողության հենքի վրա ստեղծված երգիծապատում լինելով, ծիծաղի լեզվով ոչ միայն քննադատում է կիսականովին, կիսաբռնի այդ ուժացումը, այլև սթափության է կոչում մյուսներին.

Մակար Ա. կաթողիկոսը առաջնորդ եղած ժամանակ ճանապարհորդում էր: Երբ որ մտաւ Քութայիս, փեսաւ, որ բոլորն էլ վիրախօսներ են. նա զարմացաւ.

³⁸⁷ Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 175:

³⁸⁸ Նույն տեղում, էջ 165-166, թիվ 14, 15, 16, 17:

³⁸⁹ Նույն տեղում, էջ 166:

- Մի՞թե այսչափ հայերից ոչ ոք հայերէն չի խօսում:
- Վունց չէ, խարջեցին իրենց փայ հայերէնը մօտ կանգնողները և առաջ կանչեցին Դաւիթ Քալանթարեանցին:
- Հայ ե՛ս, որդեա՛կ, – դարձաւ նրան սրբազանը:
- Հրամելիս, հա՛յր սուրբ, հաւ իմ, պատասխանեց նա³⁹⁰:

Ամերիկահայ հայտնի կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանի 100-ամյակի կապակցությամբ ռադիոհաղորդում պատրաստելու նպատակով լրագրող Պապիկյանը լինում է Թբիլիսիի մոտ գտնվող Մուխրավան բնակավայրում՝ փորձելով գտնել Մամուլյանների գերդաստանից որևէ մեկին ու հարցազրույց վարել: Սակայն պարզվում է՝ գյուղում ոչ թե Մամուլյաններ են ապրում, այլ՝ Մամուլաշվիլիներ: 2012թ. օգոստոսին մենք հասցրինք այդ ռադիոհաղորդումից սղագրել զվարճախոսության վերածված մի տխուր փաստ.

Թղթակիցը հարցնում է. //– Մամուլաշվիլիները հա՞յ են, թե՛ վրացի: //

Մուխրավանիի բնակիչը քմծիծաղով պատասխանում է.

– Մուխրավանցուն հարցնում են՝ վրացի ե՛ս, թե հայ ես: // Ասում ա. //– Վրացի եմ: // Ասում են. //– Դա դեռ մեռնելուց հետո կերևա՝ հա՞յ ես, թե՞՛ վրացի: Երբ որ կմեռնես, թե որ վրացական գերեզմանը կդանեն, ուրեմն վրացի ես, թե որ հայկական գերեզմանը կդանեն, ուրեմն հայ ես: (ԱՍՇՀ)

Փոքր ազգերի ամենացավոտ խնդիրներից մեկն էլ *ազգի գենը անաղարպ պահպանելն է՝* հավատափոխությունից և խառնամուսնություններից հնարավորինս զերծ պահելը: Այդ թեմաներին նվիրված մի շարք բանարվեստի նմուշներ են ստեղծվել, որոնցից մեկը, որ վերաբերում է հավատափոխությանը, տեղ է գտել Գ. Շիրմազանյանի անեկդոտների ժողովածուում.

Ջուղայեցի հայ պառավ կինը գնաց Շահաբասի մօտ, լալով աղաչեց.

³⁹⁰ Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրէց դպիր Ս.Տ.Ս. Շահագի-գեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 39-40:

– Մեղք եմ, խեղճ եմ, հրամայէ, որ իմ թուրքացած որդին վերադառնայ Հայոց հաւաքը: Շահաբասը հարցրեց. //– Մի՞թէ մահմեդականը վատ է:

– Այո, – պատասխանեց կինը: // Շահաբասը ասաց.

– Կի՛ն, ուրեմն խեղճ Շահաբասը ի՞նչ անէ, որ եօթն որդի ունի, եօթն էլ թուրք են³⁹¹:

Խորհրդային Միությունում խառնամուսնություններին նպաստում էին արտագնա աշխատանքը՝ *խոպանը*, և բանակը: Հայ երիտասարդները հաճախ տուն վերադառնալիս հետները օտարազգի աղջիկներ էին բերում՝ խարխուլելով ազգային ժողովրդագրական պատկերը: Այդ երևույթի հանդեպ ժողովրդի անհանգստությունն ու դժգոհությունը հայկական անեկդոտներում արտահայտվում էր *ազգապահպանության հարցերի* շաղախում, ինչպես հետևյալ նմուշում.

ա. *Ուրիշների ըրեխերը գնրմ են խոպան «Վոլգա» (իմա՛ ավտոմեքենա) են բերրւմ, իմ տղեն գնաց խոպան՝ Օլգա բերեց, – դժգոհում էր լոռեցի մայրը: (ԱՍՇՀ)*

բ. Զվարճախոսություններից մեկում էլ այդ դժգոհությունն արտահայտված է երկիմաստ ծածկախոսությամբ, հեզնանքով ու բառախաղով.

Բանակից վերադարձող համազյուղացի երիտասարդին գյուղամիջում արևկող անող մեծահասակներից մեկը հարցնում է.

– *Բալա՛ ջան, էդ հետինըդ ռուս ա՞: // – Չէ, պա՛պի, բելառուս ա: //*

– *Հա՛ա՞, բա քրմակի լա՞ֆեպն³⁹² ուր ա: (իմա՛ հետը բերած երեխան): (ԱՍՇՀ)*

գ. Տավուշյան զվարճախոսություններից մեկում էլ օտարազգու հետ ամուսնության նպատակահարմարությունը ներկայացվում է հայ գուսանական (Ջիվանու) և ռուսական ժողովրդական («Կալինկա») երգերի արտահայտած տրամադրության օգնությամբ.

Սերոժը մի ռուս կին է բերում: Օրեր անց ընկերը հարցնում է.

– *Սերո՛ժ ջան, գործերդ ո՞նց են:*

³⁹¹ Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած, ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, Թիֆլիս, 1878, էջ 87:

³⁹² Գյուղաշխարհի մարդկանց հայտնի «Բելլոռուս» մականիշի տրակտորը պետք է անպայման *լաֆեպով* կցորդով լիներ:

– Է՛, ի՞նչ ասես, ընդհար՛ես «Ձախորդն օրերն» եմ երգում, նա՛ «Կալինկան»...³⁹³

Օտարազգիների հետ ամուսնությունների թեմային անդրադարձել ենք նաև ատենախոսության առաջին գլխում՝ զվարճապատումների և զվարճախոսությունների կառուցվածքային առանձնահատկություններին անդրադառնալիս: (**Տե՛ս Հավելված 1, թիվ 16** երկխոսական նմուշը)

դ. Ազգապահպանության հարցերին առնչվող հայկական անեկդոտներում սպանիչ ծաղրի հասնող զավեշտը երբեմն դրսևորվում է «սև» հումորով՝ միասեռ ամուսնությունների համատեքստում.

– Թորո՛ւ աղբար, ինչու՞ փխուր ես: // – Տղաս ամուսնացած է: //

– Է՛, փղաղ ամուսնացած է, փխու՞ր ես: // – Տղային հե՛ղ ամուսնացած է... //

– Է՛, գոնե հա՛յ է... (ԱՍՇՀ)

Այս զվարճախոսության բազմաստիճան տարբերակը տե՛ս **Հավելված 2, թիվ 27**-ում:

2.6. Խորհրդային Հայաստանը

Շուրջ 70 տարի պատատուկի պես ժողովրդի վզին փաթաթված և, բարեբախտաբար, արդեն պատմության գիրկն անցած խորհրդային հասարակարգի ու նրա մարդկանց ապրած կյանքի արտացոլանքը առկա է ոչ միայն նրանց մասին գրված տարաբնույթ գրական-գեղարվեստական ստեղծագործություններում, այլև ժողովրդական բանարվեստում, մասնավորապես զվարճապատում-զվարճախոսություններում: Վերջիններս իրենց թեմատիկ բազմազանությամբ և ասելիքի անկեղծությամբ, խորհրդային ժամանակներին ու կերպարներին բնորոշ կողմերով ու պատկերավորման ինքնատիպությամբ առանձնանում են բանահյուսության մյուս տեսակներից:

Այս ենթագլխում կանդրադառնանք խորհրդային համակարգին առնչվող այնպիսի անեկդոտներին, որոնցում առավելապես ակնառու է արտացոլված ազգայինը՝ հայկականությունը, դեպքերն ու դեմքերն էլ սերտորեն կապված են հայի և Հայաստանի

³⁹³ Կատակում են մովսեսցիները, գրառողներ՝ Ա. Պապյան, Հ. Պապյան, Եր., «Նոյյան տապան» հրատ., 2012, էջ 21-22:

հետ:

1920-50-ականներին Խորհրդային Հայաստանում անեկդոտների ժողովածուների հրատարակություններ գրեթե չեն եղել, դրանց ուսումնասիրություններ՝ առավել ևս: Այդ նույն երևույթը առկա է եղել ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում: Պատճառը Խորհրդային ռեժիմի խիստ վերահսկողությունն ու ստալինյան բռնատիրության ու բռնաճնշումների սարսափն էր, երբ պատմած քաղաքական անեկդոտը կամ կատակով ասված անմեղ մի խոսքն անգամ կարող էր հալածանքների, իսկ 1930-40-ականներին գնդակահարության կամ էլ, լավագույն դեպքում, աքսորի պատճառ դառնալ: Ասվածը հիմնավորում է 1980-ականներին շրջանառվող հետևյալ անեկդոտը.

Մեկը դադարանի դահլիճից դուրս է գալիս ու սկսում հռհռալ:

– Ի՞նչ է եղել, – հարցնում են կողքի մարդկանցից: // – Քիչ առաջ մի ընտիր անեկդոտ լսեցի: // – Հլա պատմի, տեսնեմ՝ լսե՞լ ենք: / – Չեմ կարող: // – Ինչի՞, //– Ո՞նց պատմեմ, պատմողին քիչ առաջ 15 տարի տվին: (ԱՍՇՀ)

1937-ին Թալինի գյուղերից մեկի հայերենի ուսուցչի՝ գրատախտակին գրած պարզ նախադասությունը՝ «Ստալինը մեր մեծ առաջնորդն է», և դրա տակ երեխայի գրած նմանատիպ օրինակը՝ «Շունը հաչում է»-ն, շրջկենտրոնից հանկարծակի դասարան մտնողների համար հայրենիքի թշնամիներին բացահայտելու անբեկանելի փաստ էր և գյուղից աքսորելու հիմնավոր պատճառ: Իսկ 1941-ին Լոռու գյուղերից մեկում բարձր դասարանցու արած համեմատությունը, թե՛ «էրեխե՛ք, ձեր պիոներական վզկապները ոնց որ էս սարը գնացող թուրքի բաջիների փոխաններից ըլի սարքած» (երկուսն էլ կարմիր էին), պատանուն շրջկենտրոնի անվտանգության աշխատակիցների մոտ տանել-բերելու և հարցաքննությունների հիմք է հանդիսանում: «Ժողովրդի թշնամին» «փրկվում է» Հայրենական պատերազմի սկսվելու, բանակ զորակոչվելու և զոհվելու «շնորհիվ»:

Ժողովուրդը զգուշանում էր ամեն մեկից, անգամ մտերիմից, հարազատից, գիտեին, որ *պատերն անգամ ականջներ ունեն*. վախն ամենուր էր...: Ստալինից հետո

այդ վախը մի փոքր մեղմացավ, իսկ 1960-ականներից խորհրդային բազմազգ ժողովուրդը արդեն առանց վախի քաղաքական ամենատարբեր անեկդոտները սկսում է բարձրաձայն պատմել: Նշենք նաև, որ 2015թ. Մոսկվայում հրատարակվում է 1917-1991թթ. արտասահմանում և խորհրդային պետությունում շրջանառված տարաբնույթ քաղաքական անեկդոտների սյուժեների մի ինքնատիպ ուղեցույց³⁹⁴:

1988-ի սկզբներին գրառված հայկական ռադիոյի անեկդոտներից մեկը հենց այդ տարիների զգուշավորության մասին է խոսում.

Հայկական ռադիոյին հարցնում են. //– Ինչո՞ւ է վերջերս Հայկական ռադիոն լռում:

Հայկական ռադիոն պատասխանում է. // – Ավելի լավ է լռել Հայաստանում, քան թե խոսել Սիբիրում: (ԱՍՇՀ)

Ժողովրդի սթափ մոտեցումն ու վերջնական գնահատականը առավել հստակ է արտահայտվել Գորբաչովի հայտարարած վերակառուցման քաղաքական կուրսին վերաբերող զվարճախոսությունում, որտեղ տրամվայով Մասիվ հասնելու անտրամաբանական ու անհեթեթ տարբերակներին (վարորդին շատ խնդրելով, տրամվայի գույնը փոխելով, պլակատներ փակցնելով) հակադրվելով՝ առաջարկվում է գծերը (իմա՝ պետական համակարգը) փոխելու տարբերակը³⁹⁵: **Տե՛ս Հավելված 2, թիվ 28:**

Մեր գրառումներից մեկում ևս այլաբանորեն ներկայացվում է փտած սիստեմ-համակարգն աշխատելու ճիշտ ճանապարհը՝ փոխելը, իսկ ուղղորդողը երգիծապատումում Վիկտոր Համբարձումյանն է.

Աստղադիտարանի ջեռուցումը լավ չէր աշխատում: Վիկտոր Համբարձումյանը մասնագետներ է կանչում: Սրանք գալիս, ստուգում են մարտկոցներն ու խողովակներն ու դիմում Համբարձումյանին.

³⁹⁴ Советский анекдот (Указатель сюжетов). Миша Мельниченко, составление. Москва, Новое литературное обозрение, 2015.

³⁹⁵ **Վարդանյան Հր.**, Ոչ մասնագիտական դիտողություններ. բանահավաքի հուշատետրից, Սփյուռքահայության հետ մշակութային կապի պետական կոմիտեի «Հայրենի եզերք» պատկերազարդ հանդես, Եր., 1991, հունիս, էջ 31:

– Ընկե՛ր Համբարձումյան, սիսպեմը անհնար ա վերանորոգել. լրիվ փրած ա, էս ամբողջ սիսպեմը փոխել ա պետք:

– Տո ես գիտե՛ք՝ քանի փարի է՛ գոռում եմ, որ էս սիսպեմը փրած է, փոխել է պետք, բայց հեջ պետքները չի, – սրտնեղում է Համբարձումյանը: (ԱՍՇՀ)

Ստալինի օրոք անասունի, բրդի, ձվի պարտադիր պլան էր դրված՝ անկախ այն բանից՝ գյուղացին ունե՞ր դրանք, թե՞ «ոչ: Տարիներ անց այդ թեմայով ստեղծված անեկդոտներն ու իրապատումները զվարճախոս մարդիկ իրենց ներսի «պահոցից» լույս աշխարհ էին հանում ու դարձնում բոլորի սեփականությունը: Այսպես.

Թալինի գյուղերից մեկում ծերունին գոմում գլուխը չալիկին հենած՝ ննջում էր. քունը տանում էր, բայց պետք էր դիմանալ. խոզի մերունը պետք է ծներ: Մեկ էլ աչքը բացում է, տեսնում՝ խոզն արդեն սկսել է ծնել, առաջին գոճին է ծնում, երկրորդը, երրորդը ու երբ չորրորդն է ծնում, պապը կատաղած չալիկով խփում է խոզի փորին՝ ասելով.

– Քու՛ դ՛իրու բաբ, Նազարյանի (իմա՛կոլտնտեսության նախագահի – ԱՍ) բլա՞նը գըգադարիս... (ԱՍՇՀ)

Խորհրդային տարիներին կուսակցության ակտիվիստները Հայաստանի գյուղերում հաճախակի էին զեկուցումներ կարդում խորհրդային կարգերի, սոցիալիզմի հաջողությունների ու գալիք կոմունիզմի մասին:

Բանվորագյուղացիական պետության զինանշանի՝ մուրճ ու մանգաղի հենքի վրա ստեղծված Լոռու անեկդոտներից մեկում զեկուցում կարդացողի խոսքն ավարտվում է այսպես.

– Ուրեմն, ժողովո՛ւրդ ջան, մեր ուժն ու հենարանը բանվոր դասակարգն է, նա է կերպելու մեր երկրի ապագան:

Դրան հետևում է այդ անարդարության դեմ ըմբոստացող գյուղաշխարհի մարդու պահանջը.

– Դե որ տիտ ա, – տեղից սրտնեղած ընդհատում է դահլիճում նստած աքորվե-

ցին, – ձեր մուրճը մեր մանգաղի վրիցը վի կալեք: (ԱՍՇՀ)

Խորհրդային երկրում տիրող անհավասարությունն արտահայտված է հետևյալ երկխոսության միջոցով.

Հայկական ռադիոյին հարցնում են.

– Ինչո՞ւ հարուստների երեխաները բանակում չեն ծառայում:

– Որովհետև խորհրդային բանակը բանվորագյուղացիական է: (ԱՍՇՀ)

Մեր գրառած ուրբենյան անեկդոտաշարում սոցիալիզմից կոմունիզմին անցումը պատկերավոր խոսքով է ներկայացվում, ինչին յուրովի է արձագանքում լոռեցի Ռուբենը.

Կոմունիզմի մասին դասախոսություն են կարդում: Դասախոսը ասում է, որ սոցիալիզմն արդեն կառուցել ենք, հիմա անցնելու ենք կոմունիզմի կառուցմանը և խոսքը եզրափակում է այսպես.

– Մի խոսքով, ընկերներ՛ր, մի ոտներըս սոցիալիզմի վրա յա, մինը՝ կոմունիզմի:

Դահլիճից Ռուբենը տեղիցը վեր ա կենըմ, թե՛

– Այդա, չըքել³⁹⁶ յե՛վի տենք տրիենց չըռված մընա... (ԱՍՇՀ)

Խորհրդային համակարգի քաղաքական դատարկ կարգախոսների հենքի վրա մի շարք անեկդոտներ են ստեղծվել: Խրուչչովյան շրջանի «Հասնել և անցնել Ամերիկայի Միացյալ Նահանգներին» կարգախոսը շարունակելով՝ ժողովուրդը զվարճախոսությամբ արտահայտել է իր հեզնական վերաբերմունքը՝ «բայց այնպես անցնել, որ քամակի կարկատանները չերևան»:

Կոմունիզմի մասին ժողովուրդն ունի իր հստակ եզրակացությունը.

Հայկական ռադիոյին հարցնում են. // – Խանութներում ինչո՞ւ միս չկա: // Հայկական ռադիոն պատասխանում է. // – Որովհետև էնքան արագ ենք կոմունիզմ գնում, որ կովերը մեր հետևներից չեն հասնում: (ԱՍՇՀ)

Հայկական զվարճախոսությունում նույնիսկ ակնարկ կա նոր ստեղծված խորհրդային պետության հիմնադրի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ.

³⁹⁶ Չըքել – մինչև:

Բրեժնևը նամակ ա գրում հայերին, ասմա. «Էն օղոաշ Կամոն բանկը կտրեց, լրիվ տվեց Լենինին, դուք գոնյա կեսը ինձ չտվիք»³⁹⁷: (ԱՍՇՀ)

1980-ին Երևանյան լճի մոտ դրված Բրեժնևի մեծ նկարը մի քանի անգամ վաճառում են: Բրեժնևն իմանում է ու հրամայում. «Հայաստանում արգելել լուցկու վաճառքը»: (տրբրկ.՝ Բրեժնևն ասում է. «Լուցկին էլ կթանգացնեմ, տենանք հետո՞ ինչ են անելու»:) (ԱՍՇՀ)

Ինքնատիպ կառուցվածք ունի 1970-ականների վերջին մեր գրառած երգիծական մանրապատումներից մեկը: Այստեղ շախմատային քարերի անունների թվարկմամբ և շաշկու քարերի գործողությունների միջոցով ժողովուրդը հստակ բացահայտել է խորհրդային կարգերի բուն էությունը: Որպեսզի իմանան՝ ե՞րբ է լավ եղել ապրելը, նախախորհրդային, թե՞ խորհրդային կարգերի օրոք, թղթակիցներին խորհուրդ են տալիս գնալ երկարակյացների երկիր՝ Ղարաբաղ: Սրանք Ղարաբաղում մի ծերունու մոտ են գնում, որը կյանքի կեսը ապրել է ցարի օրոք, մյուս կեսը՝ սովետի: Եվ ծերունու պատկերավոր նկարագրությունները դառնում են այս երգիծապատումի զավեշտի հենքը: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 2, թիվ 29:**

Խորհրդային կարգերի և գաղափարախոսության սնանկությունն անմիջապես ի հայտ եկավ Ղարաբաղյան շարժման հենց առաջին ամիսներին, մասնավորապես սումգայիթյան ոճրագործությունից հետո, և ժողովուրդը 1988-ին՝ խորհրդային կարգեր հաստատվելու օրը, հայոց թաղման ծիսակարգին հաջորդող *յոթ և քառսունք* արարողակարգերի միջոցով, բառախաղային զվարճախոսությամբ ազդարարեց այդ համակարգի ավարտը.

Նոյեմբերի 7-ին Հայաստանում Սովետական Միության յոթն ու քառսունքը միասին կտարավեց: (ԱՍՇՀ)

Տարբերակ՝ –*Նոյեմբերի 7-ը նշեցի՞ք://– Յոթն ու քառսունքը իրար հետ արինք*³⁹⁸:

³⁹⁷ Խոսքը 1970-ականների վերջին Հայաստանի կենտրոնական բանկի գողության մասին է, երբ առատադր ծակելով՝ 1.5 մլն ռուբլի էին տարել:

³⁹⁸ **Վարդանյան Հր.**, Ոչ մասնագիտական դիտողություններ. բանահավաքի հուշատետրից, Սվյուտքա-

2.7. Ներգաղթը և արտագաղթը

Թեմայից ելնելով՝ ատենախոսության առանձին բաժիններում, մասնավորապես արևմտահայերենի և արևելահայերենի տարատեսակ դրսևորումների, արևմտահայերենի և այլ լեզուների փոխառնչությունների մասին խոսելիս մենք անդրադարձել ենք հայրենադարձության թեմային:

Ինչ խոսք, խորհրդային գաղափարախոսության սնանկությունն անմիջապես իրենց մաշկի վրա զգում են Խորհրդային Հայաստան ներգաղթած սփյուռքահայերը.

– *Վարպե՛տ Ասատուր, էջ կա՞ր Բեյրութում, – հարցնում են տեղաբնակները: //*

– *Կար, բայց հիմի չկա: //– Էդ ո՞նց... //– Հա, ինչքան էջ կար, բոլորն էկան հայրենիք, – պատասխանում է վարպետ Ասատուրը: (ԱՍՇՀ)*

Բացի լեզվական խոչընդոտներից և *ախպար* մականունով պիտակավորվելուց, ներգաղթյալների և խորհրդային կարգերի հանդեպ հակակրանքն անեկդոտներում արտահայտվում է տարբեր կերպ.

ա. ԽՍՀՄ-ի և խորհրդային բոլոր հանրապետությունների զինանշանների վրա մուրճ ու մանգաղ էր պատկերված՝ խորհրդանշելով պետությունների բանվորագյուղացիական լինելու հանգամանքը: Ստորև ներկայացվող սպորտային թեմայով անեկդոտում գնդի նետումը փոխարինվել է մուրճի նետմամբ, միութենական մրցումներին էլ Հայաստանից մասնակցում է հայրենադարձն ու խորհրդային համակարգի հանդեպ վերաբերմունքն արտահայտում աներևակայելի ուժ ցուցադրելով.

ԽՍՀՄ մուրճի նետման մրցումների ժամանակ Հայաստանից մի հայրենադարձ է մասնակցում: Երբ Հայաստանի ներկայացուցիչն է նետում, ման են գալիս, ման, մուրճը չեն գտնում: Հարցնում են.

– *Ո՞ր ուղղությամբ նետեցիր մուրճը: // Ասում ա. //*

– *Ուղղություն-մուղղություն չեմ գիտեր, գացեք մանգաղն ալ բերեք... (ԱՍՇՀ)*

բ. Խորհրդային կարգերի հանդեպ հայրենադարձի վերաբերմունքն արտահայտ-

հայության հետ մշակութային կապի պետական կոմիտեի «Հայրենի եզերք» պատկերագրող հանդես, Եր., 1991, հունիս, էջ 30-33 և էջ 40:

վել է գուսան Հավասուն առնչվող հուշապատում-զվարճախոսությունում.

– Վարպե՛ր Հավասի, հեչ չե՛ս տեսնում, – կույր գուսանի փարեդարձի օրը հարցնում է մեկը:

– Ուրբաթ օրերին տեսնում եմ, – կատակի է փախիս վարպետը:

Կողքին լուռ ունկնդրող մի հայրենադարձ ասում է.

– Ասանկ կեղտոտ երգիրը փարին մեզ անգամ ալ տեսնիս նե, բավական է:

(ԱՍՇՀ)

գ. Հայկական անեկդոտներում խորհրդային համակարգից հայրենադարձի դժգոհությունն արտահայտվում է նաև ծածկախոսությամբ.

Ախպարը նամակ ա գրում արտասահմանի իր բարեկամին. «Աս ի՞նչ կյանք է, ձանձրոյթեն կմեռնիմ, ես ինձի ներել չեմ կրնա, օրերուս մեծ մասն ինքնաքննադատությամբ կգրադվիմ...»:

Կանչում են ԿԳԲ, թե՛ // – էս դժգո՞հ ես մեր կարգերից, Հայաստանից... //

– Չե՛, ջանըմ, շատ աղեկ է, ձանձրոյթս փորձարկման կենթարկիմ, քիչ մըն ալ սա անոթությանը որ դիմանամ, փաշային պես կապրիմ...: (ԱՍՇՀ)

Այս երգիծապատումի վերջին հատվածը հիշեցնում է էշին առանց կերակրելու պահելու նպատակով տիրոջ կողմից էշի կերը քիչ-քիչ պակասեցնելու անեկդոտը...:

դ. Մեկ այլ նամակ-ծածկագրության մեջ հայրենադարձը ծաղկեցված է ներկայացնում խորհրդային Հայաստանի կյանքը՝ ասելիքն ավարտելով զավեշտալի վերջաբանով. «Ես ասանկ կսեմ, դուն անանկ հասկացիր»³⁹⁹: **Տե՛ս Հավելված 2, թիվ 30**: - Ծածկագրությամբ այլ նմուշներ տե՛ս **Հավելված 2, թիվ 31 և թիվ 32**-ում:

ե. Խորհրդային դրոշի կարմիր գույնն անգամ արտագաղթողի մեջ հակակրանք է առաջացրել ամեն մի կարմիրի հանդեպ

– Երթվիմ գը, հոն լոլի՛կ ալ չի՛ պիտի ուտիմ, – սրտնեղած ասում է Ամերիկա արագաղթող հայրենադարձը: (ԱՍՇՀ)

³⁹⁹ «Եղինջ» երգիծական հանդեսի հավելված, Եր., 1995, էջ 73:

զ. Խաբված ու նվաստացած հայրենադարձին արտագաղթելու մտադրությունից հետ պահելու փորձերն ապարդյուն են անցնում, քանզի հիմնավոր պատճառներ ունի.

Մի ախպար վերջնականապես որոշում է արտասահման տեղափոխվել: Կանչում են Կենտրոն՝ պատճառն իմանալու.

– Ախր ինչո՞ւ եք գնում Հայաստանից, գոնե մի պատճառ պետք է լինի՞, թե՛ ոչ:

– Նախ՝ ոչ թե մեկ, այլ երկու պատճառ կա: Առաջին պատճառն այն է, որ դիմացիս դրկիցն ամեն առօրյուն կըսե. «Աս կարքերը որ փոխվեցին, քեզի պիղի խեղդիմ»:

– Ա՛յ հայրիկ, հանգիստ գործիդ գնա, էս կարգերը երբեք էլ չեն փոխվելու. ոնց կա, էնպես էլ մնալու է, անհոգ եղիր:

– Երկրորդ պատճառն ալ հենց ադ է, որ կա...(ԱՍՇՀ)

է. Խորհրդային և կապիտալիստական երկրների սահմանապահներին զարմացնում է ԽՍՀՄ-ի քաղքյուրոյի անդամների նկարները հետը արտասահման տանող արտագաղթողի զավեշտալի բացատրությունները. Խորհրդային սահմանապահներին *արտագաղթող* հայրենադարձն ասում է. «Կպաշտեմ ասոնց. դնեմ պիտի շրջանակին մեջ, կախեմ մահճակալիս վերին մասում»: Իսկ հաջորդ մաքսակետում նա անկեղծանում է. «Ասոնք ինձի դրամ պիտի պարգևեն. հրաձգարան պիտի բանամ»: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հա-**

վելված 2, թիվ 33:

ը. Խորհրդային կարգերի հանդեպ հակակրանքն անեկդոտում արտագաղթող հայրենադարձն արտահայտում է ժամեր շուտ այդ համակարգից պրծնելու ցանկությամբ.

Մի հայրենադարձ Խորհրդային Հայաստանից հեռանալու նպատակով տղային ուղարկում է տոմսի: // Տղան հարցնում է. //– Հայրի՛կ, գնացքի՞ թե ինքնաթիռի: //

– *Ինքնաթիռի, տղա՛ս, ինքնաթիռի, էս երկրին մի քիչ էլ վերևից նայեմ*⁴⁰⁰:

թ. Անեկդոտներից մեկում 1946թ. հայրենիք ներգաղթած հայրենադարձը այսպես է հիմնավորում իր արտագաղթը.

– *Ինչի՞ համար եք տեղափոխվում արտասահման:*

⁴⁰⁰ Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, հավաքել և կազմել է Լենա Անթառանյանը, Եր., «Վերնատուն» հրատ., 1994, էջ 15:

– *Քա ի՞նչ անենք, մնանք տեղացի դառնա՞նք*⁴⁰¹:

Մեկ այլ անեկդոտում էլ 1946-ին ներգաղթածը 1972-ին Ամերիկա արտագաղթելուց հետո տրտնջում է.

*«Երեսուն տարի Հայաստանում պայքարեցինք հայաստանցի դառնալու համար, բայց ախպար մնացինք, հիմա եկանք Ամերիկա, այստեղ մեզ հայաստանցի են ասում»*⁴⁰²:

Այս անեկդոտի տարբերակներից մեկն էլ՝ «Ռեյգանն ու հայաստանցիները», գրառել է բանագետ Վերժինե Սվազյանը.

Ռեյգանը Գորբաչովին կըսե.

– *Աս նոր էկողները երբ Հայաստան գացին, քառասուն տարի պայքարեցան, որ «Հայաստանցի» կոչվեն, բայց նորեն «Ախպար» մնացին: Վերջը երբ անոնք Ամերիկա էկան, մենք ադ պատիվը անոնց տվինք. «Հայաստանցի» ըսինք: Աս անգամ ալ իրենք չուզեցին»⁴⁰³:*

Այս կապակցությամբ ազգագրագետ Արմենուհի Ստեփանյանը գրում է. «Սա „նոր,, սփյուռքի օտարումն էր „հին,, սփյուռքից»⁴⁰⁴:

Արտագաղթի թեման 1990-ականներին շատ հաճախ շաղկապված է լինում երկրաշարժի ու աղետյալներին տրվող օգնությունների հետ: Վ. Սվազյանի գրառման մեջ երկու երկրների ղեկավարները հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած պահվածքով միմյանց մեղադրում են, մեկը՝ գող դարձնելու, մյուսը՝ մուրացկան.

Ռեյգանը Գորբաչովին կըսե.

⁴⁰¹ Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, հավաքել և կազմել է Լենա Անթառանյանը, Եր., «Վերնատուն» հրատ., 1994, էջ 15:

⁴⁰² **Ստեփանյան Ա.**, 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և ադապտացման խնդիրները, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր», Սփյուռքի նախարարության համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Լիմուշ» հրատ., 2009, էջ 163:

⁴⁰³ **Սվազյան Վ.**, Կիլիկիա, արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 114:

⁴⁰⁴ **Ստեփանյան Ա.**, 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և ադապտացման խնդիրները, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր», Սփյուռքի նախարարության համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Լիմուշ» հրատ., 2009, էջ 163:

– Հոս նայե նայիմ, Սովիեպեն էկող աս ազնիվ ժողովրդին ինչու՞ գող դարձուցեր ես: // Գորբաշովը կըսե. // – Դուն բերանդ չբանաս, դուն ալ անոնց մուրացկա՞ն դարձուցիր⁴⁰⁵:

Սիյուռքահայերի ներգաղթելն ու կրկին արտագաղթելը ժողովուրդը խտացրել է հետևյալ զվարճախոսությունում.

Ախպարները չեն ծնվում, նրանք գալիս են,

Ախպարները չեն մեռնում, նրանք գնում են: (ԱՍՇՀ)

Հիմնավոր թե անհիմն պատճառաբանություններով հայրենադարձների այդպիսի ահազանացած արտագաղթը դրսևորվել է հետևյալ զվարճախոսությունում.

Ախպարի նոր լեզու առած էրեխին հարցնում են. // – Որ մեծանաս, ի՞նչ ես անելու: // Թլոշ լեզվով ասում ա. // – Հոշեն էլթալու եմ: (ԱՍՇՀ)

Նորանկախ Հայաստանում արտագաղթն էլ ավելի սաստկացավ երկրաշարժին հաջորդած մութ ու ցուրտ տարիներին: Այն առ այսօր էլ շարունակվում է ցածր աշխատավարձի, հսկայական չափերի հասնող գործազրկության հետևանքով, ինչի հեռանկարը, արտագաղթը չկանխելու դեպքում, անելդոտն է նախանշում: Այսպես կոչված, *սև հումորին* պատկանող ստորև բերվող նմուշը, որի մեջ ավելի շատ տխրություն ու ցավ կա, քան թե ծիծաղ, ահազանգում է այդ մասին.

Քրդերն (տրբկ՝ եզդիները) ասում են.

– Հայերը Թիֆլիսը սարքեցին տվին վրացիներին, Բաքուն սարքեցին տվին ադրբեջանցիներին, էրևանն էլ սարքել են, կտան մեզ, ու իրանք կգնան Լոս Անջելես: (ԱՍՇՀ)

Նորանկախ հանրապետությունում արտագաղթին վերաբերող անելդոտներից մեկի զավեշտի հենքը ՅՀԴ՝ Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության «Ազատ, անկախ և միացյալ Հայաստան» կարգախոսի բառախաղային դրսևորումն է.

– Ինչպիսի՞ երկիր եք երազում:

⁴⁰⁵ **Սվազյան Վ.**, Կիլիկիա, արևմտահայոց բանավոր ավանդությունը, Ռեյգանն ու Գորբաշովը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 114:

– Ազատ, անկախ և միացյալ... նահանգներ: (ԱՍՇՀ)

Արտագաղթին առնչվող անեկղոտներից մեկն էլ ապարանյան շարքից է՝ կառուցված բառային համանունության միջոցով.

Ապարանցին ուզում ա Հայաստանից հեռանա, գնա արտասահման:

– Ո՞ր ես որոշել գնալ: // Ասում ա. // – Սիրիա:

– Բոլորը Սիրիայից փախչում են, դու Սիրիա ե՞ս գնում:

– Ո՞նց, հեռուստացույցի որ ալիքը միացնում եմ, ասում են՝ Սիրիայում արտակարգ դրություն ա: (ԱՍՇՀ)

Եվ քանի որ Հայաստանից հեռացողների մեծ մասը «Զվարթնոց» օդանավակայանից է արտերկիր մեկնում, հետևաբար արտագաղթի թեմայով հարցուպատասխանական անեկղոտի քննադատության թիրախում հայտնվում են օդանավակայանի սեփականատերն ու հանրապետության նախագահը.

– *Ինչո՞ւ Սերժ Սարգսյանը էռնեկյանին Հայաստանի բարձրագույն պարզևի՝ ազգային հերոսի կոչում շնորհեց:*

– *«Զվարթնոց» օդանավակայանից արտագաղթի գործընթացը առանց ձգձգումների, սրտացավ և արագ կազմակերպելու համար:* (ԱՍՇՀ)

2.8. Ղարաբաղյան շարժումը

Մեր օրերում շատ արագ են ստեղծվում և տարածվում ժամանակի ոգուն համահունչ, ժողովրդի համար բախտորոշ ու կենսական իրադարձություններին, դեպքերին ու դեմքերին առնչվող երգիծապատում-զվարճախոսությունները: Հայ ժողովրդի համար 20-րդ դարավերջին տեղի ունեցան երեք ցնցող իրադարձություններ՝ 1988թ. փետրվարին սկիզբ առած **Ղարաբաղյան շարժումը**, այդ նույն տարվա դեկտեմբերյան աղետալի **Երկրաշարժը**, այնուհետև դրանց հաջորդած ու առ այսօր դեռևս չավարտված **Ղարաբաղյան պատերազմը**, որոնց հետևանքները մեր ժողովուրդը շուրջ երեք տասնամյակ է՝ չի կարողանում թոթափել:

Եվ քանի որ աշխարհի ամենամեծ ու ռազմականապես հզոր խորհրդային երկրի հիմքերը սասանած Ղարաբաղյան շարժման ամենաեռուն պահին երկրաշարժ եղավ, ու ինչ-որ տեղ ժողովուրդը դա կապեց մեր փոքր ու հանդուգն ազգին պատժելու դիտավորության հետ, հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում այդ երկու իրադարձությունները շատ հաճախ հանդես են գալիս միասին՝ իբրև մեկը մյուսին շաղկապված երևույթներ: Դրանցում հիմնականում գերազանցում են անդիպաշար (անսյուժե) երգիծական ստեղծագործությունները՝ զվարճախոսությունները:

Հարկ է փաստել նաև, որ Ղարաբաղյան շարժմանը նվիրված բանագիտական միակ խորքային վերլուծությունը՝ իր իսկ գրառած նյութերի հենքի վրա և ըստ 1988-90թթ. ժամանակագրության ու ըստ իրադարձություններին արձագանքող անեկդոտների՝ կատարել է բանահավաք-բանագետ Հրաչյա Վարդանյանը⁴⁰⁶:

Վերջին 100 տարիներին Թուրքիայի ու նրա կրտսեր եղբոր՝ հետագայում *աղըր-բեջանցիներ* հորջորջվող կովկասյան թաթարների՝ կաշառակերությամբ ամեն ինչի հասնելու քաղաքական հստակ ծրագրի խոսուն վկայությունը խորհրդային պետական գործիչների ու աշխարհի դիվանագիտական տարատեսակ կառույցների ղեկավարների հետ վարած նրանց սկզբունքային և նպատակադրված գործունեությունն է: Հիշենք Ջանգեզուրը գրավելու և Ադրբեջանին բռնակցելու Նարիմանովի հայտնի հրահանգը՝ յուրաքանչյուր մետրի համար մի-մի ոսկի խոստանալով՝ կաշառել ամենքին ու ամեն գնով: Չգիտեմ, խորհրդային 70 տարիներին Հայաստանի կուսակցական ղեկավարներն ինչ պահվածք են դրսևորել, բայց Ադրբեջանի ղեկավարները հայտնի էին իրենց շողոքորթությամբ ու քծնանքով: Նման պահվածք դրսևորողներին մեր ժողովուրդը անվանում է *սապնվոդ*: Այս կերպ էին բոլորը, մասնավորապես Հեյդար Ալիև ավագը լուծում նոր ձևավորված ժողովրդի «ազգային» խնդիրները: Ալիևը քծնում ու տեղին-ան-

⁴⁰⁶ **Վարդանյան Հր.**, Ոչ մասնագիտական դիտողություններ. բանահավաքի հուշատետրից, Սփյուռքահայության հետ մշակութային կապի պետական կոմիտեի «Հայրենի եզերք» պատկերազարդ հանդես, Եր., 1991, հունիս, էջ 30-33 և էջ 40:

տեղի պաշտպանում էր ամենքին, հատկապես ԽՍՀՄ-ի առաջին դեմքերին՝ Բրեժնևին, Սուլովին, Գորբաչովին, կաշառում ու... հարցեր էր կարողանում լուծել: Նախիջևանի հայաթափումն ավարտել էր և անցել Ղարաբաղին: Իսկ մենք, իբրև հակաքայլ, անեկդոտ էինք ստեղծում ու ծիծաղում նրա պահվածքի վրա.

Գիտե՞ք, որ օճառի նոր տեսակ ա արտադրվել. «Հեյդար Ալիև»: (ԱՍՇՀ)

Ասածը հիմնավորում է նաև Ղարաբաղյան շարժման առաջին տարում սումգայիթյան ոճրագործությունից հետո ստեղծված ստորև բերվող ժողովրդական ստեղծագործությունը.

Մեղրու հայերը Թավրիզի հայերին ասում են. //– Դո՞ւք ինչի չեք միանում Ղարաբաղյան շարժմանը: // – Մենք էլ ենք միանում շարժմանը, – ասում են Թավրիզի հայերը, – բայց դուք որ շարժումը սկսեցիք, էնտեղ՝ Մոսկվայում, լրտես ունեի՞ք: // – Չէ: // – Բա էլ ինչի՞ էիք սկսում...(ԱՍՇՀ)

Մեկ այլ գրառմամբ այն այսպես է ներկայացվում.

Հայերը վերջապես հասկացան, որ իհա՛րկե Մոսկվան կմերժեր Ղարաբաղը փալ. մենք ստորագրություններ էինք հավաքում, աղրբեջանցիները փող էին հավաքում: (ԱՍՇՀ)

Այդ նույն ժամանակ Հայաստանի ղեկավար Կարեն Դեմիրճյանը կանգնելու էր ծովի պես ալեկոծվող 500.000-անոց «ամբոխի» առաջ ու հեզնանքով ասեր. «Ի՞նչ է, Ղարաբաղը գրպանումս է՞, որ հանեմ տամ...»:

Ուրեմն ժողովուրդն էլ ճարահատ իր հակաքայլն էր անելու՝ պայքարելով ոչ միայն զենքով, այլև՝ անեկդոտով.

Ազատե՛լ Պարույր Հայրիկյանին և... Կարեն Դեմիրճյանին⁴⁰⁷ (Այդ ժամանակ Պարույր Հայրիկյանն իր այլախոհական՝ Հայաստանի անկախացման հայացքների համար բանտարկված էր):

⁴⁰⁷ **Վարդանյան Հր.**, Ոչ մասնագիտական դիտողություններ. բանահավաքի հուշատետրից, Սփյուռքահայության հետ մշակութային կապի պետական կոմիտեի «Հայրենի եզերք» պատկերագրող հանդես, Եր., 1991, հունիս, էջ 32:

Խորհրդային Միությունում տարբեր տեղեկատվական միջոցներով Ղարաբաղյան շարժումը ներկայացվում էր որպես ազգայնամոլականների, էքստրեմիստ-ծայրահեղականների շարժում: Շարժման մասնակիցների թվաքանակն էլ էր կեղծվում՝ հարյուր հազարավոր մարդկանց արդարացի բողոքը ներկայացնելով իբրև մի խումբ ծայրահեղականների շարժում, ինչին ժողովրդի արձագանքը այսպիսին է լինում.

Հաղորդագրություն. Մի խումբ էքստրեմիստներ Երևանում կազմակերպեցին 500.000-անոց երթ: (ԱՍՇՀ)

Կամ էլ՝ այսպիսին.

Նոր որոշում է եղել՝ ժամը 11-ից հետո միլիոնից ավելի չհավաքվել⁴⁰⁸:

Ժողովրդական ալիքի հզորության և «Ար-ցախ, Ար-ցախ...» վանկարկումներն ասես ուզում էին պայթեցնել երկինքը: Ժողովուրդն այն համեմատում էր Նիագարայի ջրվեժի շառաչի հետ: Ահա 1988-ի թեժ օրերն արտացոլող գլարճախոսություններից մեկը.

Նիագարայի ջրվեժի մոտ գիղը (գրոսավարը) փորհստներին (գրոսաշրջիկներին) բացատրում է.

– Այս ջրվեժը, որ դուք տեսնում եք, ավելի հիասքանչ է ու ահավոր իր բարձրությունից թափվող ջրերի աղմուկ-աղաղակով: Այդ հզորության մեջ ոչ թռչունների դայլայլն է լսելի, ոչ էլ... Շուրտով, շատ շուրտով, երբ հայկական պատվիրակությունը կմեկնի (նրանք այստեղ են եկել Ղարաբաղյան շարժման ամենաեռուն օրերին), դուք կլսեք ու կվայելեք ջրի շաշյունի ձայնը...: (ԱՍՇՀ)

Հանրահավաքների նման ընդգրկվածություն և մասնակիցների համախմբվածություն, միմյանց նկատմամբ անսահման հարգանք ու զսպվածություն, շրջապատի ծառ ու թփի հանդեպ հոգատարություն և կարգուկանոն չի տեսել աշխարհի և ոչ մի երկիր...: Ղարաբաղը միավորել էր ողջ ազգին, քաղաքացուն ու գյուղացուն, մտավորա-

⁴⁰⁸ **Վարդանյան Հր.**, Ոչ մասնագիտական դիտողություններ. բանահավաքի հուշատետրից, Սփյուռքահայության հետ մշակութային կապի պետական կոմիտեի «Հայրենի եզերք» պատկերագարի հանդես, Եր., 1991, հունիս, էջ 32:

կանին ու բանվորին, անգամ գողական աշխարհի մարդկանց. ժողովուրդը, տուն-տեղ թողած, հանրահավաքներում էր, բանտերում գտնվող գողական աշխարհի մեծերը հատուկ հրահանգով, ասում են, արգելել էին ամեն տեսակ գողություն... : Սա իրականությո՞ւն է, թե ժողովրդական բանահյուսության ժանրերից, անեկդոտում ժողովուրդը դա այսպես է մեկնաբանում.

– *Փետրվարյան միտինգների ու ցույցերի օրերին ինչի՞ գողություններ չեղան:*

– *Ո՞նց լինեք, երբ բոլոր գողերին ու ավազակներին փակել էինք կենտրոնում ու զորքով շրջապատել:* (ԱՍՇՀ)

Ազգագրագետ Լևոն Աբրահամյանը շարժմանը նվիրված իր հոդվածում ահա թե ինչ է գրում այդ օրերի մասին «...Ստեղծվեց մի յուրահատուկ վիճակ, երբ ժողովրդի զանգվածն ասես վերածվեց մի միասնական ժողովրդական մարմնի... Այդ հսկա մարմինը (փետրվարի 25-26-ի հանրաժողովին մասնակցողների հոսուն թիվը հավանաբար հասնում էր մեկ միլիոնի) բաղկացուցիչների զուտ մեխանիկական միություն չէր: Այն օժտված էր մեկ միասնական ոգով, մեկ մտքով, և, վերջապես, մեկ ազգության զգացումով»⁴⁰⁹:

Անեկդոտներում ամուսնությունների հետաձգումը ևս պայմանավորված էր մեկ կուռ ընտանիք դարձած լինելու հանգամանքով.

Մայրը նախատում է որդուն, որ չի ամուսնանում.//–Մի՞թե մի հարմար աղջիկ չկա:

– *Ում հետ ամուսնանամ, – պատասխանում է տղան, – քանի ամիս է, բոլորս քույր ու եղբայր ենք*⁴¹⁰:

Այդ ժամանակների մասին միակ ճշմարիտ ու անկեղծ *տեղեկատուն*, ինչ խոսք, ժողովրդական երգիծանքն էր՝ անեկդոտը: Շարժման տարիներին որոշ անհատներ ջանասիրաբար անմիջապես արձանագրում էին յուրաքանչյուր դրվագ, իրողության վերա-

⁴⁰⁹ **Աբրահամյան Լ.**, Քառսը և կոսմոսը ժողովրդական ելույթների կառուցվածքում. Ղարաբաղյան շարժումը ազգագրագետի հայացքով, «Մշակույթ» հանդես, 2.03.1990թ., էջ 16:

⁴¹⁰ Նույն տեղում:

բերյալ անեկդոտային ամեն մի դրսևորում.

Գյումրեցիները խորոված են անում, մեկ էլ իրար են խառնվում՝ վա՛յ, խորովածներս չստացվեց:

Հարցնում են՝ ի՞նչ է եղել որ: // – «Իզվեստիա», «Պրավդա» չկա: //

– Է՛, ինչների՞դ է պետք «Իզվեստիան», «Պրավդան»: // Լավ քամի կէնեն...⁴¹¹

Այս պարագայում, բնականաբար, օտարներին անհասանելի ու անհասկանալի էին հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ մամուլի միջոցով տրվող հաղորդագրությունները: Ահա այդ անտեղյակության իրապատումային մի արձանագրություն.

Մոսկվայում, Ուկրաինայում, Բելոռուսիայում հաճախ էին ասում.

– Իսկ չե՞ք կարող հայերդ ու ադրբեջանցիներդ միանաք և էդ դարաբաղցիների հարցերը ձեր ուզածով լուծեք... (ԱՍՇՀ)

Ի պատասխան պահանջատիրական խաղաղ ցույցերի՝ կատարվում է ամենազարհուրելին՝ սումգայիթյան ցեղասպանությունը: Լավատեսության ակնկալիքով լցված հայ ժողովուրդը դեռ սպասում էր, հույս ուներ, որ այդ հզոր պետության ղեկավարներն անմիջապես կպատժեն ոճրագործներին և Ղարաբաղը կմիացնեն Հայաստանին: Սակայն ոճրագործությունը դատապարտելու փոխարեն Սումգայիթն արժանանում է սոցմրցության հաղթողի կոչման, իսկ Մոսկվայում Խորհրդային Հայաստանի ղեկավարներն ու պատգամավորները՝ քննադատության: Խորհրդային Միությունում և աշխարհում ճանաչված հայ մտավորականների հայտարարած հացադուլն անգամ չի սթափեցնում ԽՍՀՄ ղեկավարներին: Ժողովուրդը հիասթափված է վերևներից, հազարավոր մարդիկ հեռանում են կոմունիստական կուսակցության շարքերից. տոմսերը կա՛մ հետ են տալիս, կա՛մ՝ վառում: Անեկդոտը արձանագրում է.

Մեկը կաշկանդված դուռը թակում ա, բացում ու կմկմալով հարցնում.

– Ներեցեք, այսպե՞ր էն կոմունիստական կուսակցության շարքերն ընդունում:

⁴¹¹ **Վարդանյան Հր.**, Ոչ մասնագիտական դիտողություններ. բանահավաքի հուշատետրից, Սիյուռքահայության հետ մշակութային կապի պետական կոմիտեի «»Հայրենի եզերք» պատկերազարդ հանդես, Եր., 1991, հունիս, էջ 30-33 և էջ 40:

Այդ օրերի ֆոնին նման հարցումից զարմացած ու տարակուսած՝ այնուամենայնիվ որոշում են քաղաքավարի պատասխանել. // – Այո: // – Իսկ ի՞նչ փաստաթղթեր են պետք կուսակցության շարքերն ընդունվելու համար: // – Առաջին հերթին՝ հոգեբույժից տեղեկանք, – պատասխանում են սրան: (ԱՍՇՀ)

Ամբողջ ազգն է ոտքի կանգնում, հանրապետության գյուղերից ու քաղաքներից ոտքով շարժվում են դեպի մայրաքաղաք, դեպի օպերա՝ **ազատության** հրապարակ: Տարատեսակ անեկդոտները արձագանքում են այդ ամենին՝ յուրաքանչյուր տարածաշրջան ներկայանալով անեկդոտային իր կերպարով.

Հրազդանցիները պլակատներով էկան Երևան՝ ցույցերի, բայց թատերական հրապարկի տեղը չգտան, թողին հետ գնացին (ժողովրդական խոսքում հրազդանցիները հայտնի էին քոռ ախտեցիներ բնորոշմամբ): (ԱՍՇՀ)

Լոռեցիները, Ղարաբաղի փոխարեն Ղա՛-փա՛ն, Ղա՛-փա՛ն վանկարկելով, ոտով հասնում են Աշտարակ: Աշտարակում կանգնեցնում, ասում են. // – Ղափա՛ն չպիտի ասեք, Ղարաբա՛ղ պետք ասեք: // Ասմեն. // – Ի՛, հրմի նորից ըտքան ճամփեն յեդ տենք դառնա ու... Ղարաբաղ ասելեն էլի գա՛նք... (ԱՍՇՀ)

Լենինականցիները՝ ցույցերի ամենաեռուն օրերին.

– Բերաններըս բացել չտան, հա՛... (ակնարկելով մեծ բերան ունենալը): (ԱՍՇՀ)

Կեղծիքի ու ստի վրա հիմնված հսկա կայսրությունը դիմակազերծ է լինում աշխարհի առաջ: Անեկդոտների կրակակետում այդ կայսրության հիմնադիրներն ու վերջիններիս գաղափարախոսությունը շարունակողներն են.

Լենինականցիք Լենինի արձանի գլխին պարիկ են դնում ու տակը գրում. «Վ.Ի. Լենինը Կաշպերովսկու սեանսից հետո»:

Կեղծիքի դեմ պայքարին միանում են դպրոցականները. անեկդոտների հավաքական հերոս Վարդանիկը դասավանդման կեղծ մեթոդներին հակադրում է ճշմարտությունը.

Մարգոն Վարդանիկին հարցնում է.

– Պատմիր դասըդ, ուլքե՞ր են մեր ժողովրդի թշնամիները:

– Լենին, Ստալին, Բերիա, Լիզաչով, Գորբաչով:

– Վարդանի՛կ, Գորբաչովն է՞լ:

– Հա, ընկե՛ր Մարգո, ես վաղվա դասն էլ եմ սովորել... (ԱՍՇՀ)

Վերակառուցման խոստումներով ասպարեզ մտած Գորբաչովի կերպարը *հանելուկային կառույցով* զվարճախոսությունում ամբողջացվել է գլխին ընդգծված կարիճ հիշեցնող նշանով, որը նրա ներքին էությանը խիստ համահունչ է.

Էն ի՞նչն ա, էն ինչը, // Գլխին՝ կարիճ, հայերի՛ դահիճ: (ԱՍՇՀ)

Շարժման դեմն առնելու քայլեր են ձեռնարկվում: Գործի են դրվում ջրցան մեքենաները, և 1965-ին Մեծ եղեռնի 50-ամյակի հայոց պահանջատիրության ցույցերի օրերին ստեղծված զվարճախոսությունը կրկին ասպարեզում է.

Լենինականում ցույցերի ժամանակ ջրի մեքենայով ժողովրդին ցրում են: Փախչելիս ժողովրդի միջից մեկը գոռում է.

– Ծո՛, ու՞ր կփախնիք, ջուրը տվին, հողն էլ էսա կուտան: (ԱՍՇՀ)

Կենտրոնական իշխանությունները շարժումը քայքայելու քայլեր էլ են ձեռնարկում: Գուցե 1988թ. ապրիլին գրառված այս անեկդոտն է՞լ էր վերևների հերթական ձեռնարկումներից մեկը.

Ղարաբաղը մերն է – շարժման առաջին օրերին:

Ղարաբաղը մերն էր – Գորբաչովի՛ հայերին ու ադրբեջանցիներին ուղղած դիմումից հետո:

*Ղարաբաղի մերն էլ... – «Պրավդայում» հայերի հասցեին լուտանքներ թափելուց հետո: (ԱՍՇՀ) **Տարբերակը տե՛ս Հավելված 2, թիվ 34**-ում:*

Ամեն օր, ամեն ժամ քաղաքական ամեն մի քայլին ու իրադարձությանը անմիջապես արձագանքում էր ժողովուրդը. տարաբնույթ նորանոր անեկդոտներ էին ստեղծվում: Եռուզեռի մեջ էր ոչ միայն ողջ հայ ժողովուրդը, այլև նրա առողջ ու սթափ դատողությունն ու վաղվա օրվա հանդեպ լավատեսությամբ լցված նրա պայծառ ու հու-

մորով լեցուն միտքը:

Հայաստանում պարետային ժամ է հաստատվում, զրահամեքենաներով ու խորհրդային զինվորներով օպերան շրջափակվում է, Երևանի երկնքից ուղղաթիռներն են վերահսկում և... հեղեղի պես հորդում են անեկդոտները.

Էրևընցիները շապ են զարգացե. վինտիլյատորների փոխարեն օդը վեռայյուրներով կհովացնեն: (ԱՍՇՀ)

Կամ էլ՝

Լսել ե՞ք՝ ցույցերին մասնակցած լենինականցիներին էքսպերտ ռենտգեն սպուդման են ենթարկում: //– Ինչո՞ւ: // – Փեղրվարյան ցույցերի օրերին Երևանում էրկու հապ ՔՏՌ ա կորեյ, չեն գտնում: (ԱՍՇՀ)

Անեկդոտներում տրանսպորտային միջոցներին փոխարինում են ռազմական մեքենաները.

Մի անձանոթ հարցնում է. //– *Օպերա ո՞նց կարող եմ գնալ: //– Նստում ես 3-րդ համարի ՔՏՌ-ը. ուղիղ կտանի օպերա: //– Իսկ ավելի շուրտ հասնելու համար ինչո՞վ կարող եմ գնալ: //– Մի հապ վեռայյուր ես պատվիրում, կգա կտանի: (ԱՍՇՀ)*

Կամ էլ եթե ժամադրություն է՝

Աղջիկն ու տղան պայմանավորվում են. //– Կհանդիպենք Կարապի լճից վեց զինվորացի:

Հուսահատության նշաններ են նկատվում, անեկդոտներում դա արտահայտվել է այսպես.

Հայերը ճարները կտրած Ղարաբաղի հարցով գնում են Լենինի մոտ, բացալրում, խնդրում, որ ժողովրդի արդար ձայնը լսի, մի հնար անի:

– Ըսկի ի՞նձ մի կտոր հող չտվին, ձեզ ո՞նց տան, – ասում է Լենինը: (ԱՍՇՀ)

Ղարաբաղյան շարժմանը նվիրված անեկդոտներում մեծ տերությունների ղեկավարներն են յուրովի ներգրավվում հարցը հօգուտ Ղարաբաղի լուծելու.

Ռեյգանը Գորբաչովին կըսե.

– Ծո՛, Գորբաչո՛վ, ես ամբողջ Լոս Անջելեսը փվի հայերուն, անոնք Լոս Արմե- նիոս դարձուցին, դուն պզտի՛կ Ղարաբաղ մը չե՛ս կրնար փալ հայերուն⁴¹²:

Դիմակազերծ խորհրդային երկրի պահվածքից հիասթափված՝ հայ ժողովուրդը ստիպված էր Ղարաբաղը Հայաստանին միացնելու այլընտրանքային ուղիներ փնտրել, որոնցից մեկն էլ ուղղորդում է ժողովրդական զվարճախոսությունը.

– Եթե միացման բոլոր գործողությունները անարդյունք լինեն, Ղարաբաղը պա- փերազմ կհայտարարի... Հայաստանին: // – Ո՞նց թե... //

– Այո, պափերազմ կհայտարարի ու... անձնափուր կլինի... (ԱՍՇՀ)

Հանրահավաքները տեղափոխվում են Մատենադարանի մոտ, ձերբակալվում են Ղարաբաղյան շարժման ղեկավարները: Պայքարի նոր փուլ է սկսվում...

2.9. 1988-ի դեկտեմբերյան երկրաշարժը

Ղարաբաղյան շարժման ամենաեռուն օրերին՝ 1988-ի դեկտեմբերյան ահասար- սուռ երկրաշարժից շաբաթներ անց, որքան էլ ցավը խորն էր ու կորուստը՝ շատ (շուրջ 25 հազար մարդ զոհ գնաց այդ աղետին), իսկ ընդգրկած տարածքը՝ մեծ (խորհրդային Հայաստանի ողջ հյուսիսային հատվածն էր ավերածությունների ենթարկվել), ժողո- վուրդը կամաց-կամաց սկսեց երգիծանքի լեզվով շտկել պարանոցը, անեկդոտ-զվար- ճախոսություններ պատմել՝ անգամ երկրաշարժի թեմայով՝ փորձելով ծիծաղով հաղ- թահարել անասելի դժվարությունները, վերագտնել աղետից խաթարված ոգին և շա- րունակել պայքարը ապրելու, կրկին կառուցելու, արարելու, Արցախյան շարժումը հաղ- թական ավարտին հասցնելու համար...:

1988-ի դեկտեմբերյան երկրաշարժից հետո ստեղծված անեկդոտներում ժողո- վուրդն այդ ահռելի չափերի հասնող ավերածությունների և զոհերի համար հիմնական մեղավորների մեջ երբեմն ուղղակի, երբեմն էլ անուղղակի՝ այլաբանորեն, մատնանշում էր՝

ա. *խորհրդային համակարգը*. փաստերը դա էին ապացուցում. նախախորհրդա-

⁴¹² **Սվազյան Վ.**, Կիլիկիա, արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, Ռեյզանը, Գորբաչովն ու Ղարաբաղը, էջ 114:

յին տարիների կառույցները կանգուն էին մնացել, խորհրդային տարիներինը՝ ավերվել: Անեկդոտներում դա այսպես է արտահայտվել.

Լենինականը քանդվեց, բայց Գյումրին մնաց... (ԱՍՇՀ)

Կամ էլ՝ Ջուխարը գյումրեցի փոշտացին, Լենինականը փլավ: (ԱՍՇՀ)

բ. խորհրդային ղեկավարներին.

Հնդկաստանում Ինդիրա Գանդին էր ղեկավարում, Լենինականում՝ Դոնարա Քանդին (իմա՝ 1988-ին Լենինականի քաղկոմի առաջին քարտուղարը Դոնարա Հարությունյանն էր, որը երկրաշարժից հետո ժողովրդի կողմից ստացավ Դոնարա Քանդի «պատվանունը»): (ԱՍՇՀ)

գ. մարդկային ընչաքաղցությունն ու անպարասխանաբարությունը.

Խորհրդային համակարգի մարդկանց հատուկ էր կառուցվող շենք-շինությունների ամրությունն ապահովող շինանյութերի վաճառքը: Դիպուկ և գրոտեսկի հասնող ծաղր ու ծիծաղով «Հայաստանի երկրաշարժին դատաւարութիւնը» առակատիպ երգի-ծապատումում այլաբանորեն է ներկայացվում ցեմենտի արդարացումը.

– Դուն ինչո՞ւ ձգեցիր, որ փլին:

Չիմէնթոն (իմա՝ ցեմենտը-ԱՍ) կ'ըսէ.

*– Կը ներէ՛ք, ես հո՛ն չէի, հոն ըլլայի նէ՛ չէի ձգեր, որ փլին՝⁴¹³: **Տե՛ս Հավելված 2,***

թիվ 35:

Ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում, նույնիսկ Ռուսաստանում ժողովուրդը համոզված էր, որ երկրաշարժը հանդուգն հայերին պատժելու նպատակ էր հետապնդում: 1989թ. դեկտեմբերին գործուղման ժամանակ Մոսկվայում անձամբ եմ արխանգելսկցի մի ռուսից լսել և արձանագրել հետևյալ անեկդոտը.

Լենինի դամբարանից ձայն է գալիս: Գնում են Գորբաչովին ասում են՝ ձայն է գալիս: Սա գալիս մտնում է դամբարան, Լենինը տեղից նստում է ու Գորբաչովին հարցնում.

⁴¹³ **Սվազյան Վ.**, Պոլսահայ բանահիւսութիւնը, Եր., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 2000, էջ 224:

- Դու՞ք ով եք, ի՞նչ է պատահել:
- Ես Միխայել Սերգեևիչ Գորբաչովն եմ, Հայաստանում երկրաշարժ է եղել:
- Իսկ ո՞վ է գտել կնոպկեն (սեղմակը), մի քիչ շուտ չե՞ն սեղմել... (ԱՍՇՀ)

ԽՍՀՄ ղեկավար Գորբաչովն իր «պատվավոր» տեղն է գտնում նաև հայկական անեծքախառն զվարճախոսություններում: Ահասարսուռ ավերածությունները տեսած լե- նինականցի կինը, վստահ լինելով, որ երկրաշարժը Գորբաչովի ձեռքի գործն է, իր վե- րաբերմունքը՝ ազգանվան «ստուգաբանությամբ» և գլխի խալի պատկերավոր համեմա- տությամբ, այսպես է արտահայտում է.

Ընչի՞, չիդե՞նք օր երկրաշարժն էլ էր Գյոռբաչովի սարքածը, հողեմ էդոր վարյոն- կա⁴¹⁴ գլուխը:

Ղարաբաղյան շարժումը առիթ հանդիսացավ նաև հարևան վրացիներին ոտքի կանգնելու, որին հետևեցին թբիլիսյան ապրիլի 9-ի ջարդերը: Դա դեկտեմբերյան երկ- րաշարժից չորս ամիս անց էր: Անեկդոտում այդ օրերի և երկրաշարժով հայերին պատ- ժելու մասին է ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Շեվառնաձեի՝ իր ժողովրդին հու- սադրող խոսքը.

Թբիլիսիի ապրիլի 9-ի ջարդերից հետո Շեվառնաձեն հայտարարեց.

- Քանի ես ԽՍՀՄ քաղբյուրոյի կազմում կամ, Վրաստանում 5 բալից բարձր երկ- րաշարժ չի լինելու:

Հենց այս հանգամանքն էլ պատճառ է դառնում Խորհրդային Միության կազմից նաև այլ ժողովուրդների դուրս գալու ելքեր փնտրելուն: Ի հակադրություն թբիլիսյան ջար- դերի՝ հայկական անեկդոտում վրացիները պատրաստ են համագործակցել հայերի հետ.

- Չէ՛, էլ ուրիշ հնար չկա, մենք ծով ունենք, հայերն էլ՝ շրջապատ, իսկը միանալու և Սովետական Միությունից դուրս գալու ժամանակն է: (ԱՍՇՀ)

Իբրև բողոքի նշան ԽՍՀՄ կենտրոնական մամուլում անընդհատ տպագրվող կեղծ հաղորդագրությունների և հայերին վարկաբեկող հոդվածների՝ ժողովուրդն իս-

⁴¹⁴ Զինստ տաբատների պես Գորբաչովն էլ գլխին լաքա (կեղտի հետք, բիծ) ուներ:

կապես բոլոր արարողակարգերով կազմակերպեց «Պրավդա» ու «Իզվեստյա» թերթերի հուղարկավորությունը, ինչից մի քանի ամիս անց տեղի ունեցավ ահասարսուռ երկրաշարժը: Ժողովուրդը կրկին զվարճախոսությամբ է արձագանքում ու «հիմնավորում» դա»:

Լենինականցիք «Պրավդա» և «Իզվեստյա» թերթերը թաղեցին, գեղինն էլ չդիմացավ... (ԱՍՇՀ)

Անեկդոտներից մեկում էլ ուժգին ցնցումը կապվում է Ղարաբաղը Հայաստանին «կպցնելու» բաղձալի ցանկությունն իրականանալու հետ.

Հիվանդանոցում մի մեծ մարդու մորֆիով մի կերպ պահելով՝ յոթերորդ օրն ուշքի են բերում:

– Հայրի՛կ ջան, ո՞նց ես, – հարցնում են բժիշկները:

– Օր ժածքն էղավ, ընձի թվաց՝ Ղարաբաղը Հայաստանին կպցրին... (ԱՍՇՀ)

Ժողովուրդը անեկդոտներում երկրաշարժը ներկայացնում է նաև *օգնությունների համարեքստում՝* աշխարհի տարբեր ծայրերից երկրաշարժի գոտու բնակիչներին հասցվող օգնությունները համեմատելով հարսանիքներում պարելու ժամանակ տրվող շաբաշի հետ.

Լենինականցիները թե՛

–Մի էնպես գյովնդ պարինք օր ամբողջ աշխարհ առ էտր շաբաշ կուտա, չի պրծնի:

Տարբերակ՝ *Քեֆի ժամանակ պարելիս էնպես ժածք էրինք, օր մինչև հիմի շաբաշներ է, օր կուտան:* (ԱՍՇՀ)

Մի քանի ամիս անց ԱՄՆ-ում և Տաջիկստանում էլ են երկրաշարժներ լինում, սակայն աշխարհը, մարդկությունը այնպես չի արձագանքում դրանց, ինչպես Հայաստանում կատարվածի ժամանակ, և զվարճապատումային դրսևորումը կրկին չի ուշանում: Այդ երկու դեպքերին առնչվող անեկդոտներում էլ առաջին պլանում ոչ թե երկրաշարժի բերած ավերածությունների մասշտաբայնությունն է, այլ ստացված նյութական

օգնությունների քանակը: Դրանցում զավեշտի հենքը այդ երկրների ժողովուրդների «շրջապատ չունենալու» պատճառաբանությամբ «հիմնավորումն» է՝ կառուցված երկխոսությամբ.

– *Օնո, ճիշտ է՞, որ Լոս Անջելես երկրաշարժ է էղել: //– Հա, ճիշտ է: //*

– *Ինչքա՞ն գումար է հավքվել. // – Կես միլիոն: //*

– *Ըստ որ շրջապատ չունիք, ընչի՞ երկրաշարժ կենեք: (ԱՍՇՀ)*

Տարբերակը տե՛ս Հավելված 2, թիվ 36-ում:

Մեկ այլ անեկդոտում այս նույն միտքը արտահայտվում է մտորումների տեսքով.

– *Էս տաջիկները մազալու ժողովուրդ են, ըսա՛ որ շրջապատ չունիք, ընչի՞ երկրաշարժ կենեք, – ասում են լենինականցիները: (ԱՍՇՀ)*

Աշխարհի առաջադեմ ժողովուրդների կողմից համակ ուշադրության արժանացած լինելու հանգամանքը գյումրեցին խտացնում է հետևյալ արտահայտության մեջ.

*Գիտեհինք որ Լենինականը աշխրրքի կենտրոնն է, բայց չիդեհինք որ **էպիկենտրոն** է: (ԱՍՇՀ)*

Անեկդոտները չեն շրջանցում նաև *երկրաշարժից տուժածներին օգնությունները անհավասարաչափ բաշխելը* ներկայացնող թեման: Այդ գործընթացը տնօրինող-կազմակերպիչների մի մասի համար երկրաշարժը իսկապես դառնում է եկամտաբերության աղբյուր.

*Լենինականցիներն ասում են. //–Ոմանց համար **ժածք էր**, ոմանց համար՝ հրաշք:*

Նույն երևույթն արտահայտվում է նաև բառախաղով.

*Երկրաշարժը շատերի համար դառավ **եկամտաշարժ**: (ԱՍՇՀ)*

Երկրաշարժն ու ըստ ընտանիքի անդամների տրվող օգնությունները անեկդոտներում պատճառ են դառնում արտագնա աշխատանքի համատեքստում բացահայտելու որոշ ընտանիքներում առկա մութ պատմություններ: Այդ մասին խոսվել է նաև *պանդիստության* թեմային անդրադառնալիս: **Տե՛ս Հավելված 2, թիվ 18:**

Երկրաշարժն արձանագրող անեկդոտներում բարոյականության չափանիշները խախտվում են նաև տուժածներին «տրվող օգնությունների» այլ դրսևորումներում.

Կնիկը մարդի ծոցին Ռուսաստանից օգնության եկած շինարար կնանոնցից մեկին տեսնելով՝ կատաղած գոռում ա. // – Ի՛, է՛ս ինչ ա: // – Երկրաշարժից տուժածներին օգնություններից ա, կնի՛կ ջան, ուրիշ բան չմտածես: // – Խի՞, էդ օգնություններիցը կնանոնցը հասնըմ չե՞ն, – սրտնեղըմ ա կնիկը: (ԱՍՇՀ)

Փրկարարական աշխատանքներ կատարելիս տխրության, վշտի հետ անպակաս էր նաև ժողովրդին գոտեպնդող հումորը.

Փլատակների տրկից մեկին օր հանեն գը, ֆրանսերեն խոսակցություն լսե գը, կսե. – Յա՛, Լեննագան սըգանք, ֆրանսիա դո՛ւս հելանք: (ԱՍՇՀ)

Երկրաշարժյան հումորից անմասն չէին նաև տարեցները.

Երկրաշարժի օրերին մի մեծահասակ կնոջը փլատակների տակից հանում են, տեսնում՝ ոտքը լիճել է: Օգնության հասած բժիշկները անմիջապես մկրատով կտրում են բայկվի երկար տրուսիկի փոխկը, որ առաջին բուժօգնություն ցույց տան: Էս լենինականցի կնիկը թե՛

– Չմեռանք, պրատեխով⁴¹⁵ տրուսիկ էլ հագանք... (ԱՍՇՀ)

Երկրաշարժային անեկդոտների և սրախոսությունների մի մասը ստեղծվում էր հենց նույն պահին, եթե փրկարարական աշխատանքները համեմատաբար բարեհաջող էին ավարտվում, մի մասն էլ հետո էր ստեղծվում՝ համեմելով անիրական գործողություններով ու արտահայտություններով, ինչպես ստորև բերվող նմուշներում.

Գյումրեցիները փլատակների տակերից մեռածների հավաքման աշխատանքներն են կատարում: Մեկը գոռում է, որ հասկացնի, թե ինքը ողջ է, մեռած չէ: Էս աշխատանքներին մասնակցողներից մեկն ասում է.

– Ձենդ գլուխդ մի գցե, տաք ես, չես զգա, օր մեռած ես... (ԱՍՇՀ)

Կամ էլ՝

⁴¹⁵ **Պրատեխ** (ռուս.) – կտրվածք, շրջագգեստի ճեղքվածք:

Մեկին փլատակների տրվից հանեն գը, կը գոռա՝ ականջը՛ս, հա ականջըս:

Գնում են յաշիկըմ ականջ են բերում դնում սրա առաջը, ասում են.

– Հերիք ղժժաս, ջոգի՛, որը քուզըդ է, վե՛րու:

Սա խառնում է, խառնում, ասում է.

– Իմը չկա, իմ ակընջի յեղևը պապիրոս էր դրած: (ԱՍՇՀ)

Զվարճախոսություններից մեկում զավեշտալի է ներկայացված փլատակների տակ կենդանի մնացածների խոսակցությունը.

Էրկու հոգի փլատակների տակ խոսում են. //– Ծո՛, կմրսիմ, ի՞նչ էնես: //

– Կմրսի՞ս՝ էրկու պանելըմ առ վրեդ քաշի, ընչի՞ սկուպոյություն կենես: (ԱՍՇՀ)

Էրկրի իշխանությունների՝ սերիալներով ժողովրդին բթացնելուն պատակամղված քաղաքականությունը հրաշալի է արտացոլվել անգամ երկրաշարժյան թեմաներով անեկդոտներում: Դրանցում հեզնանքով է ներկայացվում վշտի մեջ թաղված ժողովրդի կրկնակի «հոգսը»՝ բրազիլական սերիալներից մեկի՝ «Իզաուրայի» կիսատ մնալու, հերոսուհու ճակատագրի անորոշության խնդիրը.

Մեկին մի քանի օր անց մի կերպ հանում են փլատակների տակից ու հարցնում են.

– Հը, ո՞նց ես: // – Ես հեչ, էն խեղճ Իզաուրան ի՞նչ էլավ... (ԱՍՇՀ)

Մեկ այլ զվարճախոսությունում այն այսպես է դրսևորվել՝

Իբր թե մեր դարդ քիչ էր, Իզաուրան էլ վրա փվեց... (ԱՍՇՀ)

Լենինականցին պատրաստ է դիմագրավել ազնիվ պայքարի մեջ մտնող՝ դեմ առ դեմ դուրս եկող ցանկացած բանի, սակայն երկրաշարժի դեմն առնել անզոր է, քանզի... «տակից կուգա».

Ամենեն շատ երկրաշարժեն կվախնանք, դեմեն օր կուգան, սաղ-սաղ կուլ կուտանք, համա տակից կուգան, ոչինչ չենք կրնա էնե... (ԱՍՇՀ)

2.10. Ղարաբաղյան պատերազմը

Ղարաբաղյան պատերազմի հենց առաջին օրերից Սարդարապատի հերոսա-

մարտի օրինակով հայ ժողովուրդը ոտքի կանգնեց և ի պաշտպանություն հայրենի հողի՝ կրկին անհավասար կռվում թշնամուն դիմագրավելով՝ ցույց տվեց իր կամքն ու անկոտրում ոգին և հաղթանակ տարավ:

Այդ ոգին բարձրացնող ու ամրացնող գործոններից մեկն էլ եղավ երգիծական ստեղծագործությունը՝ անեկդոտը: Դա արտահայտվեց նաև ԼՂՀ ԻՊԿ օրգան «Մարտիկ» թերթում պարբերաբար հրատարակվող նյութերով, որոնք, հենց արցախյան պատերազմի ժամանակ՝ 1993 թվականին, ի մի բերվելով, հրատարակվեց առանձին գրքույկով⁴¹⁶: Նման նշանակալից երևույթին «Ցասումով և սրախսությամբ» հոդվածով անմիջապես անդրադարձավ ճակատային լրագրող Վարդան Դեվրիկյանը՝ գրելով. «Անցյալ դարավերջի ազգային-ազատագրական պայքարի երգերը տեղայնացան Արցախի լեռներում՝ նվիրվելով նորօրյա հերոսներին ու ճակատամարտերին: Բայց քանի որ պատերազմի ընթացքում մարդիկ ոչ միայն պայքարում են եւ հերոսանում, ցնծում հաղթանակների եւ սգում պարտությունների համար, այլեւ ապրում են այդ պատերազմի ընթացքում. վերջինս բնականաբար պետք է արտացոլվեր նաեւ բանահյուսության ամենակենցաղային ժանրում՝ անեկդոտում»⁴¹⁷:

Արցախյան պատերազմի և դրան հաջորդած տարիներին հրատարակված տարատեսակ գրքերում⁴¹⁸ ու գրքույկներում⁴¹⁹, նաև՝ որոշ հոդվածներում⁴²⁰ ու անձնական

⁴¹⁶ **Աթաջանյան Վ.**, *Խաչին, Բուրուլը և ուրիշները*, ԼՂՀ ԻՊԿ օրգան «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1993թ., «Մաշտոց» հրատ.:

⁴¹⁷ «Երկիր» թերթ, Եր., 23.10. 1993թ.:

⁴¹⁸ **Սարգսյան Ա. Յու.**, Արցախյան զվարճախոսություններ, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2014, 172 էջ: **Սարգսյան Ա. Յու.**, Արցախի բանահյուսությունը, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, էջ 420: **Ղահրամանյան Կ.**, Արցունքոտ ժպիտներ, հատոր 1, Եր., «Դալլ» հրատ., 2004, էջ՝ 214, 220, 264-265 և այլն: **Ղահրամանյան Կ.**, Արցունքոտ ժպիտներ, հատոր 2, Եր., «Դալլ» հրատ., 2006, 352 էջ: Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, հավաքել և կազմել է **Լենա Անթառանյանը**, Եր., «Վերնատուն» հրատ., Եր., 1994, էջ 60: **Մելիք-Սարգսյան Գ.**, Զվարճալիք, Եր., «Պարուր Սևակ» հրատ., 2001, էջ 54: Կատակում են մովսեսցիները, Գրառողներ՝ **Ա. Պապյան, Հ. Պապյան**, Եր., «Նոյյան տապան» հրատ., 2012, էջ 54:

⁴¹⁹ **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ականթարթ: Զվարճապատումներ: «Մարտիկ» թերթի հավելված, ք. Ստեփանակերտ, 1995:

⁴²⁰ **Հայրապետյան Թ.**, Խաչենագետի ներքնահովտի վերաբնակեցված գյուղերի հասարակական-մշակութային գործընթացները. Կորուսյալ հայրենիքի և ազատամարտի հիշողությունները վերաբնակների բանահյուսության մեջ: Վերամշակութայնացման հարցեր /Հայ էթնիկությունը սեփական և այլազգի միջա-

հավաքածուներում⁴²¹ տեղ են գտնում նաև Արցախյան պատերազմին առնչվող ժողովրդական մանրապատումներ և զվարճախոսություններ, որոնց նախաձեռնողների մի մասը ազատամարտիկներն էին՝ մեկ անգամ ևս հավաստելով հայի անկոտրում ու կենարար ոգու գաղտնիքը՝ նաև երգիծանքի լեզվով դժվարությունները հաղթահարելու ունակությունը:

Ղարաբաղյան պատերազմին առնչվող անեկդոտները տարբեր կառուցվածքի, բնույթի ու բովանդակության են: Դրանցում գործող կերպարները ևս տարբեր են. այնտեղ հանդիպում ենք և՛ արցախյան ազատամարտի լեգենդ դարձած անձանց ու հրամանատարների, և՛ սովորական ազատամարտիկների, և՛ հավաքական կերպարների՝ *Խաչի, Բուրու, Ջոկի, Գոգի* և այլք:

Տասնչորսամյա մարտիկ Մուշո Անտոնյանին արտասահմանյան լրագրողները հարցնում են. // – Մեծանալուց հետո ի՞նչ ես ուզում դառնալ: //– Ավո՛, – կարճ պատասխանում է նա: // – Ձեռ կըրնար, – ասում է զրույցին ներկա Ավոն⁴²²:

ա. Արցախյան ազատամարտի տարիների անեկդոտների մի մասը, մեր ժողովրդի մեջ տարածված նմուշներ լինելով, փոփոխելով ու համապատասխանեցնելով պատերազմական կյանքին, ռազմաճակատին առնչվող առարկաներին ու երևույթներին, նորովի դրսևորումներով են հանդես գալիս: Այսպես, ստորև բերվող նմուշի հանդիպում ենք և՛ 19-րդ դարի երկրորդ կեսի անեկդոտների ժողովածուներում, և՛ 20-րդ դարի 60-ականների ուրբենյան անեկդոտաշարում: Երկուսում էլ ճաշի մեջ փալասի կտոր է լինում, արցախյան տարբերակում՝ «գիլգա»⁴²³: Դրանցում զավեշտի մեխը ոչ թե երևույթի՝ վատ սպասարկման քննադատությունն է և ոչ էլ բորշի մեջ հայտնված առարկան, այլ չնչին վճարի դիմաց կամ անվճար ստացածի հիմնավորումը՝ իբր նրանց ակնկալածի հակադրություն.

վայրում. Հետազոտական փորձ, խնդիրներ և հեռանկարներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 44-51,

⁴²¹ Ա.Շ. Սարգսյան, Սվ. Վարդանյան, Թ. Հայրապետյան և այլք:

⁴²² **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ակնթարթ: Զվարճապատումներ: «Մարտիկ» թերթի հավելված, ք. Ստեփանակերտ, 1995, էջ 5:

⁴²³ **Գիլգա** (ռուս.) – պարկուճ:

– Էս հի՞նչ ա, բորշիս մէջին **գիլգա** կա, – բողոքում է Բուբուլը:

– Հինչ ա՞, բէսպլատնի⁴²⁴ բորշըս օտում՝ հերիք չի, օզում ըս վէր մէջին ավրօմար ինի՞, – պատասխանում է Խաչին⁴²⁵:

բ. Արցախյան պատերազմի անեկդոտներից մեկում էլ կնոջ դավաճանությունը հայրենասիրության ֆոնին չարյաց փոքրագույնն է համարվում.

– Խաչի՛, վէր կնէգյը մարթին դավաճանում ա, հի՞նչ պիտի անիս, – մտախոհված հարցնում է Բուբուլը: // – Պիտի շար ուրխանաս: // – Հո՞նց թա... // – Թա կնէգյըր քեզ դավաճանալ ա, ուրխաց, վէր քեզ դավաճանալ ա, վէչ թա հայրէնիքին⁴²⁶:

գ. Երկխոսական զվարճախոսություններում զավեշտի պատճառ է դառնում պատասխան խոսքը ժողովրդական իմաստախոսությամբ ներկայացնելիս.

– Խա՛չի, Էլչիբեյին անա խաբար չկա՞:

– Բո՛ւբուլ, վէր էշին կաշին օզում ին մաշկին, բարաբան⁴²⁷ շինին, զրոռաց, թա՛ «Իմ մասին հայրա յէտնան ըք սկըննական»⁴²⁸:

դ. Արցախյան ազատամարտին առնչվող անեկդոտներից մեկն էլ պատերազմական տարածքի տեղանվան բառախաղային կիրառությամբ է արտահայտված. բամբառակ խոսքով՝ հայիոյանքով է ընդգծվում հակառակորդի ցանկությունների փլուզումը.

Մարտից հետո քրտնած ու փոշեթաթախ Խաչին կանգնել էր «Ասկերան» ճանապարհային ցուցանակի առաջ ու մտքերի մեջ ընկել: Բուբուլը հարցնում է.

– Էտ հի՞նչ ըս մտածըմ, Խա՛չի:

– Մտածըմ եմ, վէր էս ուկազարէլին⁴²⁹ առաջին տառէն տէղակ հարկավեր ա «է»

⁴²⁴ **Բէսպլատնի** (ռուս.) – անվճար:

⁴²⁵ **Աթաջանյան Վ.**, Խաչին, Բուբուլը և ուրիշները, ԼՂՀ ԻՊԿ օրգան «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, «Մաշտոց» հրատ., 1993, 2004, էջ 8:

⁴²⁶ **Աթաջանյան Վ.**, Խաչին, Բուբուլը և ուրիշները, ԼՂՀ ԻՊԿ օրգան «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, «Մաշտոց» հրատ., 1993, 2004, էջ 15:

⁴²⁷ **Բարաբան** (ռուս.) – թմբուկ, դիոլ:

⁴²⁸ **Աթաջանյան Վ.**, Խաչին, Բուբուլը և ուրիշները, ԼՂՀ ԻՊԿ օրգան «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1993թ., «Մաշտոց» հրատ., 2004թ. էջ 19:

⁴²⁹ **Ուկազատէլ** (ռուս.) – ցուցանակ:

կիրիլ⁴³⁰:

Ե. Եթե Արցախյան պատերազմում մարտնչում էին աշխարհի տարբեր երկրներից իր հայրենակիցներին օգնության եկած հայ ժողովրդի զավակները, ապա ադրբեջանցիների հետ կռվում էին մի շարք երկրների վարձկաններ: Ահա դրա անեկդոտային վկայությունը.

Մի Ղարաբաղցի առվի ափին տեսնում ա մին մոջախետի⁴³¹ դիակ: Ղարաբաղցին յեշում ա, յեշում փրրան, ասում.

– Ա՛ շան փղա, քեզ փեղն ա, ես քեզ հեփե պրիզլասիփելնի բիլեփ⁴³² ըմ ղըր-կա՞լ⁴³³:

զ. Պատերազմում աչքը կորցրած հայ ազատամարտիկը, չնայած զորացրվելու հնարավորություն ունի, սակայն պատրաստ է կրկին կանգնել մարտական ընկերների կողքին: Անեկդոտում զավեշտի մեխը կրկին մարտադաշտ վերադառնալու «հիմնավորումն» է.

Կարօն Աղդամ վիրավորվում ա, աշկէն մինը քուռանում: Մին էրկու ամսանը յեփը հ&u%l% չի անում⁴³⁴, յեփ ք՛ինամ ա կռէվ: Կամանդիրը կըզնըվըմ⁴³⁵ ա, թա.

– Կա՛րօ, քեզ կամիսավափ ընք ըրալ, յէկալ ըս հինչ ա՞նիս, ըսկի խալիէրը էրկու աշկավ կարում չըն կըռվին, փու մին աշկավ կըռվօղ ը՞ս:

– Կա՛մանդիր, հինչ թափաղութ⁴³⁶ կա՞, մին ա, ափտամափավ յըրա ընէլիս աշ-կէս մինը հօփ ըմ օնում⁴³⁷:

Մ. Ահյանի հրատարակած գրքույկի նմուշներում ծիծաղի լեզվով ներկայացված է պատերազմի թե՛ հերոսական, թե՛ եղկելի երևույթները: Այսպես՝

⁴³⁰ **Աթաջանյան Վ.**, Խաչին, Բուբուլը և ուրիշները, ԼՂՀ ԻՊԿ օրգան «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, «Մաշտոց» հրատ., 1993, 2004, էջ 9:

⁴³¹ **Մոջախետի** – վարձու զինվոր:

⁴³² **Պրիզլասիփելնի բիլետ (ռուս.)** – հրավիրատոմս:

⁴³³ **Վարդանյան Սվ.**, Ժողովրդական խոսք ու զրույցի, բառ ու բանի դրսևորումները արցախյան պատերազմում (ծեռագիր):

⁴³⁴ **Հ&u%l% չի անում** – չի համբերում:

⁴³⁵ **Կըզնըվել** – համբերել:

⁴³⁶ **Թափաղութ** – տարբերություն:

⁴³⁷ **Սարգսյան Ա.Յու.**, Արցախի բանահյուսությունը, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, էջ 420:

Որոշ «վայ-ազատամարտիկների»՝ պատերազմական ռազմավարին տիրանալու ակտիվները ներկայացնելիս օգնության են գալիս 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հերոսներին նվիրված երգի տողերը.

Ռազմավարը կիսելու ժամանակ զինվորները, երկու մասի բաժանված, վիճում էին: Յուրաքանչյուր կողմ ապարդյուն փորձում էր ապացուցել իր առավելությունն ու իրավունքը վեճի առարկայի նկատմամբ: Վերջին պահին Գոգին հուսահատ, բայց վրդովված հարցնում է.

– Կարծում եք դուք «ֆիդայիներ» եք, իսկ մենք՝ «արդյոք ուղքե՞րը»...⁴³⁸

Ղարաբաղյան պատերազմի ժամանակ անընդհատ ոմբակոծությունների ենթարկված քաղաքների ու գյուղերի բնակչությանը նաև օգնություններ էին հասցնում Հայաստանի և սփյուռքի մեր հայրենակիցները: Անեկդոտներից մեկում Շուշիի բնակչության թիվը կոնկրետացված չի. կարող է պակասել կամ ավելանալ՝ *Յէշա՞ծ վէր վախտ* (իմա՝ նայած երբ).

Ափօվէն հրրցընում ըն. // – Ա՛փօ, Շուշի քանէ մարթ ա՛ ապրում://

– Յէշած վէր վախտ՝ պօմըշը՝⁴³⁹ ըստընա՛լիս, թա՛ ընդի՞⁴⁴⁰:

Ղարաբաղյան պատերազմի մասնակիցներին չի հետաքրքրում իրենց արածը գնահատել-չգնահատելու խնդիրը, նրանք մտահոգված են միայն ու միայն խաղաղության պահպանմամբ.

Ղարաբաղյան շարժման մասնակիցներից մեկին հարցնում են.

– Ո՞նց եք, ձեզ հիշո՞ւմ են: // Ասմա՛ //– Մոռացել են, բայց դա լավ ա: // Ասմեն՝

ո՞նց: // Ասմա՛ //– Խաղաղություն ա: (ԱՍՇՀ)

Անեկդոտները չեն շրջանցել անգամ **2016թ. ապրիլյան պատերազմը**: Այդ օրհասական օրերին զենքից ոչ պակաս իր դերն է կատարել նաև երգիծանքը: Քառօրյա

⁴³⁸ **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ակնթարթ: Զվարճապատումներ: «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1995, էջ 17:

⁴³⁹ **Պօմըշ (ռու.)** – օգնություն:

⁴⁴⁰ **Սարգսյան Ա.Յու.**, Արցախի բանահյուսությունը, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, էջ 420:

պատերազմի անեկդոտներում ևս էլ ավելի է ընդգծված երևում հայի անկոտրում ոգին: Աշխարհի տարբեր անկյուններից հայոց հողը պաշտպանելու համար անմիջապես Արցախ են մեկնում թե՛ սփյուռքահայերը, թե՛ նոր ժամանակներում արտագաղթած մեր հայրենակիցները:

Տեռորիստների պայթեցումները Բելգիայում ու Ֆրանսիայում բազմաթիվ զոհերի պատճառ էին դարձել: Աշխարհի մարդկությունը, նաև արցախցին ցնցված են կատարվածով: Եվ հանկարծ սկսվում է ապրիլյան պատերազմը, ու կրկին ուշադրության կենտրոնում Արցախն է հայտնվում: Անեկդոտների մի մասում օտարությունում գտնվող անհանգստացած արցախցիներն են առաջին օրերին զանգահարելով փորձում իրավիճակի մասին տնեցիներից ճշգրիտ տեղեկություններ իմանալ.

Բրյուսելից մարտակետցին զանգում ա մորը.

– Ա՛յ մեր, էդ հի՞նչ ա լալ, էդ հի՞նչ կռիվ ա, թորքը էլի հարձակվել ա՞:

– Տղա՛ ջան, մեզ մոտ լոխ լավ ա, դու մենակ զգուշ էղի, հեռու մնա էդ տեռորիստներից... (ԱՍՇՀ)

Մեկ այլ տարբերակում տղան Ֆրանսիայից է զանգահարում մորը.

Ֆրանսիայից տղեն Մափաղիս մորն ա զանգում. // – էդ թորքը էլի ա՞ հարձակվել:

– Ա՛յ բալա, հանգիստ կաց, մեզ մոտ լոխ լավ ա, թորքը հի՞նչ ա, որ դարաբաղուն գողի: Մենակ թե, տղա՛ ջան, դուն հեռու կաց էդ տեռորիստներից... (ԱՍՇՀ)

Ապրիլյան պատերազմի հենց առաջին օրերին աշխարհի տարբեր ծայրերից Արցախ են մեկնում նաև օտարերկրյա լրագրողներ, հանդիպում կրակագծում հայտնված խաղաղ բնակիչների հետ, հարցազրույց վերցնում նրանցից: Ահա անեկդոտային հարցազրույցներից մեկը.

Էրկու թղթակից Ղարաբաղյան քառօրյա կռիվների օրերին գնում են Թալիշ, որ իրենց աչքով տեսնեն թուրքերի ավերածությունները: Թալիշցի մի տափիկից հարցազրույց են վերցնում:

- *Դուք ո՞րպեղացի եք, – հարցնում է թալիշցի տատը:*
- *Ես ֆրանսիացի եմ, – ասում է մի թղթակիցը:*
- *Ես էլ Բելգիայից եմ, – ասում է երկրորդը:*
- *Վա՛յ, աման, բալե՛ք ջան, ինչքան կարաք, հեռու մնացեք էդ տեղորիստներից,*
- *անհանգստացած խորհուրդ է տալիս թալիշցի տատը...*

Քառօրյա պատերազմի դաժանությունը «թեթևությամբ» խտացվել է հետևյալ երկխոսության մեջ.

Ղարաբաղցուն հարցնում են՝ // – Ո՞նց եք: // Ասում ա. //

- *Փա՛ռք աստծու. գիշերները 92 թիվն ա, ցերեկները՝ 16: (ԱՍՇՀ)*

2016թ. ապրիլի 7-ին ապրիլյան քառօրյա պատերազմին առնչվող խտացված մի արտահայտություն գրառեցինք, որով հստակ բնորոշվում է հայի էությունն ու հաստատական ոգին. «*Հայաստանը աշխարհում միակ երկիրն է, որտեղից խաղաղ ժամանակ արտագաղթում են, պատերազմի ժամանակ՝ ներգաղթում*»:

2.11. Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը

Նորանկախ հանրապետության առաջին տարիներին վերաբերող անեկդոտները հիմնականում անդիպաշար (անսյուժե) կառույցներով հանդես եկող ժողովրդական ստեղծագործություններ են՝ զվարճախոսություններ: Դրանց մի մասը առնչվում է 1991թ. անկախության հռչակագրով ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալուց հետո Հայաստանի Հանրապետության առաջին տարիներին ժողովրդի առջև ծառայած անասելի դժվարությունների, այսպես ասած, *ցուրտ ու մութ տարիների հետ*, երբ ահագնացել էր արտագաղթը, երբ, ժողովրդի լեզվով ասած, *մարդիկ կա՛մ մեռնում էին, կա՛մ արտագաղթում*.

Որոշել ենք. ծնենն անցկացրինք թե չէ, Սովետաշենի գերեզմանոցում Լևոնի հետ

նկարվելու ենք (իմա՝ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ-ԱՍ): (ԱՍՇՀ)⁴⁴¹

Կամ՝

– Որոշել ենք՝ ձմեռն անց կացրինք թե չէ, Լևոնի հետ վիճարկի⁴⁴² նկար ենք նկարվելու:

1993թ. նոյեմբերի 22-ից ազգային դրամը շրջանառության մեջ մտցվելուց հետո ծավալով փոքր լինելու պատճառով նոր փողերի անունը ժողովուրդը դրեց Լևոնիկ:

Սոցիալական ծանր վիճակի արտացոլումն անեկդոտում արտահայտվել է Թումանյանի «Հառաչանք» պոեմի՝ ծերունու արտաբերած խոսքով՝ վերևից՝ Բարձրյալիցը ուղիղ իմաստով՝ հանրապետության նախագահից կախված լինելու փաստն ընդգծելով.

– Ո՞նց եք յոյա գնում, – հարցնում են:

– Փա՛հք աստճո: Մեր ապրուստն ի՞նչ է, մի կտոր սև հաց,

էն էլ հրեն հա՛՛ Լևոնից կախված...

Այս զվարճախոսությունը ժողովուրդը նորանկախ հանրապետության հետագա տարիներին անվան փոփոխությամբ մեծահոգաբար փոխանցել է նաև մյուս նախագահներին:

Ժողովրդի սոցիալական վիճակն էլ ավելի վատթարացավ և արտագաղթն ահազանցավ համաշխարհային տնտեսական ցնցման հետևանքով, որին մասնագետները օտարալեզու **կրիզիս** (հայերեն **ճգնաժամ**) անունն են տվել: Ահա համաշխարհային տնտեսական փլուզումն արձանագրող **ճգնաժամի՛** Հայաստանի հետ առաջին շփման անեկդոտային արձագանքը.

Ճգնաժամն իչնըմ ա «Չվարթնոց» օղանավակայանում ու զարմացած ասում.

– Իյա՛, էս ինձանից առաջ ուրիշ ճգնաժամ էլ ա՞ էկել:

Մեկ այլ նմուշում օտարալեզու **կրիզիսը** բառամասնատմամբ «ստուգաբանվում» է որպես զուտ հայկական բառ.

⁴⁴¹ Քանի որ ներկայացվող նյութերը գերազանցապես ատենախոսի գրառումներն են, այսուհետև տողատակում կտրվեն միայն տպագիր նմուշների աղբյուրները:

⁴⁴² **Վիճարկա (ռուս.)** – խմբանկար

– Գիտե՛ս որ **կրիզիսը** (ճգնաժամը) հայերն են ստեղծել, ու հայերեն բառից ա առաջացել: // – Էդ ո՞նց: //– Հա. կրի՛զիս (ինձ):

Եվ քանի որ հայկական բառից է առաջացել, զվարճախոսություններից մեկով էլ «հիմնավորվում» է նրա՝ Հայաստանի հայրենիքը լինելու փաստը.

*Ճգնաժամն իջնում ա «Զվարթնոց» օդանավակայանում ու ինքնիրեն խոսում.
«Զէ, ուր էլ գնաս, պտտվես, հայրենիքից լավ տեղ չկա»:*

Նորանկախ հանրապետության առաջին տարիների կենցաղային տարրական պայմանների բացակայությունը ժողովրդը այլաբանորեն է վերակենդանացրել ու հանձնել պատմությանը: **Տե՛ս Հավելված 2, թիվ 37:**

Տարիներ անց ժողովրդի քիչ թե շատ բարելավված սոցիալական վիճակը՝ գազի, ջրի, հոսանքի առկայությունն անգամ անեկդոտներում զավեշտի է վերածվում՝ նախորդ նախագահի «երանելի» ժամանակները հիշելով.

*Ապարանցին **Լևոնին** է ընտրում: Հարցնում են՝ // – Ինչի՞ այդպես որոշեցիր: //*

Ասում է. // – Բա ինչ անեի. մեռանք լույսի փող մուծելով...

Մեկ այլ տարբերակում՝

Ապարանցուն հարցնում են. // – Ո՞ւմ ես ընտրելու: // Ասմա՛ Լևոնին: // – Ինչո՞ւ: //

– *Որովհետև Լևոնի օրոք ո՛չ գազի փող էինք տալիս, ո՛չ լույսի: (Այսինքն՝ ոչ գազ կար, ոչ հոսանք-ԱՍ):*

Ընտրություններին նվիրված տափակ անեկդոտաշարերից մեկում էլ ընտրողներից մեկին՝ Լևոն Տեր-Պետրոսյանին ընտրելու հիմնավորումն է զավեշտ առաջացնում.

«Որովհետև Լևոն Տեր-Պետրոսյանի ժամանակ հերըս սաղ էր»:

Քննադատության թիրախում են նախագահներն ու ընտրություններից առաջ ժողովրդին տված խոստումները, դրանց տեր չկանգնելը: Բայց ժողովուրդը այնպիսի նրբությամբ ու սպանիչ ծաղրով է այդ հարցին անդրադառնում, որ և՛ քննադատությունը կա, և՛ անզուսպ ծիծաղը.

Նախագահական ընտրություններից հետո սոցիալական վիճակի ոչ մի փոփո-

խութիւն չտեսնելով՝ ժողովուրդը հարցնում ա Քոչարյանին.

– Էդ նախքան ընտրությունները լավ խոսում էիր, բերանըս լիքը խոստումներ էիր տալիս, էր ինչի՞ չես ձեն հանում, ինչի՞ չես խոսում: // Ասում ա. // – Ամայն⁴⁴³ ասալ ա՛ օտելիս խոսում չեն:

Նորանկախ հանրապետության ժամանակ ստեղծված անեկդոտներում արտացոլվել է Խորհրդային Հայաստանի միակուսակցականությանը փոխարինած բազմակուսակցական համակարգը՝ կուսակցությունների անվանումներով: Մի դեպքում այն ներկայանում է երկխոսական զվարճախոսությամբ.

– Իսկական սերը ո՞րն ա:

– Իսկական սերը էն ա, որ նա **հանրապետական** ա, բայց մեկ ա, սիրում ես:

Մեկ այլ դեպքում այն արտահայտված է որոշակի սեղմ սյուժետային գծերով՝ կուսակցության և հիվանդանոցի անվանումների համանունության հենքի վրա.

Մեկը փողոցում վատանում ա, հասցնում են հիվանդանոց, որ ուշքի են բերում, հարցնում ա. // – Ես ո՞րտեղ եմ: // Ասում են՝ հանրապետականում (իմա՛ հանրապետական հիվանդանոցում): // Էս մարդը տեղից վեր ա թռչում, թե՛ // – Չհասկացա... ես **«Բարգավաճում»** էի, էս ո՞նց եմ ընգել **«Հանրապետական»**...

Անեկդոտների մի խումբ էլ առնչվում է ընտրությունների ժամանակ Հայաստանի կուսակցությունների օգտագործած կարգախոսներին: Մի դեպքում զավեշտը դրսևորվում է գործազրկությունների, սոցիալական ծանր վիճակի համատեքստում՝ **«Հանրապետական» կուսակցության «Առա՛ջ, Հայաստա՛ն»** կարգախոսի հանդեպ արտահայտած ժողովրդի արձագանքով.

– Առա՛ջ, Հայաստա՛ն, – ոգևորված վանկարկում էին հանրապետականները:

– Առա՛ջ էր Հայաստան, – հոգոց է հանում ժողովուրդը:

Մեկ այլ անեկդոտում ընտրությունների ժամանակ **ՀՅԴ**-ի օգտագործած **«Ես Վահանի հեղ եմ»** կարգախոսը պատճառ է դառնում խանդոտ ամուսնու կողմից կնոջ

⁴⁴³ Ամայ – տատ:

սպանության.

Ապարանցու կնիկը առավուրվա կողմն ա տուն գալիս:

– Ո՞ւմ հետ ես էդել քշերը, – կարաղած վրա յա պրծնում մարդը:

*– Ե՞ս... ես **Վահանի հետ եմ** էդել: // Մարդը տալիս սպանում ա կնգանը:*

Քանի որ թաղային հեղինակությունների ու տարատեսակ մականունավորների ձեռքին էին կենտրոնացած նորանկախ հանրապետության տնտեսության և կառավարման մի շարք օղակներ, շատերի առաջ խնդիր էր առաջանում այդ մականուններից ձերբազատվելու ելքեր փնտրել: Ելքերից մեկն էլ անեկդոտն է ուղղորդում՝ վերելքն ապահոված կուսակցությունը ընդդիմադիր կուսակցությամբ փոխարինելու գնով, որն էլ ավելի է սրում զավեշտը.

Լ.Ֆիկ Սամոն (իմա՝ Սամվել Ալեքսանյանը) իրա մտրիկներին հավաքում,ասում ա.

*– Էսքան հարստություն, ունեցվածք եմ ստեղծել, մի խորհուրդ տվեք, ի՞նչ անեմ, որ ինձ կպցրած էս անունից պրծնեմ: // Ասում են. // – Միակ միջոցը «**Հանրապետական կուսակցություն**»-ից դուրս գալը, «**Ժառանգություն**» կուսակցության մեջ ընդունվելն ու Ազգային ժողովում Րաֆֆի Հովհաննիսյանի կողքին նստելն ա:*

*Էդպես էլ անում ա: Ընդունվում ա «**Ժառանգություն**» կուսակցության շարքերը, ազգային ժողովի նիստերի դահլիճում գնում նստում ա Րաֆֆի Հովհաննիսյանի կողքին: Էս անգամ էլ ժողովուրդը նրա անունը դնում ա **Րաֆֆու Սամվել**:*

Համակարգային փոփոխությունները հնարավորություն են տալիս Հայաստանում արտասահմանյան տարատեսակ ձեռնարկությունների ստեղծման: Անեկդոտներից մեկում այն արտացոլվել է ավագ սերնդի արտահայտած տարակուսանքով ու դժգոհությամբ.

Գերմանացիները օֆիս էին բացել Սիսիանում: Հայրենական պատերազմի վերջերան Թաթոսը տեսավ ու զարմացավ:

– Արա՛, էս ի՞նչ ա, – հարցնում է ընկերոջը:

– Գերմանական օֆիս ա, – պատասխանում է ընկերը:

– Ա՛յ տղա, բա որ գերմանացիները պիտի գային Սիսիան, էլ ինչի՞ իզուր տեղը փողը երկար մի հրացան տվին ձեռս ու՝ «Վպերյոդ»⁴⁴⁴, քշեցին մինչև Գերմանիա⁴⁴⁵:

Ժողովրդական երգիծանքը չի շրջանցել նաև նորանկախ հանրապետությունում առկա որոշ բացասական երևույթները, քննադատության թիրախ դարձնելով՝

ա. ընտրակեղծիքները.

Մեկը գնում է ընտրությունների: Յուրաքանչյուր բացում են, որ անունը գտնեն՝ ստորագրի: Հանկարծ մարդը սկսում է հոնգուր-հոնգուր լաց լինել:

– Քեզ ի՞նչ պատահեց, – հարցնում են:

– Օղորմած պապս ու տապս էկել են ընտրել ու գնացել, մի հատ մեր տուն էլ չեն մտել:

բ. ներկրվող ապրանքները մի քանի մարդու ձեռքին կենտրոնանալը.

Սամվել Ալեքսանյանը գնում ա Սերժ Սարգսյանի մոտ, թե՛

– Ճիշտ են ասը՞մ, որ **էրեխեքին արագիլն ա բերում**:

– Հա, ճիշտ ա: //– Իսկ չի ըլի, որ էդ էլ ես բերեմ...

գ. Հայաստանում բոլորը դժգոհում, տրտնջում են, ժողովրդական երգիծանքը տարբեր կերպ է անդրադարձել այս երևույթին.

Հանդիպում են էրկու վաղեմի ծանոթներ. // – Ո՞նց ես: //– Փա՛նք աստծո: // – Էրեխեքը՞դ: // – Լավ են: // – Գործերը՞դ, աշխատանքը՞դ: // – Հարմար ա, դժգոհ չեմ: //

– Չհասկացա, էդ էլ լաց ըլելու նոր ձև ա՞:

Մեկ այլ տարբերակում ԱՄՆ արտագաղթած և Հայաստանում մնացած երկու ընկերների հեռախոսային խոսակցությունն է բացահայտում այդ «հիվանդությունը»: **Տե՛ս**

Հավելված 2, թիվ 38:

Մարտիմեկյան արյունալի դեպքերը զվարճախոսությունում ներկայացվում է բառախաղով՝ **արտակարգ** բառի երկիմաստ կիրառությամբ.

⁴⁴⁴ **Վպերյոդ (ռուս.)** – առաջ:

⁴⁴⁵ **Ղազարյան Ս.**, Եկեք մի քիչ ուրախանանք, մեր հոգսերից թեթևանանք: Անեկդոտներ: Եր., «Զանգակ-97» հրատ., 2002, էջ 13:

Պուրիները զանգում ա Քոչարյանին, թե՛

– Ի՞նչ դրություն ա Հայաստանում:

Քոչարյանն ասում ա՛

– Արտակարգ⁴⁴⁶:

Զվարճախոսություններից մեկում էլ հին ու նոր ժամանակների իրական պատկերի նկարագրությանն օգնում է ժողովրդական իմաստախոսությունն ու դրա անդամների տեղերի փոփոխությունը.

– Անցածի և ներկայի միջև տարբերությունը տեսնում ե՛ս, Սարգի՛ս:

– Իհարկե տեսնում եմ: // – Օրինակ: // – Առաջներում եզր վեր էին կացնում, տակից հորթ ուզում, հիմա հորթը վեր են կացնում, տակից եզ ուզում⁴⁴⁷:

2.12. Խելապակասության թեման

Խելապակասության՝ հիմարության, շաշության թեման լայն տարածում ունի աշխարհի բազմաթիվ ժողովուրդների երգիծական բանարվեստում: Սակայն այդ թեմայով հայկական երգիծապատումներն ու զվարճախոսություններն առանձնանում են իրենց ազգային մի շարք հատկանիշներով:

Սրվանձոյանցի անտիպ ձեռագրերում հանդիպում ենք շատախցիներից, կաճեթիներից և Վասպուրական աշխարհի այլ վայրերից գրառած համառոտ դիպաշարով տասը նմուշների⁴⁴⁸, որոնցից մեկը՝ «Ամբողջ գիւղի մը իմին տուած» զվարճապատումը⁴⁴⁹, **պակասամտացության** թեմայով կաճետցիների՝ **կաղամբի թթու դնելու** զավեշտալի ձեռնարկի մասին է. «Կաճետցիք կաղամբի թթու բռնելուն համար խնայելով աղն, խորհեցան, որ Աղթամարայ ծովուն մէջ, որուն ջուրն սաստիկ աղի է,

⁴⁴⁶ Մարտիմեկյան դեպքերի ժամանակ արտակարգ՝ ռազմական դրություն հայտարարվեց:

⁴⁴⁷ **Ծատուրյան Ա.**, Ծիծաղում է հնձորեսկը, «Գյուղական հումորի շտեմարան» շարքից, Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 304:

⁴⁴⁸ ԳԱԹ, Գ. Սրվանձոյանցի ֆոնդ, թիվ 4/13, էջ 0269-0272:

⁴⁴⁹ Նույն տեղում, էջ 0269:

բռնել թթուն: Եւ բոլոր գիւղի կաղամբներ մանրելով՝ ծովը լեցուցին...»⁴⁵⁰:

Կաճեթցիների թթու դնելու մեկ այլ տարբերակ՝ «**Թթուն պովե**⁴⁵¹» վերնագրով, ընդգրկված է «Ծիծաղում են վանեցիները» գրքում⁴⁵²: Այստեղ կաճեթցիք կաղամբի փոխարեն շաղգամի թթու են դնում ոչ թե «Աղթամարայ ծովուն մէջ», այլ հենց իրենց գյուղի լճում՝ գյուղում, մնացած գործողությունները և վերջաբանը երկու պատումներում էլ գրեթե նույնն են: Հետաքրքիրն այս տարբերակում տեղացիների անհեթեթ գործողության հավաստի լինելը «վկայող» լճի անվանումն է. «Թթուն պովե», հեգնական ասույթ է, որ ուղղվում էր կաճեթցիներին, նրանց ծաղրի ենթարկելու համար: **Մինչև Վասպուրականի 1915-ի գաղթը այդ լիճը կոչվում էր «Թթվի գյուղ», այսինքն՝ թթվի լիճ**⁴⁵³:

Ծռության՝ խելապակասության թեմաներից մեկն էլ վերաբերում է **աղ ցանելուն**: Ի տարբերություն թթու դնելու թեմայի՝ աղ ցանելու պատումը առավել տարածված է եղել հայության մի շարք գավառներում: Այդ թեմային՝ տարբեր դրսևորումներով, հանդիպում ենք ոչ միայն մոկացիների⁴⁵⁴, այլև շեփիկցիների⁴⁵⁵ (Ակնի մոտ է գտնվում), հաթերքցիների⁴⁵⁶ (Արցախ), լոռեցիների⁴⁵⁷ (մասնավորապես վերջիններիս հորոսյան շարքի «շաշուություններում»), մարաշցիների⁴⁵⁸, համշենցիների⁴⁵⁹, գեյթունցիների⁴⁶⁰ և այլոց բանավոր մշակույթում:

⁴⁵⁰ ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, թիվ 4/13, էջ 0269:

⁴⁵¹ **Թթուն պովե** – թթուն թթվել է:

⁴⁵² Ծիծաղում են վանեցիները (կազմողներ՝ Վ. Հարությունյան, Ն. Մելիքյան), Եր., «Ձանգակ-97», 2006, էջ 152:

⁴⁵³ Նույն տեղում:

⁴⁵⁴ **Орбели И.**, том 2, Избранные труды, Ереван, изд. «Гитутюн», НАН РА, 2002, с. 58/15.

⁴⁵⁵ **Բախտիկեան Ա.**, Շեփիկայ խելացին (հայկական զուարճախոսություններ), Բեյրութ, Լիբանան, 1953, տպ. Օլիմպիք, էջ 28-30:

⁴⁵⁶ Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից, Կազմողներ՝ Միքայել Առաքելյան, Ռոբերտ Ղահրամանյան, «Հայաստան» հրատ., Եր., 1978, էջ 100:

⁴⁵⁷ ՀԱԲ, հատոր 20, Լոռի, Եր., «Գիտություն» հրատ., 1999, էջ 143:

⁴⁵⁸ Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն, Երկասիրեց Գր. Հ. Գալուստեան, Հրատարակութիւն Մարաշի հայրենակցական միութեան կեդր. վարչութիւն, ԱՄՆ, Նիւ Եորք, 1934, էջ 406:

⁴⁵⁹ «Ձայն համշենական» ամսաթերթ, թիվ 9-10, 2014թ., Ասացող՝ Զելիխա Քորխմազ, Արդվինի նահանգի Բորչքայի գավառ, գրառումը՝ Ս. Վարդանյանի:

⁴⁶⁰ Միջ-գաւառական անեքթոտներ, Հաւաքեց եւ ներկայացուց Յ. Զոլաքեան, Հալեպ, 1988, Տպ. Արեւելք, Հալեպ, էջ 60:

Բանագետ-ազգագրագետ Հակոբ Չոլաքյանի գրառումը տարբերվում է առկա մյուս պատումներից: Այստեղ տեղավայրի ժողովրդի ծոռությունն արտահայտված է երկու զեյթունցիների վեճի, զայրույթից իրենք իրենց գետը նետելու և ջրի մեջ հնձելու գործողությունը ցույց տալով՝ հակաճառությունը շարունակելու նկարագրությամբ, ինչը հիշեցնում է հայոց բանահյուսության մեջ հայտնի սյուժեն (ամուսինների՝ ցորենի արտը հնձելու գործիքի պատճառով վեճը և համառ կնոջ՝ գետում հայտնվելու պատմությունը): Սակայն չոլաքյանական պատումում զեյթունցիների վեճի պատճառը ոչ թե աղ ցանել կամ չցանելն է, այլ աղը հնձելու գործիքի (մանգաղո՞վ թե մկրատով) ճիշտ լինելու հանգամանքը⁴⁶¹:

Հետաքրքիր մի փաստ ևս, մինչև Ղարաբաղյան շարժումը Շամախու Մադրասա գյուղում «Սոփյաններ» ազգանունով մի տոհմ էր ապրում, որոնց համագյուղացիները «աղ վարողներ» էին ասում: Ըստ ավանդագրույցի՝ Սոփյանները «իբր թե գիշերը ցորենի տեղ աղ են ցանել»⁴⁶²: Շփոթմունքի պատճառով տոհմին այս մականվամբ պիտակավորման պատմությունն է ասես հիմք հանդիսացել հայոց շրջանում աղ ցանելուն առընչվող մի շարք երգիծապատումների ստեղծման:

Իսելապակասության թեմաներից ամենաշատ հանդիպողը, թերևս, **փերփերի գլուխը պոկվելու** հետ է կապված, պատումների մի խմբում այն տեղի է ունենում եկեղեցին տեղափոխելու հետևանքով, մյուսում՝ առավել մեծ քանակ կազմող պատումների խմբում, **երկուշաբթին փնտրելու ժամանակ** տերտերին քարայրը իջեցնելու և արջի կողմից գլխատվելու պատճառով:

Մ. Մուրադյանի գրառած «Կաճէթա ծրոներ»⁴⁶³-ում կաճեթցիները ուզում են մատաղ անելու համար **եկեղեցին փանեն Առնոս լեռան հեփևը**՝ մայր մտնող-քնող արեգակի մոտ: Այդ «հանճարեղ» մտահղացման ելքը երեցն է գտնում, իսկ իրագործումը

⁴⁶¹ Միջ-գաւառական անեքթոտներ, Հաւաքեց եւ ներկայացուց Յ. Չոլաքեան, Հալեպ, 1988, Տպ. Արեւելք, Հալեպ, էջ 60:

⁴⁶² **Հակոբյան Ա.**, Թաթախոս հայեր, պատմաազգագրական ուսումնասիրություն, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն (անտիպ) Եր., 2002, էջ 154:

⁴⁶³ **Մուրադյան Մ.**, Շատախի բարբառը, Կաճէթա ծոներ, ԵՊՀ իրատ., Եր., 1962, էջ 176-178:

նորից պարանը վզին փափաթելու միջոցով է կատարվում, և կրկին առկա են տերտերի անզգլուխ մնալու և տերտերակնոջը հարցումների դրվագները...:

Մյուս տարբերակում («Տերտեր խնդաց, ժամ տնդաց»⁴⁶⁴) «վտանգավոր գազանից» սարսափած կաճեթցիները փախչելիս որոշում են եկեղեցին էլ հետները տանել. «Կը պիրեն տերտերն կը մտուցեն ժամ, գլոխ ժամտան նեղ փենջարից (պատուհանից) կը խանեն տյուս, չվան կը թալեն վիզ, կը քյաշեն, տերտեր կը խեխտվի, պոկըներ (շուրթերը) ետ կը քաշվեն»⁴⁶⁵:

Զավեշտ առաջացնողը խեղդված տերտերի հետ քաշված շրթունքները տեսնելուց հետո կաճեթցիների արձագանքն է. «Դե՛, տղեյներ (տղաներ), քաշեք, վոլլա, տերտեր խնդաց, ժամ տնդաց»⁴⁶⁶:

Ի դեպ, նման վերնագրով ու արտահայտությամբ մի պատումի էլ («Էրեց կը-ցընձ%, ժ%մ կըտընդ%»⁴⁶⁷) հանդիպում ենք Հովսեփ Օրբելու կողմից Մոկսում կատարած գրառումներում, որը կրկին առնչվում է եկեղեցին տեղափոխելիս երեցի անզլուխ մնալուն:

Ձմռանը գնալ-գալը հեշտացնելու համար գյուղից բավականին հեռու գտնվող եկեղեցին պետք էր գյուղին մոտեցվեր: Որոշվում է պարանը եկեղեցու երդիսից անցկացնել, ապա երեցի վզին փաթաթել ու այն քաշել-մոտեցնել բնակավայրին, ինչի հետևանքով երեցի գլուխը պոկվում, ընկնում է, իսկ գլխի տիրոջ իսկությունը որոշելու համար բոլոր պատումների նման երեցկնկանն է հարցում արվում... : Մոկսյան այս պատումում տեղավայրն ու հերոսները որոշակիացված չեն, ինչը ենթադրել է տալիս, որ այս պատումը թերևս Շատախից է անցել հարևան Մոկս գավառ:

Հ. Օրբելու մոկսյան գրառումներում աղ ցանելու սյուժեով երգիծապատումից զատ, հանդիպում ենք նաև մոկացիների ծոռության մեկ այլ՝ **ասեղ ցանելու** դրսևոր-

⁴⁶⁴ Ծիծաղում են վանեցիները, կազմողներ՝ Վ. Հարությունյան, Ն. Մելիքյան), Եր., «Ձանգակ-97» հրատ., 2006, էջ 144:

⁴⁶⁵ Նույն տեղում, էջ 144:

⁴⁶⁶ Նույն տեղում:

⁴⁶⁷ Օրբելի И., том 2, Избранные труды, Ереван, изд. «Гитутюн», НАН РА, 2002, с. 66.

մամբ պատումի: «Ափսո՛ւս, մի ասեղ» մանրապատումում Հակուկ գյուղի մարդիկ, Մուկսի շուկայից «սերմացու» ասեղ առնելով, տանում են դաշտում ցանում և երկու տարի հույսով սպասում, որ ծիլ տա: Սակայն՝ ապարդյուն:

«...Տնունք էլ սիցին. //Ափսո՛ւս, մի ասեղ կուրսավ': //Կ%ցին Բէդ%ր, քառսուն մաղ պիրին, %ն առպու խուղիր քարիր մաղիցին, %ն ասեղ չիրը՛ տրևա»⁴⁶⁸:

Այս կապակցությամբ նշենք նաև, որ մեր ձեռքի տակ եղած տպագիր և անտիպ նյութերի շարքում ասեղ ցանելու սյուժեով այլ տարածաշրջաններում գրառված մեկ ուրիշ տարբերակ առայժմ մեզ չի հանդիպել:

Վասպուրական աշխարհի Շատախ գավառի Կաճեթ գյուղի մարդկանց «ծովելու» պատճառը բացահայտվում է լեզվաբան Մարո Մուրադյանի «Շատախի բարբառը» ուսումնասիրության նմուշների բաժնի «Կաճեթա ծոեր» մանրապատումի հենց սկզբում. «Կաճեթա կյեղ հախպիրըմ կեր, վավ անու ճիր կըխըմեր՝ կըծըռվեր: Կաճեթցեր ճոչ ու պըստիկ ան հախպրի ճիր կըխըմեն՝ կըծըռվեն: Անու խամար շատըխցիք՝ կաշտըցիրոն (կաճեթցիներին) կըսեն «Կաճեթա ծըռեր»⁴⁶⁹:

Մուրադյանի գրքի մեկ այլ նմուշում՝ «Հիմաստուն խարս»-ում ևս մատնանշվում է կաճեթցիների ծովելու նույն պատճառը: *Այդ հախպրի ճիր-ը խմած գյուղացիները որոշում են կուժի մեջ մնացած երեխայի ձեռքը կտրել, փրկել տանջանքներից, սակայն նրանց կանխում է նոր գյուղ բերած հարսը, «ուր տալ զանոնց հախպրի ճիր չէր խըմեր ու ծըռվեր»:* Նա շարդում է կուժը և ազատում երեխայի ձեռքը, ինչից զարմացած՝ կաճեթցիները հարսին նշանակում են ռես⁴⁷⁰: Մ. Մուրադյանի գրառած տարբերակը բավական ծավալուն ու հետաքրքիր մանրամասներով է:

Թարվերդյանական գրառումներում կաճեթյան և մոկսյան նյութերը հիմնականում կարճառոտ կառույցներ են: Օրինակ՝ ի տարբերություն «պակասամտաց» թեմայով **(ձեռքը կուժի կամ փարչի մեջ մնալու)** պատումի մի շարք տարբերակների՝ այստեղ

⁴⁶⁸ Նույն տեղում, c. 59/16:

⁴⁶⁹ **Մուրադյան Մ.**, Շատախի բարբառը, ԵՊՀ հրատ., Եր., 1962թ., Կաճեթա ծոեր, էջ 176, Հիմաստուն խարս, էջ 178:

⁴⁷⁰ Նույն տեղում:

կաճեթյանը կարճ է ու զերծ մանրամասներից.

Կաճեթցու տասը տարեկան տղան ձեռքը փարչի մեջ մտցնելուց հետո հանել չի կարողանում: Հայրը դիմում է իմաստուն Կակուսիկի օգնությանը.

– *Կակուսի՛կ, Կակուսի՛կ, յես քի մեռնիմ, յես տի պաջիմ, յիմ ճըժու ծիռ մտեր ա փառչի մանջ տյուս չիլնի:*

– *Ծիռ կտրիցեք, տյուս խանիցեք, ի՛նչ կա վուր, – ասում է Կակուսիկը⁴⁷¹:*

Եթե Սրվանձտյանցի գրառած *ձեռքը կճուճի մեջ մնալուն առնչվող* պատումի բազմաթիվ տարբերակներ են գրառվել նաև այլ տարածաշրջաններից, ապա ամեն անգամ փայտ կրելու հոգսից ազատվելու համար անտառը վառելու մասին պատմող զվարճապատումի այլ տարբերակ ևս առայժմ մեզ չի հանդիպել:

Ըստ Սրվանձտյանի գրառման՝ այս պատումի հերոսները գավառի կենտրոնի բնակիչներն են՝ շատախցիները. *«Շատախցիք անտառեն ամեն ժամանակը փայտ բերելեն ձանձրացել էին, ուտրի բոլոր գյուղացի մի անգամ խորհրդով անտառ վառեցին, որ իրենց աշխարհն մեկ անգամվամբ ավարտելով՝ այլևս չկարողեն փայտ բերելուն»:*

Վերը մեջբերված նմուշները մեկ անգամ ևս հավաստում են, որ պակասամտության թեմայով հայկական երգիծապատում-զվարճախոսությունները տարբերվում են մյուս ժողովուրդների նմանատիպ ստեղծագործություններից ոչ միայն մեր լեզվի տարբեր շերտերի յուրահատուկ դրսևորումներով, այլև հայոց աշխարհի բնակլիմայական պայմանների, աշխարհագրական տեղավայրերի ու դրանց առնչվող ավանդազրույցների, հայկական տեղանունների ու անձնանունների առկայությամբ և այլևայլ առանձնահատկություններով, որոնք մեկ անգամ ևս հաստատում են այդ նմուշների հայկականությունը:

2.13. Մանկական զվարճախոսություններ

Հայ ժողովրդական բանահյուսության ինքնատիպ տեսակներից է մանկական

⁴⁷¹ ՀԱԻ-ի բանահյուսության արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, FF - 1, էջ 4469:

զվարճախոսությունը, որտեղ արտացոլված է երեխաների յուրօրինակ մտածելակերպը, բնության և մարդկային փոխհարաբերությունների վերաբերյալ մոտեցումներն ու արված «վերլուծություն-մեկնաբանությունները», գիտատեխնիկական նվաճումների հանդեպ ունեցած վերաբերմունքը, կայուն բառակապակցությունները ուղիղ իմաստներով ընկալելու և ասելիքն իրենց հնարավորությունների սահմաններում գնահատելու ու դրանք յուրովի վերարտադրելու ձևերը, և այդ ամենը՝ անսպասելի ծիծաղ առաջացնող մանկան անկեղծ, պարզ ու շիտակ խոսքի միջոցով:

Հայ իրականության մեջ առաջին անգամ մանկական խոսքին անդրադարձել է մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանը: 1901 թվականին Փարիզում հրատարակվում է նրա «Մանկական բարբառ»⁴⁷² աշխատանքը: Իր իսկ գրառումների հիման վրա հեղինակը նախ՝ ներկայացնում է հայերենի մի շարք բարբառներում թոթովախոս մանուկների արտաբերած բառերը՝ «...թուով իբր 280, տասն եւ մէկ գաւառական բարբառով», ապա՝ անդրադառնում մանկական բարբառի քերականական ձևերի յուրօրինակ դրսևորումներին:

Աճառյանը մանկական խոսքը քննության առարկա է դարձրել նաև հայոց լեզվի լիակատար քերականությունը պատրաստելիս⁴⁷³: Հետագայում ևս մի քանի հետազոտողներ հողվածներով կամ համապատասխան բաժիններ ընդգրկող առանձին գիտական աշխատանքներով անդրադարձել են երեխաների խոսքի ուսումնասիրությանը, և կրկին բոլորի ուշադրության կենտրոնում մանկական խոսքի լեզվական հարցերն են եղել, մասնավորապես՝ բառապաշարը⁴⁷⁴: 2000 թվականին մանկական խոսքին նվիր-

⁴⁷² **Աճառյան Հր.**, Մանկական բարբառ, «Բանասեր» հանդես, հատ. 3, պրակ Ա, Պարիս, 1901, էջ 3-28:

⁴⁷³ **Աճառյան Հր.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (իմաստաբանություն, բառաքնություն, շարահյուսություն), Մանկական բառեր, ԵՊՀ հրատ., Եր., 2005, էջ 80-90:

⁴⁷⁴ **Գալստյան Ա.**, Մանկական խոսքի բառապաշարի մի քանի առանձնահատկություններ, Գիտական նյութերի ժողովածու՝ նվիրված պրոֆ. Տ. Ավետիսյանի ծննդյան 60-ամյակին, Եր., «Վան Արյան», 2001, էջ 15-20: **Նույնի՝** Մանկական խոսքի բառապաշարը և խա գարգացումը, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, «Վան Արյան», 2006, էջ 38-43: **Նույնի՝** Հայերեն մանկական խոսքի դրսևորումների վերլուծության հարցեր, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, «Վան Արյան», 2007, էջ 42-48: **Նույնի՝** Մանկական խոսքի ուսումնասիրության մի քանի հարցեր, Ջահուկյանական ընթերցումներ, Եր., «Նաիրի», 2008, էջ 43-49: **Վարդանյան Ա.**, Վայոց ձորի խոսվածքի մանկական բառապաշարը,

ված արժեքավոր հոդված-ուսումնասիրությամբ է հանդես եկել նաև լեզվաբան Լիլիթ Բրուսյանը⁴⁷⁵ իր բազմամյա դիտարկումների հենքի վրա փորձելով մանուկների խոսքը ներկայացնել թե՛ նրանց աշխարհընկալման, թե՛ անձնական լեզվական վերլուծությունների տեսանկյունից, կանգ առնելով նաև երկլեզվով հաղորդակցվող երեխաների արտաբերումների առանձնահատկությունների վրա: Ճիշտ է, հեղինակի մեջբերած երեխաների խոսքերում կան նաև ունկնդիրների շրջանում անսպասելի ծիծաղ առաջացնող նյութեր, սակայն վերլուծաբանը դրանք ևս քննում է տարիքային փոփոխությունների ժամանակ ի հայտ եկած նոր մտածողության, լեզվական-քերականական, բառապաշարային նոր դրսևորումների ֆոնին:

2006 թվականին լեզվաբան Ա. Գալստյանը հավաքել և հրատարակել է 1-7 տարեկան երեխաների մտքի առկայծումների մի հետաքրքիր գիրք⁴⁷⁶, որտեղ, մանկական խոսքի բառապաշարային տարատեսակ դրսևորումներից զատ, ընդգրկվել են նաև երեխաների կողմից արտաբերված անկեղծ ու շատ սովորական, սակայն ունկնդիրների համար անսովոր և անսպասելի ծիծաղ առաջացնող հարցեր, արտահայտություններ ու յուրօրինակ «վերլուծություն-մեկնաբանություններ»: Փաստենք նաև, որ մինչ այդ և դրանից հետո ևս մի քանի հեղինակներ (ոչ լեզվաբանության կամ բանագիտության ոլորտից) իրենց երգիծապատումների և զվարճախոսությունների գրքերում առանձին բաժիններով կամ խառը ներկայացրել են նաև մանկական զվարճախոսություններ⁴⁷⁷: Հրատարակվել է նաև մի ժողովածու, որտեղ մանկական երգիծական բանաստեղծությո-

«Պատմա-բանասիրական հանդես», 2003, թիվ 2, էջ 272-275: **Վարդանյան Ա.**, Վայոց ձորի միջնաբարբառը, «Մանկական բառապաշարը» բաժինը, էջ 81-83, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2004:

⁴⁷⁵ **Брутян Л.**, Заметки о детской речи, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գրաթանի, 2000, թիվ 1, էջ 202-210:

⁴⁷⁶ Մանկական խոսք, Կազմող՝ Անահիտ Գալստյան, Եր., «Ձանգակ-97» հրատ., 2006:

⁴⁷⁷ **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ակնթարթ «Զվարճապատումներ»: *Ակամա երգիծաբաններ բաժինը*, էջ 48-51, «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1995: **Մուրադյան Մ.**, Ուրախ երգիծանի, *Մանկական ժպիտներ* բաժինը, էջ 123-133, Եր., «Շուշան» հրատ., 1999: Ծիծաղենք միասին, Կազմեց **Սարինե Ամիրխանեանը** (Ղեւոնդեան), Բ տպագրութիւն, էջ 100-114, Թեհրան, «Նայիրի» հրատ., 2007: **Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ, *Թոնիկներիս հեյր* բաժինը, էջ 70-73, Եր., «Ասողիկ» հրատ., 2008: **Բալայան Գ.**, 55+ (Հիսունհինգ պլյուս): Երգիծանք, *Մանկական սրամտություններ*, էջ 41-42, Եր., «Վան Արյան», 2009: **Գյուրջինյան Հ.**, Մի բուռ ժպիտ, *Կարակում են փոքրերը* բաժինը, էջ 151-227, Վանաձոր, Սիմ տպագրատուն, 2012, և այլք:

յուններից գատ, տեղ են գտել 15 հեղինակների գրանցած մանկական զվարճախոսությունները⁴⁷⁸:

Ռուսական իրականության մեջ մանուկների լեզվին, երեխաների խոսքի տարատեսակ դրսևորումներին, այդ թվում նաև մանկական զվարճախոսություններին 1928 թվականին «Փոքրիկ երեխաներ»⁴⁷⁹ գրքում անդրադարձել է հայտնի մանկագիր, գրականագետ և թարգմանիչ Կորնեյ Չուկովսկին: Այդ գիրքը 1933 թվականից լույս է տեսել «2-ից մինչև 5» վերնագրով՝ հետագայում ունենալով ավելի քան երկու տասնյակ վերահրատարակություն, որոնցից մեկը՝ մանկագրի վեցհատորյակի առաջին հատորում⁴⁸⁰: Բուն նյութին զուգահեռ՝ մանկագիր հետազոտողը ներկայացրել է նաև իր դիտարկումները, խոհերը, վերլուծություններն ու մեկնաբանությունները, իսկ վերջում՝ գրքի վեցերորդ գլխում, Աստծու 10 պատվիրանների օրինակով («Պատվիրաններ՝ մանկագիր բանաստեղծների համար») ռուս մանկագիրներին առաջարկում է իր «դեղատոմսը»՝ 13 պատվիրանները⁴⁸¹, որով ուղղորդվելով էր միայն հնարավոր գրել երեխաների հոգուն հարազատ ու գրավիչ ստեղծագործություններ:

Ի դեպ, Չուկովսկու մեջբերած մի շարք նյութերի (բնության երևույթների, ծնողների, մարդու ծնունդի, մահվան մասին պատկերացումների, նոր ժամանակների երեխաների մտածողության և այլն) տարբերակներ են առկա նաև մեր հավաքածուում և հայկական տպագիր հրատարակություններում, ինչից կարելի է եզրակացնել, որ մանկական մտածողությունն ազգային և լեզվական սահմաններ չի ճանաչում:

Այժմ անդրադառնանք հայ երեխաների բանավոր խոսքում կիրառված միայն զավեշտալի՝ զվարճախոսային դրսևորումներին: Հաշվի առնելով նեղ շրջանակներում դրանց փոխանցման և գոյատևման հանգամանքը, ինչպես նաև նմուշների որոշ մասի տարբերակների առկայությունը՝ այդպիսի ստեղծագործությունները, իբրև ժողովրդա-

⁴⁷⁸ Ուրախության դասագիրք, Կազմեց Աննա Չոբանյանը, Եր., «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., 2015:

⁴⁷⁹ **Чуковский К.**, Маленькие дети, Ленинград, 1928.

⁴⁸⁰ **Чуковский К.**, Собрание сочинений в шести томах, том первый, Изд. «Художественная литература», Москва, 1965, От двух до пяти, с. 335-725:

⁴⁸¹ Նույն տեղում, с. 696-725:

կան բանահյուսության ինքնատիպ տեսակ, անվանել ենք **մանկական զվարճախոսություն**: Ի տարբերություն մանկական բանահյուսության տեսակների (հաշվերգեր, բառախաղեր, զայրախաղեր – ռուս.՝ драмилки, նմանողական խաղերգեր, ծաղրերգեր, շուտասելուկներ, երկնային լուսատուներին ու կենդանական աշխարհին նվիրված երգեր և այլն), որոնք գոյատևում են մանկաշխարհում, և կիրառող-տարածողները երեխաներն են, մանկական զվարճախոսությունները փոքր տարիքի երեխաների շրջանում չեն կենցաղավարում: Ժողովրդական ստեղծագործության այդ տեսակի պատմող-տարածող-փոխանցողները ոչ թե մանուկներն են, այլ նրանց զավեշտալի արտաբերումների ունկնդիրը դարձած առավել հասու տարիքի մարդիկ:

Կյանքի աղտեղություններն ու անարդարությունները, հաշվենկատությունն ու խորամանկությունը, դեռ չեն հասցրել թափանցել մանկան պարզ ու շիտակ հոգին, դեռ չեն պղտորել նրա ներաշխարհը: Շատ հաճախ երեխան իրականության այս կամ այն երևույթի վերաբերյալ իր ընկալումները անկեղծ մղումով վերարտադրելիս մտքի այնպիսի զավեշտալի փայլատակումներ է հրամցնում շրջապատին, որ ունկնդիրը ցանկանում է հետագայում դրանց հաղորդակից դարձնել նաև այլոց: Այդ ընթացքում էլ ձևավորվում է երգիծական ստեղծագործության մի ինքնատիպ շերտ՝ մանկական զվարճախոսությունը, որը թե՛ իր սեղմ կառուցվածքով, թե՛ անսպասելի ծիծաղ առաջացնող խոսքով առանձնանում է բանահյուսության մյուս տեսակներից:

Ընդգծված հումորի զգացումը՝ շաղախված այլաբանություններով, փոխաբերություններով, մակդիրներով ու զավեշտ առաջացնող լեզվական տարատեսակ միջոցներով, մանկահասակ երեխաների մտածողությանը հարիր չէ: Այն հատուկ է ձևավորված անհատին, սակավ քանակությամբ նաև՝ դպրոցական միջին տարիքի երեխաներին:

Ի տարբերություն մեծահասակների՝ մանուկների զավեշտալի, անսպասելի ծիծաղ հարուցող խոսքը կանխամտածված ու նպատակադրված չէ: Այն երեխայի անմիջականության, աշխարհընկալման առաջին քայլերի դրսևորման, տեսածը իր հնարավորությունների սահմաններում վերլուծելու և լսածը ուղիղ իմաստով ընկալելու

հետևանք է:

Մանկական զվարճախոսությունների գերակշիռ մասը իրապատումներ է և սերտորեն կապված է երեխայի տարիքային առանձնահատկությունների ու մտածողության որոշակի աստիճանի հետ: Երեխան գիտակցական կյանքի առաջին քայլերն անելիս ուզում է բացահայտել իրեն շրջապատող աշխարհը, իրերն ու երևույթները, մարդկային փոխհարաբերությունները և անընդհատ տրվող հարցերի տարափոփ ձգտում օր առօրը նկատելի դարձնել իր համար այդ պահին անձանոթ ու անհասկանալի ամեն ինչ:

2.5 փարեկան երեխան, մոր ձեռքը բռնած, անցնում է փողոցով ու փաթաթած փեսներով ցայտաղբյուրը՝ զարմացած հարցնում է.

– Մա՛մ, էս ինչի՞ են փաթաթել: //– Որ չստոի: // – Բա ինչի՞ ա սառում: //– Որովհետև ցուրտ ա: //– Բա ինչի՞ ա ցուրտ: //– Որովհետև ձմեռ ա: //– Բա ինչի՞ ա ձմեռ...

Մանկական խոսքում բավականին ընդգրկուն են **թեմատիկ դրսևորման** շրջանակները: Այսպես՝

ա. Զվարճախոսություններից մեկում երեխան լեզվի մաքրության հարցեր է «շոշափում» և սխալ արտաբերմամբ անձամբ «կանխում» օտարահունչ բառերի կիրառությունը խոսակցական լեզվում՝ միաժամանակ ներկայացնելով դրա հայերեն «համարժեքը», ինչն էլ դառնում է զավեշտի աղբյուրը.

– Արփինե՛, գնա կուխնյայից աղը բեր, – 4.7 փարեկան երեխային է դիմում հորեղբոր կինը:

– Լյուդա՛, կուխնյա չեն ասում, խոզանոց են ասում (իմա՛ խոհանոց-ԱՍ), – հորեղբոր կնոջը «ուղղում» է Արփինեն: (ԱՍՇՀ)

բ. Դպրոց նոր ոտք դրած երեխան իր պարզ ու շիտակ խոսքում «անդրադառնում է» իրեն հուզող լեզվական խնդիրներին, փորձում դպրոցում ուսուցանվող անձանոթ հայերեն բառերի և ընտանիքի անդամների առօրյա խոսակցական լեզվում առկա միևնույն առարկաների անվանումների տարբերության գաղտնիքը պարզել: Մանկան մեկնաբանությամբ նրանք գործ ունեն մի նոր լեզվի հետ, ընդ որում, դպրոցում անցնող լե-

զուն նրանց համար օտար լեզվի բառերի պես խորթ ու անհասկանալի է.

Սեպտեմբերին մի քանի օր դասի գնալուց հետո առաջին դասարանցի Գայանեն փանը նեղսրտած ասում է.

– Դպրոցում ուրիշ լեզվով ենք խոսում, փանը՝ ուրիշ:

– Ո՞նց, – զարմանում են տնեցիները:

– Տանը ասում ենք սումկա, դըպրոցում՝ պայուսակ, փանը ասում ենք տելելիզոր, դըպրոցում՝ հեռուստացույց, փանը ասում ենք խալադիլնիկ, դըպրոցում՝ սառնարան, – բացատրում է երեխան: (ԱՍՇՀ)

գ. Երեխան ակամա ընդգրկվում է նաև քաղաքական թեմաների մեջ, իր զավեշտալի մեկնաբանությունների ու խաղերի ենթատեքստով «նպաստում» ինչ-ինչ հարցերի «վերհանմանն» ու «քննադատությանը»:

Նորանկախ հանրապետության նախագահական ընտրարշավի օրերին երեխան, նույն մարդու նկարները փողոցներում շենքերի պատերին փակցրած տեսնելով, զարմանում է և փորձում իրեն հուզող հարցերի պատասխանները գտնել.

– Պապի՛կ, էս մարդն ո՞վ ա, – հարցնում է 3 տարեկան թոռնիկը:

– Մեր վարչապետն է, բալի՛կս:

– Բա նա այբոմ չունի՞:

– Այբո՞մ, – զարմանում է պապը, – այբո՞մն ինչ կապ ունի, բալի՛կ ջան, որ հարցնում ես:

– Այբոմ չունի՞, որ իրա նկարները շենքերի պատերին չկպցնի, այբոմում կպցնի, – բացատրում է երեխան: (ԱՍՇՀ)

դ. Ղարաբաղյան շարժման առաջին ամիսների գործադուլային շարժումն իր արձագանքն ու ազդեցությունն է գտնում նաև մանկան մտածողության վրա՝ առիթ հանդիսանալով զավեշտալի տրամաբանական եզրահանգումների՝ գործադուլային բողոքին մասնակից դարձնելով նաև տնային թռչուններին.

– էս փիրամեռի հավերը էլի ծու չեն ածել, – տրտնջում է Մարիամ փապը:

– Տապի'կ, ախր գործադու ա, հավերը ո'նց կարան ձու ածեն, – պատասխանում է 3 տարեկան Մարիամիկը: (ԱՍՇՀ)

ե. Ղարաբաղյան պատերազմը չէր կարող շրջանցել մանուկներին ու ազդեցություն չթողնել նրանց հոգեբանության վրա: Հայրենիքի համար կյանքը նվիրաբերած մեր ազատամարտիկներին փոխարինողները ահա այսպես են ներկայանում իրենց անկեղծ խոսքում.

– Ի'նչ ես ուզում դառնաս, բալի'կ ջան, – հարցնում են 5-ամյա Գևորգին:

– Զոհված ազատամարտիկ, – պատասխանում է երեխան:(ԱՍՇ)

Երեխան չի գիտակցում «պատերազմ», «մահ», «զոհվել» հասկացությունները, և «Մի վախեցիր» ֆիլմը դիտելիս 5-ամյա Վուսնը Ղարաբաղյան պատերազմին մասնակցած պապին հարցնում է.

– Պապի', բա դու հեչ չես զոհվե'լ... (ԱՍՇՀ)

զ. Մենք գիտենք, թե երեխայի դաստիարակության համար ընտանիքում որքան է մեծ ծնողի դերը, մանավանդ տղա երեխայի համար՝ հոր ներկայությունը: Այսօրվա երեխաների մի մասի հայրիկները արտագնա աշխատանքի են մեկնել, հետևաբար փոքրիկը հիմնականում մեծանում է իգական սեռի ներկայացուցիչների միջավայրում: Մանկապարտեզների դաստիարակները ևս կանայք են⁴⁸², իսկ դպրոցներում դասավանդող տղամարդ ուսուցիչները կամ հատուկենտ են, կամ էլ ընդհանրապես բացակայում են: Այս երևույթը մեծապես ազդում է հատկապես տղա երեխաների դաստիարակության և հոգեբանության վրա: Մանկական զվարճախոսություններից մեկն էլ վերաբերում է հենց այդ ցավոտ խնդրին:

Տեսնելով պապի դպրոցական ավարտական ավրոնի խմբակային նկարները՝ անմեղ երեխան հարցնում է. // – Սրանք ովքե'ր են: //– Իմ ուսուցիչները: //

⁴⁸² Հիշենք՝ մեծ մանկագիր Ղազարոս Աղայանը, բացի դպրոցից, մանկապարտեզում էլ է աշխատել և մոտիկից է ծանոթ եղել երեխաների հոգեբանությանն ու մտքի տարատեսակ փայլատակումներին: Հենց այդ աշխատանքներն էլ, ինչ խոսք, մեծապես նպաստել են երեխաների հոգուն հարազատ մանկական ստեղծագործությունների լույս աշխարհ գալուն:

– Պապի՛կ, ի՞նչ է, տղամարդ ուսուցիչ էլ է լինո՞ւմ⁴⁸³:

է. Ղարաբաղյան շարժմանը, երկրաշարժին և խորհրդային համակարգին հաջորդած մութ ու ցուրտ տարիները և համատարած գործազրկությունն իրենց ազդեցությունն են թողնում նաև երեխաների մտածողության վրա: Տան տղամարդու ավանդական դերի խարխլումը և առկա ընտանեկան իրավիճակի մանկան ընկալում-մեկնաբանումն էլ դառնում է զվարճախոսության զավեշտի մեխը.

3-ամյա Տիգրանի մայրն աշխատում էր վարսավիրանոցում ու ամեն առավոտ գործի էր գնում, իսկ հայրը 3 տարի ոչ մի տեղ չէր աշխատում, պարսպ-սարսպ ման էր գալիս: Վերջապես երեխայի հայրն էլ է գործ ճարում ու երբ առավոտը ծեփն ուզում է տնից դուրս գալ, տղան հարցնում է հորը. // – Էդ ու՞ր ես գնում, հայրի՛կ: // – Գործի, տղա՛ ջան: // – Իսի՞, դու խու կնի՞կ չես, որ գործի ես գնում, – զարմացած հարցնում է Տիգրանը: (ԱՍՇՀ)

ը. Մեր օրերի գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացը կամա թե ակամա իր ազդեցությունն է թողնում թե՛ մեծահասակների, թե՛ երեխաների մտածողության և հոգեբանության, անգամ գործելակերպի ու խոսքի վրա: Այդ միջավայրում մեծացող երեխաների համար մեծերի շփոթմունքը և՛ զարմանք, և՛ զվարճանք է: Նրանք երբեմն իրենց անկեղծ ափսոսանք են արտահայտում մեծերի «հետամնացության», շատ բաներից անտեղյակ լինելու, շատ բան տեսած չլինելու կապակցությամբ և այդ ամենը ընկալելու համար փորձում են վաղնջական ժամանակների ու իրենց ընտանիքի ավագների միջև ժամանակատարածային կապ տեսնել.

– Պապի՛, ձեր ժամանակ համակարգիչ կա՞ր, – հարցնում է թոռը:

– Չէ, բայի՛կ ջան, չկար: // – Իյա՛, իսկ բջջային հեռախո՞ւ: // – Չէ՛, բջջային հեռախոս էլ չկար: // – Չկաա՛ր...: Պապի՛, իսկ դու դինոզավր տեսած կա՞ս: (ԱՍՇՀ)

թ. Նոր տարվա գիշերը Ձմեռ պապի կողմից բարձի տակ նվերներ դնելը այսօրվա երեխան սկսում է կասկածի տակ առնել.

⁴⁸³ Գյուրջինյան Հ., Մի բուռ ժպիտ, «Կատակում են փոքրերը» բաժինը, էջ 151-227, Վանաձոր, Սիմ սպագրատուն, 2012, էջ 168:

Չույգ ծնված վեցամյա քույր ու եղբայր վիճում են.

– Ձմեռ պապ չկա, – ասում է քույրը:

– Ո՞նց չկա, կա, հիշում ե՞ս՝ անցած փարի մեր ուզածները բերել բարձի փակ էր դրել ու գնացել, – քրոջը փորձում է համոզել եղբայրը:

– Չկա, ուզու՞մ ես արի փորձենք. էս փարի էրկուսս էլ Ձմեռ պապից «վայֆայ» ուզենք, փեսնենք՝ կբերի՞... (ԱՍՇՀ)

ժ. Մեր օրերում նորակազմ ընտանիքները բավարարվում են մեկ-երկու երեխա ունենալով միայն, ինչը ավագ սերնդի սրտով չէ: Այդ թեմային առնչվող բազում զվարճապատումներ են ստեղծվել թե՛ մեծերի շրջանում կատարված իրողությունների, թե՛ մանուկների ծիծաղ առաջացնող անմեղ արտահայտությունների հենքի վրա:

Ընտանիքի միակ երեխան «ապերիկ» կամ «քուրիկ» ունենալու համար պապի և տատի հորդորով ծնողներին խնդրում է իրականացնել իր ցանկությունը, սակայն՝ ապարդյուն: Ճարահատ երեխան օգնության է կանչում տատին.

– Տա՛ր ջան, մաման ու պապան չեն ուզում ինձ համար ապերիկ ու քուրիկ բերեն, արի դո՛ւ բեր, է՛լի... (ԱՍՇՀ)

ժա. Խոսքակռիվ տալիս ամեն երեխա աշխատում է դիմացինի հանդեպ իր առավելությունը հիմնավորել բերած փաստերով: Երբեմն էլ դրանք այնքան անսպասելի և զավեշտալի են լինում, որ ամենատխուր թեմաներին առնչվելիս անգամ մեծերն անկարող են լինում զսպել ծիծաղը.

Երկու եղբայրների թոռնիկները խոսքակռիվ են փալիս: Վերջապես էմման հարձակման է անցնում.

– Դե գնա՛, մենք պա՛պիկ ունենք, դուք չու՛նեք:

Վիճաբանող խմբերից մեկի երեխաների պապիկը մի փարի առաջ էր մահացել:

Փաստը փաստ էր, բայց «հակառակորդ» կողմը փեղի չի փալիս, և երեք փարեկան Քրիստիանեն «հակահարված» է փալիս.

– Իսկ մենք պապիկի գերեզմա՛ն ունենք, դուք չունե՛ք... (ԱՍՇՀ)

ժբ. Առաջին անգամ գերեզմանաքարերին ծննդյան և մահվան տարեթվերը տեսնելուց հետո երեխան արդի գիտատեխնիկական նվաճումների ֆոնին եզրահանգումներ է անում.

– *Մա՛մ, էդ նկարների տակի թվերը իրանց ստորվու (իմա՛ բջջային հեռախոսի ԱՍ) համարներն ա, չէ՞... (ԱՍՇՀ)*

ժգ. Երեխաներն անընդհատ հաղորդակցվում են հարսանեկան արարողակարգին: Մենք գիտենք երեքից վեց տարեկան աղջիկ երեխաների, որոնք «սիրահարվել» են և «խոստովանել» իրենց «սերը» հորը, հորեղբորը, տարիքով մեծ բարեկամին, հարևանին, երբեմն էլ մի քանի տարեկան տղա երեխան՝ բարեկամի կամ հարևանի հարսին...: Հարսանեկան թեմային առնչվող զվարճախոսություններից մեկում, արտաբերված 1950-ականների կեսերին, գյուղաշխարհի մանկան անհանգստությունն իր հարսանիքի կապակցությամբ այսպես է արտահայտվել.

Մի օր 6 տարեկան Սոսը մի քիչ քնելուց հետո վեր է կենում, դիմում մորը, թե՛

– Մա՛մ, իմ հըրսանիքը ըլելու վախտը նոր ա գալու՞, թե՞ անց ա կացել: (ԱՍՇ)

ժդ. «Պառվի ուլերի»՝ ապրիլի մեկից երեքի մասին ավանդազրույցը մոր ներկայացնելուց հետո 7- ամյա Հովիկը այսպիսի եզրակացության է հանգում.

– Մամա՛, որ բոլոր պառավները մեռնեն, էլ «պառվի ուլեր» չի լինի, չէ՞⁴⁸⁴:

ժե. Ծնողները երեխաների մեջ են տեսնում իրենց անկատար իղձերի իրականացման հույսը, որոնց մի մասն իրենք են երեխաներին թելադրում նրանց ապագան, և վերջիններս մեխանիկորեն կրկնում են, մյուս մասն էլ երեխան ինքն է «որոշում», վճռում դառնալ զոհված ազատամարտիկ, ժողովուրդ, տղա երեխան՝ արքայադուստր, մեկ այլ դեպքում՝ ընկեր Նունե, նույնիսկ՝ ապարանցի, քանի որ պապիկն Ապարանում է ապրում, իսկ մեկ այլ զվարճախոսությունում հետաքրքիրը և զավեշտալին այն է, որ մեծահոգի փոքրիկը իր ցանկության խոսքում այսպես է ներկայանում. «Եղբայրս՛ մենե-

⁴⁸⁴ Մանկական խոսք, Կազմող՝ Անահիտ Գալստյան, Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 5:

ջեր, ես՝ պաժառնիկ⁴⁸⁵»՝ մեկնաբանելով, որ եթե եղբոր ձեռնարկությունը պաժառ⁴⁸⁶ ընկնի, ինքը կարողանա անմիջապես օգնության հասնել ու հանգցնել: (ԱՍՇՀ)

Իսկ մի ուրիշ երեխա «Ի՞նչ ես ուզում դառնալ» հարցին իր և եղբոր անունից է պատասխանում. «Ախպերս՝ դիրեկտոր, ես էլ իրա շոֆերը»⁴⁸⁷:

Երբեմն էլ հակասության մեջ են երեխայի և ծնողի ցանկությունները. Նախակրթարանի երեխաներին՝ դաստիարակի ուղղած՝ *ո՞վ՝ ինչ է ուզում դառնալ* հարցադրումը հինգամյա աղջիկը յուրովի է ընկալում, և մանկան անկեղծ ու միամիտ խոսքն էլ զվարճախոսության մեջ դառնում է անսպասելի զավեշտի առաջացման պատճառը.

– Երբ մեծանամ, – ասում է 5-ամյա Մոնիկան, – ուզում եմ ամուսնանամ, բայց մամաս ուզում ա, որ ես բժիշկ դառնամ: (ԱՍՇՀ)

Մանկական զվարճախոսությունների մեծ մասը երկխոսական բնույթի է, և զավեշտն ստեղծվում է կա՛մ հանձնարարականներ կատարելիս բառերն ու դարձվածքները ուղիղ իմաստով ընկալելու, կա՛մ տրված հարցերին անսպասելի ծիծաղ առաջացնող պատասխանների միջոցով: Դրանք մանկան համար անմեղ ու անկեղծ խոստովանություն-մեկնաբանություններ են, իսկ շրջապատի համար՝ ինքնաբուխ ծիծաղ առաջացնող զվարճախոսություններ, որոնցում **զավեշտն արտահայտվում է՝**

ա. Անկեղծ ու միամիտ խոսքով և լոռեցիների խոսվածքում առկա հարցման երգեցիկ-երկարացման հնչերանգով.

Վանաձորի դպրոցներից մեկի տնօրենը ուզում է՝ իր ծանոթի՝ յոթ տարին չլրացած երեխային 1-ին դասարան ընդունի և ընդունակությունը ստուգելու համար հարցեր է տալիս.

– Բալի՛կ ջան, ենթադրենք՝ տասը խնձոր ունես, որ էրկուսը ինձ տաս, քո մոտ

⁴⁸⁵ **Պաժառնիկ** (ռուս.) – հրշեջ:

⁴⁸⁶ **Պաժառ** (ռուս.) – հրդեհ:

⁴⁸⁷ **Բալյան Լ.**, Ականջի բեր ասեմ. Աֆորիզմներ, անեկդոտներ, բանաստեղծություններ, Եր., ՀԳՄ հրատ., 2008, էջ 413:

քա՞նիսը կմնա:

– Ինն, – անմիջապես պատասխանում է երեխան:

Հուսախաբ տնօրենն ասում է.

– Տղա՛ ջան, հըլա լավ մտածի:

– Խի՞, մինն էլ ես ուզըըը՛մ... – անկեղծ հարցնում է փոքրիկը: (ԱՍՇՀ)

բ. Զավեշտ է ստեղծվում նաև ոչ թե երեխային տրված հարցերի պատասխանների, այլ հենց իր՝ մանկան հարցման միջոցով, նրա ճկուն տրամաբանականության և անսպասելի արված ճիշտ հաշվարկների օգնությամբ.

Մի օր 3-ամյա Տիգրանը հարցնում է հորաքրոջը.

– Հորաքո՛ւյր, էսօրը էքուցվա էրեգն ա, չէ՞: (ԱՍՇՀ)

գ. Երեխաների համար օրորոցայիններ երգող մայրիկների երգացանկը սպառվելուց հետո նրանցից շատերը տարատեսակ երգեր են երգում, որ քնեցնեն իրենց բալիկներին, բայց բալիկներն էլ պասիվ ունկնդրի դերում չեն. նրանք երբեմն նաև պատվերներ են տալիս, ինչն էլ շատ հաճախ վեր է ածվում զավեշտի.

Մայրը 3.5 տարեկան Մարիին և 1.5 տարեկան Յուրիին քնեցնելիս սկսում է Մարիի պատվին երգել Շարլ Ազնավուրի «Ավե Մարիա»-ն: Վերջացնելուց հետո Մարին մորն ասում է.

– Մա՛մ, դե հիմա էլ «Ավե Յուրիա»-ն երգի: (ԱՍՇՀ)

դ. Զավեշտի ստեղծման պատճառ է դառնում նաև հարադիր կառույցի անդամներից մեկի ուղիղ իմաստով ընկալելը.

Հինգ տարեկան Նարեն առաջին անգամ գնում է Երևան, հետո երբ գալիս է Կիրովական, հարցնում են.

– Նարե՛ ջան, Երևանում լիֆտ նստել ե՞ս:

– Հա, բայց նստելու աթոռ չկար: (ԱՍՇՀ)

ե. Մեկ այլ դեպքում առաձների այլաբանական իմաստի փոխարեն ուղիղ իմաստն ընկալելն է անսպասելի ծիծաղի հենքը՝ անպայման համեմատության եզրեր

տեսնելով կենդանու և գիտակից մարդու միջև.

Առաջին դասարանցի Դավիթը կարդում էր.

– Էշն ի՞նչ իմանա, թե նուշն ինչ է:

Կարդալուց հեղո մի պահ դադար փվեց, ապա զարմացած դիմեց մորը.

– Ա՛յ մամ, ըսկի ես չգիտեմ, թե նուշն ինչ ա, էդ էշը որտեղի՞ց իմանա⁴⁸⁸:

գ. Մեկ այլ դեպքում զբոսաշրջային ազդագրի օտար բառի հապավումն է չգիտակցված բառախաղով «հայացվում»՝ տեղիք տալով զավեշտ առաջացնող մանկան զարմանքին.

– Մա՛մ, գրել են Նանե փուր, բայց ի՞նչը փամ: (ԱՍՇՀ)

է. Միշտ չէ, որ երեխայի ներկայությամբ պետք է ամեն ինչի մասին խոսել. բացախոսությունը շատ դեպքերում անմեղ երեխայի միջոցով փոխանցվում է տիրոջը՝ անհարմար վիճակի մեջ գցելով նրա ընտանիքի անդամներին.

Հրանտիկն իրենց փուն եկած հյուրին երկար զննելուց հեղո զարմացած ասում է.

– Պարզև՛ պապիկ, բա ո՞ր է քո երկրորդ երեսը: //– Ո՞նց թե, բա մարդ երկու երես կունենա՞: // – Բա ինչո՞ւ է իմ պապիկն ասում, որ դու երկուերեսանի ես⁴⁸⁹:

ը. Անսպասելի ծիծաղ է առաջանում, երբ հատուկ և հասարակ անունների համանունությունն է դառնում զավեշտի հենքը.

Մինը իր կնոջը նոր լուրեր էր ասում, ի վերջոյ ավելացրեց. //– Միրմանենց Շաքարը մեռա: // 9 փարեկան որդին որ լսեց, ասաց. //

– Հայրի՛կ, եթե շաքարը մեռնի, այսուհետև թե՛յն ինչո՞վ պէտք է խմենք⁴⁹⁰:

թ. Երբեմն էլ դիմացինի հարցման ժամանակ արտաբերած բազմիմաստ բառի տվյալ իմաստը չընկալելը կարող է զավեշտի պատճառ դառնալ. երեխաներին դեռ հասու չեն համանունային կառույցները, և այդ չիմացությունն էլ շատ դեպքերում նրանց զավեշտալի իրավիճակների մեջ է գցում.

⁴⁸⁸ Գյուրջինյան Հ., Մի բուռ ժպիտ, Վանաձոր, Սիմ տպագրատուն, 2012, էջ 209:

⁴⁸⁹ Նույն տեղում:

⁴⁹⁰ Ծիծաղի տոպրակ, Անեկոստներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Ս.Ս. Շահագիգեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 164:

Պապին թիկունք կանգնած թողը չի հանդուրժում, երբ ինչ-որ մեկը, թեկուզև մեծահասակը, փորձում է հարցնել. «Բալի՛կ ջան, պապդ կենդանի է՞», և հետևում է վիրավորված թռռան «էդ դու ես կենդանին, իմ պապը կենդանի չէ»⁴⁹¹:

Ժ. Փոքրիկ Հրանտիկը գյուղում տեսել է մեղուներին «ծուխ տալը» և գիտի, որ մեղվաբույժը դա անում է, որ մեղուները չկծեն, ու նա, ինչպես հարկն է, հանգիստ կարողանա փեթակի ներսում մեղուների վիճակը ստուգել: Հենց այդ «իմացության» հիման վրա էլ անսպասելի ծիծաղ է հարուցում եկեղեցում ժամերգության ժամանակ բուրվառից դուրս եկած ծխի՝ պապին տված թռռան յուրովի բացատրությունը.

«Ծուխ էր անում, որ մեղուները մեծ տերտերին չկծեն»⁴⁹²: **Տե՛ս Հավելված 2, թիվ 39:**

Մանկական զվարճախոսություններում թեմատիկ և զավեշտի դրսևորման միջոցների կիրառությունները վերը շարադրածով չեն սահմանափակվում: Դրանք բազմազան և տարաբնույթ են, ինչպես բազմազան ու յուրահատուկ են մանուկների մտածողությունն ու հետաքրքրությունների շրջանակները:

⁴⁹¹ **Գյուրջինյան Հ.**, Մի բուռ ժպիտ, Վանաձոր, Սիմ տպագրատուն, 2012, էջ 171:

⁴⁹² Նույն տեղում, էջ 180-181:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԶԱՎԵՇՏԻ ԴՐԱԵՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

3.1. Արտասանական իրողությունները

Գրական արևելահայերենն ու արևմտահայերենը, ինչպես նաև հայերենի բարբառներն ու խոսվածքներն ունեն արտասանական-հնչարտաբերման առանձնահատկություններ, որոնք երբեմն միմյանցից ընդգծված տարբերություններով են աչքի ընկնում: Հայաստանում և մերձավոր ու հեռավոր սփյուռքահայ գաղութներում արևմտահայը և արևելահայը փոխադարձ շփումների ընթացքում հաճախակի են առնչվում միմյանց լեզուներում և բարբառներում առկա հնչարտաբերման տարատեսակ դրսևորումներին (ծայնեղների խլացում ու խուլերի ձայնեղացում, ձայնավորների քմայնացում կամ կոշտ արտաբերում և այլն), երբեմն էլ դիմացինի համար անսովոր արտասանական իրողություններին (երգեցիկ կամ ցածր հնչերանգ, արագախոսություն կամ դանդաղ վերարտադրություն և այլն): Հայության լեզվական տարբեր դրսևորումների հաղորդակցության ընթացքում նման առանձնահատկությունների հենքի վրա ի հայտ եկած զավեշտալի միջադեպերն էլ, հետագայում վերապատմվելով ու վերափոխվելով, սկսում են յուրահատուկ «հագուստով» շրջանառվել ժողովրդի մեջ՝ իբրև զուտ ազգային անեկդոտներ՝ երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ:

Պատմական հանգամանքների բերումով առաջացած գրական հայերենի երկու ճյուղերի՝ արևելահայերենի և արևմտահայերենի արտասանական-հնչարտաբերման իրողությունների հիման վրա բազմաթիվ զվարճապատումներ և զվարճախոսություններ են ստեղծվել: Այդ երկու ճյուղերի կրողների ընդգծված բախումը Խորհրդային Հայաստան ներգաղթելու առաջին իսկ օրից արտահայտվում է «*եղբայր*» բառի՝ արևմտահայերեն «*աղբար*» հնչեցնելու պահից՝ դառնալով ներգաղթած հայությանը կնքած պիտակ-դիմելաձև.

– Աղբա՛ր,

Գնորդը վրդովված բղավում է.

– Տո՛, ես քեզ ի՞նչ ախպար, ախպարը դու ես ⁴⁹³: **Տե՛ս Հավելված 3, թիվ 1:**

«Նոր էկողն ու էշը» անեկդոտում տեղացու՝ «Դու ախպա՛ր ես, ինչ է. չե՛ս հասկա-
նում, ճամփան փակել ես, երթևեկությունը կա՛նգ է առել» խոսքին այսպես է հակադար-
ձում հայրենադարձը.

– Ես ախպար եմ, կհասկնա՛մ, բայց՝ էշս տեղացի է. չի՛ հասկնար⁴⁹⁴: **Տե՛ս Հավել-
ված 3, թիվ 2:**

Արևելահայերենում նուրբ անցք բառակապակցությունը բառաբարդելիս «ու»
հնչյունը սղվում է՝ նրբանցք, սակայն արևմտահայերենով արտաբերելիս այն պահպան-
վում է՝ պատճառ դառնալով բամբառակ արտահայտության և անսպասելի ծիծաղի ա-
ռաջացման:

Նմանատիպ դրսևորումների մեծ մասը տեղային բնույթի է: Դրանք հետագայում
են ընդհանրական ուժ ձեռք բերելով դառնում զվարճախոսություն կամ զվարճապա-
տում.

Վանաձորում բոլորն են ճանաչում պարարվեստի մասնագետ Ֆրունզիկ Եղոյա-
նին: Մի անգամ նրա տղան՝ Արտավազդը, քաղաքի թաղամասերից մեկում առաջին
պատրաստած անցորդներից մեկին հարցնում է.

– Ֆրունզիկ Եղոյանին որտե՞ղ կարող եմ գտնել:

Անցորդը հայրենադարձ է լինում և ասում է.

– Շուշանիկ Կուրդինյանին նուրբ անցքին տեղը գիտե՞ք, գացեք հոն և Կուրդին-
յանին նուրբ անցքին մեջ անշուշտ կգտնեք: (ԱՍՇՀ)

Արևմտահայի կողմից տառային հապավումներն արտասանվում են տառանուն-
ներով: Ազգային անվտանգության ծառայության օտարալեզու հապավման՝ ԿԳԲ-ի ար-

⁴⁹³ Ստեփանյան Ա., 20-րդ դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., «Գիտու-
թյուն» հրատ., 2010, էջ 208:

⁴⁹⁴ Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
հրատ., 1994, էջ 111:

տաբերումը՝ բառի տրոհմամբ կամ դիտավորյալ աղավաղմամբ, կառույցում վերափոխվում է այդ հաստատության հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքով.

Հարցնում են.

– *Ինչո՞ւ ես հայրենիքդ լքում:*

– *ՔաՔեՓե-ին պատճառով. ան ինձի անվերջ կհետապնդե:* (ԱՍՇՀ)

Հայկական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում զավեշտն արտահայտվում է նաև հայրենի բարբառների արտասանական տարատեսակ դրսևորումների միջոցով:

Վանի բարբառում բ,գ,դ,ձ,ջ ձայնեղ բաղաձայնների փոխարեն կիրառվում են **պ,կ,տ,ծ,ճ** խուլեր, ինչն էլ այդ բարբառով արտաբերած բառերը, այլոց միջավայրում չընկալվելով, զավեշտ է առաջացնում:

Այսպես, օրինակ՝ **ծեթ** արտասանվող բառը, արևելահայոց շրջանում չընկալվելով, հարանունությամբ շփոթություն է առաջացնում **ծեթ**-ի հետ՝ տեղիք տալով «Ծեթ ի, թէ պէտ ի» զվարճախոսության ստեղծման.

Երևանցի. – Լա՛վ աղ, լա՛վ աղ...

Վանեցի պառավ. – Քա տղա՛, էտա ի՞նչ ի կըծախես:

Երևանցի. – Մայրի՛գ, աղ էմ ծախըմ:

Վանեցի. – Պէ՛ խէմ⁴⁹⁵, պէ՛ խէմ, ծէ՞թ⁴⁹⁶ ի, թէ պէ՞տ⁴⁹⁷ ի:

Երևանցի. – Մայրի՛գ, ձէթ չէմ ծախըմ, աղ էմ ծախըմ:

Վանեցի. – Աղէկ, կըխասկընամ, պէ՛ խէմ, ծէ՞թ (մանր) ի, թէ՞ պէտ (խոշոր) ի:

Երևանցի. – So մայրի՛գ, ասըմ էմ՝ ձէթ չէմ ծախըմ, աղ էմ ծախըմ:

Վանեցի. – Քա տղա, աղէկ... կըխասկընամ... պէ՛ խէմ, ծէ՞թ ի, թէ պէտ ի⁴⁹⁸:

Վանեցիներին առնչվող անեկոտներից մեկում էլ զավեշտի աղբյուր է դառնում

⁴⁹⁵ Պէ՛ խէմ – բեր նայեմ:

⁴⁹⁶ Ծէթ – մանր:

⁴⁹⁷ Պէտ – խոշոր:

⁴⁹⁸ Զահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու, դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, Եր., «Փյունիկ Մակմիլան» հրատ., 1998, էջ 100:

միննույն բաղաձայնի հաճախակի կիրառությունը: Այսպես, «Մենք խայ ենք»⁴⁹⁹ հեքիաթային կառուցվածքով երգիծապատումի միջոցով և գերմաներենի արտասանական առանձնահատկություններից մեկի համադրության համատեքստում ծաղրվում է Վանի բարբառում «խ» բաղաձայնի չափից շատ գործածությունը:

Երբ Գերմանիայի թագավորը լսում է օտարականների խոսքը (*Խնամի՛ Խեպո, խունգար իրամե խայերեն խոսանք*⁵⁰⁰), անմիջապես դադարեցնում է՝ ասելով.

– Ավա՛ր, ավա՛ր, էլ մեյի⁵⁰¹ զրուցե, մեր լեզվի մեջ էնկանդար⁵⁰² **խ, խ, խ** լսեր եմ, որ էլ ուրիշի ասած **խ-խ**-ն չե ուզե լսեմ⁵⁰³: **Տե՛ս Հավելված 3, թիվ 3:**

Վանեցիների բարբառի արտասանական առանձնահատկություններից մեկն էլ որոշյալ գոյականների «ը» հնչյունը չարտաբերելն է: Զվարճախոսություններից մեկում թերություն թվացող այդ երևույթը «մեկնաբանվում» է վանեցիների հեռատեսությամբ, ուրեմն նաև՝ «առավելությամբ»՝ խնայողությամբ.

Վանեցուն դիպողություն արին, որ խոսելիս ու գրելիս վերջում «ը»-ն չի արտասանում:

– Միանգամայն ճիշտ ի... Մենք վանեցիներս այդ տառը խնայողությամբ կքործածենք⁵⁰⁴:

Համշենի բարբառի բաղաձայն հնչյունների յուրահատուկ արտաբերումները (**բ, գ, դ, ձ, ջ** ձայնեղ բաղաձայնների խլացումը՝ **պ, կ, տ, ծ, ճ**) և հակառակը՝ խուլերի ձայնեղացումը, զավեշտալի իրավիճակների առաջացման տեղիք են տալիս՝ առիթ հանդիսանալով երգիծապատում-զվարճախոսությունների առաջացման.

Համշենցի կնոջ հետ ամուսնացածին հարցնում են.

– Ուստի՛ Սահակ, կարողանո՞ւմ ես կնգանդ բարբառից գլուխ հանել:

⁴⁹⁹ Ծիծաղում են վանեցիները, կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 156:

⁵⁰⁰ Խնամի՛ Խեպո, թագավորը հրամայում է հայերեն խոսենք:

⁵⁰¹ **Մեյի** – մի:

⁵⁰² **էնկանդար** – այնքան:

⁵⁰³ Ծիծաղում են վանեցիները, կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 156:

⁵⁰⁴ Նույն տեղում, էջ 10:

–Ի՞նչ ասեմ, էսա 40 տարվա կնիկս ա, հնար չեյավ հասկացնել, որ Գրիշին Կրիշ⁵⁰⁵ չասի, կրիշին էլ՝ գրիշ...: (ԱՍՇՀ)

Մուսալեոցիների բարբառով ասված սովորական խոսքը՝ ձայնեղ բաղաձայնների խլացմամբ և խուլերի ձայնեղացմամբ, ինչպես նաև «ա» ձայնավորը «ու»-ի փոխվելով, երբեմն արևելահայի կողմից բամբառակ արտահայտությամբ է ընկալվում⁵⁰⁶: **Տե՛ս Հավելված 3, թիվ 4:**

Մեր գրանցած զվարճախոսություններից մեկում էլ անսպասել ծիծաղը դրսևորվում է **Ղարաբաղի բարբառին** հատուկ հնչարտաբերմամբ: Հենց դա էլ «նպաստում է» ոուսերեն *մերտվեց*⁵⁰⁷ բառի ուղղագրության «ստուգաբանությանն ու դրա հիմնավորմանը».

Մի ղարաբաղցի մյուսին հարցնում ա, ասմա.

– *Մերտվեցը ո՞նց ա գրրվրմ.* «յո» -ով, թե՞ «յ» -ով: // Ասմա՛ «ը» -ով:// Ասմա՛//

– Ընչի՞ «ը» -ով: //Ասմա՛ // – *Ստուգաբանող բառ ա. մը՛ռել ա:* (ԱՍՇՀ)

Շիրակցիների խոսվածքում «կ» պայմանական եղանակիչը՝ հետադաս կիրառությամբ, արտաբերվում է «գ», ինչն էլ զվարճախոսության մեջ այսպես է «հիմնավորվում».

– *Հարևանի ախշիկըմ ունիմ, սիրեմ գը:* //– *Հետո՞:* //– *Հետո ամուսնանամ գը:* //

– *Սիրելն ու ամուսնանալը հասկացա, բա դրանց վերջի «գ»-ը՞ն ինչն ա:*

– *Գուրգուրեմ գը:* (ԱՍՇՀ)

Բայազետի բարբառին հատուկ է ձայնավորների կոշտ շեշտադրությամբ արտասանությունը: Զվարճապատում-զվարճախոսություններից շատերի մեջ հերոսների խոսքում եթե այդ կոշտ հնչերանգը չպահպանվի, ասելիքն ամբողջ էությամբ չի կարող տեղ հասցվել: Այսպես, պատումներից մեկում ձայնավորների կոշտ շեշտադրությամբ

⁵⁰⁵ Կրիշ (ռուս.) – կտուր, ծածկ:

⁵⁰⁶ Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 111:

⁵⁰⁷ Մերտվեց (ռուս.) – մեռել:

քյավառյան խոսվածքի՝ նեգրի կողմից արտաբերումն է նպաստում անսպասելի ծիծաղի դրսևորմանը.

Քյավառցին էրեխին տանում ա Լոնդոն, տալիս ա մի ընտանիքի, ասում ա՝

– Դուք երեխիս ձեր լեզուն սովորեցրեք, մի էրկու տարի հետո կգամ, կտանեմ, մաղարիչն էլ՝ իմ վրա:

Մի տարի հետո էս քյավառցին ասմա՝ «Գնամ տենամ՝ տղիս գործերը ո՞նց են, մի բանի հասել ա՞»:

Գնում ա, դռան զանգը տալիս ա, դուռը տանտիրոջ նեգր սպասավորն ա բացում, քյավառցին հարցնում ա. // – Օ՞րտակը տրա՞նն ա:

– Չէ, – ասում ա էս նեգրը, – գոացե խոացի (իմա՝ գնացել է հացի-ԱՍ): (ԱՍՇՀ)

Խոյի բարբառով արտաբերումները ևս, տարատեսակ դրսևորումներով, դառնում են ժողովրդական երգիծանքի թեմա՝ պատճառ դառնալով մանրապատումների և զվարճախոսությունների ստեղծման.

Վթարի վայրում արտաշատցին բացատրություն է տալիս ավտոտեսուչին.

– Ավտոյով գյալեսի, էրևանի թեխեն⁵⁰⁸ ի գյասերի, էրկու ջոջ լույսի տեսասի, գյասեր ի, մութ ի, տասնամ տեպ իմ ավտոս ա կյալի: Թե կեռեմ ա՞ջ, թեքես է աջ, թե կեռեմ ձա՞խ, հետս թեքես է ձախ, ես էլ տվի ձախ, աչքը հանի, ճիշտ չարի՞... (ԱՍՇՀ)

Դրանցից մեկն էլ հանելուկային՝ անհավանական թվացող հարցուպատասխանական կառույցով է հանդես գալիս, որի պատասխանը տալիս է հենց ինքը՝ հարց տվողը.

– Կարո՞ղ եք մի բառ ասեք, որ նաև բարդ ստորադասական նախադասություն լինի, – հարցնում է լեզվաբան Մանվել Ասատրյանը:

.....

– Կըսիրեցուցեմըտ (Ես քեզ կստիպեմ, որ դու ինձ սիրես): (ԱՍՇՀ)

Պարսկահայոց բարբառին առնչվող զվարճախոսություններից մեկում զավեշտն

⁵⁰⁸ Թեխեն – կողմից:

ստեղծվում է *վերդի-որտեղ* հարաբերական դերանվան և *Վերի* տեղանվան արտասանական հարանունությամբ: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 5:**

Ձվարճապատումներից մեկում էլ **ձայնի հնչերանգը՝** ասելիքը կտրված՝ ցածր ձայնով խոսքն է դառնում զավեշտի հենք (նման պարագայում ասացողը պետք է դերասանի պես հնչերանգը փոխած ասելիքը ընկալելի դարձնի ունկնդրին)։

Ձենը կտրված մի մարդ պարապ ա ըլում, ասում ա. «Գնամ հարևանիս հետ նարդի խաղամ»:

Դուռը թխկացնում ա, հարևանի կնիկն ա դուրս գալիս, քանի որ ձենը կտրված ա, խզված, ցածր ձենով հարցնում ա. // – Մարդըդ փանն ա՞: //

Հարևանի կնիկն էլ ա ցածր ձենով ասում. // – Չէ, արի՛ ներս: (ԱՍՇՀ)

Բաղաձայնների սխալ արտաբերումը ևս կարող է զվարճախոսությունների առաջացման պատճառ հանդիսանալ: Այսպես, Դիանա անձնանվան սխալ՝ քմայնացմամբ արտաբերելը բառամասնատման դեպքում կարող է անսպասելի ծիծաղ առաջացնել: Նման զվարճախոսական կառույցն օգնում է նաև քննադատելու թե՛ քաղքենիական պահվածքը, թե՛ սխալ արտասանությունը։

Մեկը հարցընում է. // – Քո՛ւր ջան, անունըդ ի՞նչ է: // Ասում ա՛ Ձիաննա: (իմա՛ Դիանա-ԱՍ) // – Ճիշտն օր ըսեմ, ընձի էլ էջ Վալոդ կըսեն: (ԱՍՇՀ)

Երբեմն էլ համապատասխան ձայնավոր ունեցող բառն արտաբերելիս **արտասանական ապարափի՝** շուրթերի բացվածքի կերպն է զվաճախոսության մեջ զավեշտի առաջացման պատճառ դառնում։

– Գիտե՞ք, որ լենինականցիների բերանը փոքրացել ա: // – Ո՞նց: //– Էնքան են գոռացել Յուո՛ւրիկ, Յուո՛ւրիկ, որ բերանները փոքրացել ա: (ԱՍՇՀ)

Հաճախ տարբեր տարածաշրջանների մարդիկ ծաղրի առարկա են դարձնում միմյանց բարբառները կամ խոսվածքները: Այդ դեպքում նրանք ընտրում են այնպիսի բառերով ու բառակապակցություններով կառույցներ, որոնցում արտաբերած խոսքը՝ **արագախոսության և արտասանական դադարի խախտման** շնորհիվ, հարանունությ-

յան ինքնատիպ դրսևորում է ձեռք բերում՝ վերածվելով գոեհիկ արտահայտությամբ արտաբերված զավեշտի: Այսպես՝

Լոռեցիները շիրակցիների լեզուն ծաղրելիս արագախոսությամբ և առանց կետադրական նշանների դադարը պահպանելու են համապատասխան նախադասությունն արտաբերում, որ զավեշտալի բամբռակ իմաստ արտահայտի.

Շիրակցի կինը, ցանկանալով իր բարեկամուհուն հյուրասիրել տաք կարկանդակով, ասում է.

– *Քակեցի*⁵⁰⁹, *տաք-տաք կեր, նոր կերթաս...*(ԱՍՇՀ)

Շիրակցիներն էլ լոռեցիների լեզուն ծաղրելիս հակադարձում են լոռեցիներին հետևյալ կառույցներով.

– *Ինչքամ ասըմ եմ՝ ածիլ մի, ածել*⁵¹⁰ *եմ, ածըմ ա...*(ԱՍՇՀ)

Երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում զավեշտ ստեղծվում է նաև արտասանության կերպի՝ **արագ և դանդաղ արտաբերման** միջոցով՝ դրանով իսկ ձգտելով խոսակցի մոտ գործողությունը կատարելու ժամանակահատվածի հակառակ տպավորությունն ստեղծել:

Մանկավարժ, գրող Հ. Գուրունյանը հիշողությամբ ներկայացնում է տատից մորն անցած **համշենական** զվարճախոսության նմուշներից մեկը, որտեղ սկեսուրը հարսի կատարած աշխատանքը շա՛տ դանդաղ է ներկայացնում, իսկ աղջկանը՝ արագ-արագ.

– *Հայսս*⁵¹¹ *օրը լա՛թ*⁵¹² *մը, օրը լա՛թ մը... Ամա ախճիգըս շապտուն*⁵¹³ *շըպըրտքը*⁵¹⁴ *լաթ մը, շապտուն շըպըրտքը լաթ մը...*⁵¹⁵ **Տե՛ս Հավելված 3, թիվ 6:**

⁵⁰⁹ **Քակեցի** – քա՛, կեցի՛ (իմա՛ քա՛ կոչական բառ և կեցի՛ մնա):

⁵¹⁰ **Ածել** – լցնել, նվազել:

⁵¹¹ **Հայս** – հարս:

⁵¹² **Լաթ** – լվացք:

⁵¹³ **Շապտուն** – շաբաթը:

⁵¹⁴ **Շըպըրտքը** – այս ու այն կողմ նետել, շարտոտել:

⁵¹⁵ Համշենահայ բանահյուսություն, Հավաքեց, կազմեց և ծանոթագրեց Հակոբ Գուրունյանը, Եր., 1991, «Լոյս» հրատ., էջ 51 :

Այդ գվարճախոսության **կիլիկիահայոց** տարբերակում⁵¹⁶ և սկեսուրը հարսի կատարած աշխատանքը դանդաղ, ծոր տալով է ներկայացնում, իսկ աղջկանը՝ արագ-արագ: Ջավեշտի հենքը այստեղ և՛ հնչերանգն է, և՛ հատկապես աշխատանքը կատարելու ժամանակահատվածը՝ մի ժամում և մի օրում: Որպեսզի խոսակիցը հակառակ տպավորությունը չունենա, ասացողը դանդաղ է ասում *մի ժամում*-ը, արագ-արագ՝ *մի օրում*-ը: **Տե՛ս Հավելված 3, թիվ 7:**

Իսկ **ագուլիսցիների** տարբերակում⁵¹⁷ արագ ու դանդաղ արտաբերումը նպատակ ունի զավեշտն ստեղծել ծուլության հիմքի վրա՝ երկու թամբալ կանանց՝ *բաղնիս անելու*՝ լողանալու գործողության հաճախականությունն ընդգծելու միջոցով: **Տե՛ս Հավելված 3, թիվ 8:**

Մոկսի տարբերակում⁵¹⁸ երկու մայրերն իրենց աղջիկների շուռտիկ (միագույն կամ բազմագույն թելերով երկար ու նեղ ծակոտկեն գործվածք) գործելու շնորհքն են ներկայացնում, և մեկի աղջկա՝ օրը մի շուռտիկ գործելուն մյուսը հակադրում է իր աղջկա՝ շաբաթը մի շուռտիկ գործելը. «Ա՛հ, ի՞նչ է օրե շուռտիկը... Իմ ախշիկ՝ շաբաթ շուռտիկը, շաբաթ շուռտիկը»: **Տե՛ս Հավելված 3, թիվ 9:**

Հայ ժողովրդական երգիծական ստեղծագործությունների համատեքստում իրենց արտասանական յուրահատկություններով առանձնանում են **Լոռու** երգիծական մանրապատումներն ու գվարճախոսությունները, որոնց մեջ ուրույն խումբ են կազմում զուտ լոռեցիների խոսվածքի հնչարտաբերմանը բնորոշ **երկարացման հնչերանգով երկխոսական կառույցները**: Այդպիսի երկխոսական գվարճախոսություններում լոռեցու ականա հարցումն էլ դառնում է անսպասելի ծիծաղի հենքը:

⁵¹⁶ **Սվազյան Վ.**, Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 66:

⁵¹⁷ Ագուլիսի բարբառի մասունքներ, աշխատասիրությամբ Աբգար Այվազյանի, 2-րդ հրատ., Եր., «Գասպրինտ» հրատ., 2012, էջ 164:

⁵¹⁸ Մոկս. Հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Ս. Հարությունյան (գիտական ղեկավար), Է.Հ. Խեմչյան, Մ.Հ. Խեմչյան, Ա.Կ. Պողոսյան, Եր., «Գիտություն» հրատ., 2015, էջ 388:

Եթե գրական հայերենում հարցական կամ բացականչական նշանը դրվում է վերջին վանկի ձայնավորի վրա (բացառությամբ հատուկենտ դեպքերի), ապա Լոռու խոսվածքում հարցում արտահայտող բառի ձայնավորը (երբեմն էլ ձայնավորները) երկարացվում է (մէէէ՛ր, մէ՛րըըը՛, դռա՛նըըը՛):

Հայերենի բացահայտության նշանները՝ հարցականը և բացականչականը, ի զորու չեն արտահայտելու այն նրբերանգները, որոնք առկա են լոռեցու խոսվածքում: Երկաստիճան, երբեմն էլ եռաստիճան երկխոսական կառույցներով զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ են դառնում լոռեցու երգեցիկ հնչերանգով արտաբերած հարցումները: Նմանատիպ զվարճախոսային կառույցներում երկխոսությունը կա՛մ երկկողմանի հարցով է արտահայտված, կա՛մ միակողմանի: Առաջինի դեպքում հարցումը երկու ձևով է հանդես գալիս.

ա. երկկողմանի հարցմամբ (եթե հարց տվողը լոռեցի չէ).

– *Ձվածեղ սարքե՛մ:* – *Ներեցե՛ք, ծննդատունը որտե՛ղ է:*

– *Ձվո՛րոո՛վ:* (ԱՍՇՀ)⁵¹⁹ – *Կընա՛նոո՛ց:*

բ. երկկողմանի երանգավորված հարցումով (եթե երկխոսություն վարողները լոռեցիներ են).

– *Ձվածեղ սարքէէ՛մ:* – *Չգա՛ցիիի՛ր: (իմա՛ երկրաշարժի ցնցումը)*

– *Ձըվո՛րոո՛վ:* – *Էլ յեղ է՛լաաա՛վ:*

գ. առանց բացահայտության հնչերանգի նախադասությանը հաջորդող լոռեցու երանգավորված հարցմամբ.

– *Ա՛յ, էս մեքենան ա 3 լիտր բենզին վառում,– ցույց փալով անցնող «Օկա» մակնիշի ավտոմեքենան՝ ասում է հավաքված հարևաններից մեկը:*

– *Օրա՛կա՛աաա՛ն,– հարցնում է լոռեցի հարևանուհին:*

Ճիշտ է, երանգավորված խոսքով հարցում պարունակող երկխոսական կառույցներում կան նաև այնպիսի նմուշներ, որոնցում հարցումը ոչ թե միամտության կամ ինք-

⁵¹⁹ Կրկնությունից խուսափելու համար մեր գրառած Լոռու երգեցիկ հնչերերանգով զվարճախոսությունների մոտ չի նշվի (ԱՍՇՀ) համառոտագրությունը:

նաբերաբար արտաբերման արդյունք է, այլ չիմացության՝ առարկաներից ու երևույթներից անտեղյակ լինելու հետևանք: Լոռեցին գիտի «դիպլոմատ»-ի միայն ժողովրդախոսակցական լեզվում կիրառվող «պայուսակ» իմաստը, նրան անձանոթ է դրա օտարալեզու *դիպլոմատ*-«*դիվանագետ*» համանունը, ինչն էլ զվարճախոսության մեջ հանգեցնում է զավեշտի.

– *Տղեդ ի՞նչ ա ըշխատըմ,- հարցնում է լոռեցին հարևանուհուն:*

– *Դիպլոմատ: // – Ձե՛ռիի՛...*

Չնայած Լոռու խոսվածքում երգեցիկ հնչերանգային խոսքը միշտ էլ առկա է եղել, այնուամենայնիվ թե՛ 19-րդ դարի երկրորդ կեսի թումանյանական գրառումներում⁵²⁰, թե՛ հետագայում տպագրված Լոռու անեկդոտների տարատեսակ ժողովածուներում լոռեցուն բնորոշող նման հնչերերանգի և երկխոսության միջոցով անսպասելի ծիծաղ առաջացնող երգիծապատում-զվարճախոսությունները բացակայում են: Դրանք հիմնականում վերջին 40-50 տարիների արգասիք են, ինչպես՝ ստորև ներկայացվող նմուշները.

ա. – *Անձրև ա գալի:*

– *Դռա՛նըըըը՛...*

գ. – *Մանկապարտեզը որտե՛ղ է:*

– *Ըրե՛խաասա՛նց...*

բ. – *Քանի՛ երեխա ունես:*

– *Մա՛րթիցըըը՛ս...*

դ. – *Էս անդեր կոշիկըս սեխմըմ ա:*

– *Ո՛տիի՛իդ...*

Երկխոսական նմանատիպ կառույցներում լոռեցու երանգավորված հարցումը արտաքուստ նպատակ ունի պարզաբանում մտցնել խոսքի մեջ, ներքուստ՝ զավեշտ առաջացնել: Այդ հարցումը պատասխան չի ակնկալում, և զվարճախոսության մեխը հենց այդ միամտությամբ շաղախված երանգավորված հարցումն է:

Երբեմն էլ օտար ազգությունների ներկայացուցիչները հայերեն խոսելիս չեն կարողանում ճիշտ արտաբերել այս կամ այն հնչյունը կամ հնչյունախումբը: Հենց այդ

⁵²⁰ **Սարգսյան Ա.Շ.**, Հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսությունների թումանյանական գրառումները և դրանց տարբերակային դրսևորումները, «Էջմիածին» ամսագիր, Ժ (հոկտեմբեր), 2015, էջ 98-111:

սխալ արտաբերման ժամանակ էլ ի հայտ են գալիս բազում զավեշտալի իրողություններ, որոնք, հետագայում այլոց պատմելով ու բերնբերան փոխանցելով, ձևավորում են բանահյուսության երգիծապատում-զվարճախոսությունների տեսակը: Ստորև բերվող օրինակներից մեկում զավեշտի հենք է դառնում խոսակցի հոգու հետ խաղալու նպատակով կիրառվող բառախաղը.

1960-ականների վերջին Երևանի պեդագոգական ինստիտուտում հայոց լեզվի քննության ժամանակ ազգությամբ եզդի մի ուսանող նստում է քննասեղանի մոտ ու սկսում.

– Հարսին (իմա՛ հարցին) պետք է մոտենալ երեք կողմից...

– Տղա՛ ջան, – միջամտում է լեզվաբան Մանվել Ասատրյանը, – էն երկուսը գիտենք, դու խոսիր երրորդի մասին... (ԱՍՇՀ)

3.2. Արևելահայերենի, արևմտահայերենի և բարբառների բառապաշարը

Առօրյա շփումների ժամանակ հաճախ ենք ականատես-ունկնդիրը դառնում այնպիսի իրավիճակների, երբ խոսակիցներից մեկի հայերեն խոսքը կամ նրանում առկա որևէ բառ-բառակապակցությունը շրջապատում անզուսպ ծիծաղ են առաջացնում, ինչի մասին մենք աշխատում ենք հաղորդակից դարձնել նաև ուրիշներին: Վերապատմելիս էլ, անշուշտ, որպեսզի զավեշտը էլ ավելի ընդգծվի ու տպավորիչ դառնա, այն ներկայացնում ենք ինչ-ինչ բաներ վերափոխելով ու ճոխացնելով: Նման երևույթների հենքի վրա էլ ստեղծվում և արագ տարածում են գտնում ժողովրդական երգիծանքի ինքնատիպ տեսակներից մեկը՝ անեկդոտը:

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների համատեքստում մեծ քանակ են կազմում հատկապես գրական արևելահայերենի, արևմտահայերենի և բարբառների բառագանձի հիմքի վրա ստեղծված տարաբնույթ նմուշները: Դրանցում զավեշտի հենք են դարձել գրական և բարբառային բառերի, դարձվածքների ու արտահայտությունների ոչ տեղին կիրառությունը: Այն հիմնականում դրսևորվում է դրանց իմաստը չիմանալ-չընկալելու հետևանքով:

Գրական հայերենի որոշ բառերին մարդկանց անձանոթ լինելը կամ դրանց իմաստը սխալ իմանալը բազմաթիվ զավեշտալի իրավիճակների առաջացման պատճառ են դառնում: Ավագ սերնդի մի մասը, կրողը լինելով որևէ բարբառի կամ խոսվածքի, գրեթե անհաղորդ է գրական հայերենին: Երիտասարդների հետ հաղորդակցվելիս նրանք երբեմն խոսքի մեջ գրական մի շարք բառեր և արտահայտություններ կամ սխալ են հասկանում, կամ տեղին չեն կիրառում՝ առաջացնելով ներկա գտնվողների անզուսպ ծիծաղը: Հենց դրանք էլ, հետագայում բերնբերան պատմվելով-փոխանցվելով, հիմք են հանդիսանում կատարված իրողության հենքի վրա մի շարք երգիծապատում-զվարճախոսությունների ստեղծման: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Հայկական ծագում ունեցող **ճակնդեղ** բառը գործածվում է բացառապես գրական հայերենում: Մի շարք բարբառներում (Արարատյան, Ղարաբաղի, Զեյթունի, Արաբկիրի և այլն) կիրառվում է **«փակ»** բառը: Լոռու խոսվածքին պատկանող Նոյեմբերյանի տարածաշրջանից գրառած «Ճրկանդեղ» զվարճապատումում զավեշտի հենքը հենց այդ բառի գրական համարժեքին անտեղյակ լինելն է: Գարնանն այդ անձանոթ բուսատեսակի սերմը գյուղացիները ցանում են և աշնանը երբ հողից հանում են, զարմացած ու հիասթափված իրար են նայում և ասում.

– Ա՛յ գյէրա ⁵²¹, քու օլուն ⁵²² տըրաքի, ի՛նչ ճրկանդեղ, ի՛նչ բան, էս խու մեր օխնած ⁵²³ տակըն ա ⁵²⁴: **Տե՛ս Հավելված 3, թիվ 10:**

Ջավախքի զվարճախոսություններից մեկում էլ զավեշտ է ստեղծվում գրական **ամուսին** և բարբառային **էրիկ** բառերի իմաստային հակադրության և **էրիկի** արժեքի գերազնահատման ժողովրդական «փիլիսոփայության» միջոցով.

– Ախշի՛, Թամա՛ր, էն օր ո՛ւմ հետք ման գուքայիր:

– Սանա՛մ մամ, ամուսինս էր:

⁵²¹ Ա՛յ գյէրա – դիմելաձև:

⁵²² Օլու (թրք.) – դիակ, մեռել:

⁵²³ Օխնած – օրինած:

⁵²⁴ Ասատրյան Մ., Լոռու խոսվածքը, Եր., «Միտք» հրատ., 1968, էջ 174:

– Քա օղո՛ւլ⁵²⁵, արի ինձի ականջ էրա՛ էրիկըմ առ, փունը նստի... Ի՞նչ գործ ունիս էդ ամուսիններու հետ: Ինձի որ հարցնես՝ մէ էրիկը փասը ամուսնուց լավ է⁵²⁶:

Իսկ ստորև բերվող տավուշյան զվարճախոսությունում գրական **օրհորդ** բառն է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ դարձել.

Արուս փափը թռչակի ընկնելու համար թղթերը հանձնում է սոցապ բաժին: Բաժնի վարիչ Անիկն ասում է.

– Տատի՛, օրհորդական ազգանունդ ինչպե՞ս է: (Ճիշտ ձևը՝ ի՞նչ է – ԱՍ)

Արուս փափը կարծում է, թե «օրհորդ» անվանի, հարուստ կանանց են ասում, քթի փակ խնդմնդալով պատասխանում է.

– Էրվեմ ես, միթո՞ւմ օրհորդ ե՞րբ եմ եղել որ...⁵²⁷

Գրական հայերենի **անձեռոցիկ** բառին անձանոթ լինելը գյուղաշխարհի մարդկանց շրջանում զանազան անեկդոտների առաջացման պատճառ է դարձել: Դրանցից մեկն առնչվում է լոռեցիներին:

Քաղաքից եկած հյուրերը լավ ուտելուց հետո տանտիրոջից անձեռոցիկ են ուզում.

– Էփ մինն էլ թող մնա էքուց կուտէնք, ըսօր էլ տեղ չըկա, – ասում է կոլխոզի նախագահը՝ կարծելով, թե ուտելու բան են ուզում⁵²⁸: **Տե՛ս Հավելված 3, թիվ 14:**

Լոռու զվարճախոսություններից մեկում էլ գրական հայերենի **զիջել** բառի սխալ ընկալումն է դարձել անեկդոտի առաջացման պատճառ:

Ավտոբուսում իր տեղը կանգնած տիկնոջը տրամադրող բարեկիրթ ուղևորի՝ «Ես սիրով զիջում եմ ձեզ» խոսքը հայիոյական արտահայտություն ընկալած լոռեցի Ռուբենին հունից հանում է, և հետևում է նրա՝ «Տո քեզ էլ զիճեմ, քու կընգանն էլ զիճեմ, ազգութակո՞րի էլ զիճեմ» կատաղած պատասխանը: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 15:**

Այս նմուշի մեկ այլ տարբերակի հանդիպում ենք նաև ջավախքյան անեկդոտա-

⁵²⁵ **Օղո՛ւլ** (արաբ.) – կոչական դիմելաձև:

⁵²⁶ Ժողովրդական հումորի քարտեզի առջև. Ջավախք, «Գարուն» ամսագիր, 1972, թիվ 5, էջ 92:

⁵²⁷ **Հովսեփյան Ն.**, Միամիտ և հնարամիտ սևքարցիները, Եր., «Հայաստան» հրատ., 2003, էջ 90:

⁵²⁸ **Մարկոսյան Ռ.**, Արարատյան բարբառը, Եր., «Լույս» հրատ., 1989, էջ 223:

շարում⁵²⁹: **Տե՛ս Հավելված 3, թիվ 16:**

1988-ի երկրաշարժի ու դրան հաջորդած տարիներին աղետի գոտում «**օգնություն**» հասկացությունը կապված էր առավելապես հումանիտար օգնության հետ, ինչն էլ մի շարք զվարճախոսությունների ստեղծման հիմք է հանդիսացել..

Մեկը մի խոռը փոսի միջից գոռըմ ա. // – Օգնությո՛ւն, օգնությո՛ւն... //

Կողքով մի լոռեցի պառավ կնիկ ա անց կենայլիս ըլըմ, մոդենըմ ա, ասըմ.

– Բալա՛ ջան, էդ օգնութիւնիցը ինձ հասնըմ չիիի՛ ... (ԱՍՇՀ)

Զավեշտ է ստեղծվում որոշ մարդկանց համար անձանոթ գրական հայերենի մասնագիտական (ասենք՝ դատաիրավական) եզրույթներին առնչվելիս.

Դատարանում վկա կանչված պառավին դատավորը հարցնում է.

*– Մայրի՛կ, ճանաչո՞ւմ եք **ամբաստանյալին**:*

– Վո՛ւյ, քոռանամ ես, խե՛ղճ ժոռա, անունն էլ են փոխել⁵³⁰:

Կամ էլ անսպասելի ծիծաղ է առաջանում **պաշտոնական-վարչական ոճին** հատուկ որոշ կաղապարային բառերի և արտահայտությունների կիրառության ժամանակ: Զվարճախոսություններից մեկում գյուղաշխարհի մարդուն **քաղաքացի** բառով դիմելաձևն է զավեշտ առաջանալու պատճառ դարձել.

Դատի ժամանակ դատավորը հարցնում է.

– Քաղաքացի՛ Գևորգյան, որտե՞ղ էիք գտնվում դեպքի օրը:

– Ա՛յդա, ես քաղաքացի չեմ, ես գեղացի անշառ մարդ եմ... (ԱՍՇՀ)

Մեկ այլ դեպքում դատական համակարգում կիրառվող **հանգամանք** բառն է անսպասելի ծիծաղի հենք հանդիսացել.

Դատավորը հարցնում է փուժածին.

– Քաղաքացի՛ Պետրոսյան, պատմե՛ք, թե ի՞նչ հանգամանքներում է ամբաստանյալը բռնաբարել ձեզ.

– Հանգամա՞նք, էն էլ ի՞նչ հանգամանք, ընկե՛ր դատավոր, էփ անաբուռը⁵³¹ հան-

⁵²⁹ Կիրակոսյան Ն., Կիրակոսյան Ա., Զավախքի ժպիտներ, Եր., «Հայաստան» հրատ., 1994, էջ 105:

⁵³⁰ Հարությունյան Հ., Հայոց լեզուն հազարազանձ, Եր., «Արևիկ» հրատ., 1989, էջ 132:

գամանքն առել, ընգել էր յեղեվիցըս... էլ ես ի՞նչ կարայի անեմ: (ԱՍՇՀ)

Այս զվարճախոսության տարբերակներից մեկում էլ նույն **հանգամանք** բառը՝ ներգոյական հոլովով, ընկալվում է որպես տեղավայր, և հետևում է տուժածի զավեշտ առաջացնող պատասխանը.

– *Դատավոր՝ ջան, նախ՝ ես քաղաքացի չեմ, գեղացի եմ: Հեղո էլ՝ էր այլանդակը հանգամանքներում չի բռնաբարել, է՛, գարա՛ժումն ա բռնաբարել, գարա՛ժումը...*

(ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 11:**

Առքուվաճառքի գործարքներն անելիս կամ դատական համակարգի հետ գործ ունենալիս մարդիկ հաճախ են առնչվում **շարժական և անշարժ գույք** հասկացությունների: Լոռու Շամուտ գյուղում շարժական ու անշարժ գույքից հենց որ խոսք է գնում, անմիջապես հիշում են զվարճապատումի վերածված մի իրողություն:

Գյուղի հայրական տանը տեր է դառնում երեք աղջիկ ունեցող մեծ եղբայրը՝ Վալոդը, իսկ տղաներ ունեցող մյուս երկու եղբայրներին ոչինչ չէր տրվել: Դատավորը երբ հարցնում է մեծ եղբորը, թե մյուս եղբայրները տեղա՞կ են եղել այդ գործարքի մասին, նա ասում է.

– *Հա, բա ո՞նց, քաղաքացի՛ դատավոր ջան, մեր ախպեր Սենիկն ինքն ա հրաժարվել իրա փայիցը, դե ես ու Գագոն էլ պայմանավորվել ինք՝ անշարժ գույքը ես վեր ունեմ, շարժականը՝ Գագոն...*

Էդ ժամանակ Գագոյի կնիկ Ֆլորան էլ չհամբերելով՝ փեղից գոռում է.

– *Քաղաքացի՛ դատավոր, գեղի իրանց միակ շարժականը իրանց հերն ա էլել, էն էլ, ճիշտ ա ասըմ, փվել ա մեզ...* (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 12:**

Շարժական և անշարժ գույք եզրաբառերին առնչվող զվարճապատումներից մեկում էլ անսպասելի ծիծաղը դրսևորվում է այդ եզրաբառերի՝ մարմնի մասերից մեկի հետ կապ ստեղծելով: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 13:**

Երբեմն էլ քրեական աշխարհին ու նրա մարդկանց կողմից ստեղծած «մասնա-

⁵³¹ **Անաբուռ** – պատվի՛ ամոթի գգացում չունեցող:

գիտական» բառերին անհաղորդ սովորական անձնավորությունն է դառնում անեկդոտի հերոս, իսկ նրա խոսքը՝ զավեշտի աղբյուր: Երգիծապատումներից մեկում կալանավայր ընկած գյուղաշխարհի մարդը **«զոնի նայող»** բառակապակցությունը այլ կերպ է ընկալում և դիմում է «գողական աշխարհի» ներկայացուցչին.

– ...Տղա՛ ջան, ես գիշերը մեկ-մեկ բացվել գիտեմ, որ նայես, տեսնես բացվել եմ, կծածկես...⁵³²: **Տե՛ս Հավելված 3, թիվ 17:**

Արտերկրի ու խորհրդային պետության մարդկանց ապրելակերպի ընդգծված տարբերությունը զվարճախոսություններից մեկում ներկայացվում է բառախաղով արտահայտված երեք «փաստարկներով»՝ **հոնի** կատարելության և **հոսի** անկատարության «հիմնավորումներով»: **Հոնորար**, երգե**հոն**, **հոնի** օղի բառ-բառակապակցությունների «ստուգաբանությամբ» բացահայտումները դառնում են ստորև բերվող նմուշի զավեշտի հենքը.

Մի ախպարի հարցընում են. // – Հո՛ս է լավ, թե՞՞ հոն: //Ասում է՛ //– Իհարկե՛ հոն:// – Էդ ո՞նց կապացուցես: //– Հարգավ, ապացուցեմ. //

Թե որ հոս լավ ըլլար, կկոչվեր երգեհոս, և ոչ թե՛ երգեհոն,

Թե որ հոս լավ ըլլար, կկոչվեր հոսարար, և ոչ թե՛ հոնարար,

Թե որ հոս լավ ըլլար, կկոչվեր հոսի օղի, և ոչ թե՛ հոնի օղի... (ԱՍՇՀ)

Մեր գրանցած նյութերից մեկում զավեշտ է առաջանում **հոդ** քերականական կարգի և **հոդ** ցուցական դերանվան համադրության ժամանակ.

Անգլերենի իմացությամբ պարծեցող մի տարեց հայրենադարձին ուղղված՝ «*Դե որ անգլերեն լավ գիտես, անգլերենի հոդե՛րն ասա*» խոսքին հետևում է նրա՝ «*Է՛, ըսեմ. հոս, հոդ, հոն*» ինքնագոհ պատասխանը: (ԱՍՇՀ)

Մի շարք երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ են դառնում նույն բառի՝ արևմտահայերենում և արևելահայերենում տարբեր իմաստներ արտահայտելու երևույթը: Անշուշտ,

⁵³² **Աբազյան Ս.**, Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամտություններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ., 1999, էջ 40:

դրանք դրսևորվում են հիմնականում **համանունության և հարանունության** միջոցով:

Այսպես, արևմտահայերենում **ձգելը** բաց թողնել է նշանակում, իսկ արևելահայերենում՝ **քաշել**:

Շինարարությունում աշխատում են հայրենադարձն ու տեղացին: Տեղացի բանվորը ներքևից ձայն է տալիս՝ ձգի:

Հայրենադարձը վերևից պատասխանում է. //– Ինչո՞ր ձգեմ, գուլուխիդ կհյնա: //

Տեղացի բանվորը բարկացած բղավում է. //– Քեզ ասում եմ՝ ձգի: //

Հայրենադարձը վերևից բաց է թողնում ծանրությունը⁵³³:

Արևելահայերենում և համշենահայոց բարբառում ևս որոշ բառեր հակառակ իմաստներ ունեն: Այսպես, **փոսը** արևելահայերենում **վիրապ** հասկացությամբ է գործածվում, իսկ համշենի բարբառում **փոս** նշանակում է **հարթ տարածք, հարթավայր, հրապարակ**⁵³⁴: Նույն կերպ էլ արևմտահայերենում **կոխելը** տրորել է նշանակում, իսկ արևելահայերենում՝ **և՛ մրցնել, և՛ բռնաբարել**: **Տե՛ս Հավելված 3, թիվ 18**:

Արևմտահայոց մեջ **շինել-կառուցելը** արևելահայոց շրջանում երկու իմաստներով էլ կիրառվում են. **և՛ կառուցել** է նշանակում, **և՛ բռնաբարել** (իբրև բամբառակ արտահայտություն՝ **կոխելն ու շինելը** ժողովրդախոսակցական լեզվում են կիրառվում):

Պատումներից մեկում հայրենադարձի՝ «**Եկանք, որ հայրենիքը շինենք...**» խոսքին հետևում է տեղացու երկիմաստ հեզնախառն պատասխանը. «**Հայրենիքին արդեն 70 տարի շինո՛ւմ է Սովետը...**»⁵³⁵: **Տե՛ս Հավելված 3, թիվ 19**:

Բազմազգ էտրիդային Միության բնակչության շրջանում կիրառվող և մամուլում անվերջ շրջանառվող «**Հայր Ստալին**», «**ժողովուրդների հայր**» արտահայտությունները սփյուռքահայերի համար խորթ ու անհասկանալի էին: «Հայր Ստալին»-ի «**հայր**» հասկացությունը սփյուռքահայն «ընկալում» է հայրենադարձվելուց հետո միայն:

⁵³³ **Ստեփանյան Ա.**, 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և ադապտացման խնդիրները, Հայ ժողովրդական մշակույթ – 12, ՀԱԻ (հանրապետական գիտաժողովի նյութեր), «Մուղնի» հրատ., 2004, էջ 148:

⁵³⁴ **Վարդանյան Ս.**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 325:

⁵³⁵ **Սվազյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 114:

Հայրենադարձությանն առնչվող քաղաքական անեկդոտաշարում այդ նորաստեղծ ու պարտադրված բառակապակցությունները յուրովի են մեկնաբանվում. դրանց ամբողջությամբ ընկալումը հիմնավորվում է ավելի վաղ շրջանառվող *մայրիկը լացացնել* կամ *մայրիկը նեղել* (իմա՝ մեկին խստորեն պատժել) դարձվածքները ուղիղ իմաստով գործողության մեջ ներկայացնելով: Բանագետ Վ. Սվազյանի գրառած «Նոր էկոլոն ու Հայր Ստալինը» այդ ժամանակների «պայծառ տխրությամբ»⁵³⁶ հագեցած զվարճախոսային արտացոլանքն է.

Մեր հոնտեղը կըսեին՝ Հա՛յր Ստալին, Հա՛յր Ստալին, մենք չէինք հասկնար՝ ի՞նչու ադանկ կըսեն: Բայց երբ հայրենիք էկանք և ան մերին մայրիկները մեկի՛կ-մեկի՛կ նեղեց, ան արեն միայն հասկցանք անոր Հա՛յր ըլլալը...⁵³⁷

Քանի որ **փափախ անել** արտահայտությունը զուտ խորհրդային համակարգի ծնունդ է, նոր հայրենադարձվածը, բնականաբար, չէր կարող ըմբռնել դրա իմաստը: Ստորև բերվող զվարճախոսության մեջ զավեշտի հենքը այդ դարձվածքի ուղիղ իմաստով ընկալումն է դարձել.

Հայրենադարձը տեղացի հարևանին դժգոհում է ցածր աշխատավարձից: Վերջինս խորհուրդ է տալիս փափախ անել:

– Է՛, փափախը գուլուխս դնեմ նե, փարաս կ'ավելնա՞՞⁵³⁸:

Արևելահայերենի **հանգչելը** մեռնել, մարել է նշանակում, իսկ արևմտահայերենում՝ *հանդարտվել*: Վերջերս մեր գրառած նմուշներից մեկն առնչվում է այդ երևույթին.

Հարևանուհին Հայաստան ներգաղթած սիրիահայի հեղ բորբոքված վիճում է.

– Քիչ մը հանգչիր⁵³⁹, – փորձում է հանգստացնել սիրիահայը:

– Հա՛, հիմա էլ մեռնելըս ես ուզը՞ մ... (ԱՍՇՀ)

⁵³⁶ Լեզվաբան Ռաֆայել Իշխանյանի՝ Տերյանի պոեզիային տված բնորոշումն է:

⁵³⁷ **Սվազյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 114:

⁵³⁸ **Ստեփանյան Ա.**, 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և ադապտացման խնդիրները, Հայ ժողովրդական մշակույթ-12, ՀԱԻ (Հանրապետական գիտաժողովի նյութեր), «Մուղնի» հրատ., 2004, էջ 148-149:

⁵³⁹ **Հանգչիր** – հանդարտվիր:

Արևմտահայերենը կրող հայրենադարձը հայրենիքում անմիջապես բախվում է արևելահայերենում ուսերեն բառերի չափից դուրս կիրառություններին, որոնք սկզբնական շրջանում ոչ միայն խորթ ու անընկալելի են լինում, այլև շատ դեպքերում տեղիք են տալիս բազում զավեշտալի միջադեպերի առաջացման:

Այսպես, ժողովրդախոսակցական լեզվի մեջ ներթափանցած հարկային տեսակի՝ եկամտահարկի ուսերեն **պաղախողնի**⁵⁴⁰ բառի չիմացությունը հայրենադարձի կողմից զուգորդվում է մեկ այլ օտար անվանը՝ **պարախողնի**⁵⁴¹, ինչն էլ հարանունության միջոցով պատճառ է դարձել հետևյալ զվարճախոսության առաջացման.

– Աս ի՞նչ պահում ըրած եք, – աշխատավարձն ստանալիս զարմացած հարցնում է հայրենադարձը:

– Պաղախողնի՛, հայրի՛կ, պաղախողնի:

– Մայրը թաղեմ, եռսուն տարի առաջ փարախողով Սովետմիություն եկած եմ, եռսուն տարի շարունակ փարախողին փո՞ղը կպահեք...(ԱՍՇՀ)

Անեկդոտներում անսպասելի զավեշտն ստեղծվում է նաև **գրական հայերենի և բարբառների կամ ժողովրդախոսակցական լեզվի և բարբառների բառ-բառակապակցությունների ու արտահայտությունների համանուն-հարանունային** կառույցներով:

Այսպես, զվարճախոսություններից մեկում ծիծաղը դրսևորվում է գրական արևելահայերենի **հրեւ** (բրթեւ) բայի ըղձական եղանակի եզակի թվի 2-րդ դեմքի (հրես) և **Լոռու խոսվածքի** նույնահունչ **հրես** (հիմա, շուտով) բառի համանունության հենքի վրա.

Գյումրեցին գնում է Վանաձոր և մտնելով ճաշարան՝ մատուցողին ասում է. //

– Քո՛ւր ջան, քիչըմ ուրելու բան բեր: //– Հրես կբերեմ: //– Իյա՛, օր չիրեմ, չես բերե՞⁵⁴²:

Այս նմուշի տարբերակներից մեկում լոռեցու խոսվածքը ծաղրողին հակադար-

⁵⁴⁰ **Պաղախողնի** (ռուս.) – եկամտահարկ:

⁵⁴¹ **Պարախող** (ռուս.) – շոգենավով:

⁵⁴² **Մելիք-Սարգսյան Գ.**, Զվարճալիք, Եր., «Պարույր Սևակ» հրատ., 2001, էջ 34:

ծողն ինքը՝ լոռեցին է⁵⁴³: **Տե՛ս Հավելված 3, թիվ 20:**

Թե՛ գրական հայերենում, թե՛ բարբառների մեծ մասում **խոր** նշանակում է **խորը**, **խորություն**, իսկ **Մեղրու և Կաքավաբերդի բարբառներում խոր** նշանակում է **քիչ**: **խոր փալ** հարադիր բայը մեղրեցիների խոսքում **երես-երես** է ընկալվում, ինչն էլ հանգեցրել է հետևյալ զվարճախոսության առաջացման.

Մէկը գերծում էր (խուզում էր) մի մեղրեցու մորուքը: Մեղրեցին անդադար կրկնում էր. «խոր փուր» (երես-երես խուզիր): Օտար սափրվերն էլ անխնա գերծում էր մորուքը: Մեղրեցու համբերութիւնը հատնելով՝ ձայն փվեց.

– Տո՛, փավա՛ր, քեզ չե՛մ ասում՝ խոր փուր:

– Ա՛խմախ, – պատասխանեց սափրվերը, – այնքան խոր փուր մորուքդ, որ դառավ հնձած արփ, է՛լ խոր փամ⁵⁴⁴:

Մի շարք բարբառների (**Վան**, **Մուշ**, **Նոր Նախիջևան**, **Գորիս** և այլն) **հեր-ը՛ ինչու** նշանակությամբ, զավեշտի տեղիք է տալիս ժողովրդախոսակցական լեզվում գործածվող **հեր** (հայր)–ի հետ համանունության հետևանքով.

Մեկը գալիս է մսավաճառի մոտ ու հարցնում. // – Միս ունե՛ս: // Մսավաճառը պատասխանում է. // – Հե՛ր չունեմ: (իմա՛ ինչո՞ւ չունեմ-ԱՍ) //– Օղորմի հորըփ, մի կիլո կշռի: (ԱՍՇՀ)

Պարսկահայոց զվարճախոսություններից մեկում էլ ժողովրդախոսակցական լեզվում կիրառվող **չայ-թեյ** գոյականի և **Փերիո բարբառով թեյ լինել – թուլանալ, նվաղել** հարադրավոր բայի բառախաղային համանունությամբ է զավեշտը դրսևորվել.

Մեկը թեյ շափ էր սիրում, երբ ճամփից հասնում է ծանոթի փունը, ասում է.

– Թե՛զ արա մի չայ շինի, թե չայ չխմեմ, թեյ կըլնեմ⁵⁴⁵:

Օտարալեզու **ումուդ** բառը մի շարք բարբառներում **հոյս** է նշանակում, իսկ **Բա-**

⁵⁴³ Ծիծաղի տոնավաճառ, 3-րդ թողարկում, Խուժան անեկդոտներ, Եր., «Զանգեզուր» տպագրական կենտրոն: 2007, էջ 25:

⁵⁴⁴ Անեկդոտներ, հատոր Բ, Աշխատասիրեց Յովհաննես Նազարեանց, Տիփսիս, տպարան Մ. Վարդանեանի, 1877, էջ 42:

⁵⁴⁵ **Մինասեան Լ.**, Գիւղական բառ ու բան (Փերիա գաւառ), Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ վանքի տպարան, 1998, էջ 195:

յազեպի բարբառում այն օգտագործվում է նաև որպես մտերմիկ դիմելաձև, ինչպես լո-
ռեցիների *այդա*-ն կամ մշեցիների *լառ*-ն: Այդ բառի հաճախակի կիրառությունը այլ
տարածքների մարդկանց համար երբեմն անսովոր է հնչում՝ անգամ հեզնանքի տեղիք
տալով, ինչն էլ պատճառ է դարձել այդ բարբառը կրողների կողմից կամա թե ակամա
հետևյալ զվարճախոսության ստեղծման.

Մեկը մի փարիքով քյավառցու ուզում է ձեռ առնի, ասում է.

– *Ճիշտ է՞, որ դուք էշին ասում եք ումուդ:*

– *Խա՛, ումո՛ւդ, – պատասխանում է ծերունին: (ԱՍՇՀ)*

Հայկական կրթություն չստացած **ռուսախոս հայի հայերեն խոսքը** կարող է
անսպասելի ծիծաղ առաջացնել՝ պատճառ դառնալով այն փոխանցելու նաև այլոց.

Լյուսյա տատը ռուսական կրթություն էր ստացել, հայերեն խոսելիս հողերը
խառնելով, բառերն ու բառակապակցությունները աղավաղելով էր ասում՝ առաջացնե-
լով շրջապատի մարդկանց ծիծաղը: Ահա դրանցից մի քանի նմուշ.

Երբ խոսում էին ինչ-որ բանի մասին, Լյուսյա փայտն արծագանքում էր.

– *Բանիս հեղևից ե՛ս ընկել (իմա՛ բանի հետևից ե՛ս ընկել, այսինքն՝ արժի՛ էդ
մասին խոսել, մտածել-ԱՍ): (ԱՍՇՀ)*

Մեկ այլ դեպքում երբ հարցնում էին՝ // – Լյուսյա՛ փայտի, մեղր ունե՛ս: //

Պատասխանում էր. //– Առչևումըս չունեմ (իմա՛ առայժմ չունեմ-ԱՍ): (ԱՍՇՀ)

Մեկ այլ ռուսախոս հայ այսպես է ներկայացնում գալիք ծրագրերը.

– *Տանեմ գլխիցս ցրեմ, գամ (իմա՛ ցրեմ, գամ-ԱՍ): (ԱՍՇՀ)*

3.3. Անձնանունը և տեղանունը

Տարատեսակ օտար և հայկական անուններով հեղեղված մեր անվանացանկին
հաղորդակցվելն ինքնին զավեշտալի է: Ամեն մի ժամանակաշրջան իր կնիքն է դրել ոչ
միայն հայոց անձնանունների, այլև տեղանունների վրա, երբեմն էլ այնպիսի «խոր
հետք» թողնելով, որ դրանց ստեղծման պատմության բացակայությունն անգամ չի

խանգարել լսողների մեջ լիաթոք ծիծաղ առաջացնելուն: Դրա վառ ապացույցը Հովհ. Շիրազի հայոց անձնանուններին և տեղանուններին նվիրված ստեղծագործություններն են⁵⁴⁶:

Ընտանիքներում ծնված երեխաներին արտառոց ու անհեթեթ անուններ, երբեմն էլ ոչ հայկական անձնանուններ, ազգանուններ և տեղանուններ դնելը, տարատեսակ տառային, վանկային ու վանկատառային հապավումներով մարքսիզմի կլասիկների ու պետական գործիչների անուններով և քաղաքական կարգախոսներով հայ նորածինների բարուրները «փաթաթելը» կապված էին հատկապես Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Միության վարած քաղաքականության, համատարած անգրագիտության վերացման ու կիսագրագիտության պայմաններում խորհրդային գաղափարախոսությունը բռնի մարդկանց ուղեղներն ու ընտանիքները մտցնելու գործընթացների հետ:

Քաղաքական այդ «ոգևորության» արտացոլանքը հայկական ընտանիքներում դրսևորվեց խորհրդային կարգեր հաստատվելու հենց առաջին տարիներին: Հայկական մեկ բնակավայրում Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում, զավեշտալի օտար անուն-ազգանուններով հեղեղված լինելու մասին է հավաստում լրագրող Տ. Նիկողոսյանի «Չերչիլը» հուշապատումը⁵⁴⁷: **Տե՛ս Հավելված 3, թիվ 21:**

Երգիծական մանրապատումի առաջացման հենք է դարձել ազգային ու կրոնական տոների (Նոր տարի, Բարեկենդան, Ջատիկ) համար ինչ-որ բան պահելիս ժողովրդական խոսքում օգտագործվող բանաձևը՝ կապված մարդկանց ապրելակերպը ճիշտ կառավարելու կամ էլ եղանակային դժվարությունները (կոնկրետ՝ մարտ ամսվա «գժությունները») հեշտությամբ հաղթահարելու հետ:

Հիշենք բարեկենդանյան զվարճապատումի՝ բոլորիս ծանոթ թումանյանական մշակումը: Նմանատիպ սյուժեով, այս անգամ եղանակային դժվարությունները հաղթահարելուն առնչվող, երգիծական մանրապատումի հետաքրքիր օրինակ է պոլսահայե-

⁵⁴⁶ **Շիրազ Հովհ.**, Քնար Հայաստանի, հատոր 1, Եր., 1958, Մեր գյուղերի անունները, էջ 430, Մարդկանց անունները, էջ 440:

⁵⁴⁷ **Նիկողոսյան Տ.**, Իրական դեպքեր բայագետցիների կյանքից, Եր., «Լուսաբաց» հրատ., 2016, էջ 24-25:

րից գրառել հայագիտության նվիրյալ Հր. Աճառյանը: Եթե առաջին երգիծապատումում ժողովրդական տոնախմբության Բարեկենդան անվանումը խորամանկությամբ «անձնանուն» դարձրածն է հայտնվում ու տիրանում այդ օրվա համար պահված ուտեստին, ապա աճառյանական գրառումում մարտ ամսվան տրված ժողովրդական անվանումն է պատճառ դարձել անձնանվան քողի տակ ներկայանալ և խաբեությամբ պահուստային վառելիքը կնոջից վերցնել:

Ամուսնու՝ «*Կնի՛կ, ... քեօմհւրին*⁵⁴⁸ խոշորները Մարտիկ ախպօրը համար պահէ» անընդհատ զգուշացումներից հետո ներկայանում է մի նոր «Բարեկենդան»՝ «Մարտիկ ախպօր» տեսքով, թե՛ «*Մարտիկ ախպարը էս էմ: Քեօմհւրներուն խոշորը զապեցիր նէ, Կուր քի*⁵⁴⁹ *փանհիմ*»⁵⁵⁰: **Տե՛ս Հավելված 1, թիվ 1:**

Ըստ բանահավաքի՝ «*խոշորները պահենք Մարտիկ ախպօրը համար*» բանաձևը տարածված էր Պոլսում, և դրա «իմաստն այն է, թե Մարտ ամսում ցրտերն ավելի զորեղ են, և ավելի պետք կա ածուխի կամ փայտի»⁵⁵¹:

Անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ կարող է դառնալ հայկական անձնանվան հանգավոր բառախաղային կիրառությունը՝ զավեշտի հենք դարձնելով ստացած վայելքի և դրա դիմաց «ապրանքափոխանակության» պատրաստակամությունն արտացոլող խտացված ասելիքը.

*Մի որբիվերի կնիկ ա ըլնում, փան դռանը ընտիր փանձի ծառ ա ունենում:
Հարևան ջահել տղերքից մեկը գալիս ա թաքուն բարձրանում ծառն ու սկսում փանձ
քաղիլը: // Էս կնիկը որ ձեն ա լսում, դուրս ա գալիս փեսնում՝ մեկը ծառի վրեն ա, ասում
ա՛ // – Հլա իջի՛ ցած, փես՝ ինչ եմ բերելու գլուխըդ: // – Ի՞նչ ես անելու: //*

– Իջի՛, կտենաս, թե ինչ եմ անըմ:

*Տղեն ծառից իջնում ա, էս կնիկը փանում ա փուն, մի քիչ հաց-մաց են անում,
մըտցնում ա փեղաշորը, իրա ուզելիքն առնում ա: Տղեն հագնըվում ա, որ գնա, էս*

⁵⁴⁸ **Քեօմհւր** – քարածուխ:

⁵⁴⁹ **Քի** – որ:

⁵⁵⁰ **Աճառյան Հր.**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 169-170:

⁵⁵¹ Նույն տեղում:

կնիկն ասում ա՛ // – Անըմըդ ի՞նչ ա, տղա՛ ջան: // Բա թե՛ Մխիթար: // Ասում ա՛ // – Ա՛յ մխիթարվես դու, Մխիթա՛ր, // Տանձի ծառը հանի տար: (ԱՍՇՀ)

Հայոց մեջ երբեմն նորածինների անուններ են դնում թե՛ **երկու արական սեռերի անձնանունների միացմամբ** (Արամ+Մայիս, Արամ+Աշոտ, Հայկ+Արամ), թե՛ **արական ու իգական սեռերի անձնանունների** (մասնավորապես ամուսնական զույգերի) **վանկային կամ բառամասային հապավումներով**, ինչպես՝ Գահերինե՛ Գարիկ+Հերքինե, Ալգիս՝ Ալվարդ+Սարգիս և այլն: Հենց նմանատիպ կառույցներն էլ պատճառ են դարձել տարատեսակ անեկդոտների ստեղծման, որոնցում ժողովուրդը որոշ օտար բառերի հետ համանուն-հարանունային դրսևորմամբ և մասնատման կամ բառաբարդման միջոցով է զավեշտ ստեղծում: Այսպես, զվարճախոսություններից մեկում զավեշտը դրսևորվում է հայկական անձնանվան բառամասային հապավումով և ճապոնական հանրահայտ ձեռնարկության հարանունությամբ.

Աբարանցի Փանոսն ու Սոնիկն ամուսնանում, տղա են ունենում, անունը դնում են Պանասոնիկ: (ԱՍՇՀ)

Մեկ այլ զվարճախոսության մեջ անձնանունների **ստրուգաբանությունն** է դառնում զավեշտի դրսևորման հիմնական «մեղավորը»: Այսպես, օրինակ, անձնանուններից մեկի ստեղծումը կապվում է տեղավայրի հետ. հայկական Սարիկ անձնանունը զվարճախոսության մեջ բացատրվում է հերոսի՝ սարում ծնվելու հանգամանքով, ինչը համարվում է հաջողություն, քանզի գոմում ծնվելու դեպքում այլ լուծում կստացվեր.

Մի աղջկա հարցնում են. // – Անունդ ի՞նչ է: // Ասում է՛ Սարիկ: //

– Բայց Սարիկ անուն կա՛: Ի՞նչ է նշանակում:

– Քանի որ սարում եմ ծնվել, մերոնք անունս դրել են Սարիկ:

– Քո՛ւր ջան, ինչ լավ է՛ գոմում չես ծնվել, թե չէ անունդ դնելու էին Գոմիկ: (ԱՍՇՀ)

Զվարճախոսություններից մեկում էլ զավեշտն ստեղծվել է **օտարալեզու անձնանվան մասնափման միջոցով**, ինչի հետևանքով անվան առաջին վանկի և հայերեն Սոնա անձնանվան հենքի վրա, ծանոթության ֆոնին, հակադարձվում է հակառակ սեռի

մեկ այլ ներկայացուցչի զավեշտալի խոսքը.

Հարցնում են. // – Քո՛ւր ջան, անունդ ի՞նչ ա: // Բա թե՛ // – Էքսոնա: //

– Դե որ քու անունը էգ Սոնա ա, ինձ էլ որձ Համո են ասում: (ԱՍՇՀ)

Անձնանունների հենքի վրա ստեղծված մեկ այլ զվարճախոսության մեջ զավեշտն ստեղծվում է ոչ միայն ազգային ավանդներին հավատարիմ մնալը շեշտելով՝ հոր անունով նորածնին անվանակոչելով, այլև նրա վաղաժամ ծնունդը այդ նույն անձնանվամբ ներկայացնելով.

Աբարանցին իմանում ա որ տղա յա ունենալու, որոշում ա՛ հոր անունը դնի՛ Արշակ: Էն էլ տղեն յոթնուկ ա ծնվում, անունը դնում ա Վաղարշակ: (ԱՍՇՀ)

Երբեմն էլ ի հավաստումն հայոց մեջ գոյություն ունեցող զավեշտ առաջացնող բազում անձնանունների՝ զվարճախոսություններում ծիծաղի առարկա են դառնում **կիսահրական-կիսամրացածին անվանումները.**

*Մի գյումրեցու հարցնում են՝// – Անունդ ի՞նչ է: //Ասում է՛ **Առավել:**//*

– Ա՛յ քեզ անուն, ճիշտն ասած, առաջին անգամ եմ լսում:

– Բա որ ախպորըս անո՛ւնն իմանաս, ինչքան կգարմանաս:

*– Ախպորըդ անու՞նն ինչ է: // – **Առավելա:** (ԱՍՇՀ)*

Բավականին մեծ քանակ են կազմում հայկական կամ հայության շրջանում տարածում գտած անձնանունների և դրանց հենքի վրա ստեղծված տարատեսակ բառերի, մասնավորապես հատուկ և հասարակ գոյականների համանուն-հարանունային դրսևորմամբ անեկդոտները: Այսպես,

ա. **Հատուկ և հասարակ գոյականների համադրությամբ** զավեշտ է ստեղծվում ի հակադրություն հասարակ գոյականի բնույթի՝ անձնանվան էությունը բնութագրող բառակապակցության կիրառությամբ.

Շաքար անձնանվամբ ներկայացող ոստիկանը վարորդի կողմից բնութագրվում է այսպես.

– Իա՛, այրա՛, էնա ասա մոու բիրար ես, էլի...⁵⁵²: **Տե՛ս Հավելված 3, թիվ 22:**

բ. Հատուկ և հասարակ գոյականների համադրմամբ անսպասելի ծիծաղ է առաջանում նաև **հայկական անձնանվան (Իշխան) և ձկնապեսակի (իշխան) համանունության միջոցով**.

Իսպեկտորը⁵⁵³ մեկին կանգնացնում ա, ուզում ա ակտ գրի: Էս շոֆեռն⁵⁵⁴ ինչ անում ա, չի անում, ինչքան խնդրում ա, հնար չի ըլում, ակտ⁵⁵⁵ ա գրում ու ասում ա՛ հմի կարաս ազատ գնաս: Էս շոֆեռն ասմա.

– Էրա դու քու ասածն արիր, մենակ մի բան եմ խնդրում. անունդ ինձ բաշխի, ու ես հանգիստ խղճով կգնամ: // Իսպեկտորն ասմա՛ // – Իշխան, բավարարված ե՛ս, դե գնա՛: // – Իշխա՞ն...Վայ քեզ ջրիցը հանողի տիրու մերը...(ԱՍՇՀ)

գ. Անեկդոտներում անսպասելի զավեշտ է ստեղծվում **բուսապեսակից սրեղծված անձնանվան (Ծաղիկ) և այդ նույն բուսապեսակի փնջի (ծաղկեփունջ) բառախաղային համանունությամբ**.

Ավտոբուսից իջնելիս մեկը շրջվելով դիմում է իր ծանոթին.

– Ծաղի՛կ, տոմս չվերցրնես. վերցրել եմ:

Քիչ հետո մի հինգ-վեց հոգի, առանց տոմս վերցնելու, իջնում են:

– Չհասկըցա, էսիգ Ծաղիկ է՛ր, թե՛ ծաղկեփունջ, – զայրանում է վարորդը:
(ԱՍՇՀ)

դ. Քիչ չեն նաև զանազան թռչունների անուններով հայկական անձնանունները՝ Սոխակ, Աղավնի, Վարուժան-Վարուժնակ (աղավնու արու ձագը), Արծվի(կ), Կաքավ, Լորիկ, Բազե, որից էլ՝ Բազեյան ազգանունը, Բլբուլ, որից էլ՝ Բլբուլյան ազգանունը և այլն:

Հայկական անեկդոտներում զավեշտի հենք են դառնում նաև **թռչունների անուններից առաջացած անձնանունները**: Դրանցից մեկը կապված է սոխակին տրվող

⁵⁵² **Բալայան Գ.**, Միամիտ մտքեր, Լոռվա ժպիտներ, Եր., «Վան Արյան» հրատ., 2002, էջ 47:

⁵⁵³ **Ինսպեկտոր** (ռուս.) – ավտոտեսուչ:

⁵⁵⁴ **Շոֆեռ** (ռուս.) – վարորդ:

⁵⁵⁵ **Ակտ** (ռուս.) – արձանագրություն:

ժողովրդական բլբուլ անվան հետ: Ղարաբաղյան զվարճապատումում հիմք ընդունելով սոխակ-բլբուլի երգելու հատկանիշը՝ անսպասելի ծիծաղը դրսևորվել է մեկ այլ թռչունին՝ ագռավին հակադարձող բառախաղով.

– Անունդ հի՞նչ ա: //– Բուլբուլ: //– Բլբուլ՛, բա՛- ադա՛, թե՛ զօկի⁵⁵⁶ բլբուլը փիւ ըս, նրանց ագռաւը հի՞նչ կլինի⁵⁵⁷: **Տե՛ս Հավելված 3, թիվ 23:**

Անեկդոտներում զավեշտ է ստեղծվում **անձնանվան և ամիս-ամսաթվերի և ծիսակարգային արարողակարգի կամ պեպրական փոնի համանունության հենքի վրա:** Այսպես, ստորև բերվող զվարճախոսություններում անսպասելի ծիծաղն առաջանում է անձնանվան և ամսանվան, ինչպես նաև թաղման յոթերորդ օրը կատարվող ծիսական արարողակարգի և յոթ թվային միավորի բառախաղային համանունությամբ.

ա. Մեկը թե՛ // – Գիտե՞ք որ մայիսի յոթին Մայիսի յոթն ա: (ԱՍՇՀ)

բ. Ընկերը ընկերոջը հարցնում է. // – Արա՛, էսօր Մայիսի յոթն է, գիտե՞ս:

– Ա՛յ դուռակ⁵⁵⁸, էս ձմեռվա կեսին հ՞նչ մայիսի յոթ: // – Արա՛, հ՞նչ ես խոսում, մի շաբաթ առաջ Մայիսին չթաղեցի՞նք⁵⁵⁹:

Որևէ մեկի անկարողությունը, անուշիմությունն ընդգծող «Քեզանից Պողոս-Պետրոս չի դուրս գա» **ժողովրդական արտահայտության հենքի վրա** տարբեր տարածաշրջաններում զվարճապատումներ են ստեղծվել, և բոլորի լուծումն էլ, իբրև անվստահության հակակշիռ, երկու տղա ունենալն ու Պողոս և Պետրոս անվանակոչելն է:

Ղարաղայան «Պուղուս-Պըտրոս» պատումում կյանքում առաջին ինքնուրույն քայլերն անող հերոսը ժողովրդական այդ պիտակավորումն ստանում է հորից, և տղան ստիպված հեռանում, գնում է քաղաք, հաջողությունների հասնում, ինքնահաստատվում, ամուսնանում ու զույգ տղաներով վերադառնալով գյուղ՝ հիշեցնում է հոր խոսքերը.

⁵⁵⁶ **Զօկ** – Գողթան գավառի հայերի մականունը:

⁵⁵⁷ Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 148:

⁵⁵⁸ **Դուռակ** (ռուս.) – հիմար:

⁵⁵⁹ Պատում և կատակում էր Գալուստ Գալստյանը, հավաքել և կազմել է Լենա Անթառանյանը, «Վերնատուն» հրատ., Եր., 1994, էջ 44:

– Ա հար, ըսիս լալ⁵⁶⁰, որ քի անե Պուղուս, Պըպրոս չի դոս գյո: Պա խե՞ յա դոս ե-
կալ: Էս՝ Պուղուս, էս ալ՝ Պըպրոս⁵⁶¹: **Տե՛ս Հավելված 3, թիվ 24:**

Ցուցապաստառների հենքի վրա ստեղծված անեկդոտներից մեկում զավեշտ է
ստեղծվում **հայկական անձնանվան (Գալուստ) և հասարակ գոյականի (բարի գա-
լուստ) համանունությամբ.**

*Թոռան հեպ հարևան շրջան գնացող պապը, տեսնելով «Բարի գալուստ» ցուցա-
նակը, զարմացած հարցնում ա ավորորուսի վարորդին.*

– Այդա՛, սրանք բա ո՞րդիան են իմացել, որ մեր Գալուստը բարի ա...(ԱՍՇՀ)

Խոսքի, բառի, ներգործուն ուժի հանդեպ ունեցած ժողովրդական հավատքն ու
դրա ազդեցությունը մարդու կյանքի վրա արտահայտվել է ժողովրդական ասույթաբա-
նության այնպիսի տեսակներում, ինչպիսիք են օրհնանքը, անեծքը, աղոթքը, հայիո-
յանքը: Կյանքին, ճակատագրին դիմագրավելու միջոցներից մեկն էլ անձնանուններն
էին. այսպես, մի քանի մահեր ունենալուց հետո հայ մարդը տղա երեխայի՝ կենդանի
մնալու ակնկալիքով հազար ու մի միջոցների է դիմել (ծնված տղա երեխայի մազերը
յոթ տարի չկտրել, թուրքի անուն դնել, երեխան անցկացնել թուրք «բաջու» ծոցի միջով
և հանել փեշի տակից և այլն): Ի դեպ, վերջինիս դրսևորումներն առկա են թե՛ հայկա-
կան հեքիաթներում, թե՛ հին հունական դիցաբանության մեջ՝ կապված վաղնջական
ժամանակների որդեգրման ծեսի հետ: Անձնանուններով մահին պատվար ստեղծելը ևս
նույն նպատակին է ծառայել: Մնացականը դրա վկայությունն է: *Վրեժ-ը, Բավական-ը,
Հերիքնազ-ը* նույնպես անձնանունով ներազդելու նպատակ է հետապնդել:

Ժողովրդախոսակցական լեզվում կիրառվող մնացական և գնացական բառերը
վերաբերում են մնալու և գնալու ենթակա մարդկանց, ասվել է նաև հիվանդ ու անհույս
երեխաների կապակցությամբ: Ստորև մեջբերվող զվարճախոսությունը կառուցված է
**բուն հայկական անձնանվան (Մնացական) և դրա հականիշ մտացածին անձնան-
վան՝ Գնացական (վերջինս բխում է ստեղծված իրավիճակից) միջոցով.**

⁵⁶⁰ Ըսիս լալ – ասում էիր:

⁵⁶¹ Հովսեփյան Հ., Ղարադաղի հայերը. հ. 2, բանահյուսություն, Եր., «Գիտություն» հրատ., 2009, էջ 457:

Միլիցիան բռնված գողին հարցնում է.// – Անունդ ի՞նչ է: //

- Մնացական, – պատասխանում է գողը: //– Իսկ էն, որ փախա՞մ: //
- Գնացական⁵⁶²:

Ինչպես գիտենք, հայոց մեջ ընդունված է հայկական տեղանուններով երեխաներին անձնանուններ դնելը (Անի, Հրազդան, Սևան և այլն), նույնիսկ՝ ազգանուններով տոհմի բնակատեղին հավերժացնելը (Մշեցյան, Կարինյան, Խոյեցյան և այլն):

Զվարճախոսություններից մեկում **օտարերկրյա տեղանունը (Հոռոմ) անձնանուն դարձնելով և ազգակցական ու կրոնական առաջնորդի պաշտոնի (պապ) համանունությամբ՝** նպաստել է անսպասելի ծիծաղ առաջացնելուն: Այս դեպքում հերոսի նպատակամղվածության և անհեթեթ հիմնավորման շնորհիվ զավեշտն էլ ավելի է սրվում.

– Էս մի թոռան անունն էլ իմ ուզածով դրեք – ասում է հայրը տղային:

– Ասա՛, հե՛րա ջան, ի՞նչ ես ուզում դնենք, ասա՛ թող քու սրտովը լինի, – ասում է տղան: // – Ուզում եմ թոռանս անունը Հոռոմ դնեք: //– Ա՛յ հեր, բա «Հոռոմ» անուն կըլի՞նի՞:

– Որ դնեք, կըլի՞նի: Դրեք, որ երբ փողոցով գնալիս ըլեմ ու հարցնեն՝ էն ո՞վ ա գալի, ասեն՝ Հոռոմի պապը: (ԱՍՇՀ)

Հայոց բանարվեստում ծաղր ու ծիծաղի պատճառ կարող են դառնալ նաև **զավեշտալի տոհմանունները**: Կոմիտասի հինգ սաներից մեկը՝ երաժիշտ-ազգագրագետ և բանահավաք Միհրան Թումաճանը, գրի է առել սվասցիների (սեբաստացիներ) և կյուրինցիների (կուռինցիներ) մի երկխոսություն, որն առնչվում է հարևան այդ երկու տեղավայրերի տոհմանուններին⁵⁶³: **Տե՛ս Հավելված 3, թիվ 25:**

Զավեշտի պատճառ կարող են դառնալ ժողովրդի կողմից «կնքված» **մականունները՝** կապված ինչ-որ իրադարձության, միջադեպի, երևույթի հետ:

Այսպես, **անձնանուն-մականուններին** առնչվող Միհրան Թումաճանի գրառած մեկ այլ նմուշ վերաբերում է հողաբաժանման առիթով կնքած մականվանը: Տարատե-

⁵⁶² Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, Հավաքել և կազմել է Լենա Անթառանյանը, «Վերնատուն», Եր., 1994թ.:

⁵⁶³ **Թումաճան Մ.**, Հայրենի երգ ու բան, հատոր 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 297:

սակ հաշվարկներով զավեշտի դրսևորման երգիծապատումներ շատ կան, սակայն եղբոր և իր հողաբաժինների՝ *Մեկ՝ Կարապետ, էրկուք է ես՝ իրեք բաժին* հաշվարկը պատճառ է դառնում հաշվարկ անողին՝ *Երկու մարդ*, իսկ տարիներ անց նրա զավակին՝ *Երկուն մարդուն կես տրղա* ծաղրանունների ստեղծման⁵⁶⁴: **Տե՛ս Հավելված 3, թիվ 26:**

Լոռու զվարճապատումներից մեկը հավաստումն է այն բանի, որ միշտ էլ տեղաբնակներն աշխատել են ինչ-որ պիտակով՝ ավել անունով առանձնացնել նորեկներին.

Գյառգառ են գործուղում անասնաբույժ Արքիպագին: Գյուղացիք ասում են. «Մեր գյուղում ադաթ⁵⁶⁵ ա, որ նոր էկողներին էվել անուն դնեն: Հըմի թե որ մակարիչ⁵⁶⁶ անես, էնա քեզ մի լավ անուն կդնենք»:

Գործուղվածը մի լավ սեղան է գցում: Գյուղացիներից մեկն ասում է.

– Ա՛յ մարդիկ, էնա Աքրիպազը էվել անուն ա, էլ ընչի՞ մնել չարչարվենք նոր անուն դնենք⁵⁶⁷:

Տեղացիների այս «անվանակոչությունը»՝ կապված նաև **բառերի և արտահայտությունների արտաբերման կերպի** հետ, արտահայտվեց Երկրորդ աշխարհամարտից հետո հայրենադարձվածներին **ախպար** անունը տալով:

Այդ պիտակավորումը շարունակվում է առ այսօր: Սիրիական պատերազմի հետևանքով մի շարք հայ ընտանիքների՝ Հայաստանում հանգրվանելու առաջին իսկ օրից այդ խնդիրը կրկին առաջ է քաշվում.

– 1946-ին հայրենադարձները որ Հայաստան էկան, անունները ախպար դրինք, բաքվեցիք, կիրովաբադցիք, շահումյանցիք որ էկան⁵⁶⁸, լոխ-լոխ դրինք, բա ձե՞զ հիմա ինչ անուն ենք դնելու, – ասում է տեղացին հայրենիք ներգաղթած սիրիահային:

⁵⁶⁴ ⁵⁶⁴ Թումանյան Մ., Հայրենի երգ ու բան, հատոր 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 297:

⁵⁶⁵ Ադաթ – ավանդական սովորույթ:

⁵⁶⁶ Մաղարիչ – ընծա կամ հյուրասիրություն, որ տալիս է հաջողություն ունեցողը:

⁵⁶⁷ Բալայան Գ., Միամիտ մտքեր, Լոռվա ժպիտներ, Եր., «Վան Արյան» հրատ., 2002, էջ 29:

⁵⁶⁸ Նկատի ունեն Ղարաբաղյան շարժման ու պատերազմի հետևանքով Բաքվից, Սումգայիթից ու Պատմական Արցախի մի շարք տարածքներից բռնի արտաքսված հայերին:

– Ի՞նչ է, ամենուն անպատճառ պիտի անո՞ւն դնեք, – սրտնեղած հարցնում է ումբակոծություններից մազապուրծ հալեպահայը⁵⁶⁹: (ԱՍՇՀ)

Չվարճապարումի կամ զվարճախոսության առաջացման հենք կարող են դառնալ նաև տեղանունները: Այս դեպքում անսպասելի ծիծաղը դրսևորվում է՝

Տեղանվան բառամասնաբանությամբ ստեղծված հարանունության միջոցով:

Այսպես, Ղարաբաղյան շարժմանն առնչվող նմուշներից մեկում Արցախ տեղանվան մասնատումն է հարանունությամբ դառնում զավեշտի առաջացման աղբյուրը: Յուրտ ու մութ տարիների համար ժողովուրդը հեզնելով՝ «արդարացնում» էր իշխանավորներին.

– Բայց Լևոն Տեր-Պետրոսյանն ի՞նչ մեղավոր ա, որ ժողովուրդը վառելիք չունի. ցուրտ ա, մրսում ա: Դեռ 1988 թվից էր էդ խեղճ մարդը միտինգների ժամանակ ամբիոնից կոկորդը պատռելով գոռում, զգուշացնում ժողովրդին, որ չմոռանան՝ ցախ առնեն, ու չմոռանալու համար վանկարկելով կրկնել էր տալիս. «Առ-ցախ, առ-ցախ, առ-ցախ»⁵⁷⁰ ... Որ ժողովուրդը նրա ասածներին բանի տեղ չդրեց, չլսեց. ցախ չառավ, ո՞վ ա մեղավորը... (ԱՍՇՀ)

Չավեշտը դրսևորվում է տեղանունների անվանափոխությամբ. Հայաստանի քաղաքների անունները (Հրազդան, Ապարան, Լենինական,) անվանափոխվում են այնպես, որ տվյալ տարածաշրջանին տրված ժողովրդական մականունների՝ օտար լեզվով (այս դեպքում՝ ռուսերեն) թարգմանությունը համընկնի օտար երկրների քաղաքների անունների հետ.

– Լսել ե՞ք, որ Հայաստանի մի քանի քաղաքների անուններ փոխել են: // – Ո՞նց:

– Հա, Լենինականի անունը դրել են **Ռոպերդամ-ռոպ (ռուս.)**– բերան (մեծաբերանությունը հաշվի առնելով).

Ապարանի անունը՝ Օսլո – օսլոլ (**ռուս.**) – էշ (ապարանցիների էշ-ային անեկդոտները նկատի ունենալով).

⁵⁶⁹ Սիրիահայերը ևս գերծ չմնացին պիտակավորումից. նրանք «կնքվեցին» **հաճիս** մականվամբ:

⁵⁷⁰ **Ցախ** – մանր վառելափայտ, ծառերի ճյուղերի խուրձ:

Հրազդանի անունը՝ Գլազգո – գլազա (**ռուս.**) – աչք (նկատի ունենալով հրազդանցիներին (ախտեցիներին) տրված **քոռ** մականունը): (ԱՍՇՀ)

Զվարճախոսությունում անսպասելի ծիծաղի աղբյուրը դառնում է հանելուկալին՝ հարցադրում-առաջադրանքով բառերի (տվյալ դեպքում՝ Խորհրդային Միության չորս քաղաքների անունների) ուղիղ ձևերի այնպիսի դասավորության թվարկումը, որոնց հաջորդականությունը արտաբերելիս կհանգեցնեի իմաստ արտահայտող բարդ նախադասության: Ընդ որում, այդ բարդ համադասական նախադասությունը կառուցելու համար վերցվել է օտարերկրյա երկու այնպիսի քաղաքների անուններ, որոնց մասնատումը հայերենում հնարավոր կդարձնեի դիմավոր բայով և հարանունությամբ միտք արտահայտել: Այդ նպատակին հասնելու համար նախադասությունը կազմվում է Շիրակի խոսվածքով, քանզի առաջադրված տեղանուններից մեկը մասնատելիս հենց այդ խոսվածքով արդեն իսկ դիմավոր բայով արտահայտված բամբռակ պարզ նախադասություն է դառնում (Վորկուտա): (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 27:**

Երկխոսական զվարճախոսություններից մեկում էլ **զավեշտն ստեղծվում է օտար տեղանվան բառամասնադամբ**, և այդ մասերից մեկը, իբրև անհաջողությունը, վատը խորհրդանշող հայերեն իմաստակիր բառ, դեն է ձգվում՝ ապահովելու համար ծառայության հաջող գործընթացը.

Շնողի գյուղամիջում հավաքվածներից մեկը հարցնում ա բանակ նոր զորակոչվածի հորը. //– Տղեդ ո՞րդի ա ծառայըմ: // Ասմա՛ Ստապոլ: //– Որդի՞: //– Ստապոլ: //– Ստապո՞լ թե Սևաստապոլ... // – Չէ՛, Ստապոլ, Վազգե՛ն ջան, սևը ասիլ մի... (ԱՍՇՀ)

Զվարճախոսություններից մեկն էլ հայկական Շիկահող և ամերիկյան Չիկագո տեղանունների հարանունությամբ անիրական՝ հեքիաթային միջադեպի հենքի վրա է զավեշտն ստեղծվել⁵⁷¹: **Տե՛ս Հավելված 3, թիվ 28:**

Տեղանվան և գունատեսակի համանունության հենքի վրա կառուցված զվարճախոսությունում գունատեսակի (կարմիր) և տեղանվան (Սպիտակ) անհամապատաս-

⁵⁷¹ Գրիգոր Ս., Զվարճալի պատառաքաղ-1, Քաջարան-Կապան, Եր., «Զանգակ -97» հրատ.,2006, էջ 142-143:

խանութիւնն էլ դառնում է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը.

Ապարանցիները Սպիտակի ավտոբուսը կանգնեցնում են, մարդկանց իջեցնում ու սկսում ծեծել: Զարմացած ուղևորները երբ հարցնում են պատճառը, ասում են.

– Իսկականից մեզ էշի տեղ ե՞ք դրել. կարմիր ավտոբուսի վրա գրել եք «Սպիտակ»: (ԱՍՇՀ)

Երգիծապատումներից մեկում էլ **անսպասելի ծիծաղը դրսևորվում է գունապետական ընդգծող** Լոռու մարզի **տեղանուններից մեկի՝** Մարգահովիտ գյուղի՝ ժողովրդի տված **Բողիգեղ** (ժողովրդախոսակցական լեզվով՝ բոզ-մոխրագոյն, գորշ), **և մարդու բարոյականությունն արտացոլող բացասական հատկանիշներից մեկի** ժողովրդախոսակցական բնորոշման **համանունության միջոցով**: Գույնն են մատնանշում նաև հայության շրջանում ոչ անհայտ Բոզոյան ազգանունն ու բոզ ձի, բոզ էշ, բոզ քուռակ, բոզ մազեր լրացումները:

Մինչև 1950-60-ական թվականները այդ գույնին առնչվող ժողովրդախոսակցական բառերն ու բառակապակցություններն արտաբերելը սովորական երևույթ էր, և ժողովուրդը առանց հետին մտքի անկաշկանդ դրանք օգտագործում էր, քանզի մարդկանց համար ընկալելի էր նրա գունային իմաստը: Սակայն վերջին ժամանակներս բոզ բառն անմիջապես **ասոցացվում** է բարոյականության չափանիշի հետ (մանավանդ երիտասարդության շրջանում), ինչն էլ մի շարք զվարճապատում-զվարճախոսությունների ստեղծման պատճառ է հանդիսացել.

Վիլյամ Սարոյանը ավտոմեքենայով Լոռու Մարգահովիտ գյուղի միջով անցնելիս հարցնում է. // – Ի՞նչ է աս գյուղին անունը: //– Բողիգեղ, – ներկայացնում են ուղեկցողները: // – Ամերիկա ալ ադանկ հաստատություն կա, բայց ասանկ քոմպակտ⁵⁷² չէ,– ասում է Սարոյանը: (ԱՍՇՀ)

Զվարճախոսություններից մեկում **զավեշտի հենք է դառնում տեղանվան ժողովրդական սիրուգաբանությունը՝** բացառելով կապը Լենինի անվան հետ.

⁵⁷² **Քոմպակտ** (անգլ.) – հավաք, միատեղված:

- Լենինականը Լենինի անունի հետ կապ չունի, – բացատրում է լենինականցին,
- մեր քաղքի անունը լեն նազանից⁵⁷³ է առաջացել: (ԱՍՇՀ)

Մեկ այլ նմուշում Լենինի անունով կոչվելը գյումրեցին չարյաց փոքրագույնն է համարում.

- Ի՞նչ լավ էր, որ Լենինը շուրջ մեռավ, բա որ Տրոցկին շուրջ մեռներ, ի՞նչ էինք էնելու. մեր գյոզալ քաղքի անունը դնեին գը Տրոցկի, աշխրքով մեկ խայտառակ կէղնեինք: (ԱՍՇՀ)

3.4. Վերամբարձ ոճը, գրաբար, գրական ու ժողովրդական բառերի և արտահայտությունների ոչ տեղին կիրառությունը

Վերամբարձ ոճը շատ անգամ վերածվում է զավեշտի, եթե այն կա՛մ տպավորություն թողնելու նպատակ ունի, կա՛մ էլ օգտագործողը չի տիրապետում հայերենի լեզվական-բառապաշարային նրբություններին և անհրաժեշտ միջավայրում այն տեղին կիրառելու վարպետությանը:

19-րդ դարի երկրորդ կեսից հրատարակված անեկդոտների ժողովածուներում վերամբարձ ոճով արտահայտված զվարճապատում-զվարճախոսությունների մի մասը առնչվում է եկեղեցականների և ժողովրդական զանգվածների լեզվական փոխհարաբերություններին, հոգևորականի «գրաբար» խոսքի և աշխարհիկ մարդկանց «ռամկերենի» ընդգծված տարբերություններին:

Շուրջ 140 տարի առաջ հրատարակված անեկդոտների ժողովածուներից մեկում ընդգրկված զվարճապատումում⁵⁷⁴ վարդապետը պատվիրում է իր ծառային, որ բարբառով խոսելու փոխարեն «գրաբար» խոսի: Պատումում մեջբերված ծառայի «գրաբար» խոսքը վերածվում է զավեշտի: **Տե՛ս Հավելված 3 թիվ 29:**

Ի դեպ, մի շարք տարածաշրջաններից գրառած այս պատումի բազմաթիվ տար-

⁵⁷³ **Նազան** – պտտվող թմբուկով ատրճանակ:

⁵⁷⁴ Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դէպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 129:

բերակներ կան թե՛ տպագիր, թե՛ անտիպ աղբյուրներում⁵⁷⁵:

Հոգևորականների՝ իրենց ծառաներին ուղղված «ռամկերէնի փոխարէն նուրբ բառեր» գործածելու հորդորով զվարճապատումները նաև սուր քննադատություն են՝ ուղղված ցուցամոլությամբ տառապող վերամբարձ ոճի սիրահարներին:

Ի դեպ, Ախալցխայի տարածաշրջանի *Ծուրդուր* գյուղում գրանցած «գրաբառ» խոսքի այս նույն նմուշը հանդես է գալիս որպես հանելուկ.

Սարերուն ծաղկակոխները // Մեր գեղի մոխրաթաաւալները //

*Փառփառելով ճաշակեցին: (Գայլերը էշերին կերան)*⁵⁷⁶:

Սակայն զավեշտ առաջացնող այս պատառիկը հավաստում է նաև, որ սա ընդամենը վերը ներկայացրած ժողովրդական երգիծապատումից մնացած հանելուկի տեսքով մի հատված է:

Հայկական անեկդոտներում **զավեշտի առաջացման միջոց են դառնում նաև գրաբարյան բառերի և արտահայտությունների ոչ տեղին գործածությունը:**

Ժողովրդի հետ շփվելիս եթե մեկը ուզում է ցույց տալ իր կիրթ լինելն ու խոսում է գրաբարյան կառուցվածքներով «համեմված» աշխարհաբարով, այդ խոսքը արհեստական է հնչում՝ հանգեցնելով զավեշտի.

*Վարժապետը, որ միշտ աշխատում էր գրաբար խոսել, մի մսավաճառի հարցնում է. // – Արդյո՞ք ձեզ մոտ երիկամունք կա*⁵⁷⁷:

19-րդ դարավերջին հրատարակված զվարճախոսություններից մեկում էլ անսպասելի ծիծաղ է առաջանում, երբ գրաբարով ասված խոսքը՝ շաղախված Աստվածաշնչից մեջբերումներով, ոչ տեղին է կիրառվում. **Տե՛ս Հավելված 3 թիվ 30:**

Հայկական անեկդոտներում առանձին խումբ են կազմում այնպիսի ստեղծագոր-

⁵⁷⁵ Ազնավուրեան Ա., Հէքիաթներ, զուարճալիքներ, Միչիկըն, Տիպորն Հայթա, ԱՄՆ, 1971, էջ 89-90: Գէորգեան Գ., Չնքուշապատում, հատոր 1, Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 1970, էջ 310: Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952, էջ 108: ԳԱԱ ՀԱԻ-ի բանահյուսության արխիվ, Կիրապառ, գրի առավ Գ. Թարվերոյանը, Սալմաստ, ՖՖ, 1; 1631, թիվ 96 և այլն:

⁵⁷⁶ Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, ժողովրդեց Տիգրան Վարդանեանց, Թիֆլիս, Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի, 1900, էջ 68:

⁵⁷⁷ Նույն տեղում, էջ 11:

ծուփյունները, որոնցում **ժողովրդական ասույթաբանական կառույցը խոսքի մեջ անընդհատ սխալ կամ անհարկի մեջբերելով** է անսպասելի ծիծաղ առաջանում:

Նման դեպքերում զավեշտի հենք է դառնում գրական կամ ժողովրդական արտահայտության ոչ տեղին կիրառությունը, ինչպես ստորև մեջբերվող նմուշում.

*Մէկը չգիտեր **հեռի լսողաց** բառերի նշանակութիւնը: Հարցրին նրան. //*

– Հորդ անունն ի՞նչ է: //– Հեռի լսողաց, Ավագ, – պատասխանեց նա://

– Ու՞րտեղից ես գալիս: // – Հեռի լսողաց, ժամեն⁵⁷⁸:

Կամ էլ նոր միջավայրում իր իմացությամբ տպավորություն թողնելու համար **անիմաստ ու ոչ տեղին բառագործածությունն** է նպաստում զավեշտի առաջացմանը.

Նոր նշանված փեսան աներանց ա գնում ու որոշում շատ կիրթ ու գրագետ երևալ: Աներն ասում ա. // -- Փե՛սա, նե՛րս արի: // Փեսան էլ թե՛ //

*– Տանեմ **նամանավանդ** ձիս կապեմ գամ: (ԱՍՇՀ)*

Երբեմն **վերամբարձ ոճով, անկապ ու անհեթեթ բառ-բառակապակցություններով շաղախված** են լինում **ուրախության կամ տխրության սեղանները վարողների բաժակաճառերը**: Նման փքուն խոսքերով բաժակաճառերի հեղինակները, մանավանդ գյուղաբնակները, փոխանակ ժողովրդախոսակցական լեզվով կամ բարբառով անկեղծ ու անկաշկանդ ներկայացնեն իրենց ասելիքը, ձգտում են մարդկանց վրա տպավորություն թողնելու համար ընդգծել իրենց «գրագիտությունն ու խորիմացությունը», գրական հայերենին անկաշկանդ տիրապետելը և, բնականաբար, ընկնում են զավեշտալի իրավիճակների մեջ: Ահա հարսանիքի թամադայի մի բաժակաճառ՝ ասված Լոռու մարզի Արևաշող գյուղում.

Աջակողմյան և ձախակողմյան բարեգամներ ջան, այսուհետև և ընդհանրապես ես խմում եմ ձեր նկատմամբ: Մեր նորապսակներին էլ ցանկանում եմ՝ մի ծերի բարձրանան⁵⁷⁹ (փոխանակ ասելու՝ մի բարձի ծերանան): (ԱՍՇՀ)

⁵⁷⁸ Անեկդոտներ, հատոր Բ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տիփլիս, 1877, տպարան Մ. Վարդանեանի, էջ 13-14:

⁵⁷⁹ Լոռու խոսվածքում **մի ծերի** նշանակում է նաև **անընդհատ**, օր.՝ *Մի ծերի խոսում էր:*

Ահա ևս մի բաժակաճառ՝ գրառված Լոռու մարզի Շամուս գյուղում.

Սուրբկի տղի հրսանիքն ա ըլըմ, Խալաթը բաժակաճառ ա ասըմ՝ խոսքը փեսին ուղղելով.

– Միտ՛ր ջան, թե որ դուն Սուրբկի տղղեն ըլես, ամեն ինչ լավ կըլի: Բայց թե որ թուլըովի⁵⁸⁰ ըլես, ոնց որ կաղնըքու փակին բաղի խնձոր գըղնես... (ԱՍՇՀ)

Անկապ բառ-արտահայտություններով բաժակաճառերի մի մասն էլ կապվում է կենաց ասողի խմածության հետ: Ահա խմած լոռեցու բաժակաճառը.

– Աշխարքին թող խաղաղություն ըլի, ջըհանդամը թե պատերազմ չի ըլի... (ԱՍՇՀ)

Երգիծապատում-զվարճախոսություններում **զավեշտի հենք են դառնում գրական կամ ժողովրդական արտահայտությունների ոչ տեղին կիրառությունները:**

«**Վիշտը կիսել**» դարձվածքը նշանակում է վշտատիրոջը սրտակից, աջակից լինել, հանդիպելով ու ներկա գտնվելով նրա տխրությանը՝ թեթևացնել այն: Հիշենք ժողովրդական իմաստախոսությունը՝ *Ով հարցնե, էն սաղցնե* (ԱՍՇՀ):

Ուրախ առիթի դեպքում «*վիշտը կիսել*»-ի նմանությամբ արտաբերելով «*ուրախությունը կիսել*» արտահայտությունը՝ մարդն ինքնական իրեն գցում է ծիծաղելի իրավիճակի մեջ:

Մի անգամ Գառնիում Պ. Սևակը ընկերներով քեֆ անելիս է լինում, նրանց է մոտենում մի մարդ և բաժակ բարձրացնելով՝ ասում.

Ձեզ տեսա, եկա, որ կիսեմ ձեր ուրախությունը...

– Գլուխդ քարովն ես տվել... ուրախությունը չեն կիսում, այլ բազմապատկում են, կիսում են վիշտը⁵⁸¹, – վրա է բերում Պարոյր Սևակն, ու բարձրանում է հոմերական քրքիջ:

Անսպասելի ծիծաղ է առաջանում, եթե ժողովրդախոսակցական լեզվում առկա

⁵⁸⁰ **Թուլըովի** – ուրիշից:

⁵⁸¹ **Սահակյան Ռ.**, Անկրկնելի Պարոյրը, Հուշեր, պոեմներ և այլ նյութեր, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2014, էջ 29:

«**թող սաղ (իմա՛ որջ) մնա, սաղ լինեն**» ցանկության խոսքին հաջորդող՝ *ծնողներդ, երեխաներս, ընկերներս* և նմանատիպ այլ բառերի փոխարեն ինչ-որ մեկի հենարանը հանգուցյալներն են դառնում: Ղարաբաղյան գրառումներից մեկում այն այսպես է դրսևորվել.

– *Գևորգ ամի, գերեզման փորելը ի՞նչ փեշակ է, որ ձեռ չես քաշում:*

– *Դե ի՞նչ գիդամ, փեշակ է, էլի՛, մի կտոր հաց միշտ էլ կտա, սա՛ղ լինեն մեռնողները:* (ԱՍՇՀ)

Ժողովրդական «**իր ումբը⁵⁸² քեզ բաշխեց**» արտահայտությունը վերաբերում է միայն մարդկանց և ասվում է ինչ-որ մեկի մեռնելու լուրը հաղորդելիս: Անեկդոտներից մեկում այդ բառակապակցությամբ է զավեշտն ստեղծվում, քանզի այն ասվում է կենդանու սատկելու առիթով.

– *Հա՛յր Սուրբ, մեր շունը իր ումբը քեզ բաշխեց, – ասաց քահանան⁵⁸³: Տե՛ս Հավելված 3, թիվ 31:*

3.5. Բառ-բառակապակցությունների թարսուշիտակ գործածությունը

Երգիծապատում-զվարճախոսություններում **զավեշտ է ստեղծվում նաև բառերի և բառակապակցությունների դասավորության ակամա, երբեմն էլ դիտավորյալ խախտելու միջոցով**: Նման արտաբերումներով ծիծաղ հարուցող անեկդոտները հիմնականում լրկալ՝ նեղ միջավայրում են առաջանում ու շրջանառվում:

19-րդ դարավերջին հրատարակված անեկդոտների ժողովածուի նմուշներից մեկի⁵⁸⁴ զավեշտի հենքը դառնում է կորած մոզու կորստյան դարդից շփոթված լոռեցու հետևյալ անկապ խոսքը.

⁵⁸² **Ումբը** – կյանք:

⁵⁸³ Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած, Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 64-65:

⁵⁸⁴ Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Ս. Շահազիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 28:

– Բարի՛ մոզի, բայքա ղաշխա՞⁵⁸⁵ ըրիզու տեսած ըլեք, չալ չաթուն⁵⁸⁶ պոզին մոզին:

Տե՛ս Հավելված 3, թիվ 32:

Լոռու Շամուտ գյուղում եթե համապոլազիներից որևէ մեկը մի թարս բան էր ա-
սում, անմիջապես հետևում էր հարցը. «Դու խու Աթուկանց Անթրո՞ն չես»: Իսկ Անթրո-
յի խոսքը հաճախ էր թարս ստացվում: Տարեցները մինչև հիմա էլ շրջանառում են
հետևյալ զվարճախոսությունը.

*Աթուկանց Անթրոյին հարցնում են. // – Ա՛նթրո քեռի, Շամամը տանն ա՛: //Աս-
մա. // – Չէ, էշը Շամամին վեր էլած⁵⁸⁷ դըբա Լոբու ձորը գնաց: (ԱՄՇՀ)*

Արցախի գյուլիստանյան երգիծապատումում էլ դաշտում այծի ծնելու լուրը տեղ
հասցնողը անհանգստացած **արագ-արագ ասելիս ականա կենդանու գործողությու-
նը վերագրում է մարդուն՝** հաղորդելով. «Ռուբիկը Կապին ծկերումը ծնել ա»: **Տե՛ս Հա-
վելված 3, թիվ 33:**

Իսկ պարսկահայոց սալմաստյան «Վարթանենց Սհակը» զվարճախոսությունում
ականա օգտագործվում է անհամբեր, շտապող մարդու համար ասվող «Դու քու մոր
փորումը ո՞նց ես ինն ամիս համբերել» ժողովրդական արտահայտության թարսուշի-
տակ վերարտադրությունը.

Մի գյ%դ% շապ շուլուղ %ր%ց, բզավանցի Վ%րթ%նենց Սհակը ասաց.

– Ա՛յ գյ%դ%, քո դ%յան⁵⁸⁸ քո փորի մեջը ի՞նչթրի⁵⁸⁹ սթրվի՛...

Տեսավ վոր ուր ասածի վրան խալխը ծղզացին, տառցավ թե.

*– Յես ել յանլիշ ինգամ. կը տը ասեմեր քո մերըտ քո փորի մեջն ի՛շթրի սըթըրվե,
ասիմ՛ քո դ%յան...⁵⁹⁰*

Թարս արտաբերմանը միտումնավոր հակադարձող բառախաղային պատաս-
խանով զվարճախոսություն է հրատարակել նաև բանաստեղծ Ա. Սահակյանը.

⁵⁸⁵ **Ղաշխա** – ճակատին սպիտակ նշան ունեցող:

⁵⁸⁶ **Չաթուն** – մազախառն բրդե կարճ թուկ:

⁵⁸⁷ **Վեր էլած** – հեծնած:

⁵⁸⁸ **Դ%յա** – մայր:

⁵⁸⁹ **Ի՛շթ%ր** – ո՞նց:

⁵⁹⁰ ԳԱԱ ՀԱԻ-ի արխիվ, Գ. Թարվերոյանի ֆոնդ, Սալմաստ, ԲԲ,1, 1693, թիվ 164:

Մի պատանի մտաւ «Կիլիկիա» գրատուն եւ Մաթիկին հարցրեց.

– Խենթ Ռաֆիին գիրքը կու տա՞ք:

– Խենթ Ռաֆիին գիրքը չեմ կըրնար, բայց ընկեր Փանջունիի Օրեանը կու տամ..., – դիտմամբ հեզնեց Մաթիկը⁵⁹¹:

Հայկական անեկդոտներում **թարսուշիտակ արտաբերումներով զավեշտ սրեղծելու դրսևորումները հաճախակի են հանդիպում ժողովրդական ասույթաբանական բանահյուսության տեսակների** (բաժակաճառ, անեծք, օրինանք և այլն) **կիրառություններում**: Այսպես, նմուշներից մեկն առնչվում է հարսանեկան ծիսակարգի բաժակաճառային դրսևորմանը, երբ ասելիքի ականա սխալ արտաբերումն է զավեշտի պատճառ դառնում.

Հարսանքատանը մի պարզամիտ մարդու մի բաժակ գինի տվեցին: Բաժակը ձեռքը առնելով և մինչև գետին խոնարհվելով՝ նա ասաց.

– Աղանե՛ր, սա՛ղ մնաք, ես ձեր գլուխն եմ, դուք՝ իմ ոտներս⁵⁹²:

Թարս արտաբերումներով զավեշտը դրսևորվում է նաև **օրինանք-անեծքային** անեկդոտներում, որոնցում **արտաբերված օրինանքը ականա վեր է ածվում անեծքի**: Նման կառույցները մեծ քանակ են կազմում: Դրանք տարբեր տարածաշրջաններից սկսվել են գրառվել դեռևս անցյալ դարի երկրորդ կեսից:

Օրինանք-անեծքային կառուցվածքով երգիծական մանրապատումների հանդիպում ենք այլ տարածաշրջանների հայոց շրջանում կատարված գրառումներում, ինչպես, օրինակ, վանեցիներից 20-րդ դարասկզբին գրառած «Ինչըխ տյու իմ շորեր չորցուցիր» պատումը⁵⁹³, երբ արած լավության դիմաց լավություն անողը «օրինվում» է «Ինչըխ տյու իմ շորեր չորցուցիր, աստվածն էլ քե չորցուցի» «օրինանքով», երբ արտաբերած օրինանքն ընկալվում է իրբև անեծք: **Տե՛ս Հավելված 3, թիվ 34:**

⁵⁹¹ **Սահակյան Ա.**, 500 կատակ, Հալէպ, «Կիլիկիա» գրատուն-տպարան, 2000, էջ 8:

⁵⁹² Անեկդոտներ, հատոր Բ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տիփսիս, տպարան Մ. Վարդանեանի, 1877, էջ 41:

⁵⁹³ Ծիծաղում են վանեցիները, Հավաքել, կազմել են Վարազդատ Հարությունյանը և Նորա Մելիքյանը, Եր., «Զանգակ -97» հրատ., 2006, էջ 174:

Զավեշտ ստեղծելու օրինանք-անեծքային կառուցվածքով զվարճախոսության մի տեսակ էլ կա, որտեղ երկխոսության պատասխանը պատճառաբանվում է կենսափորձով՝ նկատի ունենալով տառապանքը, մի դեպքում՝ ծննդաբերերելիս⁵⁹⁴, մեկ այլ դեպքում՝ խոր ծերությունն անցկացնելիս: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 35:**

Վախ ու սարսափից առաջացած բառերի թարսուշիպակ արտաբերումներով անեկդոտներից է հետևյալ նմուշը.

Ջկռենու փակը նստած՝ գիւղացին հիանում էր պտուղների մեծութեան վերա: Հանկարծ ամպի սաստիկ որոտումը խլեց գիւղացու ուշը, որ եւ ձայն փուեց... Փա՛ռք քեզ, զկե՛ն, էս ի՛նչ մենձ Աստոծներ ա...⁵⁹⁵:

3.6. Ժարգոնային արտահայտությունը և բամբռակ խոսքը

Երգիծական մանրապատումներն ու զվարճախոսություններն անկաշկանդ մուտք են գործում մարդկային հաղորդակցության բոլոր ոլորտները, արտացոլում տարբեր խավերի կենսակերպն ու փոխհարաբերությունները, այդ հարաբերությունների ժամանակ կիրառվող լեզուն:

Հայերենի փողոցային լեզվի բառապաշարը ձևավորող ժարգոնային բառերի ու արտահայտությունների հենքի վրա ստեղծված անեկդոտները կոչված են ոչ միայն ծիծաղ առաջացնելու, զվարճացնելու մարդկանց, այլև քննադատելու փողոցային լեզուն ու ժարգոնը: Հայկական անեկդոտների համատեքստում ժարգոնային բառ-բառակապակցություններով զավեշտը դրսևորվում է տարբեր հնարանքներով:

Յար բռնել ժարգոնային արտահայտության մեջ **յար-ը հարադիր բայական կառույցում երեխայի կողմից ընկալվում է որպես ձկնափրեսակ**: Նման եզրակացության հանգեցնողը, անշուշտ, թե՛ գործողության վայրն է՝ ծովը, թե՛ փոխաբերաբար արտահայտված խոսքի ուղղակի ընկալումը.

⁵⁹⁴ Անեկդոտներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 69:

⁵⁹⁵ Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 202:

Ընկեր Մարգոն հարցնում ա.

– Երեխանե՛ր, ի՞նչ ձկնափեսակներ գիտեք:

Դասարանցիներից մեկն ասում ա՛ իշխան, մյուսը՝ սիգ, մեկն էլ՝ սազան, Վարդանիկն ասում ա՛ յար:

– Վարդանի՛կ, բա յարը ձկան փեսակ է՞:

*– Հըբը ի՞նչ է, Ընկե՛ր Մարգո. մի օր պարայիս ընգերը մեր փանն ըսավ՝ էս ա-մառ չես գա՞՞ էրթանք ծով՝ **յար բռնենք**: (ԱՍՇՀ)*

Որոշ երևանցի երիտասարդների բառապաշարի մաս է կազմում **ժարգոնային այնպիսի հայհոյանքը, երբ հայհոյողը զայրույթից խոսքն ինքն իրեն է ուղղում**: Հենց նմանատիպ դրսևորումներն էլ պատճառ են դարձել մի շարք իրապատումային և հրաշապատումային տարրերով երգիծական ստեղծագործությունների առաջացման: Դրանցից մեկն առնչվում է լոռեցիներին: Երբ լոռեցին պատասխան հարվածն է հասցնում երևանցուն, վերջինիս զայրույթից արտաբերած «*Վայ ես իմ փիրու մերը...*» հայհոյանքը զարմացնում է լոռեցու ընկերոջը՝ ասելով.

*– Ապո, էդ ո՞նց փվիր, որ սա թարս ա ուշունց փայի...: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 36:***

Ասելիքը էլ ավելի տպավորիչ դարձնելու համար բամբառակ **ոռ խաղացնել** (նազուտուզ անել) ժարգոնային արտահայտությունը զվարճապատումներից մեկում հնչում է երեխայի բերանով՝ անհանգստացած մորը թլոշ լեզվով բացատրելով ուժեղ գմփոցի պատճառը.

– Ի՞նչ փի ըլի, ա՛յ մամ, էնքան ոլ խաղացըլի, պապան իլան խփեց... : (ԱՍՇՀ)

Տե՛ս Հավելված 3, թիվ 37:

Խորհրդային Միության 70 տարիների ընթացքում շփումը օտար, տվյալ դեպքում՝ ռուսական կամ ռուսախոս միջավայրի հետ (բանակ, արտագնա աշխատանք, գործուղումներ և այլն) կամա թե ակամա նպաստել են, որ օտար եզրույթները, նույնիսկ օտարալեզու ժարգոնային և ժողովրդախոսակցականում կիրառվող հայհոյախառն ար-

տահայտությունները արագությամբ մուտք գործեն նաև գյուղաշխարհի մարդկանց բա-
ռապաշար՝ երբեմն էլ երգիծական ստեղծագործություններում դառնալով նաև անսպա-
սելի ծիծաղ առաջացնելուն նպաստող միջոցներ:

Այսպես, ռուսերենից ներմուծված **պալոժ ա**⁵⁹⁶– ի՝ *Քա դա մեզի պալոժ ա*⁹ ժարգո-
նային արտահայտությունը դառնում է Խոյի բարբառով արտաբերված բամբառակ
զվարճախոսություններից մեկի զավեշտի հենքը: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 38:**

3.7. Հայերենի և օտար լեզուների փոխհարաբերությունները

Թե՛ հարևան ժողովուրդների, թե՛ աշխարհի այլ ազգությունների հետ փոխհա-
րաբերությունների ժամանակ հայը հանդիպում է լեզվական խոչընդոտների, ինչի
հետևանքով բազում զավեշտալի իրավիճակներ են ստեղծվում՝ դառնալով մի շարք ա-
նեկդոտների առաջացման պատճառ:

19-20-րդ դարերում հրատարակված բանահյուսության ժողովածուներում, ինչ-
պես նաև տարբեր արխիվներում պահպանվող անտիպ աղբյուրներում քիչ չեն այնպի-
սի երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները, որոնցում **զավեշտի
հենքը հայի և այլ ազգությունների մարդկանց բանավոր և գրավոր խոսքով շփում-
ների ժամանակ առաջացած ծիծաղելի երևույթներն են:**

Կարապետ քահանայ Գալֆայանն իր հրատարակած զվարճապատումներից մե-
կը վերնագրել է «Մաքուր հայերէնը»: Սարկազմով ներկայացնելով մակույկի ցնցվելու
հետևանքով կրակարանի կրակը երեխայի ոտքի վրա թափվելուց խառնված պոլսեցի
հայ կնոջ և ճամփորդ փոխադրող թուրք նավավարի երկխոսությունը՝ նա ցույց է տալիս
միմյանց լեզվին կիսատ-պոատ տիրապետելու հետևանքով ստեղծված զավեշտալի ի-
րավիճակը.

– *Քա՛, Հասա՛ն աղա, – կպոռա կինը, – մանդալը փէվրիլմիշ եղաւ, չոճուխիս ա-
յախները եանմիշ եղան:*

⁵⁹⁶ **Պալոժ ա** (ռուս.) – վայել է:

- Գափրն, նէ՞ օլփու, – կը հարցնէ նաւավարը:
- Քա՛, գայրքճի, սէնփէ՞ մի Հայճա պիլիրսին:
- Գափրն, պունըն նէրէսի՞ Հայճա:
- Հա՛, իրա՛ւ, – խելքի կուգայ կինը,– զմանդալն պիտի ըսէի⁵⁹⁷: **Տե՛ս Հավելված 3**

թիվ 39:

Պարսկահայոց ժողովրդական երգիծապատումներից մեկը⁵⁹⁸ կառուցված հայի և թուրքի երկխոսությամբ, երբ ամեն մեկն իր լեզվով է խոսում, և ոչ մեկը չի հասկանում, թե զրուցակիցը ինչ է ասում, հիշեցնում է երկու խոսքերի խոսակցության հենքի վրա ստեղծված անեկդոտաշարը: Սակայն քանի որ այստեղ երկուսի լսողությունն էլ տեղն է, զավեշտ առաջացնող վերջաբանը թուրքերեն *փոխ եիրան* (ք...ք ուտել) և հայերեն *փոխինդ ուրել* բառերի հարանունությամբ է կառուցված: **Տե՛ս Հավելված 3, թիվ**

40:

Անեկդոտների մի խումբ էլ առնչվում է **արևելահայերենի և օտար լեզուների փոխհարաբերություններին**: Երբեմն օտար բառերն այնպես էին ամրացել մեր ժողովրդի մեջ, որ շատ դեպքում դրանք ընկալվում են որպես հայերեն բառեր:

Ժամանակին լրագրողական դաշտում հաճախակի էին օգտագործվում բազում օտար բառեր, որոնք հասանելի էին միայն նեղ մասնագիտական շրջանակներին: Գյուղաշխարհի մարդկանց գերակշռող մասը անհաղորդ էին դրանց, առնչվելիս էլ զավեշտալի իրավիճակների մեջ էին հայտնվում՝ տեղիք տալով անեկդոտների ստեղծման: Ահա դրանցից մեկը.

*Քաղաքից գյուղ են գալիս **ինփերվյու** (հարցազրույց) վերցնելու: Նախագահի մոտ է գալիս ծխախոտագործուհին և հարցնում.*

- Ընկե՛ր Ղարաբեկյան, ինփերվյուն էդ ի՞նչ բան է:

⁵⁹⁷ Հայկական գրոյցներ. առակներ, առածներ, մանրավէպեր, զուարճալի ասացուածքներ և իմաստուն խօսքեր, պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լոս Անջելես, Պօզանեան տպագրութիւն, 1944, էջ 9:

⁵⁹⁸ **Մինասեան Լ.**, Գիւղական բառ ու բան, (Փերիա գաւառ), Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ վանքի տպարան, 1998, էջ 364:

– Հե՛ջ, աղջի՛կ ջան, պատրաստ կգաս, համենայն դեպս՝ ներքնաշորերըդ կփոխես⁵⁹⁹:

Մանրապատումներից մեկում էլ «**խոլեստերին**» բժշկական եզրաբառի չիմացությունն է զավեշտի առաջացման պատճառ դարձել: Երբ թարգմանչի միջոցով գյուղապետը խոլեստերինի վտանգավորության մասին զգուշացվում է, հետևում է անսպասելի ծիծաղ հարուցող նրա պատասխանը.

– *Ամերիկայի դեսպանին դու ասա՛, որ Օձունի գյուղապետը խոլեստերին շար ա սիրըմ:* (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 41:**

Ջանգեզուրյան անեկդոտաշարի պատումներից մեկում գեղջկուհու կողմից օտար բառիմաստի սխալ ընկալումն է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ դառնում.

Գերմանուհու հետ ամուսնացած Գինուսի տղան մորն ուղարկած նամակում գրում է, թե «**նեմկա**»⁶⁰⁰ է բերում: Մայրը «**կեպկա**»⁶⁰¹ է հասկանում և որդուն պատասխան նամակում խնդրում է, որ մեկն էլ հոր համար բերի⁶⁰²:

Խորհրդային տարիներին ռուսերեն մի շարք բառեր այնպես էին հաստատվել հայերենում, որ որոշ մարդկանց համար դրանք չէին էլ գիտակցվում որպես օտար:

Գրեթե ամենուր վարորդական իրավունքի փաստաթղթին հայերը օգտագործում են ռուսերեն **պռավա** բառը: Ահա իրողության հենքի վրա ստեղծված արցախյան զվարճախոսության մի նմուշ.

Երբ ոստիկանը Իջևանում ղարաբաղի տարեց վարորդից փաստաթուղթ է պահանջում, վարորդն ասում է.

– *Բալա՛, փաստաթուղթը հինջ ա՛, ես փաստաթուղթ չօնիմ:*

– *Հայրի՛կ, բա ավորոն քշել ես, մինչև այստեղ հասել, փաստաթուղթ չունե՛ս:*

Կողքից հորս ասալ ըն՛

⁵⁹⁹ Պատմում և կատակում է Գուրգեն Գալստյանը, հավաքեց և ներկայացրեց Լենա Անթառանյանը, Եր., «Վերնատուն» հրատ., 1994, էջ 5:

⁶⁰⁰ **Նեմկա** (ռուս.) – գերմանուհի:

⁶⁰¹ **Կեպկա** (ռուս. ժողովրդախոսակցական) – գլխարկի տեսակ:

⁶⁰² **Մարգարյան Ա.**, Եկեք մի քիչ զվարճանանք: Զրույցներ և անեկդոտներ, Եր., «Զար» ֆիրմա, 1992, էջ 5:

– Վազգե՛ն դայի, պրավա չօ՞նիս:

Հերս ասալ ա.

– Վա՛, յանի հո՞նց չի օնիմ, պա ինքը պրավա չի օգում, է՛,՛ փաստաթուղթ ա օգում⁶⁰³:

Իրողությունների հենքի վրա է ստեղծված տավուշյան մանրապատումներից մեկն էլ վերաբերում է հայերեն **լուցկի** բառի փոխարեն հայության շրջանում տարածում գտած ռուսերեն անվանմանը: «Սպիչկեն» երգիծապատումում զավեշտ առաջացնողը Ռուսաստանում «սպիչկա» բառը գործածողին հայ անվանելն է.

Օհանը Ռուսաստան է գնում: Ուզում է ծխախոտը վառի՛ լուցկի չկա: Կանգնեց- նում է մի անցորդի, բայց ռուսերեն չգիտի: Մի կերպ ձեռով-ոտով գլխի է գցում:

– Սպի՞չկի, – կռահում է ռուսը:

– Պա՛հ, բալեն չմեռնի, սա հո հայ ա, ես էլ ռուսերեն չաբալամիշ⁶⁰⁴ եմ գալի, – ու- րախանում է Օհանը⁶⁰⁵:

Երբեմն զավեշտ առաջացնելու համար միևնույն առարկայի կամ երևույթի երկու՛ օտար և հայերեն բառերն է օգտագործվում.

Լոռեցին ուզում է մաքուր հայերեն խոսի: Հեռախոսով զանգում, հարցնում են.

– Ի՞նչ բանի ես: // Ասում ա՛ // – Հեջ, տելեվիզորի առաջը նստած հեռուստացույց եմ նայում: (ԱՍՇՀ)

21-րդ դարասկզբի գիտատեխնիկական աննախընթաց առաջընթացն ու մարդու կյանքում և կենցաղում կատարվող արագ փոփոխությունները, նրան շրջապատող նո- րանոր առարկաների աննկարագրելի առատությունն ու **նորահայտ օտար բառերի ու բառակապակցությունների հայերեն համարժեքների բացակայությունը** լեզվական շիլափլավի են վերածում քաղաքի ու գյուղաշխարհի որոշ մարդկանց, մասնավորապես մեծահասակների բառապաշարը:

⁶⁰³ Հայրապետյան Թ., Արցախ, 2012, ԴԲԱՆ, տետր №2, էջ 6:

⁶⁰⁴ Չաբալամիշ գալ – չարչարվել, տանջվել:

⁶⁰⁵ Աբազյան Ա., Նոյեմբերյան կատակներ, անեկրոտներ, սրամտություններ, Վանաձոր, «Արմինֆո» իրատ., 1999, էջ 46:

Ժամանակին օտարալեզու բառերի թարգմանելու գործընթացի հետևից չեն կարողանում հասցնել նույնիսկ թարգմանիչ-լեզվաբանները, ինչի հետևանքով էլ օտար բառերը արագ տարածում են գտնում հայկական միջավայրում:

Եթե երիտասարդների մեծ մասը մինչև դրանց հայերեն համապատասխան համարժեք բառերի ստեղծումը արագությամբ յուրացնում է օտարալեզու, ասենք, **կոմպյուրեր, սկայպ, ֆեյսբուք, յութուբ, բիզնեսմեն, դեպորտ** և այլ բառերը, ապա մեծահասակներին դրանք շփոթության մեջ են գցում: Նրանք չեն կարողանում ճիշտ արտաբերել նորահայտ բառերն ու ծիծաղելի իրավիճակների մեջ են հայտնվում՝ պատճառ դառնալով իրողությունների հենքի վրա ստեղծված բազում երգիծական մանրապատում-զվարճախոսությունների առաջացման: Ահա նմանատիպ մի քանի նմուշ.

ա. *Վարդենիսում մի մեծ կնիկ արագ-արագ գնալիս է լինում, ծանոթներից մեկը հանդիպում, հարցնում է.*

– *Էս ու՞ր ես վռագ-վռագ գնում, Վարդի՛ւշ մորքուր: // Ասում է՝ // – Հարսըս կայ-ֆի⁶⁰⁶ մեչ ա (իմա՝ սկայպի⁶⁰⁷ մեջ է), գնամ տենամ՝ ի՞նչ ա ասըմ: (ԱՍՇՀ)*

Մեկ այլ դեպքում՝

բ. *Նորադուզում հեռուստատեսության աշխատակիցը դիմում է գյուղի մեծահասակներից մեկին, թե՛*

– *Տափի՛, արի քեզ ձեր խաչքարերի մոտ նկարենք:*

– *Տղա՛ ջան, ես ի՞նչ կնիկ եմ, որ տնիս քցիս թուլուբը (իմա՝ յութուբը⁶⁰⁸): (ԱՍՇՀ)*

Եվ կամ էլ՝

գ. – *Ախչի՛, իմացել ե՞ս, – պատմում է մեկը հարևանուհուն, – էս մեր հարևան է-դոյին գիտես, չէ՞, – Լեհաստանի սահմանին բռնել են, ապոռոպ⁶⁰⁹ արել (իմա՝ դեպորտանել⁶¹⁰), ու հիմի սամայրոտով բերըմ են Հայաստան: (ԱՍՇՀ)*

⁶⁰⁶ **Կայֆ** (արաբ.) – խնջույք, քեֆ, այժմ՝ ժարգոնային բառ՝ **հաճույք**:

⁶⁰⁷ **Սկայպ** – տեսակապ:

⁶⁰⁸ **Յութուբ** (անգլ.) – էլեկտրոնային կայք:

⁶⁰⁹ **Աբորտ** (ռուս.) բժշկական եզրույթ) – պտղի արհեստական հեռացում:

⁶¹⁰ **Դեպորտ** (անգլ.) – վտարում, արտաքսում:

Բազմաթիվ երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ են ստեղծվել, որոնցում տարբեր ազգերի ներկայացուցիչների փոխհարաբերությունների ժամանակ **զավեշտն ստեղծվում է կա՛մ խոսակցի լեզվին ընդհանրապես չտիրապե-
տելու, կա՛մ էլ կիսատ-պռատ տիրապետելու հետևանքով:**

Զավեշտ է ստեղծվում ոուսերեն **Պա չո՛մ** (ի՞նչ արժե) և հայերենի բարբառով **պաչա** (համբուրիր) բառերի հարանունության միջոցով.

Շուկայում բաքվից փախած ոուսախոս հայ փախստականներից մեկը կարտոֆիլ վաճառողին հարցնում է. // – Պա չո՛մ կարտոշկա: // – Պաչա, խամա էլի տեղը դիր, – ասում է քյավառցի վաճառողը: (ԱՍՇՀ)

Զվարճապատումներից մեկում էլ զավեշտն ստեղծվում է վրացերեն «կո՛ւտ է» (անդամալո՛ւյծ է) և հայերեն «կուտե-ուտում է» նույնահունչ բայական կառույցների համանունությամբ⁶¹¹:

Ֆրանսերենին առնչվող երգիծապատումներից մեկում անսպասելի ծիծաղի պատճառ է դառնում ֆրանսերենի իմացությամբ պարծեցող հայի՝ ֆրանսերեն «լա» մասնիկը հայերեն բառերին կցելով հաղորդակցվելը և վերջում մատուցողուհու՝ հանկարծակիի բերող հայերեն պատասխանից հետո պարծենկոտի ծաղրի առարկա դառնալը: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 42:**

19-20-րդ դարերում Վրաստանում և հարակից շրջաններում ապրող հայերի մեջ տարածված էր վրացական **Դալիկո** անձնանունը: Զվարճապատումներից մեկում զավեշտն ստեղծվում է Դալիկո անձնանվան և ոուսերեն **դալեկո**⁶¹² բառի հարանունության միջոցով.

Գյառգյառեցի Դալիկոյին տանում են բանակ: Զինակոչիկներից մեկը ուղեկցող սպային հարցնում է, թե իրենց ու՛ր են տանում: Վերջինս ոուսերեն պատասխանում է.

– Դալեկո՛, դալեկո՛... // Դալիկոն զարմացած ասում է.

⁶¹¹ Ծիծաղի տոպրակ, աշխատասիրեց դպիր Ս.Ս. Շահազիզեան, 1892, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, էջ 100:

⁶¹² Դալեկո (ոուս.) – հեռու:

– Արա՛, էս շան տղեն որդիա՞ն գիտեր իմ անունը⁶¹³:

Նամակային կառույցով աշտարակյան զվարճախոսություններից մեկում էլ լեզվի չիմացությունը պատճառ է դառնում զավեշտի առաջացման, քանի որ ոուսերեն *Վրաշ-բժիշկ* բառը ընկալվում է որպես անձնանուն.

– Մայրի՛կ ջան, հայրի՛կ ջան, ոտից վիրավորվել եմ, ընկել եմ գոսպիտալ՝⁶¹⁴, մի հայր էլ բժշկուհի ունենք, անունն էլ Վրաշ ա՞⁶¹⁵:

Լոռեցի Ռուբենի անեկդոտներից մեկում անսպասելի ծիծաղ առաջացնելու պատճառը ոուսերեն **յմուսա** բառի և հայերեն ժողովրդախոսակցական լեզվում, նաև Լոռու խոսվածքում հարաբերական «ով» դերանվան բացառական հոլովի՝ «ն» հոդով և «է» (ա) օժանդակ բայից կազմված բառակապակցության (ումնից ա - ումից ա) համանունությունն է:

Ռուս անցորդուհու՝ երեխայի հասցեին հնչեցրած հիացական՝ *«Какая умница»*⁶¹⁶ խոսքին հետևում է վրդովված մոր՝ *«Ռուբենիցն ա, ո՛ւմնից ա»*, (տարբերակ՝ *«Իմ մա՛րթիցն ա, ո՛ւմնիցա»*) պատասխանը: (ԱՍՇՀ)

Մեկ այլ զվարճապատումում անսպասելի ծիծաղի տեղիք են տալիս սիրելանի ծոցին բռնված կնոջ խոսքում՝ ամուսնուն աջակցելու նպատակով ըմբշամարտի ժամանակ օգտագործվող *զա՛ցեպ արա*⁶¹⁷ և *պրիոմ*⁶¹⁸ ոուսերեն եզրույթների օգտագործումը:

Տե՛ս Հավելված 3, թիվ 43:

Անեկդոտներից մեկում էլ նախադասության մեջ **օտարալեզու բայի արական-իգական սեռերի սխալ կիրառությունն** է դառնում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը.

– Ավորորու պրիշլա՞⁶¹⁹, – ասում է Երևանի կանգառներից մեկում սպասող լոռե-

⁶¹³ **Բալայան Գ.**, Միամիտ մտքեր, Լոռվա ժպիտներ, «Վան Արյան» հրատ., Եր., 2002, էջ 28:

⁶¹⁴ **Գոսպիտալ** (ռուս.) – զինվորական հիվանդանոց:

⁶¹⁵ **Գյուլնազարյան Խ.**, Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991, էջ 69:

⁶¹⁶ **Какая умница** (ռուս.) – Ի՞նչ խելացի է:

⁶¹⁷ **Զացեպ անել** (ռուս.) – սպորտային վարժածն՝ ձեռքերով կիպ բռնել:

⁶¹⁸ **Պրիոմ** (ռուս.) – սպորտային վարժածն:

⁶¹⁹ **Պրիշլա** (ռուս.) – եկավ:

ցին՝ փորձելով ընդգծել ռուսերենի իր իմացությունը:

– Ախպե՛ր ջան, ոչ թե պրիշլա, այլ պրիշյոլ, ավտորուսը ժենսկի ռոդ⁶²⁰ չի, մուժսկոյ ռոդ⁶²¹ ա, – միջամտում է կողքի երևանցին՝ շեշտելով ռուսերենի քերականության իմացության իր «առավելությունը»:

– Իհի՛, հա հըմի էտ ո՞վ ա կըռանըմ, տակիցը մըտիկ անըմ,– սրտնեղում է լոռեցին: (ԱՍՇՀ)

Ի դեպ, այս անեկդոտի հրեական տարբերակը առկա է նաև «Анекдоты от одесситов»⁶²² գրքում՝ կապված գնացքի հետ: **Տե՛ս Հավելված 3, թիվ 44:**

Թե որն է եղել սկզբնաղբյուրը, դժվար է կանխորոշել: Հայկական տարբերակը մենք գրառել ենք 1980-ականներին, այս գիրքը տպագրվել է շուրջ 20 տարի անց: Ինչ խոսք, նման թեմաները թարգմանվում և հեշտությամբ մի ժողովրդից փոխանցվում են մյուսին: Բայց եթե անգամ հայերն այս անեկդոտը վերցրած լինեին այլ ժողովրդից, այն իր առանձին մասերով ու Լոռու խոսվածքի առանձնահատկություններով այնպես է տեղայնացվել ու մերվել հայկական միջավայրին, որ նրա օտարածին լինելը մի փոքր անգամ կասկածի տեղիք չի տալիս:

Ջուտ հայկական անեկդոտներ կան, որոնցում օգտագործվող ռուսերեն նախադասությունը թարգմանելը կթուլացնի անսպասելի ծիծաղի թափը: Իսկ լիովին ընկալելու համար քիչ թե շատ ռուսերենի իմացությունը պարտադիր է:

Այսպես, արտագնա աշխատանքի թեմային առնչվող զվարճապատումներից մեկում հինգ-վեց ամիս կնոջը չգանգահարած ու ընտանիքին փող չուղարկած հերոսը երբ վերջապես որոշում է գանգահարել, կինը ամուսնու և ռուս դուրսընկածների հասցեին անեծքների հեղեղ է թափում.

– Արև՛դ թաղեմ, հանկարծ հիշեցիր, հա՛, բոզերի ու ղախպեքի հետը ըտեղ սաղ օրը նստած քե՛ֆ կքաշես, հա՛:

⁶²⁰ **Ժենսկի ռոդ** (ռուս.) – իգական սեռ:

⁶²¹ **Մուժսկոյ ռոդ** (ռուս.) – արական սեռ:

⁶²² Анекдоты от одесситов, сост. и предисловие Василий Котюшенко, Одесса: Изд-во «Optimum», 2007г, стр. 326.

Սա կշրջվի ու կողքի ռուս սիրուհուն կասի.

– *Ա տերե գավարիտ... (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 45:***

Հայ ժողովրդական երգիծական մանրապատում-գվարճախոսությունների համատեքստում քիչ չեն **թարգմանությունների հենքի վրա** առաջացած ստեղծագործությունները:

Քանի որ յուրաքանչյուր ժողովրդական դարձվածք տվյալ ժողովրդի լեզվամտածողության ինքնատիպ դրսևորումն է, հետևաբար դրանց համարժեքները երբեմն բացակայում են ուրիշ ազգերի բառապաշարում: Հենց այս հանգամանքն էլ թարգմանության գործընթացում դժվարություններ է ստեղծում, հաճախ էլ զավեշտի վերածում ասելիքը:

Անեկդոտներից մեկում ռուսերեն «Բիտ մոժետ»⁶²³ ապրանքապիտակը ոչ թե գրական հայերենով է թարգմանված ներկայանում, այլ շիրակյան խոսվածքով: Սակայն զավեշտն ավելի է ընդգծվում, երբ այն նախադասության մեջ է արտաբերվում՝ այդ բառակապակցության կրկնության և բառախաղի շաղախում.

Լենինականցին մտնում է պարֆումերիայի⁶²⁴ խանութ, որ «Բիտ մոժետ» դուխի⁶²⁵ առնի, մտնում է խանութ և վաճառողին հարցնում է.

– *Կըրնա՞ էղնի օր կրնա էղնի էղնի: (ԱՍՇՀ)*

Օտարալեզու ցուցանակը ևս անեկդոտներում կարող է դառնալ զավեշտի հենք.

Մոսկվայում՝ Պուշկինի արձանի մոտ, երկու հայ են կանգնած, մեկն ասում ա.

– *Հեղաքրքիր ա՛ սա ինչ ազգ ա:*

Էն մյուսն էլ թե՛

– *Չես տեսնում՝ տակը գրած ա անուն ազգանունը. «**Գազոն զասեյան**»:*

– *Ճիշտն ասած՝ մինչև հիմի չգիտեի, որ սա էլ ա հայ, – խոստովանում է զրուցա-*

կիցը: (ԱՍՇՀ)

⁶²³ **Բիտ մոժետ** (ռուս.) – Կարող է պատահել, լինել, հնարավոր է:

⁶²⁴ **Պարֆումերիա** (ռուս.) – օձանելիք:

⁶²⁵ 1950-60-ականներին ԽՍՀՄ-ում «Բիտ մոժետ» օձանելիքը ամենահարգիներից էր:

Հայկական Փանոս անձնանվան և ուսերեն *Πανος-փորլուծ հիվանդության համադրությամբ* հերոսի՝ *Нет, я Панос, а он Аргютюн* խոսքը դառնում է 19-րդ դարավերջին տպագրված զվարճախոսություններից մեկի զավեշտի առաջացման հենքը⁶²⁶: **Տե՛ս Հավելված 3, թիվ 46:**

Կիլիկիահայոց բանավոր ստեղծագործություններում տեղ են գտել ոչ միայն հայերենի և այլ լեզուների, այլև ֆրանսերենի և թուրքերենի փոխհարաբերությունների ժամանակ ի հայտ եկած զավեշտալի դրսևորումներ: «Յըլդըզե պալատին վեզիրը» մանրապատումում սուլթանի վեզիրի ֆրանսերեն ներս հրավիրելու «բարեկիրթ» խոսքը բամբառակ՝ «մտեք իմ հետույքս»⁶²⁷ արտահայտություն է ստացվում՝ անսպասելի ծիծաղի առաջացման տեղիք տալով: **Տե՛ս Հավելված 3, թիվ 47:**

3.8. Ժողովրդական դարձվածքը և արտահայտությունը

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում **զավեշտի հենք են դառնում բառերի վերախմաստավորված կայուն կապակցությունները՝ դարձվածքները, որոնց թվում նաև՝ առած-ասացվածքները:**

Մի բան պատմելիս երբ բառ է մոռացվում, ժողովուրդը օգտագործում է «**լեզվի ծերին ա**» դարձվածքը՝ ակնարկելով, թե ուր որ է, կհիշի: Հենց այս պատկերավոր արտահայտությունն էլ հիմք է հանդիսացել վանեցիների «Տաճկերեն կիսոցող գեղական» զվարճապատումի ստեղծման:

Մի քանի ամիս Ստամբուլում եղած վանեցիներ վերադառնալուց հետո ընկերների մոտ պարծենում է տաճկերենի իր իմացությամբ ու թվարկում սովորած բառերը, ապա կարկամած մի պահ կանգ է առնում ու դարձվածով արտահայտելով իրավիճակը՝ ասում.

⁶²⁶ Անեկոստներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննես Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 36:

⁶²⁷ **Սվազյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 103:

...Պամ էլ կա՛ վեր **լեզվիս ծերին**, չեմ կանա խանե: Խա, քյաքին կասեն փոխ:⁶²⁸

Տե՛ս Հավելված 3, թիվ 48:

Ինչ խոսք, դարձվածքին հաջորդած բառն է ունկնդրին պարտադրում, որ ուղիղ իմաստով ընկալվի բառակապակցությունը և զավեշտալի իրավիճակի մեջ գցի արտաբերողին:

Զվարճախոսություններից մեկում զավեշտի ստեղծման միջոց է դառնում **«շան տեղ չդնել»** (հաշվի չառնել, բանի տեղ չդնել) դարձվածքը, որի կիրառության ժամանակ ժխտական խոնարհմամբ արտահայտված նախադասությանը հակադարձվում է խոսակցի՝ դրական խոնարհմամբ անսպասելի ծիծաղ հարուցող պատասխանը.

Ամուսինը՝ կնոջը.

- *Ա՛յ կնիկ, երևում ա՛ ինձ հեչ շան տեղ չես դնում, ա՛յ:*
- *Ո՛վ ասեց, շատ էլ լավ դնում եմ՝⁶²⁹:*

Մեկի հանդեպ անսահման զայրույթը երբեմն ժողովուրդն արտահայտում է **«շներին կապեցին, ինձ բաց թողին»** դարձվածքով: Այս ժողովրդական կայուն բառակապակցությունը հիմք է հանդիսացել առօրյա կյանքին և քաղաքական խնդիրներին առնչվող մի քանի երգիծական մանրապատումի ստեղծման:

ա. Դրանցից մեկի կիրառությանը հանդիպում ենք 19-րդ դարի երկրորդ կեսի ժողովածուներից մեկում: Ստեղծված իրավիճակից բխող զայրույթն այստեղ ուղղվում է Աստծո ու նրա «անարդար դատաստանի» դեմ, ինչն էլ դառնում է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը.

Ձմեռը ճանապարհորդը մտաւ մի գիւղ, շները վրայ թափվեցան, և նա քարի ձեռը տրուավ, որովհետքս սառած էին, չ'կարողացավ պոկել գետնիցը, ասաց.

– *Աստուա՛ծ, է՞ս է քո արդար դատաստանը. քարերին կապում ես, շներին բաց*

⁶²⁸ Ծիծաղում են վանեցիները, Կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 157:

⁶²⁹ **Բալայան Գ.**, Միամիտ մտքեր: Լռովա ժպիտներ, «Վան Արյան» հրատ., Եր., 2002, էջ 3:

թողնում⁶³⁰:

բ. Ղարաբաղյան տարբերակում բարկությունը թափվում է գյուղերից մեկի բնակիչների վրա.

– Ա՛ շան տղեք, քարերը կըպոտալ ըք, շըներին պեց թողա՛ր⁶³¹: **Տե՛ս Հավելված 3, թիվ 49:**

գ. Ուշ շրջանում այդ տրտունջն ու բողոքն արդեն կոնկրետանում է. նույն դարձվածքի հենքի վրա ստեղծված զվարճապատումում հայրենադարձված հայի կուտակված անսահման զայրույթն արդեն ուղղված է խորհրդային երկրի ու կարգերի դեմ.

Շունը հարձակվեց մի հայրենադարձի վրա: Հայրենադարձը խառնվելով իրար՝ ուզում էր գետնի վրայից քար վերցնել, որը սառած էր և տեղից չպոկվեց:

Հայրենադարձը զայրացած բղավեց.

– Այս ի՞նչ երկիր է, տո՛, շներին բաց կթողնեն, քարերը կկապեն⁶³²:

Զվարճախոսություններից մեկում հարադիր բայով կազմված «**էփող-թափող**» (իմա՝ ամեն ինչ անող, աշխատասեր) դարձվածքը մասնատվում է և ուղիղ իմաստով ընկալելի դարձնելով՝ զավեշտ է առաջացնում՝ դրական բնութագրումը հանգեցնելով բացասականի.

Գնըմ են Ռուբենի ախշըկան ուզելու: Տղի հերը հարցընըմ ա .

– Ռուբե՛ն դայի, ախշիկըդ էփել-թափել գիդի՞:

– Ա՛յտա, ո՞նց չգիդի. էփել էլ գիդի, թափել էլ: (ԱՍՇՀ)

«**Կարմիր խնձոր**» դարձվածքը, որպես աղջկա կուսությունը «վավերացնող փաստաթուղթ», այսօր էլ երգիծապատում-զվարճախոսություններում ոչ միայն շարունակում է գոյատևել, այլև նորովի մեկնաբանություններով անսպասելի ծիծաղ հարուցել ու զվարճացնել երիտասարդներին:

⁶³⁰ Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 157:

⁶³¹ Բաքվի հայոց բանահյուսությունը, Կազմեցին Ալվարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը, Եր., «Ջանգակ-97» հրատ., 2004, էջ 233:

⁶³² Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, հավաքել և կազմել է Լենա Անթառանյանը, Եր., «Վերնատուն» հրատ., 1994, էջ 11:

Կուսությունը չպահպանածին անցյալում, գրեթե առանց բացառության, հետ էին ուղարկում հորանց տուն: Ստորև բերվող զվարճապատումում դարձվածքը բացվել է՝ պատկերավոր երկիմաստ ներկայացնելով ստեղծված իրավիճակի պատճառահետևանքային կապը.

Հըրսանքի էքսը⁶³³ ախչիկ չըլելու հըմար հարսին դուս են անըմ: Սա բոխչեն⁶³⁴ կապած որ մտնըմ ա իրանց գեղը, գեղամիչըմը հըվաքված ջահելին ձեռառնելու հըմար հարցընըմ են.

– Ա՛խչի, էդ ուրիշ մարդ չկա՞ր, որ կարմիր խնձորըդ դուն ես բերըմ:

Սա էլ թե՛

– Ձեններդ կտրե՛ք, անամոթնե՛ր, թողի՞ք որ կարմրի. խակ-խակ պոճոկեցիք:

(ԱՍՇՀ)

Անհաշտություն և անհանդուրժողականություն արտահայտող «**իրար միս ուտել**» դարձվածքը դառնում է երկխոսական զվարճախոսություններից մեկի հենքը: Զուտ հայկական ճաշատեսակները նշելու՝ առաջին հայացքից անմեղ թվացող հարցին հետևում է իր իսկ հարց առաջադրողի անսպասելի ծիծաղ առաջացնող պատասխանը՝ արտահայտված ժողովրդական պատկերավոր խտացումով: Անտարանջատելի դարձվածքի տարանջատմամբ շեշտվում և սպանիչ ծաղրով քննադատվում է իրար նախանձելու, իրար չգնահատելու, իրար տակը փորելու ազգային խոտելի բնավորությունը.

– Զուտ հայկական ի՞նչ ճաշատեսակ գիտեք:

– Տոլմա, խորոված...

– Ոչ, իրար միս ուտել...(ԱՍՇՀ)

Ի դեպ, այս զվարճախոսության տարբերակներից մեկին հանդիպում ենք նաև հայագետ Հ. Չոլաքյանի անեկդոտների ժողովածուում՝ սակայն խտացված, կարճառոտ ու տեղայնացված որոշակի միջավայրում.

⁶³³ **էքսը** – հաջորդ օրը:

⁶³⁴ **բոխչա** (թրք.) – շորերի կապոց:

*Ուրֆացիները միս շափ կ'ուտեն, իսկ երբ միս չըլլայ, իրարու միս կ'ուտեն...*⁶³⁵

«Ճերմակերես (պարզերես) լինել» դարձվածքի հետաքրքիր կիրառությանների ենք հանդիպում թե՛ Հովհ. Նազարյանցի անեկդոտների ժողովածուում⁶³⁶ ու Ս. Բաղդասարյան-Թափալցյանի բարբառագիտական ուսումնասիրության նմուշների բաժնում⁶³⁷, թե՛ Գ. Գևորգյանի «Չնքուշապատում»-ում⁶³⁸, որոնցում ուղիղ իմաստով կիրառությունն արտահայտվում է ոչ թե խոսքի, այլ գործողության միջոցով: Մածունը դեմքին շարտելու գործողությամբ արտահայտված զայրույթին հաջորդած հովվի խոսքը՝ արտահայտված *ճերմակերես (պարզերես) լինել* դարձվածքով, նրան «փրկում է» չպատճառաբանված արդարացումներից՝ էլ ավելի խորացնելով ու արտահայտիչ դարձնելով զավեշտալի իրավիճակը: ***Տե՛ս Հավելված 3, թիվ 50, թիվ 51, թիվ 52:***

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում քիչ չեն նաև բանարվեստի այնպիսի նմուշները, որոնցում անսպասելի ծիծաղի առաջացման հենքը կայուն բառակապակցության մեկ այլ տեսակ՝ ***առածներն ու ասացվածքներն*** են:

Մարդու մեջ դրական և բացասական գծերի ժառանգական փոխանցման երևույթը ժողովուրդը խտացրել է **«Պտուղը ծառիցը հեռու չի ընկնի»** իմաստախոսության մեջ: Այս առածի հենքի վրա ստեղծված զվարճախոսությունում ժողովրդական ասույթի ուղիղ իմաստով ընկալումն է անսպասելի ծիծաղի առաջացման միջոց դառնում.

Աբարանցին էշին նստած գնալիս ա ըլում, էշը տոտինգ ա տալի, աբարանցուն քցում ցած: Աբարանցին գլուխը վերև ա բարձրացնում, նայում էշին ու ինքնիրեն խոսում.

– *ժողովուրդն ինչ էլ ճիշտ ա ասում, որ պտուղը ծառիցը հեռու չի ընգնի*
(ԱՍՇՀ)

⁶³⁵ Միջ-գաւառական անեքթոտներ: Հաւաքեց եւ ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Հալէպ, 1988, էջ 79:

⁶³⁶ Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, 1876, Ղասապեանցի տպարան, էջ 56:

⁶³⁷ **Բաղդասարյան-Թափալցյան Ս.**, Մշո բարբառը, Եր. ԳԱ հրատ., 1958, էջ 208-209:

⁶³⁸ **Գէորգեան Գ.**, Չնքուշապատում, հատոր 1, Երուսաղեմ, տպարան Ս. Հակոբեանց, 1970, էջ 308:

Զավեշտ է ստեղծվում նաև առաժի բուն իմաստին հակադրվելու միջոցով: Զվարճախոսություններից մեկում **էռնեկ**–ի պատկերացման յուրօրինակ դրսևորումը ներկայացվում է սեփական ընկալման չափանիշի տեսանկյունից.

– ժողովուրդը իզուր չի ասել. **«էրկու էռնեկ մի տեղ չի լինում»**, – փիլիսոփայում է հավաքվածներից մեկը:

– Ո՞նց չի լինում, լինում ա, – միջամտում է աբարանցին:

– Ո՞նց, գոնե մի օրինակ կարա՞ս բերես, – հարցնում են:

– Հա, ո՞նց չէ. օրինակ՝ կնգանըս ծըծերը, – հիմնավորում է ապարանցին: (ԱՍՇՀ)

Մեկ այլ պատումում այդ նույն իմաստախոսությամբ հակադարձելով ոմանց համար մարմնական թերությունը ծաղրողներին՝ մի նոր առաժով հաստատվում, հիմնավորվում է զավեշտալի թվացող այդ մտածողության սնանկությունը.

– էրկու էռնակը մի տեղ չի ըլում, ախպե՛ր ջան: Ավելի լավ ա մարդ ոտիցը սախապ⁶³⁹ ըլի, քան թե գլխիցը⁶⁴⁰:

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում քիչ չեն նաև բանարվեստի այնպիսի նմուշները, որոնցում զավեշտի հենքը տարատեսակ ժողովրդական արտահայտություններն են:

«Աստված էլ բեթարեն ազապի» ասույթը վատի և դրանից վատթարի ժողովրդական փիլիսոփայության դրսևորումն է: Զվարճապատումներից մեկում ահա թե ինչպես է այն դրսևորվում.

Մեկը հարևանին պատմում ա. //– Բա իմացա՞ր ինչ էլավ: //– Ի՞նչ: //–էրեկ մեր հարևան Վաղոն կամանդիրովկից⁶⁴¹ շուտ ա տուն գալի, տենըմ հարևանը՝ կնգա ծոցին:

// – Հետո՞: // – Ի՞նչ հետո, տալիս ա համ կնգանն ա սըպանըմ, համ հարևանին: (ԱՍՇՀ)

Ընտանեկան կյանքին վերաբերող մի տխուր երևույթ, որի տարատեսակ սցե-

⁶³⁹ Սախատ – կաղ:

⁶⁴⁰ Քոչարյան Ս., Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ» իրատ., 2008, էջ 32:

⁶⁴¹ Կամանդիրովա (ռուս.) – գործուղում:

նարներով դրսևորումներին շատերս ենք տեղյակ: Բայց որ նման լուրն իմանալուց հետո զրուցակիցը կարծազանքի *Աստված էլ բեթարեն*⁶⁴² ազապի ժողովրդական իմաստախոսությամբ, իսկապես զավեշտալի է, սակայն զավեշտը սրանով չի ավարտվում, ավելի է սրվում՝ վերածվելով անզուսպ քրքիջի հենց այդ **էլ բեթարը** պարզելուց հետո.

– *Տո ա՛ննորմալ, էլ դրա բեթարը ո՞րն ա. համ կնգանն ա սըպանեյ, համ հարևանին: // – Ասեմ. որ էրեզ չէ առաջի օրը բռնացներ, ինձ էր սըպանելու... (ԱՍՇՀ)*

«**Երեխաներին արագիլն է բերում**» ժողովրդական խոսքով են մեր պապիկ-տատիկները բավարարել փոքրիկների հետաքրքրասիրությունը: Սրա հենքի վրա ստեղծված երկու զվարճախոսություն ունենք մեր գրառումներում, որոնցից մեկը վարդանիկյան անեկդոտաշարից է: Ժամանակակից երեխայի մտածողությանը ժողովրդական մեկնաբանությունն այլևս չի գոհացնում.

– *Տապի՛, մենք ո՞նց ենք ծնվել, – հարցնում է Վարդանիկը:*

– *Դե... Վարդանի՛կ ջան, քեզ արագիլն ա բերել, Աշոտիկին էլ՝ գեպը:*

– *Վարդանի՛կ, տապին չասե՛ նք՝ ոնց ենք ծնվել, – հարցնում է Աշոտիկը:*

– *Չէէ՛, տապը թող էդպես միամիտ էլ մեռնի, – ասում է Վարդանիկը: (ԱՍՇՀ)*

Անսպասելի ծիծաղի դրսևորման ինչպիսի՞ հնարանքների է տիրապետում մեր ժողովուրդը, որ մանկական զվարճախոսության ստեղծման հենքը դարձած այդ նույն արտահայտությունը նոր ժամանակներում հնչեցվում է նորովի՝ կապելով քաղաքական թեմայի հետ. անզուսպ ծիծաղ առաջացնելուն զուգահեռ՝ քննադատվում է Հայաստանում տիրող մենաշնորհային քաղաքականությունը՝ ներկրումը, մեկի կամ մի քանիսի մենաշնորհը դարձնելու ամենաթողությունը.

Սամվել Ալեքսանյանը գնում ա Սերժ Սարգսյանի մոտ, ասում ա՛

– *Ճիշտ ա՞, որ էրեխանց արագիլն ա բերում: // Ասում ա՛ // – Հա՛, ճիշտ ա: //*

– *Իսկ չի ըլի՞ էպ էլ ես բերեմ: (ԱՍՇՀ)*

Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի վերաբերյալ տարբեր ժամա-

⁶⁴² **Բեթար** (թրք.) – վատթար:

նակներում բազմաթիվ երգիծապատում-զվարճախոսություններ են ստեղծվել, որոնց մեջ առանձնանում են միմյանց հուսադրող «**վերջը լավ է լինելու**», «**լավ կըլնի**» ժողովրդական արտահայտությունը: Մանրապատումներից մեկը՝ բառախաղային դրսևորմամբ, առնչվում է հայրենադարձներին այդ արտահայտությամբ հուսադրող խոստումներին:

Ոստիկանին հարվածելու համար բաժանմունք տարված հայրենադարձը այսպես է արդարացնում իր արարքը.

– *Երբ հայրենիք կուգայինք, բոլորը մեզի կըսեին՝ վերջը լավ կըլլա: Ան իրենից ի՞նչ կներկայացնե, որ կըսե՛ վերջըդ վատ կըլլա: Ի՞նչ է, լավը ավարտվե՞ց..(ԱՍՇՀ)*

Տե՛ս Հավելված 3, թիվ 53:

Վերջը լավ է լինելու արտահայտության միջոցով ապրած ողջ կյանքի խտացված նկարագիրը ներկայացված է հայաստանաբնակի՝ «*Վերջը լավ է լինելու, դու ասա ընթացքը լավ լինի*» մեկնաբանության և հայրենադարձի՝ «*Լավ կըլլա ըսելով՝ հոս հասանք*» շիրմաքարային գրությունում: (ԱՍՇՀ)

3.9. Համանունային և հարանունային դրսևորումները

Հայ ժողովրդական երգիծական ստեղծագործությունների համատեքստում մեծ քանակ են կազմում համանունների և հարանունների հենքի վրա ստեղծված երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները: Իսկ վերջիններիս մեջ գերակշռողը համանունային (բուն և քերականական) կիրառություններն են:

Զվարճախոսություններից մեկում անսպասելի ծիծաղը դրսևորվում է արգելական հրամայականի «**մի**» մասնիկի և «**մի**» ձայնանիշի համանունության հենքի վրա.

Երաժշտական դպրոցից տուն վերադարձած երեխան ծնողին պատմում է իր անտրամադիր լինելու պատճառը. «*Դասատուն ըսավ՝ «դո» զարգե, զարգեցի, ըսավ՝ «ոե» զարգե, զարգեցի, ըսավ՝ «մի» զարգե, չզարգեցի, գլխուս զարգեց*»: (ԱՍՇՀ)

Մեր գրանցած մեկ այլ զվարճախոսությունում անսպասելի ծիծաղը դրսևորվում է

«մեզ» գոյականի և «մենք» դերանվան տրական-հայցականի «մեզ» հոլովածևի համանունային կիրառությամբ: Բուժքրոջ՝ «Մի բուպե, հայրի՛կ, այսքանը մե՛զ եք բերել» հարցին հետևում է անալիզ բերող ծերունու՝ «Հա՛, ախջի՛կ ջան, դիվի⁶⁴³ ձեզ եմ բերել» պատասխանը: (ԱՍՇՀ)

Այս անեկդոտի տարբերակում բուժքրոջ հարցին հետևում է «Չէ, էս պրոֆեսորի համար եմ բերել, բայց եթե ուզում եք, վաղն էլ ձեզ համար կբերեմ» պատասխանը: (ԱՍՇՀ)

Անեկդոտներից մեկում էլ զավեշտն ստեղծվում է արևմտահայերեն **հոս**-ի (ցուցական դերանուն՝ այստեղ) և **օս**-ի (ազգություն) հարանունության կիրառությամբ.

Հիսուն փարեկան ձկնապան Մելքոն փասն ու հինգ փարեկան օրիորդի հեպ ամուսնանալու համար գնաց Կարապետ Եպիսկոպոսի մոտ, վերջինը հարցրեց.

– Նշանածդ հո՛ւ է, Մելքո՛ն աղա:

– Չէ, սրբազան, օս չէ, հայ է, – պատասխանեց նա⁶⁴⁴:

Հայրենադարձության թեմային առնչվող զվարճախոսություններից մեկում անսպասելի ծիծաղը դրսևորվում է «**ոտքի կանգնել**» հարադիր բայի երկիմաստ՝ համանունային կիրառության միջոցով: Եվ բառախաղով ու ծիծաղով շաղախված այդ հնարանքը այնքան խտացված է և ասելիքով հարուստ, որ ականայից խոնարհվում ես ժողովրդական հանճարի առաջ.

Մի հայրենադարձի հարցրին. //– Է՛, աղբա՛ր, ո՞նց կապրիք: // – Կամաց-կամաց ոտքի կանգնեցինք: // – Էդ ո՞նց հաջողվեց: // --Է՛հ, վերջին երեք աթոռն էր մնացեր, ան ալ վաճառեցինք ու ոտքի կանգնեցինք⁶⁴⁵:

Նույն թեմայով մեկ այլ զվարճախոսությունում էլ «**հեռալետս**» բառն է դառնում զավեշտի հենք: Ակնաբուժական հետազոտության ժամանակ բժշկի՝ «Հայրի՛կ, դուք ի ծնե հեռալետս եք» խոսքին հետևում է հայրենիքում հիասթափություն ապրած տարեց

⁶⁴³ **Դիվի** – լրիվ, բոլորը:

⁶⁴⁴ Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դէպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած, ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 83:

⁶⁴⁵ «Եղինջ» երգիծական թերթ, Վանաձոր, 1995, թիվ 4, էջ 8:

հայրենադարձի «Է՛, աղջի՛կըս, թե որ հեռադես ըլայի նե, հոս չէի ըլլա» պատասխանը:
(ԱՍՇՀ)

Համանունության կիրառությամբ զավեշտ է ստեղծվում նաև «**բան**» բառի երկիմաստ՝ խոսքամասային տարբեր կիրառություններով՝ հետադասի ժամանակ՝ բանել, զբաղվել իմաստով (երկրաբան, բուսաբան, մարդաբան, լեզվաբան և այլն), նախադասի դեպքում՝ բան-խոսք իմաստով (բանասեր, բանագետ, բանարվեստ և այլն): Բառախաղով ստեղծված երգիծապատումում ծանոթանալիս կենսաբան և իրավաբան մասնագիտություն ունեցողներին իր զբաղմունքն է ներկայացնում նաև զրուցակիցը.

– *Ճիշտն ասած, ես էլ եմ բան, բայց իմ բանն առաջից ա* (իմա՝ բանասեր):
(ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 54:**

Արևմտահայոց երգիծապատումներից մեկում «**Յաճախապատում**»-ը **Հաճի Խաթուն**-ի հետ հարանունություն ստեղծելով է զավեշտ առաջանում:

Հարուստի՝ ծառային տված «*Գնա Մարկոս էֆենդիէնց տունը (Օրմանեանի*⁶⁴⁶)
«Յաճախապատում»ը բեր, որ ժամանակ անցընեմ» հանձնարարությունը Մարկոս էֆենդիին այնպես է փոխանցվում, որ անսպասելի ծիծաղի տեղիք է տալիս. «*Մէր էֆէնտին Հաճի Խաթունը ուզեց, որ ժամանակ անցընէ*»⁶⁴⁷: **Տե՛ս Հավելված 3, թիվ 55:**

Հայկական անեկդոտներում զավեշտը դրսևորվում է նաև գրական հայերենի «**ապրել**» բայի և տարվա ամսանուններից մեկի՝ «**ապրիլ**»-ի հարանունության միջոցով: Երբ տերտերը ցրտից ու անձրևից խեղճացած հովվին ասում է, թե ապրիլ ամիսն է, հետևում է կատաղած հովվի բառախաղով արտահայտված պատասխանը.

– *Շա՛ն տղա հայ, որ էս ապրիլ ամեսն ա, պա մոնիլեն ամեսն վը՞րն ա*⁶⁴⁸ :

Հայկական երգիծապատում-զվարճախոսություններ կան, որոնք ձևավորվել են

⁶⁴⁶ Բնագրում Ազնավուրյանը **սխալ է թույլ տվել**, քանզի հայ կրոնական, հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, պատմաբան, բանասեր Մաղաքիա (Պողոս) Օրմանյանի (1841-1918) ծանրակշիռ աշխատությունը երեք մասից բաղկացած «**Ազգապատում**»-ն է, իսկ «**Յաճախապատում**»ը («**Հաճախապատում**») **խրատական ճառերի, քարոզների ժողովածու է**, որի հեղինակային պատկանելության հարցը 5-րդ դարից մինչև հիմա մնում է վիճելի:

⁶⁴⁷ **Ազնավուրեան Ս.**, Հէքիաթներ, զուարճալիքներ, ԱՄՆ, Միչիկըն, Տիպորն Հայթս, 1971, էջ 138:

⁶⁴⁸ **Հովսեփյան Հ.**, Ղարադաղի հայերը. հատոր 2, բանահյուսություն, Եր., «Գիտություն» հրատ., 2009, էջ 456:

գրական հայերենի և բարբառների կամ ժողովրդախոսակցական լեզվի և բարբառների բառ-բառակապակցությունների ու արտահայտությունների համանուն-հարանունային դրսևորումների հիմքի վրա:

Բավականին մեծ քանակ են կազմում հայերենի տարատեսակ բարբառների բառապաշարի հենքի վրա ստեղծված երգիծապատում-զվարճախոսությունները: Այսպես, զվարճախոսություններից մեկում զավեշտ ստեղծելուն նպաստել է ժողովրդախոսակցական լեզվում օգտագործվող **լիքը** (շատ) և լիքը (լցված) համանունային կիրառությունը.

Մի լոռեցի մտնըմ ա տնտեսական խանութ, ասմա՛

– Ախչի՛կ ջան, գարշոկ⁶⁴⁹ ունե՞ք: // Բա թե՛ //– Լի՛քը: //

– Բալա՛ ջան, դե մինը դըրդակի⁶⁵⁰, տու... (ԱՍՇՀ)

Երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների մի մեծ խումբ էլ առնչվում է **գրական հայերենի, բարբառների, բառ-բառակապակցությունների ու արտահայտությունների և օտար լեզուների համանուն-հարանունային զավեշտալի դրսևորումներին**: Ի դեպ, նման անեկդոտներում գերազանցում են հարանունային կառույցները: Այսպես.

Հարանունության կիրառությամբ զվարճապատումում անսպասելի ծիծաղ է առաջանում, երբ բաղադրյալ ստորոգյալի հարակատար ներկայով կազմված դիմավոր բայի եզակի երրորդ դեմքը՝ բարբառային հնչողությամբ, ներկայանում է իբրև օտար (տվյալ դեպքում՝ վրացական) ազգանվան մաս.

Քեֆները լավ էրկու գյումրեցի Թիֆլիսում, մի արձանի մոտ կանգնած, իրար հետ վիճում են.

– Ծո՛, աշե՛ ինչըխ լավ ոանդած է (տարբերակ՝ տաշած է)

– Ոչ թե ոանդած է, այլ քանդրկած է:

Կողքներով անցնող մի վրացի միջամտում է նրանց.

– He (ոչ) Ռանդածե, Մ he (և ոչ էլ) Կանդրկածե (տարբերակ՝ Տաշածե), это -

⁶⁴⁹ **Գարշոկ** (ռուս.) – գիշերանոթ:

⁶⁵⁰ **Դըրդակի** – դատարկի՛ր:

Ճավճավաձե (սա Ճավճավաձեն է): (ԱՍՇՀ)

Զվարճապատումներից մեկում էլ զավեշտն ստեղծվում է ոուսերեն **еаш-կե'ր** և Ղարաբաղի բարբառի **յեշեյ-նայեյ** բառերի հարանունության հենքի վրա.

Մի Ղարաբաղցի գնացքով գնալիս ուտելիքը հանում ա ու ախորժակով սկսում ուտելը: Մեկ էլ մի շեկ աղջիկ ա տեսնում, ասում ա.//

– *Девушка', еаш*⁶⁵¹: // – *Յեշըմ եմ*⁶⁵², *յալիի*: (ԱՍՇՀ)

Զվարճախոսություններից մեկում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ է դառնում հարցադրում-առաջադրանքով այնպիսի երկխոսական կառույցը, որտեղ հարանունությունը ստեղծվում է **բառամասնատում-բառաբարդումով**.

Դրա համար անգլերեն **քըրփըրեյշն**⁶⁵³ բառը մասնատելով՝ նրա առանձին մասերը համընկեցվում է Հայաստանի որոշակի տարածքների (Հրազդան-Ախտա և Ապարան) բնակչությանը տրվող մականուններին.

– *էրկու ախտեցի ու մի աբարանցի որոշում են միասին գործ դնեն, աշխատեն: Կարա'ք ասեք՝ էդ ձեռնարկության անունն ինչ են դնում:*

–

– *Քոռքոռեշըն*: (ԱՍՇՀ)

Նմուշներից մեկում էլ զավեշտի միջոց է դառնում չինական անուն-ազգանվան (Մաու Ցզե Դուն) և Բայազետի բարբառի Գավառի խոսվածքով կազմված նախադասության հարանունային կառույցը (**Մացե տուն** – մնացել է տանը): (ԱՍՇՀ) **Տե'ս Հավելված 3, թիվ 56:**

Եթե վերը ներկայացված համանուն-հարանունային դրսևորումներով զավեշտ առաջացնող երգիծական մանրապատումները և զվարճախոսությունները ծիծաղ առաջացնելու համար մեծերի կողմից մեծ մասամբ նպատակադրված են ստեղծվել ու շրջանառվել, ապա նման կառույցներով *մանկական զվարճախոսությունները*, կապված երե-

⁶⁵¹ *Девушка', еаш* (ռուս.) – աղջիկ, կե'ր:

⁶⁵² *Յեշըմ եմ* – նայում եմ:

⁶⁵³ *Քըրփըրեյշն* (անգլ.) – ձեռնարկություն

խայի մտածողության որոշակի աստիճանի հետ, իրենց ստեղծման ժամանակ երևույթների և առարկաների անմիջական և ուղղակի ընկալման արդյունք-վերարտադրություններ են և հարազատ-մտերիմների շրջանում վերապատմվելով՝ հետագայում են զվարճախոսության իմաստ ձեռք բերել:

Մեր ձեռքի տակ է համանունության հենքի վրա անսպասելի ծիծաղ առաջացնող «Հայր մեր» տերունական աղոթքի հետ կապված երկու նմուշ, մեկը հրատարակվել է 1876 թվականին⁶⁵⁴, մյուսը վերջերս կատարած մեր գրառումներից է՝ հրատարակված մանկական զվարճախոսություններին նվիրված գրքում⁶⁵⁵:

140 տարիներն ասես ոչինչ չեն փոխել երեխաների, մասնավորապես լեռնաբնակ, մտածողության մեջ: Թե՛ Հովի. Նազարյանցի զվարճախոսության, թե՛ մեր գրանցած զվարճապատումի հենքը խոսքի իմաստի ուղիղ ընկալումն է: Առաջինի ժամանակ քահանայի տված հարցին, թե «Որտե՞ղ է քո հայրը» (իմա՛ Աստված-ԱՍ), աշակերտի պատասխանն է անսպասելի ծիծաղ հարուցում.

Քահանան աշակերտին «Հայր մերը» կարդացրեց և այդ աղոթքի մասին հարցրեց.

– Որտե՞ղ է քո հայրը:

– Մարաքումն է, – պատասխանեց աշակերտը⁶⁵⁶:

Երկրորդ պատումում արքեպիսկոպոսի հարցին, թե ո՞վ կարող է «Հայր մեր»-ը ասել, հետևում է առաջին դասարանում սովորող լոռեցի երեխայի՝ «Հերըս Գարե՛գինն ա, մերըս՝ Վարթիշա՛ղը» պատասխանը: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 57:**

3.10. Ուղիղ և փոխաբերական իմաստները

Հայկական անեկդոտների մեջ քիչ չեն ուղիղ և փոխաբերական իմաստներով անսպասելի ծիծաղի դրսևորման օրինակները:

⁶⁵⁴ Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 52:

⁶⁵⁵ **Սարգսյան Ա.Շ.**, Մանկական զվարճախոսություններ, «Գիտություն» հրատ., Եր., 2016, էջ 137:

⁶⁵⁶ Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 52:

Երկխոսական անեկդոտներից մեկում առաջադրված հարցը լոռեցու հոգու հետ խաղալու, նրա ճաշակն ու կարողությունները, այսպես ասած, «ստուգելու» նպատակ է հետապնդում: Իսկ պատասխանում լեռնաշխարհի մարդն է՝ իր պարզամտությամբ ու բառի ուղղակի իմաստի ընկալմամբ:

Մի տարեց լոռեցու հարցնում են. // – Կքնեի՞ր Ջուլիա Ռոբերթսի⁶⁵⁷ հեպ: //

– Այտա՛, որ քունս տաներ, խի՞ չէի քնի,- պատասխանում է լոռեցին:

Հարսանեկան ծիսակարգին առնչվող անեկդոտներից մեկում էլ մայրաքաղաքից Քյավառ խնամախոսության գնացածների պատկերավոր խոսքի ուղիղ ընկալումն է դառնում ասպասելի ծիծաղի պատճառը.

Երևանից գնում են Քյավառ՝ աղջիկ ուզելու: Ներս մտնելուց հետո խնամախոսներն ուզում են իրենց գրագիտությունը ցույց տան, նպատակները պատկերավոր են ներկայացնում, ասում են.

– Մենք եկել ենք ձեր այգուց վարդ քաղելու:

– Մեր բոստան հրմմեն⁶⁵⁸ կորտոլ ա, – պատասխանում է աղջկա հայրը:

Ուղիղ և փոխաբերական իմաստներով զավեշտ ստեղծելու նմուշները բավականին շատ են մանկական զվարճախոսություններում: Եթե մեծերի երգիծապատում-զվարճախոսություններում զեղչմամբ կառույցներով բառ-բառակապակցությունների և դարձվածների ուղիղ իմաստով ընկալումը մեծ մասամբ կանխակալ վերաբերմունքի արդյունք է, անսպասելի ծիծաղ առաջացնելուն միտված ժողովրդական նպատակադրված հնարանք, ապա մանկական զվարճախոսություններում այն որոշակի տարիքային խմբի երեխաների աշխարհընկալման, մտածողության որոշակի աստիճանի, տեսածը իր հնարավորությունների սահմաններում վերլուծելու և լսածը ուղիղ իմաստով ընկալելու հետևանք է: Այսպես, օրինակ, քերականական զեղչմամբ ստեղծված **աչքիս չիշ ա արել** դարձվածային կառույցը մանկան խոսքում ուղիղ իմաստով է ընկալվում.

⁶⁵⁷ Հայտնի դերասանուհի:

⁶⁵⁸ **Հրմմեն** – ամբողջությամբ, բոլորը:

– Աչքիս չիշ ա արել. ձեռն չի հանում, – ասում է տապալ (զեղչված է ինչպես երևում է միջանկյալ բառակապակցությունը-ԱՍ):

– Տափի՛կ, աչքիդ չեմ արել, տակըս եմ արել... (ԱՍՇՀ)

Մանկական զավեշտալի արտաբերումներում ծիծաղի պատճառ կարող է դառնալ հարադիր կառույցի անդամներից մեկի ուղիղ իմաստով ընկալումը.

– Նարե՛, բա ամոթ չի՞, կանգնում ասում ես՝ դաս չեմ սովորել, – դիտողություն է անում ուսուցիչը առաջին դասարանցի աշակերտուհուն:

– Ես կանգնած չեմ ասում, նստած եմ ասում, – ուսուցչին «ուղղում» է երեխան: (ԱՍՇՀ)

Մանկական զվարճախոսությունների մի մեծ խմբում էլ զավեշտի հենքը դառնում է երեխաների կողմից փոխաբերաբար ասված խոսքի չընկալելը.

Ձյուն է գալիս: 2.7 տարեկան Ռազմիկը մայրիկի հետ զբոսնում է: Մայրը երգում է. «Ձյունը գալիս է դանդաղ, ձյունը իր երգն է երգում...»:

– Մամա՛, ձյունը բերան ունի՞, – հարցնում է Ռազմիկը: // – Չէ, բալի՛կ ջան: //

– Մամա՛, բա ո՞նց ա իրա երգը երգում... (ԱՍՇՀ)

3.11. Բառակազմական դրսևորումները և լեզվաբանական եզրույթները

Զվարճապատում-զվարճախոսություններում զավեշտի ստեղծման հենք է դառնում **բառաբարդում-հնչյունահավելումը՝** տարբեր բառերի կամ բառ հնչյունների միացմամբ նոր բառերի ստեղծումը: Այսպես, հայերենի այբուբենի գրանշանով ներկայացված ժամանակաշրջանը, բառին միացվելով, ժողովրդախոսակցականում կիրառվող օտարալեզու բառի իմաստ է արտահայտում.

Ուսուցիչ. – Երեխանե՛ր, ի՞նչ է նշանակում «Երկունք Թ դարո»:

Աշակերտ. – Թըդարեք⁶⁵⁹ տենալ: (ԱՍՇՀ)

⁶⁵⁹ Թըդարեք (թըք.) – պատրաստություն:

Մանկական զվարճախոսություններից մեկում էլ բառաբարդմամբ ստեղծված նոր բառը դառնում է զվարճախոսության անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը: Ուսուցչի՝ «*Իսկ եթե 3 խնձորին գումարես 2 փանձ, ինչքա՞ն կլինի*» խաբուսիկ հարցին հետևում է երեխայի՝ թվաբանական ճիշտ հաշվարկով արված «*Հինգ հայր խնձորափանձ*» ճկուն պատասխանը: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 58:**

Հայ ժողովրդական երգիծապատում-զվարճախոսությունների համար զավեշտի հենք է դառնում նաև **բառամասնափում-բառաբաժանումը:**

Զվարճապատումներից մեկում գրական հայերենի **շահագրգռվածություն** բառի մասնատմամբ է ընդգծվում հայրենադարձի դժգոհությունը խորհրդային համակարգից, քանզի շահը պետությանն էր գնում, գրգռվածությունը՝ ժողովրդին: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 59:**

Մեկ այլ զվարճախոսության մեջ զավեշտ է ստեղծվում օտարաբալեզու «ունիվերմազ»⁶⁶⁰ վանկային հապավումը միտումնավոր մասնատելով: Հանրախանութ բառի փոխարեն ժողովրդախոսակցական լեզվում կիրառվող ռուսերեն հապավումը անեկդոտում մասնատմամբ վեր է ածվել երկու հայերեն իմաստակիր բառերի.

Գեվոն մտնում է ունիվերմազ ու վաճառողին թե.

– *Մի հայր վերմակ տուր: // – Չըկա: //*

– *Վեր չըկա, հոր ե՞ք շենքի ճըկատին կիրալ ՈՒՆԻ ՎԵՐՄԱԿ...⁶⁶¹*

Բառամասնատմամբ զավեշտի ստեղծման յուրատեսակ նմուշի ենք հանդիպում Հովհ. Նազարյանցի անեկդոտների հատորներից մեկում: Այստեղ արդեն, ի հակադրություն *մեռնել* բառի, Թիֆլիսի բարբառի **ծնվել, մեծանալ, ապրել, հարստանալ** բառերի անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դեմքի վերջավորության միջոցով առանձնացվում և ընդգծվում է **ցավ** բառը.

Տիֆլիսեցի վաճառական Պառավ Եովանեն ասում էր.

– *Աշխարհքումս մարդու ծնուիլն էլ, ապրիլն էլ, հարստանալն էլ ցավ է, մենակ*

⁶⁶⁰ **Ունիվերմազ** (ունիվերսալնիյ մագազին) (ռուս.) – հանրախանութ:

⁶⁶¹ **Սահակյան Լ.**, Սրախոսություններ և անեկդոտներ, Գորիս, «Մուշ» հրատ., 1994, էջ 50:

մեռնիլն է հանգիստը: Ասում ինք՝ «Փլան մարդը ծնուեցավ, մինձացավ, ապրեցավ, հարստացավ»։ մենակ մեռնիլն է անցավ. ասում ինք՝ «մեռավ»: Միր Միրզոյեվն էլ ծնուեցավ-ցավ, մինձացավ-ցավ, հարստացավ-ցավ, ապրեցավ-ցավ, մեռավ –հանգավ⁶⁶²:

Հարս-սկեսուր հարաբերությունները ևս անեկդոտում բառաբաժանման միջոցով է հնարավոր լինում բացահայտել «մեղավորին».

Նորահարսին հարցրին. // – Աղջի՛, կեսուրդ լավն ա՞: //

– Ի՛, մի բառի կեսը որ «սուր» լինի, էլ դրա լավը ո՞րն ա՞⁶⁶³:

Իսկ փեսա-զոքանչ փոխհարաբերության հաղթողը «կապ» ունի գողական-բանտային աշխարհի հետ, քանզի դա է հուշում բառի «ստուգաբանությունը».

Չոքանչ – զոնի՞⁶⁶⁴ քաջ:

Բառամասնատմամբ ծիծաղ առաջացնելու դրսևորումները շատ են **մանկական զվարճախոսություններում**: Սակայն, ի տարբերություն վերը թվարկած դրսևորումների, այս խմբի նմուշներում բառաբաժանումը երեխաները նպատակադրված չեն կատարում:

Զվարճապատումի հենք է դառնում **կրկնավոր բարդության** այնպիսի տեսակը, երբ բարդության մի մասը հնչյունափոխման կամ հնչյունահավելման միջոցով անորոշություն, անիմաստություն է արտահայտում.

Մարդ ու կնիկ բաժանվում են, դատարանում դատավորն ասում ա՛

– Ինչ ունեք-չունեք, հավասար պիտի բաժանվի, հիմա ասեք, թե ձեր տանն ինչ ունեք:

Կնիկն սկսում ա ունեցվածքը թվարկել.

– Տուն-մուն, էջ-մեջ, տեղաշոր-մեղաշոր, աման-չաման....

Դատավորն էլ թե՛

⁶⁶² Անեկդոտներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, 1883, Մ.Վարդանեանի եւ ընկ. տպարան, էջ 53:

⁶⁶³ Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, Հավաքել և կազմել է Լենա Անթառանյանը, Եր., «Վերնատուն» հրատ., 1994, էջ 8:

⁶⁶⁴ **Չոնա** (ռուս.) – բանտային տարածք:

– Դե ուրեմն՝ մարդիդ կտանք տունը, քեզ կտանք մունը, մարդիդ կտանք էջը, իսկ քեզ՝ մեշը, մարդիդ կտանք ամանը, քեզ էլ կտանք չամանը... (ԱՍՇՀ)

Երբեմն ոուսերենի տառային հապավումներին համադրվում է հայերենի նույնատառ ինքնաստեղծ «հապավումը»՝ երկիմաստ կիրառությամբ զավեշտ առաջացնելով և շփոթեցնելով դիմացինին:

Խորհրդային տարիներին բարձրագույն կուսակցական դպրոցի օտարարալեզու **ՎեՊեՇե**⁶⁶⁵ տառային հապավումը մեզ մոտ կիրառվել է նաև ժողովրդախոսակցական լեզվում, և սրա համանունությամբ էլ կիրովականցի զվարճախոս Ֆանտոն բոլորին զվարճացնում էր իր հնարանքով.

– Գիտե՞ք, որ ես **ՎեՊեՇե**-ն եմ ավարտել, – հաճախորդներին հաճախ էր մոլորեցնում Ֆանտոն:

– Ո՞նց, **ՎեՊեՇե**-ն ես ավարտել ու էս գործին ե՞ս:

– Ես իմ ստացած մասնագիտությամբ էլ աշխատում եմ, բա ո՞րտեղ աշխատեմ, եթե ես **Վիսշայա պակրիշեսկայա շկոլա**⁶⁶⁶-ն եմ ավարտել: (ԱՍՇՀ)

Զվարճախոսություններից մեկն էլ ինքնատիպ ձևով է մեկնաբանում *Երիացառ* (Իմա՝ Երևանի հացի առևտուր) **վանկաբառային հապավումը**: 1940-ականների վերջին հայրենադարձների կողմից այդ հապավման յուրովի «վերծանությունը» անսպասելի ծիծաղ է առաջացնում՝ «պայծառ տխրությամբ» արտացոլելով ներգաղթը կազմակերպողների փքուն խոստումները և ետպատերազմյան տարիների սոցիալական ծանր վիճակը՝ *Երիացառ – Երանի հաց առնողներին*⁶⁶⁷:

Հայկական զվարճապատում-զվարճախոսություններ են ստեղծվել, որոնց զավեշտի հենքը **լեզվաբանական եզրաբառերն են** (կապ, հապավում, քերականական կարգ՝ եզակի-հոգնակի, շնչավոր-անշունչ առարկա, դերբայական դարձված և այլն): Դրանք հանդես են գալիս կա՛մ սոսկ եզրույթների անվանումների մատնանշմամբ, կամ

⁶⁶⁵ **ՎեՊեՇե** (ռուս.) – **Վիսշայա պարտիյնայա շկոլա**՝ բարձրագույն կուսակցական դպրոց:

⁶⁶⁶ **Վիսշայա պակրիշեսկայա շկոլա** (ռուս.) – բարձրագույն անվադողերի դպրոց:

⁶⁶⁷ **Ստեփանյան Ա.**, 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և ադապտացման խնդիրները, Հայ ժողովրդական մշակույթ-12, ՀԱԻ-ի հանրապետական գիտաժողովի նյութեր, «Մոտի» հրատ., 2004, էջ 149:

էլ դրանց լեզվաբանական տարատեսակ դրսևորումներով: Ի դեպ, թե՛ առաջին, թե՛ երկրորդ խմբերի նմուշները շրջանառվում են առավելապես այնպիսի շրջանակներում, որոնց հասանելի են այդ եզրաբառերն ու դրանց բնորոշ կողմերը:

Կան լեզվաբանական եզրույթներ և դրանց դրսևորումներ, որոնք հասանելի են միայն նեղ մասնագետներին՝ բանասերներին: Այսպես, գրաբարի հոլովական միջոցներին և հայցականի դրսևորմանը ծանոթ մարդը միայն կարող է ընկալել ու ծիծաղել հետևյալ զվարճախոսությունը լսելուց հետո.

Աբել անունով մեկը, զարմացած մեր հնագույն լեզվի հնարավորություններով, այսպես է արտահայտվում.

– Բայց ի՞նչ հետաքրքիր լեզու ա մեր գրաբարը. ուղղականում տղա եմ՝ Աբել, հայցականում՝ աղջիկ՝ Չաբել...:(ԱՍՇՀ)

Իսկ *գրաբար* եզրույթին անծանոթ անձը հարանունության պատճառով կարող է ասելիքը վերածել զավեշտի.

Վանաձորի հեռուստատեսությամբ հարցազրույցներից մեկի ժամանակ թղթակիցները հարցնում են պրոֆեսսորնալ բոնցքամարտի աշխարհի բազմակի չեմպիոն Վախթանգ (Վիկ) Դարչինյանին.

– Հավատո՞ւմ եք Աստուծուն, դինգից առաջ խաչակնքո՞ւմ եք:

– Այո, հավատում և խաչակնքում եմ, էս խաչն էլ գրաբարն ա տվել, – պատասխանում է Դարչինյանը (ուզեցել է ասի՝ Վեհափառն է տվել - ԱՍ): (ԱՍՇՀ)

Կան զվարճախոսություններ, ասենք քերականական կարգին՝ եզակի-հոգնակին առնչվող, որոնք ընկալելի և տարածված են թե՛ դպրոցականների շրջանում, թե՛ մեծահասակների:

Եզակի-հոգնակի կիրառությանը վերաբերող ստորև բերվող զվարճապատումը պատմվում է մեծահասակների միջավայրում՝ հոգնակիով ընդգծելով մարդկային բացասական հատկանիշը.

– Բարև՛, եզներ՛ր, – մտնելով աշխատասենյակ՝ դիմում է մեկը նստած միակ մար-

դուն:

– *Բայց ես մենակ եմ, ինչի՞ ես հոգնակի թվով դիմում:*

– *Ախր շա՛ր ես եզ, է՛: (ԱՍՇՀ)*

Հիմնականում դպրոցականների շրջանում է պատմվում հետևյալ նմուշը.

Լոռու գյուղերից մեկում ուսուցիչը հարցնում է.

– Երեխանե՛ր, ո՞վ կարող է ասել՝ շավարը եզակի՞ է, թե՛ հոգնակի:

Աշակերտներից մեկը ձեռք է բարձրացնում ու ասում.

– Ներքիկուռը⁶⁶⁸ հոգնակի ա, վերիկուռը⁶⁶⁹ եզակի: (ԱՍՇՀ)

Դպրոցականներն են շրջանառում նաև *գոյական խոսքի մասի շնչավոր և անշունչ առարկաներին* վերաբերող վարդանիկյան պատումնաշարի հետևյալ անեկդոտը.

*Մի անգամ ուսուցիչը դիմեց Վարդանիկին: // – Շնչավոր առարկայի անո՛ւն ա-
սա:// – Էժ: // – Ապրե՛ս, իսկ հիմա անշունչ առարկայի անուն ասա: // – Սպրկած էժ, –
պատասխանեց Վարդանիկը⁶⁷⁰:*

Իսկ գոյականի և բայի խոսքամասայինի տարբերակիչ կողմը զվարճախոսությունում այսպիսի զավեշտալի մեկնաբանություն է ստացել.

– Ի՞նչ բան է «էշ», գոյակա՞ն թե բայ, – հարցրեց վարժապետը:

– Բայ, – պատասխանեց աշակերտը, – որովհետև կարելի է ասել. «Ես էշ եմ, դու էշ ես, նա էշ է»⁶⁷¹:

Կապ խոսքի մասին առնչվող այս զվարճախոսությունը կարող է ընկալելի լինել միայն գյուղաշխարհի երեխային, քանզի հարանունությամբ մեջբերված «կապերի» տեսակները հասու են մեկ լեզվաբան-բարբառագետներին կամ ազգագրագետ-բանագետներին, մեկ էլ տվյալ բարբառը կրող երեխաներին.

Լոռու գյուղերից մեկի դպրոցում հայոց լեզվի դասին ուսուցիչը հարցնում է.

⁶⁶⁸ **Ներքիկուռը** – **նեքքևի** կողմը:

⁶⁶⁹ **Վերիկուռը** – վերևի կողմը:

⁶⁷⁰ Ծիծաղենք միասին, Կազմեց Սարինէ Ամիրխանեանը (Ղեւոնդեան), Բ տպագրություն, Թեհրան, «Նա-լիրի» հրատ., 2007, էջ 103:

⁶⁷¹ Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 111:

- Երեխանե՛ր, կապերի ի՞նչ տեսակներ գիտեք:
- Ես ասե՛մ, – ձեռք է բարձրացնում աշակերտներից մեկը:
- Ասա՛, տղա՛ ջան:
- Ֆորթակապ, քարկապ, գրկապ, գելկապ⁶⁷²...: (ԱՍՇՀ)

3.12. Պատկերավորման միջոցները

Զվարճապատում-զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ են դառնում նաև **պատկերավորման և արտահայտչության** տարատեսակ միջոցները՝ **մակդիր, համեմատություն, փոխաբերություն, զեղչում, բառախաղ, հանգախաղ, հնչերանգ** և այլն: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Եթե թաղման սգերգերում ու սգո խոսքերում առկա է վշտին, դժբախտությանն ուղեկցող հուզական խոսքը, բաժանման ցավը, ասիտսանքը, որը հուզում է նաև ներկա գտնվողներին, ապա երգիծական մանրապատումների լալիքի խոսքերում ու երգերում առկա է զավեշտը, ինքնաբուխ անսպասելի ծիծաղը:

Թաղման ծիսակարգի լայաց երգի ղարաբաղյան երգիծապատումներից մեկն էլ ամուսնու մահը անկեղծորեն սգացող կնոջ խոսքերը Պըլը Պուղու բերանով է ներկայացվում, այն էլ այնպիսի պատկերավորությամբ «ծաղկեցնելով» ու փառաբանելով հանգուցյալին, որ կամա թե ականա զվարճանք է պատճատում լսողին: Զավեշտ առաջացնողը հատկապես **մակդիրների** ու **համեմատությունների** առատությունն է.

– «Աղջի՛, քը մատաղ, ըներա՛կ ար էն օրին, որ ծնական գեալիս ար՛ սեզնը, զկեռը, մըհաստըրը ջուբորը լիկը. լըհայ որ բերում ար, խըխոցս ըռաջին որ ածում, հե՛նց ար ինում, **լըհայ Թաւրուզու խոշկեապէար ինի:**

«Աղջի՛, քը մատաղ, լըհայ որ իրկէծնանց գեալիս ար կացինը քամակը կոխած, ցակատըր առաջը կոխած, կեօտակ էշը ըռաջկին, շիւշայ շիւշայ ընշուղաւ բեռնած, յագին պուկրի ընելաւ. **լըհայ որ բերում ար ընծղաբեռնը որօնում, հենց ար ինում լըհայ**

⁶⁷² **Գելկապ** – գայլին կապել: **Գելկապի աղոթք** – գիշերը դրսում մնացած ընտանի կենդանիներին գայլից պաշտպանելու համար ասվող ժողովրդական աղոթք, որն իբր օգնում էր գայլի բերանը կապելուն:

պեագրկանի թէանպէալէթ ինի:

ա քու ոսկի փըշակիդ մատարդ, // ա քու ոսկի քրխընիդ մատարդ, //

ա քու ոսկի փըզկեահիդ մատարդ, //անծուղ կ'անե՛ր, լրհայ ձըձոնակի թևեր ի-նի: // Աղջի՛, բա՛ ինձ նմանին փէրը փագ կանի՝⁶⁷³»:

Պատումն ամբողջությամբ և լրացուցիչ մանրամասներով ու Ղարաբաղի բարբա-
ռը արևելահայերենի վերածած **փե՛ս Հավելված 3, թիվ 60**-ում:

Քիչ չեն նաև հայկական այնպիսի զվարճապատում-զվարճախոսությունները, ո-
րոնցում **համեմատությունն է** դառնում անսպասելի ծիծաղի պատճառը:

«Աղէն հէլէր ա բօստան» զվարճապատումում աղան, իր մարմնի հիվանդ մասե-
րը բանջարեղենի տարբեր տեսակների հետ պատկերավոր ներկայացնելով, ծառային
խնդրում է այդ նույնը փոխանցել հեքիմին.

*– Տէնում էս, էլի, հէք՛իմին ասա՛ աղի մանները ուռէր ա խիյարի պէս, թեվէրը ու-
ռէր ա յէմիշի՝⁶⁷⁴ պէս, գ՛ըլօխը ուռէր ա դ՛թումի պէս...*

Մտամոլոր ծառան, անկարող լինելով բոլոր թվարկած ցավող տեղերը համեմա-
տություններով հիշել, այդ ամենը «միատեղում» և «տեղավորում է» բոստանում, ինչն էլ
պատճառ է դառնում զավեշտի առաջացման.

*– Աղա՛, էպդար բ՛անը իմ մըրփին չի մնա, կ՛էրթամ հէք՛իմին կասէմ՝ աղէն հէլէր ա
բօստան: Բօստանի մէջը հըմմէն ինչ էլ կա՛ խիյար էլ, յէմիշ էլ, ձ՛մէրուկ էլ, դ՛թում էլ...⁶⁷⁵*

Տե՛ս Հավելված 3, թիվ 61:

Այս մանրապատումի Ախալցխայի տարբերակը կրում է «Խալֆիս բանը բոստան
է» վերնագիրը⁶⁷⁶:

Ի տարբերություն պատկերավորության այլ միջոցների՝ **այլաբանությունը** վերա-
բերում է ամբողջական ստեղծագործությանը: Այս առումով, որոշ երգիծապատում-

⁶⁷³ Պըլը-Պուղի, գրեց Մակար վարդապետ Բարխուդարեանց, Թիֆլիս, Մով. Վարդանեանի և ընկ. Տպա-
րան, 1883, էջ 131-132:

⁶⁷⁴ **Յէմիշ** (թրք.) – սեխ:

⁶⁷⁵ **Մարկոսյան Ռ.**, Արարատյան բարբառը, Եր., «Լույս» հրատ., 1989, էջ 292:

⁶⁷⁶ Առակներ, ավանդություններ, անեկդոտներ՝ Ախալցխայի բարբառով: Գրի առավ՝ Ստ. Մալխասյանց,
ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1 958, էջ 127-128:

զվարճախոսություններ ևս, պահպանելով անեկդոտի ժանրին հատուկ ամենաէական հատկանիշները՝ լակոնիկ՝ կարճառոտ կառուցվածք, անսպասելի ծիծաղ առաջացնող վերջաբան, այլաբանորեն են ներկայացնում ասելիքը:

Ասելիքն այլաբանորեն վերարտադրող անեկդոտներն իրենց գործող անձանցով՝ առակներին բնորոշ իրական կամ անիրական հերոսներով ու աշխարհներով (առարկաներ, կենդանիներ, մարդիկ, դժոխք, դրախտ) ու երկխոսությամբ, ինչ-որ տեղ մոտենում են առակի տեսակին, սակայն նման պատումներում գրեթե բացակայում է առակից բխող դաստիարակչական-ճանաչողական-խրատաբարոյական ուղղվածությունը: Այլաբանական անեկդոտներում բարոյախոսական վերջաբանին փոխարինում է անկանխատեսելի և անսպասելի պատասխաններով ծիծաղ հարուցող, միաժամանակ քննադատություն պարունակող վերջաբանը, որը նույնպես խորքային է, սուր և նպատակային:

Եթե ժողովրդական ավանդական առակները մեծ մասամբ վերաբերում են բոլոր ժամանակներին և շոշափում ընդհանուր մարդկային-հասարակական հարաբերություններին առնչվող հարցեր, ապա առակատիպ այլաբանական զվարճապատումները առնչվում են մեծ մասամբ որոշակի ժամանակաշրջանի և վերաբերում կոնկրետ քաղաքական վարչակարգին ու գործող անհեթեթ պլանային, հարկային կամ այլ կարգի քաղաքականությանը:

Ստալինյան ժամանակների բռնի և անհեթեթ պլանային քաղաքականությունը այլաբանորեն տեղայնացվել է ղարաբաղյան «Հավն ու վիչիլը» երգիծապատումում⁶⁷⁷:

Տե՛ս Հավելված 3, թիվ 62:

Խորհրդային և անկախացած Հայաստանի վարչակարգերի հարկային վարչարարությունը այլաբանորեն խտացվել է հետևյալ մեկ այլ երգիծապատումում: Աղվեսը փախչում է հարկայինի ստուգումներից, որի հետևից փախչում են նաև առյուծն ու արջը: Կապիկին ուղղած հարցին, թե ի՞նքն ինչու չի փախչում, պատասխանում է.

⁶⁷⁷ Բաքվի հայոց բանախոսությունը, գրառեցին և կազմեցին Ալվարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը Եր., «Ձանգակ-97», 2004, էջ 208:

– Ես ինչու՞ փախչեմ: Իմ հեղևս՝ բաց, կնոջս հեղևը՝ բաց, երեխիս հեղևը՝ բաց...⁶⁷⁸:

Այլաբանական զվարճապատում-զվարճախոսությունները չեն շրջանցում նաև վերջին տասնամյակներին կատարված ողբերգական իրադարձությունները: Երկրաշարժի արհավիրքները ծնող պատճառների մասին է բանագետ Վ. Սվազյանի գրառած «**Հայաստանի երկրաշարժին դադաւարութիւնը**» զվարճախոսությունը: Յեմենտն արդարանում է, թե ինքը ոչ մի կապ չունի քանդված շենքերի հետ, քանի որ շինանյութերի հետ չի եղել: **Տե՛ս Հավելված 3, թիվ 63:**

Եթե մեծերի երգիծապատումներում և զվարճախոսություններում **անձնավորումը** մեծ մասամբ նպատակադրված հնարանք է և նպատակ ունի զավեշտն էլ ավելի ազդեցիկ դարձնել, ապա մանկականում այն աշխարհընկալման առաջին քայլերի, շատ ու շատ անընկալելի երևույթներ բացահայտելու նպատակ է հետապնդում.

Իբրև փոքր տարիքի երեխայի մտածողության արգասիք՝ զվարճախոսություններից մեկում մանկան խոսքում կիրառվում է թե՛ անձնավորումը, թե՛ բառամասնատումը՝

Ծովափում նայելով մայրամուտին՝ 2 փարեկան Նարեն բացափրեց.

– Արևը պագում ա, գնում ա Մարիամի մոտ (իմա՝ մայրամուտ): (ԱՍՇՀ)

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում զավեշտի հենք դարձած պատկերավորման միջոցներից հաճախակի հանդիպողներից է նաև **չափազանցությունը**:

Որևէ ուրախ առիթի ճոխ նկարագրության «ազդեցությամբ» զվարճախոսություններից մեկում թաղման արարողության տարրերից մեկի չափազանցմամբ ներկայացնելն է դառնում անսպասելի ծիծաղի հենքը.

Թաղումից վերադարձած մի կին հարևանուհուն պատմում էր.

– Վա՛յ, Մարգո՛ ջան, ընքա՛ն մարդ կար, ընքա՛ն մարդ, որ մեռելն էրկու փեղ ին

⁶⁷⁸ Մելիք-Սարգսյան Գ., Զվարճալիք, «Պարոյր Սևակ» հրատ., Եր., 2001, էջ 51:

դրել...⁶⁷⁹:

Գ. Թարվերդյանի գրառած զվարճախոսություններից մեկում էլ **փոխաբերության** միջոցով հոգևոր առաջնորդի և ժողովրդի դասային տարբերությունն է ընդգծում՝ դառնալով անսպասելի ծիծաղ առաջացնելու միջոց.

Մոկացիները իրենց պաշտպանության համար դիմում են Աղթամարի Խաչատուր կաթողիկոսին՝ հեղինակ խոսքերով.

– Վեհափա՛ն տէր. տու վոր կաս, մեր պոզ էշն իս. մենք էլ վոր կանք, քո պոչի տրկու ճանճերն ինք. հեփ տու քո պոչ թափ տաս, մենք տը պլավինք. մեր տեր չխո տյու յիս...⁶⁸⁰ :

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում նաև **փոխանունությունն** է անսպասելի ծիծաղի պատճառ դառնում: Հարսանեկան ծիսակարգի մաս կազմող խնամախոսության բազում դրվագներ դարձել են անեկդոտների առաջացման պատճառ: Դարերի ընթացքում աղջիկ ուզելիս ժողովուրդը պատկերավոր խոսքով նպատակը ներկայացնելու տարատեսակ ձևեր է «մշակել», որոնցից մեկն էլ *ծեռքը խնդրել* դարձվածքով է արտահայտվել:

Անսպասելի ծիծաղ հարուցելու համար այս կայուն կապակցությունը անեկդոտում բացվում է: Պատասխանը մերժողական չէ. խնամին մաս-մաս տանելուն դեմ լինելով՝ շուկայական մեծածախ առևտրի ժամանակ կիրառվող գործարքային բառապաշարի միջոցով առաջարկում է *բիրիք*⁶⁸¹ տանելու տարբերակը.

Երևանից գնում են Աբարան՝ աղջիկ ուզելու: Խնամոնց տուն մտնելով՝ պատկերավոր ներկայացնում են գալու նպատակը.

– Մենք եկել ենք ձեր աղջկա ձեռքը խնդրելու:

Աղջկա հերն ասում ա.

– Մեր աղջկան մենք մաս-մաս չենք տալիս, թե տանում եք, բիրիք տարեք...

⁶⁷⁹ Լոռվա զվարճապատումներ, հավաքեց և մշակեց Ս. Ճշմարիտյանը, Գյումրի, «Կուժայրի» հրատ., 1992, էջ 11:

⁶⁸⁰ ՀԱԻ-ի արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, FF:1, 4469:

⁶⁸¹ **Բիրիք** (թրք.) – ամբողջությամբ:

(ԱՍՇՀ)

Որոշ զվարճախոսություններում էլ արտահայտչության միջոցներից **բառախաղն** է նպաստում զավեշտի ստեղծմանը: Մեծերի բառախաղով արտահայտված խոսքը մեծ մասամբ նպատակադրված է: Ահա բառախաղով արտահայտված մի քանի նմուշ.

Անդոն ասում է. // – Կև'ի, էն օրը հո'նց մընացիր սկուպոյ⁶⁸² Արշակի տանը: //

– Ստի'պված: // – Վերչը', հո'նց ընթունեց... // – Ստի'պված⁶⁸³:

Կամ էլ՝ Լոռեցուն ասմեն' // – Հոքիներից վախըմ ե'ս: // Ասմա' // – Դե նայած'

քանի հոքի ա: (ԱՍՇՀ)

Ստորև ներկայացվող բառախաղով զվարճախոսությունը էլ ավելի է բացահայտում մարդկային բնավորությունը.

Երկու ընկեր զրուցում են. // – Հրանտ, որոշել եմ բեղ պահել:

– Որ հորդ էլ պահեիր, վապ չէր լինի, – ասում է ընկերը⁶⁸⁴:

Անսպասելի զավեշտի դրսևորմանը նպաստում է նաև **բառախաղ-հանգախաղը**.

– Լսի'ր, ծխելը ո'նց թողիր: // – Շապ տվի-առա, տեսա' անձիս վնաս ա, գանձիս

վնաս ա, տանձիս վնաս ա, անմիջապես թողեցի: (ԱՍՇՀ)

Բանագետ Վ. Սվազյանի գրառած «Հօփն ու Թօփը» երգիծապատումում բառախաղն ինքնատիպ ու հետաքրքիր դրսևորում է ստացել. թե' անձնանունների ընտրությունը, թե' գործողություններն ու հանգուցալուծման ժամանակ հերոսի բառախաղային մտորումը, անսպասելի ծիծաղի հենքն են դառնում.

*– Հօփը գիդէ, քի Թօփան քԲվն իմ, Թօփն ա գիդէ' Հօփան քԲվն իմ. չին գիդիր, քի քօքան⁶⁸⁵ մէչն իմ⁶⁸⁶: **Տե'ս Հավելված 3, թիվ 64:***

Զվարճապատում-զվարճախոսություններում զավեշտի առաջացման միջոց է

⁶⁸² **Սկուպոյ** (ռուս.) – ժլատ, գծուծ:

⁶⁸³ Կատակում է Գորիսը (Գորիս քաղաքի և շրջանի ժողովրդական սրախոսություններ և անեկդոտներ), Հավաքեց, մշակեց ու կազմեց Լևոն Սահակյանը, «Մուշ» հրատ., Գորիս, 1994թ., էջ 7:

⁶⁸⁴ Կատակում են մովսեսցիները, Գրառողներ՝ Ա. Պապյան, Հ. Պապյան, Եր., «Նոյյան տապան» հրատ., 2012, էջ 79:

⁶⁸⁵ **Քօքան** – ք...քի:

⁶⁸⁶ **Սվազյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 64:

դառնում նաև բառային **կրկնությունը**.

- *Լոռեցի Ռուբենը հարևանին հարըցնում ա.// – Ըսօր ի՞նչ կինո կա: //*
- *Խելակորույս, խելակորույս, խելակորույս ... //*
- *– Այդա՛, դե մին ասիր, հըսկացա, էլի, – ասում է Ռուբենը⁶⁸⁷: (ԱՍՇՀ)*

Հայերենի բարբառներին, ժողովրդախոսակցական լեզվին հատուկ է կարճառոտ ու պատկերավոր խոսքը, իսկ դրան նպաստում է միմյանց հետ հաղորդակցվելիս հաճախակի կիրառվող արտահայտչամիջոցներից մեկը՝ **զեղչումը**:

Բանավոր խոսակցության ժամանակ բառ-բառակապակցությունների զեղչումը նպաստում է խոսքը անկեղծ, անկաշկանդ ու անմիջական դարձնելուն: Սակայն երբեմն մեծերի կամ փոքրիկների կողմից զեղչման կիրառությունների ժամանակ զավեշտալի միջադեպեր են ստեղծվում, ինչն էլ հանգեցնում է բազում անեկդոտների առաջացման: Ստորև ներկայացվող օրինակներով տեսնենք՝ կամա թե ակամա զեղչման ի՞նչ հնարանքներով է հնարավոր լինում անսպասելի ծիծաղ առաջացնել:

Ժողովրդական խոսքային կառույցում **հոգս** բառի զեղչումը խոսակցի մոտ անմեղ կիրառությունը «վերափոխում է» ասելիքի այլ՝ բամբառակ իմաստով արտահայտության: Լոռեցի երկու կանանց երկխոսություններից մեկում այն ակամայից անսպասելի ծիծաղի առաջացման տեղիք է տալիս՝ դառնալով իրականության հենքի վրա ստեղծված ինքնատիպ մի զվարճախոսություն.

Շնողնեցու հարսը բողոքում է ամուսնու ազգականին.

– *Կեսուրս երկու կովը վի կալավ (վերցրեց) ու սարը գնաց:*

– *Ախչի՛, բա ռեխանցը տարել չի՞:*

– *Տարել ա, համա բախչեն՝ վրես, թուխսը՝ վրես, քեռին՝ վրես, էշը՝ վրես:⁶⁸⁸*

(իմա՛ այգուն, թուխսին նայելու, հետևելու հոգսը, քեռուն պահելու, խնամելու հոգսը, էշին նայել-պահելու հոգսը – ԱՍ)

⁶⁸⁷ 1960-ականների վերջին Կիրովականում (այժմ՝ Վանաձոր) ամերիկյան «Խելակորույս, խելակորույս, խելակորույս աշխարհ» կինոնկարն էր ցուցադրվում:

⁶⁸⁸ **Բաբայան Ա.**, Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007, էջ 65:

Ժողովրդախոսակցական լեզվում բայական անդամի զեղչումը կարող է այլոց կողմից վիրավորական իմաստով ընկալվել: Գորիսյան զվարճախոսություններից մեկում նախագահի խոսքն ավարտվում է այսպես.

– *Վըջխարի տղեքը մնան* (նկատի ունենալով ոչխարներ պահող տղաներին), *մնացածնին ա՛զադ են*⁶⁸⁹:

Ժողովրդական խոսքում քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ զեղչվում է ոչ թե բառը, այլ մի ամբողջ բառակապակցություն, ինչը ևս կարող է նպաստել արտաքուստ անմեղ ու միամիտ խոսքը վերածելու բամբառակ՝ գոեհիկ խոսքի: Ժողովրդական երգիծապատումներում հենց նմանատիպ կառույցներն էլ դառնում են անսպասելի ծիծաղի առաջացման հենքը.

Գյուղացիներից մեկի հոգեհացին տերտերը միանգամից դադարեցնում է ուրելը: Այս ու այն կողմից անհանգստանում են.

– *Տե՛ր հայր կեր, ինչի՞ էդքան շուտ հետքաշվեցիր...*

– *Չէ, ես ինչքան պետք էր, կերա վերջացրի, հերիք է:*

– *Բայց ինչքա՛ն կերար որ, տե՛ր հայր:*

– *Չուրի տիրոխնու ծակը կերել եմ, բոլ ա:*

(իմա՝ մինչև տերտերակնոջ ցույց տված գոտու ծակը՝ անցքը-ԱՍ) (ԱՍՇՀ)

Փերիահայոց զվարճապատումներից մեկում ևս զեղչման արդյունքում ասելիքը վերածվում է բամբառակ խոսքի: Ձեղչմամբ անսպասելի ծիծաղ առաջացնող պատումն առնչվում է նաև հոգևորականի տգիտությանն ու մոռացկոտությանը: Անցորդի՝ «Օրինայ տէր» խոսքին հաջորդող «Աստուած քեզ օրինի» պատասխանը անընդհատ մոռացող քահանան այդ գրությունը շորի տակից ամրացնում է ու անհրաժեշտության դեպքում նայում: Մի օր էլ, չգտնելով գրությունը, ասում է.

– *Փեշխ տակինը քեզ օրինի*⁶⁹⁰: ***Տե՛ս Հավելված 3, թիվ 65:***

⁶⁸⁹ **Սահակյան Լ.**, Սրախոսություններ և անեկդոտներ, Գորիս, «Մուշ» հրատ., 1994, էջ 18:

⁶⁹⁰ **Մինասեան Լ.**, Գիւղական բառ ու բան, (Փերիա գաւառ), Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ վանքի տպարան, 1998, էջ 388:

Քավորը ընտանիքի համար սրբություն է, ու անեկդոտում բառազեղչումը ակամայից այլ ուղղությամբ է տանում միտքը.

– *Էս խի՞ էսքան ուշացար, քավո՛ր ջան, աչքներս ջուր կտրեց դռանը մտիկ տալով, – նրան է դիմում քեռի Խաչոն:*

– *Դուզ ա ասըմ, քավո՛ր ջան, – խոսքը շարունակում է Խաչո քեռու կինը, – ամեն անգամ, երբ շունը հաչըմ ա, հենց գիտեինք, թե դու ես*⁶⁹¹: (Զեղչված է գալիսը-ԱՍ)

զ. Անգ(ք)ամ բառի համանիշությամբ և զեղչման հնարանքով ստեղծված երգիծական մանրապատումը նոր ժամանակների՝ 1990-ականների սոցիալական վիճակի կտրուկ վատացման և գործազրկության անմիջական արձագանքն է: Հանուն նյութականի, հանուն փալաս-փուլուսի թե՛ Հայաստանում, թե՛ մասնավորապես Արևելքի երկրներում մարմնավաճառությամբ զբաղվող կանանց քանակը կտրուկ աճեց, ինչը ժողովրդի մեջ զգվանք ու զայրույթ առաջացրեց, տեղիք տալով նաև անեկդոտների ստեղծման:

Արտասահմանից վերադարձած կնոջ հագին աչքի ընկնող նոր բան տեսնելիս մարդիկ հարց էին տալիս. «Տեսնես ինչքա՞ն է տվել»՝ նկատի ունենալով թե՛ շորի արժեքը, թե՛ մարմինը վաճառելը (այսինքն՝ քանի՞ անգամ)՝ անգամը ևս դասելով դրամական միավորների շարքում: (ԱՍՇՀ) ***Տե՛ս Հավելված 3, թիվ 66:***

Հայերեն բանավոր խոսքում առկա բառազեղչումը օտար միջավայրում ևս կարող է հանգեցնել տվյալ լեզվի բառային համանունության՝ դառնալով անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ.

Արտասահմանում ընտանիքով ԽՍՀՄ-ի դեսպանատան աշխատողների շենքում տեղավորված հայ ընտանիքի ամուսինը ամեն անգամ գործի գնալիս դուռը ծածկում էր ու կնոջն ասում.

– *Ռուզա՛ն, դու՛ռը: (Իմա՛ դուռը փակիր, փակիր-ը զեղչված է)*

Մի օր էլ ռուս հարևանուհին հարցնում է Ռուզանին.

⁶⁹¹ Լոռվա գվարճապատումներ, հավաքեց և մշակեց Արամայիս Քոչինյանը, Գյումրի, «Կումայրի» հրատ., 1992, էջ 13:

– Ես չեմ հասկանում, երբ մեր ներկայությամբ է, ամուսինդ քեզ հետ շատ կիրթ ու քաղաքավարի է, բայց ինչու է ամեն աշխատանքի գնալիս քեզ վիրավորում:

– Ո՞վ ասավ, նա երբեք ինձ մի թթու խոսք չի ասած:

– Բա ինչի՞նչ ամեն անգամ գործի գնալիս քեզ ասում. «Ռուզա՛ն, դուռը»⁶⁹²:

(ԱՍՇՀ)

3.13. Անսպասելի ծիծաղի դրսևորման այլ միջոցները

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում մեծ քանակ են կազմում նաև այնպիսի նմուշները, որոնցում անսպասելի ծիծաղի դրսևորմանը նպաստում են են ոչ թե լեզվական-քերականական, այլ ուրիշ միջոցներ ու հնարանքներ: Այդպիսիք կարող են դառնալ **հաշիվ-հաշվարկները, ծածկախոսությունը, բան-իք-իրքյան կիրառությունները, սինկրեթիզմ-համադրողականությունը, բանաձևերը, ֆիզիկական արարները՝ խլությունը, արամնաթափությունը, կակազելը և այլն:**

Հայկական երգիծական մանրապատումներում առանձնանում են այնպիսի ստեղծագործությունները, որոնցում անսպասելի ծիծաղը դրսևորում է տարատեսակ **հաշիվ-հաշվարկների** միջոցով: Այսպես՝

Վասպուրականցիների պատումներից մեկում երկու կաճեսցու՝ քաղաքում կատարած առևտրի սովորական հաշվարկն է դառնում զավեշտի հենքը.

– *Տաս փարա տվինք, գացինք տկլոզտուն (պաղնիս): //– Տաս փարա տվինք, առանք՝ էն, ինչ որ ես վար քի լացի, տյու վար զի լացիր (տաճիյ բյութա): //– Տաս փարա տվինք, առանք էն, ինչ չանց հիմ աստված, չանց քու աստված քաղցր էր (չամիչ)*⁶⁹³:

Տե՛ս Հավելված 3, թիվ 67:

Զվարճապատումներում զավեշտի հենք հարող է դառնալ նաև *կեղծ հաշվարկը*:

⁶⁹² **Дурак**, ժողովրդախոսակցականում՝ **дуро՛ դուռը** (ռուս.)-հիմար:

⁶⁹³ Ծիծաղում են վանեցիները, Կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Ձանգակ-97» հրատ., 2006, էջ 175:

Որոշ դեպքերում այն բարի նպատակով է կատարվում, ինչպես Կ. ք. Գալֆայանի հրատարակած «Բալասան տայուն հաշիվը» զվարճապատումում: Երեք ամիս անց հարսը տղա է ունենում, և «*տղուն արը-նամուսը չավրելու*» համար գտնվում է «հաշվագետ» Բալասան տային, որը հանդարտեցնում է բոլորի մտքերը, վերջ տալիս բամբասանքներին, և «*հարս ու փեսա մնում են արով-նամուսով*»: Ահա այդ զվարճապատումի առանցք հանդիսացող զավեշտալի հաշվարկը.

– *Մտի'կ ըրեք, հաշիվը աս է. փեսին ամուսնությունը հարսին հետ կընե 3 ամիս, 3 ամիս ալ հարսին ամուսնությունը փեսին հետ. եղավ 6: Աննող ամիս, այս ամիս և գալող ամիս՝ 3 ալ աս, կընե ճիշդ ու ճիշդ 9 ամիս...: Պրծավ գնաց*⁶⁹⁴: **Տե՛ս Հավելված 3, թիվ 68:**

Երգիծական մանրապատումներից մեկում էլ կաշառքի շնորհիվ եպիսկոպոսի կեղծ հաշվարկով *յոթ պորտն* անցնելը այրիացածին հնարավորություն է տալիս ամուսնանալ քենու հետ⁶⁹⁵: **Տե՛ս Հավելված 2, թիվ 19:**

Զավեշտ կարող է առաջացնել **ծածկախոսությունն** իր տարատեսակ դրսևորումներով: Այսպես՝

Երգիծապատումներից մեկում զավեշտի հենք է դառնում «Գնանք գրադարան՝ գիրք կարդանք» ծածկախոսությունը: Քյավառյան անեկդոտաշարում օտարների ներկայությամբ կիրառվող այդ ծածկախոսությունը, բնականաբար, պետք է առնչվեր խմելու գործողությանը: Խանութը փոխարինելով գրադարանով, օղին՝ գրքով՝ «*Գնանք գրադարան՝ գիրք կարդանք*» գաղտնախոսությունը նպատակ ունի «փրկել» քյավառցու վարկաբեկված հեղինակությունը: **Տե՛ս Հավելված 3, թիվ 69:**

Զվարճապատում-զվարճախոսություններում զավեշտի միջոց է դառնում նաև **նամակ-ծածկախոսությունը**: Այս բնույթի նմուշներն առնչվում են հիմնականում քաղաքական թեմային՝ կապված հայրենադարձվածների հիասթափվածության և տաղտկալի

⁶⁹⁴ Գիրք առակաց, պատրաստեց Կարապետ քահանայ Գայֆաեան, Լիբանան, Բեյրութ, 1957, էջ 141-142:

⁶⁹⁵ Անեկդոտներ, հատոր Բ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տիփսիս, տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877, էջ 37-38:

իրականությունը արտասահմանում գտնվող իր հարազատին ծածկախոսությամբ ներկայացնելու հանգամանքով:

Նամակներից մեկում հայրենադարձն այդ իրականությունը արտահայտում է գովասանքի խոսքերով՝ սակայն վերջում ավելացնում է. «Ես ասանկ կսեմ, դուն անանկ հասկացիր»: Անվտանգության աշխատակիցները այդ նախադասության իմաստի հետ կապված բացատրություն են պահանջում:

*– Այս ի՞նչ բան է, – տարակուսում է հայրենադարձը, – վեց էջ ձեր անունից գրած եմ, երկու բառ ալ իմ կողմից չե՞մ կրնա ավելացնել⁶⁹⁶: **Տե՛ս Հավելված 3, թիվ 70:***

Բանագետ Վ. Սվազյանի գրառած «Նոր էկոդի նամակը» զվարճախոսությունում այդ ծածկախոսությունը այսպես է դրսևորվել.

Նոր էկոդ մարդուն մեկը նամակ կգրե արտասահմանի իր բարեկամներուն. «Հոս մեր կյանքը շա՛տ ուրախ կանցնի. ամեն օր ուրախանալու առիթ մը ունինք. օր մը հերթ կկայնինք՝ կես կիլո շաքա՛ր կառնենք՝ կուրախանանք, մյուս օրը հերթ կկայնինք՝ կես կիլո կարա՛գ կառնենք՝ կուրախանանք... Ճիշտը ըսելով՝ հոնտեղը ա՛ս տեսակ ուրախությո՛ւններ դուք չունիք»⁶⁹⁷:

Հայրենադարձությանն առնչվող մեկ այլ ծածկախոսություն այսպես է ներկայանում.

Մի ախպար գալիս ա հայրենիք: Ինչքան էլ հարազատները փորձում են համոզել՝ չգնալ, չի լինում: Ատում են.

– Լավ, գնա, որ լավ եղավ, մեզ գրի, մենք էլ կգանք: Բայց որպեսզի ԿԳԲ-ն չհասկանա, վատը որ լինի, կգրես՝ աղջիկ ունեցանք, որ լավը լինի, կգրես՝ տղա ունեցանք:

Էս մարդը տեղ ա հասնում ու մի երկու ամիս հետո նամակ ա գրում. «Հարազատներս, տղայի էինք սպասում, աղջիկ ունեցանք, էն էլ՝ զույգ»: (ԱՍՇՀ)

Երբեմն էլ ծածկախոսությունը թաքնված է լինում երկխոսությունը վարողների

⁶⁹⁶ «Եղինջ» երգիծական հանդեսի հավելված, Եր., 1995, էջ 73:

⁶⁹⁷ **Սվազյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 113:

խոսքում.

Մերն ասում ա. //– Իմ բա՛լեն ա գալի: // Հերն ասում ա. //

– Էն ու՛մ բալեն ա գալիհի՛... (ԱՍՇՀ)

Թե՛ արևելահայոց, թե՛ արևմտահայոց բանավոր խոսքում **բան** (իք)-**իրք** բառի հաճախակի կիրառությունը պատճառ է դարձել մի շարք անեկդոտների ստեղծման՝ դրանք դրվելով որոշակի բառիմաստային կաղապարի մեջ: Ասելիքն ականա վերածվում է գաղտնախոսության, իսկ խոսակցի կողմից դրա շատ հանգիստ «վերծանում-ընկալումը»՝ անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ:

19-րդ դարի 80-ականների վերջին «Նոր Դար»-ում տպագրված թումանյանական գրառումներից մեկը բազմաստիճան երկխոսական կառույցով է զավեշտն արտահայտում: Չնայած այստեղ արտաբերողի խոսքի մեջ իմաստը ներկայացվում է իբրև ընկալելի միավոր, այնուամենայնիվ երիտասարդ գրառողը բացում է փակագծերը, այսպես ասած, «թարգմանում է», այլապես ընթերցողը չէր կարող հասկանալ ասելիքը.

Լոռըցի հովիվը ձայն է տալիս մի սարից դեպի մյուսը, իրեն ընկերին.

– Հե՛՛յ Համբո՛՛, Համբո՛՛, ադա՛՛, քե մատադ, էն ըբանց ըքին ասա՛՛ ձեր իքն ըքել ա, իքա ըքել, եկեք ըքեցեք, թե չէ էն իքը կը գա կ՛ըքի, կասեք՝ դուք եք ըքել՝, այսինքն, էն Մարկոսանց Դուկասին ասա՛՛ ձեր էձը ծնել ու է բերել, եկեք տարեք, թե չէ գայլը կը գա կուտի, կասեք՝ դուք եք կերել⁶⁹⁸:

Ահա **բան**-ի յուրաքանչյուր մեկնաբանությամբ լրոշեցու մի զվարճախոսություն ևս՝ տպագրված Հովի. Թումանյանի գրառումից շուրջ մեկ դար անց.

Համբարձումը խոտի դեզի վրայից ձայնում է կնոջը.

– Ախչի՛, Վարդո՛ւշ, օրը ճաշ դառավ, էդ բանը բանովը տուր, բան արա, որ գամ բան անեմ: // Կինը փնթփնթաց. // – Այ սիրտդ սևանա, հա՛, ոնց էլ հիշում ա, որ չորս ձու ա մնացել տանը⁶⁹⁹:

⁶⁹⁸ Թումանյան Հովի., ԵԼԺ՝ 10 հատորով, հատոր 5, Եր., «Գիտություն» հրատ., 1994, էջ 581:

⁶⁹⁹ Պատմում և կտակում ի Գալուստ Գալստյանը, Հավաքել և վզմել է ԵԼՆա Անթառանյանը, Եր., «Վերնատուն», 1994, էջ 32:

Արևմտահայոց շրջանում **բան** – **իրք**յան կառույցով բամբառակ խոսքի դրսևորում է արձանագրել Ս. Ազնավուրյանը «Իրքը» գվարճախոսությունում.

Չիյտեմ ինչեանը դրացիին հանդիպելով.

– Կնիկդ կինս իրք ըրեր է (անարգեր է), – ըսաւ:

– Ի՞նչ իրաւունք ունէր կնիկդ կնկանս իրք (ջլթիկ⁷⁰⁰)՝ ըսելու:

– Փողոցին մէջտեղը ես քու կնկանդ բերանը իրք կընէի (կը պատռէի), տուա ըրէ (աղօթել) իմ կնկանս իրքին (աղաչանքին), – պատասխանեց առաջինը⁷⁰¹:

Արևմտահայոց մեջ զավեշտ առաջացնող **իրք**յան հաղորդակցությունը խտացվել է ոչ թե այս կամ այն անհատի, այլ մի ամբողջ տարածաշրջանի մարդկանց՝ ուրֆահայերի խոսքում.

– Ուրֆացիին հայերէնը լսած կա՞ք:

*– Էլլանք գացինք իրքոնց տունը, իրքուն տղան դէմիս էլլաւ. ինծի էնենց իրք մը էրաւ, գիտես ես իրեն իրքուն իրքն էի:**

** (Ելանք գացինք իրքենց տունը, իրքին տղան դէմս էլլաւ. ինծի այնպէս իրք մը ըրաւ, կարծես ես իր իրքին իրքն էի: «Իրք»ը՝ անորոշ գոյական է)⁷⁰²:*

Մի շարք երգիծական մանրապատումներում և գվարճախոսություններում անսպասելի ծիծաղի դրսևորմանը նպաստում է ոչ միայն խոսքն իր բազմաբնույթ միջոցներով ու հնարանքներով, այլև **սինկրեպիզմը**⁷⁰³՝ արվեստի տարբեր տեսակների (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ և այլն) համադրությունը: Վարպետ անկողնոտասացը միայն դրանց կիրառությամբ կարող է ասելիքն իր ողջ հմայնքով փոխանցել ունկնդրին:

Ինչպես երաժշտական նոտաներն ի զորու չեն մեր ժողովրդական երաժշտության ողջ հմայքն ու հարստությունը, ելևէջների ամբողջ համակարգը վերարտադրել, այնպես էլ հայերենի նման հարուստ և ճկուն լեզուն՝ իր կետադրության և առոգանությամբ

⁷⁰⁰ **Ջլթիկ** – անբարոյական, լիրք:

⁷⁰¹ **Ազնավուրեան Ս.**, Հեքիաթներ, զուարճալիքներ, ԱՄՆ, Միչիկըն, Տիպորն Հայթս, 1971, էջ 144:

⁷⁰² Միջգաւառական անեքթոտներ, Վերադասավորությամբ և նոր նյութերի լրացումներով, Հաւաքեց եւ ներկայացուց Յ. Չոլաքեան, Վ. Քասունի, Բ տպագրութիւն, Հալեպ, 2005, էջ 91-92:

յան նշանների միջոցով չի կարող արձանագրել անեկդոտասացի բանավոր խոսքի արտասանական նրբերանգներն ու դրանց աջակցող արվեստի տեսակների համադրողականությունը:

Իսկապես, հայ ժողովրդական երգիծապատումներ և զվարճախոսություններ կան, որոնք առանց արվեստի մի քանի տեսակների համադրության, մանավանդ թատերարվեստի արտահայտչաձևերի՝ մարմնի տարբեր մասերի (գլխի, իրանի, ձեռքերի, ոտքերի) շարժումների, դեմքի (միմիկայի, աչքերի «խաղի»), ձայնի ելևէջների (մասնավորապես բարբառային համապատասխան հնչերանգը ներկայացնելիս), բարձր ու ցածր արտաբերելու, հնչյունների տատանումները ընդգծելու (մանավանդ կակազությունը) և այլ միջոցների զուգակցման ասելիքը կկորցնի իր համն ու հոտը:

18-րդ դարի գերմանացի դասական գրականության հիմնադիր, արվեստի տեսաբան Գոտտոլդ Լեսինգն իր «Էմիլիա Գալոտտի» դրամայում Կոնտիի բերանով այսպես է ներկայացրել *աչքերով տեսածի և վրձնով այդ տեսածը վերարտադրածի ընդգծված տարբերությունը*. **«Եթե մենք կարողանայինք անմիջապես աչքերով նկարել: Գիտե՞ք՝ որքան շատ բան է կորչում աչքերից դեպի ձեռք, դեպի վրձին տանող երկար ճանապարհին»**⁷⁰³:

Իսկ ինչքան շատ բան է կորչում ժողովրդական բանարվեստի նմուշները, մասնավորապես անեկդոտները բերանից մինչև ունկնդիր, այնուհետև մինչև թուղթ ու գրիչ տարածությունն անցնելիս... Ահա այդ *տարածությունը* հաղթահարելու համար անեկդոտասացի ասելիքը, խոսքը ունկնդրին հասցնելուն օգնության են գալիս արվեստի մյուս տեսակները, իսկ թղթին հանձնելիս՝ հայերենի կետադրական և առոգանության նշանները, որոնք, ցավոք, երաժշտական նոտաների պես ի զորու չեն վերարտադրելու հայոց լեզվի, մասնավորապես նրա բազմաթիվ բարբառների արտաբերումները:

Ասածը հաստատելու համար այստեղ մի քանի անեկդոտների օրինակով անդրադառնանք ասացող-ունկնդիր հարաբերությունների ժամանակ սինկրետիզմի

⁷⁰³ Լեսինգ Գ., Դրամաներ, թարգմ. գերմ՝ Հ. Հակոբյանի, «Հայաստան» հրատ., Եր., 1970, 172 էջ:

«աջակցությանը»: Ստորև բերվող զվարճախոսությունում սաստիկ ցրտի պատճառով կարտոֆել վաճառող քյավառցու խոսքին, իբրև ցուցիչ, նպաստում են ոչ թե ձեռքերը, այլ մարմնի առաջնամասը՝ դառնալով զավեշտի առաջացման պատճառ.

Ձմեռ է, սաստիկ ցուրտ: Քյավառցին շուկայում մի տասը տակ շոր հագած, սպիտակ խալաթն էլ՝ վրայից, առաջը տարբեր չափսի երեք պարկ կարտոֆիլ դրած, ձեռքերը խալաթի գրպաններում, կանգնած է: Մեկը մոտենում, հարցնում է.

– Ի՞նչ արժի կարտոֆիլը: // – Խարիր (ծախ կողմի պարկը ցույց տալիս առաջնամասը փորի հետ առաջ պարզելով), խարիրիցուն (առաջնամասը փորի հետ առաջ պարզելով), էրկուխարիր (առաջնամասը փորի հետ դեպի աջ պարզելով), – առանց ձեռքերը գրպանից հանելու՝ ասում է քյավառցին: (ԱՍՇՀ)

Իսկ այս մյուս նմուշը սինկրետիզմի դրսևորման ինքնատիպ տեսակ է. այստեղ գործողություն կատարողը ոչխարն է, նմանակողը՝ մարդը, հենց այդ նկարագրությամբ վարպետ անեկդոտասացը պետք է կարողանա գրավել լսարանին ու շարժումներով ընկալելի դարձնել ասելիքը:

Եզդուն հարցնում են. //– Ի՞նչ արժի ոչխարդ: //Էս եզդին, գնորդի հագուկապը տեսնելով՝ ասում է. //– Հինգ հարուր դոլլար: // Ոչխարը գլուխը կողքի թեքելով ու ձեռքով դեմքը կողքահան փակելով, որ գնորդը չտեսնի իր արձագանքը, փոթկացնում է: (Այսինքն՝ ախորժակ-ախորժակ, էդքան է՞լ ախորժակ): (ԱՍՇՀ)

Կան նաև երգիծական բանարվեստի այնպիսի նմուշներ, որոնցում խոսքը և համադրողականությունը հավասարապես են նպաստում զավեշտի ստեղծմանը: Ստորև բերվող զվարճախոսությունում սովորական խոսքը ձեռքի և դիմախաղի տեղը չի կարող զբաղեցնել: Այստեղ զավեշտը վաղ ժամանակների կանանց համեստության ու գաղտնապահության և նոր սերնդի բերանբացության դրսևորման յուրատեսակ նկարագրությունն է՝ համապատասխան փաստ-վկայության հիշատակությամբ: Հին ու նոր ժամանակների հակադրությունը ներկայացվում է իրական մի դրվագի բացահայտման միջոցով, ինչն էլ դառնում է զավեշտի հենքը. Այստեղ գաղտնապահությունը հիմնավոր-

վում է ժողովրդի մեջ տարածված շարժումով՝ ձեռքի ափով բերանը փակելով և ը'հը ասելով:

Հարևաններով հավաքված խոսում են դեսից-դենից, իրենց ապրած ու հիմիկվա ժամանակներից, մեկը ջղայնացած դժգոհում է նոր ժամանակներից ու ջահելներից.

– Էս ի՞նչ ժամանակներ են, էս ի՞նչ ջահելներ են, էս ի՞նչ բերանբացություն ա: Մի բան չելած՝ սաղ աշխարհն իմանըմ ա: Ափսոս չէ՞ր մեր վախտը. իրեք ամսեն ամուսնացած ի, տեքրըս էկավ զոռով մտավ ծոցըս: Առ ըսոր՝ ը'հը, – ասում է ու իբրև գաղտնապահության նշան՝ մի ձեռքի ափով ամուր փակում բերանը: (ԱՍՇՀ)

Հայ ժողովրդական երգիծապատումների և զվարճախոսությունների մի խումբ էլ առնչվում է հարսանեկան ծիսակարգային տարրերից մեկին՝ **չխոսկանությունը**: Ըստ ավանդույթի՝ չխոսկան հարսը պետք է ասելիքը սկեսրայրին, տեգորն ու քավորին փոխանցեր կա՛մ այդ պահին ներկա գտնվող որևէ անձի միջոցով, կա՛մ էլ, եթե այդ հնարավորությունը չկար, ձեռքերի շարժումների ու դիմախաղի օգնությամբ: Նման «խոսակցությունների» հենքի վրա բազում անեկդոտներ են ստեղծվել: Դրանցից մեկում չխոսկան հարսի՝ ձեռքերի շարժումներով տեգորը նախազգուշացումները («մի ձեռի ցուցամատըն ու բութ մատըն օղ անելով՝ իբր սելի ակ, էն մի ձեռի ցուցամատըն էդ օղի միջովը տանըմ բերըմ ա, ուզմա ասի՝ ճիլիբը⁷⁰⁴ դուս ա գալի...») արդյունք չեն տալիս, և սայլի ակը ձորն է գլորվում՝ առաջացնելով հարսի ձեռքերի շարժումները բամբառակ գործողություն ընկալած տեգոր զայրույթը:

Անսպասելի զավեշտ առաջացնողը ոչ միայն չխոսկան հարսի՝ ձեռքերի շարժումներով նախազգուշացումներն են, այլև չխոսկանությունը ճարահատ խախտած հարսի արդարացումը.

– Ես ի՞նչ մեղավոր եմ... Բա էն որ մի էրկու հեթի ձեռներով հըսկացնըմ ի, դուն էլ հա ասեիր՝ համբերի, դիբը բըցրանանք, նոր, հըմի իմ մեխկն ըստի ո՞րն ա:
(ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 71:**

⁷⁰⁴ **Ճիլիբ** – սայլի ակը ամրացնող փայտե ձող:

Մեկ այլ զվարճախոսությունում «Գիտե՞ք՝ լենինականցու առավոտյան մարզանքը որն ա» հակիրճ հարցում-խոսքին հետևում է բերանը «մեծացնելու» համար ձեռքերի մատներով այդ «մարզանքի» ցուցադրումը՝ սկզբում՝ երկու ձեռքի ցուցամատներով բերանի երկու անկյուններից ձգելով, այնուհետև՝ շուրթերի մեջտեղից վեր ու վար ձգելը ցույց տալով: (ԱՍՇՀ)

Անեկդոտներից մեկում հիշողության կորստի պատճառով տրված հանձնարարությունը չկատարելու վախը հաղթահարվում է ձեռքերի շարժումների օգնությամբ, ինչն էլ մարդկանց մոտ տարօրինակության և զավեշտի տեղիք է տալիս.

Մի պառավ կնիկ փողոցով գնում ա ու անընդհատ ձեռը մեկ փանում ա աչքին, մեկ՝ առաջնամասին, հետո էլ՝ քամակին՝ ասելով. «Լույս , ջուր, գազ, լույս , ջուր, գազ, լույս, ջուր, գազ...»

– Ա՛յ փափի, էդ ի՞նչ ես ասում, հետն էլ՝ ձեռով էրեսըդ, առաջդ ու հետևըդ ցույց փալի, – հարցնում են անցորդներից: // Ասում ա՛ // – Բա ի՞նչ անեմ, էրեխե՛ք ջան, մերոնք գործի գնալիս ասել են. «Կգնաս փան լույսը, ջուրն ու գազը կմուծես»: Դե ես էլ մենձ կնիկ եմ, վախենում եմ մոռանամ. ասելեն գնում եմ...: (ԱՍՇՀ)

Մեր գրառած զվարճախոսություններից մեկում էլ շուրթերը նեղացնել-թաքցնելով և այդպես խոսելով է հնարավոր դառնում քիչ թե շատ ասելիքը տեղ հասցնել: Այսպես, երբ մեկը բաժակները բերնեբերան է լցնում, կատակով դիտողություն է արվում. «Տնաշե՛ն, գոնե պոռչի տեղ թող»: Ահա այս արտահայտությունն էլ պատճառ է դարձել հետևյալ զվարճախոսության ստեղծման.

Ուրե՛լ-խմելիս մեկը բաժակները անընդհատ բերնեբերան էր լցնում, որ մեկ էլ լցնում է, կողքինը դիտողություն է անում. // – Ա դե պոռչի տեղ թող, է՛լի: //

Ում բաժակը որ լցվել էր, անմիջապես շրթունքները սեղմած վրա է բերում, այնպես, որ շրթունքները չերևան.

– Ե՛շ պըրո՛շ չյունեմ...: (ԱՍՇՀ)

Եթե այստեղ *պոռչը* գրականացվի՝ փոխվելով *շրթունքի*, խոսքը կդառնա անհամ

և ծիծաղ չի առաջացնի: Առանց շրթունքները սեղմելու եթե ասվի՝ «Ես պոռչ չունեմ», էլի համ ու հոտից կընկնի: Ահա նման դեպքերում է օգնության գալիս սինկրետիզմ-համադրողականությունը և նպաստում անեկդոտի ասելիքի հնարավորինս լիարժեք տեղ հասցնելուն:

Զվարճապատում-զվարճախոսություններում զավեշտի առաջացման միջոց են դառնում նաև տարատեսակ **բանաձևերը**:

Քիմիական բանաձևերից մեկի՝ ջրի՝ H_2O -ի հենքի վրա ստեղծված երկու նմուշ է մեր ձեռքի տակ, որոնցից մեկը՝ բանագետ Վ. Սվազյանի «Կիլիկիա» ժողովածուում ընդգրկված զվարճապատումն է՝ կապված Թուրքիայի հայահալած քաղաքականության հետ: Այստեղ զավեշտի առանցքը ոստիկանության և սուլթանի անգրագիտությունն է՝ դրսևորված Թուրքիայում հայերի հանդեպ տիրող վերաբերմունքով: Քիմիական բանաձևը անեկդոտում ներկայացվում է իբրև սուլթանի դեմ ուղղված գաղտնագիր, ինչն էլ դառնում է հայկական դպրոցները փակելու պատրվակ.

Սուլթան Համիդին ականջը կիյնա, որ հայերը դպրոցին աշակերտներուն կտորվեցնեն՝ Համիդ Երկրորդը հավասար է գերոյի:

– Վա՛յ, շուն շանորդի հայե՛ր, – կըսե սուլթանը, – ադանկ է նե, քիմիական գիտության դասերը ասկե վերջ թող արգելվին դպրոցներեն ներս⁷⁰⁵: **Տե՛ս Հավելված 3, թիվ 72:**

Ջրի բանաձևի հենքի վրա ստեղծված մյուսը նմուշը քյավառյան խմելու անեկդոտաշարին առնչվող զվարճախոսությունն է:

Քյավառյան խոսվածքում ջրի բանաձևի՝ H_2O -ի արտասանությունը հանգեցնում է խաշի ֆորմուլային (*h-ն խ* արտասանության հետևանքով **haw₂**-ը փոխվում է **խaw₂**-ի, իսկ **ա**-ն կոշտ **o** արտասանությամբ արադ-**օրադ**-ի)

– Ո՛վ կանա խաշի ֆորմուլան ասա, – հարցնում է քյավառցի տանտերը խաշի սեղանի մասնակիցներին:

⁷⁰⁵ Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 103:

–

– **H₂O₇' խոսա₂ երկու** (երկու աման խա₂), **O₇** (օրաղ՝ յոթ բաժակ):

Ֆիզիկայի բանաձևի (**Պի, էռ, քյու**) անդամներից մեկի և Ղարաբաղի բարբառով *քնել* բայի արագախոսությամբ արտաբերումը ևս հարանունության միջոցով հանգեցնում է բամբառակ զավեշտի: (ԱՍՇՀ) **Տե՛ս Հավելված 3, թիվ 73:**

Ճիշտ է, ֆիզիկական զանազան արատների հենքի վրա ստեղծված անեկդոտներ են հանդիպում նաև մի շարք ժողովուրդների երգիծական բանարվեստում, սակայն հայկական նմուշներն առանձննում են հայկականությունը հավաստող տեղանուններով, անձնանուններով, պատմա-ազգագրական, սոցիալ-տնտեսական և այլ կարգի իրողությունների դրսևորմամբ:

Հայկական զվարճապատում-զվարպախոսություններում զավեշտի հենք է դառնում նաև **խլությունը**: Այս թեմայով նմուշներում ֆիզիկական արատը կրողները հիմնականում տարեցներն են, և անսպասելի ծիծաղը դրսևորվում է երկխոսության միջոցով: Այն տեղի է ունենում կա՛մ խուլի և ոչ խուլի միջև, կա՛մ էլ՝ երկու խուլերի միջև:

19-րդ դարավերջին խուլի և հիվանդ բարեկամի միջև տեղի ունեցած զավեշտալի երկխոսության մի հետաքրքիր երգիծական մանրապատում է հրատարակել դպիր Ս. Շահազիզյանը⁷⁰⁶: Մինչև բարեկամի հետ հանդիպումը խուլը իրենց հանդիպման մոտավոր հարց ու պատասխաններն է «մշակում», որ հեշտ ընթանա զրույցը, սակայն հիվանդի վիճակը ծանր է լինում, և կատաղած հիվանդը ծրագրից դուրս պատասխաններ է տալիս՝ ինչի հետևանքով խուլի արձագանքները ծիծաղ են հարուցում, իսկ վերջում ասված օրհնանքը վերածվում է անեծքի⁷⁰⁷: **Տե՛ս Հավելված 3, թիվ 74:**

Խլությանն առնչվող մի պատում էլ՝ կրկին նախապես պատրաստած հարցուպատասխաններով ու կրկին Լոռուց գրառված, հրատարակվել է 2008թ.: Այստեղ էլ նախապատրաստությունը չի արդարացնում, և պղնձին վերաբերող հարցի փոխարեն

⁷⁰⁶ Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահազիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 116-117:

⁷⁰⁷ **Աստուած մաջին դուաթ տայ** – Աստված դաստակին ուժ տա:

կնոջից է հարցը լինում, և խուլի ծրագրած պատասխանը նորից անսպասելի ծիծաղ է առաջացնում.

– *Գո՛քոր, խե՛ր ըլի, իմ քիր Ելենին առավոտ շուտ էս ո՞ր ես փանում:*

– *Քամակը ծակվել ա, փանում եմ ուստեն սարքի*⁷⁰⁸: **Տե՛ս Հավելված 3, թիվ 75:**

Խուլի հետ հարցուպատասխանի մի հետաքրքիր նմուշ «Խուսափում եմ» բանաստեղծության մեջ օգտագործել է նաև Պ. Սևակը⁷⁰⁹:

Ֆիզիկական մեկ այլ թերության՝ **ափամնաթափության** պատճառով առաջացած սխալ հնչարտաբերումը ևս կարող է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ դառնալ.

Կիրովականցի Ռուբենին հարցնում են. //– Քա՞նի էրեխա ունես: // Ասմա՛ //

– *Շանաշարը, Շաշիկը, Շարո, Շրբուհիշ... // – Տնաշե՛ն, որ ափամներըդ ուզորա*⁷¹⁰ էրեխանցըդ անուններ դնեիր, չէր ըլի՞... (ԱՍՇՀ)

Թլիկության հենքի վրա ստեղծված նյութերի մեջ ազգային հատկանիշներով առանձնանում է *երեք թվատ քույրերի մասին* պատումը՝ կապված հայոց հարսանեկան ծիսակարգի արարողակարգերից մեկին՝ խնամախոսությանը: Ի դեպ, մի շարք տարածաշրջաններից այդ գվարճապատումի բազմաթիվ տարբերակներ կան թե՛ անտիպ⁷¹¹, թե՛ տպագիր աղբյուրներում, և բոլորի մեջ խնամախոսների ներկայությամբ թլիկությունը չբացահայտելու համար չխոսելու հանձնարարականն է տրվում, սակայն երեքն էլ չեն կարողանում ծնողի խնդրանքը կատարել:

Մեր ձեռքի տակ եղած Վանի տարբերակում քույրերի թվատությունը բացահայտվում է ջահրա-ճախարակի լարը կտրվելու պատճառով⁷¹², իսկ պոլսահայոց⁷¹³ և

⁷⁰⁸ **Քոչարյան Ա.**, Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ», 2008, էջ 8-9:

⁷⁰⁹ **Սևակ Պ.**, Երկերի ժողովածու՝ 6 հատորով, Հատոր 1, Եր., «Հայաստան» հրատ., 1972, էջ 432:

⁷¹⁰ **Ուզորա** – համեմատ:

⁷¹¹ ԳԱԱ ՀԱԻ-ի ազգագրության արխիվ, Վ Ղազարյանի ֆոնդ, Լոռի, Համգաչիման (Մարգահովիտ), թղթապանակ 87, Իրեք աղջիկը, էջ 73:

⁷¹² Ծիծաղում են վանեցիները, Կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, Կլվատ աղջկաներ, էջ 129:

⁷¹³ **Աճառյան Հր.**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 163:

նորնախիջևանյան⁷¹⁴ տարբերակներում՝ մկան հանկարծակի հայտնվելու հետևանքով:

Տե՛ս Հավելված 3, թիվ 76, թիվ 77, թիվ 78:

Լեզվական արատի՝ շնչեղ խուլերի՝ «ջ» հնչյունի «ց» և «ո» և «ր» հնչյունների «լ» արտաբերման ընդգծմամբ ներկայացվող զվարճախոսության զավեշտի հենքը թիկ աղջկա համբերատարությունն ընդգծող՝ «*համփելում եմ, ձեն ցեմ հանում*» արտահայտության մի քանի անգամ կրկնությունն է, իսկ զավեշտի գագաթնակետը՝ «ըմբոստությունն» արտահայտող խոսքը.

Մի թիկ աղջիկ պատմում ա գլխով անցածը.

– *Մի օլ կանգալում կանգնած էի, մի ավտո կանգնեց կողքիս, մի տղա իցավ, ձելիցրս բըլնեց, տալավ կողքը նստացլեց: Համփելում եմ, ձեն ցեմ հանում: Տալավ իլանց տուն, տալավ իլա սենյակը: Համփելում եմ, ձեն ցեմ հանում: Տալավ կողքը պալկացլեց: Համփելում եմ, ձեն ցեմ հանում: Բայց ոլ ալավոտը վել կացա, էլ ցրհամփելեցի, ասի.*
«Գիտե՛ս ինց կա, ես քու իմացած ախցիկնելից ցեմ, հասա՛...»: (ԱՍՇՀ)

Երբեմն էլ հայկական անեկդոտներում լեզվական արատի՝ **թիկության պատրանքի** ստեղծմամբ է զավեշտ առաջանում.

Երևանում մի կնիկ տաքսի ա կանգնացնում, թե՛

– *Վարպե՛տ ջան, կարա՛ս ինձ վռազ տանես Ջանգվի ձորն ու հետ բերես:*

– *Նստի՛, քո՛ւր ջան, – ասում ա վարորդը, – թունելով կտանեմ, թունելով կբերեմ՝*⁷¹⁵: // *էս կնիկն ասում ա. //*

– *Վա՛յ ես քեզ էլ մեռնեմ, քու թիկ լեզվին էլ, գնա՛ցինք:* (ԱՍՇՀ)

Ֆիզիկական մեկ այլ արատի՝ **կակազելու** պատճառով կտրտված հնչյուն-հնչյունախմբերով արտաբերված խոսքը ևս կարող է պատճառ դառնալ զվարճախոսության ստեղծման: Այս թեմայով անեկդոտները անցողիկ չեն: Թեման առկա է և՛ 19-րդ դարի երկրորդ կեսի, և՛ 20-րդ դարի հայկական անեկդոտների ժողովածուներում:

⁷¹⁴ ՀԱԲ, հատոր 2, Խ.Ա. Փորքեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, Թըլվադները, էջ 85:

⁷¹⁵ Երևանի կենտրոնից Ջանգվի ձորը գնացող թունելով կարճ ճանապարհ կա:

1988-ի երկրաշարժի հետևանքով աղետի գոտում կակազողների թվաքանակը, մանավանդ երեխաների շրջանում, բնականաբար, կտրուկ աճեց, ինչն էլ առիթ հանդիսացավ կակազելուն առնչվող նախկինում ստեղծված անեկդոտների ոչ միայն վերակենդանացման, այլև նորերի ստեղծման՝ արտացոլելով զուտ երկրաշարժյան տնակային ապրելակերպը.

Լենինականցին հարցընում ա լոռեցուն. // – Ախպե՛ր ջան, ուրդեղ կմնաս: //

– Դո-դո-դո- մի-մի-կու-կում: // – Ես էլ դոմիկում կմնամ, բայց իմը էդքան էրգար չէ: (ԱՍՇՀ)

Կակազելուն վերաբերող անեկդոտներում զավեշտը դրսևորվում է երկխոսությունների միջոցով, մի դեպքում երբ երկուսն էլ կակազող են.

Մի մարդ փողոցում անցորդներից մեկին կանգնեցնում, հարցնում ա.

– Ժը-ժա, ժա- մը-մը -քա-քա-նի-նի-նիս-նա: //– Հի, հի..նը-նը-նըն- գըն-գըն-ա: //

– Չը-չը-հա-հա-հաս-կա-կա-ցա, – զայրանում ա կակազողը, – էս-էս ի-ի-ինձ ձե-ձե-ռե-ռե՞ս ա-ա-առ-նու-նում.. (ԱՍՇՀ)

Մեկ այլ դեպքում երբ երկխոսողներից մեկը կակազող է, մյուսը՝ ոչ, և զավեշտ առաջացնողը ոչ թե կակազն է, այլ չկակազողի արտաբերած խոսքը.

Մի կակազող հարցնում ա անցորդներից մեկին.

– Կը-կը-կը-նե-նե-րեք, կա-կա-կա-զո-զո-ո-ո-ղ-նե-նե-րի դըպ-դըպ-րո-րո-ցը ո՞-ո-ո՞ր-տե-տե-ղա:

– Լավ էլ դայդին կակազում ես, էլ դպրո՞ցն ինչ ես անում...: (ԱՍՇՀ)

4.1. Հայոց մեջ կենցաղավարող զվարճախոսները, նրանց առնչվող անեկդոտների գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմությունը

Չափազանց զվարճաբան մարդկանց Եվդոկիայի հայերը **«մեռել խնդացնող»** են անվանել⁷¹⁶, իսկ պոլսահայերը՝ **«սափանա բռնող»**⁷¹⁷: «Հր. Աճառյանի անսահման հումորը, ըստ վկայությունների, գալիս էր նրա հորից, «որը Պոլսում հայտնի էր իր հումորով, կատակներով ու հնարամտությամբ. դրա համար էլ նրան **«սափանա բռնող» Հակոբ** էին ասում»⁷¹⁸:

Պատմական Արցախի Հադրութի և Մարտակերտի շրջաններում զվարճախոսներին, բացառությամբ Վանք գյուղի, անվանում են **զարափարչի, հանաքչի, շուլուխչի, գյափչի**, Վանքում՝ **«գյափի-գյուփի»**⁷¹⁹: Լոռիում նրանց **«հանաքչի», «շուլուխչի», «անակախոս»** են ասում, իսկ Տավուշի մարզի Կոթի գյուղում՝ **գափի մարդ: (ԱՍՇՀ)**

Համշենցի մահմեդական ջերմագցիների մասին ասվում է, որ նրանք ամենասարամիտներն ու քաջերն են, նաև՝ աղմկարարներն ու բարձրաձայն խոսողները՝ օգտագործելով նրանց բնորոշող **«Ջերմագցին բարխան ջուգալ քիլա գու»** (Ջերմագցին ժայռից կաթսա է գլորում) արտահայտությունը⁷²⁰:

Ովքե՛ր են անդրադարձել հայ և օտարազգի զվարճախոսներին ու նրանց շուրջն ստեղծված բանարվեստի նմուշներին, ինչո՞վ են առանձնանում զվարճախոսները, ազ-

⁷¹⁶ Պատմութիւն Եվդոկիոյ Հայոց, Գրեց Արշակ Ա. Ալպոյաճեան, Գահիրէ, Տպ. «Նոր Աստղ», 1952, էջ 1448:

⁷¹⁷ **Աճառյան Հր.**, Բանաստեղծություններ: Անեկդոտներ իմ մասին: Կազմեց և ձևավորեց Հրաչյա Աճառյան Կրտսերը, Եր., Գրակ. և արվեստի թանգարանի հրատարակչություն, 2008, էջ 14:

⁷¹⁸ Նույն տեղում, էջ 16:

⁷¹⁹ **Վարդանյան Սվ.**, Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից, ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, 1971, թիվ 8 (344), էջ 92:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, Եր., «Գիտություն» հրատ., 2001, էջ 231:

⁷²⁰ «Ձայն համշենական» ամսաթերթ, 2016, մայիս-հունիս, թիվ 5-6 (142-143), Գրառումը՝ բանագետ-ազգագրագետ Սերգեյ Վարդանյանի, Ղազախստան, Չիմքենդի մարզ, գ. Չիրկինո, Աջարիայի Բաթումին սահմանակից գյուղերից 1944թ. աքսորված կրոնափոխ համշենահայերից:

գային և օտար հերոսների կերպարներում ի՞նչ փոխներթափանցվածություն, փոխկապակցություն են նկատել ազգագրագետ-բանագետները, կոնկրետացված և հավաքական կերպարային ի՞նչ դրսևորումներով են նրանք աչքի ընկնում, որոշակի տարածքներ ընդգրկող «կերպարները» ի՞նչ նմանություններով և տարբերություններով են հանդես գալիս: Այս և այլևայլ հարցերին փորձենք պատասխանել հայ բանագիտության պատմության համատեքստում՝ համառոտ ներկայացնելով զվարճախոսներ ընդգրկող տպագիր գրականության առկա պատկերը:

Քանի որ 19-րդ դարի 40-60-ական թվականներից հայ մտավորականությունը քաջածանոթ էր մի շարք ժողովուրդների հրատարակած անեկդոտների ժողովածուներին ու օտարազգի զվարճախոսներ *Խոջա Նասրեդինին* և *Բալակիրևին* նվիրված գրքերին, հրապարակի վրա էին նաև դրանց հայերեն թարգմանությունները⁷²¹, հետևաբար սպասելի էր նաև հայության մեջ շրջանառվող հայտնի հայ և օտարազգի զվարճախոսների նյութերի հավաքման ու հրատարակության իրագործումը:

Դեռևս 1874թ. իր «Հազար եւ մի առակաւոր բանք, ազգայինք և օտարք» գրքի առաջաբանում **Գարրիել արքեպիսկոպոս Այվազյանը**, անդրադառնալով հայ և օտարազգի զվարճախոսներին վերագրվող որոշ նյութերի ընդհանրություններին, հնարավոր է համարում մի ազգից մյուսին փոխանցվելու գործընթացը. «Մեզի կերելի, թէ մեր ազգին մեծ մասին բերանը մինչեւ ցայժմ պտտող հայերէն առակներում ու առածներում գոնե մեկ մասը Խիկարայ Իմաստնոյ հնարածներն են, եւ Նասրետտին Խոճայի անունովը պատմուած առակներում և նոցա բերանը դրուած առածներուն մեկ մասն ալ մեր Խիկարայ Իմաստնոյ հնարածներն են, ինչպէս արդեն յայտնի է, որ չինաց Կոնֆուցեին, հունաց Եզոպոսին ու Դիոգենեսին, արաբացվոց Լոգմանին, տաճկաց Նասրետտինին առակներն ալ իրարու հետ շփոթած են, եւ մեկում հնարածը միւսին անունովը կհիշվի, ուստի եւ կարելի չէ համարձակ վճռել, թե այս կամ այն առակն ու առածը Խիկարինն է,

⁷²¹ Ծաղրաբանութիւնք Նասրետտին Խոճայի, թարգմ. ի գաղիերէնէ, Չմյուռնիա, տպագր. Տետեեան, 1858: Զուարճաբանութիւնք Բալակիրելի՝ պալատական զուարճախօսին կայսեր Ռուսաց Մեծին Պետրոսի, թարգմ.՝ ռուսաց լեզուէն Ավետիք Խազեգեանց: Ս. Պետերբուրգ, ի տպարանի Կայսերական ճեմարանի գիտութեանց, 1858:

թէ Եզրպոսին, թէ Նասրետտին Խոճային, թէ ուրիշ ազգային կամ օտար առակախօսի»⁷²²:

Գաբրիել Այվազյանը Խիկար Իմաստունին համարում էր Արծրունյաց Սենեքերիմ թագավորի օրոք (մոտ 1000թ.) ապրած անվանի զվարճաբան առակախօսը և ժողովրդական իմաստասերը⁷²³:

Փաստորեն արքեպիսկոպոս Այվազյանը շուրջ մեկուկես դար առաջ առաջին անգամ հայ իրականության մեջ խոսում է առակների, զվարճապատումների և իմաստախոսությունների՝ մի ժողովրդից մյուսին փոխանցվելու երևույթի մասին:

«Մանանա» ժողովածուում (1876թ.) **Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձությանցը** ևս կարճառոտ անդրադառնում է հայ և օտար զվարճախոսներին՝ հավաստելով, որ «*հայերն ալ իրենց համար Եզրպոսներ և Լաֆոնթեններ ունեցեր են*»՝ կրկին վկայակոչելով հայության շրջանում առակախոսության և իմաստախոսության հայազգի Խիկարին⁷²⁴: 1876թ. **Հովհ. Նազարյանցն** իր «Անեկդոտների» Ա հատորի *Հառաջաբանում* խոսում է

նաև եվրոպացի պատմական անձանց՝ Նյուտոնին, Վոլտերին, Նապոլեոնին, Լյուդովիկոս 14-րդին առնչվող անեկդոտների և հույն, թուրք ու ռուս զվարճախոսներ Եզրպոսի, Նասրեդինի և Բալակիրևի մասին⁷²⁵: Իսկ 1883 թվականին հրատարակած «Անեկդոտների» Գ հատորի *Հառաջաբանում* նա տեղեկություններ է հաղորդում թե՛ հայ, թե՛ օտար զվարճախոսների վերաբերյալ. «Թէպէտ այս գրքի մէջ մասնաւոր անձնաւորութիւններ շատ կան, բայց մենք կը բերենք այստեղ նոցանից այնպիսիների անունները, որոնց վերայ շատ անեկդոտներ ունենք: Դոքա են՝ Վանեցի Տէր Սարգիս, Ահարոն Վարդապետ, Ներսէս Ե. Կաթողիկոս, Վանա Ալիւր գիւղի Ռէս Կարապետ, Կ. Պօլսեցի

Յարութին ամիրայ Պէգճեան, Երեւանցի կօշկակար Ուստայ Աղաջան, Շամախեցի Թարոահ Բաղդասար, Դավրիժեցի Մահտեսի Թէոս, Տփխիսեցի Պառաւ Եօվանէ. – Սոկրատէս փիլիսոփայ, Աղէքսանդր Մակեդոնացի, Լուդովիկոս ԺԴ. Ֆրանսիայի թա-

⁷²² **Այվազեան արքեպիսկոպոս Գ.**, Հազար և մի առակաւոր բանք, Ազգայինք և օտարք, Կ. Պոլիս, 1874, Ժ-է:

⁷²³ Նույն տեղում:

⁷²⁴ **Սրվանձությանց Գ.**, Երկեր, հ. 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978, էջ 274:

⁷²⁵ Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, Հառաջաբան, էջ III:

գաւոր. Ոլտեր, Ֆրանկլին, Տարիկեան իշխան Պոտեմկին եւ Մոլլա Նասրէդդին⁷²⁶»:

Իսկ **Գ. Շիրմագանյանը** 1878թ. հրատարակած իր «Անեկդոտների» ժողովածուում ներկայացնում է հայոց շրջանում հայտնի **զվարճախոս գյուղերը**, «ուր ստէպ են կատարվում տարադէպ անցքեր և ծիծաղաշարժ իրողութիւններ կամ զրուցվում են զուարճալի խօսքեր, ինչպէս Երևանի գաւառի մէջ յայտնի են **Կարբեցիք** իրանց *հնարագիտութիւնովն* և **Ջրվեզցիներն** իրանց *պարզմտութիւնովը*: **Ղարաբաղ** հոչակուած են **Շուշի** գիւղացիներն իրանց *զուարճախօսութիւնովն* և **Հաթերքցիք** *պարզմտութիւնովն*, նոյնպէս **Ղարաղաղի Ողան** գեղացիներն, ինչպէս էլ **Հին Նախիջևանի Շամբեցիներն** և **Ախալցխայ Դամալայ** գեղի բնակիչներն երևելի են իրանց *պարզմտութիւնովը*, մինչև անգամ **Սպահանի** հայ գաղթականների մէջ յայտնի են **Բոլորանցիներն**»⁷²⁷:

Շիրմագանյանի ժողովածուում մեծ քանակ են կազմում պատմական դեպքերին (ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներ) նվիրված մանրապատումները, որոնց զվարճախոս հերոսները հայ (*Եփրեմ Կաթողիկոս, Մեսրոպ Թաղիադեանց, Իշխան Բեհրութեանց, Աղալար խան Էնակօլօփեան, Կնյազ Մադաթով և այլք*) և օտարազգի (*Երևանի Հուսեյն խան Սարդար, Գլադսօն, Բիսմարկ* և այլք) պատմական անձնավորութիւններ են:

Մակար վարդապետ Բարխուդարյանցն առաջինն է հայ իրականության մեջ, որ հետամուտ լինելով՝ իր ժամանակի ծերունիներից գրառել, ի մի է բերել իր ձեռնարկից ավելի քան յոթ տասնամյակ առաջ մահացած արցախցի հանրահայտ զվարճախոս **Պըլը Պուղու** մասին շրջանառվող պատումները՝ կենսագրական հակիրճ տեղեկություններով, հերոսների խոսքերում բարբառային առանձնահատկությունների պահպանմամբ, տողատակերում ներկայացվող հետաքրքիր բացատրություններով, Ղարաբաղի բարբառի համառոտ քերականությամբ և բարբառային դժվարամատչելի բառերի բառարանով, և 1883թ. հրատարակել է 189 միավոր նմուշներից բաղկացած մի ժողովա-

⁷²⁶ Անեկդոտներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 1:

⁷²⁷ Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմագանեանց, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, Թիֆլիս, 1878, էջ 6:

ծու⁷²⁸: Ի դեպ, զվարճախոս Պըլը Պուդին՝ 15 մանրապատումներով, առաջին անգամ ընթերցողին էր ներկայացել 1878թ. Գ. Շիրմազանյանի անեկդոտների ժողովածուում⁷²⁹:

Բարխուդարյանը գրքի *Հառաջաբանում* Պըլը Պուդու նյութերը հայի համար առավել արժեքավոր է համարում օտարազգի զվարճախոսների նյութերից, քանզի դրանք «*հայկական կեանքից բղխած լինելով՝ ավելի յարմար են հայկական սովորութեանց, հայկական բնավորութեանց, հայկական առփնին ընտանեկան կենաց, վարուց և բարուց*»⁷³⁰: Այնուհետև նա խոսում է ժողովրդական երգիծանքի նմանատիպ դրսևորումների խաղացած դրական դերի մասին. «*իբրև կեանքի օգտակար միջոցներից մին. քանզի զուարճաբանությունն գէթ առվայր մի կը փարատէ կը վանէ սրտամաշ մտածմունքը, կը ցրուէ հոգեկան մեղամաղծութիւնները և կը մեղմէ տխրութիւնը, մարմնական ցաւերը*»⁷³¹:

Մ. Բարխուդարյանցի ձեռնարկից երկու տասնամյակ անց՝ 1903թվականին, **Երվանդ Լալայանը** զվարճախոսներին նվիրված միանգամից երկու գիրք է հրատարակում, որոնցից մեկը Արևելքի հանրահայտ զվարճախոս Խոջա Նասրեդինին նվիրված ժողովածուն է՝ իր իսկ գրառած հարուստ նյութերով ու հեղինակային դիտարկումներով⁷³², մյուսը հայ մեկ այլ զվարճախոսին՝ Լոռիում հայտնի Հոբոսին առնչվող գրառումներն են⁷³³:

Երգիծապատումների 18 նմուշ պարունակող «Հոբոս» գրքույկի «Երկու խոսք»-ում նա նախ՝ համառոտ նկարագրում է ըմբոստ զվարճախոսի կարճառոտ կենսագրականը, Բորչալուի գավառի Ճոճկան գյուղից Շնող տեղափոխվելու նրա պատմությունը,

⁷²⁸ Պըլը-Պուդի, գրեց Մ. Վ. Բարխուդարեանց, Թիֆլիս, Մով. Վարդանեան եւ Ընկ. տպարան, 1883:

⁷²⁹ Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, Թիֆլիս, 1878:

⁷³⁰ Նույն տեղում, Հառաջաբան, էջ Դ:

⁷³¹ Նույն տեղում, էջ Գ:

⁷³² Ժողովրդական առակներ. Ա. Մովսէս Նասր – էդ – դին, Հավաքեց՝ Ե. Լալայեան, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1903, 256 էջ: Զվարճախոս Խոջա Նասրեդինի կերպարի վերաբերյալ Ե. Լալայանի դիտարկումներին և հայոց շրջանում կատարված գրառումների մասին կխոսվի առանձին ենթագլխում: ⁷³³ Ժողովրդական առակներ, Բ. Հոբոս, հավաքեց՝ Ե. Լալայեան, Թիֆլիս, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1903:

տանուտեր ընտրվելը, ապա՝ ներկայացնում Լոռու երեք գյուղերի բնակիչների «տխմարի հոչակ» ունենալը մարմնավորող հերոսներին՝ փաստելով, թե «*Հոբոսը ներկայանում է որպես ամբողջ գիղի ամենախելացի և առաջատոր անձը՝ միայնգամայն լինելով տխմարութեան տիպար: Առհասարակ Լոռում Շնող, Աքորի և մանաւանդ Կուրդան գիղերի բնակիչները տխմարի հոչակ ունին, և դրանց տխմարութիւնը մարմնացրել է սրանց առաջատոր մարդկանց՝ Հոբոսի, Սերգօի և Կիկոսի մէջ: Միևնույն առակը համարեա անխտիր պատմում է այս երեքի մասին ևս, նայած թէ ո՛ր գիղացիներին են կամենում ծաղրել*»⁷³⁴:

Ինչ խոսք, այս գործընթացը ևս պետք է բնական ճանապարհով կատարվի, այլապես կեղծիքը անմիջապես կարող է աչք ծակել: Ատենախոսության ծավալը մեզ հնարավորություն չի տալիս հանգամանորեն անդրադառնալ նման անհարկի միջամտություններին: «Վասպուրականյան երգիծական մանրապատում-զվարճախոսությունները» հողվածում մենք անդրադարձել ենք նաև նման արհեստական միջամտության երևույթին: Հրեա և հայ զվարճախոսներ Ռաբինովիչի և վանեցի Քանքանյանի կերպարները քաղաքական նույն թեմայի շրջանակներում «հետաքննելիս» պարզ էր դարձել, որ որոշ հրեական անեկդոտներ՝ գրեթե նույնությամբ և միայն զվարճախոսով «վանեցիացված», տեղ էին գտել «Ծիծաղում են վանեցիները» գրքում⁷³⁵:

Հայ հանրահայտ զվարճախոսների մասին մի շարք հողված-ուսումնասիրություններ են գրվել, և ամենաշատը ուշադրության կենտրոնում են եղել Պըլը Պուղին⁷³⁶ ու

⁷³⁴ Ժողովրդական առակներ, Բ. Հոբոս, հավաքեց՝ Ե. Լալայեան, Թիֆլիս, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1903, էջ Բ-Գ:

⁷³⁵ **Սարգսյան Ա.Շ.**, Վասպուրականյան երգիծական մանրապատում-զվարճախոսությունները, Վանի հերոսամարտի 100-ամյակին և Վան քաղաքի առաջին հիշատակության 2870-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, Եր., 2015թ., մայիսի 4-6-ը: (անտիպ)

⁷³⁶ **Ղազիյան Ա.**, Ղարաբաղի զվարճախոս Պըլ Պուղին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, Եր., 1978, թիվ 9, էջ 60-69:

Մակարյան Ա. Անեկդոտի զարգացումը հայ գրականության մեջ, Եր., «Մեհյան» հրատ., 2000, Պըլը Պուղի, էջ 56-69:

Փաշայան Ա., Պըլը Պուղին հայ մշակույթի պատմության էջերում, Ստեփանակերտ, 2010:

Հայրապետյան Թ., Ղարաբաղի առակախոս Պըլ Պուղու սոցիալ-քաղաքական երգիծանքը (Ըստ 1989-2001թթ. գրառած նյութերի), Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը,

Պոլոզ Մուկուչը⁷³⁷, որոնց անեկդոտների տպագրված ժողովածուների առաջաբաններում ևս այս կամ այն չափով անդրադարձ է եղել զվարճախոսների կենսագրությանն ու գործունեությանը⁷³⁸:

Գրականագետ Ա. Մակարյանը, գրականության և բանահյուսության փոխառնչության հարցերին նվիրված իր անավարտ ուսումնասիրության մեջ մանրակրկիտ անդրադառնալով արցախցի զվարճախոսի կյանքին, գործունեությանն ու նրա մասին պատմվող անեկդոտներին և կանգ առնելով Պըլը Պուղու և Խոջա Նասրեդինի որոշ անեկդոտների թեմաների և երկու զվարճախոսների գործունեության ընդհանրությունների վրա («երկուսն էլ հանդես են գալիս դատավորի դերում և երկուսն էլ լուծում են գտնում անլուծելի դատերը»)⁷³⁹, հանգում է արցախցի զվարճախոսի նմուշների հայկականությունը հավաստող եզրակացության. «Մնացած դեպքերում Պուղու և Մուլլայի դատավարությունները տարբերվում են մի էական կողմով. *Պուղու վարժ դատերը ռեալ բնույթ ունեն, արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի սոցիալական ու ազգային փոխհարաբերությունը* (հայերի անասունների գողանալը թուրքերի կողմից ևն), մուլլայի վարած դատերը մեծ մասամբ մտացածին են, անիրական»⁷⁴⁰:

Վերջին տասնամյակում տպագրվել են նաև հավաքական զվարճախոս ներկա-

միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 2012թ., Երևան-Ստեփանակերտ, էջ 83-85, Եր., ԵՊՀ հրատ., 2012 և այլք:

⁷³⁷ **Խեմճյան Է.**, Պոլոզ Մուկուչը Գյումրվա բանահյուսական ավանդության մեջ (Ըստ ՀԱԻ-ի բանահյուսական արխիվի նյութերի), Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Միջազգային 8-րդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 22-24 հոկտեմբերի, 2010, «Գիտություն» հրատ., 2010, էջ 228-235:

⁷³⁸ **Խանզադյան Ա.**, Պըլը Պուղի: Զրույցներ, Եր., «Արևիկ» հրատ., 1988, Հեղինակը իր հերոսի հետ, էջ 3-4: Ղարաբաղի զվարճախոս Պըլը-Պուղին, Հավաքեց և մշակեց **Սարգիս Իսրայելյանը**, Եր., «Հայաստան» հրատ., 2008, Առաջաբանը՝ *Վարդան Հակոբյան*, Պըլը-Պուղու բանահյուսությունը, էջ 3-12:

Իկիլիկյան Հ., Գյումրին, Պոլոզ Մուկուչը և երգիծական մանրապատումներ, Եր., «Հայաստան» հրատ., 1989, Պոլոզ Մուկուչ, էջ 36-38, Ժամանակակիցները Պոլոզ Մուկուչի, Ծիտրոյի և մյուսների մասին, էջ 39-62:

Գասպարյան Ռ., Ծագումով գյումրեցի ենք: Անեկդոտներ, հումորներ, սասցվածքներ, զավեշտալի դեպքեր, Լոս Անջելես, հեղ. հրատ., 1-ին մաս, 2011, Պոլոզ մուկուչ, էջ 35-36:

Հումորի հայրաքաղաք Գյումրի, Կազմեց Գագիկ Վարդանյանը, Եր., հեղ. հրատ. 2013, գիրք 1-ին, Հումորի վարպետները. Մկրտիչ Մելքոնյան (Պոլոզ Մուկուչ), էջ 17-18 և այլն:

⁷³⁹ **Մակարյան Ա.** Անեկդոտի զարգացումը հայ գրականության մեջ, Եր., «Մեհյան» հրատ., 2000, Պըլը-Պուղի, էջ 61:

⁷⁴⁰ Նույն տեղում:

յացող որոշակի հայկական տեղավայրերի վերաբերյալ մի քանի հոդվածներ⁷⁴¹: Այստեղ հարկ է փաստել նաև, որ Գ. Կարապետյանը Մոսկվայում ռուսերեն հրատարակում է հայ ժողովրդական բանահյուսությանը նվիրված մի ժողովածու՝ առաջաբան-ուսումնասիրությամբ, ծանոթագրություններով ու բառարանով և մեծաքանակ անեկդոտներով, որտեղ արցախցի Պըլը Պուղին, լոռեցի Հոբոսն ու Ռուբենը, զանգեզուրցիներ Չարչի Զավենը, Էմին Վարոսին, Հարությունի Տիգրանը, գյումրեցի Պուլոզ Մուկուչը և այլ հայ զվարճախոսներ առաջին անգամ են միասին ներկայանում ռուսախոս ընթերցողին⁷⁴²: Ընդ որում, անեկդոտների պատկառելի բաժինը կազմում է Պըլը Պուղու նյութերը՝ շուրջ 85 նմուշ⁷⁴³:

4.2. Արևելքի զվարճախոս Նասրեդինը հայկական գրառումներում

1978թ. ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտը Մոսկվայում «Արևելքի ժողովուրդների հեքիաթները և առասպելները» մատենաշարի շրջանակներում ռուսերեն հրատարակում է մի ժողովածու⁷⁴⁴, որն ընդգրկում էր 23 ժողովուրդների նասրեդինյան 1119 պատում՝ թարգմանված հունարեն, ասորերեն, բուլղարերեն, սերբերեն, մակեդոներեն, խորվաթերեն, արաբերեն, պարսկերեն, տաջիկերեն, թուրքերեն, թուրքմեններեն, ադրբեջաներեն, թաթարերեն, ուզբեկերեն, ույգուրերեն, ղազախերեն, ավարերեն, չեչեներեն, լեզգիերեն, թաբասարաներեն, դարգիներեն, անդիերեն և ռուսուկերեն լեզուներից:

⁷⁴¹ **Մարգարյան Ն.**, Լենինական-Երևան մրցակցությունը 1970-80-ականների զվարճախոսություններում և սրամտություններում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական 7-րդ գիտա-ժողովի նյութեր, Գյումրի, 2007, էջ 151-157:

Սահակյան Արծ., Հայկական անեկդոտի հերոս «ապարանցին» և տեղական-մշակութային ավանդույթը, Հայ ժողովրդական մշակույթ – XV, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 545-550:

Սարգսյան Ա.Շ., Վանեցիները անեկդոտ-զվարճապատումներում, «Հայաստանի մայրաքաղաքները, գիրք 1, Վան», Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված Միջազգային գիտաժողովի նյութեր, 7-9 հոկտեմբերի, 2010թ., Երևան: Եր. «Գիտություն» հրատ., 2013, էջ 322-328:

⁷⁴² Армянский фольклор. Сост. и пер. с арм. Г.О. Карапетяна. М., Главная редакция восточной литературы издательства Наука, 1979, с. 25-99.

⁷⁴³ Նույն տեղում, с. 25-76.

⁷⁴⁴ Двадцать три Насредина, Составление, вступительная статья, примечания и указатели М.С. Хари-тонова. Москва, Главная редакция восточной литературы изд. «Наука», 1978.

Նասրեդինյան պատումների այդ համահավաքը կազմող Մ. Խարիտոնովը առաջաբանում խոսում է նաև եվրոպական տարբեր երկրներում (Բուլղարիա, Ռումինիա, Հարավսլավիա), Միջին և Կենտրոնական Ասիայի, ինչպես նաև արաբական երկրների ժողովուրդների մոտ, անգամ Չինաստանում այդ շարքի զվարճապատումների տարատեսակ դրսևորումների մասին, անդրադառնում նաև հայկական և վրացական բանարվեստում Նասրեդինի կերպարի արտացոլմանը՝ մատնանշելով հայերի և վրացիների բանարվեստում Արևելքի զվարճախոսին վերագրվող սյուժեների սակավությունը: Չգիտես՝ ինչու նա այդ միտքը հաստատելու համար մեջքերում է միայն վրացական մեկ աղբյուր⁷⁴⁵ և գրում, որ իրեն չի հաջողվել այլ հրատարակությունների հասու լինել⁷⁴⁶:

1986թ. «Քսաներեք Նասրեդին» գիրքը՝ 1069 պատումներով (անհետաքրքիր շուրջ 50 նմուշ հանված), Գևորգ Հայրյանի թարգմանությամբ և Արամ Ղանալանյանի առաջաբանով, լույս տեսավ նաև հայերեն՝ որտեղ վաստակաշատ բանագետն անդրադառնում է հայ բանարվեստ մուտք գործած նասրեդինյան մանրապատումներին: Դրանք *«սերվել ու հարազատ են դարձել մեր ժողովրդին, – գրում է Ղանալանյանը, – ...և արցախցի հոշակավոր Պըլը Պուղու, շիրակցի Պուլոզ Մուկուչի, լոռեցի Հորոսի, դափանցի Գինոսի և շափախցի ծերի կողքին, երբեմն էլ նրանց դերերում մենք հանդիպում ենք Խոջա Նասրեդինին»*⁷⁴⁷:

Սրամիտ խոսքը, ծիծաղով, ծաղրով ասելիքը վերարտադրելու կարողությունը հատուկ է մարդ արարածին՝ անկախ ազգությունից և կրոնական պատկանելությունից: Հետևապես շատ անգամ ոչ թե դժվար, նույնիսկ անհնար է այս կամ այն պատումը տեղայնացնելը, կոնկրետ որևէ ժողովրդին վերագրելը: Նասրեդինյան պատումների սյուժեներից շատերն էլ բազմահայրենիք են: Թերևս հենց դա է պատճառը, որ մի շարք ժողովուրդներ, Հոմերոսի ծննդավայրի պատիվը իրենց վերագրող հունական յոթ քաղաքների նման, դարեր շարունակ վիճարկում են Նասրեդինի հայրենիքի պատիվն ի-

⁷⁴⁵ Грузинский народный юмор. Притчи, сказки. Тбилиси, «Литература да шеловнеба», 1964, с. 14.

⁷⁴⁶ Двадцать три Насредина, Составление, вступительная статья, примечания и указатели М.С. Хари-тонова. Москва, Главная редакция восточной литературы изд. «Наука», 1978, с. 10-11.

⁷⁴⁷ Քսաներեք Նասրեդին, Ռուսերենից թարգմանեց Գ.Ա. Հայրյանը, Եր., «Հայաստան» հրատ., 1986, էջ 4:

րենց վերագրելու համար: Այդ վեճին համառորեն մասնակցում են թե՛ հնագույն ժողովուրդները, թե՛ նորաթուփ ազգային միավորումները: Նույնիսկ մեկ դարը չբոլորած «ադրբեջանցի» հորջորջվող կովկասի թաթարների մերօրյա «գիտնականները» ևս անմասն չեն սեփականացման գործընթացից՝ Նասրեդինին համարելով ադրբեջանցի, քանի որ, իբր, 13-րդ դարում այդ անունով ադրբեջանցի գիտնական է եղել՝ Հաջի Նասրեդին Թուսի⁷⁴⁸: Ավելացնենք նաև, որ նրանք, սեփականացնելով իրենց հարևանների մշակութային ժառանգությունը, այդ թվում նաև՝ ժողովրդական բանարվեստը, հասցրել են նասրեդինյան մի քանի ժողովածու հրատարակել:

Արդեն մի քանի հարյուրամյակ է՝ հայության մեջ շրջանառվում են Նասրեդինի անեկդոտներն ու առակատիպ կառույցները: Եվ պատահական չէ, որ 19-20-րդ դարերում հրատարակված գրեթե բոլոր անեկդոտների ժողովածուներում ընդգրկված օտարազգի զվարճախոսներից հայության մեջ սիրված անուն է եղել միայն Նասրեդինը, մնացածների անունները հայությանը հայտնի են հիմնականում թարգմանությունների շնորհիվ:

Անկախ կրոնից ու ազգությունից, Արևելքի զվարճախոս Խոջա Նասրեդինի (Խոջա Նասր-էդ-Դին, Հոջա Նասրետտին, Մոլլա Մըսրադին) անունն ու առակ-անեկդոտները, ինչ խոսք, սիրված են եղել բազմաթիվ ժողովուրդների կողմից, շրջանառվել Կենտրոնական ու Միջին Ասիայի, Եվրոպայի և անդրկովկասյան մի շարք ժողովուրդների մեջ, տեղ գտել նրանց բանարվեստում: Ամենևին նպատակ չունենալով Նասրեդինի հայրենիքը վիճարկողների մեջ մտցնել նաև հայերին՝ փորձենք անդրադառնալ հանրահայտ զվարճախոսի հանդեպ եղած հետաքրքրություններին նաև հայկական միջավայրում, ներկայացնել հայերեն թարգմանությունները, հայկական շրջանակներից գրառումները, դրանց հրատարակությունները, ինչպես նաև տեղայնացված զվարճախոսին ու նրան վերագրված պատումների առանձնահատկությունները:

Հայ իրականության մեջ Խոջա Նասրեդինի զվարճապատումների՝ մեզ հայտնի

⁷⁴⁸ Двадцать три Насредина, Составление, вступительная статья, примечания и указатели М.С. Харитонова. Москва, Главная редакция восточной литературы изд. «Наука», 1978, с. 6.

հայերեն առաջին թարգմանությունը կատարվել է 1858 թվականին Զմյուռնիայում (Իզմիր): Այն ֆրանսերենից հայերեն թարգմանված 32 նմուշ պարունակող մի գրքույկ է՝ «Ծաղրաբանությունք Նասրէտտին Խօճայի» վերնագրով: 1910 թվականին Կ. Պոլսում թուրքերենից հայերեն թարգմանված հրատարակվում է «Հօճա Նասրէտտինի զուարճալիքները» գիրքը՝ շուրջ 350 պատումներով, որը տարիներ անց վերահրատարակվում է Բեյրութում և Բոստոնում:

Երբվանի՞ց է Խոջա (Մոլլա) Նասրեդինի կերպարը շրջանառվել հայոց մեջ, դժվար է ասել, բայց որ նասրեդինյան պատումների առաջին գրառողներից մեկն էլ մենք՝ հայերս ենք եղել, դա փաստ է, և որ շուրջ 170 տարիների ընթացքում մեզ մոտ հսկայածավալ աշխատանքներ են կատարվել Արևելքի զվարճախոսին վերագրվող անեկդոտների գրառման, հրատարակության և ուսումնասիրության ուղղությամբ, դա էլ է անժխտելի փաստ: Հայ իրականության մեջ առաջին անգամ **Խաչատուր Աբովյանը** 1841 թվականին իր գրառած նասրեդինյան զվարճապատումների երեք նմուշ չափածոյի է վերածել և ընդգրկել առակ-զվարճապատումներ ժողովածուում⁷⁴⁹:

Հետագա տարիներին հրատարակված անեկդոտների զանազան ժողովածուներում ևս տեղ են գտել Մոլլա Նասրեդինի մանրապատումները: Այսպես, օրինակ, **Հովհաննես Նազարյանցը** 1876 թվականին Բաքվում հրատարակած «Անեկդոտներ» - ի ժողովածուի առաջին հատորում ընդգրկել է նասրեդինյան առակ-զվարճապատումների 8 նմուշ⁷⁵⁰, մեկ տարի անց՝ 1877 թվականին Թիֆլիսում հրատարակած երկրորդ հատորում՝ 12 նմուշ⁷⁵¹, իսկ 1883 թվականին կրկին Թիֆլիսում տպագրած երրորդ հատորում՝ 5 նմուշ⁷⁵²:

1892 թվականին շուլավերցի դպիր **Սմբատ Շահազիզյանը** Թիֆլիսում հրատա-

⁷⁴⁹ Պարապ վախտի խաղալիք (Պարապ մարդու տանու միտք), Շինեց ու սազացրեց Խաչատուր Աբովեան, Տիֆլիս, Ի տպարանի Հ. Էնֆիաճեանց եւ ընկերաց, 1864, էջ 7-19:

⁷⁵⁰ Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 112, 119, 145, 162, 170, 177-178, 196-197, 204:

⁷⁵¹ Անեկդոտներ, Հատոր Բ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տիֆլիս, տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877, էջ 64-130:

⁷⁵² Անեկդոտներ, Հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 142, 203, 247,

րակում է «Ծիծաղի տոպրակ» զվարճապատում-զվարճախոսությունների ժողովածուն՝ 18 նասրեղինյան նմուշներով⁷⁵³:

1903 թվականին, ինչպես վերը նշվեց, **Երվանդ Լալայանը** Թիֆլիսում հրատարակում է «Ժողովրդական առակներ: Ա. Մոլլա Նասր-էդ-Դին» զուտ նասրեղինյան ժողովածուն, որն ընդգրկում է 228 նմուշ: Դա, փաստորեն, հայ իրականության մեջ Արևելքի զվարճախոսին (և ոչ միայն Արևելքի) նվիրված մեծաքանակ նյութերով առաջին ժողովածուն էր, որոնց պատկառելի մասը հենց իր՝ Լալայանի գրառումներն էին՝ կատարված հիմնականում Բորչալուի գավառի (Գուգարք-Լոռի, Բոլնիս Խաչեն) հայկական բնակավայրերում:

1913 թվականին **Արտեմ Եսայանը** Թիֆլիսում հրատարակում է «Ծիծաղի տկճոր: Մոլլա Նասրեղինի առակներ, ծիծաղաշարժ անեկդոտների և սրախոսությունների ժողովածու» գիրքը⁷⁵⁴, ուր տեղ էր գտել նաև 37 նասրեղինյան զվարճապատումներ:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ի բանահյուսության բաժնի աշխատակից **Վերժինե Սվազյանն** իր գրառած նասրեղինյան 11 զվարճախոսություններն ընդգրկել է «Պոլսահայ բանահյուսությունը» գրքում⁷⁵⁵: Նույն բաժնի աշխատակից **Էսթեր Խենյանը** 2000թ. տպագրված ՀԱԲ-ի 21-րդ հատորում ընդգրկել է տավուշյան 11 նմուշ⁷⁵⁶, իսկ 2008թ. տպագրված ՀԱԲ-ի 25-րդ հատորում՝ Իջևանյան 7 նմուշ⁷⁵⁷:

2009 թվականին հրատարակվում է **Հովհաննես Հովսեփյանի** կողմից գրառած Ղարադաղի բանահյուսական նյութերի ժողովածուն, ուր տեղ է գտել նաև Մոլլա Նասրեղինի անեկդոտների 18 նմուշ⁷⁵⁸: Նասրեղինյան տպագիր նյութեր կան նաև բարբա-

⁷⁵³ Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Ս.Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 14-30:

⁷⁵⁴ Ծիծաղի տկճոր: Մոլլա Նասրեղինի առակներ, ծիծաղաշարժ անեկդոտներ և սրախոսութիւնների ժողովածու: Կազմեց՝ Արտեմ (Յարութիւն) Եսաեան, Թիֆլիս, տպարան Էպոխա, 1913, էջ 13-92:

⁷⁵⁵ Սվազյան Վ., Պոլսահայ բանահիւսութիւնը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 190-203:

⁷⁵⁶ ՀԱԲ, հատոր 21, Էսթեր Խենյան, Տավուշ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 187-192:

⁷⁵⁷ ՀԱԲ, հատոր 25, Էսթեր Խենյան, Իջևան (Ձորովոր), Եր., «Գիտություն» հրատ., 2008, էջ 289-292:

⁷⁵⁸ Հովսեփյան Հ., Ղարադաղի հայերը. հ. 2, բանահյուսություն, Եր., «Գիտություն» հրատ., 2009, էջ 474-484:

նագիտական ուսումնասիրությունների նմուշների բաժիններում⁷⁵⁹, բանահյուսական որոշ ժողովածուներում⁷⁶⁰, ինչպես նաև հայ գրողների անձնական հավաքածուներում:

Թումանյանը սիրել է խոսքը համեմել ժողովրդական իմաստախոսություններով և անեկոտներով: Մարդկանց՝ գործը ձգձգելու, անելիքը հետագա լավ ժամանակներին թողնելու բնավորությունը նա քննադատում էր նասրեդինյան պատումով.

«Գնացին տեսան Մոլլա Նասրեդինը մի վարար ջրի ափին նստած սպասում ա: Ասին՝ ընչի՞ ես սպասում: // – Թե՛ սպասում եմ՝ գետն անց կենա, որ հետո ես անց կենամ: // Ճիշտ էսպես. մենք սպասում ենք՝ էս ժամանակն անց կենա, որ մեր ուզած կյանքով ապրենք, պարապենք... ու շարունակ սպասում ենք»⁷⁶¹:

Հետաքրքիր է Ս. Վարդանյանի «Թագավորի երազները» գրքում ընդգրկված արցախյան «Պըլը-Պուղին ու Մոլլա Նասրեդինը» պատումը, որտեղ արցախցի զվարճախոսը հանդիպում է Արևելքի զվարճախոսին: Վերջինս, տեսնելով Պուղու շավարին՝ տեղ-տեղ արված կարկատանները, ձեռ առնելով ասում է. «–Պուղի՛, տեղ-տեղ շնհավեր ինի», ինչին հետևում է Պուղու՝ «– Օրումեջ ապրես» պատասխանը⁷⁶²: Ի դեպ այս նմուշի մեր կողմից 1970-ին գրառած տարբերակը կապված է լոռեցի զվարճախոս Ռուբենի հետ: (ԱՍՀՀ)

Ձեռագիր վիճակում մեծ քանակությամբ նասրեդինյան գրառումներ կան թե՛ ԳԱԱ ՀԱԻ-ի բանահյուսության արխիվում, թե՛ Հայաստանի պետական արխիվում, թե՛ գրականության և արվեստի թանգարանում ու անձնական հավաքածուներում: ՀԱԻ-ի բանահյուսության արխիվում միայն **Հերիք Հարթենյանի** (աշուղ Ծաղկալիի թոռան) նասրեդինյան անտիպ գրառումները կազմում են 45 երգիծական մանրապատում-

⁷⁵⁹ **Մաղաթյան Ք.**, Ալաշկերտի խոսվածքը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 158-159: 251 էջ:

Մուրադյան Հ., Կարճևանի բարբառը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1960, էջ 248:

Հայերեն բարբառներ, Սևանա լճի ավազանի խոսվածքները, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, Ե., 1972թ., էջ 110-111:

⁷⁶⁰ **Գեորգեան Գ.**, Չնքուշապատում, հատոր 1, Երուսաղեմ, տպարան Ս. Յակոբեանց, 1970, էջ 281:

Թագավորի երազները (Բանահյուսական ժողովածու), Կազմեց, ծանոթագրեց և հրատարակության պատրաստեց Սերգեյ Վարդանյանը, Եր., «Գասպրինտ» հրատ., 2003, էջ 123, 128:

⁷⁶¹ **Թումանյան Հովհ.**, ԵԼԺ, հատոր 5, Եր., «Գիտություն» հրատ., 1994, էջ 421:

⁷⁶² Թագավորի երազները (Բանահյուսական ժողովածու), Կազմեց, ծանոթագրեց և հրատարակության պատրաստեց Սերգեյ Վարդանյանը, Եր., «Գասպրինտ» հրատ., 2003, էջ 128:

զվարճախոսություններ⁷⁶³:

Հայկական նասրեդինյան գրառումների աշխարհագրությունը ևս ընդգրկում է Պոլիս, Ղարադաղ, Սալմաստ, Ալաշկերտ, Երևան, Թիֆլիս, Բաքու, Շիրակ, Լոռի, Իջևան, Շամշադին, Ջավախք և այլուր, ինչը հավաստում է հայոց մեջ Արևելքի զվարճախոսի մասսայականության մասին:

Որևէ ժողովրդի հանրահայտ առակախոս-զվարճախոսին վերագրվող բանարվեստի նմուշը մեկ այլ ժողովրդի զվարճախոսին անցնելու՝ *Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանի և Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձությանցի* առաջադրած տեսակետին շուրջ 30 տարի անց՝ 1903թ., անդրադառնում է նաև հայագիտության մեծ երախտավոր **Երվանդ Լալայանն** իր հրատարակած Արևելքի զվարճախոս Մովսես Նասրեդինին նվիրված առակների ժողովածուի *ծավալուն առաջաբանում*: Այստեղ հստակ ի հայտ են գալիս հմուտ ժողովրդագետի դիտարկումները հայ և օտարազգի զվարճախոսների փոխառնչությունների վերաբերյալ: Լալայանը մեր իրականության մեջ առաջին անգամ փորձ է անում վերլուծել և մեկնաբանել **նասրեդինյան պատումների տեղայնացման և տեղական պատումների «նասրեդինացման» գործընթացը**:

Այս կամ այն անեկդոտի արծարծած խնդիրներն ու առաջադրած հարցերը և դրանց քննադատությունը, ծիծաղ առաջացնելու ինքնատիպ ձևերն ու միջոցները եթե ընդունվում են հանրության կողմից, ապա առաջին հերթին հերոս-զվարճախոսները պետք է ընդհանրացվեն: Նրանք որքան ճանաչված լինեն, այնքան լսարանի համար գրավիչ կարող են լինել:

Գրքի առաջաբանում Լալայանը առաջ է քաշում և հիմնավորում հայկական միջավայրում օտարազգի զվարճախոսին վերագրվող ստեղծագործությունների թե՛ թափառող սյուժեների (թարգմանություն, շփման զանազան միջոցներով փոխանցում և այլն), թե՛ տեղայնացած զվարճախոսի շուրջն ստեղծված զուտ հայկական նմուշների

⁷⁶³ ԳԱԱ ՀԱԻ-ի բանահյուսության արխիվ, Գ. Թարվերդյանի հավաքածու, FF1: 1687 (թիվ 158), 1707 (թիվ 178):

Նույն տեղում, Հերիք Հարթենյանի ֆոնդ, FF1: էջ 3314-3350:

առկայության տեսակետը, ինչպես նաև՝ ազգային զվարճախոսներից դրանց այլ՝ առավել մասշտաբային՝ օտար զվարճախոսին անցնելու հավանականությունը:

«Առակների այս շարքը, – ժողովածուի առաջաբանում գրում է Լալայանը, – սկսում ենք Մոլլա - Նասր - էդ - դինին վերագրված առակներով: Ասացինք, որ մեր նպատակն է հայոց ժողովրդական առակներ հավաքել, մինչդեռ սկսում ենք մի մոլլի առակներով: **Ճշմարիտ է, մոլլան թուրք է, սակայն նրան վերագրված առակների մեծագույն մասը հայ ժողովրդի սպեղծագործություն է՝ նման այն բազմաթիվ թրքական երգերի, որ ասել են մեր հայ աշուղները կամ ժողովուրդը:** Մոլլա Նասր – էդ – դինի ահագին ժողովրդականությունը պատճառ է եղել, որ տեղական փոքրիկ առակախոսների՝ հոբոսների, կիկոսների, ծակսահակների, պըլըպուղիների և ուրիշ այսպիսիների առակները նրան են վերագրվել, և, այսպիսով, Մոլլա Նասր - էդ - դինը կորցրել է յուր առանձնահատուկ տիպը. նա միաժամանակ ներկայանում է մեզ և՛ իբր հիմար՝ Հոբոսի պես, և իբր խելացի՝ Խիկար Իմաստունի պես, և՛ իբր խորամանկ՝ Ծակ – Սահակի պես, և՛ իբր տխմար՝ Կաճետի ծոերի պես. այնպես որ սա միաժամանակ է և՛ Կալինո, և՛ Տարտարեն, և՛ Գորզեկ, և՛ Դոն Քիշոտ, և՛ Սանչո – Պանչո, և՛ Կոլոնել Ռամոլլո, և՛ Բարոն դը Մյունշհաուզեն – մի խոսքով, նրա մեջ մարմնացած են այն բոլոր տիպերը, որ զանազան տեղերի ժողովրդական հոգեբանությունը կամ հումորը կամեցել է ստեղծել»⁷⁶⁴:

Այնուհետև Ե. Լալայանը, իբրև ապացույց այդ եզրահանգման, ներկայացնում է իր իսկ գրառած նյութերի գերազանցությունը թուրքական բնագրերի հետ. «Իրենք՝ թուրք հրատարակիչները, նրան միմիայն 145 առակ են վերագրում, մինչդեռ իմ այս պրակի մեջ կրկնապատիկն է գրի առնված, և դեռ որքա՛ն կան, որ անձանոթ են ինձ՝ չհաշված բամբառակները, որոնց թիվը հազարից անցնում է»⁷⁶⁵:

Երբեմն էլ հանրահայտ զվարճախոսը զվարճասերներին «կարող էր պար-

⁷⁶⁴ Ժողովրդական առակներ: Ա. Մոլլա Նասր-էդ-դին, Հավաքեց՝ Ե. Լալայեան, Թիֆլիս, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1903, էջ Բ -Դ :

⁷⁶⁵ Նույն տեղում, էջ Դ:

տադրել» որոշակի կանոններ: Այսպես, օրինակ, ըստ Ե. Լալայանի դիտարկման՝ «Այժմ հայ ժողովրդի մեջ տիրում է այն նախապաշարմունքը, որ ով Մովսես Նասր - էդ - դինի մի առակն ասե, անշուշտ յոթը լրացնելու է, իսկ եթե յոթն ասի, յոթն անգամ յոթը՝ քառասուն և ինը լրացնելու է, ապա թե ոչ՝ անհիժված կլինի»⁷⁶⁶: Ինչ խոսք, նման նախապաշարմունքի առկայությունը ժամանակին իր դերն է կատարել զվարճախոսին վերագրվող պատումների մասսայականացմանը և կենցաղավարման շարունակականությանը:

Այստեղ հարկ է փաստել նաև, որ այս նախապաշարմունքային գործառույթը 1950–1960 թվականներին փոխանցվել էր շիրակցի զվարճախոս Պոլոզ Մուկուչին, որի անունը տվողը պարտադրված էր Պոլոզ Մուկուչից յոթ անեկդոտ պատմել («կանոնակարգում» բացակայում էին յոթն ասելուց հետո շարունակվող գործընթացը և չկատարելու դեպքում անհիժված լինելու հանգամանքը):

Ուսումնասիրողներից ոմանք, սյուժետային և կերպարային որոշ ընդհանրություններ նկատելով Արևելքի զվարճախոս Նասրեդինին և արցախցի Պըլը-Պուղուն վերագրվող պատումների միջև, հանգել են տարբեր եզրակացությունների:

Իր պատրաստած «Քսաներեք Նասրեդին» գրքի առաջաբանում Խարիտոնովը անդրկովկասյան քրիստոնյա երկու ժողովուրդների՝ հայերի և վրացիների նասրեդինյան կերպարը համարում է փոխառած, որի տեղը, ըստ նրա, աստիճանաբար գրավում է մեկ այլ՝ առավել հիմնավոր ազգային արմատներ ունեցող կերպար, ինչպիսին, հայերի դարաբաղցի զվարճախոս Պըլը Պուղին է: Ըստ Խարիտոնովի՝ նասրեդինյան շատ սյուժեներ սկսել են կապվել նմանատիպ ազգային հերոսների հետ⁷⁶⁷:

Սակայն հեղինակն անտեսում էր հակառակ երևույթը, երբ այս կամ այն համազգային կամ լոկալ-տեղային զվարճապատումը կարող էր վերագրվել համընդհանուր ճանաչում ձեռք բերած օտար զվարճախոսին՝ նրան դարձնելով այն ձգողական ուժը, ո-

⁷⁶⁶ Ժողովրդական առակներ: Ա. Մովսես Նասր-էդ-դին, Հավաքեց՝ Ե. Լալայեան, Թիֆլիս, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1903, էջ է:

⁷⁶⁷ Двадцать три Насредина, Составление, вступительная статья, примечания и указатели М.С. Харитонova. Москва, Главная редакция восточной литературы изд. «Наука», 1978, с. 11.

րը դեպի իրեն կարող էր ձգել ու «սեփականացնել» զանազան տարածքներում ծնունդ առած տարբեր կրոնների ու ժողովուրդների անեկդոտները: Դարեր շարունակ այդ նույն գործառույթն են կատարել հույն և ասորի ժողովուրդների առակախոս-զվարճախոսները՝ Եզրպոսը և Խիկար (Ախիկար) Իմաստունը: Այդ գործառույթն է իր վրա վերցրել նաև Արևելքի զվարճախոս Մոլլա (Խոջա) Նասրեդինը:

Միևնույն մոտիվը՝ թեման՝ կերպարային ընդգծված առանձնահատկություններով, կարող է կենցաղավարել տարբեր ժողովուրդների կամ միևնույն ժողովրդի տարբեր տարածքներում ապրող մարդկանց միջավայրում: Ժողովրդական գրույցների՝ ժողովրդական առասպելախառն պատումների մասին խոսելիս Մանուկ Աբեղյանը գրում է. «**Կապն անունի և մոտիվի միջև շատ թույլ է. անունները հաճախ փոխվում են, մոտիվներն ավելի կայուն են**»⁷⁶⁸: Այս երևույթը բնորոշ է նաև հայ ժողովրդական երգիծական մանրապատումներին և զվարճախոսություններին՝ անեկդոտներին, երբ միևնույն թեմայի հերոս-զվարճախոսը մեկ այլ տարածքում փոխարինվում է տեղացի հանրահայտ կերպարով, կամ էլ որևէ տարածքի ընդհանրացնող կերպարը (ասենք՝ լոռեցին, ապարանցին) մեկ այլ միջավայրում փոխարինվում է տվյալ տեղավայրում հայտնի հերոսով: Այս երևույթին Ե. Լալայանն անդրադարձել է նաև «Հորոս» գրքի առաջաբանում:

Այսպիսով, նասրեդինյան հայկական գրառումները հավաստում են, որ մեզ մոտ Արևելքի զվարճախոսը սիրվել և մեծ մասսայականություն է վայելել, իսկ նրան առնչվող մանրապատումները հայերի շրջանում բավականին մեծ քանակ են կազմել՝ ընդգրկելով Պատմական Հայաստանի բնակավայրերի մեծ մասն ու մերձակա սփյուռքը: Շուրջ 170 տարիների ընթացքում դրանք տեղ են գտել ինչպես տարատեսակ անեկդոտների ժողովածուներում, այնպես էլ զուտ Նասրեդինին նվիրված գրքերում: Հայոց մեջ շրջանավոր նասրեդինյան մանրապատումներից զատ, արևելքի զվարճախոսին են վերագրվել նաև տեղական զվարճախոսների երգիծապատումները, ինչը հաստատում են

⁷⁶⁸ Աբեղյան Մ., հատոր Ա, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966, էջ 298:

գրառած նյութերն ու բանահավաք-բանագետների մեկնաբանությունները:

4.3. Հայկական անեկդոտների հերոս-զվարճախոսների կերպարային առանձնահատկությունները

Զվարճախոսներ կան, որոնք իրական կյանքում աչքի են ընկել իրենց սուր խոսքով և գործողություններով, ինչպես արևելահայոց արցախցի *Պըը Պուղին*, գյումրեցի *Պուղոզ Մուկուչը (Սկրտիչ Ղազարոսի Մելքոնյան)*, *Ծիպրո Ալեքը*, *Ջղեր Խաչիկը*⁷⁶⁹, կապանցի *Գինոսը*⁷⁷⁰ և այլք, արևմտահայոց Վասպուրական աշխարհի, այնթապցի, սիսեցի հայտնի զվարճախոսները, որոնց մեծ մասը սրամիտ ու խելացի, իրենց և իրենց ժողովրդի արժանապատվությունը բարձր պահող կոնկրետ անձնավորություններ են եղել:

Հովհ. Նազարյանցի վկայությամբ՝ *Վասպուրական աշխարհում* ճանաչված զվարճախոսներից էին «*Վանեցի Տէր Սարգիս, Ահարոն Վարդապետ, Ներսես Ե. Կաթողիկոս, Վանա Ալիւր գիւղի Ռէս Կարապետ...*»⁷⁷¹: Վանա Ալյուր գյուղի ռես Կարապետի համարձակության ու սրախոսության մասին 1883թ. հրատարակած իր անեկդոտների ժողովածուի 3-րդ հատորում Հովհ. Նազարյանցը մի հետաքրքիր նմուշ է ընդգրկել.

Վանա Ալիւր գիւղի ռէս Կարապետը հայտնի էր իւր սրախօսութեամբ: Տաճկաց - Գուրբան-Բայրամի օրը կուսակալ փաշան ասաց.

– Ռէ՛ս Կարապետ, ինչքան այսօր այս քաղաքում զոհ է լինում, այնքան հայ կոտորվի, լավ չի լինի՞:

– Շա՛ր լավ կլինի, – պատասխանեց ռէս Կարապետը, – այն հայերը, որոնք տաճկացել են, եթե բոլորն էլ մեռնեն, մի զոհ էլ ես կանեմ: Եվ եթե որքան մեր Ջապկին

⁷⁶⁹ **Գևորգյան Հ.**, Լենինականյան զվարճալի գրույցներ և սրամտություններ, Եր., «Հայաստան» հրատ., 1990, էջ 4: Գյումրեցի զվարճախոսի շիրիմին տապանաքար է գցել Ավետիք Իսահակյանը:

⁷⁷⁰ **Գևորգյան Գ.**, Գինոսի ժպիտները, Եր., «Հայաստան» հրատ., 1975, էջ 47-75:

Մարգարյան Ա., Եկեք մի քիչ զվարճանանք: Զրույցներ և անեկդոտներ, Գինոսի մասին՝ էջ 3-20, Եր., «Զար» ֆիրմա, 1992:

⁷⁷¹ Անեկդոտներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 1:

հայերի տներումը կարմիր հավկիթ է կոտրվում, մի օրում այնքան փաճիկ մեռնի, լավ չի լինի՞, փաշա⁷⁷²:

Նմանատիպ մի նյութ էլ, կապված արճակցի զվարճախոս **Դըզոյի Պիտոյի** հետ, շուրջ 100 տարի անց՝ 1978թ., իր վառ հիշողության շնորհիվ թղթին է հանձնել ազգագրագետ, գրող, մանկավարժ Սերինե Ավագյանը⁷⁷³:

Արճակցի զվարճախոսներ **Դըզոյի Պիտոյի, Ֆրանգյուլի Ղևոնդի ու Մովսեսի** համբավը տարածված է եղել ոչ միայն **Վասպուրական աշխարհում**, այլև նրա սահմաններից դուրս⁷⁷⁴: Ս. Ավագյանը մեջբերում է զվարճախոս եղբայրներից ամենահամբավավորի՝ **Դըզոյի Պիտոյի** հետ կատարված դեպքերի հենքի վրա ստեղծված զվարճախոսություններից ժողովրդի մեջ շրջանառվող մի քանի դարձվածքներ՝ իրենց մեկնաբանություններով:

* Մի քանի օր բացակայող Դըզոյի Պիտոն կնոջը չէր ծեծել, պատճառ էր պետք ծեծելու, ուրիշ որ պատճառ չի գտնում, ասում է. «Քյաղքի ճամբախ ընչի՞ ուլոր-մուլոր ի»...

* «Թաթարի Մարկոսի տիսած սատանեն խո չե՛ս» դարձվածքը հիշեցնում է Դըզոյի Պիտոյի խաղացած խաղը (որպեսզի լծկան եզը չտար քավորին՝ Թաթարի Մարկոսին, նա մերկանում է, այլուր քսում դեմքին ու նստում եզան վրա...⁷⁷⁵):

Ս. Ավագյանը նշում է, որ վանեցիներն արճակցիներին **Բարխուդար** մականունով են կոչել, որը հավասարազոր էր տարօրինակություններով լի, ծույլ ու ապաշնորհ իմաստին: Ըստ նրա՝ «Արճակցոց «Բարխուդար» ծաղրանունը գործածել էր անգամ Խրիմյան Հայրիկը»⁷⁷⁶:

«Պատմութիւն Անթէպի հայոց» գրքի «**Անթէպական մանրապատումներ**» բաժնում ներկայացվում են 19-20-րդ դարերում այնթապցի չորս հայտնի զվարճախոսների

⁷⁷² Անեկոստներ, հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 102-103:

⁷⁷³ ՀԱԲ, հատոր 8, Ս. Ավագյան (Սերինե), Արճակ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 129:

⁷⁷⁴ Նույն տեղում, էջ 129:

⁷⁷⁵ Նույն տեղում, էջ 132:

⁷⁷⁶ Նույն տեղում:

անունները: 19-րդ դարակեսին **այնթապցի ամենահայտնի զվարճախոսը Ապագա Մանիկն է** եղել (տղամարդ է – ԱՍ), որի մասին անեկդոտները հետագայում պատմվել են մինչև 20-րդ դարի կեսերը⁷⁷⁷:

Այնթապցի մյուս զվարճախոսը **Պրոֆ. (Ալեքսան) Պէզճեանն էր**. «Պրոֆ. Պէզճեան ո՛րքան գիտնական ուսուցիչ, նո՛յնքան գիտնական բանախօս – ժամերով կրնար հմայուած պահել իր ունկնդիրները, խոսքերը համեմելով զուարթ անեկդոտներով կամ սրամիտ ակնարկութիւններով, որոնք ժպիտ ու ծիծաղ կը կորզէին հաւաքուած բազմութենէն»⁷⁷⁸: Իսկ **Շնորհօքեան Արմենակը** «Այնթապի յայտնի կատակասէրներէն ու հեզնաբաններէն է, ծանոթ նաև **Քէահկէճի Արմենակ** անունով»⁷⁷⁹: **Պալը Այնիլեանն** (Ժողովրդական անվանակոչությունը՝ **Այնիլի Պալ**)՝ իր ժամանակի՝ 19-րդ դարի երկրորդ կեսի թիվ 1 ջութակահարն էր, որով շենացվում էին հարսանեկան հանդեսներն ու ընտանեկան խնջոյքները: «Կը պատմեն, թէ Պալը նուագէ զատ ամէն բանի մէջ միամիտին մէկը եղած է, տխմար կոչուելու չափ միամիտ»⁷⁸⁰:

Ի դեպ, աշխարհի մի շարք հանրահայտ զվարճախոսների պես արևելահայոց և արևմտահայոց հայտնի զվարճախոսներից ոմանք ևս եղել են իրենց ապրած ժամանակների վերնախավի ծաղրածու-զվարճախոսները: Այսպես, **Պըլը Պուղին**, ըստ Մակար վարդապետ Բարխուդարյանի հաղորդած տվյալների, եղել է **Արցախի Վարանդայի իշխան Մելիք-Շահնազար Բ**-ի զվարճախոսը⁷⁸¹: Իսկ 19-րդ դարակեսին **Ապագա Մանիկը Այնթապի** կառավարչի ու նրա սարքած երեկոյթների հայտնի զվարճախոսն է եղել: Նրա մասին «Պատմութիւն Անթէպի հայոց» գրքում գրված է. «Կ'ըսեն, թէ թուրք մեծաւորներու խնջոյքներուն **Խիկար Իմաստունն էր ան** եւ իր զուարթ խոսքերով ու սրամտութիւններով շէնութիւն կը բերէր հաւաքոյթներուն»⁷⁸²: Իր սրամտությամբ և հա-

⁷⁷⁷ Պատմութիւն Անթէպի հայոց, Գ հատոր, խմբագիր՝ Երուանդ Պապայեան: Լոս Անջելես, 1994, էջ 349:

⁷⁷⁸ Նույն տեղում, էջ 354:

⁷⁷⁹ Նույն տեղում, էջ 358:

⁷⁸⁰ Նույն տեղում, էջ 349:

⁷⁸¹ Պըլը-Պուղի, գրեց Մ. Վ. Բարխուդարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեան եւ Ընկ. տպարան, 1883, էջ Գ:

⁷⁸² Պատմութիւն Անթէպի հայոց, Գ հատոր, խմբագիր՝ Երուանդ Պապայեան: Լոս Անջելես, 1994, էջ 349:

մարձակությամբ Ապագա Մանիկը նման է եղել արցախցի Պըլը Պուղուն:

Ըստ Կարապետ քահանա Գալֆայանի՝ Կեսարիայում ժողովրդի կողմից ճանաչված ու սիրված է եղել **խենթ-Կարոն**՝ Սիս քաղաքի կառավարչի հայտնի զվարճախոսը: Այդ կապակցությամբ ահա թե ինչ է արձանագրված **խենթ-Կարոյի մասին** Կ. Գալֆայանի հրատարակած չորս երգիծական մանրապատումներից մեկում՝ «Ուրիշ բանի չէր նմանէր» նմուշում. «ՄԵՏՏԵՄ ՊԷՅ, Սոյ Աղան իր մօտ զուարճախօս հայ մը ունէր, որ **խիկարի նման իմաստուն էր**, բայց մարդիկ զինքը կոչեր էին **խենթ-Կարօ**»⁷⁸³: Ինչպես տեսնում ենք, ժողովուրդը մեր դյուցազներգության հերոսների նման բոլոր իմաստուն-համարձակներին ու ճշմարտախոսներին *ծուռ* կամ *խենթ* է անվանել, Արցախում իր սիրելի հերոսին կոչելով՝ *Պել-պըլ*, Կեսարիայում՝ *խենթ* և այլն:

Մյուս խմբի զվարճախոսները իրականության մեջ գործող **քաջնազարական կերպարներ** են, որոնց ունակությունները չեն համապատասխանում զբաղեցրած պաշտոնին, և նրանց գործողություններն ու խոսքը զավեշտի առաջացման պատճառ են դարձել: Նմաններից կարելի է հիշատակել **Մացակ Պապյանին ու նրա կնոջը** կամ **Գյումրու և Վանաձորի քաղաքապետներին**, կամ էլ հիշենք հենց թեկուզ մեր օրերում պատմվող այն բազում անեկդոտները, որոնց հերոսները վերին և ստորին օղակներում պաշտոններ ձեռք բերած կամ պատգամավոր դարձած մերօրյա **քաջնազարական** անձինք են⁷⁸⁴:

Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության նախագահին գնդակահարելուց մի քանի ամիս անց հայկական պատվիրակությունը Մոսկվայում ինչ-որ միջոցառման մասնակցելիս հանդիպում է նաև Ստալինին: Ստալինը բոլորին ձեռքով բարևում է, իսկ Ստեփանավանի շրջանի Գյառգյառ գյուղի կոլխոզի նախագահ Մացակ Պապյանը, որը բարձրահասակ և հաղթանդամ է եղել, երկար ձեռքերով ու խոշոր մատներով, ոգևորված այնպես է սեղմում Ստալինի ձեռքը, որ սա, դիմելով Հայաս-

⁷⁸³ Գիրք առակաց (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէրոթ, Տպարան՝ Կ. Տօնիկեան, 1957, էջ 81-82:

⁷⁸⁴ Մեր հավաքածուում մեծ քանակ են կազմում նմանատիպ «հերոսների» մասին գրառումները:

տանի ղեկավարներին, ասում է. «Իսկ դուք ասում եք՝ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ չունենք: Ահա ձեզ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ»:

Ո՞վ կարող էր «ժողովուրդների հոր» խոսքը չկատարեր: Եվ Հայաստան վերադառնալուց հետո սովորական կոլտնտեսության կիսագրագետ նախագահը հանկարծ դառնում է հանրապետության երկրորդ դեմքը, իսկ նրա գեղջկուհի կինը՝ երկրորդ տիկինը: Սկզբում շուկով, Ստալինից հետո մի փոքր բարձրաձայն ժողովուրդը երգիծանքի լեզվով անմիջապես արձագանքում է այդ անհեթեթությանը: Շուրջ 15 տարի պաշտոնավարած Մացակ Պապյանի ու հատկապես նրա տիկնոջ մասին իրականության հենքի վրա ստեղծված անեկդոտները մինչև վերջերս տարեց մարդիկ հիշում ու հարկ եղած դեպքում պատմում էին⁷⁸⁵.

...Մի անգամ Մացակ Պապյանին ասում են. «Ձեր աշխատակիցներ այսինչը ես այնինչը կապուած են իրար»: «Չի կարող պատահել, – զարմանում է նախագահը, – նրա փունը՝ որպե՛ղ, նրանը՝ որպե՛ղ...»⁷⁸⁶:

Մասնագետներ են կցում Մացակ Պապյանին ու կնոջը, որ գրագետ ու բարեկիրթ դարձնեն, հանդիպումների ժամանակ վարվելակերպ սովորեցնեն, դիմացինի հետ խոսելիս հոգնակի թվով խոսեն...

Հեռախոսը զանգում է: Մացակ Պապյանի կինը վերցնում է լսափողը և ասում.

– Այո, Մացակ Պապյանի կանայք են ձեզ հանգստացնում...: (Տարբերակ՝ Մացակ Պապյանի կնանիքն են խոսում): (ԱՍՇՀ)

Հայկական անեկդոտների որոշ հերոսներ էլ իրապես եղել են հիմնավոր գիտելիքի տեր սրամիտ ու զվարճախոս մարդիկ, ինչպես եվրոպական կրթություն ստացած դասախոսներ **Հրաչյա Աճառյանն** ու **Աշոտ Մայսեյիչը**, քյավառցի դատավոր **Թոր-**

⁷⁸⁵ Դրանցից մի քանիսը ընդգրկվել են տարատեսակ ժողովածուներում, իսկ մեր գրառումները պահպանվում են անձնական հավաքածուում:

⁷⁸⁶ **Սահակյան Ա.**, 500 կատակ, «Կիլիկիա» գրատուն-հրատարակչատուն-տպարան, Հալեպ, 2000, էջ 200:

գոմյանը⁷⁸⁷ և այլք, որոնց սրամիտ ու զավեշտալի խոսքերն ու պատմություններն էլ հիմք են հանդիսացել տարբեր շրջանակներում նրանց առնչվող պատումների ու ասույթների շրջանառվելուն: Վերջիններիս մեջ Հր. Աճառյանն առանձնանում է ոչ միայն իր սրամտությամբ, այլև իր մասին ստեղծված նյութերի հանդեպ ունեցած առանձնահատուկ վերաբերմունքով: Աճառյանը մեր այն սիրված մտավորականներից է եղել, որի մասին ոչ միայն նրա կենդանության օրոք, այլև նրա մահից կես դար անց անգամ հայագետների, դասախոսների և ուսանողների շրջանակներում բազմաթիվ անեկդոտներ ու սրամտություններ են շրջանառվում:

«Աճառյան մարդ-գիտնականն ու հումորը իրարից անբաժան են եղել ամբողջ կյանքում», – գրում է լեզվաբան Խաչիկ Բատիկյանը «Հրաչյա Աճառյանը՝ բանաստեղծ և հումորի սիրահար» վերնագիրը կրող հոդվածում⁷⁸⁸:

Աճառյանի անսահման սրամտության, հեգնանքի և սպանիչ ծաղրի մասին պատմող նմուշներից բերենք մի օրինակ.

Ծեծում են Աճառեանի դուռը: Կինը բացում է եւ տեսնում երկու անձանոթ տղամարդկանց, որոնք, իրենց ասելով, եկած են լինում կոմունիզմի կառուցման համար փող հավաքելու:

– Այս ի՞նչ կողոպուտ է, այս ամենի հետք ինչ կապ ունի Աճառեանը, – վրդովված հարցնում է տիկին Սոֆիկը:

Աճառեանը լսում է այս ամենը եւ ասում է.

– Սոֆի՛կ ջան, ինչքան ուզում են, տո՛ւր, թող գնան: Միևնույն է, սրանք կոմունիզմ կառուցողը չեն, կասեն Աճառեանը չտվեց, դրա համար էլ չկառուցեցինք⁷⁸⁹:

Ծնունդով ղարաբաղցի, Գերմանիայում կրթություն ստացած, համեստ, հասարակ պահվածքով, չափազանց բանիմաց, կենսախինդ, համով-հոտով ժողովրդական

⁷⁸⁷ Թե՛ Աճառյանի ու Աշոտ Մայսեյիչի, թե՛ Թորգոմյանի վերաբերյալ մեր գրառումները պահպանվում են ատենախոսի անձնական հավաքածուում:

⁷⁸⁸ **Աճառյան Հր.**, Բանաստեղծություններ: Անեկդոտներ իմ մասին: Կազմեց և ձևավորեց Հրաչյա Աճառյան Կրտսերը, Եր., Գրակ. և արվեստի թանգարանի հրատարակչություն, 2008, էջ 14:

⁷⁸⁹ Նույն տեղում, էջ 114:

խոսքով ու եզակի հումորով օժտված **Աշոտ Մայսեիչը** մեխանիկայի հմուտ գիտակ է եղել, դասավանդել է Երևանի մի քանի բուհերում: Աշոտ Մայսեիչը մահացել է 1959 թվականին, իսկ նրա բանիմացության, բացառիկ հումորի մասին շուրջ կես դար հիշում ու պատմում են՝ միաժամանակ ներկայացնելով նրա հետ կապված երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները:

Մեզ հաջողվել է գրառել և մոռացությունից փրկել Աշոտ Մայսեիչի մասին պատմվող անեկդոտ-սրամտություններից մի փունջ ու փոխանցել գալիք սերունդներին: Ահա դրանցից մի նմուշ.

Մեխանիկայի բնագավառում երկրի առաջընթացը ուսանողներին ներկայացնելիս Աշոտ Մայսեիչն ասում է.

– *Էրեխե՛ք ջան, վաղը-մյուս օրը գիտությունն ու տեխնիկան էնքան ա զարգանալու, որ հոսքագծի մի ծայրից հումքը դնելու են, մյուս ծայրից պատրաստի արտադրանքն ա դուրս գալու: Ասենք՝ մի ծայրից ոչխարը գցելու են, մյուս ծայրից պատրաստի կալքասն ա դուրս գալու:*

Ուսանողներից մեկը դասախոսի հոգու հետք խաղալու համար հարցնում է.

– *Աշո՛տի Մայսեիչ, իսկ հնարավո՞ր ա, որ գիտությունն ու տեխնիկան էնքան զարգանան՝ ձեր ասածի հակառակը լինի. մի ծայրից երշիկը գցեն, հոսքագծի մյուս ծայրից ոչխարը դուրս գա:*

– *Դա շատ վաղուցվանից է կիրառվում: Տղա՛ ջան, քանի՞ տարեկան ես, – հարցնում է Աշոտ Մայսեիչը: // Թե՛ տասնինը: //*

– *Տղա՛ ջան, ուղիղ 20 տարի առաջ քու հերը երշիկը գցել ա, ու քեզ պես ոչխարն ա դուրս էկել... (ԱՍՇՀ)*

Ոչ միայն *Քյավառում*, այլև հարևան շրջաններում ու մայրաքաղաքում շրջանառվում են հայտնի **զվարճախոս, դատավոր Թորգոմյանի** հետ կապված մանրապատումները, որոնք բոլորն էլ ստեղծվել են իրողությունների հենքի վրա:

Բռնաբարության համար դատարան է դիմում բարոյականությամբ ոչ կայուն

վարքի տեր մեկը, թե՛ իրեն բռնաբարել են: Դատի ժամանակ երբ տուժողը կրկին պնդում է, թե իր հանդեպ բռնի է կատարվել միջադեպը, դատավոր Թորգոմյանը մի կոճի թել է տալիս տուժողին, ու ինքը ասեղն է դեմը պահում է ու հանձնարարում:

– Փորձի՛ր էդ ձեռքիդ թելը էս ասեղի անցքը մտցնել:

Երբ տուժողն ուզում է թելը մտցնել ասեղի անցքը, Թորգոմյանն ասեղը կողքի է թեքում: Այս գործողությունը մի քանի անգամ փորձելուց հետո, տուժողը դժգոհում է.

– Իհի՛, ընկե՛ր դատավոր, մի փախցնի, որ կարենամ թելն անցկացնեմ, է՛:

– Ըհը՛, տեսա՞ր, ախչի՛կ ջան, բա ասում ես բռնաբարել ա, դուն է՛լ կարող էիր փախցնել, չէ՞... (ԱՍՇՀ)

Անեկդոտների որոշ հերոսներ էլ ոչ միայն սրամիտ չեն եղել, աչքի չեն ընկել իրենց գիտելիքներով ու ունակություններով, այլև ընդհանրապես կապ չեն ունեցել իրենց մասին պատմվող անեկդոտների հետ:

1950-ականների երկրորդ կեսից առ այսօր շրջանառվում են **կիրովականցի** (լոռեցի) **Ռուբենի** անեկդոտները: 1960-70-ականները ռուբենյան անեկդոտների ծաղկման ու տարածման ամենաեռուն շրջանն էր: Ռուբենը սուր մտքով ու խոսքով աչքի չընկնող անձնավորություն է եղել, մասնագիտությամբ՝ ապակի (շուշա) գցող: Միակ ընդգծված բանը նրա բարակ ձայնն է եղել, մեկ էլ ամեն անգամ լուսամուտի ապակին զցելու ժամանակ ջարդելիս՝ «Ա՛, էս անդերը ոնց որ փթած ըլի» փնթփնթոցը...:

Լոռեցի զվարճախոս Ռուբենի անեկդոտները կապ չունեն շուշա գցող **Ռուբենի** հետ: Հայ ժողովրդական զվարճապատում-զվարճախոսությունների ռուբենյան շարքի նմուշների մի մասը հորինել, մի մասն էլ՝ լսած կամ կարդացած տարատեսակ աղբյուրներից Ռուբենին վերագրելով՝ շրջանառության մեջ է դրել նրա հարևան Ռուլանդը՝ Ռուլանդ Ամիրբեկյանը, այնուհետև ժողովուրդն իր վրա է վերցրել այդ գործառույթը՝ ստեղծելով լոռեցի զվարճախոսի մի ինքնատիպ կերպար:

Ահա թե ինչ է գրում նրա մասին ժողովրդի ոգին ու կենսունակությունը երկրաշարժից հետո պահպանելու նպատակով Վանաձորում հրատարակվող «Եղինջ» երգի-

ծաթերթի հիմնադիր-խմբագիր, երգիծաբան Սամվել Խալաթյանը. «Երևի շատերը չգիտեն, որ Լոռվա ժպիտները առաջինը ծնվեցին ու շուրթից շուրթ անցան բնիկ Ղարաքիլիսեցի, վաղամեռիկ Ռուլանդ Ամիրբեկյանի կողմից: Նա չկա, բայց նրա հորինած ժպիտներն այսօր էլ հնչում են ու իրենց թարմությունը չեն կորցրել»⁷⁹⁰:

Այնուհետև Խալաթյանը ներկայացնում է ժողովրդի մեջ շրջանառվող Ռուլանդի պատմած անեկդոտներից մի քանիսը, որոնցից մեկը ներկայացվում է ստորև.

– Սարո՛, մի հանելուկ եմ ասում ու մի սուտկա ժամանակ փալիս, թե գտա՛ր...

– Ասա՛, Կարո՛... // – Էն ինչն ա, ինչը, որ ցած ես դնըմ, զնգըմ ա: // – Ջնջիլը://

– Արա՛, որ գիտեիր, էլ ո՛ր էիր խոսացնըմ...⁷⁹¹

Լոռեցի Ռուբենի անեկդոտները եթե 1950-80-ականներին շրջանառվում էին թե՛ երիտասարդության, թե՛ մեծահասակների միջավայրում, ապա այսօր դրանք կենցաղավարում են հիմնականում ավագ սերնդի մեջ: Իսկ երիտասարդների կողմից պատմվելիս անվան փոխարեն նշվում է տեղավայրն ընդգծող հավաքական զվարճախոսին (մի լոռեցի, լոռեցին):

Ռուբենյան անեկդոտների գրառումները տեղ են գտել հրատարակված մի շարք գրքերում⁷⁹² ու անձնական հավաքածուներում⁷⁹³:

Հայ զվարճախոսների մի մասն էլ որոշակի անուններով ներկայացող, բայց մտացածին՝ անիրական **հավաքական կերպարներ** են, ինչպես **արցախյան պատե-**

⁷⁹⁰ «Եղինջ» երգիծաթերթ, 1995թ., թիվ 3/14/, էջ 2:

⁷⁹¹ Նույն տեղում:

⁷⁹² Լոռվա զվարճապատումներ, հավաքեց և մշակեց Ս. Ճշմարիտյանը, Գյումրի, «Կուսայրի» հրատ., 1992, էջ 5, 6, 7, 8, 10, 11, 12, 15 (8 նմուշ):

Լոռվա զվարճապատումներ, հավաքեց և մշակեց Արամայիս Քոչինյանը, Գյումրի, «Կուսայրի» հրատ., 1992, էջ 11, 13, 15 (3 նմուշ):

ՀԱԲ, հատոր 20, Գևորգյան Թ., Լոռի (Տաշիրք-Ձորագետ), Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 166-174 (80 նմուշ): **Անթանեսյան Վ.**, Լոռվա ժպիտներ, Եր., Հեղ. հրատ., 2012, էջ 70-79 (22 նմուշ) և այլն:

⁷⁹³ Արմեն Շավարշի Սարգսյանի հավաքածու (շուրջ 100 նմուշ՝ գրառված 1966-80թթ.): Իրենց անձնական հավաքածուներում որոշակի քանակությամբ ռուբենյան գրառումներ ունեն նաև քանդակագործ-խաչքարագործ Բոգդան Հովհաննիսյանը, երգիծաբան Սամվել Խալաթյանն ու գրող Վալտեր Թորոսյանը: Վերջինիս անեկդոտների անտիպ ժողովածուն, որտեղ կան նաև լոռեցի զվարճախոս Ռուբենի անեկդոտներից, գտնվում է «Հայաստան» հրատարակչությունում:

րազմի զվարճախոսներն են *Խաչին, Բուբուլը, Ջոկին, Գոգին*⁷⁹⁴ կամ էլ մանկական անեկդոտների շիրակցի հերոսներ *Վարդանիկը, Աշոտիկն ու Ընկեր Մարգոն*⁷⁹⁵, *լոնեցի Համբոն*⁷⁹⁶ և այլք: Իսելապակասության թեմայի մասին պատմող թարվերոյանական տարբերակում *կաճեպցի «իմաստունին» ներկայացնող* հավաքական կերպարը կոնկրետացված *Կակուսիկն է*⁷⁹⁷:

Հայոց երգիծական բանարվեստում *կին զվարճախոսներ* մեզ շատ քիչ են հանդիպել, եղածների մեծ մասի համբավն էլ տվյալ տարածաշրջանի սահմաններից գրեթե դուրս չի եկել:

Անեկդոտների կին զվարճախոսների մեջ ևս կան *մտացածին* անձինք, ինչպես *Ընկեր Մարգոն*¹ դպրոցական թեմայով ուսուցչուհու կերպարը ներկայացնող անեկդոտների գյումրեցի հերոսուհին, որը միշտ հանդես է գալիս *Վարդանիկի*, երբեմն էլ՝ *Վարդանիկի* և *Աշոտիկի* հետ: Իսկ իրական կյանքում ապրած ու գործած մեզ հայտնի կին զվարճախոսներից է եղել *գյուլիստանցի* (Արցախ) *Բաղամ դադեն*, որի մի քանի մանրապատում 1878թ. ներկայացրել է Գ. Շիրմազանյանը⁷⁹⁸: Կին հայտնի զվարճախոսներից է եղել նաև կրկին Արցախի *Շահումյան-Վարդուտ գյուղից* (*Գյուլիստան*) զվարճախոս-բանասաց *Գուրդանց Գյուլին*⁷⁹⁹, իսկ Տաուշի տարածաշրջանից (Շամշադին)՝ *Չարչունց Ժենիկը՝ Ավայան Ժենիկը*⁸⁰⁰ և *Անուշ աքիրը*: (ԱՍՇՀ)

Հավաքական զվարճախոսի հետաքրքիր կերպարով է հանդես գալիս **բուլղարահայության** անեկդոտների սիրված հերոս **Կարապետը**:

⁷⁹⁴ **Աթաջանյան Վ.**, *Խաչին, Բուբուլը և ուրիշները*, ԼՂՀ ԻՊԿ օրգան «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1993թ., «Մաշտոց» հրատ., 2004թ.: **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ակնթարթ: Զվարճապատումներ: «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1995:

⁷⁹⁵ **Գևորգյան Հ.**, Լենինականյան զվարճալի գրույցներ և սրամտություններ, Եր., «Հայաստան» հրատ., 1990, էջ 136-148: **Իկիլիկյան Հ.**, Գյումրին, Պոլոզ Մուկուչը և երգիծական մանրապատումներ, Եր., «Հայաստան» հրատ., 1989, էջ 251-257:

⁷⁹⁶ **Սաքանյան Ա.**, Լոռվա հանաքներ, Եր., Հեղինակային հրատ., Եր., 2004, էջ 5-76:

⁷⁹⁷ ՀԱԻ-ի բանահյուսության արխիվ, Գ. Թարվերոյանի ֆոնդ, FF: I, էջ 4469:

⁷⁹⁸ Անեկդոտներ, զուարճալի գրույցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած, ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, Թիֆլիս, 1878, էջ 69-70, էջ 100:

⁷⁹⁹ **Ղուլյան Բ.**, Գյուլիստան, Պատահիկներ մոտիկ անցյալից, Եր., «Ձանգակ-97» հրատ., 2004, էջ 96:

⁸⁰⁰ Կատակում են մովսեսցիները, գրառողներ՝ Ա. Պապյան, Հ. Պապյան, Եր., «Նոյյան տապան» հրատ., 2012, էջ 28-30:

Մեծ եղեռնից փրկված գաղթականների մի հոծ զանգված ապաստան է գտում նաև Բուլղարիայում: Օտար միջավայրում հայտնված հայության շփումները տեղացիների հետ հաճախ զավեշտալի միջադեպերի տեղիք են տալիս՝ դառնալով անեկդոտների առաջացման պատճառ: 2007 թվականին բուլղարերեն հրատարակվում է հայ ժողովրդական բանահյուսությանը նվիրված մի գիրք⁸⁰¹, որտեղ բուլղարացի ընթերցողը հայկական բանարվեստի տարբեր ժանրերի հետ հաղորդակցվում է հարցազրույցի միջոցով: Անեկդոտի ժանրին անդրադառնալիս այն հարցին, թե բուլղարահայերն ունե՞ն արդյոք ազգային անեկդոտների հերոս-զվարճախոսներ, ինչպես Խոջա Նասրեդինը, պատասխանը լինում է. «Իհա՛րկե, ունեն, այդ հերոսը **զվարճախոս Կարապետն է**»⁸⁰²: Այնուհետև գրքում ներկայացվում են Կարապետին առնչվող շուրջ երկու տասն-յակի հասնող տարաբնույթ անեկդոտներ⁸⁰³, որոնք սկզբնական շրջանում առնչվել են ազգային խնդիրների, լեզվական առանձնահատկությունների հետ, սակայն հետագայում աստիճանաբար հայ զվարճախոսի անեկդոտները դուրս են գալիս ազգայինի շրջանակներից, ինտեգրվում նոր կյանքին ու միջավայրին, և Կարապետը երգիծապատում-զվարճախոսություններում արդեն երևում է երկրի ղեկավարների⁸⁰⁴, հրեաների⁸⁰⁵ հետ հարաբերություններում:

Զվարճախոսների մի մասն էլ ոչ թե կոնկրետ կամ ընդհանրացնող անձնանուն-մականուններով է հանդես գալիս, այլ որոշակի տարածաշրջան ներկայացնող **հավաքական կերպարի** միջոցով (վանեցին, ապարանցին, քյավառցին, ղարադաղցին, մի ղարաբաղցի, մի լոռեցի և այլք):

Հավաքական կերպարների առատությամբ ու յուրահատկությամբ թերևս հարկ է առանձնացնել **Հ. Չոլաքյանի** հրատարակած երգիծական մանրապատումների և զը-

⁸⁰¹ **Евгения Мицева, Сирануш Папазян-Таниелян** «Арменцита разказват за себе си...». Българска Академия на науките етнографски институт и музей. София. Академично изд-о «Проф. Марин Дринов». 2007.

⁸⁰² Նույն տեղում, с. 74:

⁸⁰³ Նույն տեղում, с. 74-88.

⁸⁰⁴ Նույն տեղում, Գарабед и Тодор Живков, с. 76:

⁸⁰⁵ Նույն տեղում, Գарабед и еврейный лимонададжия, с. 83-84:

վարճախոսությունների ժողովածուն⁸⁰⁶, որտեղ որոշակի անուններով անհատականացված զվարճախոսների փոխարեն հանդես են գալիս արևմտահայության հայաթափված բնակավայրերը ներկայացնող հավաքական զվարճախոս-կերպարները՝ այնթապցին, մարաշցին, արաբկիրցին, ակնցին, զեյթունցին և այլք:

Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից Հալեպում իրար գլխի հավաքված գաղթականության ստեղծած թաղամասերն անվանելով մի նոր **Արշակավան**, Չոլաքյանը գրում է. «Այս ժողովուրդը, որ մահին հաղթեց, իր մեռելներուն համար բառ չունէր, ունենալ չէր ուզեր... Ինչո՞ւ չխօսէր իր մասին... Այո՛, իրենց մեռելները լալու փոխարէն անոնք խնդացին ապրողներուն վրայ: Այդ զուարթախոս ծաղրն ու ծիծաղը զիրենք ավելի մօտեցուց իրարու, նոյնացուց:

Եւ այսպէս սկիզբ առաւ Արշակաւանի ծիծաղը»⁸⁰⁷:

Ահա այդ զուարթախոս ծաղրն ու ծիծաղից մի նմուշ.

Սասունցին հայելիի կտոր մը կը տեսնէ գեպնին: Կը վերցնէ, կը նայէ...

– Կը ներես, աղբա՛ր, կարծեցի տէր չունէր, – կըսէ ու հայելին կը դնէ գեպնին»⁸⁰⁸:

Հավաքական զվարճախոս հերոսի գործառույթով է հանդես գալիս նաև Հայաստանում և արտերկրում հայտնի **Հայկական ռադիոն**, որի անեկդոտները, Վլադիմիր Վիսոցկու արգելված երգերի նման, անկախ կրոնից, լեզվից և քաղաքական հայացքներից, չճանաչելով սահման ու սահմանագիծ, երկաթյա վարագույրը ճեղքելով, մարդկանց սրտերի միջով ազատ ելումուտ են անում: 19-րդ դարի վերջից նաև արտերկրում հանդես եկող **Հայկական անեկդոտները**, 20-րդ դարի սկզբներից վերանվանվելով **Հայկական ռադիոյի անեկդոտներ**, հարյուր տարուց ավելի է՝ ծիծաղ է պարզևում մարդկությանը: Զվարճախոս **Հայկական ռադիոյի** անվան շուրջ, նրա կենցաղավարման ու մասսայականության գործընթացներին առանց կողմնակի միջամտության՝ կա-

⁸⁰⁶ Միջ-գաւառական անեքթօտներ, Հաւաքեց եւ ներկայացուց Յ. Չոլաքեան, Հալէպ, Տպ. Արեւելք-Հալէպ, 1988:

⁸⁰⁷ Նոյն տեղում, էջ 4:

⁸⁰⁸ Նոյն տեղում, էջ 17:

մովին «ներգրավվել» են ոչ միայն հայ, այլև աշխարհի մի շարք ազգություններ: Դրան, անշուշտ, նպաստել է նաև նրա կարճատև՝ հարցուպատասխանական կառուցվածքը և ամենաարդիական ու ամենաբազմազան թեմաներին ու մարդկանց հուզող հրատապ խնդիրներն ծիծաղի լեզվով հստակ պատասխան տալու աներևակայելի հնարամտությունը: Այսպես՝

– *Ինչի՞ է վարացել Հայկական ռադիոյի լսելիությունը:*

– *Որովհետև առաջ հաղորդումները եթեր էին փրվում Երևանից, հիմա՝ Մազահանից*⁸⁰⁹:

Կամ՝

– *Չինաստանում ինչպե՞ս արձագանքեցին ՄԱԿ-ի այն որոշմանը, որ հայերենը դառնա միջազգային լեզու:*

– *Խնդրեցին ուղարկել 30 միլիոն հայերենի ուսուցիչներ*⁸¹⁰:

Ի դեպ, **Հայկական ռադիոյի** անեկդոտները, հայերենից և ռուսերենից բացի, հրատարակվել են նաև մի շարք լեզուներով: 2004 թվականին Երևանում այն հրատարակվում է երկլեզու՝ ռուսերեն և անգլերեն գրքույկով, որի կազմին «անեկդոտ» եզրույթը թարգմանված է «ջոկ» (**joke**)⁸¹¹: Գրքի համառոտ բնութագրման՝ անոտացիայի մեջ նշվում է, որ որոշ նմուշներ անգլիական անեկդոտների վերապատմություններ են⁸¹²: Սակայն համոզված չի կարելի այդ վարկածը պնդել, քանզի շատ հնարավոր են դրանց առկայությունը նաև այլ ժողովուրդների երգիծական բանարվեստում:

⁸⁰⁹ Հայկական ռադիոյի անեկդոտները, Եր., ա/թ, ա/հ, «Գիտելիք», «Անահիտ-2» գրահրատարակչական կրոպերատիվ, թիվ 139:

⁸¹⁰ Նույն տեղում, թիվ 145:

⁸¹¹ Анекдоты Армянского радио, Сост. Константин Миракян, Антаpec , 2004. 76 с.— Jokes of Armenian Radio, Yerevan: Antares, 2004, 76 pp.

⁸¹² Նույն տեղում, с. 2:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ատենախոսության շարադրանքը բխեցնում է հետևյալ հիմնական եզրակացությունների՝

1. Ավելի քան 170 տարիների ընթացքում տպագիր և անտիպ հսկայական քանակությամբ նյութ է կուտակվել, սակայն հայ վիպական բանահյուսության ամենակենսունակ և մասսայականություն վայելող ժողովրդական զվարճապատումներն ու զվարճախոսությունները՝ անեկդոտները, առ այսօր համակողմանի չեն հետազոտվել. բացի դրանց մասին գրված մի քանի հոդվածներից, այլ ուսումնասիրություններ չեն կատարվել: Որոշ հատ ու կենտ անդրադարձներ էլ հակիրճ ձևակերպումներ են, որոնք տեղ են գտել կա՛մ հրատարակված անեկդոտների և զվարճախոսների գրքերում ու բանահյուսական նյութեր ընդգրկող տարատեսակ ժողովածուներում՝ իբրև առաջաբան, կա՛մ բանագիտական ուսումնական ձեռնարկներում:

2 Հայ ժողովրդական երգիծական բանավոր ստեղծագործությունների համատեքստում (երգիծական հեքիաթ, երգիծական առած-ասացվածք, երգիծական հանելուկ և այլն) **ժողովրդական երգիծական մանրապատումն առանձնանում է տեսակային հատկանիշը բնորոշող կողմերով՝ քիչ թե շատ ծավալուն կամ կարճառոտ նովելային դիպաշար** (սյուժե), **անսպասելի զավեշտալի ավարտ** և հեղինակային նմանատիպ ստեղծագործություններից տարանջատելու համար **«ժողովրդական» բառի մատնանշում: Ժողովրդական երգիծական մանրապատումում շեշտվում են տվյալ ստեղծագործության և՛ հեղինակը** (ժողովուրդը), և՛ **բնույթը** (երգիծական), և՛ **կառուցվածք-ծավալը** (մանր՝ փոքրածավալ, կարճառոտ), և՛ **արձակ շարադրանքը** (պատում-պատմություն):

Անսպասելի ծիծաղ առաջացնող **անդիպաշար** (անսյուժե)՝ մենախոսական, երկխոսական, բաժակաճառային, անեծքա-օրհնանքային, հանելուկային, ցուցանակա-գովազդային և այլ կառույցներով ու մանկական խոսքի զավեշտալի դրսևորումներով

ստեղծագործությունները անսպասելի ծիծաղ հարուցող աներևակայելի, երբեմն էլ անհեթեթ մեկնաբանություն-հիմնավորումներով են հանդես գալիս: Եվ քանի որ նմանատիպ ստեղծագործությունների հիմնական հատկանիշը կրկին անսպասելի զվարճանք պատճառող կարճառոտ ամփոփ խոսքն է, դրանց մենք անվանել ենք **ժողովրդական զվարճախոսություններ:**

3. Հայերեն ժողովրդական և գիտական եզրաբառերին զուգահեռ՝ հավասարապես օգտագործվում է նաև **օտարալեզու «անեկդոտ»** եզրույթը: Վերջինս կիրառվում է **թե՛ դիպաշարով, թե՛ անդիպաշար** ժողովրդական ստեղծագործությունների համար, ինչի հավաստումը հանրահայտ «Հայկական ռադիոյի» զվարճախոսությունների համար կիրառվող «անեկդոտ» եզրաբառն է:

4. Իբրև վիպական բանարվեստի ինքնուրույն տեսակ՝ հայ ժողովրդական **երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների ձևավորմանն ու կայացմանը նպաստել են բանահյուսության գրեթե բոլոր ժանրերն** իրենց թեմատիկ, կերպարային, կառուցվածքային, դարձվածային, իմաստաբանական ու պատկերավորման ինքնատիպ համակարգով:

5. **Հայոց հարսանեկան և հուղարկավորության արարողակարգերի** հետ կապված ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսությունները, բացի այն հիմնական գործառույթից, որ կատարում են, ունեն ճանաչողական վիթխարի արժեք: Լինելով մարդկության ամենահին ժողովրդական ծիսակարգերից, դրանք իրենց մեջ ամբարել և պահպանել են ոչ միայն այդ արարողակարգերին առնչվող բազմաթիվ տարրեր, որոնք պատկերացում են տալիս վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերն ապրած հայ մարդու կյանքի, կենցաղի, սովորությունների, նիստուկացի, լեզվամտածողության, մարդկային փոխհարաբերությունների վերաբերյալ, այլև այդ արարողակարգեր մուտք գործած ազգային կամ օտար նոր տարրերի կիրառության մասին:

6. Պատմավավերագրական նյութի մատուցման յուրահատկությամբ **Մեծ եղեռնին** առնչվող հայ ժողովրդական երգիծապատում-զվարճախոսություններում գրեթե

բացակայում են երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների գերակշռող մասին բնորոշ պատկերավորման տարատեսակ միջոցներով (ժողովրդական դարձվածք, բառագեղչում, բառամիացում-բառաբաժանում և այլն) ու հնչյունական և հնչերանգային զանազան ձևերով ու ոճական հնարանքներով (ձայնեղների խլացում ու խուլերի ձայնեղացում, երգեցիկ տոն, բարձր և ցածր, երկարացման հնչերանգ և այլն) անսպասելի ծիծաղ առաջացնելու դրսևորումները: Դրանցում իրագործվում են հիմնականում գործողություններից բխող կտրուկ և անակնկալ ծիծաղ հարուցող խոսքի օգնությամբ:

7. Լեզվական ուժացման և ազգապահպանության խնդիրներն արծարծող անեկդոտները ցույց են տալիս, որ **կամավոր կամ բռնի լեզվական ուժացումը և ցեղասպանությունը պատրճառահեղանքային կապով են կապված:** Այս դեպքում ժողովրդական երգիծանքով ասված խոսքը ավելի ազդեցիկ, նպատակային ու սթափեցնող կարող է լինել, քան ցանկացած անկենդան կարգախոս կամ սրտաճմլիկ ճառ:

8. Հայկական անեկդոտներում **պանդիստությունը՝ արտագնա աշխատանքը,** ներկայացվում է ավանդական ընտանիքների քայքայման, բարոյական չափանիշների խախտման համատեքստում: Երբեմն այդ երևույթները այնպիսի «քնքշությամբ» են ներկայացվում, որ ականա մոռացվում է կողակցի դավաճանությունը՝ դառնալով զավեշտի դրսևորման ինքնատիպ միջոց:

Նոր ժամանակներում արտագնա աշխատանքի թեման հայկական երգիծական մանրապատում-զվարճախոսություններում ներկայացվում է նաև անիրական՝ հեքիաթային տարրերով շաղախված: Երբեմն էլ այդ թեման երկրորդական պլանում է լինում, նշվում է իմիջիայլոց՝ նպաստելով լոկ կառուցվածքային խնդիրների լուծմանը:

9. Ներգաղթի և արտագաղթի թեմաները հայկական անեկդոտներում հիմնականում դրսևորվել է «հրաշք ապրելակերպի» և «պայծառ ապագայի» մասին հայրենիք ներգաղթող սփյուռքահայերին խորհրդային պետության տված սուտ խոստումների ու հիասթափությունների համատեքստում:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության 25-ամյա ժամանակահատվածում արտագաղթը ներկայացվում է երկրաշարժի ու դրան հաջորդած ցուրտ ու մութ տարիների, հին համակարգի փլուզման և նորի անկատարության, գործազրկության, ցածր աշխատավարձի ու անարդարությունների համատեքստում:

10. Ղարաբաղյան շարժմանը նվիրված անեկդոտներում կեղծիքի ու ստի վրա հիմնված 70-ամյա հսկա խորհրդային կայսրությունը դիմակազերծ է լինում: Եվ քանի որ աշխարհի ամենամեծ ու ռազմականապես հզոր ԽՍՀՄ-ի հիմքերը սասանած *Ղարաբաղյան շարժման* ամենատեղում պահին երկրաշարժ եղավ, ու ինչ-որ տեղ ժողովուրդը դա կապեց մեր փոքր ու հանդուգն ազգին պատժելու դիտավորության հետ, հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում այդ երկու իրադարձությունները շատ հաճախ հանդես են գալիս միասին՝ իբրև մեկը մյուսին շաղկապված երևույթներ:

1988-ի դեկտեմբերյան երկրաշարժից հետո ստեղծված անեկդոտներում ժողովուրդը ահռելի չափերի հասնող ավերածությունների և զոհերի համար հիմնական մեղավորների մեջ երբեմն ուղղակի, երբեմն էլ անուղղակի՝ այլաբանորեն, մատնանշում է առաջին հերթին խորհրդային համակարգը, քանզի նախախորհրդային տարիների կառույցները հիմնականում կանգուն էին մնացել, խորհրդային տարիներինը՝ ավերվել:

Հայկական անեկդոտներում ժողովուրդը երկրաշարժը ներկայացնում է *օգնությունների համարեքստում*՝ երկրաշարժից տուժածներին օգնությունների անհավասարաչափ բաշխելու երևույթը ևս կապելով խորհրդային համակարգի հետ:

11. Ղարաբաղյան պատերազմի հենց առաջին ամիսներին ստեղծված երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները մեկ անգամ ևս հավաստում են հայի անկոտրում ու կենարար ոգու գաղտնիքը՝ նաև երգիծանքի լեզվով դժվարությունները հաղթահարելու ունակությունը:

Արցախյան ազատամարտի տարիների անեկդոտների մի մասը, մեր ժողովրդի բանավոր մշակույթում տարածված նմուշներ լինելով, փոփոխելով ու համապատաս-

խանեցնելով պատերազմական կյանքին, ուղղափառապաշտոնի առնչվող առարկաներին ու երևույթներին, նորովի դրսևորումներով է հանդես գալիս՝ ծիծաղի լեզվով ներկայացնելով պատերազմի թե՛ հերոսական, թե՛ եղկելի դրսևորումները:

2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի անեկդոտներում էլ ավելի ընդգծված է երևում հայի անկոտրում ոգին: Աշխարհի տարբեր անկյուններից հայոց հողը պաշտպանելու համար Արցախ մեկնած սփյուռքահայերի ու նաև նոր ժամանակներում արտագաղթած մեր հայրենակիցների պահվածքը արտացոլվում է «*Հայաստանը աշխարհում միակ երկիրն է, որտեղից խաղաղ ժամանակ արտագաղթում են, պատերազմի ժամանակ՝ ներգաղթում*» արտահայտությամբ:

12 Անկախացման առաջին տարիներին վերաբերող անեկդոտները հիմնականում առնչվում են 1991թ. անկախության հռչակագրով ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալուց հետո Հայաստանի Հանրապետության առաջին տարիներին ժողովրդի առջև ծառայած անասելի դժվարությունների հետ: Երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում քննադատության թիրախ են դառնում նորանկախ հանրապետության նախագահները՝ ընտրություններից առաջ ժողովրդին տված խոստումներով, ընտրակեղծիքները, զբաղեցրած դիրքով և ունակություններով ու մտածողությամբ զավեշտ առաջացնող *քաջնազարական* կերպարները, մենաշնորհային ամենաթողությունը, և այդ ամենն այնպիսի նրբությամբ ու հումորով, երբեմն էլ սպանիչ ծաղրով է ներկայացվում, որ և՛ քննադատությունն է առկա, և՛ անզուսպ ծիծաղը:

13 Ծռության՝ խելապակասության թեմայով հայկական երգիծապատում-զվարճախոսությունները տարբերվում են մյուս ժողովուրդների նմանատիպ ստեղծագործություններից թե՛ դրանցում մեր լեզվի տարբեր շերտերի ինքնատիպ դրսևորումներով, թե՛ հայոց աշխարհի բնակլիմայական պայմանների, աշխարհագրական տեղավայրերի ու դրանց առնչվող ավանդազրույցների, հայկական տեղանունների ու անձնանունների առկայությամբ և այլևայլ առանձնահատկություններով, որոնք մեկ անգամ ևս հաստատում են այդ նմուշների հայկականությունը:

14. Մանկական զվարճախոսությունները տարատեսակ մասնագետների համար հետաքրքիր ու արժեքավոր են բանահյուսական այդ յուրօրինակ ժառանգության նորովի գնահատման, փոքր տարիքի երեխաների լեզվամտածողության, «փիլիսոփայական վերլուծությունների», հոգեբանության, աշխարհընկալման կարողությունների խորքերը թափանցելու և չբացահայտված շատ ու շատ գաղտնիքներ վեր հանելու, ինչպես նաև ընտանեկան, կենցաղային ու մարդկային փոխհարաբերությունների ու երբեմն էլ պատմաքաղաքական իրադարձությունների վերաբերյալ մանկան մտածողության տեսանկյունից դիտարկելու առումով:

Հայ մանուկների զվարճալի արտաբերումները կարող են օգնել մեր մանկագիրներին երեխաների համար գործեր գրելիս օգտվել նմանապիպ կառույցներից, ուղղորդվել դրանցով, խորանուխ լինել և լիարժեք հաղորդակցվել փոքրիկի խոսքի «երգիծական» շերտերի տարատեսակ դրսևորումներին, ինչն էլ ավելի հետաքրքիր, բնական ու գրավիչ և դյուրընկալ կարող է դարձնել մատուցվող ստեղծագործությունը:

15. Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում **անսպասելի ծիծաղի դրսևորման միջոցների ու տարատեսակ հնարանքների կիրառությունները** ցույց են տալիս, որ հայերենի արտասանական-հնչյունական-հնչերանգային տարատեսակ միջոցներով (ձայնեղների խլացում ու խուլերի ձայնեղացում, բարձր և ցածր հնչերանգ, երգեցիկ տոն և երկարացման երանգ և այլն) հարուստ հայ ժողովրդական երգիծական մանրապատումները և զվարճախոսությունները հիմնականում առնչվում են կա՛մ գրական արևելահայերենի, արևմտահայերենի ու տարատեսակ բարբառների հնչարտաբերման կերպին, կա՛մ արտաբերողի կողմից խոսքի վերարտադրման զավեշտալի դրսևորումներին, սակավ դեպքերում նաև՝ բառերի անհարկի հնչյունահավելման կիրառություններին:

16. Երգիծական մանրապատումներում ու զվարճախոսություններում զավեշտի առաջացման պատճառ են դարձել գրական արևելահայերենի և արևմտահայերենի, ինչպես նաև տարատեսակ բարբառների բառագանձի հենքի վրա ստեղծված նմուշներ:

րը, ժողովրդական դարձվածքների ու արտահայտությունների ոչ տեղին կիրառությունները, վերամբարձ ոճն ու ժարգոնային արտահայտությունները, բառ-բառակապակցությունների թարսուշիտակ գործածությունները:

17. Հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսություններում հայերենի և օտար լեզուների փոխհարաբերությունների ու թարգմանությունների ժամանակ անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ են դառնում՝

ա) օտար լեզվին չտիրապետելը, բ) հայերենի և այլ լեզուների համանուն-հարանունային դրսևորումները, գ) օտարալեզու նոր բառերի սխալ արտաբերումները, դ) գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված՝ օտար բառ-բառակապակցությունների հայերեն համարժեքների բացակայությունը, ե) ժողովրդական դարձվածքների ու տարատեսակ բառ-բառակապակցությունների անհեթեթ թարգմանությունները և այլն:

18. Մի շարք երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի դրսևորմանը նպաստում են ոչ թե լեզվական-քերականական, այլ ուրիշ միջոցներ ու հնարանքներ, ինչպես սինկրետիզմը՝ արվեստի տարբեր տեսակների համադրությամբ (մարմնի, ձեռքերի, ոտքերի շարժումներ, դիմախաղ, ձայնի ելևէջներ և այլն) ասելիքն իր ողջ հմայքով հնարավորինս տեղ հասցնելու միջոցը, կամ էլ՝ ծածկախոսությունը՝ հայերեն կամ օտար լեզվով ներկայացված գաղտնախոսությունը, տարատեսակ բանաձևերն ու հաշիվ-հաշվարկները, ֆիզիկական արատները՝ խլությունը, ատամնաթափությունը, կակազելը, թլիկությունը և այլն:

19. Հայկական անեկդոտների **հերոս-զվարճախոսներն** աչքի են ընկնում կերպարային յուրահատկություններով՝

ա) իրական կյանքում իրենց սուր խոսքով և գործողություններով հայտնի զվարճախոսներ, բ) իրենց ունակություններով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանող **քաջնազարական կերպարներ**, որոնց խոսքն ու գործողությունները զավեշտի առաջացման պատճառ են դարձել, գ) անուն-մականուններով **միացածին հերոսներ**, դ) ազգությունը կամ տարածաշրջանը ներկայացնող **հավաքական կերպարներ** և այլն:

Որևէ տարածաշրջանի հերոս-զվարճախոսը մեկ այլ տարածաշրջանում կարող է փոխարինվել տեղացի հանրահայտ կերպարով: Այդ նույն կերպ էլ ազգային կամ լոկալ-տեղային բանարվեստի նմուշը կարող է վերագրվել առավել համընդհանուր ճանաչում ձեռք բերած օտար **զվարճախոսին**՝ նրան դարձնելով այն ուժը, որը դեպի իրեն կարող է ձգել ու «սեփականացնել» զանազան տարածքներում ծնունդ առած տարբեր կրոնների ու ժողովուրդների մանրապատում-զվարճախոսությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Աբազյան Ա.**, Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամտություններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ., 1999, 64 էջ, **հղում 367, 531, 604:**
2. **Աբեղյան Մ.**, հատոր Ա, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966, 572 էջ, **հղում 767:**
3. **Աբեղյան Մ.**, Երկեր, հատոր Դ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1970, 636 էջ, **հղում 149:**
4. **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու՝ 8 հատորով, հատոր 5, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1950, 510 էջ, **հղում 10:**
5. **Աբովյան Խ.**, Հայ դասականների գրադարան, Երկեր, «Սովետական գրող» հրատ., Եր., 1984, 720 էջ, **հղում 9, 11, 12, 13, 14, 141, 142, 143, 144:**
6. Ազուլիսի բարբառի մասունքներ, Աշխատասիրությամբ Արզամ Այվազյանի, 2-րդ հրատ., Եր., «Գասպրինտ», հրատ., 2012, 613 էջ, **հղում 129, 516:**
7. **Ազնավուրեան**, Հէքիաթներ, զուարճալիքներ, Միշիկըն, ԱՄՆ, 1971, 190 էջ, **հղում 339, 574, 646, 700:**
8. **Աթաջանյան Վ.**, Խաչին, Բուբուլը և ուրիշները, ԼՂՀ ԻՊԿ օրգան «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1993, 80 էջ, **հղում 95, 415, 424, 425, 427, 436, 796:**
9. **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ակնթարթ: Զվարճապատումներ, «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1995, 54 էջ, **հղում 95, 415, 418, 421, 437, 476, 796:**
10. **Աղայան Է.**, Մեղրու բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1954, 360 էջ, **հղում 86:**
11. **Աճառյան Հր.**, Բանաստեղծություններ: Անեկդոտներ իմ մասին: Կազմեց և ձևավորեց Հրաչյա Աճառյան Կրտսերը, Եր., Գրականության և արվեստի թանգարանի հրատ., 2008, 128 էջ, **հղում 74, 75, 716, 717, 787, 788:**
12. **Աճառյան Հր.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (իմաստաբանություն, բառաքնություն, շարահյուսություն), Մանկական բառեր, ԵՊՀ հրատ., Եր., 2005, 352 էջ, **հղում 472:**
13. **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, Ա հատոր, Եր., ԵՊՀ հրատ.,

1971, 700 էջ, **հղում 116, 134, 138:**

14. **Աճառյան Հր.**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009, 274 էջ, **հղում 67, 68, 70, 71, 72, 159, 234, 291, 384, 385, 386, 387, 388, 549, 550, 712:**
15. **Այվազեան արքեպիսկոպոս Գ.**, Հազար և մի առակաւոր բանք, Ազգայինք և օտարք, Կ. Պոլիս, տպագր. Արամեան, 1874, 287 էջ, **հղում 721, 722:**
16. Անգլերեն-հայերեն բառարան, Կազմեցին՝ Ա. Լազարյան, Ն. Համբարձումյան, Ա. Հայրապետյան, Եր., «Մանմար» հրատ., 2011, 721 էջ, **հղում 193:**
17. Անեկդոտներ, հատոր Ա, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, 223 էջ, **հղում 30, 31, 32, 33, 34, 35, 36, 38, 39, 44, 45, 168, 594, 635, 653, 655, 670, 724, 749:**
18. Անեկդոտներ, Հատոր Բ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տըփիսիս, տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877, 153 էջ, **հղում 30, 40, 41, 42, 43, 309, 312, 543, 577, 591, 694, 750:**
19. Անեկդոտներ, Հատոր Գ, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, 256 էջ, **հղում 30, 37, 46, 243, 247, 286, 295, 298, 310, 329, 593, 625, 661, 725, 751, 770, 771:**
20. Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, 188 էջ, **հղում 15, 47, 48, 49, 50, 168, 235, 280, 311, 331, 332, 373, 390, 556, 573, 582, 629, 643, 726, 728, 729, 730, 793:**
21. **Անթանեսյան Վ.**, Լոռվա ժպիտներ, Եր., Հեղ. հրատ., 2012, 112 էջ, **հղում 791:**
22. Առակներ, ավանդություններ, անեկդոտներ (Ախալցխայի բարբառով): Գրի առավ Ստ. Մալխասյանց, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1958, 190 էջ, **հղում 87, 125, 675:**
23. **Ասատրյան Մ.**, Լոռու խոսվածքը, Եր., «Միտք» հրատ., 1968, 198 էջ, **հղում 86, 523:**
24. **Բաբայան Ա.**, Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007,

80 էջ, **հղում 272, 273, 274, 275, 276, 277, 687:**

25. **Բալայան Գ.**, 55+ (Հիսունհինգ պլյուս): Երգիծանք, Եր., «Վան Արյան» հրատ., 2009, 80 էջ, **հղում 476:**

26. **Բալայան Գ.**, Միամիտ մտքեր, Լոռվա ժպիտներ, Եր., «Վան Արյան» հրատ., 2002, 64 էջ, **հղում 551, 566, 612, 628:**

27. **Բալյան Լ.**, Ականջդ բեր ասեմ. Աֆորիզմներ, անեկդոտներ, բանաստեղծություններ, Եր., ՀԳՄ հրատ., 2008, 496 էջ, **հղում 486:**

28. **Բախտիկեան Ս.**, Շէփկայ խելացին (Հայկական զուարճախօսություններ), Պէյրութ, Լիբանան, Տպարան Օլիմփիք, 1953, 83 էջ, **հղում 88, 204, 205, 251, 454:**

29. **Բախտիկեան Ն. Ծ. Վրդ.**, Փերիոյ խելացին (զուարճալի մանրադէպեր), Պէյրութ, Տպարան Սեւան, 1967, 60 էջ, **հղում 88, 209, 210, 252:**

30. **Բաղդասարյան-Թափալցյան Ս.**, Մշո բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, 267 էջ, **հղում 86, 636:**

31. **Բաղրամյան Ռ.**, Շամախի բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, 286 էջ, **հղում 86:**

32. Բաքվի հայոց բանահյուսությունը, Գրատեցին և կազմեցին Ալվարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը, Եր., «Զանգակ-97», 2004, 380 էջ, **հղում 239, 241, 372, 630, 676:**

33. Բոյիդ մեռնեմ կամ Քյավատա 140 անեկդոտ, Հավաքեց և մշակեց Լևոն Բլբուլյանը, Եր., «Նաիրի» հրատ., 1992, 196 էջ, **հղում 227, 328:**

34. Բոյիդ մեռնեմ-2, Զվարճապատումներ, Հավաքեց և մշակեց Լևոն Բլբուլյանը, Եր., «Նաիրի» հրատ., 1995, 192 էջ, **հղում 327:**

35. **Բուզանդ Փ.**, Պատմություն հայոց, Գլուխ Ը, Եր., «Հայաստան» հրատ., 1968, 352 էջ, **հղում 2:**

36. **Գասպարյան Ռ.**, Ծագումով գյուրեցի ենք: Անեկդոտներ, հումորներ, ասացվածքներ, զավեշտալի դեպքեր, Լոս Անջելես, հեղ. հրատ., 1-ին մաս, 2011, 131 էջ, **հղում**

737:

37. **Գէորգեան Գ.**, Չնքուշապատում, հատոր 1, Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 1970, 626 էջ, **հղում 88, 282, 283, 283, 361, 362, 574, 637, 759:**
38. Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէյրութ, Տպարան՝ Կ. Տօնիկեան, 1957, 218 էջ **հղում 236, 237, 242, 246, 266, 321, 339, 340, 351, 352, 355, 359, 693, 782:**
39. **Գյուլնազարյան Խ.**, Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991, 112 էջ, **հղում 94, 131, 225, 277, 290, 292, 293, 300, 317, 614:**
40. **Գյուրջինյան Հ.**, Մի բուռ ժպիտ, Վանաձոր, Սիմ տպագրատուն, 2012, 244 էջ, **հղում 476, 482, 487, 488, 490, 491:**
41. **Գրիգոր Ս.**, Զվարճալի պատառաքաղ, Քաջարան-Կապան, Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, 186 էջ, **հղում 224, 304, 570:**
42. **Գրիգորյան Գ.**, Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., 1980, «Լույս» հրատ., 471 էջ, **հղում 175, 177:**
43. **Գրիգորյան Հ.**, Սրամտում է Ջավախքը: Անեկդոտներ, Եր., «Նաիրի» հրատ., 1992, 132 էջ, **հղում 345:**
44. **Գևորգյան Գ.**, Գինուսի ժպիտները, Եր., «Հայաստան» հրատ., 1975, 80 էջ, **հղում 307, 769, 765:**
45. **Գևորգյան Հ.**, Լենինականյան զվարճալի զրույցներ և սրամտություններ, Եր., «Հայաստան» հրատ., 1990, 180 էջ, **հղում 768, 797:**
46. **Դևկանց Ա.**, Կաճեթա ծոեր, Հաղագս ծիծաղական պատմությանց և վասն խրատի, Եր., «Հայաստան» հրատ., 1974, 328 էջ, **հղում 94:**
47. «Եղինջ» երգիծական հանդեսի հավելված, Եր., 1995, **հղում 695:**
48. Երգիծական մանրապատումներ, Թարգմ՝ Մ.Հ. Դավթյան, «Սովետական գրող» հրատ., Եր., 1977, 463 էջ, **հղում 198, 199, 288:**
49. Զուարճաբանութիւնք Բալակիրեի՛ պալատական զուարճախօսին կայսեր Ռուսաց

Մեծին Պետրոսի, թարգմ.' ռուսաց լեզուէն Ավետիք Խազեգեանց, Ս. Պետերբուրգ, Ի տպարանի Կայսերական ճեմարանի գիտութեանց, 1858, 104 էջ, **հղում 720:**

50. Զուարճախօս առակք Պարսից: Թարգմ.' Մ.Դ. Թաղիադեանց, Թարգմանեալ հանդերձ յաւելուածովք, Կալկաթայ, տպարան Արարատեան ընկ., 1846, 84 էջ, **հղում 9, 16, 139:**

51. Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Խմբագրությամբ և առաջաբանով, Կ. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1957, 284 էջ, **հղում 3, 6:**

52. Թագավորի երազները (Բանահյուսական ժողովածու), Կազմեց, ծանոթագրեց և հրատարակության պատրաստեց Սերգեյ Վարդանյանը, Եր., «Գասպրինտ» հրատ., 2003, 144 էջ, **հղում 759, 761:**

53. **Թաղիադեան Մ.**, Գեղարվեստական երկեր, «Զուարճախօս առակք Պարսից: Թարգմանեալ հանդերձ յաւելուածովք», էջ 394-422, հավելվածը՝ էջ 414 – 422: Եր., «Հայաստան» հրատ. 1965, 431 էջ, **հղում 9, 16:**

54. **Թումանյան Մ.**, Հայրենի երգ ու բան, հատոր 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, 439 էջ, **հղում 562, 563:**

55. **Թումանյան Հովհ.**, Երկերի ժողովածու՝ այսուիտեւն՝ ԵԺ, 6 հատորով, հատոր 5 (Նամակներ՝ 1885-1922), Եր., Հայպետհրատ, 1945, **հղում 61:**

56. **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու (այսուիտեւն՝ ԵԼԺ)՝ 10 հատորով, հատոր 5, Եր., «Գիտություն» հրատ., 1994, 831 էջ, **հղում 167, 222, 270, 302, 697, 760:**

57. **Թումանյան Հովհ.**, ԵԼԺ, հատոր 8, Եր., «Գիտություն» հրատ., 1999, 710 էջ, **հղում 63, 64, 65:**

58. **Թումանյան Հովհ.**, Հեքիաթներ, «Լոյս» հրատ., 1988, 320 էջ, **հղում 281:**

59. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969, 601 էջ, **հղում 171:**

60. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ

հրատ., 1974, 574 էջ, **հղում 206:**

61. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 4, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, 828 էջ, **հղում 211:**

62. Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, ժողովեց Տիգրան Վարդանեանց, Թիֆլիս, Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի, 1900, 123 էջ, **հղում 575, 576:**

63. Ժողովրդական առակներ. Ա. Մովսես Նասր – էդ – դին, Հավաքեց՝ Ե. Լալայեան, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1904, 256 էջ, **հղում 76, 124, 731, 763, 764, 765:**

64. Ժողովրդական առակներ, Բ. Հոբոս, հավաքեց Ե. Լալայեան, Թիֆլիս, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1903, 31 էջ, **հղում 77, 124, 250, 732, 733:**

65. Ժողովրդական սրախոսություններ, Հավաքեց և մշակեց Վարդուհի Նաղաշյանը, Եր., «Նահրի» հրատ., 1992, 112 էջ, **հղում 290, 293, 314:**

66. **Իկիլիկյան Հ.**, Գյումրին, Պոլոզ Մուկուչը և երգիծական մանրապատումներ, Եր., «Հայաստան» հրատ., 1989, **350 էջ, հղում 737, 797:**

67. **Լալայան Ե.**, Երկեր, Հինգ հատորով, հատոր 3, Բորչալուի գավառ, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2004, 384, **հղում 66:**

68. Լոռվա զվարճապատումներ, հավաքեց և մշակեց Արամայիս Քոչինյանը, Գյումրի, «Կումայրի» հրատ., 1992, 15 էջ, **հղում 289, 690, 791, 767, 317, 719:**

69. Լոռվա զվարճապատումներ, հավաքեց և մշակեց Ս. Ճճմարիտյանը, Գյումրի, «Կումայրի» հրատ., 1992, 15 էջ, **հղում 330, 678, 791:**

70. **Լեսինգ Գ.**, Դրամաներ, թարգմ. գերմ՝ Հ. Հակոբյանի, «Հայաստան», հրատ., Եր., 1970, 494 էջ, **հղում 702:**

71. **Խանգաղյան Ա.**, Պըլը Պոլոզի, Եր., «Արևիկ» հրատ., 1988, 304 էջ, **հղում 94, 737:**

72. **Խորենացի Մովսես**, Պատմություն հայոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Եր., «Հայաստան» հրատ., 1968, 420 էջ, **հղում 146, 147:**

73. Ծաղրաբանութիւնք Նասրետտին Խոնճալի, թարգմ. ի գաղիերէնէ, Զմյուռնիա, տպագր. Տետեան, 1858, 16 էջ, **հղում 18, 720:**
74. **Տատուրյան Ա.**, Ծիծաղում է Խնձորեսկը, «Գյուղական հումորի շտեմարան» շարքից, Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, 350 էջ, **հղում 445:**
75. Ծիծաղենք միասին, Կազմեց Սարինէ Ամիրխանեանը (Ղեւոնդեան), Բ տպագրութիւն, Թեհրան, «Նայիրի» հրատ., 2007, 116 էջ, **հղում 476, 669:**
76. Ծիծաղի տկճոր: Մոլլա Նասրեդինի առակներ, ծիծաղաշարժ անեկդոտներ և սրախոսութիւնների ժողովածու: Կազմեց՝ Արտեմ (Յարութիւն) Եսաեան, Թիֆլիս, տպարան Էպոխա, 1913, 96 էջ, **հղում 47, 84, 336:**
77. Ծիծաղի տոնավաճառ, 3-րդ թողարկում, Խուժան անեկդոտներ, Եր., «Զանգեզուր» տպագրական կենտրոն, 2007, 32 էջ, **հղում 542:**
78. Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահազիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, 220 էջ, **հղում 47, 60, 62, 168, 244, 320, 389, 489, 583, 610, 705, 752, 753:**
79. Ծիծաղում են վանեցիները, Հավաքել, կազմել են Վարազդատ Հարությունյանը և Նորա Մելիքյանը, Եր , «Զանգակ-97» հրատ., 2006, 196 էջ, **հղում 69, 291, 451, 452, 463, 464, 465, 498, 502, 503, 592, 627, 692, 711:**
80. Կատակում են մովսեսցիները, Գրառողներ՝ Ա. Պապյան, Հ. Պապյան, Եր., «Նոյյան տապան» հրատ., 2012, 92 էջ, **հղում 229, 308, 325, 392, 417, 683, 795:**
81. Կատակում է Գորիսը (Գորիս քաղաքի և շրջանի ժողովրդական սրախոսություններ և անեկդոտներ), Հավաքեց, մշակեց ու կազմեց Լևոն Սահակյանը, «Մուշ» հրատ., Գորիս, 1994, 80 էջ, **հղում 682:**
82. Կարս: Հայոց բանահյուսական մշակույթը, Կազմողներ՝ Ս. Հարությունյան (գիտական ղեկավար), Ս.Ա. Վարդանյան, Է.Հ. Խեմչյան, Լ.Խ. Ղոնջյան, Մ.Հ. Խեմչյան, Եր., «Գիտություն» հրատ., 2013, 752 էջ, **հղում 268:**
83. **Կիրակոսյան Ն., Կիրակոսյան Ա.**, Զավախքի ժպիտներ, Եր., «Հայաստան»

հրատ., 1994, 208 էջ, **հղում 530, 557:**

84. Հայ ազգագրություն և բանահյուսություն, այսուհետև՝ ՀԱԲ, հատոր 2, Խ.Ա. Փորքշեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, 225 էջ, **հղում 90, 160, 161, 291, 299, 313, 332, 713:**

85. ՀԱԲ, հատոր 3, Հարք (Մշո Բուլանըխ), Սահակ Մովսիսյան (Բենսե), Եր., ԳԱ հրատ. 1972, 184 էջ, **հղում 90:**

86. ՀԱԲ, հատոր 4, Վ. Սվազյան, Սարգիս Հայկունի (Կյանքն ու գործունեությունը), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 176 էջ, **հղում 27:**

87. ՀԱԲ, հատոր 8, Ս. Ավագյան (Սերինե), Արճակ, Եր., «Գիտություն» հրատ., 1978, 188 էջ, **հղում 90, 120, 121, 163, 164, 165, 166, 772, 773, 774, 775:**

88. ՀԱԲ, հատոր 10, Գ. Գևորգյան, Ղզլար, Եր., ԳԱ հրատ., 1980, 139 – **հղում 90:**

89. ՀԱԲ, հատոր 11, Գ.Հ. Միքայելյան, Նոր Բայազետ, Եր., ԳԱ հրատ., 1980, 168 էջ – **հղում 90, 332:**

90. ՀԱԲ, հատոր 14, Ռոզա Գրիգորյան, Գեղարքունիք, Եր., ԳԱ հրատ., 1983, 264 էջ, **հղում 90:**

91. ՀԱԲ, հատոր 15, Ալվարդ Ղազիյան, Արցախ, Եր., ԳԱ հրատ., 1983, 192 էջ, **հղում 90:**

92. ՀԱԲ, հատոր 16, Վերժինե Սվազյան, Մուսա լեռ, Եր., ԳԱ հրատ., 1984, 219 էջ, **հղում 90:**

93. ՀԱԲ, հատոր 19, Ռաիսա Խաչատրյան, Թալին, Եր., «Գիտություն» հրատ., 1999, 280 էջ, **հղում 90, 357:**

94. ՀԱԲ, հատոր 20, Թամար Գևորգյան, Լոռի (Տաշիրք-Ձորագետ), Եր., «Գիտություն» հրատ., 1999, 315 էջ, **հղում 90, 337, 456, 791:**

95. ՀԱԲ, հատոր 21, Էսթեր Խենճյան, Տավուշ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 314 էջ, **հղում 90, 755:**

96. ՀԱԲ, հատոր 25, Էսթեր Խենճյան, Իջևան (Ձորոփոր), Եր., «Գիտություն» հրատ.,

2008, 492 էջ, **հղում 90, 756:**

97. Հայ բանահյուսություն, Քրեստոմատիա, Կազմեց և խմբագրեց՝ Գր. Գրիգորյան, ԵՊՀ հրատ., Եր., 1974, 534 էջ, **հղում 176:**

98. Հայերեն բարբառներ, Սևանա լճի ավազանի խոսվածքները, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, Եր., 1972թ., 226 էջ, **հղում 758:**

99. Հայ ժողովրդական հեքիաթներ, հատոր 15, Վան Վասպուրական, Եր., «Ամրոց» հրատ., 1998, 512 էջ, **հղում 318, 319:**

100. Հայկական գրոյցներ, պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆատան, Լոս Անջելես, Պոզանեան տպագրութիւն, 1944, 112 էջ, **հղում 235, 248, 249, 304, 339, 356, 596:**

101. Հայկական ուղիղի անեկոտները, Եր., ա/թ, ա/հ, «Գիտելիք», «Անահիտ-2» գրահրատարակչական կոոպերատիվ, թիվ 139, **հղում 807, 808:**

102. **Հայկունի Ս.**, ժողովրդական առակներ, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1907, 94 էջ, **հղում 28, 157:**

103. Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, Եր., «Գիտություն» հրատ., 2001, 427 էջ, **հղում 117, 119, 126, 128, 130, 132, 133, 718:**

104. Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Զ, Եր., «Գիտություն» հրատ., 2010, 407 էջ, **հղում 151:**

105. Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոմատիա, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, 624 էջ, **հղում 4, 5:**

106. Համշենահայ բանահյուսություն, Հավաքեց, կազմեց և ծանոթագրեց Հակոբ Գուրունյանը, Եր., «Լոյս» հրատ., 1991, 336 էջ, **հղում 514:**

107. **Հարությունյան Հ.**, Հայոց լեզուն հազարագանձ, Եր., «Արևիկ» հրատ., 1989, 280 էջ, **հղում 527:**

108. **Հարությունյան Ս.**, Բանագիտական ակնարկներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 264 էջ, **հղում 173, 174:**

109. **Հովսեփյան Հ.**, Ղարադաղի հայերը. հ. 2, բանահյուսություն, Եր., «Գիտություն» հրատ., 2009, 643 էջ, **հղում 560, 647, 757:**
110. **Հովսեփյան Ն.**, Միամիտ և հնարամիտ սևքարցիները, Եր., «Հայաստան» հրատ., 2003, 152 էջ, **հղում 526:**
111. Հրեղեն ձին, Մշակեց և վերապատմեց Սերգեյ Վարդանյանը, Առաջաբանը՝ Սարգիս Հարությունյանի, Եր., «Սովետական գրող» հրատ., 1981, 240 էջ, **հղում 93:**
112. Հումորի հայրաքաղաք Գյումրի, Կազմեց Գագիկ Վարդանյանը, Եր., հեղ. հրատ. 2013, գիրք 1-ին, 160 էջ, **հղում 737:**
113. **Ղազարյան Ս.**, Եկեք մի քիչ ուրախանանք, մեր հոգսերից թեթևանանք: Անեկդոտներ: Եր., «Զանգակ-97» հրատ., 2002, 64 էջ, **հղում 316, 366, 444:**
114. **Ղահրամանյան Կ.**, Արցունքոտ ժպիտներ, հատոր 1, Եր., «Դավլ» հրատ., 2004, 296 էջ, **հղում 417:**
115. **Ղահրամանյան Կ.**, Արցունքոտ ժպիտներ, հատոր 2, Եր., «Դավլ» հրատ., 2006, 352 էջ, **հղում 417:**
116. **Ղանալանյան Ա.**, Առածանի, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, 400 էջ, **հղում 280, 281, 283:**
117. **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., ԳԱ հրատ., 1969, 530 էջ, **հղում 245:**
118. Ղարաբաղի զվարճախոս Պըլըլ-Պուղին, Հավաքեց և մշակեց Սարգիս Իսրայելյանը, Եր., «Հայաստան» հրատ., 2008,– **հղում 737:**
119. **Ղարիբյան Ա.**, Ռուս-հայերեն բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1968, 1424 էջ, **հղում 172:**
120. **Ղուլյան Բ.**, Գյուլիստան, Պատառիկներ մոտիկ անցյալից, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, 200 էջ, **հղում 303, 346, 794:**
121. **Ճանիկեան Յ.**, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, տպարան Մ.Դ. Ռօտինեանցի, 1895, 500 էջ, **հղում 54, 55, 56, 296:**
122. **Մադաթյան Բ.**, Ալաշկերտի խոսվածքը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 251 էջ, –

հղում 758:

123. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատոր 1, ԵՊՀ հրատ., Եր., 2010, 608 էջ, **հղում 118, 136, 169:**
124. **Մակարյան Ա.**, Անեկդոտի զարգացումը հայ գրականության մեջ, Եր., «Մեհյան» հրատ., 2000, 160 էջ, **հղում 103, 104, 105, 106, 735, 738, 739:**
125. Մանկական խոսք, Կազմող՝ Անահիտ Գալստյան, Եր , «Զանգակ-97» հրատ., 2006, 96 էջ, **հղում 475, 483:**
126. Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն, Երկասիրեց Գր. Հ. Գալուստեան, Հըրատարակութիւն Մարաշի հայրենակցական միութեան կեդր. վարչութիւն, ԱՄՆ, Նիւ Եորք, 1934, 944 էջ, **հղում 88, 339, 457:**
127. **Մարգարյան Ա.**, Եկեք մի քիչ զվարճանանք: Զրույցներ և անեկդոտներ, Եր., «Զար» ֆիրմա, 1992, 32 էջ, **հղում 601, 769:**
128. **Մարկոսյան Ռ.**, Արարատյան բարբառը, Եր., «Լույս» հրատ., 1989, 390 էջ, **հղում 301, 529, 674:**
129. **Մելիք-Սարգսյան Գ.**, Զվարճալիք, Եր., «Պ.Սևակ» հրատ., 2001, 57 էջ, **հղում 228, 238, 240, 417, 541, 677:**
130. **Մինասեան Լ.**, Գիւղական բառ ու բան, Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ վանքի տպարան, 1998, 422 էջ, **հղում 233, 544, 597, 689:**
131. Միջ-գաւառական անեքթոտներ, Հաւաքեց եւ ներկայացուց՝ Յ. Զոլաքեան, Հալէպ, Տպարան Արեւելք-Հալէպ, 1988, 120 էջ, **հղում 89, 185, 253, 255, 256, 257, 258, 259, 260, 262, 263, 264, 339, 348, 354, 375, 376, 459, 460, 634, 804, 805, 806:**
132. Միջգաւառական անեքթոտներ, Վերադասավորութեամբ և նոր նյութերի լրացումներով, Բ. տպագրութիւն, Հաւաքեց եւ ներկայացուց՝ Յ. Զոլաքեան, Հալէպ, Տպարան Արեւելք-Հալէպ, 2005, 176 էջ, **հղում 89, 186, 187, 188, 189, 261, 377, 701, 804:**
133. **Միքայելյան Հ.**, Ծալկայի հայերի ազգագրութիւնը և բանահյուսութիւնը, Եր., «Նոյյան տապան» հրատ., 1998, 307 էջ, **հղում 323:**

134. **Մկրտչյան Հ.**, Կարնո բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952, 190 էջ, **հղում 86, 574:**
135. Մոկս. Հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Ս. Հարությունյան (գիտական ղեկավար), Է.Հ. Խեմչյան, Մ.Հ. Խեմչյան, Ա.Կ. Պողոսյան, Եր., «Գիտություն» հրատ., 2015, 708 էջ, **հղում 517:**
136. **Մուրադյան Հ.**, Կաքավաբերդի բարբառը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 236 էջ, **հղում 86:**
137. **Մուրադյան Հ.**, Կարճևանի բարբառը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1960, 259 էջ, **հղում 558:**
138. **Մուրադյան Մ.**, Շատախի բարբառը, Եր., ԵՊՀ հրատ., 1962, 228 էջ, **հղում 86, 462, 468, 469:**
139. **Մուրադյան Ս.**, Ուրախ երգիծանի, Եր., «Շուշան» հրատ., 1999, 148 էջ, **հղում 476:**
140. **Նիկողոսյան Տ.**, Իրական դեպքեր բայազեոցիների կյանքից, Եր., «Լուսաբաց» հրատ., 2016, 64 էջ, **հղում 546:**
141. Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից, Կազմողներ՝ Միքայել Առաքելյան, Ռոբերտ Ղահրամանյան, «Հայաստան» հրատ., Եր., 1978, 224 էջ, **հղում 455:**
142. **Շիրազ Հովհ.**, Քնար Հայաստանի, հատոր 1, Եր., Հայպետհրատ, 1958, 470 էջ, **հղում 545:**
143. **Չալիկյան Գ.**, Անլուելի սիրահարը, Եր., ՀԳՄ հրատ., 2004, 168 էջ, **հղում 342:**
144. Պատմութիւն Անթէպի հայոց, Գ հատոր, խմբագիր՝ Երուանդ Պապայեան: Լոս Անջելես, 1994 , 1191 էջ, ա/հ, **հղում 88, 339, 341, 347, 350, 776, 777, 778, 781:**
145. Պատմութիւն Եվրոկիոյ Հայոց, գրեց **Արշակ Ա. Ալպոյաճեան**, Գահիրէ, Տպ. «Նոր Աստղ», 1952, 1751 էջ, **հղում 88, 715:**
146. Պատմութիւն հայ Կեսարիոյ (տեղագրական, պատմական և ազգագրական ու-

սումնասիրություն), Ա և Բ հատորներ, գրեց Արշակ Ա. Ալպոյաճեան, Գահիրէ, տպարան Յ. Փափագեան, 1937, 1295 էջ, **հղում 88:**

147. Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, հավաքել և կազմել է Լենա Անթառանյանը, Եր., «Վերնատուն» հրատ., 1994, 62 էջ, **հղում 218, 349, 399, 400, 417, 558, 561, 598, 631, 662, 698:**

148. Պարապ վախտի խաղալիք (պարապ մարդու տանու միտք), Շինեց ու սազացրեց Խաչատուր Աբովեան, Տիփսիս, Ի տպարանի Հ. Էնֆիաճեանց եւ ընկերայ, 1864, 137 էջ, **հղում 748:**

149. Պըլը-Պուղի, գրեց Մակար վարդապետ Բարխուդարեանց, Թիֆլիս, Մով. Վարդանեանի և ընկ. տպարան, 1883, 190 էջ, **հղում 51, 127, 156, 672, 727, 780:**

150. Պողոսյան Ա., Հաղրուփի բարբառը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1965, 371 էջ, **հղում 86:**

151. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, (խոսքի տեսութուն), գիրք երկրորդ, «Համառոտ առակներ, անեկդոտներ և մանրապատումներ», Ե-րևանի համալսարանի հրատ., 1991, 396 էջ, **հղում 162:**

152. Զահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու, դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, Եր., «Փյունիկ Մակմիլան» հրատ., 1998, 136 էջ, **հղում 497:**

153. Զրբաշյան Էդ., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, «Լույս» հրատ., Եր., 1972, 328 էջ, **հղում 170, 207, 208, 212:**

154. Սահակյան Ա., 500 կատակ, «Կիլիկիա» գրատուն-հրատարակչատուն-տպարան, Հալէպ, 2000, 216 էջ, **հղում 590, 785:**

155. Սահակյան Լ., Սրախոսություններ և անեկդոտներ, Գորիս, «Մուշ» հրատ., 1994, 80 էջ, **հղում 660, 688:**

156. Սահակյան Ռ., Անկրկնելի Պարույրը, Հուշեր, պոեմներ և այլ նյութեր, Եր., «Էդիթ Պըր-րինտ» հրատ., 2014, 148 էջ, **հղում 580:**

157. **Սահյան Հ.**, Երկերի ժողովածու՝ 2 հատորով, հատոր 2, Եր., «Հայաստան» հրատ., 1976, 613 էջ, **հղում 220:**
158. **Սարգսյան Ա.Յու.**, Արցախի բանահյուսությունը, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, 748 էջ, **հղում 180, 370, 371, 417, 431, 439:**
159. **Սարգսյան Ա.Յու.**, Արցախյան զվարճախոսություններ, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2014, 172 էջ, **հղում 417:**
160. **Սարգսյան Ա.Շ.**, Մանկական զվարճախոսություններ, Եր., «Գիտություն» հրատ., 2016, 232 էջ, **հղում 219, 305, 368, 654:**
161. **Սարգսյան Ա.Շ.**, Պարույր Սևակը և ժողովրդական բանահյուսությունը, Եր., «Գիտություն» հրատ., 2010, 315 էջ, **հղում 216:**
162. **Սաքանյան Ա.**, Լոռվա հանաքներ, Եր., «Սովետական գրող» հրատ., 1977, 63 էջ, **հղում 131:**
163. **Սաքանյան Ա.**, Լոռվա հանաքներ, Եր., Հեղինակային հրատ., 2004, 292 էջ, **հղում 798:**
164. **Սեյրանյան Բ.**, Գուգարքի ուրախ զրույցներ, Եր., «Սովետական գրող» հրատ., 1982, 96 էջ, **հղում 94:**
165. **Սվազյան Վ.**, Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, 407 էջ, **հղում 284, 315, 353, 374, 380, 382, 402, 404, 411, 493, 505, 515, 534, 536, 626, 685, 696, 704:**
166. **Սվազյան Վ.**, Պոլսահայ բանահիստորիներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 592 էջ, **հղում 412, 754:**
167. **Ստեփանյան Ա.**, 20-րդ դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, 335 էջ, **հղում 492:**
168. **Սրապյան Ա.**, Հայ միջնադարյան զրույցներ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969, 415 էջ, **հղում 3, 110:**
169. **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հատոր 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978, 668 էջ,

հղում 19, 22, 23, 24, 25, 26, 145, 265, 285, 294, 723:

170. **Սունդուկյան Գ.**, Խաթաբալա: Կատակերգ. 4 արարով, Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի, 1904, 154 էջ, **հղում 297:**

171. **Սևակ Պ.**, Երկերի ժողովածու 6 հատորով, հատոր 5, Եր., «Հայաստան» հրատ., 1974, 416 էջ, **հղում 383:**

172. **Սևակ Պ.**, Երկերի ժողովածու՝ 6 հատորով, Հատոր 1, Եր., «Հայաստան» հրատ., 1972, 528 էջ, **հղում 708:**

173. Վանա սագ, 1-ին մաս, Ժողովեց Գեորգ Գ. Շերենց, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի, 1885, 187 էջ, **հղում 52:**

174. **Վարդանյան Ա.**, Վայոց ձորի միջնաբարբառը, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2004, 204 էջ, **հղում 473:**

175. **Վարդանյան Ա.**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Եր., ԵՊՀ հրատ., 2009, 428 էջ, **հղում 533:**

176. Վէպը զուարճալի անձից, յորս պարունակին խրատական և իմաստալից ասացուածք, Ժողովեալ եւ թարգմանեալ յայլ եւ այլ լեզուաց աշխատասիրութեամբ Մովսիսի Զօհրապեանց Արցախեցոյ: 'Ի տպարանի Ներսիսեան Հոգևոր դպրոցի հայոց ընծայելոյ յԱզնուական Աղայ Գէորգայ Արծրունոյ: 1858 – ՌՅԷ, ' ի Տիֆլիս, 109 էջ, **հղում 9, 17, 140:**

177. **Րաֆֆի**, Երկերի ժողովածու՝ 10 հատորով, հատոր 10, Եր., «Հայպետհրատ», 1964, 684 էջ, **հղում 148:**

178. Ուրախության դասագիրք, Կազմեց Աննա Զորանյանը, Եր., «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2015, 232 էջ, **հղում 477:**

179. **Փաշայան Ա.**, Պըըը Պուղին հայ մշակույթի պատմության էջերում, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2010, 127 էջ, **հղում 735:**

180. **Քոչարյան Ա.**, Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ» հրատ.,

- 2008, 134 էջ, **հղում 230, 306, 324, 476, 639, 707:**
181. Քսաներեր Լաւրերդիս, Եր., «Հայաստան» հրատ., 1986, 512 էջ, **հղում 201, 747:**
182. **Андреев Н.** Указатель сказочных сюжетов по системе Аарне Л., Гос. геогр. об.-во отд.-ние этнографич сказ. комиссии. 420 с., **հղում 100:**
183. Анекдоты Армянского радио, Сост. Константин Маркарян, Ер., «Антарес», 2004. 76 с.– Jokes of Armenian Radio, Yerevan: Antares, 2004, 76 pp., **հղում 809, 810:**
184. Анекдоты от одесситов, сост. и предисловие Василий Котюшенко, Одесса: Изд-во Optimum, 2007г, 350 с., **հղում 254, 621.**
185. Армянский фольклор. Сост. и пер. с арм. Г.О. Карапетяна. М., Главная редакция восточной литературы издательства Наука, 1979. 375 с., **հղում 214, 215, 741, 742:**
186. Грузинский народный юмор, Притчи, сказки. Тбилиси, «Литература да хеловнеба», 1964, 124 с., **հղում 744:**
187. Двадцать три Насредина, Составление, вступительная статья, примечания и указатели М.С. Харитонова. Москва, Главная редакция восточной литературы изд. «Наука», 1978. 584 с., **հղում 743, 745, 747, 766:**
188. Микрьюморески со всего света, Москва, изд. «Прогресс», 1969, 270 с., **հղում 197:**
189. **Курганов Е.,** Анекдот как жанр, СДБ: Акад. проект. гуманитарн. огенство. 1997. 127 с., **հղում 98:**
190. Латышские народные анекдоты, Составитель Арайс К., перевод Г. Горского, Издательство Академии наук Латвийской ССР, Рига, 1963, 280 с., **հղում 98, 99, 111:**
191. **Мицева Е., Сирануш Папазян-Таниелян,** «Арменцита разказват за себе си...». Българска Академия на наукате этнографски институт и музей. Академично изд-о «Проф. Марин Дринов», София. 2007, **հղում 800, 801, 802, 803, 804:**
192. **Чуковский К.** Маленькие дети, Ленинград, 1928., **հղում 478:**
193. **Чуковский К.** Собрание сочинений в шести томах, том первый, От двух до пяти, Изд. «Художественная литература», Москва, 1965, 736 с., **հղում 479, 480:**
194. **Орбели И.,** том 2, Избранные труды, Ереван, изд. «Гитутюн», НАН РА, 2002, 456 с.,

հղում 78, 79, 80, 81, 82, 83, 453, 466, 467:

195. **Пельтцер А. П.**, Происхождение анекдотов. //СБ. Харьк. Инст.-фил. о-ва., Т.11. Харьков, 1899. С. 57-58., **հղում 98:**

196. **Пермяков Г.Л.** От поговорки до сказки. Акад. Наук СССР, М., изд-во «Наука, 1970. 240 с., **հղում 213:**

197. **Померанцева Э.**, Русская народная сказка, Москва, 1963, с. 87-103, **հղում 113:**

Ք **Проп В.**, Фольклор и действительность, Избранные статьи, Москва, Главная ред. вост. лит. изд-ва «Наука», 1976, 325 с., **հղում 114, 115:**

Պ **Смехотерапия от всех болезней: анекдоты.** Состовленные Рафаелян Лилия. Удмуртия, Ижевск, 2006, 312 с., **հղում 287:**

Պ **Советский анекдот (Указатель сюжетов).** Миша Мельниченко, составление. Москва, Новое литературное обозрение, 2015., **հղում 393:**

Պ **Эстонский фольклор,** Таллин. Изд.-во «Ээсти раамат», 1980, 360 с., **հղում 112:**

Պ **Aarne, A.** Estnische Märchen und Sagenvarianten. Verzeichnis der zu den Hurtschen Handschriftsammlungen gehörenden Aufzeichnungen. Mit der Unterstützung der Finnisch-ugrischen Gesellschaft. Hamina, 1918.160 S.(FFC 25), **հղում 100:**

Պ **Thompson, S.** Motif-index of Folk-Literature, volume 4, J-K, Helsinki, 1934, Academia Scienntiarum Fennica, 501 p., **հղում 100:**

Պ **Aarne A., Thompson S.,** The Types of the Folktale. A Classification and Bibliography. Antti Aarne's Varzeichnis der Märchentypen. Translated and Enlarged by Stith Thompson, Second Revision, Helsinki, 1964, Academia Scienntiarum Fennica, 588 p., **հղում 100:**

Բ. Գիտական նյութերի ժողովածուներ

1. Գալստյան Ա., Մանկական խոսքի բառապաշարի մի քանի առանձնահատկություններ, Գիտական նյութերի ժողովածու՝ նվիրված պրոֆ. Տ. Ավետիսյանի ծննդյան 60-ամյակին, Եր., «Վան Արյան», 2001, էջ 15-20, **հղում 473:**

2. Գալստյան Ա., Մանկական խոսքի բառապաշարը և նրա զարգացումը, Ջա-

- հուլյանական ընթերցումներ, Երևան, «Վան Արյան», 2006, էջ 38-43, **հղում 473:**
- 3. Գալստյան Ա.,** Հայերեն մանկական խոսքի դրսևորումների վերլուծության հարցեր, Զահուլյանական ընթերցումներ, Եր., «Վան Արյան», 2007, էջ 42-48, **հղում 473:**
- 4. Գալստյան Ա.,** Մանկական խոսքի ուսումնասիրության մի քանի հարցեր, Զահուլյանական ընթերցումներ, Եր., «Նաիրի», 2008, էջ 43-49, **հղում 473:**
- 5. Գալստյան Հ.,** Երգիծական բանահյուսության արդի գրառումներ Վահրամա-բերդից, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական 7-րդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2007, էջ 267-272, **հղում 96:**
- 6. Խենյան Է.,** Պոլոզ Մուկուչը Գյումրվա բանահյուսական ավանդության մեջ (Ըստ ՀԱԻ-ի բանահյուսական արխիվի նյութերի), Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Միջազգային 8-րդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 22-24 հոկտեմբերի, 2010, «Գիտություն» հրատ., 2010, էջ 228-235, **հղում 736:**
- 7. Հայրապետյան Թ.,** Ղարաբաղի առակախոս Պըլ Պուղու սոցիալ-քաղաքական երգիծանքը (Ըստ 1989-2001թթ. գրառած նյութերի), Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը, միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 2012թ., Երևան-Ստեփանակերտ, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ83-85, **հղում 735:**
- 8. Հայրապետյան Թ.,** Խաչենագետի ներքնահովտի վերաբնակեցված գյուղերի հասարակական-մշակութային գործընթացները. Կորուսյալ հայրենիքի և ազատամարտի հիշողությունները վերաբնակների բանահյուսության մեջ, Վերամշակութայնացման հարցեր (Հայ էթնիկությունը սեփական և այլազգի միջավայրում. Հետազոտական փորձ, խնդիրներ և հեռանկարներ), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 44-51, **հղում 419:**
- 9. Ղռեջյան Լ.,** Ժողովրդական ասոյթաբանության և ավանդական զրույցների կապը (ըստ Գավառում գրանցած նյութերի), Հայ ժողովրդական մշակույթ – XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Եր., «Գիտություն» հրատ., 2014, **հղում**

96, 182, 183, 184:

10. Մարգարյան Ն., Լենինական-Երևան մրցակցությունը 1970-80-ականների զվարճախոսություններում և սրամտություններում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական 7-րդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2007, էջ 151-157, **հղում 96, 740:**

11. Սահակյան Արծ., Հայկական անեկդոտի հերոս «ապարանցին» և տեղական-մշակութային ավանդույթը, Հայ ժողովրդական մշակույթ – XV, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 545-550, **հղում 740:**

12. Սարգսյան Ա.Շ., Վանեցիները անեկդոտ-զվարճապատումներում, Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք 1, Վան, Եր., «Գիտություն» հրատ., 2013, **հղում 740:**

13. Սարգսյան Ա.Շ., Վասպուրականյան երգիծական մանրապատում-զվարճախոսությունները, Վանի հերոսամարտի 100-ամյակին և Վան քաղաքի առաջին հիշատակության 2870-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, Եր., 2015թ., մայիսի 4-6-ը, **հղում 96:**

14. Ստեփանյան Ա., 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և աղապտացման խնդիրները, Հայ ժողովրդական մշակույթ – XII, ՀԱԻ (հանրապետական գիտաժողովի նյութեր), «Մուլնի» հրատ., 2004, **հղում 532, 537, 666:**

15. Ստեփանյան Ա., 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և աղապտացման խնդիրները, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր», Սփյուռքի նախարարության համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Լիմուշ» հրատ., 2009, **հղում 401, 403:**

16. Пельтцер А. П., Происхождение анекдотов.//СБ. Харьк. Инст.-фил. о-ва., Т.11. Харьков, 1899. **հղում 98:**

17. Шмелева Е.Я., Шмелев А.Д., Рассказывание анекдота как жанр современной

русской устной речи. Труды Международного семинара Диалог 98 по компьютерной лингвистике и ее приложениям. Казань, 1998. Т. 1, с. 262-271., **հղում 98:**

18. Химик В.В. Анекдот как феномен культуры. Материалы круглого стола 16 ноября, 2002г., /СПб.: Санкт-Петербургское философское общество, 2002., **հղում 98:**

19. Каган М.С., Анекдот как феномен культуры. Материалы круглого стола 16 ноября, 2002г., /СПб, с. 5-16., **հղում 98:**

20. Шишков С.М. Абсурдный анекдот в культуре. Материалы круглого стола 16 ноября, /СПб, 2002., с. 139-147., **հղում 98:**

21. Саркисян А.Ш., Новоахичеванские анекдоты в контексте юмористических миниатюр армянского народа. Армяне юго России: История, культура, общее будущее: Материалы 2 Международной научной конференции (Ростов-на-Дону, 26-28 мая 2015 г.), (отв. ред. академик Г.Г. Матишов). –Ростов-н/Д: Издательство ЮНЦ РАН, 2015, с. 214-221, **հղում 161:**

Գ. Պարբերական մամուլ

1. Աբրահամյան Լ., Քառուրդ և կոսմոսը ժողովրդական ելույթների կառուցվածքում. Ղարաբաղյան շարժումը ազգագրագետի հայացքով, «Մշակույթ» հանդես, 2.03.1990թ., էջ 16, **հղում 408, 409:**

2. Աճառեան Հր., Մանկական բարբառ, «Բանասէր» հանդես, հատ. 3, պրակ Ա, Պարիս, 1901, էջ 3-28, **հղում 471:**

3. Գալեմքերեան Ն., «Գերարագ Դարուն մէջ Գերարագ լէզու սորվիլ», «Ազդակ» օրաթերթ, Պէյրուս, 3.02.2017թ., **հղում 190:**

4. Դեվրիկյան Վ. «Ցասումով և սրախոսությամբ», «Երկիր» թերթ, Եր., 23.10. 1993թ., **հղում 416:**

5. Լալայեան Ե., Ազգագրական հանդես, Կիսամեայ պատկերազարդ, Առաջին տարի, Ա. Գիրք, Շուշի, տպարան Ա. Մահտեսի-Յակոբեանց, 1886, էջ 5-6, **հղում 7, 8:**

6. Հարությունյան Ս., 8 օր Սարոյանի հետ, «Սովետական գրականություն» ամսա-

գիր, Եր., 1970, թիվ 8, էջ 83, **հղում 135, 200:**

7. Հովհաննիսյան Ա., Անեկդոտի հասարակական, համատեքստային, ազգային և համազգային բնույթը», «**Կանթեղ» ամսագիր,** (հոդվածների ժողովածու), **հղում 107:**

8. Ղազիյան Ա., Ղարաբաղի զվարճախոս Պըլ Պուղին, ՀՍՀ ԳԱ «**Լրաբեր հասարակական գիտությունների»** ամսագիր, Եր., 1978, թիվ 9, էջ 60-69, **հղում 101, 735:**

9. Ջրբաշյան Էդ., Նորահայտ էջեր Թումանյանի ժառանգությունից, **Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների,** 1963, թիվ 12, էջ 69-76, **հղում 59:**

10. Սարգսյան Ա.Շ., Գարեգին Արքեպիսկոպոս Սրվանձտյանցը և հայ ժողովրդական երգիծական մանրապատումները (Գարեգին Սրվանձտյանցի ծննդյան 175-ամյակի առթիվ), «**Էջմիածին»** ամսագիր, ՀԲ. տարի, Յուլիս, Ս.Էջմիածին, 2015թ., էջ 89-101, **հղում 21:**

11. Սարգսյան Ա.Շ., Վանեցիները անեկդոտ-զվարճապատումներում, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք 1, Վան, Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., «Գիտություն» հրատ., 2013, էջ 322-328, **հղում 53:**

12. Սարգսյան Ա. Շ., Հայ ժողովրդական երգիծական մանրապատումները և զվարճախոսությունները որպես ցեղասպանության վկայություններ, «**Հայկազեան Հայագիտական հանդես»**, հատոր Լե (35), Լիբանան, Պէյրուֆ, 2015, էջ 543-557, **հղում 338:**

13. Սարգսյան Ա.Շ., Հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսությունների թումանյանական գրառումները և դրանց տարբերակային դրսևորումները, «**Էջմիածին»** ամսագիր, Ժ (հոկտեմբեր), 2015, էջ 98-111, **հղում 58, 167, 519:**

14. Սարգսյան Ա.Շ., Հրաչյա Աճառյանը և երգիծապատում-զվարճախոսությունները (Հրաչյա Աճառյանի ծննդյան 140-ամյակի առթիվ), «**Էջմիածին»** ամսագիր, Յուլիս, 2017. Ս. Էջմիածին, էջ 96-110, **հղում 73:**

15. Սարգսյան Ա.Շ., Զավեշտը հայոց հարսանեկան ծիսակարգին առնչվող անեկդոտներում, ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, Եր., 2017, թիվ 2,

էջ 299-303, **հղում 57:**

16. Վարդանյան Ա., Վայոց ձորի խոսվածքի մանկական բառապաշարը, «Պատմա-բանասիրական հանդես», 2003, թիվ 2, էջ 272-275, **հղում 473:**

17. Վարդանյան Հր., Ոչ մասնագիտական դիտողություններ՝ բանահավաքի հուշատետրից, «Հայրենի եզերք» պատկերազարդ հանդես, Եր., 1991, հունիս, էջ 30-33 և էջ 40, **հղում 96, 102, 394, 397, 405, 406, 407, 410:**

18. Վարդանյան Սվ., Բանահյուսական նյութեր Լեոնային Ղարաբաղից, ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, 1971, թիվ 8 (344), էջ 92, **հղում 126, 178, 179, 718:**

29. Абрамян Л., Ленин как трикстер, Современная российская мифология, Москва, 2005, стр. 68-88., **հղում 96:**

20. Брутян Л., Заметки о детской речи, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2000, թիվ 1, էջ 202-210, **հղում 474:**

Դ. Համացանց

1. www.kantegh.asj-oa.am, Հովհաննիսյան Սերինե, Անեկդոտի հասարակական, համատեքստային, ազգային և համազգային բնույթը, «Կանթեղ» Գիտական հոդվածների ժողովածու, 2007, հ.1, էջ 14-19, **հղում 107:**

2. www.yasu.am, Կնյազյան Աննա, Երգիծական խոսույթի ժանրային հատկանիշները, «Աստղիկ» տարեգիրք, Գիտական հոդվածների ժողովածու, 2015, հ. 26, էջ 93, **հղում 108, 194, 195:**

3. www.seanewdim.com, Science and Education a New Dimension, Philology, v(35), Issue: 125, 2017. **Гаспарян С., Князян А.**, Гендерные особенности агрессивного вербального поведения мужчин и женщин (на материале английских и армянских „бытовых„ анекдотов), с. 22-24, **հղում 108:**

4. www.granish.org, Հովնանյան Անի, Անեկդոտների կենցաղավարումը, 12.07.2013թ.

5. Hayeren blog. wordpress. com, 13.01.2017, **հղում 191:**

6. Wikipedia.org – Joke, **հղում 192, 196:**

Ե. Արխիվներ

Հայաստանի ազգային արխիվ

ՀՍՍՀ Մշակույթի նախարարության կուլտուր լուսավորական աշխատանքի և ժողովրդական ստեղծագործության հանրապետական գիտամեթոդական կենտրոնի՝ ՀԳՄԿ-ի բանահյուսության բաժնի ֆոնդ, թիվ 1336, **հղում 85:**

ԳԱԱ ՀԱԻ-ի բանահյուսության և ազգագրության արխիվ

1. Թարվերդյան Գ., **հղում 91, 335, 360, 470, 574, 589, 679, 762, 799:**
2. Հակոբյան Ն. (ԵՊՀ ուսանողների միջոցով գրառած նյութերը), **հղում 92:**
3. Հարթենյան Հ., **հղում 91, 762:**
4. Ղազարյան Վ., **հղում 91, 291, 710:**
5. Ղանալանյան Ա., **հղում 92, 202, 203:**
6. Վարդանյան Ս. (դպրոցականների միջոցով գրառած նյութերը), **հղում 93:**
7. Օհանջանյան Մ. (Մոպեր Ղարաբաղի), 299 «ք%թ-մ%ս%լներ», **հղում 91:**

2. Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ)

1. Գարեգին Սրվանձտյանցի ֆոնդ, թիվ 4/13, էջ 0269, **հղում 20, 152, 153, 154, 155, 447, 448, 449:**
2. Սարգիս Հայկունու ֆոնդ, FCI: Ս. Հայկունու ֆոնդ, հ.5 (1651-1653), **հղում 29, 158:**

Է. Անձնական հավաքածուներ

1. **Հայրապետյան Թ.**, Արցախ, ԴԲԱՆ, տետր N°2, էջ 6, 2012, **հղում 602:**
2. **Սարգսյան Ա. Շ. (ԱՍՇՀ):**
3. **Վարդանյան Սվ.**, ԴԲԱՆ, Դաշտային գրառումներ Արմավիրի մարզի Հուշակերտ

գյուղից, 2012, **հղում 150**:

4. **Վարդանյան Սվ.**, Ժողովրդական խոսք ու զրույցի, բառ ու բանի դրսևորումները արցախյան պատերազմում (ձեռագիր), **հղում 434**:

Ը. Ատենախոսություն

1. **Հակոբյան Ա.** Թաթախոս հայեր, պատմաազգագրական ուսումնասիրություն, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն (անտիպ) Եր., 2002, էջ 154, **հղում 461**:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

ա/թ – առանց տարեթվի

ա/հ – առանց հրատարակչության նշման

անգլ. – անգլերեն

ԱՍ – Արմեն Սարգսյան

ԱՍՇՀ – Արմեն Շավարշի Սարգսյանի հավաքածու

արաբ. – արաբերեն

ԳԱ – Գիտությունների ակադեմիա

ԳԱԱ – Գիտությունների ազգային ակադեմիա

ԴԲԱՆ – դաշտային բանահյուսական անտիպ նյութեր

ԵԺ – երկերի ժողովածու

ԵԼԺ – երկերի լիակատար ժողովածու

ԵՊՀ – Երևանի պետական համալսարան

Եր.- Երևան

թրք. – թուրքերեն

Ժողտուն – ժողովրդական ստեղծագործության տուն

իմա – իմացիր, այսինքն

ԻՊԿ – ինքնապաշտպանական կոմիտե

ԼՂՀ – Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն

ՀԱԲ – Հայ ազգագրություն և բանահյուսություն

ՀԱԻ – Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀԳՄԿ – Հանրապետական գիտամեթոդական կենտրոն

ՀԺՀ – հայ ժողովրդական հեքիաթներ

ՀՍՍՀ – Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն

ՀԽՍՀ – Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն

ՀՍՍՌ – Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա

հրատ. – հրատարակչություն

ռուս. – ռուսերեն

տրբրկ. – տարբերակ

Եր – Ереван

изд. – издательство

НАН – Национальная академия наук РА – Республика Армении

РАН – Российская академия наук с. – страница

Т – том

ЮНЦ – южный научный центр

Հավելված 1

1

Մարթուն մէկը ամմէն իրիկուն կնկանը կըսէ էղեր քի՝

– Կնի՛կ, – կըսէ էղեր, – քեօմիւրին խոշորները Մարտիկ ախպօրը համար պահէ, – կըսէ էղեր, ետն ա կերթա խախվէն⁸¹³ ամմենուն խապար կուտա էղեր:

Մարդուն մէկն ա ասիկա կիմանա, էրթէսի⁸¹⁴ օրը կէլլա աս մարդուն տունը կերթա, կնիկը վար կը կանչէ՝

– Մարտիկ ախպարը էս էմ: Քեօմիւրներուն խոշորը զատեցիր նէ տուր քի տանիմ:

Կնիկն ա կը հասկընա քի մարթուն ըսած Մարտիկ ախպարը ա՛ս է, կը հանէ քեօմիւրները ասօր կուտա:

Իրիկունը էրիկը կուքա նէ՝ կնիկը կըսէ քի՝

– Քա մա՛րթ, ասօր Մարտիկ ախպարը էկավ տէ, քեօմիւրներուն խոշորները տուվի գնաց:

– Մարթը կը հասկնա քի վարպետ գող մըն է էկեր, ամա ի՞նչ ընէ:

Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 169-170:

2

Գագիկ անունով մէկը կա էղեր: Ասիկա կարքըվիլ ուզեր է: Մըտմըտացեր է քի, «էս հիմա էլլամ կարքըվիմ, զավակ մը ունենամ, զավակըս մեզնա, հապա ծառը էլլա, ծառէն վար իյնա մեռնի, ամմէնքը «Վա~խ Գագիկ, Վա~խ Գագիկ» ըսեն... Չէ՛, ըսեր է, չեմ կարքըվիր»:

Անանկ ա, հիմա, էյէր մէկը չէղած յա չըլլալիք բանի մը վրա էլլա տէրտ ընէ նէ, «Գագիկին մասալն ա» կըսեն:

⁸¹³ Խախվէ – սրճարան:

⁸¹⁴ Էրթէսի – հաջորդ:

էջ
181:

3

Ամպն ու Ամպիկը

Ամպն ու Ամպիկը երկնքում հանգիստ առաջ են գնում: Մեկ էլ Ամպիկը ան-
հանգստացած մորն ասում ա.

– Մա՛մ, մա՛մ, չիշիկ եմ ուզում անեմ:

– Չես կարո՞ղ մի քիչ էլ համբերես, էսա Կիրովական (Վանաձոր) ենք հասնում:

(ԱՍՇՀ)

4

– Քարով կտամ, ոտդ կջարդեմ, դիդարդ կտրվի, ոչ խնդաս, ոչ լավ օր քաշես,
դարձվոր, դեղին ջրերն ընկնես, տկտկոտես քե տենամ, սիպտակ նաշիդ⁸¹⁵ նստեմ...

Աղջիկը լսում է մոր անեծքը, պատուհանը բացում ու լացակումած ճչում.

– Մա՛...

Մայրը կարկամում է, հետո շփոթված ասում.

– Յա՛, քոռանամ ես, էդպես բան կա՞... Ասո՛ ջան, բարով ես եկել, ասուր բա-
րին... Ի՞նչ ասեմ, ա՛յ որդի, չոր տեղ էթաս՝ կանաչի, կուռդ դալար կենա, ձեռդ ջերդ
տանես՝ բուռդ ոսկով լցվի, քո կերածը քեզ հալալ, բալամ... Արի, արի մի ձվածեղ անեմ,
կեր, սոված կլնես: Աղջի, Նուժիկ, լալացա՞ր, մի բերան էլ դու համեցեք արա...

**Գյուլնազարյան Խ., Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991,
էջ 82-83:**

5

Գարեգին Թումանյանը Քաջարանշին տրեստի կառավարիչ եղած ժամանակ
աշխատանքի վերջում շրջում էր օբյեկտներում: Հանկարծ լսում է վիճաբանության և
հայիոյանքի խոսքեր. Ես քու մերը...: Ես էլ՝ քու մերը...:

⁸¹⁵Նա₂ – դազադ, պատգարակ:

Զայրացած ներս է մտնում ու հարցնում հայհոյողներից մեկին.

– Դու ե՛րբ ես վերջացնելու աշխատանքդ:

– Ընկե՛ր Թումանյան, ես էսօր շատ գործ ունեմ, ուշ եմ տուն գնալու:

– Դո՛ւ երբ ես վերջացնում,– դիմում է երկրորդին:

Սա էլ է ասում՝ ուշ է գնալու:

– Դե՛, ուրեմն դուք հանգիստ աշխատեք, ես հիմա կգնամ ու էրկուսիդ ուզածն էլ

ծեր տներում կանեմ:

***Քոչարյան Ս., Չվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ»
հրատ., 2008, էջ 20:***

6

Կնիկ մը դրացիին հավը գոխծեր, խազանը դրեր կեփե կոր էդեր: Դրացինը կու-
քա կը հարցունէ քի «Հավս հոս էր էկեր, ի՞նչ էղավ»: Կնիկն ա կըսէ քի՝

– Էփի էփի էփն ի վրան,

Ճիվերը տնկած, խափախն ի վրան,

Վօվ օր առավ քուկին թավուխ,

Հոքին էրթա արքայութին:

Դրացին ալ կը լսէ, գիտէ քի էրթում կընէ կոր.

– Ամա՛ն քուրուկ, էրթում մըներ, կըսէ:

***Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, Եր., ԵՊՀ հրատ., 2009,
էջ 183:***

7

Մի մարդ երեք տղա է ունենում: Կյանքի մայրամուտին ուզում է պապերից եկած
միասնության և ամրության խրատներ տալ: Նա կանչում է երեքին էլ, ու դիմում է մե-
ծին.

– Տղա՛ ջան, մի գնա դրսից մեր բահը բեր:

Մեծ տղան բահը բերում, տալիս է հորը: Հայրը փայտե պոչը հանում ու մեկնում է

մեծին, թե.

– Ա՛ն ու եթե կարող ես, կոտրի՛ր:

Տղան խփում է ծնկանը, ինչ անում է, չի կոտրվում: Հայրը բահի կոթը տալիս է միջնեկ տղային, բայց սա էլ չի կարողանում կիսել, տալիս է փոքր տղային, բայց՝ ապարդյուն:

– Տեսնու՛մ եք, – տղաներին է դիմում հայրը, առանձին-առանձին չկարողացաք կոտրել, հիմա էլ միասին փորձեք:

Տղաները միասին ջարդում են բահի կոթը:

– Զավակներ՛ս, ձեռքի մատների նման միասին ու բռունցքված եղեք, և ոչ մի բան ձեզ չի կարող հաղթել, – հավաստում է հայրը:

Տարիներ են անցնում, մեծ տղան կյանքի մայրամուտին՝ մահվան մահճում, հանկարծ հիշում է իր հոր իմաստուն խրատն ու անդրադառնում, որ ինքը որդիներին միայն հաց է տվել, խրատ չի տվել: Անմիջապես կանչում է իր երեք տղաներին, բահը բերել է տալիս և կոթը հանելով՝ մեծ որդուն ասում է՝

– Թե կարող ես, երկու կես արա:

Մեծ տղան վերցնում է բահի կոթն ու ծնկանը խփելով՝ ջարդում, շարտում է մի կողմ: Հայրը հանկարծակիի է գալիս, բայց թաքցնելով շփոթմունքը՝ միջնեկ տղային է դիմում.

– Թե կարող ես, գնա դռան առաջի գերանը էրկու կես արա:

Միջնեկ տղան դուրս է գալիս, մի հատ «յեեե՛» է անում, ու գերանն էրկու կես է լինում:

Զայրացած ու մոլորված հայրը փոքր տղային է դիմում.

– Թե կարաս, գնա մեր դռան երկաթի տրուբեն էրկու կես արա :

Փոքր տղան տանից դուրս է գալիս, ու օդը թռչելով՝ էլի «յեեե՛» է անում ու երկու կտոր անում գետնին զցած երկաթե խողովակը:

– Դե արի ու մեռնելուց առաջ էս տեսակ ախմախներին խելք ու խրատ սովորաց-

րու, – կատաղած ասում է հայրն ու շունչը փչում... (ԱՍՇՀ)

8

Մի գյուղով անցնելիս տեսնում են բոլորը գլուխները քաջալացրած են ու հռուալով ծիծաղում են: Հետաքրքրվում են, խնդրում գաղտնիքը բացատրել: Ասում են.

– Մեր գյուղը բրդի պլանը չի կարողացել կատարի, քաջալացրին:

Ասում են՝

– Բա ինչի՞ եք ծիծաղում:

– Բա թե՛

– Հարևան գյուղն էլ ձվի պլանը չի կատարել... (ԱՍՇՀ)

9

Հավն ու վիշիլը

Մին հավ քյինամ ա զագրանիցա. ճանապարհին վիշիլ ա պըտահում. ասում ա.

– Հա՛վ ախպեր, շտե՛ղ ըս քյինամ:

Ասում ա.

– Քյինամ ըմ զագրանիցա:

Ասում ա.

– Պա խե՛ յըս քյինամ:

Ասում ա.

– Տարեն 360 օր օնե, ինձանա 380-ըն օզում, վեր Սովետին պլանը տամ: Վիշիլ ախպեր, պա տու շտե՛ղ ըս քյինամ:

Ասում ա.

– Ես էլ կյամ ըմ Սովետին երկիրը:

Ասում ա.

– Պա խե՛:

Ասում ա.

– Ասում ըն ըստեղ մին քյասիբ ա ապրում, մինչև քյինամ տըրան ճարիմ, տրա-

նավ սնվիմ, սոված կըմեռնիմ: Համա ասում ըն՝ ծեգ մոտ ուրու կըլխե թափած ըն, քի- նամ կըլոխս պահիմ:

Բաքվի հայոց բանահյուսությունը, Գրառեցին և կազմեցին Ալվարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը, Եր., «Ձանգակ-97» հրատ., 2004, էջ 208:

10

Հավալ

Երբ Թադեոս առաքյալը քարոզելու է գալիս այստեղ, տեղի կոապաշտները նրան ծաղրելու համար սկսում են «հա՛վ-հա՛վ» անել: Առաքյալը անիծում է նրանց, որ կորցնեն իրենց մարդկային բարբառը: Այդպես էլ լինում է: Դրանից հետո նրանք խոսե- լիս անդադար «հա՛վ-հա՛վ» են անում, որի համար և գյուղի անունը դնում են Հավալ:

Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., ԳԱ հրատ., 1969, էջ 200:

11

Նուսխէճի տերտերի «գելկապը»

Թուրք գեղջուկ մը իր էշը կը կորսնցնե և զայն գայլերեն ապահովելու հույսով տերտերի մը կոհիմե, որ «գելկապ» մը պատրաստե:

Քանի մը (սենթ) դրուշ նվեր կցնծա ու Տերտերն ալ մեկ-երկու բերան աղոթք կփչե, կմշե, հետո եղեգ գրիչը առնելով՝ «գելկապ» մը կգրե և թուրքին տալով՝ կսե.

– Ա՛ռ, բարեկամ, անհո՛գ եղիր, (այս նյուսխեճի շնորհիվ) այլևս գայլերը չեն կրնար էշդ ուտել, միայն աղոթե՛, որ էշը կարդացողի մը ձեռքը չանցնի, քանզի ան ձեր կրնա գտնել և ուտել...:

Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստ- արեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէյրութ, Տպարան՝ Կ. Տօնի- կեան, 1957, էջ 114 -115:

12

Ապարանցին Ոսկե ձկնիկ ա բռնում, ձկնիկն ասումա՛

– Իրեք ինչ ցանկություն ուզում ես, ասա, կատարեմ, մենակ ինձ բաց թող:

Ապարանցին ուրախությունից կմկմոցն ա ընկնում, մտածում ա՝ ի՞նչ ուզի...

– Շո՛ւտ արա, խոփկներս չորացան. խեղդվում եմ, ասա՛ ու շուտ ջո՛ւրը գցի:

Ապարանցին շուտ-շուտ ցանկություններն ասում ա ու անմիջապես գնում տուն, տենըմ ա դռանը՝ իրեք հարկանի, մեծ կրծքերով «Մերսեդես» ա կանգնած... **(ԱՍՇՀ)**

13

Մի մարդ կնգա հետ գազանանոց ա գընըմ, կապիկը սրա կնգանը վեր ա ունըմ բըցրացնըմ ծառի ծերն ու սկըսըմ շորերը մին-մին հանիլն ու ցած գըծիլը: Կնիկը ճչըմ ա, գողըմ, մարդին օգնություն կանչըմ: Մարդը ծառի տակիցը վերև ա մտիկ անըմ ու հանգիստ կնգանն ասըմ ա.

– Ի՞նչ ա, ի՞նչ ես ձենըդ գլուխըդ գըծել, դե հըմի դրան բացատրի, համոզի, ասա, որ գլուխըդ ցավըմ ա՛, անտրամադիր է՛ս, հավես չունէ՛ս... **(ԱՍՇՀ)**

14

Ջանդառի Մարտինը առավոտ վաղ ջորուն նստած ինչ-որ տեղ է գնում ու մտածում. «Հրես Գորգնանց Արտեմը ըղաքիս դուս տի գալ ու հարցնի, թե էս չախին (ժամին) էս ուր եմ գնում, խի՞ եմ գնում: Ես էլ օրը մի բան եմ հնարում, բա հմի ի՞նչ կասեմ: Դե որ հարմար բան չգընում, կասեմ.

– Գնում եմ, որ էն կոնուց դեսը գամ, բա՛...»

Համ ասած կլիմ՝ ուր եմ գնում, համ էլ՝ խի եմ գնում»:

Բաբայան Ա., Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007, էջ 69:

15

Ծաղկաշատցի Գորգնանց Արտեմը մի ցուրտ, ամպամած, թաց, անձրևոտ աշնանային օր բացատում մակաղած հոտի կողքին մի քարի նստել, յափնջին ուսերին գցել բարձր-բարձր մտածում է. «Էրնակ (երանի) մինը ոչխարս կթած ըլի, գառը մեր տված, ջգած ըլի, տրեխնիս բուխարու կողքին թառ տված (կախած), ոտն ու գլուխս վլացած ըլի, շորերս փոխած, կնգանս է՛լ... պրծած ըլի, համա լավ կլի հա՛...»:

Բաբայան Ա., Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007, էջ 70:

16

Ռուսաստանում գտնվող տղան զանգահարում է մորը.

– Ա՛յ մեր, գալիս եմ:

– Քե՛ մատաղ, 10 տարի է աչքս ջուր կտրեց:

– Ա՛յ մեր, մի ռուս կնիկ էլ եմ բերում:

– Ես քեզ էլ մեռնեմ, քու ռուս կնգանն էլ, ա՛րի:

– Ա՛յ մեր, իրեք ըրեխա էլ եմ բերում:

– Ես քեզ էլ մեռնեմ, քու իրեք ըրեխին էլ:

– Ա՛յ մեր, Էդ ըրեխանցից երկուսը շեզ ա, մինը՝ սև:

– Արի՛, բալա՛, ա՛րի:

– Բա էրկու սենյակում ո՞նց տենք քնի:

– Տղա՛ ջան, դու քու կնգա հետ մի սենյակում կքնես, ըրեխեքը՝ մի, հերդ էլ՝ կուխնումը⁸¹⁶ յոլա կգնա, մենակ թե արի:

– Ա՛յ մեր, բա դու՞:

– Տղա՛ ջան, ես էլ էսա տրուպկեն⁸¹⁷ վեր եմ դնում ու ինֆարկտ ստանամ:

Բաբայան Ա., Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007, էջ 61:

17

Չուրի՛դ լվա, չուրի՛դ

Մեկը կնգանից բաժանվում ա: Դատավորը հարցընում ա.

– Ինչի՞ ես բաժանվում, կոնկրետ որևէ պատճառ կա՞, որ բաժանվում ես:

– Կա, քաղաքացի՛ դատավոր, ո՞նց չկա. վրիցը հոտ ա գալի:

⁸¹⁶ Կուխնյա (ռուս.) – խոհանոց:

⁸¹⁷ Տրուպկա (ռուս.) – լսափող:

Դատավորը էս կնգանն հարցընում ա.

– Տիկի՛ն, ինչի՞ չեք լողանում, բա ամոթ չի՞:

– Ո՞նց չեմ լողանում, քաղաքացի՛ դատավոր, ամեն օր ներքևից լա՛վ վլանըմ եմ *չուրի*⁸¹⁸ ըստեղ (ցույց է տալիս ոտքերից մինչև ծնկից վերև ընկած մասը), հետո էլ վերևից լա՛վ վլանըմ եմ չուրի ըստեղ (ցույց է տալիս գլխից մինչև պորտից ներքև ընկած հատվածը)...

– Տիկի՛ն, առաջին հերթին ***չուրի՛դ լվա, չուրի՛դ***, – ասում է դատավորը: **(ԱՍՇՀ)**

18

ՆՈՐ ԷԿՈՂԸ ՔԱԳԷԲԷՅՈՒՄ

Նոր էկող մարդուն մեկը ասդին-անդին ավել-պակաս կխոսի.

– Ծո՛, աս ի՞նչ երկիր եկանք, աս՝ չի՛կա, ան՝ չի՛կա...

Օր մըն ալ ասոր կբռնեն միլիցիաները, Նալբանդյան փողոցի վրայի այդ քագեբեյի կլոր շենքին նկուղը կտանին, կմտցնեն, ձեռքերը վեր հանել կուտան, դեմքով դեպի պատը կկայնեցնեն...

Աս նոր էկողին ահը սիրտը կիյնա, թե ուր որ է՝ հիմա իրեն կյանքին պիտի վերջ տան: Ադ վիճակով կսպասե՛, կսպասե՛, ետքը կըսե.

– ***Ի՞նչ է, փամփու՛շտ ալ չիկա...***

Սվազյան Վ., Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 113-114:

19

Ոչ հորս կողմից ես բարեկամ, ոչ մորս կողմից

Մեկի մարդը մեռնըմ ա: Կնիկը սուգ ու շիվան ա դնում, մազերը փետըմ, բարձր-բարձր ողբի հետ հիշըմ անցած օրերը: Հեռու-մոտիկ ընկեր-բարեկամները ինչ անում են, հնար չի լինում հանգստացնել: Գիշերը մի կերպ համոզում, տանում են քնացնում:

Առավոտ ծեգին տեսնում են՝ էս կնիկը առանց լացի բոլորի հետ ասում, խոսում,

⁸¹⁸ **Չուրի** – մինչև:

մեկ-մեկ էլ ծիծաղում ա: Մտածում են՝ երևի ծանր տարավ, խելքի վրա ազդեց...: Մոտիկներից մեկը հարցնում ա.

– Էրեկ էդքան լաց ու կոծ էիր դրել, էսօր քեզ ի՞նչ ա պատահել. ասում, խոսում, ուրախանում ես... // Ասմա. // – Ոչ մի բան էլա չի պատահել. ամբողջ գիշեր քունս չէր տանում, տվի ու առա, մտածեցի. **«Ոչ հորս կողմից ա բարեկամ, ոչ մորս կողմից, էս ի՞նչ եմ ախմախի նման ինձ կտրատում...» (ԱՍՇՀ)**

20

Լավ, տղե՛րք, թողե՛ք, սրանից հետո ես կգնամ

Իրեք ընկերներով ուտում, խմում են, մեկի քնֆը լավանում ա, էրկու ընկերով թևերն են ընկնում, որ տանեն տուն: Հասցնում են շենքի մոտ, թարսի պես լիֆտն էլ աշխատելիս չի լինում, մի կերպ բարձրացնում են 11-րդ հարկ, զանգը տալիս են, կինը դուռը բացում է, տանում են դիվանին պառկացնում, սա աչքերը բացում, ասում ա.

–Լավ, տղե՛րք, թողե՛ք, սրանից հետո ես կգնամ... (ԱՍՇՀ)

21

Վա՛րդուշ, լա՛վ ա՛

Մի գեղացի մարդ կնգա հետ քաղաք ա գալի, տան հրմար բան-ման ա առնըմ, մինչև ավտոբուսի գալը դեռ ահագին ժամանակ ա ըլըմ, կնգանն ասըմ ա.

– Ա՛յ կնիկ, հազիր քաղաք ենք էկել, ըրեխա-մըրեխա էլ չկա, ժամանակ էլ ունենք, արի գնանք կինո:

Էտա կինո են գնըմ, ու որ լըսերը հանգցընըմ են, թե ինչ ա անց կենըմ էս խեղճ գեղացու մտկովը, ձեռը տանըմ դնըմ ա կնգա ծնգանն ու կամանց-կամանց վերև ա բըցրանըմ: Հանկարծ ջանովը դող ա անց կենըմ, ու թեքվելով դըբա կնիկը՝ անգաճին կամանց հարցընըմ ա.

– Վա՛րդուշ, լավ ա՛:

– Մի՛ քիչ բարցըր..., – մարդի անգաճին ցածր ասըմ ա կնիկը:

– **Վա՛րդու՛շ, լա՛վ ա՛,** – դահլիճով մեկ բարձր ձենով գոռըմ ա մարդը: **(ԱՍՇՀ)**

Գուրթանի փայտերից մեկը կոչվում է «էշ», որ եթե մի քիչ թաց է լինում, կառավ ծեփում են ու դնում արեւի տակը, որ չորանայ ու չճեղքուի:

Սկեսրայրը հրամայեց իւր քաղաքացի հարսին, որ էշը բոլորովին կառավ ծեփէ: Նա էլ մտաւ գոմը, էշը ոտքից մինչեւ գլուխ կառավ ծեփեց եւ «չու՛, չու» անելով՝ դուրս տարավ:

Սկեսրայրը տեսնելով՝ բացագանչեց.

– Աստուա՛ճ, իմ դուշման գեղացուն քաղաքի հարս չտա, որ լիզուն չիմանան:

Անեկդոտներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ.Վարդանյանի եւ ընկ. տպարան, 1883, էջ 83-84:

Հավելված 2

1

Նոր այրիացածը կամենում էր ամուսնանալ յուր քենու /կնոջ քույր/ հետ: Բայց չհասությունից ազատվելու համար առավ մի սպիտակ ջորի և 100 ոսկի ու գնաց, ներկայացավ եպիսկոպոսին: Սրբազանը սկզբումը թույլ չէր տալիս, ասելով, թե մեծ չհասություն կա: Բայց հետո տեսնելով բերած կաշառքը՝ ասաց.

– Կա՛ց, որդի՛, ազգաբանությանը նայեմ:

Եվ սկսեց նայել հետևյալ ազգաբանությունը՝ համարելով մատների վերա.

– Սպիտակ- ջորի, // Հարյուր- ոսկի, // Մեռնի- կնիկը. // Առնի – քենին: //

– Էէ՛. էս ութ էլավ, որդի, օխտը պորտից անցա, կհասնի, կհասնի...

Անեկդոտներ, հատոր 2, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տփլիս, տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877, էջ 37-38:

2

Մի կնգա մարդը մեռնըմ ա, լավ էլ դուդուկ (տարբերակ՝ ջութակ) նվագող ա ըլլամ: Կնիկը բերըմ ա տեղը-տեղին մարդին հագցընըմ ա, դուդուկն էլ (տարբ.՝ ջութակը)

դնում և մարդի ոտների արանքին, ու որ ժողովուրդը հավաքվում և, կնիկն սկսում և բարձր ձենով լաց ըլիլն ու իրա վիճակը նկարագրիլը.

– Առանց քեզ բա ես ի՞նչ եմ անելու, ո՞նց եմ ապրելու, իմ տան ուրախություն, առանց էդ սիրուն պատկերիդ ու դուդուկիդ նվագի ես ի՞նչ եմ անելու: Վայ ես քեզ էլ մեռնեմ, ոտներիդ արանքինին էլ մեռնեմ (իմա՛ ոտներիդ արանքին դրված դուդուկին): Առանց ձեզ ի՞նչ եմ անելու, ո՞նց եմ ապրելու, իմ կյա՛նք, իմ արև՛... **(ԱՍՇՀ)**

3

Մի մարդու հերը մեռնում և: Էս տղեն որոշում և պարտք անի ու հոր հետ ամեն ինչ դնի: Գնում և մի հատ էլ լավ թանգանոց բջջային և առնում ու դնում հոր ոտների տակ: Էս տղու ընկերներից մեկը տեսնում և ու հաջողացնում, թոցնում և: Մի քանի օր որ անցնում և, էս տղեն որոշում և զանգի հորը: Զանգում և, զանգը գնում և, էս տղու ընգերը վերցնում և ու ասում.

– Ա՛յ շան լակոտ, դնել, դնել էր, զարյադըչնի՞կը⁸¹⁹ խի չես դրել: **(ԱՍՇՀ)**

4

Մեկի զոքանչը մեռնում և, փեսեն տանում և վառել և տալի, մոխիրը բերում և տուն: Տըղեն տենում և, ասմա.

– Պա՛յ ջան, ի՞նչ կըլի, տուր տանեմ դնեմ դաշնամուրիս վրեն, ես կընվագեմ, տատըս էլ հա կըլըսի: Ինքը շատ էր սիրում, որ ես նվագըմ էի:

– Ի՞նչ կըխոսիս, լցնելու եմ չասնիկի (իմա՛ ավագի ժամացույց-ԱՍ) մեչը, որ հա՛ աշխատի, – ասում և հերը: **(ԱՍՇՀ)**

5

Իմ շըվարի մեչինը ծէր մեռլի կլխին

Մէ տերտեր շատ քոռաֆահմի ըլելի, ըսկի մե աղոթկ բան պերանացի խամար չինալի: Առանց Մաշտոցի վոտ-վոտի տեղ չի փոխելի, ենց վոր պետկ ըլելի Մաշտոցը խանելի...

⁸¹⁹ **Զարյադըչնիկ** (ռուս.) – հոսանքը լիցքավորող սարք:

Մէկ որ տարը հրավիրեսեն, վոր մե ազիզ մեռլի վրա խոքոց ասի: Տերտերն եթալի կայնելի մեռլի կլխին, խազալի, բողազը խորթելի, ծեռը թալելի, վոր մեշկըպի մեչեն Մաշտոցը խանի, տըսնալի ինչ, Մաշտոցը սողաքցե ինգե շըլվարի մեչը, կընացե սակի պերանը բանդիելե: Ի՞նչ անի խեղճ տերտերը, խոքոցը խամար ասել չի նալի, ետ խալխի մոտն էլ խոնջանն առցըկել, յա սակը պացել Մաշտոցը շըլվարեն խանելը ամո՛թ ի. ի՞նչ անի...

Վեռչապես յեփ տես-դեն ասեսեն՝

– Դե՛, տերտե՛ր, ասա՛ յե՛, մե խոքոց խանգուցելոց ասա:

Նաչարութ վերցելի, թե՛

– Ա՛յ վորթի, ել ի՞նչ ասեմ. հենց ետ շըլվարիս մեչին ծէր մեռլի կլխին ըլի...

Տերտերի խոսկը հալա պերանը, տասեն.

– Տո քոփայ-ողլի, յանի ի՞շթար թե շըլվարիս մեչին ծէր մեռլի կլխին ըլի...

Ընչու տերտերը խասկըցուցելի, թե պանն իշթար ի, դարը մե ոքու վար տասեն, սեվը պերեսեն...

ԳԱԱ ՀԱԻ-ի բանահյուսության արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, Սալմասր, FF:1, 1539:

6

Տարագրութեան սեւ օրերէն վերջ պատահած ողբերգութեան մը մանրանկար է Մարաշցի Տ. Հակոբի պարզամիտ արտայայտութեամբը երգիծանքի նիւթ կը դառնայ:

Ա. Համաշխարհային պատերազմէն առաջ ամուսնացող զոյգի մը ամուսինը, ազատուելով սպանդեն՝ Զինադադարէն ետք՝ նախ Կիլիկիա և ապա Պէյրութ կ'իյնայ: Իր կինը բաւական մը փնտռելէ և սպասելէ վերջ՝ չի կրնա գտնել զայն և յուսահատ՝ կը յաջողի ամուսնանալ ուրիշ հայուհիի մը հետ:

Իր ամուսնանալէն յետոյ՝ չար բաղդէն ըսենք, նախկին կինն ալ գտնուելով կուգայ կը հասնի իր ամուսնին մօտ: Բնական է Հայ Եկեղեցին մէկ պսակ կ'ընդունի և բազմակնութիւնը չարտօնէր: Այս երկու օրինական կիները և իրենց միակ ամուսինը՝ կը

դիմեն Պեյրուֆի Առաջնորդարանը դատաստանուելու:

Իրենց Առաջնորդարան եկած ատենին Մարաշցի Տ. Յակոբն ալ հոն կ'ըլլայ: Այս երկու կիներէն առաջին ամուսնացողը՝ գաւառացիի տարագով, քիչ մը ոչ նրբացած, տգեղ մէկը կ'ըլլայ, իսկ երկրորդը՝ ատելի ներկայանալի ու գեղեցիկ, առաջին կնկան հետ բաղդատելով:

Հիմա երկու կիները քով քովի կեցած են և դիմացն ալ իրենց միակ ամուսինը. Տէր Յակոբ քահանան խօսքը ուղղելով միակ անուսինին կ'ըսէ.

– Տղա՛ս, մեր եկեղեցին պսակի վրայ ուրիշ պսակ չընդունիր, բայց գէշ օրերու մէջ այսպիսի բան մը ակամայ պատահած է: Ասոր մէջ դուն յանցաւոր չես, ժամանակն ու պայմաններն են յանցաւորը, բայց կրնաս նպաստել այս թնջուկի լուծման. ըսէ նայիմ, ո՞ր կինդ կ'ընդունիս և անոր հետ կենակցիլ կ'ուզես, առաջինի՞ն հետ թե՞ երկրորդին...:

Խեղճ մարդը հիմայ ի՞նչ ըսէր, երկուքն ալ իր պսակեալ կիներն էին: Մէյ մը կը նայի գաւառացի կնկան, իր խեղճ ու կրակ վիճակին մէջ, մէյ մըն ալ երկրորդ կնոջ, որ ատելի վայելուչ էր դէմքով, մարմնով և հագուստով. այս երկընտրանքին մէջ ի վերջոյ՝ իր նախընտրութիւնը կ'իյնայ երկրորդ կնկան ու ձեռքի մատնանշումով մը ցոյց կուտայ Տէր Հօր, որ վերջինին հետ կ'ուզեմ կենակցիլ...:

Այս մատնանշումէն դժգոհ՝ Տէր Յակոբը իր ծանոթ պարզամտութեամբ կը գոչէ.

– Օղո՛ւկ, անիկա ես ալ կ'առնեմ, մարիֆէթը միւսը առնելն է: Եկու՛ր Հայ Քրիստոնէի բարի հոգիով մը՝ միւսը առ. ասիկա անտէր չի մնար, մի վախնար. բայց մեղք կ'ըլլայ միւսին...:

***Բախտիկեան Ս , Շէփկայ խելացին (հայկական զուարճախոսություններ),
Բեյրութ, Լիբանան, 1953, տպ. Օլիմփիք, էջ 22-24:***

7

«Վերջին վակոնին մէջ նետէ»

Դէպքը պատահած է Հալէպի մէջ, 1922-1923 թուականներուն, երբ Հայկական Հալէպը հիւղաւաններու քաղաք մըն էր տակաւին: Րամատանիէ, Ճապրիէ, Սիւլէյմա-

նիէ, Ահէտ Պագար, Ագապա, ամէն կողմ տախտակաշէն հիւղակներ՝ թիթեղներով ծածկուած: Ոմանք աւուր հացի համար սկսած էին ոտքի վրայ մանր առուտուրով զբաղիլ, *փերեզակութիւն* ընել. շատեր կը մնային անգործ, սրճարաններու մէջ մաշեցնելով իրենց ժամանակը եւ ծխելու ու խմելու մէջ մխիթարանք փնտռելով: Սովորական երևոյթ էր տեսնել գինովներ, որ օրը իրիկուն ըրած՝ տուն կը դառնային պատեր շտկելով եւ երգ կանչելով...:

Շրջուն ոստիկաններ գիշեր մը ձեռք կ'անցընեն լոյիկ դարձած 5 խմաններ – Այնթապցի հինգն ալ, եւ զանոնք կ'առաջնորդեն Պապ էլ Ֆարաճի ոստիկանատունը, որ հոն գիշերեն եւ առաւօտուն իրենց զգաստացուցիչ դասը առնեն:

Գիտակցութիւննին կորսնցուցած՝ հինգ խմանները պաղ քարին մաշած խսիրներու վրայ գիշերը կ'անցընեն մշիկ-մշիկ քնանալով: Պահակ ոստիկանը, իր կարգին, աթոռին վրայ բազմած՝ կը մրափէ ելքի դրան առջեւ:

Լուսադէմին, արեւածագի էզանին (իմա՝ նամագ-ԱՍ) հետ, երբ կը՝ սթափին գինովները, վերահասու կ'ըլլան, թէ «բանը ինչու՞մն է»: Խորհրդակցական կարճ ժողով մը կը գումարեն. խումբին ամէնէն հանած-վարածը կը նշանակեն խմբապետ եւ կ'որոշեն խաղ մը լարել, որ *Գոմիսերը* չեկած պրծին ոստիկանատունէ եւ ազատին անխուսափելի ծեծ ու խոշտանգումէ:

Ան որ «խմբապետ» նշանակուած էր, կ'ըսէ ընկերներուն. «Տղա՛ք, ի՛նչ որ հրամայեմ, պիտի կատարէք, միշտ հետեւելով ինձի»: Ապա, կիսարթուն պահակին մօտենալով եւ սիկարէթ մը հրամցնելով.

– Բարեկա՛մ, կ'ըսէ, դուն *թրեն* տեսա՞ճ ես:

Պահակը, ո՞վ գիտէ ո՞ր անապատէն կամ մեկուսի գիւղէ մը եկած պարզամիտ մարդ, հարցումը լուրջի առնելով.

– Ո՛չ, կ'ըսէ, *թրեն* ի՛նչ է չեմ գիտեր:

Խմբապետը, խոսքը ընկերներուն ուղղելով.

– Տղա՛ք, կ'ըսէ, ես *լոքոմոթիֆ* պիտի ըլլամ, դուք ալ մէկ մէկ *վակոն*: Ձեր ոտնա-

մանները հանեցէք եւ ձեր անուֆին տակ առէք, որ մեր գնացքին արգելք չըլլան, եւ իրարու ուսին կառչած՝ շարուեցէ՛ք ետեւէս:

Հրամանները կը կատարուին եւ վայրաշարժի *փա՛Ֆ... փու՛Ֆ*ին հետ *թրենը* կը սկսի շարժիլ: Մէկ, երկու, երեք, ինը անգամ շրջան կ'ընեն ոստիկանատան մէջ, տասներորդին խոյանալով սենեակէն դուրս: Ունաման մը իրենց դարձդարձին մէջ գետին ընկած էր. պահակը, ապուշ կտրած, կը պոռայ հեռացող խումբին ետեւէն.

– Բարեկամներ, ձեզմէ մէկուն կօշիկը հոս մնաց.

«Վայրաշարժ» խմբապետը՝ անտարբերութեամբ մը.

Արգա վակոնա ա՛թ վերջին վակոնին մէջ նետէ՛ կը ձայնէ, թափ տալով իրենց վագրին որպէսզի օրը չլուսցած իրենց հետքը կորսնցնեն թաղերու զիլզակին մէջ:

Պատմութիւն Անթէպի հայոց, Գ հատոր, Խմբագիր՝ Երուանդ Պապայեան, Անշեյես, 1944, էջ 384-385:

8

Կնիկ մը կ'ուզեմ

Կիլիկիոյ կոտորածէն յետոյ շատ մը հայեր օրինաւոր կամ ապօրեն ճամբաներով Թուրքիա կոչուած դժոխքէն խոյս տուին եւ գացին Միացեալ Նահանգներ: Ընդհանրապէս երիտասարդներ էին գացողները եւ շատ քիչեր տեղեակ էին անգլերէն լեզուի: Այդ տգիտութիւնը ի՛նչ զուարթաբանութիւններ առաջ բերած է Էլիս Այլենտի մուտքի քննութիւններուն առիթով...:

Նման պարագայ մը ունեցած է աշակերտներէս մէկը Պր. Նազար Սթամպուլեան, որ 1911-ին Ամերիկա մեկնած էր Յակոբ եղբորը մօտ:

Պր. Յակոբ օր մը դանակի պէտք կ'ունենայ եւ տոլար մը տալով եղբորը՝ կը դրկէ զայն որ մօտակայ խանութ մը հատ մը գնէ ու բերէ, չմոռանալով սորվեցնել ըսելիքը. *want a knife* (դանակ մը կ'ուզեմ):

Նազար՝ եղբորը ըսած անգլերէն բառերը մտովի կրկնելով՝ կ'ելլէ ճամբա: Ծանոթի մը կը հանդիպի, քանի մը վայրկեան խօսքի կը բռնուին եւ երբ խանութ կը հասնի

մէկ գիրի տեղափոխութեամբ նայֆ բառը վայֆ եղած՝ կ'ըսէ վաճառորդ օրիորդին.

– *I want a wife* (կնիկ մը կ'ուզեմ):

Օրիորդը կը կարմրի եւ շփոթահար ձայն կու տայ ընկերուիին: Նազար կարծելով որ ան է դանակ վաճառողը, միամտօրէն կը կրկնէ խնդրանքը. *Այ ոտնոթ է վայֆ* (կնիկ մը կ'ուզեմ):

Աղջիկներուն միասնաբար արձակած խնդուքը միայն կը զգացնէ Նազարը թէ սխալանքի մէջ է եւ ցուցադարակէն դանակը ցոյց տալով.

– *I want this* (ասիկա կ'ուզեմ) կ'ըսէ ու դանակը գնած տուն կը դառնայ, պատմելով եղբօրը ինչ որ պատահած էր:

Երբ եղբօրը լուսաբանութիւնը կը լսէ, Նազար ինքն ալ կը խնդայ անպատշաճ կաֆին վրա, զոր ըրած էր տգիտաբար:

Պատմութիւն Անթէպի հայոց, Գ հատոր, Խմբագիր՝ Երուանդ Պապայեան, Լոս Անջելես, 1994, էջ 380:

9

Հալեպի մէջ դանիացի միսիոներուի Քարեն Եփփեն բոլորին ծանոթ էր Միս Եփփե, որ պարբերաբար միտով ճաշ կբաժաներ տարագիրներուն:

Օր մը տարեց կին մը որբուկի մը հարցը ներկայացնելու համար գուկա այրիանոց՝ Միս Եփփեն տեսնելու համար:

– Ամմա՛ն, քա՛, – գըսէ, – մինչ հոս եգա, – անունը չեմ գիդեր՝ ինչպե՛ս խոսիմ հետը:

– Ինչպե՛ս չես գիդեր, միս Եփփե է, – գըսին գիները:

– Ամմա՛ն, – գըսէ, – ես ալ կգարծեի՝ ամեն օր միս կէփե, անգէ է: **(ԱՍՇՀ)**

10

ՄԻԱՄԻՏԻ ՄԵՆԻԹԱՐԱՆՔ

Ժամանակաւ խումբ մը գաւառացի բանուորներ կ'աշխատէին ճուլարանի մը մէջ, ուր մեծ ու պզտիկ երկաթե գլաններ կը դառնային գիշեր ցորեկ ճոնչալով: Փոքրիկ

անզգուշութիւն մը՝ կրնար բանուորներէն մէկուն կամ միւսին մահը փութացնել:

Եւ ահա դժբաղդ օր մըն ալ, այդ երկաթէ փոքրիկ անիւ-գլաններէն մին՝ ոլորեց ու տակն առաւ այդ բանուորներէն մէկուն՝ Այվազեան Սարգիսին մարմինը, և ճզմեց զայն:

Այժմ Սարգիսին ընկերները բոլորուեր են իրենց խեղճ ընկերոջ ճզմուած մարմինն շուրջ, ահ ու կսկիծով արցունք կը թափեն, եղերերգներ մըմնջելով:

Ճիշտ այդ պահուն, իրենց մէջ ամենէն «խելօքը», մէյ մը կը նայի ճզմուած մարմինն, մէյ մըն ալ թրվաացող հսկա մեքենաներուն և խոսքը ուղղելով լացող ընկերներուն՝ կ'ըսէ.

– Մի՛ լաք, տղա՛ք, մի՛ լաք: Փառք տուէք Աստուծոյ, որ Սարգիսը այս փոքրիկ մեքենային տակը մնաց: Անգամ մը խորհեցէ՛ք թէ ի՞նչ պիտի ըլլար մեր Սարգիսին հալը՝ եթէ անիկա այս փոքրիկ մեքենային տեղ՝ մնար՝ սա հսկայ՛ մեքենաներէն մէկուն տակ...:

Միամիտ գիւղացիի այս մխիթարանքին համար լա՞ն թէ խնդան...:

Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէյրուֆ, Տպարան՝ Կ. Տօնիկեան, 1957, էջ 151:

11

Չարխօսիկ Սագոն

Մըկո աղբար, որ 15 տարի է՝ Պօլիս պանդխտեր եւ կարօտով խապրիկ մը կըսպասէր տունէն, օր մը կը լսէ, որ հայրենակից Սագօն է եկեր հայրենիքէն, ուստի կը վազէ անոր քով ու կը փափագի լուր մը քաղել իրեններէն:

Բայց Սագոն բարի լուր տուող չէր: Մեծ չարխօսիկ էր ան:

«Բարեւ, Ասծու բարին» էն յետոյ, Մըկո հարցուց.

– Սագո՛ աղբար, ի՞նչ լուր մեր շունէն:

– Ա՛, գլուխդ ողջ մնայ, Մըկո աղբար: Ձեր գոմէշի միսը կրծելու ատեն ոսկոր մը խրեցաւ կոկորդը ու սատկեցաւ:

- Ուրեմն գոմէշնի՞ս ալ սատկեցաւ:
- Երբոր լուսահոգի հորդ տապանաքարը կը բերէր, սայլին տակը մնաց ու սատկեցաւ:
- Չըսե՞ս հայրս ալ մեռաւ:
- Խեղճը մօրդ ցաւին չկրցաւ դիմանալ:
- Վա՛խ, վա՛խ, ուրեմն մա՞յրս ալ մեռաւ:
- Երբ երկու քոյրերդ մէկ օրուան մէջ յանկարծամահ եղան, խեղճը անոնց ցաւին չկրցաւ դիմանալ:
- Ա՛հ, քոյրե՞րս ալ մեռան: Ուրեմն երթամ, շուտ երթամ, որ գոնէ օջախս վառեմ:
- Ի՛նչ տուն, ի՛նչ օջախ: Պարտատէրեր եկան, արօր դրին, տուն ու տեղդ հերկեցին: Ո՛չ տուն մնաց, ո՛չ օջախ:

Հայկական գրոյցներ. առակներ, առածներ, մանրավէպեր, զուարճալի ասացուածքներ և իմաստուն խօսքեր, պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆատան, Լոս Անջելես, Պօզանեան տպագրութիւն, 1944, էջ 44:

12

Չար Սադոն

Մարտմ՛ թը քընի գէրտը խուրբաթ⁸²⁰: Իկալուց գհանդբի իրանց կեղացի Սադոյ:
 – Սադո՛, – գըսը, – ի՞նճ գը, ը՛մ հեր, ը՛մ մեր, ըմ ընդանիք ի՞մալ ին:
 – Քու բաբ մեռիր ը, քու ախպեր սաղ մեռիր ին, ծըր տռան բըլըք շուն յոտ թուլը պերիր ը, դիխ-դիխ տրիր ը...

Հայ ազգագրութիւն և բանահյուսութիւն, հատոր 19, Ռախսա Խաչատրյան, Թալին, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 1999, էջ 106:

13

Փախուկ ամուսինը

ժամանակաւ երիտասարդին մէկը կ'ամուսնանայ և հազիւ մեղրալուսնի օրերը

⁸²⁰ **Խուրբաթ** – պանդխտութիւն:

բոլորած՝ հարսը կը ձգէ տուն և ղարիպի ցուպը ձեռքը՝ կը հեռանայ Պոլիս:

Հոն 15 տարի պանդխտելէ յետոյ տուն կը վերադառնայ և ի՞նչ տեսնէ աղէկ: Իր բացակայութեան կինը բաղդաւորուեր է *երեք* զաւակներով: Առաջինը՝14 տարու, երկրորդը՝ եօթը, երրորդն ալ՝ երկու տարեկան:

– Աղջի՛, ո՞վքեր են ասոնք, կը հարցնէ զայրոյթով:

– Օ՛, սիրո՛ւն ամուսինս, հանդարտէ, – կը պատասխանէ կինը փաղաքշանքով

մը: – Տե՛ս, աս բոլորն ալ քու հարազատ զաւակներն են:

– Ինչպէ՛ս...:

– Պատմե՛մ: Ամեմէն մեծը սիրոյ պտուղն է մեր մեղրալուսնի օրերուն: Գիտե՛ս

ա՛...:

– Է՛ միանե՛րը:

– Երկրորդն ալ ունեցայ այն օրը, որ ինծի սիրալիր նամակ մը ղրկած էիր Պոլսէն,

կը յիշե՛ս...:

– Է՛, շատ լաւ երրո՞րդը:

Երրորդը, որ այդ պահուն դգաթի մը վրայ տիտիկ ըրեր, ճանկով-մատով ռուպ կ'ուտէր.

– Թո՛ղ, կը յարէ կինը, թո՛ղ, այդ երրորդն ալ իր ռուպը ուտէ, ան ալ քեզի բաբա ըսած չունի եա՛...:

Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խոսքեր և այլն), պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէյրութ, Տպարան՝ Կ. Տօնիկեան, 1957, էջ 140-141:

14

Աբա՛ր, ա՛լք ըսէ (Հայրի՛կ, ա՛յք ըսէ)

1860-ականներուն Շիրոյի գրրտական գիւղ մը տեղափոխուած⁸²¹ չնքուշցի ընտա-

⁸²¹ ԺԹ դարուն, թրքական ծայրայեղօրեն հայահալած քաղաքականութեան օրերուն, Չնքուշէն հարիւրաւոր ընտանիքներ տեղափոխուեցան Շիրոյի, Կարկարի եւ այլ քրտական շրջաններու գիւղերը, ուր անոնց տղամարդիկ տարին եօթ-ութ ամիս կը գործէին նախապէս եւ աշնան կը վերադառնային Չնքուշ,

նիքի մը որդին, որ Քիւրտերու մէջ մեծնալով պատեհութիւն ունեցած չէր դպրոց երթալու և հայերէն գրել-կարդալ սորվելու, որպէսզի զաւակներն ալ հայերէն գրել-կարդալ սորվին, որոշեց ընտանեօք վերահաստատուիլ Չնքուշ եւ ինք, ըստ նախնոյն, շարունակեց գործել Շիրո՝ տարուան եօթ-ութ ամիսներուն:

Անոր անդրանիկ որդին արդէն դպրոցական տարեշրջան մը բոլորած էր, երբ իր հայրը աշնան տուն վերադարձաւ ու, հիանալով տղուն մաքուր հայերէն խոսակցութեան վրայ, զայն կուշտ մը համբուրելէ յետոյ, ուզեց հասկնալ, թէ տղան ինչքա՛ն բան սորված էր: Տղան, առնելով այբբենարանը, նստաւ հօրը ծունկերուն վրայ, եւ այբբենարանի առաջին գրին վրայ դնելով մատը,

Տղան.– Աբա՛ր, ա՛լբ ըսէ:

Հայրը.– Ալբ:

Տ.– Ատի չեղաւ, աբար, ա՛լբ ըսէ:

Հ.– Տղա՛ս, իշտէ կ'ըսեմ, ալբ, ալբ:

Տ.– Չէ, աբա՛ր, ինձի պէս մի՛ ըսէր, վարժապետին պէս ըսէ:

Հ.– Տղա՛ս, վարժապետը ինչի՞ս կ'ըսէ:

Տ.– Վարժապետը ալբ կ'ըսէ, ալբ:

Հ.– Տղա՛ս, իշտէ ես ալ վարժապետիդ քիմի⁸²² կ'ըսեմ ալբ, ալբ...

Հայր ու տղայ քրտինքներու մէջ մտան, ժամերով ալբ, ալբ ըսելէն:

Գէորգեան Գ , Չնքուշապատում, 1-ին հատոր, Երուսաղեմ, Կոպարան Ս.

Հակոբեանց, 1970, էջ 309:

15

Բայկանություն հերթական թռիչքն իրականացնող տիեզերագնացը հիվանդանում է: Թռիչքը նախապատրաստող հանձնախումբը շոկի մեջ է: Հաշված ժամեր են մնացել թռիչքից: Հանկարծ մեկը հիշեցնում է, թե մոտակայքում ասֆալտ անող հայերի բրիգադ է աշխատում, միգուցե նրանցից որևէ մեկի՞ն վերցնենք:

իրենց ընտանիքին ծոցը:

⁸²² **Քիմի** – նման:

Գնում աշխատողներից մեկին են հարցնում, սա թե էդ գործով դիմեք բրիգադի-
րին: Գնում են բրիգադիրի մոտ, որ տիեզերք թռչելու համար հիվանդ տիեզերագնացի
փոխարեն իր աշխատողներից մեկին տա: Բրիգադիիրը թե՛

– Հարց չկա, համաձայն եմ, բայց էկեք բարըշենք՝ մետրը քանի՞ս եք տալի...

– Դուք ինչքա՞ն կուզեք:

– Դե... մենք ասֆալտը մետրը 10 ուրբով ենք անում, եթե համաձայն եք, ձեռ-
նարկենք... **(ԱՍՇՀ)**

16

Մեկը խոսքի գնալիս ընկերներին ասում ա.

– Տղե՛րք, էտա ես խոսքի եմ գնում, կնգանս վրա կասկածում եմ: Աչկների վրեն
ըլի, հենց որ մի բան կտենաք, վռազ հեռագիր կտաք: Բայց որ բրիգադի տղերքը չիմա-
նան, հեռագիրը էսպես կտաք. «Բաբուշկա ումերլա», ու ես գլխի կընգնեմ, վեր կկենամ
կգամ...

Գնում ա խոսքի, դեռ գործը չըսկսած՝ հեռագիր ա ստանում. «Բաբուշկա ումեր-
լա»

:

Բրիգադի անդամներն ասում են՝ // –Տատդ մեռել ա, բա չես գնու՞մ: //Ասմա. //

– Էլ դժվար թե հասցնեմ, ուշ ա, յոթին կամ քառսունքին կգնամ:

Հաջորդ օրը մի հեռագիր էլ ա ստանում. «Սմերտ պրոդուկտետայա»... **(ԱՍՇՀ)**

17

Պառավաքարցին խոսքից գալուց առաջ հեռագիր ա տալի, թե. «Էսինչ օրը, է-
սինչ ժամին տանն եմ ըլելու: Որ էկել եմ տեսել՝ մի օտար մարդ կա մեր տանը, ձեռիցըս
չես պրծնի»:

Երևի շատ ճշտապահ մարդ ա լինում, իրա ասած օրն ու ժամին իրանց տան դու-
ռը բաց ա անում, տեսնում՝ մեկը կնգա ծոցին: Մոլորված դռան շեմին կանգնում ա ու...,
երևի կարոտից, ինքնիրեն ասում. «Կա-չկա, կնիկըս հեռագիրն ըստացել չի...»:
(ԱՍՇՀ)

Երկրաշարժից տուժածներին օգնություն են տալիս: Աղետի գոտուց մի խոպանչի ասմա՝ էսքան տարի խոպան են գնացել, էկել, գնամ էրեխանցս հավաքեմ բերեմ. կարգին փող կստանամ:

Գնում ա մի 5 էրեխա յա հավաքում, գալի տուն, տենըմ տանը մենակ կնիկն ա, հարցնում ա.

– Ա՛յ կնիկ, էս էրեխե՞քըս ուր են:

– Ուր պիտի ըլեն, իրանց հերերն էկան տարան, որ օգնություն ստանան...

(ԱՍՇՀ)

Էրկու լոռեցի ախպերտինք Ռուսաստան խոպան են գնացած ըլըմ, գործ չեն ճարըմ, պարապ են ըլըմ, որոշըմ են ձուգ որսալու գնան: Որ գնըմ են ու ուռկանը գծըմ են ջուրը, ոսկի ձկնիկ ա դուս գալի, ձկնիկն ասմա.

– Ինձ բաց թողեք, տեղը իրեք ի՛նչ ցանկություն ասեք, կկատարեմ...

– Դե որ տըհե ա, մի հաստ շենքի հիմքերը գծած գործ դասավորի, պատերը շարենք:

Տենում են՝ կողքներին մի կիսասարքիլ շենք բսնեց:

Էն մի ախպերն էլ թե.

– Արի մինն էլ դասավորի, որ մինչև աշունքը էրկուսըս էլ գործ ունենանք:

Տենում են՝ կողքներին մինն էլ բսնեց:

– Դե ձեր երրորդ ցանկությունն էլ ասեք, կատարեմ, ու ինձ գծեք ջուրը, – ասըմ ա Ոսկե ձկնիկը:

-- Ուզըմ ենք՝ էրկուսի սըվաղն էլ մեր էրկու ախպերներով անենք... **(ԱՍՇՀ)**

Ընկերներ, մեր լեզուն քաղցր լեզու է, թանկարժեք լեզու է: Մենք մեր լեզվովն ենք հաղթելու, դրա համար պետք է ամենքս էլ քարոզչություն անենք, որ մեր ժողովուրդը

մեր լեզուն չմոռանա: Կարճ ասած, մեր լեզուն մեր դրոշն է, մեր հպարտությունն է, եկեք պահպանենք մեր լեզուն:

Սարգսյան Ա. Յ., Արցախի բանահյուսությունը, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, էջ 416:

21

Շամբեցի մէկ երիտասարդ խոռվեց, փախաւ գնաց Թավրիզ թուրքանալու, էնտեղի հայերը երբ զանազան խրատներով աշխատում էին յետ դարձնել նորան իւր դիտաւորութիւնից, երիտասարդը նրանց ասաց, իզուր էք ինձ քարոզում, երդումն եմ կերել Ստեփանոս Նախավկայի աջի վերա ու պէտք է թուրքանամ:

Անեկոսրներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դէպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, Կարաւան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 7:

22

Յոթ-ութ ադանացի հայ պանդուխտներ 1900-ական թիվերուն Դյորտյոլ կիսանին, հայ տանտիրուհիի մը տունին մեջը սենյակ մը կվարձեն, իբր փարա պիտի վաստակին ու պիտի վերադառնան:

Ատոնք անգրագետ կըլլան, բայց՝ դաշնակցական: Օր մը կարմիր կնիքով նամակ մը կուգա (դաշնակցության նամակները կարմիր կնիքով կըլլային): Ատոնք կտեսնան նամակը հայերեն է՝ տանտիրուհուն կխնդրեն.

– Հաճի՛ս, աս նամակը կարդալ:

Կինը նամակը կկարդա: Ատոնք կհասկանան՝ նամակը Կենտրոնեն է, տանտիրուհուն կըսեն.

– Հաճի՛ ս, սենյակեն էլի՛ր, ասի դաշնակցական գաղտնի ժողով է...

Սվազլյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 110:

23

Տարագրութենէն վերջ Հալէպ հաւաքուած գաղթականները Պատարագի եւ ժամերգութեան համար Այնթապցիներու Ս. Աստուածածին եկեղեցին կ'երթային: Քահանան այլեւս հայերէն քարոզ կը կարդար:

Այնթապցին Մարաշցիին կ'ըսէ.

– Պու ղարիպլար վար եա... Սաֆարպիրըկըն կէօզը քէօր օլսըն: Պու ղարիպլար կէլտիլար պիզիմ անա լիսանըմըզը հարապ էթտիլար: Օնըն կարընտա էրմանճա քարոզ վէրեօր պիզիմ քահանայ*:

(*Այս պանդուխտները կը տեսնե՛ս... Տարագրութեան աչքը կուրնայ... Այս պանդուխտները եկան, մեր մայրենի լեզուն քանդեցին, այդ պատճառով մեր քահանան հայերէն քարոզ կու տայ):

Միջ-գաւառական անեքթորներ: Հաւաքեց եւ ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Հալէպ, 1988, էջ 86:

24

Այնթապցի, Քիլիսցի եւ Մարաշցի հոգեւոր կիներ հաւաքոյթի մը կ'երթան՝ ամէն մէկը Ս. Գիրք մը թելին տակ: Աղօթաժողովէն ետք խրախճանքը կը սկսի դասական եղանակով: Ս. Գիրքը թելի տակ՝ կ'ելլեն պարելու, կ'ըսեն.

– Աման Ալլահըմ, կիւնահ եազմա*: (Ով իմ Աստուածս, մեղք մի՛ գրեր:)

Յանկարծ երաժշտութիւնը կը փոխուի, կը դառնայ տաք ու եռանդուն: Պարը կը դառնայ նոյնքան տաք: Կիները Ս. Գիրքերը մէկիկ-մէկիկ կը նետեն մէկդի ու կ'ըսեն.

– Իստէր եազ, իստէր եազմա**: (** Կ'ուզես՝ գրէ, կ'ուզես՝ մի՛ գրեր)

Միջգաւառական անեքթորներ, Հաւաքեց եւ ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Բ փպագրութիւն, 2005, Հալէպ, էջ 92:

25

ԹՐՔԱԽՈՍ ԱԴԱՆԱՑԻՆԵՐԸ

Ադանացիները հայախոս չեն, թուրքախոս են: Երկու ադանացի գիշերով կերթան, կիսմեն, առտվան դեմ գինով տուն կուգան: Մեյ մըն ալ կնային քի ժողովուրդը հա-

վաքվել է եկեղեցու շուրջը: Կհարցնեն. – Ի՞նչ կա:

– Չենք գիտեր՝ խթումի գիշեր է, վաղը՝ Ջատիկ է, ներսը գյո՛րիլ-գյո՛րիլ պատարագ կըլլա կոր:

Գինովներեն մեկը կըսե.

– Հայդա՛, մենք ալ ներս մտնանք:

Մյուս գինովը կըսե.

– Ես հայերեն չեմ հասկնար, ինչու՞ մտնանք:

– Ես քիչ մը կհասկնամ, մտնա՛նք, – կըսե:

Կմտնան ներս: Տեր հայրը քարոզ կսկսի.

– Սիրելի՛ ժողովուրդ: Դուք որչա՛փ ատեն է, որ եկեղեցի չե՛ք գար: Դուք ո՛րչափ ձեր հավատքը կորցուցեր եք: Հակառակ պարագային Աստված ձեզի պիտի պատժե...

Գինովներեն մեկը կհարցնե մյուսին.

– Օլա՛ն, բու հերիՖ ն՛է դիյօր (Ծո՛, այս մարդն ի՞նչ է ասում):

Մեկալը կըսե.

– Արխադա՛շ, բենիմ բիլդիիմ էրմենջէ իլէն „վօր,, գօ...թ (բարեկա՛մս, իմ գիտցած հայերենով «ոո»)՝ հետույք կնշանակե, «չափն» ալ՝ չափել կնշանակե): Բարանկային ետևը մեկուն ոռը կչափեին կոր, ամմա վերջը չհասկցա թե որու՞ն ոռը չափեցին...

Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 110:

26

Օր մը մեկը քիշեր ատեն հելվաճիին գացեր հելվա առեր է. հինկնց մը տուվեր՝ մանրուքը առեր է: Ատ ատենը ճանչվոր մը «կասնի, ի՞նչ կընես կոր կըսե նե, «Հելվաճիին խալպ պէշլիխը յութտուրմիշ ըրի» կըսե: Հելվաճին կը հասկնա, հիկնոցը կը հանե

ետ կուտա:

Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 175:

- Թորո՛ւ աղբար, ինչու՛ տխուր ես:
- Տղաս ամուսնացած է:
- Տղադ ամուսնացած է, տխու՛ր ես:
- Տղային հետ ամուսնացած է...
- Է՛, գոնե հա՛յ է....

Որոշ ժամանակ անց վաղեմի ընկերները նորից են հանդիպում.

- Է՛, Թորո՛ւ աղբար, կրկի՞ն տխուր ես:
- Երկրորդ տղաս ամուսնացած է:
- Երկրորդ տղա՛դ ամուսնացած է, գոնե հիմա՛ ուրախ եղիր:
- Կրկին տղային հետ ամուսնացած է...
- Բաբամ, կերևի՛ ձեր տունին մեջ աղջկա հետ ամուսնացող չունեցա՞ք:
- Ունեցանք. աղջիկս աղջկա հետ ամուսնացած է... **(ԱՍՇՀ)**

- Տե՛ս էս ինչե՛ր են անում, վայ թե ամեն ինչ փոխվի, սկսենք ապրել:
- Է՛հ, ախպեր ջան, արի քեզ մի քանի օրինակ ասեմ. էս տրամվայը տեսնո՞ւմ ես, ո՞ր է գնում:

- Շրջանային: // – Իսկ որ շատ խնդրեմ, Մասիվ կտանի՞:// – Ո՞նց կարող է: //
- Իսկ որ գույնը փոխենք, ուրիշ ներկով ներկենք: // – Չի լինի: //
- Իսկ որ վրան պլակատներ կպցնե՞նք: // – Էլի չի լինի://
- Բա ո՞նց անենք: // – Ո՞նց պիտի անենք՝ գիծն է պետք փոխել: //
- Ա՛յ, տեսնո՞ւմ ես, ինքդ ասացիր՝ մինչև գիծը չփոխենք, մեր ուզած տեղը չենք

հասնի:

Վարդանյան Հր., Ոչ մասնագիտական դիտողություններ. բանահավաքի հուշարեպրից, Սիյուռքահայության հետ մշակութային կապի պետական կոմիտեի «Հայրենի եզերք» պատկերազարդ հանդես, Եր., 1991, հունիս, էջ 31:

Ժուռնալիստներն ուզում են իմանան՝ Նիկոլի վախտն էր լավը, թե՞՝ սովետի վախտը: Ասում են՝ ճիշտը իմանալու համար էնենց մարդ տեք գոնի, որ կյանքի կեսը Նիկոլի վախտը ապրած ըլի, կեսը՝ սովետի: Դրա համար գնացեք երկարակյացների երգիր՝ Ղարաբաղ:

Գնում են Ղարաբաղ, մի հըլիվոր են գոնում, որ կյանքի 60 տարին Նիկոլի վախտնա ապրած էլել, 60 տարին էլ՝ սովետի վախտը: Ասում են.

– Բարի աչողում, ամի՛:

Ասում ա.՝

– Բարին արևներուդ:

– Ասմա՛

– Կարա՛ս ասես՝ Նիկոլի վախտն էր լավը՞, թե՛ սովետի վախտը:

Ասմա.

– Ասեմ, ձե՛զ մատաղ, ասեմ. Նիկոլի վախտը կյանքը... շախմատ էր.

թըքա՛վեր կաաա՛ր, թաքու՛հի կաաա՛ր, բե՛րդեր կայիիի՛ն, զի՛նվոր կաաա՛ր...

– Հա՛, բա սովե՛տի վախտը ոնց ա:

– Սովետի վախտը կյանքը... շաշկի ա. ըղա՛քիցըդ օտըմ են, քըմա՛կիցըդ օտըմ են, ա՛ջիցն օտըմ են, ձա՛խիցն օտըմ են, դուն էլ որ օտըմ չես, վեր են ունըմ մի դրաղ քըցըմ, ասըմ են՝ ֆո՛կ... **(ԱՍՇՀ)**

Կարապետը արտասահմանում բնակվող եղբորը նամակ է գրում. «Սիրելի՛ եղբայր, չկա և ոչ մի ուրիշ երկիր, որտեղ մարդն ապրի ավելի ազատ ու լիաշոք շնչե, քան մերն է: Չկա ավելի հարազատ ու երջանիկ երկիր, որքան սա է: Այստեղի խանութներն ու կրպակները լիութենեն կպայթեն: Լիիրավ ազատություն է, հրապարակայնություն, դեմոկրատիա»: Վեց էջանոց նամակն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «*Ես ասանկ կսեմ, դուն անանկ հասկացիր*»:

Նամակն ընկնում է իրավապահ մարմինների ձեռքը: Նամակագրին պատասխանատվության են կանչում և ստիպում պարզել վերջին տողերի իմաստը:

– Այս ի՞նչ բան է, – տարակուսում է հայրենադարձը, – վեց էջ ձեր անունից գրած եմ, երկու բառ ալ իմ կողմից չե՞մ կրնա ավելացնել:

«Եղինջ» երգիծական հանդեսի հավելված, Եր., 1995, էջ 73:

31

Մի ախպար գալիս ա հայրենիք: Ինչքան էլ հարազատները փորձում են համոզել՝ չգնալ, չի լինում: Ասում են.

– Լավ, գնա, որ լավ եղավ, մեզ գրի, մենք էլ կգանք: Բայց որ կգբ-ն չհասկանա, վատը որ լինի, կգրես՝ աղջիկ ունեցանք, որ լավ լինի՝ տղա:

– Էս մարդը տեղ ա հասնում ու մի երկու ամիս հետո նամակ ա գրում. «Հարազատներս, տղայի էինք սպասում, աղջիկ ունեցանք, էն էլ՝ զույգ»: **(ԱՍՇՀ)**

32

Մի ախպար, տեսնում ա՝ էլ հնար չկա ապրելու, ոչ էլ հետ գնալ ա հնարավոր, նամակ ա գրում արտասահմանի իրա բարեկամներին, խնդրում, որ վալյուտա ուղարկեն, բայց վախենալով ԿԳԲ-ից, գրում ա. «Էրեխեքը կարոտել են էդտեղի կանաչուն, եթե կարող ես, մի քիչ կանաչի ուղարկեք (խոսքը ԱՄՆ դոլարի մասին է), խառը կանաչին էլ վատ չէր լինի (իմա՝ այլ երկրների տարադրամները) ...» **(ԱՍՇՀ)**

33

Մի ախպար, զզված էս կարգերից ու երկրից, որոշում ա հետ գնա արտասահման: Սահմանն անցնելիս խորհրդային սահմանապահները ստուգում են տանելիքը, տեսնում՝ եղած-չեղածի մեջ՝ քաղբյուրոյի անդամների նկարները:

– Էս նկարներն ուր ես տանում, – հարցնում են:

– Կպաշտեմ ասոնց. դնեմ պիտի շրջանակին մեջ, կախեմ մահճակալիս վերին մասում:

Որ սահմանն անցնում է, էն մյուս կողմի սահմանապահներն են ստուգում ու

նկարները տեսնելով՝ հարցնում են.

– Էլ հետո վերցնելու ուրիշ բան չունեի՞ր, սրանց նկարներն ես տանում, ինչի՞դ են պետք:

– Ասոնք ինձի դրամ պիտի պարզեն. հրաձգարան պիտի բանամ, – պատասխանում է արտագաղթող հայրենադարձը: **(ԱՍՇՀ)**

34

Մեկը դուրս է գալիս պատշգամբ, տեսնում է՝ մարդիկ, օպերայի հրապարակում հավաքված բղավում են.

– Ղարաբաղը մե՛րն է:

Մյուս օրն էլ է դուրս գալիս պատշգամբ, տեսնում՝ զինվորներին շարված, շշուկով ասում է.

– Ղարաբաղը մերն էր:

Հաջորդ օրն էլ որ դուրս է գալիս տեսնում ԲՏՌ-ները լցված, ասում է.

– Ղարաբաղի մե՛րն էլ...: **(ԱՍՇՀ)**

35

Հայաստանի երկրաշարժին դատաւարութիւնը

1988-ի Դեկտեմբերի 7-ին, երբ երկրաշարժ եղաւ, Հայաստանի տուներ-մուններ փլան, շատ մարդիկ մեռան:

Հայաստանի կառավարական մարդիկ կը խորհին դատարան կանչել մեղաւորները:

Առաջ կը կանչեն Աւազը, իրեն կը հարցնեն.

– Աս խեղճերուն տուները ինչո՞ւ փլեցիր:

Աւազը կ'ըսէ.

– Ի՞նչ գիտնամ, ես մե՛ղք չունիմ. ատ Պրիքէթը⁸²³ կոտրեցաւ ինկաւ, ես ալ ետեւէն գացի:

⁸²³ Պրիքէթ (Ֆր.) – աղյուս:

Դատաւորը կ'ըսէ.

– Քեզի հինգ տարուան ճէզա⁸²⁴. բանտ պիտի նստիս:

Ետքը Պրիքէթին կը հարցնեն.

– Դուն ինչո՞ւ ինկար:

Պրիքէթը կ'ըսէ.

– Երկիրը շարժեցաւ, ես ալ իմ տեղէս շարժեցայ ինկայ:

Դատաւորը կ'ըսէ.

– Քեզի ալ տասը տարուան ճէզա. բանտ պիտի նստիս:

Կարգը կուգայ Չիմէնթոյին⁸²⁵

– Դուն ինչո՞ւ ձգեցիր, որ փլին:

Չիմէնթոն կ'ըսէ.

– Կը ներէ՛ք, ես հո՛ն չէի, հոն ըլլայի նէ՛ չէի ձգեր, որ փլին:

Սվազլլան Վ., Պոլսահայ բանահիւսութիւնը, Երեւան, ՀՀ ԳԱԱ, «Գիտութիւն»

հրատ., 2000, էջ 224:

36

Լոսանջելէսյան երկրաշարժից հետո գյումրեցիին հարցնում է.

– Ըսոնք ինչքա՞ն օգնություն ստացան:

– 25 միլիոն:

– Հըբը մե՞նք:

– 250 միլիոն:

– Թե որ շրջապատ չունիք, ըսա ընչի՞ երկրաշարժ կենեք: **(ԱՄՇՀ)**

37

Մարդը տուն ա գալիս՝ մի սաղ նապաստակ ձեռին: Կնգանն ասում ա՝

– Գազը վառի՞ մորթենք խորովենք: // Կնիկը թե՛// – Գազ չկա: //

– Լավ, կոնենք սառնարանը: // Կնիկը թե՛// – Լոյս չկա: //

⁸²⁴ **Ճէզա** (արաբ.) – պատիժ:

⁸²⁵ **Չիմէնթոն** – ցեմենտ:

– Լավ, լվա, մինչև գազն ու լույսը տան: // Կնիկն ասում ա. // – Ջուր չկա:

Մարդը կատաղած շարտում ա նապաստակն ու ասում ա.

– Դե որ էդպես ա, թող ու գնա:

Նապաստակը մի քիչ հեռանում ա, բռունցք անում ու վանկարկում.

– Լե – վոն, Լե – վոն, Լե – վոն... (ԱՍՇՀ)

38

Մեկը Ամերիկայից զանգում ա Հայաստան՝ ընկերոջը, թե՛ //–Ո՞նց ես: //

– Ասմա՛// – Լավ եմ: // Բա թե՛ // – Գործե՞րդ ոնց են: // Ասմա՛ //

– Փառք աստծո, լավ են: // – Բա կինըդ, էրեխե՞քըդ ոնց են: // – Շատ լավ են: //

Սա թե՛ // – Կներեք, ոնց որ սխալ եմ ընգել... (ԱՍՇՀ)

39

Եկեղեցում ժամերգությունից հետո Հրանտիկը հարցնում է.

– Պապի՛կ, այն երիտասարդ տերտերը գիտե՞ս՝ ինչու էր ծուխ անում:

– Չէ՛, չգիտեմ, – ինչ-որ բան կռահելով՝ պապը խուսափում է պատասխանից:

– Իսկ ես գիտեմ, – ասում է Հրանտիկը:

– Դե որ գիտես, ասա՛՛ ես էլ իմանամ:

– Ծուխ էր անում, որ մեղուները մեծ տերտերին չկծեն:

Գյուրջինյան Հ., Մի բուռ ժպիտ, Վանաձոր, Սիմ փայագրատուն, 2012, էջ 180-

181:

Հավելված 3

1

– Աղբա՛ր: // Գնորդը վրդովված բղավում է. // – Տո՛, ես քեզ ի՞նչ ախպար, ախ- պարը դու ես: // Նորեկը փորձում է իր միտքը պարզաբանել՝ ասելով. //

– Ինչո՞ւ կնեղվիս, դուն ինձի համար եղբայր ես, ես ալ՝ քեզի: Մենք երկուքս ալ ի-րարու եղբայր ենք, ինչո՞ւ, որ հայ ենք, մեկ հողին վրա կապրինք:

Տեղաբնակը, ձեռքը թափ տալով, բարկացած հեռանում է: Ներգաղթած վաճառողը ետևից բղավում է.

– Քեզմէ փիլիսոփա չըլլար:

Ստեփանյան Ա., 20-րդ դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 208:

2

Նոր էկոդն ու էշը

Աշխարհ տեսած նոր էկոդներուն բերին թափեցին Հայաստանի Զաֆարաբադ խուլ գյուղը՝ հիմնկվա Արգավանդը: Բերին ժողովրդին թափեցին, ըսին.

– Տանե՛ք, քաղե՛ք, ապրե՛ք...

Նոր էկոդ մարդուն մեկն ալ դժվարությամբ կսկսի ցանել, քաղել: Տեղացի դրացիեն ալ էշը կառնե, որ տանի Երևան՝ ծախե: Կբարձե էշի վրան, ճամփա կիյնա:

Ան ժամանակ ալ Երևանի շուկան կինո «Ռոսիայի» տեղն էր: Ցերեկի մոտ էշը կգա, կհասնի քաղաք: Կուգա, կկանգնի, չի քալեր... Օթոները, տրամվայները կուգան կկայնին, խճողում կսկսվի: Միլիցիան կուգա, կտեսնա վիճակը, կըսե.

– Դու ախպա՞ր ես, ինչ է. չե՞ս հասկանում, ճամփան փակել ես, երթևեկությունը կա՞նգ է առել:

Աս նոր էկոդը կպատասխանե.

– Ես՝ ախպար եմ, կհասկանամ, բայց՝ էշս տեղացի է. չի հասկնար:

Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 111:

3

Երկու վանըցիյի կնացիր ին կուրբաթութեն (օտարություն), խասիր ի չում Ալմանի⁸²⁶ աշխար: Օրմ Ալմանի թակավոր տաշտի մեչ էսա վանըցիներաց կը տիսնա,

⁸²⁶ Ալմանի – Գերմանախա:

իտոնց խագած խալըվներաց⁸²⁷ կը խասկնա, որ իտոնք օտար մարթ են: Կը խաոցուցի, թե ի՞նչ ազգ, ի՞նչ միլաթ⁸²⁸ եք:

– Իսայ ենք, – կասեն վանըցիք:

– Դե մեյ խա՛ ծեր լեզվով զրուցեյի, տիսնամ:

Իսայերաց մեյն կը տառնա ուր ինգրոզ կասի.

– Ինամի՛ Իեպո, խունգար խրամե խայերեն խոսանք: (Ինամի՛ Իեպո, թագավորը հրամայում է հայերեն խոսենք):

Ալմանի թակավոր որ կը լսի ինոնց զրոց, կասի.

– Ավա՛ր, ավա՛ր, էլ մեյի⁸²⁹ զրուցե, մեր լեզվի մեչ էնկանդար⁸³⁰ խ,խ,խ լսեր եմ, որ էլ ուրիշի ասած խ-խ-ն չե ուզե լսեմ :

Ծիծաղում են վանեցիները, Կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., եր., «Ձանգակ-97» հրատ., 2006, էջ 156:

4

Մուսալեոցի մայրիկն ու հայաստանցի տղան

Երևանում տեղացի բանվոր տղային մեկը գործեն տուն կուգա, կըսե.

– Գնամ ընկերոջս՝ Բարսեղի տունը:

Կերթա, դուռը կզարնե, Բարսեղին մայրը դուռը կբանա: Տեղացի տղան կհարցնե.

– Մայի՛կ, Բարսեղը տա՞նն է:

Բարսեղին մայրը մուսալեոցի կըլլա, կպատասխանե.

– Պուց քնու՞ծ է, բուղ առու՞ծ է, բառգու՞ծ քնու՞ծ է:

– Մայրի՛կ, – կըսե տեղացի տղան, – քո տղան միշտ երբ պ.. ք..., կպառկի՞:

– Չէ՛, – կըսե մայրը, – չհասկցա՞ր. բաց քնել է, պաղ առել է⁸³¹, պառկել է:

⁸²⁷ **Խալավ** (հալավ) – հագուստ

⁸²⁸ **Միլաթ** (թրք.) – ժողովուրդ:

⁸²⁹ **Մեյի** – մի:

⁸³⁰ **Էնկանդար** – այնքան:

⁸³¹ **Պաղ առել է** – մրսել է:

**Սվազյան Վ, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր, ՀՀ
ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 111:**

5

Մի պարսկահայ տաքսու վարորդին հարցնում է, թե՛

– Ախպե՛ր ջան, վերդի՞ (իմա՛ ո՞ւր) ես գնում:

– Հա՛, ասում է վարորդը:

Սա նստում է, ու որ հասնում են Արտաշատ, պարսկահայը մի անգամ էլ է հարց-
նում.

– Ախպե՛ր ջան, վերդի՞ ես գնում:

Վարորդն ասում է.

– Ասի՛ հա, Վեդի եմ գնում, էս էլ Արտաշատը:

– Իաաա՛, բա ես Աբովյա՛ն եմ գնում... **(ԱՍՇՀ)**

6

Մայրս չէր սիրում վատ սկեսուրներին: Շատ հետաքրքիր արտասանում էր իր մո-
րից լսած հետևյալ խոսքերը.

Կընիկ մը կոյ%⁸³² ախճըգոնը կովեր, հայսին վ%ր գուտո%ր⁸³³.

– Հայսս օրը լա՛թ մը, օրը լա՛թ մը... Ամա ախճիգըս շապտուն շըպըրտքը լաթ մը,
շապտուն շըպըրտքը լաթ մը, – աղջկանը վերաբերողն արագ-արագ ասում էր մայրս:

Գուրունյան Հ., Համշենահայ բանահյուսություն, Եր., «Լույս» հրատ., 1991, էջ 51:

7

Ախչինան կուվօղ մարը

Գընագ մը ախչին ըմ իլան հօրս մը ունէր:

Օր մը ինքիր դրացանը իրինց դունը գօլօ, գօդիսնօ քի հօրսը իլ%ն (և) ախչինը
նսդօժ թիլ գօմանին:

Դրացանը գօւէ. – Հօրսը շօ՛դ թէգ գօմանէ:

⁸³² Կոյ% – իբր:

⁸³³ Վ%ր գուտո%ր – իջեցնել, նսեմացնել:

– Հա՛, – գօսէ գիւօրը, – հօրսիս սա՛հօ՛թը՛ (մի ժամում) մէ՛գ ջօղ (ջաղ), սա՛հօ՛թը՛ մէ՛գ ջօղ գօմանէ, ամա ախչիհնիս՝ օրը՛ մէ՛գ ջօղ, օրը՛ մէ՛գ ջօղ գօմանէ:

Սվազյան Վ , Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր , ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 66:

8

Մոյն թօմբօլ կնայկ մոյն ուրիշ կնգու հըրցանամա.

– Դու շուտ շտղս նեխի բաղնի՛ս:

Անմուն կնայկը ծուր տալավ նահամա.

– Շաբաթը մոյն հիտ:

Աս թօմբօլըն ալ շ&ւտ յ&ւր վօրօ նահամա.

– Չէ, իս զօտկից զօտիկ, զօտկից զօտիկ...

Ագուլիսի բարբառի մասունքներ, Աշխատասիրությամբ Աբգար Այվազյանի, 2-րդ հրատ., Եր., «Գասպրինս» հրատ., 2012, էջ 164:

9

Երկու մայրեր փողոցում իրարու հանդիպում են և սկսում են իրարու քեֆ-հալ հարցնելուց, հետո, երբ խոսքը գալիս է աղջիկների մասին, էն մի մայրը հարց է տալիս մյուսին. – Քա՛, ախչի՛, մըհա սա՛ քյ&ւ ախչիկ շուտիկ կ&րծել սովրիր ը՛:

– Խա՛, օրե քյանիմ կը կյոռծի, օրե շուտիկըմ, օրե շուտիկըմ:

– Ա՛հ, ի՞նչ է օրե շուտիկըմ:

– Բա քյու ախչիկ քօ՞նը խատ կը կ&ռծը:

– Իմ ախչիկ՝ շաբաթ շուտիկըմ, շաբաթ շուտիկըմ:

Մոկս. Հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Ս. Հարությունյան (գիտական ղեկավար), Է.Հ. Խենյան, Մ.Հ. Խենյան, Ա.Կ. Պողոսյան, Եր., «Գիտություն» հրատ., 2015, էջ 388:

10

Ճրկանդեղը

Վոնց ա պատահիւմ, մի խամ մառթ ղօնախ ա ընգնըմ գլեղացոնց մընի տանը: Էս մառթը տէնըմ ա, վոր չէ՛ սրհանց ըշխատանքը սիրօղ, ֆողի լիզուն հըսկացօղ ժըղօվորթ են: Սըրա քըշտին էլ ճրկանդեղի սերմ ա ըլըմ: Դա կէսը ծախած ա ըլըմ, մը քիչ էլ մնացած ա ըլըմ: Էնա, վոր էդ ժըղօվորթը դիր ա գալի, վըրօշըմ ա քըշտի էլած սերմն էլ դրհանց տա: Էդ գլեղացիք էլ, ինչ դուզնադուզը⁸³⁴, ըսկանըմ չեն, թե ճրկանդեղը ինչ բան ա, համա մանչըմ են, թե հառցնեն: Էն էն հ'իմանըմ, որ ցանէլու բան ա:

Գարունքը ցանըմ են, աշունքը վոր գալիս ա, ճրկանդեղը հանըմ են, հիրար էրէսի ըրմացած հիշըմ են ու ասըմ.

– Ա՛յ գլերա, քու օլուն տըրաքի, ի՛նչ ճրկանդեղ, ի՛նչ բան, էսխու մեր օխնած տակըն ա:

Ասպրյան Մ., Լոռու խոսվածքը, Եր., «Միտք» հրատ., 1968, էջ 174:

11

Դատավորը դիմում է տուժածին՝ պարզաբանելու որոշ մանրամասներ.

– Քաղաքացի՛ Պետրոսյան, այժմ պատմեք, թե ի՞նչ հանգամանքներում է ամբաստանյալը ձեզ բռնաբարել:

– Դատավո՛ր ջան, նախ ես քաղաքացի չեմ, գեղացի եմ: Հետո էլ էտ այլանդակը հանգամանքներում չի բռնաբարել, է՛, գարա՛ժումն ա բռնաբարել, գարա՛ժումը...

(ԱՍՇՀ)

12

Շարժական և անշարժ գույքը

Շամուտեցիների շրջանում շարժական ու անշարժ գույքից հենց որ խոսք է գնում, անմիջապես հիշում են մի դեպք:

Ճուղուրանց Արմենակի կնիկ Ելենի մահից հետո Արմենակը գյուղից տեղափոխվում է քաքաք՝ փոքր տղայի՝ Գագոյի մոտ: Քաղաքում էին ապրում նաև մյուս երկու

⁸³⁴ Ինչ դուզնադուզը – ինչը որ ճիշտ է:

տղաները: Միայն մեծ տղա Վալոդը աղջիկներ ուներ, մյուս երկուսինը միայն տղաներ էին, բայց Վալոդը որոշում է գյուղի տունն իր անունով գրանցել, ինչի համար խոսակցություն է գնում եղբայրների մեջ, գործը տրվում է դատարան, դատը կայանում է, դատավորը հարցնում է Վալոդին.

– Եղբայրների տեղա՞յ են եղել տունը քո անունով դարձնելու մասին:

– Հա, բա ո՞նց, քաղաքացի դատավո՞ր ջան, – պատասխանում է Վալոդը, – մեր ախպեր Սենիկն ինքն ա հրաժարվել իրա փայիցը, դե ես ու Գագոն էլ պայմանավորվել ինք՝ անշարժ գույքը ես վեր ունեմ, շարժականը՝ ինքը...

Էդ ժամանակ էլ չհամբերելով՝ Գագոյի կնիկ Ֆլորան տեղից գոռում է.

– Քաղաքացի՛ դատավոր, գեղի իրանց միակ շարժականը իրանց հերն ա էլել, էն էլ, ճիշտ ա ասըմ, տվել ա մեզ... **(ԱՍՇՀ)**

13

Էրկու ընկերուհիներից մեկն ամուսնանում է: Մի ամիս անց հանդիպում են: Չամուսնացածը հարցնում է.

– Հը, ո՞նց էր, գոհ ե՞ս ամուսնությունից:

– Ի՞նչ գոհ. գիշերները չարչարվում, տանջվում ա , բան չի ստացվում...

– Ո՞նց, բա մինչև ամուսնանալը քեզ բան չէ՞ր ասել:

– Չէ՛, բայց ամուսնանալուց առաջ ինքը անընդհատ ինչ-որ *անշարժ գույքից* էր խոսում, ես էլ... ուրախանում էի...: **(ԱՍՇՀ)**

14

Էտ մինն էլ էքուց կուտենք

Ըրեվանից իր մառթկերանցովը մին մէնձ ղեկավար ա գ՛ալիս Շնօղ՝ կօլխոզի գ՛օռձօվ: Էտ «գ՛օռձը» անում էն Շնօղնա այգումը: Ըռավօղից-րիգուն ուտում էն, խմում, խըմում էն, ուտում: Ռիգվա կըռանը⁸³⁵ «ղօնաղնին»⁸³⁶ անձ՛եռօցիկ էն ուզում:

– Էտ մինն էլ թօղ մնա էքուց կուտենք, ըսօր էլ տեղ չըկա, – ասում ա կոլխօզի նա-

⁸³⁵ Ռիգվա կըռանը – երեկոյան կողմ:

⁸³⁶ Ղօնաղնին – հյուրերը:

խագէն:

Մարկոսյան Ռ., Արարարւոյան բարբառը, Եր., «Լույս» հրատ., 1989, էջ 223:

15

Լոռեցի Ռուբենը կընգա հետ ավտոբուս ա բըցրանըմ: Մի մարդ տեղիցը վեր ա կենըմ, կընգանը թե՛

– Ես սիրով զիջում եմ ձեզ...

Ռուբենը էլ չի թողըմ շարունակի, կըտաղած ասըմ ա.

– Տո քեզ էլ զիճեմ, քու կընգանն էլ զիճեմ, ազգուտակոխ էլ զիճեմ...: **(ԱՍՇՀ)**

16

– Քո աղջկան պիտի զիջեմ, որ դրական գնահատական ստանա, – ասաց ուսուցիչը:

– Ինչ անե՞ս, զիջե՞ս, տո՛ աղջկադ էլ զիջեմ, քեզ էլ զիջեմ, մորդ էլ զիջեմ, կնոջդ էլ զիջեմ, – զայրացավ աղջկա հայրը:

Կիրակոսյան Ն., Կիրակոսյան Ա., Ջավախքի ժպիտներ, Եր., «Հայաստան» հրատ., 1994, էջ 105:

17

Աշոտին դատեցին: Երբ նա արդեն կալանավայրում էր, մեկը նրան խորհուրդ տվեց.

– Զոնի նայողը ա՛յ, էն ջահելն ա, ինչ գործ ունես, նրա հետ բռնի..

Աշոտը մոտեցավ «նայողին» ու ասաց.

– Տղա՛ ջան, լսել եմ, որ էստեղի նայողը դու ես, ճի՞շտ է:

– Հա, բան ա՞ էլե...

– ...Տղա՛ ջան, ես գիշերը մեկ-մեկ բացվել գիտեմ, որ նայես, տեսնես բացվել եմ, կծածկես...

Աբազյան Ս., Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամտութիւններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ., 1999, էջ 40:

Ախպարը մի կերպ ավտոբուս ա բարձրանում, մի ոտի վրա կանգնում ա, ուզում ա էն մի ոտն էլ իջացնի, բայց դնելու տեղ չի ըլլում: Կողքի կանգնած կնգանն ասում ա.

– Տիկի՛ն, ոտքըդ բարցացուր, պիտի կոխես:

Էս կնիկը կարմրում ա, բայց ձեն չի հանում. չլսելու յա տալի: Էս ախպարը մի անգամ էլ ա ասում.

– Տիկի՛ն, քեզի կըսես, ոտքըդ բարցացուր, պիտի կոխես:

Էս կնիկն էլ չի համբերում ու գողում ա.

– Դե հե՛րիք էլավ, է՛լի, հլա քու հագուկապին ու սիպտակ մազերիդ մտիկ արա, չես էլ ըմանչում, կեխտոտի մինը, էսա մլիցա կկանչես...

– Տիկի՛ն, ինչո՞ւ կնեղնաս, դեռ չկոխած միլիցա կկանչեք, բա որ կոխե՞ի ինչ կընեիք: **(ԱՍՇՀ)**

Նոր էկողը հերթին մեջ

Նոր էկողները հերթ-մերթ չգիտեին: Օր մը հացի հերթին մեջ տեղացի մը անոր երեսին կշարտե.

– Ախպա՛ր շներ, ձեզի կարմիր խնձո՞ր դրկեցինք, որ եկաք մեր հացն եք ուտում...

– Ո՛չ, կարմիր խնձոր չդրկեցիք, բայց պատգամավորներ դրկեցիք, որոնք մեզի պրոպագանդ ըրին, մենք ալ մեր ֆաբրիկաներո՛վ, օթոներո՛վ, քամիոններո՛վ, մեր ամբողջ ունեցվածքով եկանք, որ հայրենիքը շինենք...

Տեղացին կպատասխանե.

– Հայրենիքին արդեն 70 տարի շինո՛ւմ է Սովետը...

Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 114:

Մի լոռեցի գնում է Երևան, մտնում սրճարան և մատուցողուհուն ասում.

– Քուրի՛կ ջան, մի հատ արաղ բեր...:

Էս աղջիկը լոռեցուն ծաղրելու համար ասում է.

– Հրես կբերեմ:

Լոռեցին վրա է գալիս.

– Խի որ չհրեմ, չես բերի՞...:

Ծիծաղի փոնավաճառ, 3-րդ թողարկում, «Խուժան» անեկդոտներ, Եր., «Չանգեզուր փայագրական կենտրոն», 2007, էջ 25:

21

Չերչիլը

...Պատերազմի տարիներին անգլո-ամերիկյան ինչ-ինչ օգնություն էր հասել Սարուխան և մի շոր էլ նրան (Նորիկին-ԱՍ) էին բաժին հանել: «Էսի Չերչիլի տվա՞՞՞ն ա», – հարցուփորձել էին հասակակիցները: Եվ այնքան էին ասել, մինչև մառախլապատ Անգլիայից Սարուխան հասած պրեմիեր մինիստրի անունը պինդ կպել ու մնացել էր իմ խեղճ համագյուղացու վրա...

Ի դեպ, Անգլիայի պրեմիեր մինիստրներից Սարուխանում շատ լավ գիտեին նաև Գլադստոնին, ում ազգանունը որպես անձնանուն մեր համագյուղացիներից մեկը շնորհել էր իր որդուն: 20-րդ դարի 30-ական թվականներին էլ մեր մի համագյուղացի իր որդիներին անվանում է Կասիր և Սեկրետար: Գյուղի համար գանձապահը և քարտուղարը նրա կարծիքով ամենակարևոր մարդիկ էին, հազար հոգսի տակ կքած խեղճ մարդը, գյուղական անմեղությամբ, որդիներին նման անուններ շնորհելով՝ երազել է տղաներին տեսնել այդ պաշտոններում:

Վերոնշյալին ավելացնենք, որ Սարուխանում պատվի են արժանացրել հույն Հոմերոսին, Արեսին և Սոկրատին, գերմանացի Շիլլերին, անգլիացի Շեքսպիրին, Համլետին ու Մակբեթին, Պլատոնին և միջնադարի բանաստեղծ Ֆրիկին, նավթարդյունաբերող Նոբելին (Ալֆրեդ), գիտնական Գալիլեյին և Դարվինին, ծովագնաց Բերինգին, զո-

րահրամանատարներ Նևսկուն, Սիլկովին, Ֆրունզեին, Գերմանացի կայսր Վիլիելմին և քաղաքական գործիչ Վալտերին, Նիկոլայ ցարին և Վասիլ կայսերը, հեղափոխական Կիրովին և գերմանացի Մարքսին (Կարլ), Վորոնցովին և Արդուֆովին, Հերցենին և «Իսկրա» թերթը, ամերիկացի գյուտարար Էդիսոնին և ֆրանսիացի ինժեներ Էյֆելին... Եվ բոլոր այս անունները սարուխանցիներն իրենց զավակներին շնորհել են 20-րդ դարի առաջին տասնամյակներին: Նաև այս կտրվածքով ճանաչեք աշխարհի հետ չափվող սարուխանցիներին...

Նիկողոսյան Տ., Իրական դեպքեր բայազետցիների կյանքից, Եր., «Լուսաբաց» հրատ., 2016, էջ 24-25:

22

Ոստիկան Շաքարը մի կարգազանցի է բռնում: Որ շատ նեղում է, վերջինս նեղսրտած ասում է.

- Անունդ ասա, հլա մի տենամ, ո՞վ ես, ումոնցի՞ ես, որ ինձ տհենց⁸³⁷ նեղում ես:
- Իմ անունը Շաքար է:
- Իա՛, այտա՛, էնա ասա մոու բիբար ես, է՛լի...

Բալայան Գ., Միամիտ մտքեր, Լոռվա ժպիտներ, Եր., «Վան Արյան» հրատ., 2002, էջ 47:

23

Մի աչքը կոյր, երեսը չեչոտ ու կարճ հասակով Ագուլեցի եկաւ Շուշի, տեսաւ մի աստիճանաւոր զանազան շքանշաններով կուրծքը զարդարած, նստած էր մի խանութում, մօտ գնաց նրան ու հարցրեց.

- Պարո՞ն, մեր պարոն Պետրոսի խանութը ո՞րն է: // Ո՞ր պարոն Պետրոսի: //
- Մեր պարոն Պետրոսի: //Նրա հօր անունը ի՞նչ ա: // Չեմ իմանում: //
- Ադա՛, հի՞նչ տղղացի ըս: // – Ագուլեցի ըմ: // – Անունդ հի՞նչ ա: // – Բուլբուլ: //
- Բլբո՛ւլ, բա՛, ադա՛, թէ՛ զօկի բլբուլը տիւ ըս, նրանց ագռաւը հի՞նչ կլնի:

⁸³⁷ **Տհենց** – այդպես:

Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դէպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած, ժողովեց Գալուստ Ծիրմազանեանց, Թիֆլիս, Կարաւան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 148:

24

Պուղուս-Պըտրոս

Մի տղա ինչ կամենում է ձեռնարկել, ինքնուրոյն մի գործ անել, հայրը արգելում է ու ասում. – Ա՛յ բալամ, քի անե՛ր Պուղուս-Պըտրոս չի դուս գյո, ձե՛նք քաշի, թող վեր ին՝ գի կորչի:

Վերջապէս տղան զայրանում է, թողնում տուն ու տեղ, գնում քաղաք: Նրան քաղաքում լավ գործ է հաջողվում, ամուսնանում է: Երկու տղա է ունենում: Մեկի անունը դնում է Պողոս, մյուսինը՝ Պետրոս:

Մի քանի տարի անց վերադառնում է գյուղ, երեխաներին ներկայացնում հորն ու ասում. – Ա՛ հար, ըսիս լալ, որ քի անե՛ր Պուղուս, Պըտրոս չի դոս գյո: Պա խե՛ր յա դոս եկալ: Էս՝ Պուղուս, էս ալ՝ Պըտրոս:

Հովսեփյան Հ., Ղարաղաղի հայերը. հ. 2, բանահյուսութիւն, Եր., «Գիտութիւն» հրատ., 2009, էջ 457:

25

Սըվասցիին ու Կուռունցիին⁸³⁸

Սըվասցիին մեկը կուզէ ծաղրել կուռունցիներու մականունները, կըսէ.

– Պարիւս, Պապո, Էմմի, բարի ես եկեր, Կուռին ինչ կա-չիկա, հընտե՛ր են Ուսպենք, Սիսեռենք, Բանջարենք, Պայլայենք...

Կուռունցիին կը պատասխանէ.

– Աղէկ են, ալսյն է տըրած են, մախսուս պարս կէնեն՝ Չուխասուզենց, Չոփապուռունենց, Շանքաքենց, Գոմշու ..., Ղափութենց:

Թումաճան Մ , Հայրենի երգ ու բան, հատոր 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ.,

⁸³⁸ Սեբաստիա - Սվազ – քաղաք Փոքր Հայքում:

Կյուրին - Կուռուն – քաղաք Փոքր Հայքի Սվազի՝ Սեբաստիայի վիլայեթում:

1983, էջ 297:

26

Երկու մարդուն՝ Հալաշթորոսեան Վարդավառ անունը

Քիթրե գացողները իրենց ընտրած դաշտը կը բաժնեն մեջերնին, ամեն մարդու մեյմեկ բաժին տալով: Աս Վարդավառը կըլլա բաժանողը: Երբ կարգը կուգա իրենց, իրեն և եղբորը, այսպես կըսես.

– Մեկ՝ Կարապետ, էրկուք է ես՝ իրեք բաժին:

Անունը կը մնա Երկու մարդ:

Հետո, տարիներ վերջ, իր զավակը կոչված է՝ Երկուն մարդուն կես տղան:

Թումաճան Մ , , Հայրենի երգ ու բան, հարոր 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ.,

1983, էջ 299:

27

– Կարող ե՞ս Սովետական Միության չորս էնպիսի քաղաքների անուններ ասես, որ իմաստ արտահայտի:

–

– Չգիտե՞ս, դե՞ լսիր. Բաքու, Վորկուտա, Երևան, Չիտա: **(ԱՍՇՀ)**

28

Չիկագո

Շիկահող գյուղի սարում խփվեց ամերիկյան լրտես ինքնաթիռ, և օդաչուները իջան հովիվների մոտ:

– Ուեր ուի ար⁸³⁹ ..., – հարցրին հովիվներին:

– Շի-կա-հող:

– Օ՛, Չի-կա-գո, Չի-կա-գո, իթ իզ ուերի ուելլ⁸⁴⁰ ...

Գրիգոր Ս., Չվարճալի պատառաքաղ-1, Քաջարան-Կապան, Եր., «Չանգակ-

97» հրատ., 2006, էջ 142-143:

⁸³⁹ Ուեր ուի ար (անգլ.) – Որտե՞ղ ենք մենք:

⁸⁴⁰ Իթ իզ ուերի ուելլ (անգլ.) – դա շատ լավ է:

Վարդապետը հրամայեց յուր սպասավորին, որ «գրաբառ» խոսե, վարժվի:
Սպասավորը մի օր ներս մտավ խուցն ասաց.

– Հայր Սուրբ, սարի ծաղկակոխը էս գիշեր եկել է մեր մոխրաթավալին բարբա-
ռելով մաքրազարդել: Վարդապետը չհասկանալով ասաց.

– Մեկնե՛, տեսնեմ՝ ի՞նչ ես ուզում ասել:

Սպասավորը մեկնեց, թե գելը էս գիշեր մեր իշին պատռտել, կերել է:

***Անեկոսրներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դէպքեր եւ առակներ, մեծ մա-
սամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս,
տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 129:***

Տիրացուն, երկու կռուող տեսնելով, մօտեցաւ, հարցրեց.

– Զի՞ վիճէք ընդ միմեանս, ե՛ղբարք:

Բայց տեսնելով, որ իւր վերա ուշադրութիւն չեն դարձնում, ասաց.

– Ե՛ղբայր, սիրեսցես զընկեր քո՛ իբրեւ զանձն քո:

Կռին աւելի սաստկանում էր: Տիրացուն մէջ ընկաւ եւ մէկին մի կողմը ձգելով,
միւսին՝ միւս կողմը, ասաց.

– Երանի՛ խաղաղարարաց՝ զի նոցա է արքայութիւն երկնից:

Կռուողները արդէն միմեանց երեսները արնոտեցին:

Իսկ տիրացուն, է՛լ չկարողանալով համբերել, մէկ մէ՛կի գլխին խփեց, մէկ՝ միւսի
գլխին եւ ասաց.

– Որ ո՛չ լսէ ունկամբ, տան նմա լսել թիկամբ: Դէ հմի իրար միս կերէք:

***Անեկոսրներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս,
Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 116-117:***

Հաթերքցի քահանէն լսեց, որ յաջորդը գալիս է իրանց գեղը նուիրակութիւն ժո-

դովելու, գնաց նրան ընդ առաջ: Ճանապարհին պատահեցաւ մի խոնարհուած եկեղեցւոյ, յաջորդը հարցրեց.

– Տէ՛րտէր, ի՞նչ է էս եկեղեցւոյ անունը:

– Քէ ծառայ, Սուրբ Գէորգ, – պատասխանեց քահանէն:

Երբ հասան գեղը, քահանայի տունը չ՛մտած, վարդապետն ասաց,

– Տէ՛րտէ՛ր, դու յառաջ գնա, մտիր բակդ, որ ձեր կատաղի շունը էլի չ՛յարձակուի վրէս անցեալ տարուայ պէս:

– Հա՛յր Սուրբ, մեր շունը իր ումբրը քեզ բաշխեց, – ասաց քահանան:

Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դէպքեր եւ առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, Կոստանտնուպոլիսի Մարտիրոսեանց, 1878, էջ 64-65:

32

Գիւղացին մի ղաշխա մոզի էր կորցրել՝ չալ չաթուն պոզերին կապած:

Երկար որոնելուց յետոյ պատահեց մի քանի գիւղացու և յօգնելուց ու մոզի դարդից շփոթուած՝ հարցրեց.

– Բարի՛ մոզի, բալքա ղաշխա ըրիգու տեսած ըլեք, չալ չաթուն պոզին մոզին:

Ծիծաղի փոպրակ. Անեկդոտներ հայ և օտարների կեանքից, աշխատասիրեց դպիր Ս. Տ. Ս. Շահազիզեան, Թիֆլիզ, 1892, էջ 28:

33

«Ռուբիկը ծնել ա»

Դպրոցի հավաքարար Հուռումսիմին հայտնում են, որ դաշտում իրենց այժը ծնել է: Մեկին պետք է ուղարկել, որ այժը և ուլը տուն բերի: Հուռին անհանգստացած շտապ բացում է մի դասարանի դուռ և ուսուցչին ասում.

– Ա՛ մեծ, Ռուբիկը Կապին ձկերումը ծնել ա, էժը պա՛ց թողի քինա Ռուբիկին ու հողը պիրի:

Բալայան Մեծլումը իսկույն գլխի է ընկնում, որ Հուռին շատ Բալայանների նման

հուզված պահերին նախադասության մեջ բառերի տեղերը շփոթում է և առաջացնում ծիծաղ: Դասից ազատում է Հովասափյան Ռուբիկին, որպեսզի գնա Կապին ծակեր տեղամասից այժր և ուլը բերի:

Ղուլյան Բ., Գյուլիսյան, Պատրանիկներ մոտրիկ անցյալից, Եր., «Ձանգակ-97» հրատ., 2004, էջ 144:

34

Աղքըտի մեյն օրըմ ճամբախ անձրըվու կը պոնվի, կէլնի տուզ-մուզ:

Կէրթա մե կնգյա տուն, կնիյ կէլնի թոներ վառի, իսոր շորեր կը չորցուցի:

Աղքատ շորեր կը խայնի, տառնա կնգան կօխնի, կասի. – Ինչըխ տյու իմ շորեր չորցուցիր, աստվածն էլ քե ըսկուն չորցուցի:

Ուր խելքով օ՛խնիք տվեց:

Ծիծաղում են վանեցիները (հավաքել, կազմել են Վարազդատ Հարությունյանը և Նորա Մելիքյանը), Եր., «Ձանգակ-97» հրատ., 2006, էջ 174:

35

Շամուտի ջահելները մի օր հարցնում են գյուղի ամենատարեց մարդուն՝ Ճուղուրանց Հակոբին.

– Հը՛, Ակո՛ր բիձա, լավ բան ա՛ մենձութինը:

– Էէէ՛, ըրեխե՛ք ջան, ես մենձացել եմ, դուք ոնչ մենձանաք, – հոգոց հանելով

պատասխանում է Ակո՛ր բիձեն: **(ԱՍՇՀ)**

36

Էրկու լոռեցի Ըրեվանի հրապարակի շատրվանների կըշտին կանգնած են ըլլմ: Մի քանի ըրեվանցի ջահելներ տենըմ են՝ սրանք գեղացի մարթիք են, հոքիների հետ խաղալու հըմար դրանցի մինը էս լոռեցոնցի մնի վզին մի թեթև տալիս ա:

– Այտա՛⁸⁴¹, գահլեներըտ չունեմ, ոա՛դ էլեք, – ասըմ ա լոռեցին:

Էս ըրեվանցին մին էլ ա տալի: Լոռեցին նորից ա ասըմ՝

⁸⁴¹ Այտա՛ – կոչական դիմելաձև:

– Այտա՛, ուա՛դ էլեք, թե չէ ես էլ տեմ տա, հա՛:

Ըրեվանցին մին էլ ա թեթև վզակոթին հասցընըմ: Լոռեցին ասմա՛

– Այտա՛, որ տվի է՛, զահմով⁸⁴² տեմ տա...

Որ մին էլ տալիս են, լոռեցին տանըմ ա, բերըմ, որ չի՛ հասցընըմ, էս ըրևանցուն գեդին ա փըռըմ:

– Վա՛յ ես իմ տիրու մերը ք... , – ընգաժ տեղիցը գոռըմ ա ըրևանցին:

Էն մի լոռեցին զարմացաժ հընգորն ասմա.

– Ապո՛, էդ ո՞նց տվիր, որ դա թարս ա ուշունց տալի: **(ԱՍՇՀ)**

37

Որ լոյսերն անջատում, մտնում են անկողին, մարդն ուզըմ ա կնգանը մոդենա, կնիկն ասմա՛

– Ա՛յ մարդ, ամոթ ա, ըրեխեն դեռ քնաժ չի ըլի:

– Քնաժ կըլի, համ էլ մի մատը ըրեխա յա, ի՞նչ տի հըսկանա:

Մարդը իրանն ա գոռըմ, կնիկը՝ իրանը: Վերջը որ շատ կնիկը չեմուչում ա անըմ, մարդը ջղայնացաժ տեղիցը վեր ա կենըմ, գնըմ ա սառնարանի դուռը բաց ա անըմ, որ արադի շիշը վեր ունի, արադ չի գըդնըմ: Շամպայնի շիշն ա վեր ունըմ, ուզըմ ա բաց ա-նի, մին էլ էտ անդեր պրոպկեն⁸⁴³ գըմփալով դուս ա թըռչըմ: Էդ ձենի վրա կնիկը գոռա-լով տեղիցը վեր ա թոչըմ. ասըմ.

– Էն ի՞նչ էլավ... // Ըրեխեն թե՛ //

– Ինց տի ըլի, ա՛յ մամ, էնքան ոլ խաղացըլի, պապան իլան խփեց... : **(ԱՍՇՀ)**

38

Խեր ու տղա դաշտեն կիկյան տուն, խեր կասա.

– Գյա տղա՛, բախեր⁸⁴⁴ տար մարաք դիր:

– Այ խեր, բա դա մեզի պալոժ ա՛, ո՛վ կանա ոխսկ անա⁸⁴⁵, գյա տանա:

⁸⁴² **Զահմով** – թափով:

⁸⁴³ **Պրոպկա** (ռուս.) – խցան:

⁸⁴⁴ **Բախեր** – բահեր:

Խեր մեկ էլ կասա.

– Գյա տղա՛, քյեզի մեկ էլ ըսիսեմ⁸⁴⁶ բախեր վերու, տար դիր մարաք:

Տղեն չի լսա, նորից կասա՛ // – Բա դա մեզի պալոժ ա՛... //

Առտուն կյանուխ խեր ու տղա կելին օր դաշտ էթան, տղեն կկյա, կասա.

– Ա՛յ խեր, բախեր դո՞ր ի՞⁸⁴⁷: // – Գյա տղա՛, պալոժն էկես ի, նանըտ քյ...սի, բա-
խեր վերուսի⁸⁴⁸, տանեսի⁸⁴⁹: **(ԱՍՇՀ)**

39

Մաքուր հայերէնը

Գում Գաբուէն Ղալաթիա թուրք մակոյկավարներ ճամբորդ կը փոխադրեն: Կը պատահի որ, ցուրտ ձմեռ օր մը, Հայ կին մը թերեւս Պոլսեցի, իր փոքրիկը գիրկը կը նստի, կը պալըզի մակոյկի կրակարանին քով եւ կը ճամբորդէ:

Ի՛նչպէս կը պատահի, մակոյկը յանկարծ կը ցնցուի, կրակարանը կը շրջի եւ կրակը կը թափի փոքրիկին ոտքի վրան:

– Քա՛, Հասա՛ն աղա, – կպոռա կինը, – մանդալը տէվրիլմիշ եղաւ, չոճուխս ա-
յախները եանմիշ եղան:

– Գատըն, նէ՞ օլտու, – կը հարցնէ նաւավարը:

– Քա՛, գայըքճի, սէնտէ՞ մի Հայճա պիլիրսին:

– Գատըն, պունըն նէրէսի՞ Հայճա:

– Հա՛, իրա՛ւ, – խելքի կուգայ կինը, – զմանդալն պիտի ըսէի:

**Հայկական զրոյցներ. առակներ, առածներ, մանրավէպեր, զուարճալի ասա-
ցուածքներ և իմաստուն խօսքեր, պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան,
Լոս Անջելես, Պօզաճեան տպագրութիւն, 1944, էջ 9:**

40

⁸⁴⁵ **Ռիսկ անա** – համարձակվի:

⁸⁴⁶ **Ըսիսեմ** – ասում եմ:

⁸⁴⁷ **Դո՞ր ի** – որտե՞ղ է:

⁸⁴⁸ **Վերուսի** – վերցրել է:

⁸⁴⁹ **Տանեսի** – տարել է:

Բոլորան գիւղից մի հողագործ գնում է գիւղի հիւսիսային կողմում գտնուող և Փունաստան կոչուող անտառիկից փայտ կտրելու:

Այդ միջոցին գալիս է մօտից անցնելու դրացի Ազնաուլ գիւղից մի թուրք գիւղացի և նրան մօտենալով հարցնում է.

– Օլան սան քիշի (այ մարդ դու ով ես), գիւղացին, թուրքերէն չհասկանալով, ասում է.

– Բարիս դրկէլ ամ իշի: // Թուրքն ասում է. //

– Օլան մազեար սան ղալ օ դիւանա (այ մարդ, միթէ դու խենթ ես):

Հայը պատասխանում է. // – Հաստերից ամ կդրում դիմանայ: //

Թուրքը կրկին ասում է. //– Օլան սան փոխ եիրան (այ մարդ, դու ք... ես ուտում):

Գիւղացին զարմացած ասում է.

– Փղարսաղը (հերը շուն դարձածը) ինչ գիդի, որ ես էսօր փոխինդ ամ կիրէլ:

Մինասեան Լ., Գիւղական բառ ու բան (Փերիա գաւառ), Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ վանքի տպարան, 1998, էջ 364:

41

Լոռու մարզպետը Ամերիկայի դեսպանին մարզի տեսարժան վայրերը ցույց տալուց հետո տանում է Օծուն: Օծունի գյուղապետն էլ ոչ թե էրկու կողմանի, այլ շրջանածն էր ուտում, նախօրոք տեղեկացվել էր Ամերիկայի դեսպանի գալու մասին և խոզի չալաղաջներով մի լավ խորոված էր պատրաստել ու սպասում էր հյուրերի գալուն: Որ նստում են հացի, դեսպանը նկատում է գյուղապետի աննկարագրելի ախորժակով ուտելը և թարգմանչի միջոցով ցգուշացնում է խոլեստերինի վտանգավորության մասին.

– Խորովածի մսում խոլեստերինի քանակը շատ է բարձր, – դեսպանի խոսքը թարգմանաբար փոխանցում է թարգմանչուհին:

– Ամերիկայի դեսպանին դու ասա, – դիմում է գյուղապետը թարգմանչին, – որ Օծունի գյուղապետը խոլեստերին շատ ա սիրըմ: **(ԱՍՇՀ)**

42

Երկու ընկեր Փարիզ են գնում ու որ հաց ուտել են ուզում, նրանցից մեկը թե՛
– Լսի՛, Երևանում էդ դու չէի՞ր գլուխ գովում, թե լավ ֆրանսերեն գիտես: Դե հի-
մա կմտնենք ռեստորան, շնորհքդ ցույց կտաս:

Սրանք մտնում են մի ռեստորան, մատուցողը մոտենում, ֆրանսերեն ինչ-որ բան
ա ասում, էս պարծենկոտ ընկերը մատուցողին «ֆրանսերեն» պատվերներ ա տալիս՝
«լա խորոված», «լա հաց», «լա արաղ», «լա հանքային ջուր»... , իսկ նա մոտը գրում ա ու
գնում: Քիչ հետո գալիս ա ու սրա պատվիրածները բերում շարում ա սեղանին:

Էս գլուխգովան ընկերը, ինքն իրենից գոհ, խնդմնդալով ընկերոջն ասում ա.

– Հը՞, հիմի համոզվեցի՞ր՝ ինչ լավ ֆրանսերեն գիտեմ:

Մատուցողուհին էլ չի համբերում, հետ ա դառնում էս գլուխգովանի կողմն ու ա-
սում ա.

– Լսի՛, թե որ ես հայ չէի լինի, նոր կտեսնեիք ձեր վիճակը. էտ քու պատվիրած
«լա խորովածի», «լա հացի», «լա արաղի» ու մնացած բաների փոխարեն հորըս ք...ն
էիք ուտելու...: **(ԱՍՇՀ)**

43

Մարդը տուն ա գալի տենըմ՝ իրանց տեղաշորըմը կնիկը՝ սիրեկանի հետ: Կը-
տաղած վրա յա պրծնըմ, սիրեկանին բռնըմ, ու սկսըմ են քաշքշիլը: Թե ոնց ա ըլըմ, սի-
րեկանը մարդուն տակն ա քցըմ ու վզիցը բռնած՝ սեխմըմ ա: Կնգա մեխկը գալիս ա,
կըռանըմ ա ու մարդին թե՛

– Ա՛յ մարդ, զա՛ցեպ արա, զա՛ցեպ արա:

Մարդը գլուխը մի կերպ դըբա կնիկն ա անըմ ու ասմա.

– Տիրոնչըտ մերը... , սա ի՞նչ գոռձ ուներ ծոցիդ, որ հըմի էլ տակիցը դուս գալու
հըմար ինձ պրիոմներ ես սըվորացընըմ: **(ԱՍՇՀ)**

44

Տարեց օդեսուհին վազում է կայարան:

– Она уже ушла, – ինքնիրեն հուսահատ ասում է նա:

- Ո՞վ է այդ օնան, – հարցնում են:
- Դե գնացրն, է՛լի:
- Բայց գնացքը օն է, ոչ թե օնա:
- Օ՛Ֆ, ի՞նչ է, գնացրի ակաների արանքները նայել ե՞մ, որ ճիշտը ասեմ:

«Анекдоты от одесситов» (сост. и предисловие Василий Котюшенко),

Одесса: Изд-во «Optimum», 2007, с. 326.

45

Քյավառցին խոսքան ա գնում, մի 5-6 ամիս հետո որոշում ա կնգան զանգի, զանգում է, ասում է.

- Վարդո՛ւշ, իմա՛լ ես: // Կնիկն ասում է.

- Արև՛դ թաղեմ, հանկարծ հիշեցիր, հա՞, բողերի ու ղախպեքի հետ ըտեղ սաղ օրը նստած քե՛ք կքաշես, հա՞:

Սա շրջվում, կողքի ոսին ասում է.

- Ա տեբե գավարիտ...⁸⁵⁰ **(ԱՍՇՀ)**

46

«Փանոս» անունով մի մարդ բժիշկ հրաւիրեց իւր հիւանդ եղբոր համար:

- Что у вас?⁸⁵¹, – հարցրեց բժիշկը:

- В живот все гр-гр делает⁸⁵², – պատասխանեց Փանոսը:

- Значит понос!⁸⁵³, – ասաց բժիշկը:

- Нет, я Панос, а он Арутин⁸⁵⁴, – պատասխանեց Փանոսը:

- Хорошо, но у него понос⁸⁵⁵, – կրկնեց բժիշկը:

- Нет!, – պատասխանեց հիւանդի եղբայրը, – он Арутин, Панос я!⁸⁵⁶

⁸⁵⁰ **Ա տեբե գավարիտ** (ռուս.) – Քո մասին է խոսում:

⁸⁵¹ Ի՞նչ է եղել:

⁸⁵² Փորս գըռգըռում է:

⁸⁵³ Ուրեմն փորլուծ ես:

⁸⁵⁴ Ոչ, ես Փանոսն եմ, իսկ նա՛ Հարությունը:

⁸⁵⁵ Լավ, բայց նա փորլուծ է:

⁸⁵⁶ Ոչ, նա Հարությունն է, ես՛ Փանոսը:

Անեկդոտներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 36:

47

Յըլդըզե պալատին վեզիրը

Ֆրանսիայի ամբաստորը՝ դեսպանը, կուգա Պոլիսի Յըլդըզե պալատը, որտեղ սուլթան Համիդը կապրեր, որպեսզի իր լեթըրը դը քրուայանսը, այսինքն՝ իր իսկությունը հաստատող փաստաթուղթը ներկայացնե սուլթանին, որ ան ալ վավերացնե այն: Ամբաստորը սալոնը նստած կսպասե, որ սուլթանը իրեն ընդունե: Սուլթանին վեզիրը կուգա՝ ներս հրավիրելու. իբր թե ֆրանսերեն գիտե, կըսե.– Անթրե՛ մոն դերյեր, – որը, եթե թարգմանվի, կըլլա՝ մտեք իմ հետույքս:

Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 103:

48

Տաճկերեն կիտցող գեղական

Գեղայնու մեյ կերթա Ըստամբյոլ, քանիմ՝ ամիս կը մնա, կը տառնա:

Ուր ինզըրներաց շանց տալու խամար, թե իյի տաճկերեն կիտի, կասի.

– Իշու անուն ադուր կասեն, // Քուռկե անուն՝ ասպատուր, //

Կոռ էրկըթին չալիզ կասեն, // Խավու ճիտուն փիլիջ կասեն... //

...Պամ էլ կա՝ վեր լեզվիս ծերին, չեմ կանա խանե: Խա, քյաքին կասեն փոխ:

Ծիծաղում են վանեցիները, կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 157:

49

Գրիգոր դային մին օրիշ շենավ անց ա լ%լ կընաս, շըները զիրավ ըն տեռալ: Կընացալ ա, թա էս քարը յոր օնե, պուք չի եկալ, կըռացալ ա, թա էն մինը յոր օնե, պուք չի եկալ: Տափը սառած ա իլ%լ, քարերը տ րուր չըն լ%լ կյամ: Շինացեք վեր հըվաքվում ըն, Գրիգոր դային ասում ա.

– Ա՛ շան տղեք, քարերը կըպոտալ ըք, շըներին պեց թողա՛լ:

Բարվի հայոց բանահյուսությունը, կազմեցին Ավարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը, Եր., «Չանգակ-97» հրատ., 2004, էջ 233:

50

Մեկ էֆենդի յուր ոչխարները պահ տվեց մի հովվի: Անցավ մի տարի, և հովիվը վեր առնելով մի թաշկինակով մածուն, գնաց յուր տիրոջը հաշիվ տալու:

Էֆենդին – Ծո՛, տեսնեմ՝ ինչ ըբեր ես:

Հովիվը – Էֆենդը՛մ, եթմիշ⁸⁵⁷ հինգ հոգի ջուրը տարավ, սեքսեն⁸⁵⁸ իննը սարեն իվար թափան ձվորերը, դողսեն⁸⁵⁹ երեքը գալերը կերան...

Տերը բարկանալով հովվի վրա, առավ մածունը և խփեց նորա երեսին: Իսկ հովիվը, սրբելով երեսը, ասաց.

– Փա՛ն քիեգ, Ասուած, վեր տերվըեջս⁸⁶⁰ մոտ ճերմակ երես ելա:

Անեկոսյներ, հայոր 1, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, տպարան, 1876, էջ 56:

51

Գ՛էղացին ու քախքըցին

Մեգ քախքըցի, մեգ գ՛էղացի կէղնին: Գէլնա գ՛էղացին⁸⁶¹ հարիր օխչար կաննի, կիդա գ՛էղացուն պա, կըսէ. – պայա, ընծիգ քըզիգ կիսովի: Մընաց գ՛արուն, գ՛էղացին շիքեց քուլաք մէ մածուն բ՛երեց: Բ՛երեց, էգավ քաղաք: Քաղքըցին տէսավ ըզմածուն, շադ ուրախցավ. հանդէ, կիշկէ, սէր վըր երեսին:

Ըսէց. // – Գյալօ՛, մըր օխչար իմա՛լ ին: // Գ՛էղացին դ՛արծավ, ըսէց. //

– Մըր օխչա՛ր, էլ մը հարցու. անքամ մէ էրգինք օրօդաց ինըսուն հադ, – ըսէց, – սադգան, – ըսէց, մացին տաս հադ. վեց հադ տըվի խասքին, օր էս ինըսուն հադ օխչար

⁸⁵⁷ **Եթմիշ** (թրք.) – յոթանասուն:

⁸⁵⁸ **Սեքս** (թրք.) – ութանասուն:

⁸⁵⁹ **Դողս** (թրք.) – իննսուն:

⁸⁶⁰ **Տերվըեջ** – տիրոջ:

⁸⁶¹ Տպագրական սխալ է, պետք է լիներ *քախքըցին*:

մօրթեց. իրէք հադ լէ հաշիվ մէնի, մը հաշիվէ, – ըսէց, – մանցէր է մէգ հադ, գէդ լէ հան-
դէ, իմ տըղէն հըլուն շարէր է վըր ճագդին, հեդ կըխաղա:

Քաղքըցու սիրդ յէլավ, վերցուց ըզ քուլագ մաճուն, զարգ վըր բ'իճու գ'ըլխուն,
կօրձէց վըր գ'ըլխուն:

Գ'էղացին ըզգ'ըլօխ շախսիէց, ըզմուրքէն մաճուն էգավ թափավ, ըսէց.

– Փա'նք քըզի, աստվաճ, մըր էրես էլման սիվդակ էղավ:

**Քաղդասարյան -Թափալցյան Ս., Մշո բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ.,
1958, էջ 208-209:**

52

Ճերմակ երեսով տեսնուած հաշիւը

Չնքուշի մսագործները գարնան ուլեր կը գնէին եւ մինչեւ աշուն արածելու ու
մեծցնելու համար Քիւրտերուն կու տային կէտուկէս, այսինքն մորթելու պատրաստ այժ
դառնալէ յետոյ, կէսը իրենց կէսը արածեցնող Քիւրտին:

Մսագործ մը, որ տասը ուլ էր տուած գիւղացի Քիւրտի մը, երբ աշնան կ'երթայ
իր բաժին այժերը բերելու, Քիւրտը զայն կ'ընդունի սիրով եւ հիւրասիրելու համար անոր
առջեւ կը դնէ *քիւլիկով*⁸⁶² մաճուն ու, մինչ Հայը կը սկսի ուտել, Քիւրտը հետեւեալ հաշի-
ւը կը ներկայացնէ.

Հայերեն վերածուած մեր կողմէ

– Ոչխարներուն առաջնորդը թռաւ ժայռէն, // Հինգ ոչխար ալ անոր ետեւէն,

Մէկն յափշտակուեցաւ գայլէն, // Մէկը տուի գասապին, // Մէկն ալ մի խառներ
հաշիւին, // Միան ալ մեր տղան (վզին) զանգ է անցուցած, ո'չ քեզի կու տայ, ո'չ ալ ինձի:

Ապշահար Հայը առջեւի մաճունը քիւլիկով կը նետէ երեսին Քիւրտին, որ մաճու-
նոտ երեսն ու մօրուքը երկու ձեռքերով բռնելով կը յարէ.

– Էլ համտուլլա եուզ աղլըղ իլէ պիր հիսապ կէօրտիք: (–

Փա'նք Աստուծոյ, ճերմակ երեսով հաշիվ մը տեսանք):

⁸⁶² Քիւլ – փայտէ խոշոր աման:

Գէորգեան Գ., Չնքուշապատում, հայրոր 1, Երուսաղէմ, փայտրան Ս. Հակոբեանց, 1970, էջ 308:

53

Մլիցեն մի ախպարի ասըմ ա.

– Վերջըտ վատ ա ըլելու:

– Ինչու՞ նման բան կըսես:

– Հա, քեզ ասըմ եմ՝ վերջըտ վատ ա ըլելու:

Էս ախպարը էլ չի համկերըմ ու մի հատ մըլիցի ըոխամիչըմը հասցընըմ ա: Մըլիցեն սըրան տանըմ ա քաղմաս: Պետը հարցընըմ ա.

– Դու գիտե՞ս՝ ինչ հանցանք ես կատարել. դու ի՞նչ իրավունքով ես հարվածել միլիցիայի աշխատակցին:

– Երբ հայրենիք կուգայինք, բոլորը մեզի կըսեին՝ վերջը լավ կըլլա: Ան իրենից ի՞նչ կներկայացնէ, որ կըսե՞ վերջըդ վատ կըլլա: Ի՞նչ է, լավը ավարտվե՞ց... **(ԱՍՇՀ)**

54

Տաքսիով էրկու ընկեր գնալիս են լինում, մեկն էլ ա կանգնեցնում տաքսին ու նստում վարորդի կողքին: Որ մի քիչ գնում են, էս մարդը շրջվում ա ու հետևի նստածներից մեկին հարցնում ա. // – Ներեցեք, դուք ի՞նչ մասնագետ եք: // Սա թե՛ //

– Կենսաբան եմ: // – Իսկ դու՞ք, – հարցնում ա երկրորդին: // – Իրավաբան եմ, – պատասխանում ա երկրորդը: // Էս հարցնողը շրջվում ա ու սկսում թերթ կարդալ: //

– Չհասկացա, ախպե՛ր, մեր մասնագիտությունները հարցրիր, էտ քո՞նն ինչի չես ասում, դո՞ւն ինչ մասնագետ ես, – հարցնում են հետևից: // Ասում ա՛ //

– Ճիշտն ասած, ես էլ եմ բան, բայց իմ բանն առաջից ա (իմա՛ **բանասեր**): **(ԱՍՇՀ)**

55

Յաճախապատումը

Հարուստ մեկը ծառան կանչելով.

– Գնա Մարկոս էֆէնտիյէնց տունը Օրմանեանի (սխալ է - ԱՍ) «Յաճախապատում»ը բեր, որ ժամանակ անցընեմ:

Ծառային մինչեւ տեղ հասնիլը «Յաճախապատում»ը Հաճի Խաթունի փոխուցաւ բերնին մէջ:

Փաստաբանը դուռը բանալով երբ ի՞նչ ուզելը հարցուց՝

– Մէր էֆէնտին Հաճի Խաթունը ուզեց, որ ժամանակ անցընէ, – ըսաւ ծառան:

– Ծո՛, ի՞նչ կը ձարուտես⁸⁶³: Անպայման «Յաճախապատում»ը ուզած է, բարկացաւ էֆէնտին:

Ազնավուրեան Ս., Հէրիաթներ, զուարճալիքներ, ԱՄՆ, Միչիկըն, Տիպորն Հայթս, 1971, էջ 138:

56

Քյավառցի էրեխին դասատուն ինչ հարց տալիս ա, չի պատասխանում:

– Լավ, մի բան էլ հարցնում եմ, պատասխանեցի՞ր՝ մի երեք կնշանակեմ, չէ՞՞ երկուս եմ նշանակելու: Ո՞վ է Չինաստանի ղեկավարը: // Էրեխեն ձեն չի հանում: //

– Հը՞, չգիտե՞ս: // -- Չէ: // -- Դե որ չէ՛ օրագիրդ տուր, երկուս եմ նշանակում: //

– *Մացե տուն*⁸⁶⁴: // -- Ապրե՛ս, բա ասում ես՝ չգիտեմ, երեք եմ նշանակում: (Ուսուցչին թվացել էր, թե *Մաու Յզե Դուն* ա ասել – ԱՍ) **(ԱՍՇՀ)**

57

Հրանտ Մաթևոսյանի 80-ամյա հորեյանի կապակցությամբ Ահնիձոր գնացող խմբում է լինում նաև Գուգարաց թեմի առաջնորդ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը: Մտավորականների խումբը լինում է Ահնիձորի դպրոցում:

– Սա ո՞ր դասարանն է, – տնօրենին հարցնում է արքեպիսկոպոսը:

– Էս առաջին նստարանի երկու աշակերտը առաջին դասարանն է, հետևի երկուսը՝ երկրորդ, նրա հետևինը՝ երրորդ, վերջինն էլ՝ չորրորդ:

– Երեխանե՛ր, ձեզանից ո՞վ կարող է «Հայր մերը» ասել, – հարցնում է սրբազա-

⁸⁶³ **Ձարուտել** – ավել-պակաս խոսել:

⁸⁶⁴ **Մացե տուն** – մնացել է տանը:

նը: // – Ես ասե՛մ, – անմիջապես ձեռք է բարձրացնում առաջին դասարանցիներից մեկը: // – Ասա՛, տղա՛ ջան: //Թե՛ // – Հերըս Գարե՛գինն ա, մերըս՝ Վարթի՛շա՛ղը... (ԱՍՇՀ)

58

7 տարեկան Վահագնին դպրոց ընդունելու համար տնօրենը հարցեր է տալիս.

– Բալի՛կ ջան, երեքին եթե գումարես երկուս, ինչքա՞ն կանի:

– Հինգ, – պատասխանում է Վահագնը:

– Ապրե՛ս, իսկ եթե 3 խնձորին գումարես 2 տանձ, ինչքա՞ն կլինի, – երեխայի հոգու հետ խաղալու համար հարցնում է տնօրենը:

– Հինգ հատ *խնձորատրանձ*, – անմիջապես պատասխանում է Վահագնը:

(ԱՍՇՀ)

59

Մի ախպար, կշտացած ամեն ինչից, որոշում ա գնա Ամերիկա: Սրան կանչում են կենտկոմ՝ համոզելու, որ չգնա.

– Ա՛յ հայրիկ, երկհարկանի տունն ունես, ընտիր ավտոն ունես, բանկըմ էլ էսքան փող ունես (դե ԿԳԲ-ին ամեն ինչ հայտնել էր), Ամերիկա ի՞նչ կա, որ գնում ես:

Ասմա՛

– Հոն շահագրգռվածություն կա:

Էս կենտկոմի աշխատողը վիրավորված ասում ա.

– Ինչի՞, հայրի՛կ, մեզ մոտ շահագրգռվածություն չկա՞:

Ախպարն ասմա.

–Տղա՛ս, հոս ալ կա, բայց հոս շահը կմնա ձեզի, գրգռվածությունը՝ մեզի: (ԱՍՇՀ)

60

– Ա տա՛յ Պուղի, էն մեռած անձուղ ընողին կնկանը սուզը մին ասի, անկուջ օնիմ, սերոս մին պատառ բեցուի:

– «Աղջի՛, քը՛ մատաղ, ըներա՛կ ար էն օրին, որ ծմական գեալիս ար՝ սեզնը, զկեռը, մըհասուրը ջուբորը լիկը. լըհայ որ բերում ար, խըխոցս ըռաջին որ ածում, հե՛նց ար

ինում, լրիայ Թարուզու խոշկեապէար ինի:

– «Աղջի՛, քը՛ մատաղ, ըներա՛կ ար էն օրին, որ ծնական գեալիս ար՛ սեզնը, զկե-
ռը, մըհասուրը ջուբորը լիկը. լրիայ որ բերում ար, խըխոցս ըռաջին որ ածում, հե՛նց ար
ինում, լրիայ Թարուզու խոշկեապէար ինի:

«Աղջի՛, քը՛ մատաղ, լրիայ որ իրկէօնանց գեալիս ար կացինը քամակը կոխած,
ցակատը առաջը կոխած, կեօտակ էշը ըռաջկին, շիւշայ շիւշայ ընշուղաւ բեռնած, յագին
պուլտի ընելաւ. լրիայ որ բերում ար ընծղաբեռնը որօնում, հենց ար ինում լրիայ
պեազրկանի թէանպէալէթ ինի:

ա քու ոսկի փըշակիդ մատաղ, // ա քու ոսկի քրխընիդ մատաղ, //

ա քու ոսկի տըզկեահիդ մատաղ, // անծուղ կ՛անե՛ր, լրիայ ձըձոնակի թևեր ինի:

//Աղջի, բա՛, ինձ նմանին տէրը տազ կանի՛»:**

***«Հարկ կը համարիմ այս սուգի միտքը պարզել, որպէս զի մեր հեռաւոր եւ սի-
րելի ընթերցողք կարդալու ժամանակ ձանձրութիւն չզգան, այլ իմաստը ըմբռնելով
զգածուին»:

Խաչենու գաւառի Կարկաժան գիւղում մի ածխագործ կմեռնի, որի թշուառ կինը
այս սուգը կ՛եղերգէ իւր շուրջն հաւաքուած լալկան կանանց մէջ դագաղի մօտ նստած:
«Երանի՛ այն օրին, յորում նա (ննջեցեալն) կը գար անտառից ջեբերը մրգեղէններով լի,
երբ այն պտուղները երախայոցս առաջ կը թափէր, կարծես թէ Թաւրիզից բերուած
մրգեղէններ լինէին: Երբ երեկոյան անտառից կը գար կացինը կռնակի կողմից գօտին
անցուցած, ցակատը առաջի կողմից, երկար երկար ածուխով բեռնուած պոչատ էշն յա-
գին շարժելով իւր առաջին. երբ ածխաբեռը կ՛իջեցնէր, կարծես թէ վաճառականի թան-
կագին հակէր լինէին: Ոսկի արուեստիդ մատաղ (լինիմ ես), ոսկի հանքիդ (ածխահորն)
մատաղ, ոսկի գործարանիդ մատաղ. այնպէս ածուխ կ՛անէր, որ ծիծեռնակի թելերի
նման գոյնզգոյն կը փայլէին: Ապա ուրեմն քանի որ այսպիսի տէրս, այրս մեռած է, ի՞նչ-
պէս կարող եմ լռել եւ չ՛լալ:»

«Ահա Ղարաբաղի գաւառացու մի ազնիւ պատկերն: Քանի՛ գոհ է իւր վիճակից,

ինչպեսի՛ր ընտիր նըմանութիւններով կը գովաբանէ իւր հանգուցեալ այրը: Իւր ածխագործ այրը ընտիր արուեստաւոր կանուանէ, ածխահորը՝ ոսկեհանք, ածխաբեռը՝ մետաքսեայ կերպասահակեր եւ անտառի պարզ պտուղները իբրեւ թանկագին մրգեղէն եւ մարդոյ մահը կըզգայ ինչպէս թագաւորի մահ»:

Պըլը-Պուղի, գրեց Մակար վարդապետ Բարխուդարեանց, Թիֆլիս, Մով. Վարդանեանի և ընկ. տպարան, 1883, էջ 132-133:

61

Աղէն հէլէր ա բ'օստան

Մէ աղա մառթ շանդըր հիվանդանում ա: Ինչ ճար-իլլաջ անում էն, չէն կըրում լավըցընէն: Վէռչը սալըխ⁸⁶⁵ էն տալում, վոր էսինչ տեղը մէ լավ հէք'իմ կա, մէնակ էնի կըրա լավըցընի: Աղէն կանչում ա հիրա ծառային, ղըրկում հէք'իմի հէդէվիցը:

– Դէ՛ ասա, ի՞նչ հիվանդ էս, վոր հէք'իմին ասէմ:

– Տէնում էս, էլի, հէք'իմին ասա՝ աղի մանները ուտէր ա խիյարի պէս, թեվէրը ուտէր ա յէմիշի պէս, գ'ըլօխը ուտէր ա դ'թումի պէս...

– Աղա՛, էտդար բ'անը իմ մըտին չի մնա, կ'էրթամ հէք'իմին կասէմ՝ աղէն հէլէր ա բօստան: Բօստնի մէջը հըմմէն ինչ էլ կա՝ խիյար էլ, յէմիշ էլ, ձ'մէրուկ էլ, դ'թում էլ...

Մարկոսյան Ռ., Արարապոյան բարբառը, Եր., «Լույս» հրատ., 1989, էջ 292:

62

Հավն ու վիչիլը

Մին հավ քյինամ ա զագրանիցա. ճանապարհին վիչիլ ա պըտահում. ասում ա.

– Հավ ախպեր, շտե՛ղ ըս քյինամ: // Ասում ա. // – Քյինամ ըմ զագրանիցա: //

Ասում ա. // – Պա խե՛ յըս քյինամ: // Ասում ա.

– Տարեն 360 օր օնե, ինձանա 380-ըն օզում, վեր Սովետին պլանը տամ: Վիչիլ ախպեր, պա տու շտե՛ղ ըս քյինամ:

Ասում ա. //– Ես էլ կյամ ըմ Սովետին երկիրը: //Ասում ա. // – Պա խե՛: // Ասում ա.

⁸⁶⁵ Սալըխ (թրք.) – լուր:

– Ասում ըն ըստեղ մին քյասիբ ա ապրում, մինչև քյինամ տըրան ճարիմ, տրանավ սնվիմ, սոված կըմեռնիմ: Համա ասում ըն՝ ծեզ մոտ ուրու կըլխե թափած ըն, քյինամ կըլխս պահիմ:

Բաքվի հայոց բանահյուսությունը, գրառեցին և կազմեցին Ալվարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը, Եր., «Ջանգակ-97» հրատ., 2004, էջ 208:

63

Հայաստանի երկրաշարժին դատաւարութիւնը

1988-ի Դեկտեմբերի 7-ին, երբ երկրաշարժ եղաւ, Հայաստանի տուներ-մուներ փլան, շատ մարդիկ մեռան:

Հայաստանի կառավարական մարդիկ կը խորհին դատարան կանչել մեղաւորնե- րը: // Առաջ կը կանչեն Աազը, իրեն կը հարցնեն.

– Ատ խեղճերուն տուները ինչո՞ւ փլեցիր: // Աազը կ’ըսէ. // – Ի՞նչ գիտնամ, ես մե՛ղք չունիմ. ատ Պրիքէթը⁸⁶⁶ կոտրեցաւ ինկաւ, ես ալ ետեւէն գացի:

Դատաւորը կ’ըսէ. // – Քեզի հինգ տարուան ճէզա⁸⁶⁷. բանտ պիտի նստիս: //

Ետքը Պրիքէթին կը հարցնեն. // – Դուն ինչո՞ւ ինկար: // Պրիքէթը կ’ըսէ. //

– Ես մե՛ղք չունիմ. Երկիրը շարժեցաւ, ես ալ իմ տեղէս շարժեցայ ինկայ: //

Դատաւորը կ’ըսէ. // – Քեզի ալ տասը տարուան ճէզա. բանտ պիտի նստիս: //

Կարգը կուգայ Չիմէնթոյին⁸⁶⁸. // – Դուն ինչո՞ւ ձգեցիր, որ փլին: //

Չիմէնթոն կ’ըսէ. // – Կը ներէ՛ք, ես հո՛ն չէի, հոն ըլլայի նէ՛ չէի ձգեր, որ փլին:

Սվազյան Վ., Պոլսահայ բանահիւսութիւնը, Երեւան, ՀՀ ԳԱԱ, «Գիտութիւն» հրատ., 2000, էջ 224 :

64

Հօփն ու Թօփը

Մօրթ մը իրգօ (երկու) սիրօձ գունցնօ (սիրած է ունենում): Մեգան ադունը (անու-

⁸⁶⁶ Պրիքէթ (Ֆր.) – աղյուս:

⁸⁶⁷ Ճէզա (արաբ.) – պատիժ:

⁸⁶⁸ Չիմէնթոն – ցեմենտ:

նը) Հօփ է, միգյալէն ադունը՝ Թօփ: Օր մը Հօփան գըրթօ, օր մը Թօփան գըրթօ:

Օր մը սիրօծան էրթըլօ ադին քանաֆը (զուգարան) գօըննօ (ընկնում), սիրօծան քօլը էրթըլօ գօուշանօ, ինքինքիր (ինքնիրեն) գօսէ. – Հօփը գիդէ, քի Թօփան քօլն իմ, Թօփն ա գիդէ՝ Հօփան քօլն իմ. չին գիդիր, քի քօքան մէշն իմ:

Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 64:

65

Փէշիս տկինը քեզ օրինի

Մի գիւղում մի նոր ընծայ քահանայ է լինում, որը միշտ մոռանում է, որ երբ իրեն բարևում են և ասում.

– Օրինայ տէր – ինքն ասի. // – Աստուած քեզ օրինի:

Ուստի իր պատասխանը գրում է մի տախտակի վրայ և շորի տակից կախում, որպէսզի մոռացած ժամանակ անմիջապէս դրան նայի և պատասխանը տայ:

Այնպէս է պատահում, որ երբ մէկը բարևում է, և ինքը մոռացած է լինում, թե ինչ պիտի անի և շտապ շորն է ուզում բարձրացնել և տախտակի վրայի գրածը կարդայ ու ասել, և դա էլ, իր սև բախտից շորի տակ խառնած և չի կարողանում շտապ գտնել, ուստի ստիպած ասում է.

– Փէշիս տկինը քեզ օրինի:

Մինասեան Լ., Գիւղական բառ ու բան, (Փերիա գաւառ), Նոր Զուղա, Սբ. Ա-մենափրկիչ վանքի տպարան, 1998, էջ 388:

66

Ընկեր Մարգոն հարցնում է.

– Երեխանե՛ր, ի՞նչ դրամական միավոր գիտեք:

Մեկը ձեռք ա բարձրացնում, ասում՝ ուրբի, մեկը՝ դրամ, մյուսը՝ դոլար, Վարդա-նիկն ա ձեռ բարձրացնում, Մարգոն մտքում ասում ա. «Հիմա սա էլի մի խայտառակ բան կասի», բայց ի՞նչ աներ...

– Ասա՛, Վարդանի՛կ: // – Անքամ: // – Վարդանի՛կ, բա անքամը դրամական միավոր է՞: // – Հըբը ի՞նչ է, ընկե՛ր Մարգո, մեր հարևան Վարդուշը էմիրաթներից էրեգ է էկե: Մերըս տեսավ, ըսավ. «Ի՞նչ ես տվե էդ հագիդ ջինսին»: Ըսավ. «Հինգ անգամ»: Մերըս ըսավ. «Սապոկներուդ ինչքան ես տվե»: Ըսավ. «Տասն անգամ»: Մերըս ըսավ. «Հըբը դուբյոնկի՞դ ինչքան ես տվե»: Ըսավ. «Տասնհինգ անգամ...:» **(ԱՍՇՀ)**

67

Կաճեցոց հաշիվ

Օրըմ կաճեցոցի կուկյան քաղաք, կերթան պաղնիս, պաղնսից կէլնեն, կերթան շուկեն, քիչըմ տաճիյ բյուբար (կծու բիբար) կառնեն, կուտեն, կը բաշլայեն առցուի թափել աշկներաց: Վերճ կերթան քիչ ըմ չամիչ կառնեն կուտեն, պենիտներ (բերանները) կը քաղցրացուցեն:

Ճամբախ որ կերթան, կը նստին տեղըմ, հաշիվ կանեն.

– Տաս փարա տվինք, գացինք տկլոզտուն (պաղնիս):

– Տաս փարա տվինք, առանք՝ էն, ինչ որ ես վար քի լացի, տյու վար զի լացի (տաճիյ բյուբար):

– Տաս փարա տվինք, առանք էն, ինչ չանց հիմ աստված, չանց քու աստված քաղցր էր (չամիչ):

Ծիծաղում են վանեցիները, Կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Չանգակ-97» հրատ., 2006, էջ 175:

68

Գոզանի լեռներէն մէկուն մէջ երիտասարդ մը կար, որ ամուսնացաւ, իրեն պես փախուկի մը հետ և երեք ամիսէն ունեցավ մանչ զաւակ մը:

Է՛, ի՞նչ ընեն: Բան մըն էր եղաւ, պէտք էր միտք հանդարտեցնող հաշիւ մը գտնել, որ տղուն արը-նամուսը չաւրուի:

Կը չափեն, կը ձեւեն, չեն կրնար տակէն ելլել:

Խելօք Դաւիթին մէկը այդ պահուն իրենց օգնութեան կը հասնի և կ'ըսէ, թէ՛ Սոյ

մէջ մարդ մը կայ, որ ատանկ կնճոռոտ հաշիւները կրնայ լուծել, եթէ իրեն կարելոր նուէր մը տրուի: Այդ հաշուագէտը կը կոչուի Բալասան Տայի:

– Նուէրին խօսքը կ'ըլլայ պէ, – կ'ըսեն լսող ծնողները, – միայն թէ թող բամբասող լեզուները կարկին, ջա՛ն ղուրպան իրեն:

Կուգայ սպասուած Բալասան Տային, առօք-փառօք կը բազմի հարս ու փեսին մօտ: Կը լսէ պատմութիւնը, կ'ընդունի նուէրը և համրիչը հանելով՝ կը հաշուէ:

– Բարեկամնե՛ր, ճիշդ հաշիւ է աս, և նորածինը ճիշդ ինը ամսու կուգայ. իրար անցնելու պետք չկայ:

– Թէ ինչպէ՛ս:

– Մտի՛կ ըրեք, հաշիվը աս է. Փեսին ամուսնութիւնը հարսին հետ կ'ընէ երեք ամիս, երեք ամիս ալ հարսին ամուսնութիւնը փեսին հետ, եղա՛վ վեց: Անցնող ամիս, այս ամիս և գալող ամիս՝ երեք ալ աս, կ'ընէ ճիշդ ու ճիշդ ինը ամիս...: Պրծա՛վ գնաց:

Բալասան Տայուն հաշիւը կը հանդարտեցնէ միտքերը, և մինչեւ վերջ հարս ու փեսայ կ'իյնան կ'ելլեն արով-նամուսով:

Գիրք առակաց, պարբաստեց Կարապետ քահանայ Գալֆաեան, Լիբանան, Պէյրուօ, 1957, էջ 141-142:

69

Քյավառցիներն ասում են.

– Ամբողջ Հայաստանով մեկ խայտառակ ենք էղել, սրանից հետո էկեք էլ չասենք. «Գնանք խմելու», և որպեսզի ուրիշները չիմանան՝ ուր ենք գնում, կասենք՝ «Գընանք գրադարան՝ գիրք կարդանք»:

Քյավառի հրապարակում հավաքված ընկերներից մեկն ասում է.

– Չգնա՞նք գրադարան գիրք կարդալու:

Նրանցից մեկը թե՛

– Նոր եմ գրադարանից էկել, կարգին գրականություն չկա, էղածն էլ լեհական ու վիետնամական գրականություն ա:

– Գրադարանի աշխատողն իմ ծանոթն ա, գնանք, մեզ համար մի նորմալ գիրք կգտնի:

Վեր կացանք գնացինք, գրադարանի վարիչը, իրոք, հանեց մի հանրագիտարան տվեց (իմա՝ լիտրանոց շշով օղի), հավետով կարդացինք, բայց կարդալու ծարավը մեծ էր, էլի աչքով-ունքով արինք: Գրադարանավարը բերեց մի հատ էլ մանկական գրականություն տվեց (իմա՝ 0.25լ շշով օղի), էդ էլ կարդացինք, բայց էրեխանց համար գրած գիրքը մեզ ի՞նչ կտար: Էլի կարդալու ծարավ կար: Լավ էր՝ մեր ընկերներից մեկն ա-սավ՝ . «Տղե՛րք, տանը ձեռագիր գրականություն կա, էկեք գնանք դա էլ կարդանք»:

Վեր կացանք գնացինք: Ճիշտ ա, ձեռագիրը լավ չէր կարդացվում, (երևի արաղ քաշելիս տակը վառած են էղել), բայց տառերը իրար մի կերպ կապելով (իմա՝ կում-կում) կարողացանք մի կերպ կարդալ, որ բան հասկանանք... **(ԱՍՇՀ)**

70

Կարապետը արտասահմանում բնակվող եղբորը նամակ է գրում. «Սիրելի եղբայր, չկա և ոչ մի ուրիշ երկիր, որտեղ մարդն ապրի ավելի ազատ ու լիաշք շնչե, քան մերն է: Չկա ավելի հարազատ ու երջանիկ երկիր, որքան սա է: Այստեղի խանութներն ու կրպակները լիութենեն կպայթեն: Լիիրավ ազատություն է, հրապարակայնություն, դեմոկրատիա»: Վեց էջանոց նամակն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Ես ասանկ կսեմ, դուն անանկ հասկացիր»:

Նամակն ընկնում է իրավապահ մարմինների ձեռքը: Նամակագրին պատասխանատվության են կանչում և ստիպում պարզել վերջին տողերի իմաստը:

– Այս ի՞նչ բան է, – տարակուսում է հայրենադարձը, – վեց էջ ձեր անունից գրած եմ, երկու բառ ալ իմ կողմից չե՞մ կրնա ավելացնել:

«Եղինջ» երգիծական հանդեսի հավելված, Եր., 1995, էջ 73:

71

Ճիլիբը սելի ակը ամրացնող մասն ա՝ փայտե ձողը:

Հարսը չխոսկան ա ըլըմ, սելին նստած տեքոր հետ գնալիս ա ըլըմ, դիբը բըցրա-

նալիս էս հարսը մին էլ տենըմ ա՛ էս ճիլիբը համարյա դուս ա գալի: Տեքորը ձեռներով ուզըմ ա հսկացնի, մի ձեռի ցուցամատն ու բուֆ մատըն օղ անելով՝ իբր սելի ակ, էն մի ձեռի ցուցամատը էդ օղի միջովը տանըմ բերըմ ա, ուզմա ասի՝ ճիլիբը դուս ա գալի...

Էս տեքրն ասըմ ա.

– Համբերի, դիբը դուս կգանք, նոր...

Էս հարսը մին էլ ա նոյն բանը ձեռներով հըսկացնըմ, տեքրը մին էլ ա ասըմ.

– Դե ասի՛ դիբը կբըցրանանք, նոր...

Մի քիչ հետո ակը դուս ա գալի ու գլորվելով ձորն ա ընգնըմ, ջարդուխորդ ըլըմ:

Տեքրը ուշունցը կապըմ ա, թե՛

– Տենեիր ո՞չ, որ գոնյա շուտ ասեիր...:

Էս խեղճ հարսը ճարը կտրած խոսըմ ա, ասմ ա.

– Ես ի՞նչ մեղավոր եմ... Բա էն որ մի էրկու հետի ձեռներով հըսկացնըմ ի, դուն էլ հա ասեիր՝ համբերի, դիբը բըցրանանք, նոր, հըմի իմ մեխկը ըստի ո՞րն ա ...:

(ԱՍՇՀ)

72

Համիդ Երկրորդը

Պոլսում հայ դպրոցներուն մեջ գիտության դասեր կանցնեին: Ուսուցիչը շիմիկի, այսինքն՝ քիմիայի դասին ժամանակ պիտի բացատրեր, թե ջուրը կբաղադրվի երկու ջրածնե և մեկ թթվածնե: Թուրք գաղտնի ուստիկանները դպրոցին եզերքները կսլքտան եղեր, որ իմանան՝ հայ ուսուցիչները տղոցը ի՞նչ կսորվեցնեն: Կտեսնան, որ գրատախտակին վրա ուսուցիչը գրեց H₂O: Ուստիկանը պատուհանեն կնայի կտեսնա: Շիտակ կերթա ոսպոր մը՝ զեկուցագիր մը, կգրե կառավարությանը ու կբացատրե, որ հայկական դպրոցներուն մեջ տղոցը կսորվեցնեն, որ Համիդ Երկրորդը հավասար է զերոյի:

Սուլթան Համիդին ականջը կիյնա, որ հայերը դպրոցին աշակերտներուն կսորվեցնեն՝ Համիդ Երկրորդը հավասար է զերոյի:

– Վա՛յ, շուն շանորդի հայե՛ր, – կըսե սուլթանը, – ադանկ է նե, քիմիական գի-

տության դասերը ասկե վերջ թող արգելվին դպրոցներեն ներս:

Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 103:

73

Ֆիզիկայի քննության ժամանակ դասախոսն ասում ա՛.

– Ախշիկ ջան, «պի»-ն քթել ե՛ս: // Ասում ա՛ հա: // – «էո»-ը քթել ե՛ս:

Ասում ա՛ հա: // – Դե ուրեմն՝ քեզ «քյու»-ն» էլ ա պետկը: **(ԱՍՇՀ)**

74

Խուլը հիանդ բարեկամին այցելութեան գնալիս ճանապարհին մտածում էր. «Ասենք թէ գնացի՛, էտեղ մի դժար բան չկայ. բայց ի՞նչ խօսեմ, ոնց հասկանամ», – քիչ մտածելուց յետոյ, – հա՛, ի՞նչ կայ որ... կ՛գնամ տուն կ՛մտնեմ, առաջ կասեմ՝ Բարով. կասի՛ «Ասու բարին». յետոյ կասեմ՝ Ի՞նչպէս ես. նա էլ կասի՛ «լաւ եմ». ես էլ կասեմ՝ փառք Ասու. յետոյ կասեմ՝ Իշտահդ ո՞նց է, ի՞նչ ես ուտում. կասի՛ «Լաւ է, փլաւ եմ ուտում», ես էլ կասեմ՝ Անուշ ըլի. յետոյ կասեմ՝ ո՞վ է բժշկում, կասի. «Փլան փլանը», ես էլ կասեմ՝ Աստուած մաջին ղուաթ տայ:

Այսպէս, հարց ու պատասխանի ծրագիրը կազմելով հասաւ հիանդի տուն. բայց հիանդը այդ օրը շատ դժուար էր, գազազել էր:

– Բա՛րով, – ոտը տուն դնելով՝ սկսեց խուլը:

– Չոռ ու ցա՛ւ, էլի եկա՛ր, – միա կողմը շուռ գալով՝ փնթփնթաց հիանդը:

– Ինչպէ՛ս ես, – շարունակեց խուլը:

– Էլ ի՞նչպէս պէտք է լինիմ, տնաքա՛նդ, սատկում եմ:

– Փառք Ասու: Իշտահդ ո՞նց է, ի՞նչ ես ուտում:

– Չահողումա՛ր, – վրայ բերեց հիանդը: // – Այ անուշ ըլի՛: Ո՞վ է բժշկում: //

– Հոգեհանը: // – Աստուած մաջին ղուաթ տայ:

Ծիծաղի փոպրակ, Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահազիզեան, Թիֆլիզ, փոպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 116-117:

Առավուտ շուտ Ղուլընանց Գոքորը, մի ծակ *պղինձ* ձեռքին, կնոջ՝ Ելենի հետ գործով գնում էր բարեկամներից մեկի տուն: Գործն ավարտելուց հետո պետք է պղինձը տաներ արհեստավորի մոտ՝ կլայեկելու:

Գոքորը հեռվից նկատում է դեպի իրենց եկող Հուլընանց Շաքարին: Երկուսն էլ տարիքն առած մարդիկ էին. արդեն վատ էին լսում: Գոքորն ավելի վատ էր լսում, ուստի մտքում պատրաստվում է զրույցի. «Կասի՛ բարի լուս: Կպատասխանեմ: Կասի՛ *պղինձն* ո՞ւր ես տանում: Կասեմ՝ *ուստի կուշտը*»: Այդպես ծանրութեթև անելով հնարավոր հարցերն ու պատասխանները՝ նրանք մոտենում են իրար:

– Բարի՛ լուս, Գո՛քոր:

– Ա՛յ Աստծու բարին, Շաքա՛ր ջան, բարին արևիդ, – պատասխանում է նա և նայում կնոջը:

Կինը գլխով դրական նշան է անում, այսինքն հարց ու պատասխանը ճիշտ է ընթանում:

Հաջորդ հարցը պետք է վերաբերեր պղինձին, բայց...

– Գո՛քոր, խե՛ր ըլի, իմ քիր Ելենին առավուտ շուտ էս ո՞ւր ես տանում:

– Քամակը ծակվել ա, տանում եմ *ուստեն* սարքի:

Քոչարյան Ս., Չվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ»

հրատ. , 2008, էջ 8-9:

Կլվատ աղչկրներ

Իրեք քեոր (քույր) կելնեն, իրեքն էլ կլվատ (թլվատ): Էն մեկ օր մեր կերթա տյուս, աղչկրներաց կապսարի⁸⁶⁹.

– Իսկի չզրուցեին մեկ մեկելու խետ, չէլնի թե ուզողներ գան, տոան վերեն ա-

⁸⁶⁹ Ապսարել – հանձնարարել:

կանջ անեն, իմնան, որ տուք լալ եք:

Մեր կերթա, աղչըկըներ նստե չախրայ⁸⁷⁰ կը մանեն, ուզողները իկեր են տոան վերեն ականջ կանեն:

Մեկեն ճոչ աղչկա չախրկի լար կը կտրի:

– Վա՛յ, լար տտրա՛վ, – կասի ճոչ աղչիկ:

– Չթոթի, փաթութի, չթոթի, փաթութի, – կասի միճնեյն:

– Քյա, սևավորնե՛ր, մերս ծե ի՞նչ ապլտրեց, – պյարկոտ, պյարկոտ կասի պստի

քեր:

Ուզողները կը տիսնան, որ իրեհն էլ կլվատ են, թողնեն կերթան:

Ծիծաղում են Վանեցիները, Հավաքել, կազմել են Վարազդար Հարությունյանը և Նորա Մելիքյանը, Եր., «Չանգակ -97» հրատ., 2006, էջ 129:

77

Կնիկ մը կա էղեր, իրեք հատ ախճիկ ունի էղեր: Իրեքն ա փելթեք⁸⁷¹ էն էղեր: Օր մը ասոնց ախճիկտես պիտի գան էղեր, մարը կապսարե քի հիչ չխոսին՝ փելթեք ըլլալնին չհասկցվի տիյի:

Ախչիկտեսի էկողները մերերնուն հետ կը նստին կը խորաթվին. ախչիկներն ա իրեքը մէկ կը մանեն կոր: Մեյ մըն ա ծակէն մուկ մը կելլա, մէկ ալ ծակը կը մտնա: Մենծ ախճիկը կըսէ քի՝

– Թա՛, մուտը նայէ մուտը ծատէն էլավ ծատը մտավ: // Օռթանճան⁸⁷² ա կըսէ քի՝

– Թա, մայրիտս չկսա՛վ թի չիպիտի խօսիթ տիյի: // Պստիկն ա կըսէ քի՝

– Նայէ էս տը խօսի՛մ տոր, տըլտըր տը մանեմ տոր:

Հր. Աճառյան, Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 163:

⁸⁷⁰ **Չախրա** – ճախարակ:

⁸⁷¹ **Փելթեք** (թրք.)– թլվատ:

⁸⁷² **Օռթանճա** – միջնեկ:

Թըլվադները

Մեքադ գինմաշդ⁸⁷³ գունենա ժեք⁸⁷⁴ էգաժ հասաժ ախչիգ, ժեքն ալ թըլվադ, լիզուներուն ծարով: Մեգ օրըմ մարը գասե.

– Ախչիգնե՛րս, ասօր մեր դունը խնամիներ բիտ կան, ձեզի նայելու: Նայեցեք, սախտ⁸⁷⁵ գեցիք ու գալաճի⁸⁷⁶ չանիք, որ թըլվադ էղաճներիդ չիմանան:

Ախչիգները խայիլ գլան:

Իրիգվան, խոշթ որ, խնամիները կուկան, գնային, ժեքն ալ էրեսանց հով չին: – Կուզենան փորձել, իմանալ գալաճի կիդին չենե չէ⁸⁷⁷: Խոսք կխառնին, համա ախչիգները մորը խրադը դահա միդքերը գըլա ու ձան չին հանիլ:

Մեմալ նայիս, իդա ժամանագը մեքադ մուգ զըխի ծագեն գելլե ու գըվագե դունին մեչը: // Մեժ ախչիգը գըդեսնու ու գըգանչե.//– Հաթա, հաթա (հաքա), մուդը, մուդը: Օշթանճա ախչիգն ալ գասե. // – Հաթա, մուդը ծադը մըդավ:

Փոքրն ալ գոյա չուզե խառնվել ու գալաճի անել, գասե.

– Ես ինչ դասիմ (գասիմ), ինչ դըլսիմ, դըզըլ-դըզըլ դըմանիմ (գըմանիմ):

Խնամիները գըհասկնան, որ ժեքն ալ թըլվադ ին, մնաս պարով գասին ու գէշթան:

ՀԱԲ, հայոր 2, Խ.Ա.Փորքշեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Եր., ԳԱ հրատ., 1971, էջ 85:

⁸⁷³ **Գինմաշդ** – կին:

⁸⁷⁴ **Ժեք** – երեք:

⁸⁷⁵ **Սախտ** – լուռ:

⁸⁷⁶ **Գալաճի** – գրույց:

⁸⁷⁷ **Չենե չէ** – թե չէ: